

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

ԼՐԱԲԵՐ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ВЕСТНИК  
ОБЩЕСТВЕННЫХ  
НАУК

HERALD  
OF SOCIAL SCIENCES

2(671)

ՄԱՅԻՍ-ՕԳՈՍՏՈՍ

МАЙ-АВГУСТ

MAY-AUGUST

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն/Изд. «Гитутюн» НАН РА/“Gitutyun” Press NAS RA  
ԵՐԵՎԱՆ/ԵՐԵՎԱՆ/YEREVAN 2024

**ՔԱՌԱՄՍՅԱ ՀԱՆԴԵՍ, ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1940 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻՑ**  
**ЖУРНАЛ ВЫХОДИТ 3 РАЗА В ГОД, ИЗДАЕТСЯ С НОЯБРЯ 1940 ГОДА**  
**JOURNAL IS PUBLISHED 3 TIMES IN A YEAR, SINCE NOVEMBER 1940**

Գլխավոր խմբագիր՝ **ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ**  
Խմբագրի տեղակալ՝ **ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ**  
Պատասխանատու քարտուղար՝ **ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

### **Խմբագրական խորհուրդ**

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ, ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ (խմբագրական խորհրդի նախագահ),  
ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ, ԺԱՍՄԻՆ ԴՈՒՄ-ԹՐԱԳՈՒՏ (Ավստրիա), ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ,  
ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ, ՎԱԶԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ, ԳԱԳԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ,  
ՀՐԱԶ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ (Նիդերլանդներ), ԱՇՈՏ ՄԵԼԿՈՆՅԱՆ, ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ,  
ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ, ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՊԱՏՐԻԿ ՏՈՆԱՊԵՏՅԱՆ (Ֆրանսիա),  
ՓԻԹԵՐ ՔԱՌԻԻ (ԱՄՆ)

Главный редактор – **ПАВЕЛ АВЕТИСЯН**  
Заместитель редактора – **АРСЕН БОБОХЯН**  
Ответственный секретарь – **ГАЯНЭ АРУТЮНЯН**

### **Редакционная коллегия**

ПАВЕЛ АВЕТИСЯН (председатель редколлегии), АРСЕН БОБОХЯН, АРАРАТ АГАСЯН,  
ЖАСМИН ДУМ-ТРАГУТ (Австрия), ГАГИК КАЗИНЯН, ВИКТОР КАТВАЛЯН, ПИТЕР КАУИ  
(США), ГРАЧ МАРТИРОСЯН (Нидерланды), АШОТ МЕЛКОНЯН, ВАЧЕ ОВАКИМЯН,  
ГЕВОРК ПОГОСЯН, РУБЕН САФРАСТЯН, ПАТРИК ДОНАБЕДЯН (Франция),  
ЮРИЙ СУВАРЯН, АЛЬБЕРТ ХАРАТЯН

Editor-in-chief **PAVEL AVETISYAN**  
Vice-editor **ARSEN BOBOKHYAN**  
Responsible secretary **GAYANE HARUTYUNYAN**

### **Editorial Board**

PAVEL AVETISYAN (chairman of the editorial board), ARARAT AGHASYAN,  
ARSEN BOBOKHYAN, ALBERT KHARATYAN, VIKTOR KATVALYAN, VACHE HOVAKIMYAN,  
GAGIK GHAZINYAN, HRACH MARTIROSYAN (Netherlands), ASHOT MELKONYAN,  
GEVORG POGHOSYAN, RUBEN SAFRASTYAN, YURI SUVARYAN, JASMINE DUM-TRAGUT  
(Austria), PATRICK DONABEDIAN (France), PETER COWE (USA)

©Լրաբեր հասարակական գիտությունների  
©Вестник общественных наук  
©Herald of Social Sciences

# ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

<b>Ռուբեն Ազիզբեկյան</b> – Միջպետական հարաբերությունները Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև 1992-2000 թթ. ....	9
<b>Արտաշես Շահնազարյան</b> – XIII դ. հայ-վրացական հակամոնղոլական ընդվզումները և Զաքարյան իշխանատոհմը.....	29
<b>Արգիշտի Վարդանյան</b> – Մամիկոնյանների գործունեությունը V դարի առաջին կեսին.....	44
<b>Արսեն Հակոբյան</b> – «Ղափանի դեպքերի» առասպելը նախասումգայիթյան, սումգայիթյան և հետսումգայիթյան զարգացումներում.....	63
<b>Մհեր Հարությունյան, Հայկ Հարությունյան</b> – Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի մերօրյա պատմության լուսաբանման որոշ հիմնահարցեր.....	96
<b>Քնարիկ Ավագյան</b> – Սիրիական կրթական ծրագրով «Կիլիկեան» դպրոցը Հայաստանում (2012-2013 թթ.).....	116
<b>Խորեն Գրիգորյան</b> – Ովքե՞ր են ղեկավարել Մուսա լեռան ինքնապաշտպանական մարտերը.....	131
<b>Գոռ Հովհաննիսյան</b> – Ազգայնամուլական խորհրդանիշները Թուրքիայի քաղաքական հոետորաբանության մեջ XXI դարում.....	138
<b>Գայանե Ղազարյան</b> – Խորհրդային Հայաստանը 1946-1948 թթ. հայրենադարձների պատկերացումներում.....	151

## ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

<b>Ռուսլան Ցականյան</b> – Քաղաքական և դիվանագիտական հարաբերությունները Աշոտի և Խաթաբի միջև մ.թ.ա. XIV-XIII դարերում.....	162
<b>Քնարիկ Սարգսյան</b> – Կատարի պաղեստինյան քաղաքականությունը (1995-2013 թթ.).....	182

## ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

<b>Ռուբեն Կարապետյան, Սյուզաննա Բարսեղյան</b> – Միգրացիայի պատմական վերակազմումը սոցիոլոգիական հետազոտության մեջ.....	199
<b>Գարիկ Աթանեսյան, Միհրան Գալստյան</b> – Պատերազմ և հիշողություն. 44-օրյա պատերազմի հուշարձանացումը ՀՀ սահմանամերձ համայնքներում.....	210

## ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

<b>Գոհար Կարազյոզյան</b> – Թափառական հրեայի լեգենդի տարածման պատմությունը միջնադարյան Եվրոպայում.....	227
<b>Արտաշես Մարտիրոսյան</b> – «Դև» բառույթի առասպելաբանական նախասկիզբը և իմաստային կառուցվածքի զարգացումը հայերենում.....	242

<b>Նեղի Գալստյան</b> – Տարագիր գրականությունը և Փիթեր Սուրյանի վիպական աշխարհը.....	258
<b>Ամալյա Բարսեղյան</b> – Շարահյուսական կապակցության եղանակների (խնդրառություն) դրսևորումները արդի գեղարվեստական արձակում.....	272

**ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

<b>Մարիաննա Տիգրանյան, Լինդա Սարգսյան</b> – Ռոմանոս Մելիքյանի արցախյան գործունեության անհայտ էջերը.....	280
<b>Քնար Կատվալյան</b> – Միջին Ասիան Մարտիրոս Սարյանի ստեղծագործության մեջ.....	291

**ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

<b>Գարեգին Թումանյան</b> – Ձին հայկական լեռնաշխարհի արևելյան հատվածի կիմերական և սկյութական հատկանիշներով դամբարաններում.....	304
<b>Էմմա Պետրոսյան</b> – Արգոնավորդների առասպելը և բույսերի անվանումները դիցաբանության համատեքստում.....	318
<b>Արսեն Բորոխյան</b> – Մանուկ Աբեղյանի «Վիշապներ» աշխատության ստեղծման հանգամանքները.....	336
<b>Թամար Հայրապետյան</b> – Աշխարհի տեսքի ու կառուցվածքի մասին պատկերացումները հայկական հրաշապատում հեքիաթներում.....	350

**ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ**

<b>Մարատ Բաղդասարյան</b> – Ձինվորական դասախոսի ռազմամանկավարժական բարոյագիտության դերն ու նշանակությունը ուսուցման արդյունավետության բարձրացման գործընթացում.....	367
---	-----

**ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ**

<b>Ստեփան Ղարիբջանյան</b> – Խաչիկ Սամուելյան.....	380
---	-----

**ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

<b>Ալբերտ Խառատյան</b> – <i>Սիրվարդ Մալխասեան, Աետիք Պատրիարքի խորհրդատու կեանքը</i> .....	384
<b>Աելիտա Դոլուխանյան</b> – <i>Արարատ Աղասյան, Արվեստի պատմություն. կերպարվեստ, գիրք երրորդ</i> .....	392

**ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ**

<b>Աննա Ասատրյան</b> – ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտն ընդլայնում է միջազգային համագործակցության աշխարհագրությունը.....	398
---	-----

## СОДЕРЖАНИЕ

### ИСТОРИЯ И ПОЛИТОЛОГИЯ

<b>Рубен Азизбемян</b> – Межгосударственные отношения между Республикой Армения и Российской Федерацией в 1992-2000 годах.....	9
<b>Арташес Шахназарян</b> – Армяно-грузинские антимонгольские выступления в XIII в. и княжеский род Захаридов.....	29
<b>Аргишти Варданян</b> – Деятельность Мамиконянов в первой половине V века.....	44
<b>Арсен Акопян</b> – Миф о «Капанских событиях» в предсумгайтском, сумгайтском и постсумгайтском развитии.....	63
<b>Мгер Арутюнян, Айк Арутюнян</b> – Ряд проблем освещения современной истории армии обороны Республики Арцах.....	96
<b>Кнарик Авакян</b> – Школа «Киликеан» в Армении, основанная на сирийской образовательной программе (2012-2013 гг.).....	116
<b>Хорен Григорян</b> – Кем была возглавлена самооборона при Мусалере?.....	131
<b>Гор Оганесян</b> – Националистические символы в турецкой политической риторике XXI века.....	138
<b>Гаяне Казарян</b> – Советская Армения 1946-1948 гг. в представлениях репатриантов.....	151

### ВОСТОКОВЕДЕНИЕ

<b>Руслан Цаканян</b> – Политические и дипломатические отношения между Ашшуром и Хатти в XIV-XIII веках до н.э. ....	162
<b>Кнарик Саргсян</b> – Палестинская политика Катара (1995-2013 гг.).....	182

### СОЦИОЛОГИЯ

<b>Рубен Карапетян, Сюзанна Барсегиан</b> – Историческая реконструкция миграций в социологическом исследовании.....	199
<b>Гарик Атанесян, Мигран Галстян</b> – Война и память: мемориализация 44-дневной войны в приграничных общинах РА.....	210

### ФИЛОЛОГИЯ

<b>Гоар Карагезян</b> – История проникновения легенды о вечном жиде в средневековую Европу.....	227
<b>Арташес Мартиросян</b> – Мифологическое происхождение лексемы «Демон» и развитие семантической структуры в армянском языке.....	242
<b>Нелли Галстян</b> – Эмигрантская литература и художественный мир романов Питера Сурьяна.....	258

<b>Амалия Барсемян</b> – Проявления видов синтаксических связей (управление) в современной художественной литературе.....	272
---	-----

### КУЛЬТУРА И ИСКУССТВОВЕДЕНИЕ

<b>Марианна Тигранян, Линда Саргсян</b> – Неизвестные страницы арцахской деятельности Романоса Меликяна.....	280
<b>Кнар Катвалян</b> – Средняя Азия в творчестве Мартироса Сарьяна.....	291

### АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ

<b>Гарегин Туманян</b> – Конь в погребениях с киммерийскими и скифскими культурными признаками в Восточной части Армянского нагорья.....	304
<b>Эмма Петросян</b> – Легенда об аргонавтах и номинации растений в контексте мифологии.....	318
<b>Арсен Бобохян</b> – Обстоятельства написания Мануком Абегином работы «Вишапы».....	336
<b>Тамар Айрапетян</b> – Представления о виде и строении мира в армянских волшебных сказках.....	350

### ПЕДАГОГИКА

<b>Марат Багдасарян</b> – Роль и значение военно-педагогической этики военного преподавателя в процессе повышения эффективности обучения.....	367
---	-----

### ПУБЛИКАЦИИ

<b>Степан Гарибджанян</b> – Хачик Самуэлян.....	380
---	-----

### РЕЦЕНЗИИ

<b>Альберт Харатян</b> – <i>Сирвард Малхасян</i> , Сакральная жизнь патриарха Аветика.....	384
<b>Аэлига Долуханян</b> – <i>Арагат Агасян</i> , История искусства: изобразительное искусство, книга третья.....	392

### НАУЧНАЯ ХРОНИКА

<b>Анна Асатрян</b> – Институт искусств НАН РА расширяет географию международного сотрудничества.....	398
---	-----

# CONTENT

## HISTORY AND POLITICAL SCIENCE

<b>Ruben Azizbekyan</b> – Interstate Relations Between the Republic of Armenia and Russian Federation in 1992-2000 S. ....	9
<b>Artashes Shahnazaryan</b> – The Armenian-Georgian Anti-Mongol Uprisings of XIII Century and the Zakarian Dynasty.....	29
<b>Argishti Vardanyan</b> – Activities of the Mamikonyans in the First Half of the V Century.....	44
<b>Arsen Hakobyan</b> – The Myth of "Kapan Events" in Pre-Sumgait, Sumgait and Post-Sumgait Developments.....	63
<b>Mher Harutyunyan, Hayk Harutyunyan</b> – Some Problems of Covering the Modern History of the Defence Army of the Republic of Artsakh.....	96
<b>Knarik Avagyan</b> – The "Cilician" School in Armenia, with Syrian Educational Program (2012-2013).....	116
<b>Khoren Grigoryan</b> – Who was Leading the Self-Defense Battles at Musa Dagh?.....	131
<b>Gor Hovhannisyan</b> – Nationalistic Symbols in Turkish Political Rhetoric in the XXI Century.....	138
<b>Gayane Ghazaryan</b> – Soviet Armenia of 1946-1948 in the Perception of the Repatriates.....	151

## ORIENTAL STUDIES

<b>Ruslan Tsakanyan</b> – Political and Diplomatic Relations between Aššur and Hatti in the XIV-XIII Centuries B.C. ....	162
<b>Knarik Sargsyan</b> – The Palestinian Policy of Qatar (1995-2013).....	182

## SOCIOLOGY

<b>Ruben Karapetyan, Suzanna Barseghyan</b> – Historical Reconstruction of Migration in Sociological Study.....	199
<b>Garik Atanesyan, Mihran Galstyan</b> – War and Memory: Memorialization of the 44-day War in the Borderland Communities of RA.....	210

## PHILOLOGY

<b>Gohar Karagyozyan</b> – The History of Spreading the Legend of the Wandering Jew in Medieval Europe.....	227
<b>Artashes Martirosyan</b> – Mythological Origin of the Lexeme "Demon" and Development of Semantic Structure in the Armenian Language.....	242

<b>Nelli Galstyan</b> – Emigrant Literature and the Artistic World of Peter Suryan's Novels.....	258
<b>Amalya Barseghyan</b> – Manifestations of Types of Syntactic Connections (Management) in Modern Fiction.....	272

### CULTURE AND ART STUDIES

<b>Marianna Tigranyan, Linda Sargsyan</b> – Unknown Pages of Romanos Melikyan's Artsakh Activities.....	280
<b>Knar Katvalyan</b> – Central Asia in the Works of Martiros Saryan.....	291

### ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

<b>Garegin Tumanyan</b> – Horse in Sepulchres with Cimmerian-Scythian Characteristics in the Eastern Part of the Armenian Highland.....	304
<b>Emma Petrosyan</b> – Legend of Argonauts and Nominations of Plants in the Context of Mythology.....	318
<b>Arsen Bobokhyan</b> – Circumstances of Writing of the Work "Vishaps" by Manuk Abeghyan.....	336
<b>Tamar Hayrapetyan</b> – Imaginations on the World's Shape and Structure in Armenian Fairytales.....	350

### PEDAGOGY

<b>Marat Baghdasaryan</b> – The Role and the Meaning of Military Pedagogical Ethics of Lecturer in the Process of Teaching Efficiency Enhancement.....	367
--	-----

### PUBLICATIONS

<b>Stepan Gharibjanyan</b> – Khachik Samuelyan.....	380
---	-----

### LITERARY REVIEWS

<b>Albert Kharatyan</b> – <i>Sirvard Malkhasyan, The Sacred Life of the Patriarch Avetik</i> .....	384
<b>Aelita Dolukhanyan</b> – <i>Ararat Aghasyan, History of Art: Fine Art, Book 3</i> .....	392

### SCIENTIFIC CHRONICLE

<b>Anna Asatryan</b> – The Institute of Arts of the National Academy of Sciences of the Republic of Armenia expands the geography of international cooperation.....	398
---	-----



# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 1992-2000 ԹԹ.

### Ռուբեն Ազիզբեկյան

Պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4

Էլ. հասցե՝ r.azizbekyan@mail.ru

ORCID: 0009-0004-4095-0809

Հոդվածը ներկայացվել է 28.02.2024, գրայնստվել է 22.07.2024, ընդունվել է տպագրության 02.08.2024

DOI: 10.53548/0320-8117-2024.2-9

### Ամփոփում

Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանի և Ռուսաստանի միջև միջպետական համագործակցության սկզբնավորումն ու ծավալումը հիմնականում թելադրված էին Հարավային Կովկասում առկա աշխարհաքաղաքական իրավիճակի տրամաբանությամբ և երկու երկրների փոխադարձ շահերով: Ռուսաստանը, ձգտելով պահպանել և ամրապնդել դարերի ընթացքում ունեցած իր ազդեցությունն այդ տարածաշրջանում, որպես իրական դաշնակից դիտարկում էր Հայաստանը: Վերջինս, ԽՍՀՄ-ի տրոհումից հետո հայտնվելով իր անմիջական հարևաններ Ադրբեջանից և Թուրքիայից բխող անվտանգային լուրջ սպառնալիքների ներքո, որպես սեփական անվտանգության երաշխավոր տեսնում էր Ռուսաստանը: Այն հիմնականում պայմանավորված էր դարերի ընթացքում հայ և ռուս ժողովուրդների միջև ձևավորված պատմամշակութային արժեքների ընդհանրությամբ ու բարեկամությամբ, ինչպես նաև ՀՀ և ՌԴ աշխարհաքաղաքական շահերի համընկնմամբ:

1992-1994 թթ. եղան հայ-ռուսական միջպետական հարաբերությունների սկզբնավորման տարիներ, որոնք աչքի ընկան երկու երկրների միջև իրավապայմանագրային հենքի ստեղծմամբ: 1995-2000 թթ. ընթացքում վերջինս էլ ավելի ընդլայնվեց և ամրապնդվեց: Ստորագրվեցին երկու երկրների փոխգործակցության տարբեր ոլորտներն ընդգրկող բազմաթիվ փոխշահավետ փաստաթղթեր, որոնցից առանցքային էին 1995 թ. մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին» պայմանագիրը, 1997 թ. օգոստոսի 29-ի «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին» (Մեծ) պայմանագիրն ու 2000 թ. սեպտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև XXI դար ուղղված դաշնակցային փոխգործակցության մասին» հռչակագիրը: Այդ փաստաթղթերի ընդունումն ունեցավ ռազմավարական նշանակություն՝ արտահայտելով կողմերի հակվածությունը երկու երկրների մերձեցմանը և ազդարարելով նոր պայմաններում հայ-ռուսական միջպետական ռազմավարական գործընկերության հաստատումն ու դաշնակցային հարաբերություններին անցման գործընթացի սկզբնավորումը:

**Բանալի բառեր՝** Հայաստանի հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն, Հարավային Կովկաս, փոխշահավետ համագործակցություն, իրավապայմանագրային հենք, միջպետական հարաբերություններ, ռազմավարական գործընկերություն:

### **Ներածություն**

Հայ-ռուսական հարաբերությունները երկարամյա պատմություն ունեն, որոնք խարսխված են երկու ժողովուրդների միջև դարեր շարունակ գոյություն ունեցող առևտրատնտեսական առնչությունների ծավալման, կրթամշակութային, գիտական, հոգևոր կապերի զարգացման և ռազմաքաղաքական համագործակցության հենքի վրա:

Չնայած իրենց ավանդական բնույթին՝ հայ-ռուսական հարաբերությունները, պատմական զարգացումներին զուգընթաց, մշտապես բովանդակային և ձևաչափային փոփոխություններ էին կրում: Այս առումով ուշագրավ է Հայաստանի և Ռուսաստանի միջև միջպետական հարաբերությունների հետխորհրդային փուլը, երբ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո երկու երկրներն էլ հայտնվեցին աշխարհաքաղաքական և սոցիալ-տնտեսական նոր իրողություններում: Վերջիններիս շարունակական վերափոխումների պայմաններում ՀՀ-ի և ՌԴ-ի միջև միջպետական հարաբերությունների սկզբնավորման ու ծավալման հիմնական ուղղությունները, հարաշարժորեն ձևափոխվելով, աստիճանաբար ռազմավարական դաշնակցային բնույթ ստացան: Այն առավելապես բխում էր 1992-2000 թթ. Հարավային Կովկասում տիրող չափազանց լարված աշխարհաքաղաքական իրավիճակում երկու երկրների միջև ի հայտ եկած փոխադարձ շահերի լիարժեք և արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունից:

ՀՀ-ի և ՌԴ-ի փոխհամագործակցության հիմքում ընկած էին դարերի ընթացքում Հայաստանի և Ռուսաստանի ժողովուրդների միջև ձևավորված պատմամշակութային և հոգևոր արժեքների ընդհանրությունն ու բարեկամական կապերը: Սակայն երկու երկրների միջև միջպետական հարաբերությունների հաստատման ոչ բոլոր նախադրյալներն էին պայմանավորված զուտ հայ-ռուսական դարավոր բարեկամությամբ: Այդ հարաբերություններին առանձնահատուկ ամրություն էին հաղորդում հատկապես դրանց իրատեսական բաղադրիչները՝ մարտավարական և ռազմավարական բնույթի գործնական շահերը:

### **Հայ-ռուսական միջպետական հարաբերությունների սկզբնավորումը 1992-1994 թթ.**

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Հարավային Կովկասը մինչև օրս դրա ծանր հետևանքները կրող տարածաշրջաններից է: Այն քաղաքական, պատմական, տնտեսական, ազգամիջյան խնդիրների բարդ միահյուսվածք է և խիստ զգայուն աշխարհաքաղաքական փոփոխությունների նկատմամբ: Տա-

րաձաշրջանը դարերի ընթացքում գտնվել է երեք կայսրությունների՝ Թուրքիայի, Ռուսաստանի, Իրանի ծայրակցատեղում՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Խորհրդային Միության տրոհումը Հարավային Կովկասում հանգեցրեց սկզբունքային նոր՝ «աշխարհաքաղաքական անտիրության» իրավիճակի առաջացման: Այստեղ ստեղծված քաղաքական վակուումը 1990-ականների սկզբին փորձում էին լրացնել ինչպես տարածաշրջանային, այնպես էլ այլ պետություններ: Հարավային Կովկասում ազդեցության հաստատմանը նպաստակառուղիված պայքարին մասնավորապես ներգրավված էին Ռուսաստանը, ԱՄՆ-ն, Թուրքիան, Իրանը և այլ երկրներ: Հատկապես ակտիվ էր Թուրքիան, որն ամեն կերպ ձգտում էր ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքով ինքնիշխան պետություն դարձած իր «կրտսեր եղբոր»՝ Ադրբեջանի օգնությամբ սեփական ազդեցության ոլորտ ներքաշել նաև նորանկախ կենտրոնասիական թյուրքալեզու երկրներին: Այդ նպատակով Անկարան վերստին շրջանառության մեջ դրեց «Ադրիատիկից մինչև Չինաստան թյուրքական աշխարհ է» և նման կարգի այլ պանթյուրքիստական կարգախոսներ<sup>1</sup>: Թուրքիայի իշխանություններն ակտիվորեն աշխատում էին տվյալ ուղղությամբ՝ վայելելով հավաքական Արևմուտքի անթաքույց աջակցությունը, որը ձգտում էր ամեն կերպ թուլացնել Ռուսաստանի դիրքերը Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում՝ այդ տարածաշրջաններից նրան դուրս մղելու ակնկալիքով: Արևմուտքի աջակցությամբ Թուրքիան ձեռնամուխ եղավ իր ազդեցության ծավալմանը դեպի Կովկաս և Կենտրոնական Ասիա: Հատկապես վերջինում ստեղծվել էր որակապես նոր իրողություն: Այդ տարածաշրջանի երկրները սկսեցին հետաքրքրություն դրսևորել համաթյուրքականության գաղափարների նկատմամբ՝ դրանք համարելով պաշտպանական գործոն մի կողմից ռուսական, մյուս կողմից չինական ազդեցությունները նվազեցնելու համար: Կենտրոնական Ասիայում, Ադրբեջանում և նույնիսկ ՌԴ-ի թյուրքալեզու սուբյեկտներում լայն ընդունելություն գտավ իսլամի մշակութային-քաղաքակրթական ընկալման մոդելը: Կենտրոնական Ասիայի և Ադրբեջանի իշխանությունները հրաժարվեցին ռուսազիր այբուբենից և ընդունեցին լատինատառը՝ փորձելով նման ճանապարհով ևս համախմբվել ու մոտենալ Թուրքիային<sup>2</sup>:

Անկարայի կողմից հետևողականորեն «համաթյուրքական միության» ստեղծման գաղափարների տարածումն առաջացնում էր ՀՀ իշխանությունների լուրջ անհանգստությունը, քանի որ Հայաստանն իր աշխարհագրական դիրքով խոչընդոտ էր Անկարայի առաջ քաշած պանթյուրքիստական «Մեծ Թուրան» ծրագրի իրականացման ճանապարհին: 1990-ականների

<sup>1</sup> Коджаман 2004, 85.

<sup>2</sup> Սաֆարյան 2023, <https://www.soyuzinfo.am>, 9 հունիսի:

սկզբներին հայ-ռուսական հարաբերություններում տիրող որոշ «սառնությամբ»<sup>3</sup> և հատկապես Ղարաբաղյան հակամարտության հետևանքով Ադրբեջանի հետ պատերազմական իրավիճակում գտնվելու պայմաններում ՀՀ իշխանությունները, ելնելով անվտանգության տեսանկյունից, ձգտում էին պաշտոնական հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ՝ գտնելով, որ այդ գործում պատմական ժառանգությունը չի կարող խոչընդոտ հանդիսանալ: Մինչդեռ 1991 թ. Թուրքիան, առաջիններից մեկը ճանաչելով նորանկախ Հայաստանի Հանրապետությունը, հրաժարվեց վերջինիս հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատել՝ հայտարարելով, թե միայն որոշ խնդիրների պարզաբանումից հետո Անկարան կմտածի միջպետական հարաբերությունների հաստատման մասին<sup>4</sup> (միջազգային ասպարեզում Հայոց ցեղասպանության ճանաչմանն ու դատապարտմանը նպատակամիտված ՀՀ գործունեության դադարեցում, Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտուց հայկական զինված ուժերի դուրսբերում և ԼՂ-ի վերահսկողության տակ գտնվող շրջանների վերադարձ Ադրբեջանին: Ըստ որոշ փորձագետների՝ գոյություն ունեւ 3-րդ նախապայմանը՝ Կարսի պայմանագրի ճանաչում: Հետագայում Թուրքիայի առաջ քաշած նշյալ նախապայմաններին ավելացան ևս մի քանիսը՝ Չանգեզուրի միջանցք և այլն)<sup>5</sup>: Թուրքիայի կողմից վերոնշյալ նախապայմանների առաջքաշումը, հետագայում Անկարայի միանալը Ղարաբաղյան հակամարտությամբ պայմանավորված՝ Ադրբեջանի կողմից Հայաստանի նկատմամբ իրականացվող շրջափակմանը ի չիք դարձրին ՀՀ-ի և ԹՀ-ի միջև բնականոն հարաբերությունների շուտափույթ հաստատման վերաբերյալ Երևանի պատրանքները: Չնայած դրան՝ ՀՀ իշխանությունները հայտարարեցին առանց նախապայմանների Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման իրենց պատրաստակամության մասին: Հետագայում ևս Հայաստանը շարունակեց առաջնորդվել նշյալ սկզբունքով:

Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում Արևմուտքի ու Թուրքիայի ակտիվ գործողությունների ֆոնի վրա թուլանում էր Ռուսաստանի ազդեցությունն այդ տարածաշրջանների երկրներում ծավալվող գործըն-

<sup>3</sup> ՀՀ անկախության սկզբնական շրջանում հանրապետության քաղաքական վերնախավի որոշ ներկայացուցիչներ առաջնորդվում էին «Երրորդ ուժի բացառման» տեսությամբ, ըստ որի՝ Հայաստանն ու Թուրքիան կարող էին համաձայնության գալ և բարելավել իրենց հարաբերությունները, եթե վերջիններից բացառեին Ռուսաստանի գործոնը: Ընդ որում, այդ հայեցակարգի որոշ կողմնակիցներ պնդում էին, թե հայ-թուրքական հարաբերությունները բնականոն բնույթ էին կրում մինչև Ռուսական կայսրության հայտնվելը Մերձավոր Արևելքում, երբ հայերն իրենց ճակատագիրն ու օսմանյան լծից ազատագրումը կապեցին Ռուսաստանի հետ (տե՛ս Hovhannisyan 1998, 19):

<sup>4</sup> Թեև Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը Անկարայի համար ևս ուներ ոչ պակաս կարևորություն հատկապես Հարավային Կովկասում իր տնտեսական ու քաղաքական ազդեցության ծավալման և դրանով իսկ այդ տարածաշրջանում Ռուսաստանի հնարավորությունների խիստ սահմանափակման առումով:

<sup>5</sup> Սաֆրասյան 2023, Առավոտ, 27 ապրիլի, Մելքոնյան 2021, Առավոտ, 20 դեկտեմբերի:

թացների վրա: Դա պայմանավորված էր ԽՍՀՄ-ի փլուզումից հետո անկախ Ռուսաստանի առջև ծառայած ինչպես ներքին խնդիրներով, այնպես էլ Մոսկվայի կողմից իրականացվող ոչ հստակ արտաքին քաղաքականությամբ: Մասնավորապես տպավորություն էր ստեղծվում, թե ՌԴ-ն կորցրել է իր հետաքրքրությունն անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ, մանավանդ որ այդ մասին մերթ ընդ մերթ հատկապես ակնարկում էր Ռուսաստանի այդ ժամանակվա արտաքին գործերի նախարար Ա. Կոզիրևը, ըստ որի՝ նախկին միութենական հանրապետությունները զուտ տնտեսական ծանր բեռ էին Մոսկվայի համար<sup>6</sup>: Այս առումով թերևս հատկանշական էր, որ չնայած Ռուսաստանի Դաշնությունը առաջիններից մեկը ճանաչեց Հայաստանի անկախությունը, և 1992 թ. ապրիլի 3-ին Երևանում երկու երկրների միջև ստորագրվեց արձանագրություն դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին<sup>7</sup>, սակայն դրանից հետո էլ հայ-ռուսական միջպետական հարաբերություններում դեռևս շարունակվում էր դրսևորվել որոշակի սառնություն: Այն պայմանավորված էր նաև ԽՍՀՄ-ի գոյության վերջին տարիներին Ղարաբաղյան հակամարտությունում հայկական և ադրբեջանական կողմերի միջև հավասարության նշան դնելու Կրեմլի որդեգրած քաղաքականության ՌԴ իշխանությունների կողմից շարունակմամբ և Թուրքիայի հետ համագործակցության ծավալման Մոսկվայի անթաքույց ձգտմամբ: Այս ամենը լրջորեն մտահոգում էր ՀՀ իշխանություններին: Երևանի համար հատկապես տագնապահարույց եղան 1992 թ. աշխատանքային այցով Թուրքիայում գտնվող ՌԴ պետական քարտուղար Գ. Բուրբուլիսի հայտարարություններն այն մասին, որ թուրքական ուղղությունը Ռուսաստանի քաղաքականությունում գերակայություն է, և որ հայ-ադրբեջանական դիմակայության հարցում Ռուսաստանը Անկարայի հետ չունի որևէ տարակարծություն<sup>8</sup>: Հայաստանում առանձնահատուկ անհանգստություն էր առաջացնում նաև խորհրդային ռազմական ունեցվածքի բաժանման գործընթացի շրջանակներում Ռուսաստանի կողմից Երևանին սպառազինությունների փոխանցման ձգձգումը, այն դեպքում, երբ ադրբեջանցիները նախկին ԽՍՀՄ-ի զորամասերից անպատժելիորեն զավթում էին սպառազինություններ և ռազմական տեխնիկա՝ դրանք օգտագործելով Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի դեմ: Ըստ ՀՀ-ում ՌԴ առաջին դեսպան Վ. Ստուպիշինի՝ Հայաստանի քաղաքական ղեկավարությունը, դժգոհելով Երևանի հանդեպ Մոսկվայի ցուցաբերած ոչ համաչափ վերաբերմունքից, ռուսաստանյան կողմին նախազգուշացրել էր, որ ՀՀ-ին խոստացված սպառազինությունների փոխանցման գործը մեռյալ կետից չշարժվելու

<sup>6</sup> Козырев 1992, Независимая газета, 20 августа.

<sup>7</sup> Ռուսաստան-Հայաստան ընկերություն, ստուգված դարեր շարունակ 2017, 12-13:

<sup>8</sup> Ступишин 2001, 12, 57, 130.

դեպքում իրավիճակը կարող էր դուրս գալ վերահսկողությունից և խաթարել ռազմական բնագավառում հաստատված համագործակցությունը<sup>9</sup>:

Ռուսաստանյան որոշ վերլուծաբաններ ՌԴ իշխանությունների կողմից ադրբեջանցիների նկատմամբ դրսևորվող վերոնշյալ «ներողամտությունը» հիմնականում պայմանավորում էին Մոսկվայի արտաքին քաղաքական ուղեգծի ձևավորման փուլում գտնվելու հետևանքով Հարավային Կովկասի նկատմամբ հստակ մշակված քաղաքականության բացակայությամբ և հատկապես Հայաստանի ու Ադրբեջանի հետ հավասար հարաբերություններ կառուցելու ձգտումով: Ընդ որում, Կրեմլը, որդեգրելով այս սկզբունքը, այն շարունակեց կիրառել նաև հետագայում՝ որոշ դեպքերում նույնիսկ գերապատվությունը տալով Բաքվին՝ ի վնաս ՀՀ շահերի: Հատկանշական էր, որ Ռուսաստանի ռազմաքաղաքական վերնախավի ներկայացուցիչները, ամենատարբեր մակարդակներում հայտարարելով Ղարաբաղյան հակամարտության կողմերի միջև «հավասարակշռության պահպանելու» անհրաժեշտության մասին, Մոսկվայի կողմից միլիարդավոր դոլարների հասնող զենքի վաճառքը Բաքվին ներկայացնում էին բացառապես «բիզնես շահի» լույսի ներքո: Այս առումով ուշագրավ է, որ արդեն 2000-ականների առաջին տասնամյակի սկզբներին Բաքվի կողմից զենքի և սպառազինությունների ընդհանուր ներմուծման շուրջ 85%-ը բաժին էր ընկնում Ռուսաստանին<sup>10</sup>: Դա չէր կարող չառաջացնել Հայաստանի դժգոհությունը, քանի որ վերջինս հավատարիմ էր Ռուսաստանին՝ միևնույն ժամանակ հասկանալով, որ դրանով հանդուրժում է Ադրբեջանի հզորացմանը: Մինչդեռ Բաքուն նույնիսկ խորհրդային տարիներին չէր թաքցնում իր ընդգծված համակրանքը «եղբայրական Թուրքիայի» նկատմամբ: Պատահական չէր, որ ԽՍՀՄ-ի փլուզումից անմիջապես հետո Ադրբեջանը ոչ միայն մտավ իր «ավագ եղբոր» թևի տակ, այլև, հռչակելով «մեկ ազգ, երկու պետություն» սկզբունքը, տարածաշրջանում իրավիճակի ապակայունացմանը նպատակամիտված քայլեր սկսեց ձեռնարկել՝ ներառյալ Լեռնային Ղարաբաղում հակամարտության թեժացման ուղղությամբ: Դրանք հիմնականում միտված էին Հարավային Կովկասում ՌԴ-ի ազդեցության թուլացման, Թուրքիայի դիրքերի ամրապնդման, Արևմուտքի ներթափանցման, տարածաշրջանի հետագա ռազմականացման, դարաբաղյան ճակատում ռազմական գործողությունների ակտիվացման ու տվյալ հակամարտությանն Անկարայի հնարավոր ներգրավման համար առավել նպաստավոր պայմանների ստեղծմանը: Սակայն Ռուսաստանը, առավելապես առաջնորդվելով տնտեսական շահերով, ձգտում էր ամեն գնով Ադրբեջանին պահել իր արտաքին քաղաքականության ծիրում: Մոսկվայի համար վերջինս նախևառաջ կարևոր էր որպես էներգա-

<sup>9</sup> Ступишин 2001, 36.

<sup>10</sup> Ստեփանյան, <https://hetq.am/hy/article/76137>, 48:

կիրների տարածաշրջանային շուկայի մասնակից: Այն տեղավորվում էր Ռուսաստանին այլընտրանքային երթուղով դեպի Եվրոպա էներգակիրների մատակարարումներն ապահովելու եվրոպական երկրների փորձերին հակազդելու Մոսկվայի ռազմավարության տրամաբանության մեջ<sup>11</sup>: ՌԴ-ի համար ռազմավարական մեծ նշանակություն ուներ նաև Ադրբեջանը ներառող Հյուսիս-Հարավ միջանցքը, որը Ռուսաստանին Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների, Հնդկաստանի և Իրանի տնտեսությունների հետ կապող օղակներից էր<sup>12</sup>:

Ի տարբերություն տարածաշրջանի մյուս նորանկախ պետություններ՝ Ադրբեջանի և Վրաստանի՝ Հայաստանի «սառնությունը» Ռուսաստանի նկատմամբ համեմատաբար կարճ տևեց՝ էապես չխոչընդոտելով հայ-ռուսական հարաբերությունների հետագա զարգացումը: Դա հիմնականում պայմանավորված էր 1990-ականների առաջին տարիներին Հարավային Կովկասում ստեղծված աշխարհաքաղաքական վտանգավոր իրավիճակով, որը լրջորեն սպառնում էր թե՛ Հայաստանի ազգային անվտանգությանը և թե՛ Ռուսաստանի ազգային շահերին: Վերջիններով պայմանավորված՝ հայ-ռուսական միջպետական սերտ փոխգործակցության արագընթաց զարգացման անհրաժեշտություն էր առաջանում, որը բխում էր երկու երկրների շահերից: Մի կողմից Ռուսաստանը ձգտում էր պահպանել իր քաղաքական, տնտեսական և ռազմական ներկայությունը Հարավային Կովկասում, որի նվազումն ուղեկցվում էր Արևմուտքի և հատկապես Թուրքիայի կողմից նշյալ տարածաշրջանն իրենց ազդեցության ոլորտի մեջ ներառելու ձգտման անթաքույց ուժեղացմամբ՝ հանգեցնելով այդտեղ ՌԴ-ի համար անբարենպաստ զարգացումների ծավալմանն ու նրա դիրքերի թուլացմանը: Մինչդեռ Ռուսաստանի ազգային շահերի կարևորագույն խնդիրներից մեկը իր ազդեցության պահպանումն էր Հարավային Կովկասում, որը Մոսկվայի համար ուներ առանձնահատուկ քաղաքական, ռազմական և տնտեսական նշանակություն: Այն պայմանավորված էր մի շարք պատճառներով, որոնցից թերևս

<sup>11</sup> Էներգետիկ ոլորտում ՌԴ և ԱՀ միջև 1990-ականներին գոյություն ունեցող մրցակցային հարաբերությունները 2000-ականներին փոխակերպվեցին սերտ համագործակցության: 2010 թ. սեպտեմբերի 3-ին, Բաքվում, Ադրբեջանի պետական նավթային ընկերության և ռուսաստանյան «Գազարդ» ընկերության միջև կնքվեց համաձայնագիր՝ դեպի Ռուսաստան կասպյան գազի մատակարարումների ավելացման մասին (տե՛ս Дериглазова, Минасян 2011, 74):

<sup>12</sup> Միջանցքի նշանակությունն էլ ավելի բարձրացավ գրեթե բոլոր արևմտյան պետությունների կողմից Ռուսաստանի հետ ակտիվ տնտեսական հարաբերությունները սառեցնելուց հետո, երբ ՌԴ-ն 2022 թ. փետրվարի 24-ին «Հատուկ ռազմական գործողություն» անվան տակ, ըստ էության, պատերազմ սկսեց Ուկրաինայի դեմ: Պատահական չէր, որ Մոսկվայի և Բաքվի միջև փոխհարաբերությունների լայն ծավալումն ու խորացումն իրավաբանական ձևակերպում ստացան հենց նշյալ ռազմական գործողության ծավալումից երկու օր առաջ՝ 2022 թ. փետրվարի 22-ին Մոսկվայում ստորագրված «Ռուսաստանի Դաշնության և Ադրբեջանական Հանրապետության միջև դաշնակցային փոխգործակցության մասին» հռչակագրով (տե՛ս <http://kremlin.ru/supplement/5777>): Վերջինով Հայաստանը փաստորեն կորցրեց Հարավային Կովկասում Ռուսաստանի միակ դաշնակցի կարգավիճակը:

ամենագլխավորը Կովկասյան տարածաշրջանի աշխարհաքաղաքական և քաղաքակրթական միասնության պահպանումն էր, քանի որ Հյուսիսային Կովկասը, բնակեցված լինելով Ռուսաստանի Դաշնության մեջ մտնող ինքնավարություններ կազմավորող բնիկ լեռնային ժողովուրդներով, էթնիկ և մշակութային սերտ առնչություններ ուներ Հարավային Կովկասի հետ: Ուստի վերջինում իր դիրքերի թուլացման սպառնալիքը չէր կարող չանհանգստացնել Մոսկվային, որը տարածաշրջանում որպես իրական դաշնակից դիտարկում էր Հայաստանը<sup>13</sup>:

Մյուս կողմից ոչ բարեկամական Թուրքիայի և Ադրբեջանի շրջապատում գտնվող Հայաստանի համար Ռուսաստանը ազգային անվտանգության գլխավոր երաշխավորն էր: Փաստորեն Մոսկվայի և Երևանի միջև փոխգործակցության ծավալման անհրաժեշտությունը նախևառաջ բխում էր երկու պետությունների անվտանգության ապահովման հենքային շահերի համընկնման կողմերի ըմբռնումով: Հայ-ռուսական միջպետական հարաբերությունների սկզբնավորման և հետագա ծավալման վրա զգալի ազդեցություն ունեցավ նաև Ռուսաստանի լայն ներգրավվածությունը Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում: Տվյալ հիմնախնդրի հանգուցալուծմանը նպատակաուղղված ՌԴ գործունեության առումով սկզբունքային նշանակություն ուներ նաև Հայաստանի մասնակցությունը ԱՊՀ-ին և նրա շրջանակներում հետխորհրդային տարածքում հակամարտությունների կարգավորմանը նպատակամիտված միջոցառումներին<sup>14</sup>: Այս համատեքստում ուշագրավ է, որ որոշ ուսումնասիրողների կարծիքով հակամարտության վերջնական լուծումը հոգուտ կողմերից մեկի չէր բխում Ռուսաստանի շահերից: Ըստ նրանց՝ Մոսկվան այդ հակամարտության առկայությունը օգտագործում էր որպես լծակ թե՛ Հայաստանի և թե՛ Ադրբեջանի նկատմամբ իր ազդեցությունը պահպանելու և ՌԴ-ի համար կենսական նշանակություն ունեցող հարցերում ՀՀ-ի և ԱՀ-ի կողմից անհրաժեշտ զիջումների հասնելու համար<sup>15</sup>:

Խորհրդային Միության փլուզումից հետո աշխարհաքաղաքական իրադրության փոփոխումը առանձնահատուկ կարևորեց ռազմաքաղաքական ոլորտում Հայաստանի և Ռուսաստանի միջև սերտ միջպետական կապերի հաստատումը, որը հետագայում դարձավ հայ-ռուսական ռազմավարական համագործակցության առանցքային հենքը: 1992 թ. երկրորդ կեսից ՌԴ քաղաքական վերնախավում պետության առարկայական շահերի և դրանց պաշտպանությանն ուղղված միջոցների վերաարժևորումը էապես անդրադարձավ Հայաստանի հետ դաշնակցային հարաբերություններ հաստատե-

<sup>13</sup> Ռուսաստանը և Հայաստանը համաշխարհային և տարածաշրջանային քաղաքականության համատեքստում. հիմնախնդիրներն ու հեռանկարները 2010, 6:

<sup>14</sup> ՀՀ-ն ԱՊՀ մասնակից պետություն էր դարձել 1991 թ. դեկտեմբերի 21-ին:

<sup>15</sup> Գևորգյան 2010, 47:



լու կողմնորոշման վրա<sup>16</sup>: 1992-1994 թթ. հայ-ռուսական միջպետական հարաբերությունների իրավապայմանագրային հենքի ստեղծման տարիներն էին: Ստորագրվեցին երկու երկրների փոխգործակցության տարբեր ոլորտներն ընդգրկող տասնյակ փոխշահավետ պայմանագրեր, որոնց միջուկը երկկողմ ռազմաքաղաքական համաձայնագրերն էին: Դա պայմանավորված էր տարածաշրջանում առկա աշխարհաքաղաքական իրավիճակի տրամաբանությամբ: Հայաստանը Ղարաբաղյան հակամարտության հետևանքով ըստ էության Ադրբեջանի հետ պատերազմական իրավիճակում էր, և չէր բացառվում Թուրքիայի հնարավոր ռազմական միջամտությունը հոգուտ Ադրբեջանի, մանավանդ որ Անկարան Բաքվին զգալի ռազմատեխնիկական աջակցություն էր ցուցաբերում: 1992 թ. մայիսի վերջերին Թուրքիան Հայաստանի տարածք ներխուժելու նպատակով սահմանին սկսեց զորք կուտակել, սակայն Ռուսաստանի կոշտ դիրքորոշման շնորհիվ այն կանխվեց<sup>17</sup>: Փաստորեն 1992 թ. զարնանը սկզբնավորվեց հայ-ռուսական երկկողմ հարաբերությունների և փոխադարձ շահերի ակտիվ ճշտորոշման ժամանակափուլը:

Ռուսաստանի կողմից Հայաստանին ցուցաբերվող ռազմաքաղաքական օգնության պատճառով Մոսկվայի և Բաքվի միջև հարաբերությունները համեմատաբար «սառը» բնույթ ընդունեցին, որը նաև ռուսաստանյան ռազմակայանները Ադրբեջանի տարածքում պահպանելու Մոսկվայի մտադրության վերաբերյալ Ադրբեջանի անհամաձայնության հետևանք էր<sup>18</sup>: Ի տարբերություն վերջինիս և Վրաստանի, որոնք որդեգրեցին Ռուսաստանից հեռանալու և նրան Հարավային Կովկասից դուրս մղելու ձգտող Արևմուտքի՝ հատկապես Թուրքիայի և ԱՄՆ-ի հետ մերձենալու քաղաքականություն, Հայաստանը, ընդհակառակը, իր արտաքին քաղաքական ուղեգիծը սկսեց կառուցել Ռուսաստանի Դաշնության հետ մերձեցման հիման վրա՝ դառնալով նրա ռազմավարական դաշնակիցը աշխարհաքաղաքականորեն բարդ և հակասական տարածաշրջաններից մեկում: Ըստ էության, հայ-ռուսական միջպետական համագործակցության սկզբնավորումը, նրա որոշակի ձևերն ու մեխանիզմներն էապես կախված էին ռազմաքաղաքական ընդհանուր իրադրությունից, արտաքին սպառնալիքների և մարտահրավերների առկայությունից: Պատահական չէր, որ քննվող ժամանակափուլում Հայաստանն ու Ռուսաստանը միմյանց հետ կապվեցին ողջ Կովկասում խաղաղության ու կայունության հաստատման իրենց ձգտումներն ամրագրող մի շարք երկկողմ ու բազմակողմ պայմանագրերով ու համաձայնագրերով: Այսպես՝ 1992 թ. մարտի 20-ին ՀՀ-ն ստորագրեց ԱՊՀ Միացյալ զինված ուժերի

<sup>16</sup> Стратегия для России 1992, Независимая газета, 19 августа.

<sup>17</sup> Նահապետյան 2022, 68-69:

<sup>18</sup> Ադրբեջանը բավականին բարձր վարձավճարային հիմունքներով ՌԴ-ին տրամադրեց միայն Գաբալայի ռադիոկայանն ու կայանը:

ստեղծման մասին համաձայնագիրը՝ արտահայտելով «նախկին Խորհրդային Միության զինված ուժերը համաձայնեցված հիմքերի վրա բարեփոխելու» վերաբերյալ իր պատրաստակամությունը<sup>19</sup>: Նույն թվականի մայիսի 15-ին Տաշքենդում Ռուսաստանի նախաձեռնությամբ ստորագրվեց Հավաքական անվտանգության մասին պայմանագիրը (ՀԱՊ), որի մասնակիցը դարձավ նաև Հայաստանը<sup>20</sup>: 1992 թ. հուլիսի 6-ին ստորագրվեց ՀՀ-ում տեղակայված ռուսաստանյան ստորաբաժանումների և զորամասերի սպառազինության և տեխնիկայի փոխանցման պայմանների և ժամկետների մասին միջկառավարական համաձայնագիրը<sup>21</sup>, որի իրագործումը մեծապես նպաստեց կազմավորման փուլում գտնվող հայկական բանակի նյութատեխնիկական հենքի ապահովմանը: 1992 թ. օգոստոսի 21-ին Մոսկվայում երկու երկրների միջև բարձր մակարդակով ստորագրվեց «ՀՀ տարածքում տեղակայված ՌԴ զինված ուժերի իրավական կարգավիճակի մասին» պայմանագիրը<sup>22</sup>: Նույն օրը ստորագրվեցին նաև «Միջազգային հարաբերություններում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերին առնչվող քաղաքական խորհրդակցությունների մասին», ինչպես նաև «Սպառազինությունների ու ռազմական տեխնիկայի մշակման և արտադրության ոլորտում համագործակցության ու զինված ուժերի փոխադարձ տեխնիկական և նյութական ապահովման սկզբունքների մասին» համաձայնագրերը<sup>23</sup>: 1992 թ. սեպտեմբերի 30-ին Երևանում կնքվեց «Հայաստանի տարածքում տեղակայված ՌԴ սահմանապահ զորքերի կարգավիճակի և նրանց գործունեության պայմանների մասին» համաձայնագիրը<sup>24</sup>: Ստորագրվեցին նաև առևտրատնտեսական համագործակցության, միջպետական տնտեսական կառույցների ստեղծման մասին համաձայնագրեր, որոնց թվում՝ երկու երկրների միջև ազատ առևտրի վերաբերյալ համաձայնագիրը<sup>25</sup>:

1993 թ. սկիզբը նշանավորվեց Ռուսաստանի արտաքին քաղաքական գերակայությունների փոփոխությունով, որը ներառում էր ԱՊՀ-ի ամրապնդում, տարածաշրջանային և գլոբալ քաղաքականության ակտիվացում<sup>26</sup>: Որդեգրված մոտեցմանը համահունչ՝ Ռուսաստանն արագացրեց ԱՊՀ ինստիտուցիոնալ կառույցի ձևավորման և ամրապնդման գործընթացը, որին ակտիվորեն մասնակցում էր նաև Հայաստանը: 1993 թ. հունվարին հաստատվեց ԱՊՀ կանոնադրությունը<sup>27</sup>, իսկ սեպտեմբերին ստորագրվեց «Հա-

<sup>19</sup> Соглашение об объединенных вооруженных силах на переходный период 1992, 6.

<sup>20</sup> Մանուկյան 2022, 28:

<sup>21</sup> Мещеряков 1998, 15.

<sup>22</sup> Внешняя политика России: сборник документов 1990-1992 гг. 1996, 503-504.

<sup>23</sup> Ռուսաստան-Հայաստան ընկերություն, ստուգված դարեր շարունակ 2017, 14-15:

<sup>24</sup> Ступишин 2001, 63.

<sup>25</sup> Ռուսաստան-Հայաստան ընկերություն, ստուգված դարեր շարունակ 2017, 58-59:

<sup>26</sup> Принципы внешней политики Российской Федерации 2002, 23.

<sup>27</sup> Устав СНГ 1993, 22 января.

մագործակցության միասնական տնտեսական գոտու մասին համաձայնագիրը»<sup>28</sup>: Այդ համատեքստում 1993-1994 թվականներին, նախորդ տարիների համեմատ, ավելի ցայտուն դրսևորում ստացավ ՀՀ-ի և ՌԴ-ի միջև փոխըմբռնման և հարաբերությունների կայունացման մթնոլորտը՝ մեծապես պայմանավորված միջպետական երկկողմ լայն շփումներով և ակտիվ երկխոսության ծավալումով: 1994 թ. մարտի 17-ին երկու երկրների կառավարությունների միջև ստորագրվեց սոցիալ-տնտեսական և ռազմավարական առումներով ՀՀ-ի համար կենսական նշանակություն ունեցող Հայկական ատոմակայանի էլեկտրակայանի արդյունաբերական շահագործման, ապակոնսերվացման և վերագործարկման մասին համաձայնագիրը, ըստ որի՝ ռուսական կողմը իրականացրեց ՀԱԷԿ-ի վերագործարկման նախապատրաստական ու արդյունաբերական շահագործման ինժեներատեխնիկական աշխատանքները՝ իր վրա վերցնելով նաև այն միջուկային վառելանյութով ապահովելու հարցը<sup>29</sup>: Դրա շնորհիվ՝ 1988 թ. Սպիտակի երկրաշարժից մեկ տարի հետո փակված ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկը 1995 թ. հոկտեմբերին վերագործարկվեց: 1994 թ. հունիսին Մոսկվան հայտարարեց, թե հանդես է գալիս Անդրկովկասում իր ռազմակայանների տեղակայման հարցի արագ լուծման օգտին: Շուտով քաղաքական որոշում կայացվեց ՀՀ տարածքում ռուսաստանյան ռազմակայան հիմնելու մասին: Փաստորեն, վերջինս հիմնականում ուղերձ էր Թուրքիային, որի զինված ուժերը հաճախ ցուցադրական զորավարություններ էին անցկացնում սահմանամերձ գոտում: Դրան զուգընթաց՝ 1994 թ. օգոստոսին Երևանում ՀՀ-ի և ՌԴ-ի միջև ստորագրվեց պայմանագիր հայ-թուրքական և հայ-իրանական սահմանների համատեղ պահպանության, ինչպես նաև Հայաստանի և Ռուսաստանի սահմանապահ ծառայությունների համագործակցության մասին: Հայաստանի տարածքում տեղակայվեց Կովկասյան սահմանապահ շրջանի ռուսաստանյան սահմանապահ զորքերի «Արմենիա» հատուկ խմբավորումը: Հիշյալ պայմանագրի ստորագրումից հետո ռուսական կողմը հայտարարեց, որ Հայաստանի արտաքին սահմանները նաև ՌԴ ու ԱՊՀ սահմաններն են<sup>30</sup>: 1994 թ. նոյեմբերի 3-ին Մոսկվայում ստորագրվեց «Հակաօդային պաշտպանության բնագավառում համագործակցության մասին» պայմանագիրը<sup>31</sup>:

Այսպիսով, 1990-ականների առաջին կեսին ՀՀ-ի և ՌԴ-ի միջև վերոհիշյալ փաստաթղթերի ստորագրումն ունեցավ ռազմավարական նշանակություն՝ գործնականում ազդարարելով նոր պայմաններում հայ-ռուսական միջպետական փոխհարաբերությունների սկզբնավորումը, քանի որ իրավիճակի բարդացումը տարածաշրջանում հրամայական էին դարձնում իրավա-

<sup>28</sup> Договор о создании Экономического союза 1993, 24 сентября.

<sup>29</sup> ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու 1991-1995 թթ. 2002, 319-322:

<sup>30</sup> Ազիզբեկյան 2019, 201-202:

<sup>31</sup> Ступишин 2001, 276.

պայմանագրային հենքի վրա Հայաստան-Ռուսաստան հարաբերությունների կանոնակարգումն ու հստակեցումը:

**ՀՀ-ի և ՌԴ-ի միջև միջպետական հարաբերությունների խորացումն ու ռազմավարական դաշնակցային գործընկերության ձևավորումը 1995-2000 թթ.**

1994 թ. վերջերին արդեն իսկ համապատասխան իրավաքաղաքական հիմքեր էին ստեղծվել ՀՀ-ի և ՌԴ-ի միջև միջպետական հարաբերությունների ակտիվացման համար: Այն մեծապես պայմանավորված էր նաև Ռուսաստանի արտաքին քաղաքական գերակայությունների փոփոխությունով, երբ Արևմուտքից հիասթափված Մոսկվան սկսեց անմիջական հետաքրքրություն դրսևորել նորանկախ հանրապետությունների նկատմամբ՝ ընդլայնելով իր ազդեցությունը «մերձավոր արտասահմանում»: 1994 թ. ՌԴ նախագահ Բ. Ելցինը ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի նստաշրջանում ունեցած իր ելույթում մասնավորապես հայտարարեց Ռուսաստանի արտաքին քաղաքականության օրակարգում ԱՊՀ-ի կենտրոնական տեղ գրավելու մասին<sup>32</sup>: Համագործակցության մասնակից պետությունների հետ ՌԴ ռազմավարական ուղեգծի հաստատման մասին Ռուսաստանի նախագահի 1995 թ. սեպտեմբերի 14-ի հրամանագիրը հետխորհրդային տարածաշրջանի նկատմամբ Կրեմլի ունեցած լուրջ մտադրությունների վկայությունն էր<sup>33</sup>:

Խորհրդանշական էր, որ նշյալ հրամանագրի ստորագրումից երկու օր անց՝ 1995 թ. մարտի 16-ին, ՀՀ և ՌԴ նախագահները Մոսկվայում 25 տարի ժամկետով ստորագրեցին ՀՀ տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին պայմանագիրը<sup>34</sup>, որով, ըստ էության, երկու երկրների միջև միջպետական համագործակցության որակապես նոր փուլ սկսվեց: Գյումրիում տեղակայված ՌԴ 102-րդ ռազմակայանի (4300 զինծառայող, 74 հրասայլ, 158 զրահամեքենա, 84 համազարկային կրակի հրետանային համակարգեր, 1 ռազմաօդային էսկադրիլիա) կազմի մեջ մտան նաև Երևանում գտնվող մոտոհրաձգային գունդը և օպերատիվ ղեկավարման մարմինը<sup>35</sup>: Թեև հայտարարվեց, որ նշյալ պայմանագիրը ուղղված չէ երրորդ կողմի դեմ, այլ տարածաշրջանում իրավիճակի կայունացման կարևոր պայման է, սակայն այն բազմաթիվ ենթադրությունների և կանխատեսումների տեղիք տվեց: Մասնավորապես միջազգային շատ տեղեկատվական միջոցներ, մեկնաբանելով պայմանագրի ստորագրման փաստը, նշում էին, թե Հայաստանը տարածաշրջանում Ռուսաստանի միակ հենարանն է, որի միջոցով ապահով-

<sup>32</sup> Yeltsin's speech at the UN General Assembly 1994, 26 september.

<sup>33</sup> Указ Президента Российской Федерации Об утверждении Стратегического курса Российской Федерации с государствами-участниками Содружества Независимых Государств 1995, 14 сентября.

<sup>34</sup> Ռուսաստան-Հայաստան ընկերություն, ստուգված դարեր շարունակ 2017, 58-59:

<sup>35</sup> Тищенко 1998, 560.

վում է վերջինիս գերիշխող դերն ու հիմք նախապատրաստվում Հարավային Կովկասում նրա դիրքերի ամրապնդման համար<sup>36</sup>: Մինչդեռ համաձայն պայմանագրի՝ ռազմակայանը, մտնելով ՌԴ Հարավային ռազմական օկրուգի կազմի մեջ, բացի Ռուսաստանի շահերը պաշտպանելու պարտականությունից, Հայաստանի զինված ուժերի հետ մեկտեղ ապահովելու էր նաև ՀՀ անվտանգությունը: Հատկանշական էր, որ ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևի 2010 թ. օգոստոսին Հայաստան կատարած պետական այցի ժամանակ պայմանագրի գործողության ժամկետը 25 տարուց երկարաձգվեց մինչև 49 տարի<sup>37</sup>: Միաժամանակ 102-րդ ռազմակայանի պատասխանատվության աշխարհագրական գոտու մեջ ներառվեց Հայաստանի ամբողջ տարածքը:

ՀՀ-ում հայ-ռուսական հարաբերությունների շուրջ շարունակաբար ընթացող հանրային քննարկումներում շահարկվում է այն թեզը, թե հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի ներկայությունը սահմանափակում է Հայաստանի ինքնիշխանությունը: Մինչդեռ օտարերկրյա ռազմակայանների առկայությունը տարբեր երկրներում, որպես կանոն, ենթադրում է երկուստեք շահեր: Օրինակ՝ ԱՄՆ-ն աշխարհի տարբեր մասերում ունի բազմաթիվ ռազմակայաններ, որոնց կեսը գտնվում է Եվրոպայում՝ Գերմանիայում, Մեծ Բրիտանիայում, Իտալիայում, Բելգիայում, Իսպանիայում, Լեհաստանում և այլ պետություններում: Սակայն տվյալ երկրների հանրությունները չեն համարում, որ այդ ռազմակայանների առկայությունն ինչ-որ կերպ սահմանափակում է իրենց երկրների ինքնիշխանությունը<sup>38</sup>:

ՀՀ-ի և ՌԴ-ի միջև միջպետական համագործակցության ծավալմանն ու ամրապնդմանը նպատակամիտված վերոնշյալ փաստաթղթի ստորագրմանը հաջորդեց հայ-ռուսական հարաբերություններում կարևոր պատմաքաղաքական, հատկապես հայ ժողովրդի համար բացառիկ նշանակություն ունեցող իրադարձություն: 1915 թվականին հայ ժողովրդի նկատմամբ իրականացված ցեղասպանության 70-ամյակի նախօրեին՝ 1995 թ. ապրիլի 14-ին, ՌԴ Պետական դուման ընդունեց «1915-1922 թթ. հայ ժողովրդի ցեղասպանության դատապարտման մասին» հայտարարություն (կողմ՝ 282, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)<sup>39</sup>: Դրանով իսկ Ռուսաստանն աշխարհի մեծ տերություններից առաջինն ընդունեց Արևմտյան Հայաստանում Թուրքական կայսրության կողմից իրականացված Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող բանաձև: Վերջինում ներառված դրույթների ամբողջականությունը ներկայացվում էր որպես «1915-1922 թթ. հայերի բնաջնջման կազմակերպչի դատապարտման և ապրիլի 24-ը որպես ցեղասպանության զոհերի հիշատակի օր դիտարկելու հիմնավորում»: Իր բովանդակությամբ նշյալ բանա-

<sup>36</sup> Ազիզբեկյան 2019, 203:

<sup>37</sup> Նահապետյան 2022, 40:

<sup>38</sup> Հարությունյան 2010, 27-28:

<sup>39</sup> Мурадян 2009, 90.

ձևը գերազանցում էր Հայոց ցեղասպանությանը վերաբերող նախորդ միջազգային իրավական փաստաթղթերը: Այստեղ ընդգծվում էր Հայոց ցեղասպանության ծրագրված բնույթը, նշվում, որ հայ ժողովուրդը բնաջնջվել էր «իր պատմական հայրենիքում», և շեշտվում էր հավատարմությունը «մարդկության դեմ հանցագործության» դատապարտմանը: Օգտագործվում էր «1915-1922 թթ.», այլ ոչ թե միայն «1915 թ. իրադարձություններ» ձևակերպումը: Միաժամանակ, առանձնանշվում էր ռուս և հայ ժողովուրդների եղբայրությունը<sup>40</sup>: Փաստորեն, այդ կարևոր քաղաքական քայլով Ռուսաստանը նպատակ էր հետապնդում Թուրքիային ցույց տալ, որ Հարավային Կովկասում իր ազդեցությունը պահպանելու համար մտադիր է օգտագործել բոլոր հնարավոր քաղաքական լծակները:

ՌԴ Պետդումայի ընդունած վերոնշյալ հայտարարությունը դրական ազդեցություն ունեցավ ՀՀ-ի և ՌԴ-ի միջև ռազմավարական գործընկերային հարաբերությունների զարգացման վրա:

Հայ-ռուսական հարաբերությունների ռազմավարական բնույթը փաստորեն վերջնականապես ձևակերպվեց 1996 թ. հուլիսին երկու երկրների պաշտպանության նախարարությունների կողմից Գյումրիի 102-րդ ռազմակայանի և Հայաստանի զինված ուժերի զորամիավորումներից մեկի կազմում երկկողմ Միացյալ զորախումբ ստեղծելու մասին Արձանագրության ստորագրմամբ<sup>41</sup> և հատկապես 1997 թ. օգոստոսի 29-ին Մոսկվայում ՀՀ և ՌԴ նախագահներ Բ. Ելցինի և Լ. Տեր-Պետրոսյանի կողմից «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին» Մեծ Պայմանագրի կնքմամբ: Վերջինիս մեջ մասնավորապես նշվում էր, որ «Բարձր Պայմանավորվող Կողմերը սերտորեն կգործակցեն Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և անվտանգության ապահովման գործում... համատեղ կձեռնարկեն բոլոր իրենց համար հասանելի միջոցները՝ խաղաղության սպառնալիքները վերացնելու և որևիցե պետության կամ պետությունների խմբի կողմից խաղաղության խախտման կամ ագրեսիայի գործողությունները կասեցնելու համար և կցուցաբերեն միմյանց անհրաժեշտ օգնություն, ներառյալ ռազմական՝ կոլեկտիվ ինքնապաշտպանության իրավունքը իրագործելու ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածին համապատասխան»<sup>42</sup>:

<sup>40</sup> Թունյան 2022, 57-58:

<sup>41</sup> Նշյալ արձանագրության ստորագրումը հայ հասարակության որոշ մասի պառակտման պատճառով դարձավ: Այսպես կոչված «արևմտամետ» գործիչներն այն ներկայացնում էին որպես Ռուսաստանի կողմից Հայաստանի վերջնական նվաճման հերթական մեխանիզմ, իսկ «ռուսամետներն» այն դիտարկում էին իբրև Հայաստանի և նույնիսկ Արցախի անվտանգության ապահովման հերթական երաշխիք (տե՛ս Ստեփանյան <https://hetq.am/hy/article/7613>, 42-43):

<sup>42</sup> ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու 1996-1998 թթ. 2002, 409-410:

Երկու պետությունների միջև ռազմավարական հարաբերությունների զարգացման գագաթնակետը դարձավ 2000 թ. սեպտեմբերի 26-ին Մոսկվայում ՌԴ և ՀՀ նախագահներ Վ. Պուտինի և Բ. Քոչարյանի կողմից ստորագրված «ՀՀ և ՌԴ միջև XXI դար ուղղված դաշնակցային փոխգործակցության մասին» հռչակագիրը<sup>43</sup>, որով կողմերը փաստորեն հայտարարեցին միմյանց միջև ռազմավարական հարաբերությունները XXI դարի սկզբներին դաշնակցային մակարդակի հասցնելու իրենց մտադրության մասին: Ըստ էության, թե՛ Ռուսաստանը և թե՛ Հայաստանը աշխարհի ոչ մի պետության հետ չէին ստորագրել միջպետական համագործակցությանն առնչվող նման որակի փաստաթղթեր:

Սակայն, չնայած վերոնշյալին, երբ 2020-ականների սկզբներին Ադրբեջանի զինուժը մի քանի լայնածավալ հարձակում կատարեց ՀՀ սահմանների վրա, որն ուղեկցվեց հրոսակների ներխուժմամբ Հայաստանի ինքնիշխան տարածք, հարյուրավոր հեկտար հողերի զավթմամբ և մարդկային զոհերով: Մոսկվան որևէ աջակցություն չցուցաբերեց Երևանին: Ընդ որում, ՀՀ իշխանությունների՝ ՀԱՊԿ-ից (որում գերիշխող դեր ունեն Ռուսաստանը) և ՌԴ-ից ռազմական օգնություն ստանալու խնդրանքին՝ առաջինն այդպես էլ հստակ չպատասխանեց, իսկ երկրորդը, անտեսելով հայ-ռուսական ստորագրած փաստաթղթերում և հատկապես 1997 թ. Մեծ պայմանագրում ամրագրված հիմնարար դրույթները, Երևանին խորհուրդ տվեց Բաքվի հետ միասին ձեռնամուխ լինել սահմանագծման և սահմանազատման աշխատանքների սկսմանը: Ավելին, ո՛չ ՀԱՊԿ-ը և ո՛չ էլ ՌԴ-ն նույնիսկ համարժեք քաղաքական գնահատական չտվեցին Ադրբեջանի զավթողական քաղաքականությանը: Բաքվի ագրեսիվ պահվածքի միջազգային դատապարտման ֆոնի վրա ռազմավարական գործընկերների նման դիրքորոշումն առաջացրեց Հայաստանի հանրության մեծ մասի տարակուսանքն ու խոր հիասթափությունը Մոսկվայի նկատմամբ՝ պարարտ հող ստեղծելով հանրապետությունում Ռուսաստանի դեմ քարոզչության ծավալման և հակառուսական տրամադրությունների աճի համար:

Այսպիսով, 1990-ականներին՝ ՀՀ-ի և ՌԴ-ի միջև միջպետական հարաբերությունների սկզբնավորման և խորացման փուլում ձևավորվեց հարուստ իրավապայմանագրային հենք, որը, նպաստելով տվյալ ոլորտում երկու երկրների միջև համապարփակ փոխգործակցության զարգացմանը, հանգեցրեց Երևանի ու Մոսկվայի միջև ռազմավարական գործընկերության հաստատմանը: Վերջինս հենք հանդիսացավ XXI դ. սկզբներին հայ-ռուսական միջպետական փոխգործակցությունը ռազմավարական դաշնակցային մակարդակի հասցնելու համար: Սակայն շուրջ քառորդ դար անց ՀՀ-ի և ՌԴ-ի միջև հարաբերությունները լուրջ ճաքեր տվեցին, երբ Մոսկվան հրա-

<sup>43</sup> Ռուսաստան-Հայաստան ընկերություն, ստուգված դարեր շարունակ 2017, 18-19:

ժարվեց օգնություն ցուցաբերել Ադրբեյջանի կողմից ռազմական ագրեսիայի ենթարկված և տարածքային ու մարդկային կորուստներ կրած իր ռազմավարական դաշնակցին՝ հանգեցնելով ՀՀ-ում հակառուսական տրամադրությունների խորացմանը: Եթե մի քանի տարի առաջ Հայաստանի բնակչության 80-85%-ը բացարձակ դրական վերաբերմունք ուներ Ռուսաստանի հանդեպ, ապա 2023 թ. այդ նշածողը իջավ մինչև 60%-ի՝ շարունակելով դրսևորել նվազման միտում, իր հերթին Ռուսաստանում էլ աճում էր բացասական տրամադրվածությունը Հայաստանի նկատմամբ<sup>44</sup>: Նման իրավիճակը չի բխում երկու ժողովուրդների շահերից: Մասնավորապես ՀՀ հանրության շրջանում ՌԴ-ի նկատմամբ վստահության անկման միտումի խորացումը կարող է լուրջ կոպան դառնալ Ռուսաստանից Հայաստանի հեռացման համար: Վերջինս թերևս կհանգեցնի ինչպես Ադրբեյջանի, այնպես էլ ողջ Հարավային Կովկասի վրա ՌԴ-ի քաղաքական ազդեցության և ներգործության լծակների նվազմանը:

### **Եզրակացություններ**

1992-2000 թթ. ՀՀ-ի և ՌԴ-ի միջև միջպետական հարաբերությունների սկզբնավորումն ու ծավալումն ընդհանուր առմամբ լիովին համապատասխանում էին հայ և ռուս ժողովուրդների կենսական շահերին՝ ծառայելով երկու երկրների անվտանգության ամրապնդման, սոցիալ-տնտեսական, գիտակրթական, մշակութային զարգացման նպատակներին և պայթյունավտանգ Հարավային Կովկասի տարածաշրջանում կայունության ամրապնդմանը: Տարբեր ոլորտներում միջպետական ռազմավարական դաշնակցային համագործակցությունն արտահայտվում էր նաև ՀՀ-ի և ՌԴ-ի մասնակցությամբ տարածաշրջանային ինտեգրումային գործընթացներին, որոնք նպաստում էին երկու երկրների միջև կապերի ամրապնդմանն ու բազմազանեցմանը: Ըստ էության, Մոսկվայի համար կարևոր էր Երևանի հետ ռազմավարական դաշնակցային հարաբերությունների պահպանումը ԱՊՀ-ի և ՀԱՊԿ-ի միջոցով, քանի որ Ռուսաստանի հուսալի ներկայությունը Մեծ Կովկասի հարավային կողմում ԽՍՀՄ-ի փլուզման հենց սկզբից ապահովվում էր ՀՀ-ի հետ միությամբ: Մոսկվայում թերևս գիտակցում էին, որ Հայաստանի կորուստը կարող էր ուղեկցվել Հարավային Կովկասում ռուսական ռազմական և, հետևաբար, քաղաքական ներկայության անխուսափելի ավարտով, որը անվտանգային լուրջ խնդիրների առջև կարող էր կանգնեցնել նաև ՀՀ-ին: Հիմնականում, վերջինից ելնելով, Հայաստանի հանրության զգալի մասը հայ-ռուսական անհամաչափ ուղղահայաց հարաբերությունները դիտարկում էր իբրև պատմական անխուսափելիություն, որի հե-

<sup>44</sup> Ст'ю Погосян 2023, Комсомольская правда, 14-20 июля, 6:



տևանքով Ռուսաստանը, ոչ միշտ հաշվի առնելով ռազմավարական դաշնակցի շահերը, Հայաստանի հետ իր հարաբերությունները հիմնականում կառուցում էր ոչ իրավահավասար սկզբունքների հիման վրա: ՌԴ քաղաքական ընտրանու և հանրության որոշակի շրջանակների ներկայացուցիչներ ՀՀ-ն դիտարկում էին բացառապես որպես Ռուսաստանի հետխորհրդային ազդեցության ոլորտի մի հատված: Ոմանք էլ բացահայտորեն Հայաստանը հայտարարում էին իբրև Հարավային Կովկասում Ռուսաստանի աշխարհաքաղաքական «ֆորպոստ»: Դրան զուգընթաց՝ ՌԴ քաղաքական շրջանակներում տիրապետող էր նաև «իսկ ուր պիտի գնաք մեզանից» սկզբունքը: Նման մոտեցումները, բնականաբար, հայաստանյան հանրության որոշ մասի մեջ Մոսկվայի հանդեպ լուրջ դժգոհություն էին առաջացնում, ինչը, բնականաբար, բացասաբար էր անդրադառնում հայ-ռուսական միջպետական հարաբերությունների վրա: Մինչդեռ ՀՀ-ի և ՌԴ-ի միջև ռազմավարական դաշնակցային միջպետական հարաբերությունների բնականոն զարգացումը ենթադրում է, որ վերջիններս ոչ թե պետք է ընկալվեն որպես ուղղաձիգ առնչություններ հովանավոր և հովանավորյալ պետությունների միջև, ինչպես շատերը տեսնում էին Մոսկվայում և Երևանում, այլ իբրև հորիզոնական հարաբերություններ՝ ընդհանուր շահեր, պատմամշակութային և ժողովրդագրական կապեր ունեցող երկու իրավահավասար երկրների միջև:

### **Օգտագործված գրականություն**

- Ազիզբեկյան Ռ. 2019, ՀՀ և ՌԴ միջև ռազմաքաղաքական համագործակցության սկզբնավորումն ու զարգացումը 1991-2008 թթ., Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), 20, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, էջ 191-220:
- Գևորգյան Կ. 2010, Ռուսաստանի Դաշնության դերը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում, Բանբեր Երևանի համալսարանի, միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, 130.6, Երևան, էջ 44-53:
- Թունյան Վ. 2022, Ռուսաստանի Դաշնության Պետական դոմայի բանաձևերը Հայոց ցեղասպանության վերաբերյալ (XX դ. ավարտ - XXI դ. սկիզբ), Հայաստան-Ռուսաստան. բարեկամություն, համագործակցություն և փոխադարձ օգնություն (Հոդվածների ժողովածու), Երևան, «Նահապետ», էջ 56-60:
- Հարությունյան Գ. 2010, Հայ-ռուսական հարաբերությունների արդի փուլը, 21-րդ դար, թիվ 6 (34), էջ 24-35:
- ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու 1991-1995 թթ. 2002, «ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր», հրատարակության 1-ին տարի, N 1 (1), 12 հունիսի, 731 էջ:
- ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու 1996-1998 թթ. 2002, ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր, հրատարակության 1-ին տարի, N 2 (2), 12 հունիսի, 601 էջ:
- Մանուկյան Ժ. 2022, ՀՀ-ՌԴ ռազմավարական համագործակցությունը ՀԱՊԿ-ի շրջանակում, Հայաստան-Ռուսաստան. բարեկամություն, համագործակցություն և փոխադարձ օգնություն (Հոդվածների ժողովածու), Երևան, «Նահապետ», էջ 28-32:

- Մելքոնյան Ռ. 2021, Թուրքական նախապայմաններ ոչ միայն կան, այլև ավելացել են, այդ թվում՝ Չանգեզուրի միջանցքի հարցը, <https://www.aravot.am/2021/12/20/1236993/> (ներբեռնման օրը՝ 10.01.2024):
- Նահապետյան Հ. 2022, Հայաստանի հանդեպ Թուրքիայի ագրեսիվ նկրտումները և Ռուսաստանի Դաշնության ռազմաքաղաքական ղեկավարության սկզբունքային կեցվածքը (1992-1994 թթ.), Հայ-ռուսական ռազմավարական դաշինքի ընտիր էջեր (հոդվածների ժողովածու), Երևան, «Նահապետ», էջ 67-74:
- Նահապետյան Հ. 2022, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության 30-ամյա ռազմական համագործակցության մասին, Հայաստան-Ռուսաստան. բարեկամություն, համագործակցություն և փոխադարձ օգնություն (Հոդվածների ժողովածու), Երևան, «Նահապետ», էջ 39-43:
- Ռուսաստան-Հայաստան ընկերություն, ստուգված դարեր շարունակ. պատմական և վավերագրական ցուցահանդեսի գրացուցակ 2017, Մոսկվա, հրատ. նշված չէ, 247 էջ:
- Ռուսաստանը և Հայաստանը համաշխարհային և տարածաշրջանային քաղաքականության համատեքստում. հիմնախնդիրներն ու հեռանկարները. Վերլուծական զեկույց 2010, Մոսկվա-Երևան, Եվրասիական հետազոտությունների ինստիտուտ, 134 էջ:
- Սաֆարյան Ա. 2023, Հարավային Կովկասում նոր իրողությունները ռուս-թուրքական ժամանակակից հարաբերությունների համատեքստում, <https://www.soyuzinfo.am/hy/2023/06/11455/>, 9 հունիսի (ներբեռնման օրը՝ 11.01.2024):
- Սաֆրաստյան Ռ. 2023, Եթե Թուրքիայի ընդդիմությունը դառնա իշխանություն, ապա Հայաստանից, միևնույն է, ուզելու են այդ «գինը», «Առավոտ», 27 ապրիլի:
- Ստեփանյան Դ., Հայ-ռուսական դաշնակցության բացասական և դրական կողմերը, էջ 37-52, <https://hetq.am/hy/article/76137> (ներբեռնման օրը՝ 11.01.2024):
- Внешняя политика России: сборник документов 1990-1992 гг. 1996, МИД РФ, Москва, «Международные отношения», 607 с.
- Декларация о союзническом взаимодействии между Российской Федерацией и Азербайджанской Республикой, <http://www.kremlin.ru/supplement/5777> (ներբեռնման օրը՝ 11.01.2024).
- Дериглазова Л., Минасян С. 2011, Нагорный Карабах: парадоксы силы и слабости в асимметричном конфликте. Аналитические доклады Института Кавказа, N 3, январь, Ереван, Институт Кавказа, 128 с.
- Договор о создании Экономического союза (24 сентября 1993 года). Основополагающие документы СНГ, <https://www.e-cis.info/page/3373/79424/> (ներբեռնման օրը՝ 11.01.2024).
- Коджаман О. 2004, Южный Кавказ в политике Турции и России в постсоветский период, Москва, «Русская панорама», 296 с.
- Козырев А. 1992, Кавказские метаморфозы, Независимая газета, 20 августа.
- Мещеряков В. 1998, Армения: стратегия выживания, Азия и Африка сегодня, N 4, с. 7-16.
- Мурадян М.Ф. 2009, Российско-армянские отношения в последнем десятилетии XX века, Լրաբեր հասարակական գիտությունների, N 1 (624), հունվար-ապրիլ, էջ 84-96:
- Погосян Г. 2023, Стремясь в Европу, мы попадем под турецкую экспансию, Комсомольская правда, 14-20 июля, 6.
- Принципы внешней политики Российской Федерации 2002, Внешняя политика и безопасность современной России. 1991-2002. Хрестоматия в 4 т. Составитель Т.А. Шаклеина, т. IV. Документы, Москва, «Иноцентр», 363 с.
- Соглашение об объединенных вооруженных силах на переходный период 1992, Дипломатический вестник МИД РФ, N 7, с. 6-7.

- Стратегия для России 1992, Тезисы Совета по внешней и оборонной политике РФ, Независимая газета, 19 августа.
- Ступишин В. 2001, Моя миссия в Армении. 1992-1994. Воспоминания первого посла России, Москва, «Academy», 296 с.
- Тищенко Г. 1998, Вооруженные силы и военно-политический курс Армении, Армения: проблемы независимого развития, под. ред. Е. Кожокина, Москва, «РИСИ», 600 с.
- Указ Президента Российской Федерации Об утверждении Стратегического курса Российской Федерации с государствами-участниками Содружества Независимых Государств 1995, 14 сентября, N 940, <https://www.docs.cntd.ru> (ներբերումն օրը՝ 15.01.2024).
- Устав СНГ 1993, 22 января, <https://cis.minsk.by/page/180/ustav-sodruzestva-nezavisimyh-gosudarstv-g-minsk-22-anvara-1993-goda> (ներբերումն օրը՝ 10.01.2024).
- Yeltsin's speech at the UN General Assembly 1994, SWB-SU, SU2/21 12, 26 September, p. B/4.
- Hovhannisyán N. 1998, The Foreign Policy of Armenia, Yerevan, "Noyan Tapan", 108 p.

## МЕЖГОСУДАРСТВЕННЫЕ ОТНОШЕНИЯ МЕЖДУ РЕСПУБЛИКОЙ АРМЕНИЯ И РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИЕЙ В 1992-2000 ГОДАХ

Рубен Азизбекян

### Резюме

После развала Советского Союза становление межгосударственного сотрудничества между Арменией и Россией было в основном обусловлено логикой действующего миропорядка на Южном Кавказе и взаимными интересами двух стран.

Стремясь сохранить и укрепить свое многовековое влияние в этом регионе, Россия в качестве реального союзника рассматривала Армению, которая после развала СССР считала Россию гарантом собственной безопасности. Это в основном было обусловлено сформировавшейся веками общностью историко-культурных ценностей и дружбой между двумя народами, а также совпадением взаимных глобальных интересов.

1992-1994 годы стали началом формирования армяно-российских межгосударственных отношений, отмеченных созданием договорно-правовой базы между двумя странами. Было подписано множество взаимовыгодных документов, охватывающих разные отрасли сотрудничества, среди которых краеугольными были договора «О российской военной базе на территории Республики Армения» от 16 марта 1995 года, «О дружбе, сотрудничестве и взаимной помощи» от 29 августа 1997 года и «Декларация о союзническом взаимодействии между Республикой Армения и Российской Федерацией, ориентированном в XXI век» от 26 сентября 2000 года.

Принятие этих документов имело важное значение и подчеркивало стремление двух стран к тесному сотрудничеству и установлению стратегического партнерства.

**Ключевые слова** – Республика Армения, Российская Федерация, Южный Кавказ, взаимовыгодное сотрудничество, договорно-правовая база, межгосударственные взаимоотношения, стратегическое партнерство.

## INTERSTATE RELATIONS BETWEEN THE REPUBLIC OF ARMENIA AND RUSSIAN FEDERATION IN 1992-2000S

Ruben Azizbekyan

### Abstract

The establishment of interstate cooperation between Armenia and Russia after the collapse of the Soviet Union was mainly determined by the logics of the current world order in the South Caucasus and the mutual interests of both countries.

Striving to preserve and strengthen its centuries-old influence in this region, Russia regarded Armenia as a real Ally, which, in its turn, being after the collapse of the USSR under serious security threats, emanated from its next-door neighbors – Azerbaijan and Turkey, also preferred Russia as a guarantor of its own security. This was mainly stipulated by the centuries-old common historical and cultural values and friendship between the two peoples, as well as the concurrence of mutual global interests.

The shaping of Armenian-Russian interstate relations had particularly begun in 1992-1994; these years were marked by the conclusion of Treaties and creation of a legal framework between the two countries. In 1995-2000, it had expanded and strengthened. A number of mutually beneficial documents were signed, covering various sectors of cooperation; the cornerstones among them were an Agreement "About the Russian military base on the territory of the Republic of Armenia", dated March 16, 1995, the Great Agreement "On friendship, cooperation and mutual assistance" of August 29, 1997 and a "Declaration on allied interaction between the Republic of Armenia and the Russian Federation, oriented towards the 21<sup>st</sup> century", concluded on September 26, 2000.

Acceptance of these documents was important, since they emphasized the desire of two countries for close cooperation, proclaimed the establishment of a strategic partnership in the new conditions and began the transition to the allied relations.

**Key words** – Republic of Armenia, Russian Federation, South Caucasus, mutually beneficial cooperation, treaties and legal framework, interstate relationships, strategic partnership.

# XIII Դ. ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱԿԱՄՈՆՈՂԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԶԱՔԱՐՅԱՆ ԻՇԽԱՆԱՏՈՒՄԸ

## Արտաշես Շահնազարյան

Պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ՀՀ, Երևան, Մարշալ Բաղդասարյան 24/գ

Էլ. հասցե՝ artashes.shahnazaryan1950@gmail.com

ORCID: 0009-0006-7000-5335

Հոդվածը ներկայացվել է 30.04.2024, գրախոսվել է 19.05.2024, ընդունվել է տպագրության 02.08.2024

DOI: 10.53548/0320-8117-2024.2-29

Մոնոգրությունը 1236 թ. Հյուսիսարևելյան, այն է՝ Զաքարյան Հայաստանն ու Արևելյան Վրաստանը գրավելուց հետո ձեռնամուխ եղան իրենց տիրապետության հաստատմանը: Այն ուղեկցվում էր հարկերի պարբերական բարձրացմամբ և մոնոգրությունների՝ ծանր գրկանքներով ու այլ վտանգներով լի ռազմարշավներին իրենց զորամասերով հայ ու վրաց իշխանների պարտադիր մասնակցությամբ: Բնականաբար, դա հարուցում էր վերջիններիս դժգոհությունը՝ տեղիք տալով հակամոնղոլական ընդվզումների: XIII դ. տեղի ունեցավ նման երեք ընդվզում (1245, 1249, 1259-1261 թթ.): Դրանցից առաջին երկուսն ապստամբության չվերածվեցին, քանի որ դեռ նախապատրաստվելիս, մատնության պատճառով բացահայտվելով, ձախողվեցին: Ինչ վերաբերում է վերջինին, ապա այն վերածվեց համառ ու բավականին հզոր ապստամբության, որը մոնոգրությունը ճշտեցին մեծ ջանքերի գնով:

Զաքարյան իշխանատոհմն այս ընդվզումներին ու դրանց հետ կապված իրադարձություններին մասնակցությունից անմասն չմնաց: Սակայն դրանց նկատմամբ նրա ներկայացուցիչների դիրքորոշումը նույնական չէր:

**Բանալի բառեր՝** մոնոգրություն, Զաքարյան իշխանատոհմ, Կոխտաթափ, Ավագ աթաբեկ, Զաքարե Գ, Ուլու Դավիթ, Սամցխե:

## Ներածություն

XII դ. վերջին տասնամյակներից XIV դ. երկրորդ կեսն ընկած ժամանակահատվածում Զաքարյան Հայաստանում և այն ներառած նախ վրացական, ապա արևելավրացական թագավորությունում տեղի ունեցած ռազմաքաղաքական իրադարձություններում Զաքարյան իշխանատոհմը գործուն մասնակցություն է ունեցել: Դրանցից XIII դ. հայ-վրացական հակամոնղոլական ընդվզումները բացառություն չեն: Այդ ընդվզումներից առաջինները դեռ նախապատրաստական շրջանում մոնոգրությունը, մատնության շնորհիվ բացահայտվելով, արագ ու դաժանորեն ճնշեցին, իսկ վերջինը վերածվեց համառ ու բավական հզոր ապստամբության:

Այս իրադարձությունների ժամանակ չորս ճյուղից (Ավագյան ու Շահնազարյան տներ, Վահրամյաններ, Թմոզվեցիներ) բաղկացած Զաքարյան իշխանատոհմի ներկայացուցիչների դիրքորոշումը նույնական չէր: Ավելին, վերջին՝ երրորդ ընդվզման ժամանակ միանման չէր անգամ Շահնազարյան տան

ներկայացուցիչների դիրքորոշումը: Եվ դա այն դեպքում, երբ այդ իշխանատոհմի անդամներն իրենց տոհմի ավագ, վրացական թագավորության ամիրսպասալար (սպարապետ) և մանդատուրթ-ուխուցես (արքունի արարողապետ) Ջաքարե Բ-ի մահվանը (1212 թ.) նախորդող շրջանում բոլոր կարևոր իրադարձությունների ժամանակ համերաշխություն էին դրսևորում:

Ճիշտ է, խնդրո առարկա հարցը, հատկապես դրա հակամոնղոլական ընդվզումներին վերաբերող մասը հայ և վրաց հետազոտողների ուշադրությունից չի վրիպել, սակայն կարոտ է համապատասխան սրբագրումներով նորովի քննության ու լրացման:

### Կոխտասթավիի հավաքը

Մոնղոլները 1236 թ.<sup>1</sup> Ջաքարյան Հայաստանն ու Արևելյան Վրաստանը գրավելուց հետո հասան այն բանին, որ վրաց Ռուսուդան թագուհին (1223-1245) ընդունի իրենց գերիշխանությունը: Նրա որդի Դավիթը, որը հետագայում կոչվեց Դավիթ Նարին, 1244 թ. ուղարկվեց մոնղոլական տերության երկրորդ դեմք և Ոսկե հորդայի տիրակալ Բաթու խանի մոտ՝ հաստատվելու մորը գահակից: Նախքան այդ՝ 1242 թ. Բաթուի մոտ էր ուղարկվել նաև Ջաքարյան իշխանատոհմը գլխավորող Ավագը: Նա վրացական թագավորության երկրորդ դեմքն էր՝ աթաբեկը (թագաժառանգի խնամակալը) ու ամիրսպասալարը:

Սակայն 1245 թ. առաջին կեսին, հավանաբար սկզբում, Ռուսուդան թագուհին վախճանվեց, և երկրում սկսվեց անթագավորության շրջան, քանի որ նրա որդի Դավիթը դեռ գտնվում էր մոնղոլների մոտ: Վերջիններիս մոտ էր նաև Ավագ Ջաքարյանը: Այս պայմաններում երկրի ներքին կայունությունը վտանգված էր, որը շուտով իրեն զգացնել տվեց: Բացի այդ, Ալմութը կենտրոն ունեցող շիա ծայրահեղականների՝ իսմայիլիտների դեմ պայքարող մոնղոլներն այնտեղ արշավելիս օգտագործում էին նաև հայ-վրացական իշխանագործը: XIV դ. վրաց Անանուն ժամանակագրի համաձայն, այդ պատճառով «վրացիները (իմա՝ հայ և վրաց իշխանները – Ա.Շ.) մեծ նեղության մեջ էին թաթարների (մոնղոլների – Ա.Շ.) կողմից»<sup>1</sup>: Բացի այդ, շրջակա թուրքական ու թուրքմենական իշխանավորները, «օգտվելով վրացիների՝ թագավոր չունենալուց և թաթարների հետ նրանց զորքի՝ Ալմութ գնալուց»<sup>2</sup>, ավերելու ու կոռուպտելու նպատակով ներխուժում էին Ջաքարյան Հայաստանի և Արևելյան Վրաստանի սահմանային գավառներ<sup>3</sup>: Նրանց դեմ պայքարին իր և հորեղբորդի Ավագի միացյալ զորքով հաջողությամբ մասնակցում էր նաև վրացական թագավորության մանդատուրթ-ուխուցես Շահնշահ Ա Ջաքարյանը<sup>4</sup>:

<sup>1</sup> Картлис цховреба. История Грузии 2008, 355.

<sup>2</sup> Картлис цховреба. История Грузии 2008, 355.

<sup>3</sup> Картлис цховреба. История Грузии 2008, 355-356.

<sup>4</sup> Картлис цховреба. История Грузии 2008, 355.

Ճիշտ է, այս հարձակումները պատշաճ հակահարված էին ստանում, բայց Ալմուֆ արշավելու պարտականությունը հարուցում էր հայ-վրացական ավատատիրական վերնախավի բուռն դժգոհությունը: Ստեղծված վիճակից ելք փնտրելու նպատակով նրա որոշ ներկայացուցիչներ խորհրդակցելու են հավաքվում Ախալցխայից հյուսիս-արևելք գտնվող Կոխտասթավի կոչվող վայրում<sup>5</sup>: Այդ իրադարձության միակ աղբյուր XIV դ. վրաց Անանուն ժամանակագիրը հավաքվածների թվում Ջաքարյան իշխանատոհմից հիշատակում է միայն նրա կրտսեր ճյուղեր Վահրամյանների ու Թմոզվեցիների ներկայացուցիչներին՝ վրացական թագավորության մասխութ-ուխուցես (արքունի սենեկապետ) Վահրամ Գագեցուն և Սարգիս Բ Թմոզվեցուն<sup>6</sup>: Իսկ ավագ ճյուղեր Ավագյան ու Շահնշահյան տների ներկայացուցիչներ Ավագ աթաբեկին ու Շահնշահ Ա-ին չի թվարկում: Եվ դա այն դեպքում, երբ վերջինիս այդ իրադարձությանն անդրադառնալուց քիչ առաջ, երկու անգամ՝ նախ հպանցիկ, ապա ծավալուն կերպով հիշատակում է<sup>7</sup>:

Ավագի պարագայում դա բացատրվում է երկրից նրա բացակայությամբ: Ինչ վերաբերում է Շահնշահ Ա-ին, ապա Կոխտասթավիի հավաքին նրա բացակայության առավել հավանական պատճառները կարող են երկուսը լինել՝ կա՛մ հիվանդությունը, կա՛մ էլ չկամությունը: Դրանցից առաջինը չբացատրվում հանդերձ՝ առավել հավանական է թվում երկրորդը, և ահա թե ինչու: Բանն այն է, որ Շահնշահ Ա-ն գործուն մասնակցում էր մոնղոլների ձեռնարկած ռազմական գործողություններին և գլխավորում էր այդ իրադարձությունից քիչ առաջ նրանց ստեղծած ութ ռազմավարչական շրջաններից՝ թումաններից մեկը<sup>8</sup>: Բացի այդ, մոնղոլները նրան էին հանձնել երկրից բացակայող և օրինական արու ժառանգ չունեցող Ավագի թումանը<sup>9</sup>: Մինչ այդ էլ, երբ Ավագը մոնղոլներից նեղվելով՝ ապաստանել էր Ափխազքում գտնվող Ռուսուդան թագուհու մոտ<sup>10</sup>, նվաճողները «ետուն զաշխարհս նորա ի ձեռն Շահնշահի»<sup>11</sup>: Կիրակոս Գանձակեցին դա բացատրում է նրանց «եղբայր» լինելով<sup>12</sup>, չնայած նրանք հորեղբորորդիներ էին: Իրականում մոնղոլների այդ քայլը պայմանավորված էր ոչ թե Ավագի ու Շահնշահ Ա-ի մերձավոր ազգականներ լինելով, այլ վերջինիս նկատմամբ նրանց եթե ոչ բարեհաճ, ապա համեմատաբար մեղմ վերաբերմունքով:

<sup>5</sup> Картлис цховреба. История Грузии 2008, 356.

<sup>6</sup> Картлис цховреба. История Грузии 2008, 408, пр. 35.

<sup>7</sup> Картлис цховреба. История Грузии 2008, 355.

<sup>8</sup> Картлис цховреба. История Грузии 2008, 353.

<sup>9</sup> Картлис цховреба. История Грузии 2008, 353.

<sup>10</sup> Կիրակոս Գանձակեցի 1961, 265:

<sup>11</sup> Կիրակոս Գանձակեցի 1961, 265:

<sup>12</sup> Կիրակոս Գանձակեցի 1961, 265:

Հ. Մարգարյանը կարծել է, որ Շահնշահ Ա-ի «օրոք կազմավորվեց Շահնշահյան տան դաշինքը մոնղոլների հետ»<sup>13</sup>: Գերակայի ու ստորակայի կամ իշխողի ու իշխվողի միջև դաշինքի հնարավորությունը բացառելով հանդերձ՝ պետք է ընդունել, որ մոնղոլական տեղական պաշտոնետությունը Շահնշահ Ա-ի նկատմամբ ավելի հանդուրժողաբար էր տրամադրված, քան Ավագի՝ նախքան նրա Բաթու խանի մոտ ուղարկվելը: Այս հանգամանքը, ինչպես երևում է, Շահնշահ Ա-ն հաշվի էր առել: Հետևաբար, պետք է կարծել, որ Կոխտասթավիի հավաքին նրա բացակայությունը և Վահրամ Գագեցու ու Սարգիս Բ Թմոզվեցու ներկայությունը բացատրվում են մոնղոլ նվաճողների նկատմամբ նրանց դիրքորոշումների տարբերությամբ:

Կոխտասթավիի հավաքի մասին XIV դ. վրաց Անանուն ժամանակագրի ընդարձակ հաղորդման համաձայն՝ նրա մասնակիցները բողոքում են մոնղոլներից: Նրանք, հատկապես դժգոհ լինելով վերջիններիս կողմից ամեն տարի պատուհասվելով Ալմութ արշավանքի տարվելուց, որոշում են թեկուզ առանց մոնղոլների դեմ մարտի տանող թագավոր ունենալու միաբանվել ու պայքարի ելնել<sup>14</sup>: Հավաքի մասնակիցները Քարթլիում հավաքվելու պայմանով բաժանվում են: Նրանցից ոմանք, որոնց թվում XIV դ. վրաց Անանուն ժամանակագիրը Վահրամ Գագեցուն ու Սարգիս Բ Թմոզվեցուն չի հիշատակում, հասցնում են Կոխտասթավիից հեռանալ: Հավաքի մասին տեղեկացված մոնղոլները մնացածներին ձերբակալում են ու տանում Շիրակավան (Երագգավորս): Նրանք հարցաքննության ժամանակ, չնայած մերկացված ու կապկապված վիճակում ամառվա շոգին Շիրակավանի հրապարակում գտնվելուն, միաբերան պնդում են, որ Կոխտասթավիում հավաքվել էին ոչ թե մոնղոլների դեմ ըմբոստանալու, այլ նրանց տրվող խարաջ կոչվող հարկը հավաքելու նպատակով<sup>15</sup>:

Ի վերջո, նրանց մահապատժից փրկում է հավաքին մասնակցած, բայց Կոխտասթավիից շուտ հեռանալու շնորհիվ ձերբակալվելուց խուսափած վրացի իշխան Յոտնե Դադիանին: Լսելով իր համախոհների հետ կատարվածի մասին՝ նա կամավոր միանում է նրանց և իր արարքից ապշած մոնղոլներին հավաստիացնում, որ նաև իր մասնակցությամբ կայացած հավաքի նպատակը եղել է մոնղոլներին վճարելիք հարկի կարգավորումը, և եթե որևէ անարժան արարք են գործել, ապա ինքն էլ պետք է մյուսների պես պատժվի: Ըստ XIV դ. վրաց Անանուն ժամանակագրի՝ մոնղոլները, Յոտնե Դադիանին հավատալով, ձերբակալված հայ ու վրաց իշխաններին ազատ են արձակում<sup>16</sup>: Իրականում մոնղոլները քաջատեղյակ էին Կոխտասթավիի հավաքի հետապնդած նպատակին և այդ քայլին դիմում են ինչ-ինչ նկատառումով:

<sup>13</sup> Մարգարյան 2023, 165:

<sup>14</sup> Картлис цховреба. История Грузии 2008, 356.

<sup>15</sup> Картлис цховреба. История Грузии 2008, 356.

<sup>16</sup> Картлис цховреба. История Грузии 2008, 356.



Կոխտասաթավիի հավաքին անդրադարձած Հ. Ստեփանյանն ավելի հավանական է համարել, որ «1247 թ. Ղարադորումից վերադարձած Ավագի միջնորդությամբ է, որ ազատվել են ըմբոստները»<sup>17</sup>: Այս ենթադրությանը համեմատաբար վերջերս անդրադարձած Հ. Մարգարյանը որևէ կարծիք չի հայտնել՝ բավարարվելով դրա սոսկ արձանագրմամբ<sup>18</sup>: Հ. Ստեփանյանի ենթադրությունն ընդունելի կլիներ, եթե չլիներ մի հանգամանք: Բանն այն է, որ այդ հավաքի մասնակից Եգարսյան Բակուրցիխետուն<sup>19</sup> Ավագ աթաբեկը 1247 թ. ամռանը Ղարադորումից վերադառնալուն պես իրեն ոչ պատշաճ դիմավորելու պատճառով անարգում ու պատվազրկում է<sup>20</sup>: Դրանից հետո Եգարսյանը երկրի քաղաքական կյանքից օտարվում է: Հետևաբար, եթե Կոխտասաթավիի հավաքը 1247-ի ամռանը կայացած լիներ<sup>21</sup>, Եգարսյանը դրան մասնակցած չէր լինի: Իր նկարագրած պատմական իրադարձությունների թվագրման հարցում ժլատ XIV դ. վրաց Անանուն ժամանակագիրն այս հավաքն ու դրան անմիջապես նախորդած կամ հաջորդած դեպքերն անթվական է ներկայացրել: Ուստի հայ ու վրաց պատմագիտության մեջ դրա կայացման առաջարկված տարեթվերը տարբեր են՝ տատանվելով 1245-1247 թթ. միջակայքում<sup>22</sup>: Կարծում ենք, որ Կոխտասաթավիի հավաքը պիտի կայացած լինի 1245 թ. առաջին կեսին, նախքան Գեորգի Լաշայի (1207-1223) որդի Դավթին (Ուլու Դավիթ) դրա մասնակից Սարգիս Բ Թմոզվեցու՝ այդ թվականին մոնղոլների մոտ նախ Սարայ, ապա Ղարադորում ուղեկցելը<sup>23</sup>:

### **Հայ-վրացական 1249 թ. հակամոնղոլական ընդվզումը**

Կոխտասաթավիի հավաքից որոշ ժամանակ անց՝ 1249-ին, տեղի ունեցավ նույնաբնույթ նոր ընդվզում: Հակամոնղոլական այս ելույթի պատճառը մեծ խան Գոյուքի (1246-1248) կողմից 1247 թ. իր տերությունում հարկահանության կարգավորումն ու խստացումն էր: Գրիգոր Ալնեբցու վկայությամբ մոնղոլ հարկահանները, որոնց Իրանում ու հարավային Կովկասում գլխավորում էին Կիրակոս Գանձակեցու բնորոշմամբ «արք խիստ և յափշտակողը»<sup>24</sup> բասղալ Արղունն ու իր օգնական Բուղան «յամենայն ժամ գային եւ հարկաւ նեղացուցանե[ին]զվրաց և զՀայոց իշխանքն. յոմանց ուզէին ոսկի կտաւ, յոմանց բազայ, յոմանց աղէկ շուն եւ ձի. եւ այդպէս նեղացուցանէին զնոսայ՝ զատ ի

<sup>17</sup> Ստեփանյան 1990, 79:

<sup>18</sup> Մարգարյան 2023, 158:

<sup>19</sup> Картлис цховреба. История Грузии 2008, 360.

<sup>20</sup> Картлис цховреба. История Грузии 2008, 360.

<sup>21</sup> Ստեփանյան 1990, 79-80:

<sup>22</sup> Сихарулидзе 1969, 26, Ստեփանյան 1990, 79, Մարգարյան 2023, 153, საქართველოს ისტორიის ნარკვევები ტ. III, 1979, 555-556.

<sup>23</sup> Картлис цховреба. История Грузии 2008, 358.

<sup>24</sup> Կիրակոս Գանձակեցի 1961, 312:

մալէն եւ ի թաղարէն եւ ի խալանէն»<sup>25</sup>: Ավելի սանձարձակ էր, ըստ Կիրակոս Գանձակեցու, Բուդա Շարաբիից «չարագոյն» այս Բուդան, որը մեծ նեղություններ պատճառեց Ներքին Իսաչենի իշխան Հասան-Ջալալին ու Ավագ աթաբեկին<sup>26</sup>:

Մոնղոլ հարկահանների ու այլ պաշտոնյաների նման գործողությունները, հարկերի ծանրացումն ու նվաճողների հանդեպ բազմապիսի այլ՝ հաճախ ապօրինի պարտույթները հանգեցրին հայ-վրացական ավատատիրական վերնախավում հակամոնղոլական տրամադրությունների սրմանը, ինչը հանգեցրեց նոր ընդվզման:

Այս անգամ արդեն Վրաստանը ոչ միայն արքայազուրկ չէր, այլև երկու թագավոր ուներ, քանի որ մեծ խան Գոյուքը գահի հավակնորդներ երկու Դավիթներին էլ թագավոր էր կարգել Գեորգի Լաշայի որդի Ուլու Դավթի ավագությամբ<sup>27</sup>: Նրանք 1248 թ. վերադարձել էին Վրաստան ու սկզբում համատեղ գահակալում էին: Հ. Ստեփանյանը գտել է, որ «հենց նրանցից մեկը՝ Դավիթ Նարինը գլխավորեց պայքարը մոնղոլների դեմ»<sup>28</sup>: Նման կարծիք հայտնելիս Հ. Ստեփանյանը հիմք է ընդունել<sup>29</sup> Ստեփանոս Օրբելյանի վկայությունն առ այն, որ մոնղոլական կուսակալ Բաչու նոյինը «նստէր ի գաւառին Հաբանդայ՝ ի գլուխ Ձագէձորոյ. և էր ածէալ զբռամբ զփոքր թագաւորն Սոնաց զԴավիթ (Դավիթ Նարինին – Ա.Շ.), և կայր նա ի մէջ բանակի նոցա ի կալանս»<sup>30</sup>: Սակայն բանն այն է, որ այդ ընդվզումը հիշատակող հայկական սկզբնաղբյուրներից Գրիգոր Ակներցին, ի տարբերություն Ուլու Դավթի, Դավիթ Նարինին ոչ մի անգամ չի հիշատակել: Նույն կերպ է վարվել նաև Վարդան վարդապետը, իսկ Կիրակոս Գանձակեցին նախքան 1249 թ. իրադարձություններին անդրադառնալը՝ նկատելով, որ «նստէր Դավիթ որդի Լաշային ի Տիխիս քաղաքի, և միա Դավիթն՝ ի Սուանէթ»<sup>31</sup>, դարձյալ ի տարբերություն Ուլու Դավթի, այլևս Դավիթ Նարինին չի հիշատակել:

Ընդվզման վճիռն ընդունվում է 1249 թ. ամռանը Տիխիսում Ուլու Դավթի հրավիրած՝ հայ և վրաց իշխանների զորաժողովից հետո կայացած խնջույքի ժամանակ: Երբ իշխանները հաշվում են հայ-վրացական իշխանազորի թվաքանակը, եզրակացնում են, որ ի վիճակի են հաղթելու մոնղոլներին<sup>32</sup>: Ելնելով դրանից՝ նրանք որոշում են մոնղոլ նվաճողներին ծառայելու փոխարեն, հանկարծակի հարձակմամբ նրանց կոտորելով, տիրել իրենց երկրին<sup>33</sup>: Այդ

<sup>25</sup> Գրիգոր Ակներցի 1974, 35:

<sup>26</sup> Կիրակոս Գանձակեցի 1961, 313-314:

<sup>27</sup> Կիրակոս Գանձակեցի 1961, 316, Картлис цховреба. История Грузии 2008, 360, Рашид ад-дин, II, 1960, 120:

<sup>28</sup> Ստեփանյան 1990, 82, 84:

<sup>29</sup> Ստեփանյան 1990, 84:

<sup>30</sup> Ստեփանոս Օրբելյան 1910, 406:

<sup>31</sup> Կիրակոս Գանձակեցի 1961, 317:

<sup>32</sup> Կիրակոս Գանձակեցի 1961, 319, Գրիգոր Ակներցի 1974, 35:

<sup>33</sup> Կիրակոս Գանձակեցի 1961, 319:

նպատակին հասնելու համար, Գրիգոր Ակներցու համաձայն, նրանք անգամ «բաժանեցին զգլխաւորսն ի վերայ իւրեանց»<sup>34</sup>:

Բնավ պատահական չէ, որ այդ իրադարձությանը ժամանակակից և դրան մոնղոլական տիրապետության պայմաններում անդրադարձած հեղինակները խնջույքի մասնակից որևէ իշխանի, ապստամբելուն դեմ եղած Ավագ աթաբեկից բացի, հանվանե չեն հիշատակել: Նրանք նույն կերպ են վարվել նաև Ուլու Դավթի պարագայում: Բացի այդ, իշխանների ապստամբական տրամադրությունները բացատրել են իրենց կարողությունների գերազնահատմամբ, խակամտությամբ, գինովցածությամբ, կատակախոսությամբ և անգամ վրացիների մեծախոսությամբ ու հանապազ ամբարտավանանալու սովորությամբ<sup>35</sup>: Սրանցից վերջիններից և վրաց իշխաններից մեկի կողմից թագավորի, այսինքն՝ Ուլու Դավթի առաջ հայ և վրաց իշխանների թիվը հաշվելու մասին Գրիգոր Ակներցու հաղորդումից<sup>36</sup> հետևում է, որ ապստամբելու գաղափարը հղացել են վրաց իշխանները:

Կիրակոս Գանձակեցու համաձայն՝ «խափանեաց զայս խորհուրդ մեծ իշխանն Ավագ»<sup>37</sup>, որը նույն 1249 թ. արցախյան մի վիճաբրում ոչ պատահական զուգադիպությամբ «մեծ խաղաղարար» է որակվել<sup>38</sup>:

Քանի որ խնջույքի մասնակից իշխաններից միակ հանվանե հիշատակվածն Ավագ աթաբեկն է, հնարավոր չէ իմանալ, թե զորաժողովին ու դրան հաջորդած խնջույքին Ջաքարյան իշխանատոհմի անդամներից, նրանից բացի, ով կամ ովքեր են մասնակցել: Որ այդ իրադարձություններին Ջաքարյանների տոհմաճյուղերի ներկայացուցիչների ներկայությունն Ավագ աթաբեկով չի սահմանափակվել՝ կասկածից վեր է: Միաժամանակ դժար է պնդել, որ Ղարաղորումից վերադառնալուց հետո մոնղոլների հետ սերտ կապեր ունեցող, սթափ դատող ու իրերի վիճակին քաջածանոթ Ավագ աթաբեկն իբրև իշխանատոհմի գլխավոր՝ արտահայտել է նրա միասնական դիրքորոշումը՝ կապված ապստամբելու հետ: Այդուհանդերձ, 1250 թ. Ավագ աթաբեկի մահվանից հետո նրա տիրույթները մոնղոլների կողմից Շահնշահ Ա-ի ավագ որդի Ջաքարե Գ-ին հանձնվելը<sup>39</sup> և ոչ առանց նրանց իմացության ու հավանության հավանաբար նույն տարում ամիրսպասալարության պաշտոնին արժանանալը հուշում են, որ նա դեմ է եղել ապստամբությանը: Խնջույքի մանրամասներին քաջատեղյակ մոնղոլներն անկասկած դրան իրազեկ են եղել: Ինչ վերաբերում է ապստամբության հարցում Վահրամյանների ու Թմոզվե-

<sup>34</sup> Գրիգոր Ակներցի 1974, 35:

<sup>35</sup> Կիրակոս Գանձակեցի 1961, 319, Վարդան վարդապետ 1862, 148, Գրիգոր Ակներցի 1974, 35-36:

<sup>36</sup> Գրիգոր Ակներցի 1974, 35:

<sup>37</sup> Կիրակոս Գանձակեցի 1961, 321:

<sup>38</sup> Դիվան հայ վիճաբրության 1982, 93:

<sup>39</sup> Կիրակոս Գանձակեցի 1961, 321:

ցիների դիրքորոշմանը, ապա նրանց չհիշատակելով պայմանավորված՝ որևէ կարծիք հայտնել հնարավոր չէ:

Ինչպես Կոխտասթավիի հավաքի դեպքում էր, մատնության պատճառով, մոնղոլներին կրկին հայտնի է դառնում հայ և վրաց իշխանների ապստամբական տրամադրությունների մասին<sup>40</sup>, և նրանք անհապաղ դիմում են համապատասխան քայլերի: Նրանք խնջույքի մասնակիցներից «զորս գտան առ իրեանս» ձերբակալում են, իսկ «որք ոչ էին անդ»՝ շտապ կանչում են իրենց մոտ<sup>41</sup>: Սկզբում որոշում են բուլորին կոտորել, սակայն դրան ընդդիմանում է Բաչու նոյինի ենթակայության տակ գտնվող զորքերի գլխավոր հրամանատար և Ավագ աթաբեկի հետ բարեկամական հարաբերություններ ունեցող Չաղատայր: Նա հայտնում է, որ մեծ խանից ձերբակալվածներին կոտորելու հրաման չունեն: Նրանք իրենց հնազանդ են, ծառայություն են մատուցում և մեծ խանին հարկատու են, իսկ ապստամբության հանգամանքները ճշտված չեն: Ուստի, ով նրանց առանց պատճառի կոտորի, պետք է մեծ խանին պատասխան տա<sup>42</sup>:

Քանի որ Ավագ աթաբեկը, վատառողջ լինելով, չէր կարողանում ձի նստել ու պատգարակով տեղաշարժվելով ուշանում էր, նրա մայր Խոշաքը շտապում է մոնղոլների մոտ: Նա վերջիններիս հավաստում է որդու հավատարմությունը և հայտնում, որ նա շուտով կգա: Եվ, իրոք, Ավագ աթաբեկը շուտով տեղ է հասնում և վկաների ներկայությամբ նվաճողներին հավաստում իր հավատարմությունը<sup>43</sup>: Ինչ վերաբերում է Ուլու Դավթին ու ձերբակալված իշխաններին, ապա մոնղոլները նրանց ձեռքերն ու ոտքերը պարանով կապելով «թողեալ այնպէս կապեալ զերիս աուրս՝ ձաղէին և անարգէին զնոսա վասն հպարտութեանն ու ապստամբ խորհրդոյն: Եւ ապա առեալ զամենայն երիւարս և զգինս գլխոց նոցա, թողին զնոսա»<sup>44</sup>: Կիրակոս Գանձակեցու այս և նախորդ վկայությունը հիմք դարձնելով՝ Հ. Ստեփանյանը պնդել է, որ Ավագը մոնղոլներին իր անմեղությունն ապացուցելուց հետո «միջնորդեց կալանավորված (ձերբակալված – Ա.Շ.) իշխաններին ազատելու համար, որն էլ իրականացվեց՝ մեծ փրկագնի միջոցով միայն»<sup>45</sup>: Իրականում Կիրակոս Գանձակեցին Ավագ աթաբեկի միջնորդության մասին անգամ ակնարկ չի արել: Փոխարենը Գրիգոր Ակնեքցու խոսքերից է երևում, որ ձերբակալվածների ճակատագիրը նրան մտահոգել է, և մոնղոլների կողմից հարցաքննվելիս իր պատասխաններով նպաստել է նրանց ազատ արձակմանը<sup>46</sup>: Վարդան վար-

<sup>40</sup> Կիրակոս Գանձակեցի 1961, 319, Գրիգոր Ակնեքցի 1974, 36:

<sup>41</sup> Կիրակոս Գանձակեցի 1961, 319:

<sup>42</sup> Կիրակոս Գանձակեցի 1961, 320:

<sup>43</sup> Կիրակոս Գանձակեցի 1961, 320:

<sup>44</sup> Կիրակոս Գանձակեցի 1961, 320:

<sup>45</sup> Ստեփանյան 1990, 84:

<sup>46</sup> Գրիգոր Ակնեքցի 1974, 36:

դապետն իր հերթին Ավագ աթաբեկի միջնորդության մասին լուր է՝ գտնելով, որ ձերբակալվածներն «ի խնամոց վերնոյն արծակեցին ի մահուանէ»<sup>47</sup>:

Ձերբակալվածներին ազատ արձակելով հանդերձ՝ մոնղոլ նվաճողները «յարձակեցան ...ի վերայ բազում գաւառաց, որք ապստամբք և որք ոչ, և զբազումս կոտորեցին և զևս բազմագոյնս գերի վարեցին զարս և զկանայս և զմանուկս գետամոյն առնէին անթիւ ի բազմութենէ: Եւ այս գործեցաւ ի ՈՂԸ (1249 – Ա.Շ.) թուականին հայոց»<sup>48</sup>: Գրիգոր Ակնեցցին ու Վարդան վարդապետը հաստատում և լրացնում են Կիրակոս Գանձակեցու հաղորդածը<sup>49</sup>:

Այսպիսով, հայ-վրացական 1249 թ. ընդվզումը ևս ապստամբության չվերածվեց՝ դառնալով մեծ արհավիրքների պատճառ: Ուստի պատահական չէ, որ Հայոց կաթողիկոս Կոստանդին Ա Բարձրաբերդցին (1221-1267) չի թաքցրել իր բացասական վերաբերմունքը դրա նկատմամբ<sup>50</sup>:

### **Հայ-վրացական 1259-12561 թթ. հակամոնղոլական ապստամբությունը**

Հայ-վրացական հաջորդ ընդվզումը սկիզբ առավ 1259 թ.: Դրան առավել մանրամասն անդրադարձել է XIV դ. վրաց Անանուն ժամանակագիրը: Նրա հաղորդումները լրացվում կամ կրկնվում են պարսիկ պատմիչ Աթա Մալիք Ջուվեյնու, իսկ հայ հեղինակներից՝ հատկապես Կիրակոս Գանձակեցու և մասամբ Վարդան վարդապետի, Մխիթար Այրիվանեցու ու Ստեփանոս եպիսկոպոսի կարճառոտ հաղորդումներով: Այս՝ բավականին հզոր ապստամբության վերածված ընդվզման պատճառները երկուսն էին: Դրանցից առաջինը հարկերի հերթական ծանրացումն էր, որն ուղեկցվում էր բասղաղ Արղունի օգնական խոջա Ազիզի, նաև Ուլու Դավթի նյութական շահերը վնասող հարկային ապօրինություններով, ինչից նա խիստ դժգոհ էր<sup>51</sup>: Աթա Մալիք Ջուվեյնին պնդում է, որ Ուլու Դավիթը խռովություն էր բարձրացրել, որովհետև նրանից պահանջվել էր մարել հարկային ապառքները<sup>52</sup>:

Կիրակոս Գանձակեցին էլ նշել է, որ «թագաւորն վրաց Դավիթ՝ որդի Լաշային, որ կայր ի հնազանդութեան թաթարին, նեղացաւ, ծանձրացաւ ի բազում հարկապահանջութեանցն, որ նեղէին զնա ի զամենայն իշխանսն, և զամենայն աշխարհս անհնարին ծանրութեամբ, զոր ոչ կարէին բառնալ»<sup>53</sup>:

Ապստամբության երկրորդ՝ ոչ պակաս կարևոր պատճառը մոնղոլների պարտադրած՝ ոչ միայն ծանր զրկանքներով ու դժվարություններով, այլև զանազան վտանգներով ուղեկցվող արշավանքներին իրենց զորաջոկատ-

<sup>47</sup> Վարդան վարդապետ 1862, 148:

<sup>48</sup> Կիրակոս Գանձակեցի 1961, 320-321:

<sup>49</sup> Գրիգոր Ակնեցի 1974, 36, Վարդան վարդապետ 1862, 149:

<sup>50</sup> Խաչիկյան 1958, 280:

<sup>51</sup> Картлис цховреба. История Грузии 2008, 365-366.

<sup>52</sup> Чингизхан. История завоевателя мира 2004, 376.

<sup>53</sup> Կիրակոս Գանձակեցի 1961, 389:

ներով հայ ու վրաց իշխանների մասնակցությունն էր, որը սուր դժգոհություն էր առաջացնում: Դրա դրսևորումներից էր և այն, որ 1258 թ. իլխան Հուլավուի (1256-1265)՝ դեպի Հյուսիսային Միջագետք կատարած արշավանքի մասնակից հայ ու վրաց իշխանները երկար ժամանակ ռազմարշավների մեջ լինելու պատճառաբանությամբ նրանից տուն վերադառնալու թույլտվություն խնդրեցին և չմերժվեցին<sup>54</sup>: Նախքան Ուլու Դավթի ապստամբելը մոնղոլների դեմ անհաջող ընդվզել էր Դավիթ Նարինը, որն ի վերջո խույս էր տվել իրեն հետապնդող Արղունից<sup>55</sup> և հաստատվել Քուֆայիսում: Արղունը դրանից հետո հետ է դառնում և 1259 թ. սեպտեմբերի սկզբին հասնում Թավրիզ՝ դեպի Ասորիք ու Հյուսիսային Միջագետք արշավանքի պատրաստվող Հուլավուի մոտ<sup>56</sup>:

Հուլավուն Ջաքարյան Հայաստանն ու Արևելյան Կրաստանը ներառող Գյուրջիստանի վիլայեթից չվճարված հարկերը գանձելու նպատակով Արղունին զորք է տրամադրում: Միաժամանակ, հիշյալ արշավանքին մասնակցելու համար իր մոտ է կանչում նաև Ուլու Դավթին ու «նրա զորքը»<sup>57</sup>: Վերջինս, երկմտելով հանդերձ, որոշում է մասնակցել Հուլավուի արշավանքին: Սակայն հասնելով Ջավախք՝ մտքափոխվելով վճռում է հետ դառնալով ապստամբել՝ իր հետ եղած հայ ու վրաց իշխաններին առաջարկելով կամ միանալ իրեն, կամ գնալ Հուլավուին ծառայելու<sup>58</sup>:

XIV դ. վրաց Անանուն ժամանակագրի վկայությամբ, իշխաններից շատերը, այդ թվում Շահնշահ Ա-ի որդի Իվանե Բ-ն, դեմ լինելով ապստամբելուն, վճռում են մասնակցել Հուլավուի արշավանքին<sup>59</sup>: Իվանե Բ-ի ավագ եղբայր ամիրսպասալար Ջաքարե Գ-ի դիրքորոշման մասին վրաց ժամանակագիրն այս վկայության մեջ ոչինչ չի հայտնում, սակայն հետագայում նշում է, որ «խանից (Հուլավուից – Ա.Շ.) բաժանվեց Շանշեի (Շահնշահ Ա-ի – Ա.Շ.) որդի ամիրսպասալար Ջաքարիան ...և փախավ Քուֆայիս՝ Դավիթ Նարինի մոտ»<sup>60</sup>: Ապստամբությանը Ջաքարե Գ-ի ոչ միայն չհարելը, այլև այն ճնշող բասող Արղունի բանակում գտնվելը պարզորոշ փաստել է Կիրակոս Գանձակեցին՝ գրելով հետևյալը. «Արղունն զօրօք բազմօք էր ի կողմանս Վրաց, ընդ նմա էր և Ջաքարե: Եւ գաղտ Արղունէն և յայլ զօրացն գնաց Ջաքարե ի տեսութին կնոջ իւրոյ, որ էր առ հօր իւրում Սարգսի՝ իշխանին Ուխտեաց, որ ապստամբ էր ընդ թագաւորին վրաց Դավթի»<sup>61</sup>:

Վերոբերյալ երկու վկայություններին հակառակ Աշ. Հովհաննիսյանը պնդել է, որ, երբ Դավիթ Նարինը ըմբոստացել է մոնղոլների դեմ, վերջին-

<sup>54</sup> Картлис цховреба. История Грузии 2008, 364.

<sup>55</sup> Чингизхан. История завоевателя мира 2004, 375.

<sup>56</sup> Чингизхан. История завоевателя мира 2004, 376.

<sup>57</sup> Картлис цховреба. История Грузии 2008, 365.

<sup>58</sup> Картлис цховреба. История Грузии 2008, 365-366.

<sup>59</sup> Картлис цховреба. История Грузии 2008, 366.

<sup>60</sup> Картлис цховреба. История Грузии 2008, 372.

<sup>61</sup> Կիրակոս Գանձակեցի 1961, 393:

ներից դժգոհելու հիմքեր ունեցող Ջաքարե Գ-ն միացել է նրան<sup>62</sup>: Հ. Ստեփանյանը ևս օգտված լինելով «Վրաց ժամանակագրության» աղճատված տեքստի թարգմանությունից՝ «խանի (Հուլավուի – Ա.Շ.) դեմ ապստամբեց Շահնշահի որդի Ջաքարիա ամիրսպասալարը... և փախավ Նարին Դավթի մոտ՝ Քութայիս»<sup>63</sup>, կարծել է, թե Ջաքարե Գ-ն մասնակցել է ապստամբությանը<sup>64</sup>: Հ. Մարգարյանն էլ նախ գրել է, որ նա ծածուկ ինչ-որ կապեր էր հաստատել ...Ուլու Դավթի աջակից Սարգիս Զաղելու հետ»<sup>65</sup>, ապա Ջաքարե Գ-ի եղբայր Իվանե Բ-ին անդրադառնալիս նշել, որ վերջինս, ի տարբերություն նրա՝ չխզեց կապերը մոնղոլների հետ և 1259-1261 թթ. կռվում էր Ուլու Դավթի ու Սարգիս Զաղելու զորքերի դեմ<sup>66</sup>: Որ Ջաքարե Գ-ն, մոնղոլական լուծը ծանր տանելով, գերադասել է «թափառել ոտար յերկրներ, քան կրել նրանց տիրապետությունը»<sup>67</sup>, փաստել է 1255 թ. Անիում նրանց տանը հյուրընկալված ֆրանսիացի ճանապարհորդ Ռուբրուքը:

Այս ապստամբության հետ կապված իրադարձություններում Վահրամյաններն ու Թմոզվեցիները չեն հիշատակվում: Չի հիշատակվում նաև Ավագյան տան ներկայացուցիչը, որովհետև Ավագ աթաբեկը 1250 թ. վախճանվել էր՝ առանց օրինական արու զավակ թողնելու<sup>68</sup>, իսկ նրա դուստր Խոշաքը, այս ապստամբության ժամանակ գտնվելով Սադուն Բ Մահկանաբերդցու խնամակալության տակ<sup>69</sup>, ինքնուրույն որոշումներ կայացնելու հնարավորությունից զուրկ էր:

Ուլու Դավթին ապստամբելու որոշում կայացնելուց հետո զորքով հաստատվում է իր հավատարիմ զինակիցը դարձած Սարգիս Զաղելու տիրույթում՝ համեմատաբար անվտանգ Սամցխեում: Այս ընթացքում Հուլավուն, արշավանքից վերադառնալով և Ուլու Դավթի ապստամբելու մասին լսելով, Արղունին քսանհազարանոց հեծյալ զորքով ուղարկում է նրան հնազանդեցնելու: Բացի այդ, «իրեն ենթակա վրացիներին (հայ և վրաց իշխաններին – Ա.Շ.) հրամայում է ուղեկցել Արղուն, Օյրիդին և գնալ Սամցխե թագավորի վրա ու կռվել նրա դեմ»<sup>70</sup>: Երբ Արղունը, Գանձակն ու Սոմխիթն անցնելով, մոտենում է Տփխիսին, այդ իշխանները միանում են նրան: XIV դ. վրաց Անանուն ժամանակագիրը նրանց շարքում հայ իշխաններից հանվանե հիշատակում է միայն Իվանե Բ-ին: Անանունը Ջաքարե Բ-ի մասին լուր է, սակայն Կիրակոս

<sup>62</sup> Հովհաննիսյան 1957, 183:

<sup>63</sup> Վրաց ժամանակագրություն (1207-1318) 1971, 122:

<sup>64</sup> Մարգարյան 2023, 168:

<sup>65</sup> Ստեփանյան 1990, 93:

<sup>66</sup> Մարգարյան 2023, 170:

<sup>67</sup> Հակոբյան 1932, 19-20:

<sup>68</sup> Կիրակոս գանձակեցի 1961, 321:

<sup>69</sup> Картлис цховреба. История Грузии 2008, 365.

<sup>70</sup> Картлис цховреба. История Грузии 2008, 366.

Գանձակեցու վերոբերյալ հաղորդումից պարզ երևում է, որ Ջաքարեն ևս միանում է Արղունին և հետո է բաժանվում նրանից:

Չնայած ուժերի անհավասարությանը, ապստամբները Սարգիս Ջաղելու հրամանատարությամբ թեև ծանր կորուստներով, համառորեն դիմադրում են Սամցխե մտած հակառակորդին: Երբ 1261 թ. հունիսին Արղունը Սամցխեն ավերելուց ու Ցիխիս-Ջվարն ապարդյուն շրջապատելուց հետո Հուլավուի հրամանով գնում է նրա մոտ, Ուլու Դավիթը Սարգիս Ջաղելու և մյուս կողմնակիցների խորհրդով հեռանում է Քութայիս՝ Դավիթ Նարինի մոտ<sup>71</sup>: Մոնղուների պատճառով երկու Դավիթների՝ Արևմտյան Վրաստան փախչելը փաստել է նաև Մխիթար Այրիվանեցին<sup>72</sup>: Ապստամբության կենտրոն Սամցխեից Ուլու Դավթի հեռանալն այդ բավականին հզոր հակամոնղոլական ապստամբության փաստական վախճան էր նշանակում, չնայած նա միայն մեկ տարի անց հարկադրաբար գնաց Հուլավուի մոտ և հնազանդություն հայտնեց<sup>73</sup>: Այդուհանդերձ, նախքան այդ, նա իր ապստամբելը Խոջա Ազիզի անհրաժեշտություններով պայմանավորելով՝ հասավ վերջինիս մահապատժի ենթարկելուն<sup>74</sup>: Հուլավուի մոտ հարցաքննվելիս նրան ուղեկցած Սարգիս Ջաղելին էլ ապստամբությանն իր մասնակցությունը պատճառաբանեց Արղունի կողմից երկիրն ավերելով և Ուլու Դավթի նկատմամբ Խոջա Ազիզի անհրաժեշտությունը չհանդուրժելով<sup>75</sup>: Մինչդեռ, ինչպես վերը նշվեց, ապստամբությունը ևս մեկ լուրջ պատճառ ուներ, որը ինչպես Ուլու Դավիթը, այնպես էլ Սարգիս Ջաղելին հասկանալի պատճառով գերադասել էին լռության մատնել:

Կիրակոս Գանձակեցին նկատել է, որ Արղունն ապստամբությունը ճնշելիս «գրագում գաառու վրաց կոտորեաց և գերեաց անխնայաբար»<sup>76</sup>: Մխիթար Այրիվանեցին էլ, նրան հավելելով, պնդում է, որ մոնղուները «Քակեցին զամենայն բերդս և զամենայն ամուր եկեղեցիս զՀայոց, զՎրաց և զԱղուանից ի ձեռն Խոնազիզ տաճկին»<sup>77</sup>, ինչից կարելի է ենթադրել, որ ապստամբությունը կամ XIV դ. վրաց Անանուն ժամանակագրի ներկայացրածից մեծ տարածք է ընդգրկել, կամ էլ մոնղուներն առիթն օգտագործելով այլուր ևս ավեր են սփռել:

Հուլավուի մոտ գնալիս Արղունը նրա հրամանով իր հետ տանում է նաև Ջաքարեն Գ-ին, որն իլխանի կարգադրությամբ սպանվում է<sup>78</sup>: Կիրակոս Գանձակեցին դա բացատրել է ապստամբության ժամանակ Արղունի բանակում գտնվող Ջաքարեն Գ-ի՝ վերջինից ծածուկ Սարգիս Ջաղելու դատերը՝ իր կնոջը

<sup>71</sup> Картлис цховреба. История Грузии 2008, 367.

<sup>72</sup> Մխիթարայ Այրիանեցոյ 1867, 67:

<sup>73</sup> Картлис цховреба. История Грузии 2008, 370.

<sup>74</sup> Картлис цховреба. История Грузии 2008, 369-370.

<sup>75</sup> Картлис цховреба. История Грузии 2008, 370.

<sup>76</sup> Կիրակոս Գանձակեցի 1961, 390:

<sup>77</sup> Մխիթարայ Այրիանեցոյ 1860, 82-83:

<sup>78</sup> Կիրակոս Գանձակեցի 1961, 390, 392, 393:



տեսության գնալով և նրա վրա կեղծ մեղադրանքներ բարդելով<sup>79</sup>: Վարդան վարդապետը ևս փաստել է Չաքարե Գ-ի վրա ինչ-ինչ մեղադրանքներ բարդելը՝ հավելելով նաև հարկային պարտավորություններում թերանալը<sup>80</sup>: XIV դ. վրաց Անանուն ժամանակագիրն էլ անդրադառնալով Չաքարե Գ-ին մահապատժի ենթարկելուն, պնդում է, որ դրա պատճառը եղել է նրա՝ Հուլավուից բաժանվելով Քուֆախ՝ Դավիթ Նարինի մոտ գնալը, քանզի «նրան էին վերագրում Բերքայի (Ոսկե հորդայի խանի – Ա.Շ.) զորքերի ներխուժելու մեղքը»<sup>81</sup>: Բացի այդ, ըստ նրա, Չաքարե Գ-ին ոչ թե Արղունն էր տարել Հուլավուի մոտ, այլ՝ վերջինս էր երդմամբ նրան կանչել իր մոտ և ուխտադժորեն հրամայել սպանել<sup>82</sup>:

Ինչպես տեսնում ենք, հայկական ու վրացական աղբյուրների տեղեկություններն այս հարցում հեռու են նույնահաղորդ լինելուց: Այդուհանդերձ, դրանք թույլ են տալիս պնդելու, որ 1261 թ. մահապատժի ենթարկված<sup>83</sup> Չաքարե Գ-ն սկզբում Արղունի հրամանատարությամբ կռվել է ապստամբների դեմ, ապա ինչ-ինչ պատճառներով հարել նրանց:

Այսպիսով, հայ-վրացական հակամոնղոլական այս ընդվզումը ևս, ի տարբերություն նախորդ երկուսի, բավականին հզոր ապստամբության վերածվելով հանդերձ, ճնշվեց:

### Եզրակացություններ

Չաքարյան Հայաստանը և Արևելյան Վրաստանը 1236 թ. գրավելուց հետո մոնղոլներն այնտեղ աստիճանաբար հաստատեցին իրենց դաժան տիրապետությունը: Նվաճողները շարունակ բարձրացնում էին հարկերը և հայ ու վրաց իշխաններին պարտադրում մասնակցել իրենց՝ պարբերական բնույթ կրող ծանր զրկանքներով ու վտանգներով լի ռազմարշավներին: Դա ևս հարուցում էր վերջիններիս դժգոհությունը՝ տեղիք տալով հայ-վրացական հակամոնղոլական ընդվզումների:

XIII դ. տեղի ունեցավ նման երեք ընդվզում: Դրանցից առաջին երկուսը, դեռ նախապատրաստական շրջանում մատնությամբ բացահայտվելով, մոնղոլների կողմից դաժանորեն ճնշվեցին: Վերջին՝ երրորդ ընդվզումը վերածվեց համառ ու բավականին հզոր ապստամբության, որը մոնղոլները ճնշեցին մեծ ջանքերի գնով:

Չաքարյան իշխանատոհմն այս ընդվզումներին ու դրանց հետ կապված իրադարձություններին մասնակցությունից անմասն չմնաց: Սակայն դրանցից յուրաքանչյուրի նկատմամբ նրա ներկայացուցիչների դիրքորոշումը նույնական չէր:

<sup>79</sup> Կիրակոս Գանձակեցի 1961, 393:

<sup>80</sup> Վարդան վարդապետ 1862, 153:

<sup>81</sup> Картлис цховреба. История Грузии 2008, 372.

<sup>82</sup> Картлис цховреба. История Грузии 2008, 272.

<sup>83</sup> Վարդան Բարձրաբերդի 1861, 200-201, Մանր ժամանակագրություններ 1951, 43:

**Օգտագործված գրականություն**

- Գրիգոր Ակնեցի 1974, Պատմութիւն թաթարաց, Երուսաղէմ, տպարան սրբոց Յակովբեանց, 80 էջ:
- Դիվան հայ վիմագրության 1982, պրակ V, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 348 էջ:
- Խաչիկյան Լ. 1958, Կոստանդին Բարձրաբերդցու խրատական թուղթը, առաքված Արևելյան Հայաստան, 1251 թ., Բանբեր մատենադարանի, N 4, Երևան, էջ 267-284:
- Կիրակոս Գանձակեցի 1961, Պատմություն հայոց, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 426 էջ:
- Հակոբյան Հ. 1932, Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, Հրատարակություն Մելքոնյան ֆոնդի, 501 էջ:
- Հաաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսարանեալ ի Վենետիկ 1862, Ի Սուրբ Ղազար, 183 էջ:
- Հովհաննիսյան Ա. 1957, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 524 էջ:
- Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ. 1951, հ. I, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 453 էջ:
- Մարգարյան Հ. 2023, Նշանավոր իշխանական տները Հայաստանում ԺԲ դարից - ԺԴ դարի առաջին կեսին, Երևան, «Գիտություն», 279 էջ:
- Մեծին Վարդանայ Բարձրաբերդեցոյ Պատմութիւն Տիեզերական 1862, Մոսկվա, Տպարան Լազարյան ճեմարանի Արևելյան լեզուաց, 217 էջ:
- Մխիթարայ Այրիվանեցոյ 1867, Պատմութիւն ժամանակագրական, Ս. Պետերբուրգ, ի տպարանի կայսերական ճեմարանի գիտութեանց, 84 էջ:
- Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Մինեաց 1910, Թիֆլիս, Էլքետրաշարժ տպ. օր. Ն. Աղանեսանցի, 618 էջ:
- Ստեփանյան Հ. 1990, Հայ ժողովրդի պայքարը թաթարա-մոնղոլական լծի դեմ, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 144 էջ:
- Վրաց ժամանակագրություն (1207-1318) 1971, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 222 էջ:
- Картлис цховреба. История Грузии 2008, Тбилиси, «Артануджи», 455 с.
- Рашид ад-Дин 1960, Сборник летописей, т. II, Москва-Ленинград, изд. Академии наук СССР, 248 с.
- Сихарулидзе Ю.М. 1969, Борьба грузинского народа против татаро-монгольского владычества (автореферат диссертации на соискание ученой степени доктора исторических наук), 42 с.
- Чингизхан. История завоевателя мира, записанная Ала-ад-Дином Ата-Меликом Джувейни, 2004, «Издательский Дом Магистр-пресс», 699 с.
- Նախարար Վեդիկյանի «Ստեփաննոսի Օրբելեանի «Պատմութիւն Տիեզերական»-ի մասին», Երևան, ՀՀ ԳԱ հրատ., 1990, էջ 144:
- საქართველოს ისტორიის ნარკვევები, ტ. III, 1979, თბილისი, გამომცემლობა «საბჭოთა საქართველო», გვ. 653.

**АРМЯНО-ГРУЗИНСКИЕ АНТИМОНГОЛЬСКИЕ ВЫСТУПЛЕНИЯ В XIII В.  
И КНЯЖЕСКИЙ РОД ЗАХАРИДОВ**

Арташес Шахназарян

Резюме

После захвата северо-восточной, то есть Захаридской Армении и Восточной Грузии в 1236 г. монголы предприняли шаги по установлению своего

господства. Последнее сопровождалось периодическим повышением налогов и непременным участием армянских и грузинских князей с их войсками в опасных и исполненных неимоверных лишений военных походах монголов.

Разумеется, это вызывало недовольство армянских и грузинских князей, что нашло отражение в антимонгольских выступлениях. В XIII в. имели место три таких выступления (в 1245, 1249, 1259-1261 гг.), из которых первые два не переросли в восстание, поскольку в процессе подготовки они были пресечены в результате предательства. Что же касается последнего выступления, то оно вылилось в довольно-таки мощное восстание, которое было подавлено величайшими усилиями монголов.

Княжеский род Захаридов не остался в стороне от этих событий и принял в них участие. Однако у представителей этого княжеского рода было неоднозначное отношение к этим выступлениям и связанным с ними событиям.

**Ключевые слова** – монголы, княжеский род Захаридов, Кохтастави, Аваг атабек, Закаре III, Улу Давид, Самцхе.

#### THE ARMENIAN-GEORGIAN ANTI-MONGOL UPRISINGS OF XIII CENTURY AND THE ZAKARIAN DYNASTY

Artashes Shahnazaryan

##### Abstract

After conquering North-Eastern, that is, Zakarian Armenia and Eastern Georgia in 1236, the Mongols started establishing their rule. This was accompanied by the periodic increase of taxes and the obligatory participation of Armenian and Georgian princes along with their military units in Mongol campaigns full of severe hardships and dangers.

Naturally, this provoked the dissatisfaction of the Armenian and Georgian princes, giving rise to anti-Mongol uprisings. In the XIII century three such uprisings took place (in 1245, 1249 and 1259-1261). The first two of them did not turn into a rebellion, because they were revealed due to betrayal while still being in the process of organization and failed. As for the third one, it turned into a persistent and quite powerful rebellion, which the Mongols suppressed at the cost of great efforts.

The dynasty of the Zakarians did participate in these uprisings and the events related to them. However, the stand of its representatives towards each of them was not unified.

**Key words** – Mongols, Zakarian dynasty, Kokhtastavi, Avag atabek, Zakare III, Ulu Davit, Samtskhe.

# ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ V ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

## Արգիշտի Վարդանյան

Պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4

Էլ. հասցե՝ argishtivardanyan3@gmail.com

ORCID: 0009-0006-5146-0463

Հոդվածը ներկայացվել է 21.03.2024, գրախոսվել է 24.07.2024, ընդունվել է տպագրության 02.08.2024

DOI: 10.53548/0320-8117-2024.2-44

### Ամփոփում

Արշակունյաց թագավորության անկումից հետո՝ 428 թ., մարզպանական Հայաստանի ռազմաքաղաքական կյանքում սկզբնաղբյուրները հիշատակում են սպարապետ Համազասպ Մամիկոնյանի որդիներին՝ Վարդանին, Հմայակին, Համազասպին: 442 թ. Վարդանը ստանձնեց սպարապետության գործակալությունը, որը համընկավ պարսկաքուշանական հերթական պատերազմին, որին մասնակցում էր նաև հայկական հեծելազորը: V դ. կեսերին պարսից արքունիքի կողմից տարածաշրջանում բռնաճնշումները, քրիստոնեության վերացմանն ու զրադաշտականության հաստատմանն ուղղված քայլերը հանգեցրին համաժողովրդական ապստամբության պարսից տիրապետության դեմ: 450 թ. հոկտեմբերին Խաղխաղում սպարապետ Վարդան Մամիկոնյանը ջախջախեց պարսկական մեծաթիվ զորաբանակը և ազատագրեց Աղվանքը, սակայն հաջորդ տարի՝ 451 թ. մայիսի 26-ին, զոհվեց Ավարայրի դաշտում: Հմայակ Մամիկոնյանը, որ դիվանագիտական առաքելությամբ մեկնել էր կայսեր արքունիք, Տայքում գլխավորեց հայ-պարսկական զորախմբի դեմ պայքարը և զոհվեց Որջեհաղ գյուղում: Սպարապետի կրտսեր եղբայրը՝ Համազասպը, 452 թ. Տիգրանի ատյանում դատապարտվեց աքսորի և տասներեք տարի մնաց գերության մեջ: Ստորին Հայքի (Երկրորդ Հայք, Մելիտենե կենտրոնով – Վ.Ա.) սպարապետ Վասակ Մամիկոնյանը, ի տարբերություն իր տոհմակիցների, որդեգրեց այլ քաղաքականություն՝ գործակցելով մարզպան Վասակ Սյունու հետ, որի պառակտիչ գործունեության հետևանքով հայերը Ավարայրի դաշտում մենակ մնացին պարսից գերակշիռ ուժերի դեմ հանդիման: Իսկ պրեպոզիտոս Մուշեղ և Արտաշես Մամիկոնյաններն իրենց գործունեությունը ծավալում էին Հայաստանի սահմաններից դուրս՝ բյուզանդական արքունիքում: Սրանք էին V դ. առաջին կեսի առավել հայտնի Մամիկոնյանները:

**Բանալի բառեր**՝ Վարդան Մամիկոնյան, Վասակ Սյունի, Հմայակ, Համազասպ, Վասակ Մամիկոնյան, Պարսկաստան, Բյուզանդիա:

### Ներածություն

428 թ. պարսից արքունիքը հասավ իր վաղեմի ծրագրի իրագործմանը՝ կարողանալով անհետատես հայ նախարարների սադրանքի հետևանքով գա. հազրկել Արևելահայկական թագավորության վերջին ներկայացուցիչ Արտաշես Արշակունուն (422-428 թթ.) և կաթողիկոս Սահակ Պարթևին (388-439 թթ.):

Հայ Արշակունիների թագավորության անկումից հետո Հայաստանի արևելյան մասում ստեղծվեց պետական կառավարման նոր՝ մարզպանական համակարգ<sup>1</sup>: Սակայն իշխանությունը պատկանում էր նախարարներին, չնայած որ երկրից գանձվող հարկերն արդեն հանձնվում էին պարսից դուռը, բայց հայոց այրուծին պատերազմի միջոցին առաջնորդում էին հայ նախարարները<sup>2</sup>, այսինքն՝ պետականության կրողը Հայաստանում մնում էր հայ նախարարական համակարգը: Առաջ անցնելով նշենք, որ հետագայում ազգային-ազատագրական պայքարի շնորհիվ բարձրացավ Մամիկոնյանների գլխավորած Տանուտերական իշխանապետությունը<sup>3</sup>: Սակայն Սասանյան տիրակալները չէին կարող հանդուրժել այդ վիճակը և հաջորդ քայլով ձգտում էին ոչնչացնել նախարարական և հոգևոր դասը, որը հանդիպելու էր հայ ժողովրդի բոլոր խավերի դիմադրությանը և այդ պայքարի դրոշակիրները լինելու էին Մամիկոնյանները:

### Մամիկոնյան տունը հետարշակունյաց շրջանում

V դ. առաջին կեսին՝ հետարշակունյաց շրջանում, սկզբնաղբյուրները տարբեր իրադարձությունների առթիվ հիշատակում են սպարապետ Համագասպ Մամիկոնյանի<sup>4</sup> որդիներին՝ Վարդանին, Հմայակին, Համագասպին, ինչպես նաև Ստորին Հայքի<sup>5</sup> սպարապետ Վասակ Մամիկոնյանին. «հաւատարիմ զօրացն Հոռոմոց ի սահմանին Պարսից»<sup>6</sup>: Վերոհիշյալ ժամանակաշրջանում հայտնի էին նաև Մուշեղ և Արտաշես Մամիկոնյանները:

Այդ շրջանում Մամիկոնյան տոհմի գլուխ կանգնած էր Վարդան Մամիկոնյանը, Սահակ կաթողիկոսի դստեր՝ Սահականուշի և «գմարզպանութին և զզօրավարութին Հայոց»<sup>7</sup> պաշտոնը զբաղեցնող Համագասպ Մամիկոնյանի ավագ որդին: Քանի որ Սահակ Պարթևն արու զավակ չունեի, Վարդանին և նրա եղբայրներին կտակեց Լուսավորչի տան հսկայական կարողությունը. «զստացուածս գեղից իւրոց և ազարակաց, և որ ինչ միանգամ էր իւր՝ ետ նոցա ի ժառանգութին և զաւակի նոցա մինչև ցլաւտեան»<sup>8</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Колесников 1981, 49-56, Хуршудян 2003, 95-109:

<sup>2</sup> Տե՛ս Եղիշէ 1989, 12:

<sup>3</sup> Տե՛ս Դանիելյան 2010, 55:

<sup>4</sup> Համագասպ Մամիկոնյանի գործունեության մասին տե՛ս Վարդանյան 2021, 25-30:

<sup>5</sup> Ըստ Ե. Տեր-Մինասյանի և Վ. Իսկանյանի՝ Ստորին Հայքը համապատասխանում է Հայաստանի հարավարևմտյան մասի՝ Ծոփք և Դիարբեքրի գավառներին, տե՛ս Եղիշէ 1989, 427, ծան. 111: Իսկանյան 1991, 110, ծան. 5: Ա. Մուշեղյանը նշում է, որ Ստորին Հայքը նույն Ծոփաց աշխարհն է, տե՛ս Մուշեղյան 2007, 117-124, 326: Յ. Տաշյանն այն նույնացնում է Բարձր Հայքի Կարնո աշխարհին, տե՛ս Տաշեան 1937, 15: Իսկ Ն. Ադոնցի կարծիքով՝ Ստորին Հայք ասելով հասկացվել է սատրապությունները, տե՛ս Адопц 1971, 126, որ. 1: Ըստ Մ. Աբեղյանի՝ Ստորին Հայքը համապատասխանում է Երկրորդ Հայքին՝ Մելիտենե կենտրոնով, տե՛ս Աբեղյան 1968, 326, 327:

<sup>6</sup> Եղիշէ 1989, 188:

<sup>7</sup> Թովմա Արծրունի և Անանուն 1985, 116:

<sup>8</sup> Ղազարյայ Փարպեցոյ 1982, 84:

Սրանով Մամիկոնյան նոր սերունդը դարձավ Հայաստանի ամենամեծ հողատերերից մեկը<sup>9</sup>, որի հետևանքով նրանց դիրքերն է՛լ ավելի ուժեղացան երկրի քաղաքական կյանքում՝ առաջ բերելով շահերի սուր հակասություն մյուս հողատեր իշխանավորների շրջանում<sup>10</sup>:

Սկզբնաղբյուրներում հստակ տեղեկություններ չլինելու հետևանքով ուսումնասիրողներն ապագա սպարապետի ծննդյան տարբեր թվականներ են նշում. Բ Կյուլեսերյանը և Հ. Արմենը՝ 387 թ.<sup>11</sup>, իսկ Մ. Կատվայանը՝ 388-391 թթ. ընկած ժամանակահատվածը<sup>12</sup>: Նշենք, որ Վարդան Մամիկոնյանի գործունեության վաղ շրջանի վերաբերյալ սկզբնաղբյուրներում տեղեկություններ չեն պահպանվել: Չանդրադառնալով նրա սկզբնական գործունեության հայտնի դրվագներին, որը հանգամանալից քննության է ենթարկվել մեր վերջին աշխատանքում<sup>13</sup>, միայն նշենք, որ նրա վերաբերյալ առաջին տեղեկությունները վերաբերում են V դ. 20-ական թվականներին, երբ Մամիկոնյան երիտասարդ իշխանը Սահակ կաթողիկոսի հանձնարարությամբ լուսավորչական և դիվանագիտական առաքելություններով գտնվում էր բյուզանդական և պարսկական արքունիքներում: 420 թ. Թեոդոս Բ կայսեր (408-450 թթ.) կողմից նշանակվում է ստրատելատ<sup>14</sup> բյուզանդական Հայաստանի սահմաններում, քանի որ կայսրն իրավասու չէր այդպիսի նշանակում կատարելու պարսկական ենթակայության տակ գտնվող Արևելահայկական թագավորությունում<sup>15</sup>, ապա այն ձևական բնույթ էր կրում, մնալով որպես պատվանուն, քանի որ երկու տարբեր պետություններում չէր կարող բանակ ղեկավարել: 432 թ. Սահակ Պարթևի միջնորդությամբ պարսից արքան Վարդան Մամիկոնյանին հաստատեց «ի տէրութիւն իւրոյ ազգին Մամիկոնէից»<sup>16</sup>: Հետագա տարիներին պատմիչների աշխատանքներում նրա վերաբերյալ տեղեկություններ չկան: Երբ 442 թ. Միջին Ասիայում սկսվեց պարսկա-քուշանական հերթական պատերազմը, հպատակ երկրներից սկսվեց զորքերի հավաքագրումը, և հենց այդ ժամանակ էլ՝ 442 թ., հայկական զորագունդը գլխավորել է Վարդան Մամիկոնյանը՝ զբաղեցնելով սպարապետության գործակալությունը<sup>17</sup>: Պարսկա-քուշանական պատերազմը, որը հիմ-

<sup>9</sup> Մամիկոնյանների տիրոջների վերաբերյալ տե՛ս Վարդանյան 2019, 18-33:

<sup>10</sup> Տե՛ս Լեո 1967, 34:

<sup>11</sup> Տե՛ս Կիլեսերեան 1909, 344, Արմեն 2021, 101:

<sup>12</sup> Տե՛ս Կատվայան 1985, 314:

<sup>13</sup> Տե՛ս Վարդանյան 2023, 75-85:

<sup>14</sup> Տե՛ս Մովսէս Խորենացի 1991, 335: Հմմտ. Կիրակոս Գանձակեցի 1961, 31: «Ստրատելատը» հունական տիտղոս է, նշանակում է զորավար, բանակ վարել, տե՛ս Մալխասեանց 1945, 272: Աճառյան 1979, 280: Ըստ Ա. Մուշեղյանի՝ նույնական են հունական ստրատելատ և հայկական սպարապետ ռազմական կոչումները, տե՛ս Մուշեղյան 2007, 326: Բ. Կյուլեսերյանը՝ «ստրատելատը» նույնացնում է Հռոմում գործող պրետորին, տե՛ս Կիլեսերեան 1909, 368:

<sup>15</sup> Տե՛ս Վարդանյան 2023, 78:

<sup>16</sup> Մովսէս Խորենացի 1991, 352:

<sup>17</sup> Վարդանյան 2023, 80:

նականում ընթանում էր Բակտրիայում<sup>18</sup>, տևեց մինչև Հազկերտ Բ-ի (439-457 թթ.) «չորրորդ ամ է տէրութեանն իւրոյ մինչև յամն մետասաներորդ թագաւորութեանն»<sup>19</sup> և ավարտվեց 449 թ պարսիկների հաղթանակով: Հայկական զորագունդն այդ տարիների ընթացքում Մամիկոնյան սպարապետի գլխավորությամբ մասնակցեց պարսկական արշավանքներին<sup>20</sup> քուշանների և հոների դեմ, ինչպես նաև Մարվիտոտի ճակատամարտին<sup>21</sup>: Հավանաբար հայկական զորամասերը հայրենիք վերադարձան 449 թ.՝ պատերազմի ավարտից հետո, քանի որ Վարդանի անունը չի հիշատակվում 444 թ. տեղի ունեցած Բագրևանդ գավառի Շահապիվանի եկեղեցական ժողովում<sup>22</sup>, սակայն արդեն 450 թ. գարնանը Տիգրան կանչված մեծամեծ նախարարների շարքում նշվում է որպես սպարապետ և Մամիկոնյան տանուտեր<sup>23</sup>:

Արտաքին հաջողությունից ոգևորված<sup>24</sup> Հազկերտ Բ-ն և պարսից վերնախավը, օգտագործելով միջազգային նպաստավոր իրադրությունը, փորձեցին վերջնականապես ամրապնդվել ենթակա երկրներում, մասնավորապես մարզպանական Հայաստանում: Դենշապուհի աշխարհագիրը և բռնաճնշումները չարդարացրին պարսից արքունիքի հույսերը, և պարսից արքան դիմեց ավելի կտրուկ քայլերի՝ ձեռնամուխ լինելով տարածաշրջանում քրիս-

<sup>18</sup> Քուշանների մեծ մասն ապրում էր Բակտրիայում, որի կենտրոնն էր Բահլ քաղաքը, տե՛ս «Աշխարհացոյց» 1881, 41-42, Дьяконов, Мандельштам 1958, 346: Բահլ քաղաքի ավերակները գտնվում են ներկայիս Աֆղանստանի տարածքում՝ Օքսուս (այժմ՝ Ամու-Դարյա) գետի հովտում, տե՛ս Массон 1975, 47:

<sup>19</sup> Եղիշէ 1989, 24:

<sup>20</sup> Մ. Աբեղյանը և Վ. Նալբանդյանը, ուսումնասիրելով Եղիշեի հաղորդումները պարսկա-քուշանական պատերազմների վերաբերյալ (տե՛ս Եղիշէ 1989, 30), գտնում են, որ պատմիչը, որպես զինվորական կամ հոգևորական, 442-449 թթ. միջակայքում սպարապետի հրամանատարությամբ երկու տարի ծառայել է հայկական գնդի կազմում՝ Ապար աշխարհում (տե՛ս Աբեղյան 1968, 324: Նալբանդյան 1987, 210-211): Ա. Մուշեղյանը, անդրադառնալով Շահապիվանի եկեղեցական ժողովի մասնակիցներին, նշում է, որ Եղիշեն ոչ թե եղել է Վարդան Մամիկոնյանի, այլ Վասակ Սյունուդրան երեցը և դասվել է մարզպանի գրասենյակի պաշտոնյաների շարքում՝ որպես ատենադպիր (տե՛ս Մուշեղյան 2013, 44):

<sup>21</sup> Տե՛ս Ղազարայ Փարպեցոյ 1982, 186: Ըստ Մ. Տեր-Պետրոսյանցի՝ գոյություն ունի թե՛ Մարվիտոտ անվամբ գետ Մերաշենի շրջանում, թե՛ համանուն գավառ, որտեղ Վարդան Մամիկոնյանն աչքի է ընկել իր քաջությամբ, տե՛ս Ղազար Փարպեցի 1895, 482, ծան. 108: Լեոն և Ս. Երեմյանը Մարվիտոտը նույնացնում են Բահլից արևմուտք գտնվող Մերվ քաղաքի հետ, տե՛ս Լեո 1967, 59, Հայ ժողովրդի պատմություն 1984, 170, ծան. 22:

<sup>22</sup> Շահապիվանի եկեղեցական ժողովը գումարվել է 444 թ. Սահակ կաթողիկոսի մահվանից վեց տարի անց, տե՛ս Բարթիկյան 1962, 462: Իսկ Մ. Օրմանյանի հաշվումներով օգոստոսի 7-ին, տե՛ս Օրմանեան 2001, 378: Ժողովին մասնակցում էին. «Վասակայ Սինոյ մարզպանութեանն Հայոց եւ Վահանայ Ամատոնոյ հազարապետութեանն, եւ Վրոայ խոռոտոնոյ մաղխազութեանն», տե՛ս Կանոնագիրք Հայոց 1964, 427:

<sup>23</sup> Տե՛ս Ղազարայ Փարպեցոյ 1982, 108:

<sup>24</sup> Քուշանաց պատերազմին զուգահեռ՝ պարսկական բանակները Մծքինի մոտ հաղթանակ տարան բյուզանդացիների նկատմամբ, և վերջիններս պարտավորվեցին ռազմատուգանք վճարել, որի հետևանքով վերականգնվում էր 422 թ. կնքված խաղաղության հարյուրամյա պայմանագիրը, տե՛ս Եղիշէ 1989, 11: Հմմտ. Տեր-Մինասյան 1964, 272:

տոնեության վերացմանն ու զրադաշտականության հաստատմանը<sup>25</sup>: Սակայն Արտաշատում հրավիրված հոգևոր և աշխարհիկ պետերի ժողովը մերժեց հայոց ներքին ինքնավարությունը վերացնելուն միտված կրոնափոխության առաջարկը: Ուսումնասիրելով ժողովի մասնակիցների ցուցակները՝ աչքի է զարնում այն հանգամանքը, որ Մամիկոնյաններն առաջնակարգ տեղ են զբաղեցրել մարզպանական Հայաստանի ոչ միայն աշխարհիկ, այլև հոգևոր կյանքում: Թե՛ Եղիշեի, թե՛ Ղազար Փարպեցու ցանկերում Տիգրան կանչված հայ նախարարների շարքում Վարդան Մամիկոնյանը հինգերորդն էր: Կարծում ենք, Մամիկոնյանների զբաղեցրած տեղը չի համապատասխանում իրենց բարձր դիրքին: Եթե Վասակ Սյունին որպես մարզպան և Սյունյաց նախարար<sup>26</sup> պետք է առաջինը հիշատակվեր, Ներշապուհ Արծրունին, ունենալով Ռմբոսյան կամ մարդպետական իշխանի պաշտոնը, երկրորդը<sup>27</sup>, իսկ Խոռխոռունյաց իշխանն Արշակունիների շրջանում թագավորական գնդի հրամանատարն էր<sup>28</sup>, և նրանք ևս երկրի ազդեցիկ նախարարական տներից էին<sup>29</sup>, ապա զարմանալի է Ռշտունյաց նախարարի հիշատակումը մեծամեծ նախարարների երրորդ հորիզոնականում<sup>30</sup> սպարապետից և մաղխագից ավելի պատվավոր տեղում: Սա այն դեպքում, երբ դրանից մի քանի տասնամյակ առաջ ստեղծված «Գահնամակում»<sup>31</sup> ու «Զորանամակում» թե՛ Խոռխոռունիները և թե՛ առավել ևս Մամիկոնյանները, որոնք դարձել էին մարզպանական Հայաստանի ամենամեծ հողատերերը

<sup>25</sup> Ըստ Արսեն Սափարացու՝ պարսից թագավորները ստիպում էին հայերին, որ հեռանան հունաց դավանությունից, որպեսզի կրոնափոխությամբ նրանց միջև թշնամություն ընկնի և այսուհետև հնազանդ լինեն պարսից պետությանը, տե՛ս Մելիքսեթ-Բեկ 1934, 39:

<sup>26</sup> Ըստ «Զորանամակի»՝ Արշակունիների շրջանում Սյունյաց նախարարության ռազմուժի թիվը կազմել է 19400, տե՛ս Адоиц 1971, 263, 285: Հավանաբար դրա որոշ մասը պահպանվել էր նաև մարզպանության շրջանում: Այդ առումով Բ. Հարությունյանը, քննության ենթարկելով հայկական զինուժի թվակազմը, նշում է, որ Սյունյաց իշխանությանը վերագրվող 19400 մարտիկի առկայությունը վերաբերում է մարզպանության շրջանին, մասնավորապես, երբ մարզպանն էր Վասակ Սյունին, և այդ թվակազմի մեջ էր նաև Մարդպետական 15-հազարանոց զունդը, տե՛ս Հարությունյան 2012, 41: Եվ այդ դեպքում Սյունյաց զինուժի թիվը կկազմեր 4400 մարտիկ, որն իրականությանը մոտ է, եթե հաշվի առնենք թե՛ Սյունյաց իշխանության զբաղեցրած տարածքը, թե՛ բնակչության խտությունը:

<sup>27</sup> Տե՛ս Հարությունյան 2016, 89:

<sup>28</sup> Տե՛ս Մովսէս Խորենացի 1991, 110:

<sup>29</sup> Մարզպանության շրջանում մաղխագության գործակալությանն արքայի և արքունիքի բացակայության պայմաններում ձևական բնույթ էր կրում և ավանդույթի ուժով հիշատակվում են չորրորդ տեղում և Բ. Ուլուբաբյանի դիտարկմամբ՝ այդ ժամանակ մաղխագ էին կոչվում ըստ տոհմային հին տիտղոսի տե՛ս Ղազարայ Փարպեցույ 1982, 496, ծան. 42: Ա. Մուշեղյանը նշում է, որ 428 թ. թագավորության անկումից հետո պարսից արքունիքը Կամսարականների փոխարեն Խոռխոռունիներին վստահեց նաև առաջին իշխան հայոց տիտղոսը, որն արտացոլված է Գահնամակում տե՛ս Մուշեղյան 2007, 328:

<sup>30</sup> Տե՛ս Եղիշե 1989, 86 Ղազարայ Փարպեցույ 1982, 108:

<sup>31</sup> «Գահնամակը» ստեղծվել է 388 թ. Խոսրով Արշակունու կողմից՝ վավերացնելու Մեծ Հայքի վերամիավորումը և 432 թ. Տիգրանում Սահակ կաթողիկոսի միջնորդությամբ հաստատվել է պարսից արքայի կողմից տե՛ս Հարությունյան 1976, 72, 74: «Գահնամակի» քննությունը տե՛ս Յակոբեան 2011, 485-550:



և որպես սեփականություն տիրապետում էին ոչ միայն ընդարձակ գավառների, այլև այն քիչ ընտանիքներից էին, որոնց պատկանում էր ամբողջական նահանգ, ժառանգաբար վարում էին սպարապետության պաշտոնը, և պատերազմի ժամանակ Հայաստանի բանակը կոմլում էր նրանց ընդհանուր հրամանատարության ներքո, ավելի պատվավոր տեղերում էին՝ համապատասխանաբար զբաղեցնելով չորրորդ և հինգերորդ տեղերը<sup>32</sup>, իսկ «Գահնամակի» վերջին քննությամբ՝ Մամիկոնյանները չորրորդ հորիզոնականում<sup>33</sup> էին: Եվ չէին կարող մարզպանական Հայաստանի պետական համակարգում որևէ առանցքային գործակալություն չզբաղեցնող Ռշտունիները հայտնվել ավելի բարձր տեղում: Դրա վառ ապացույցն է Ագաթանգեղոսի հաղորդումն այն մասին, թե երբ Տրդատ Գ-ի (298-330 թթ.) հրամանով հավաքվեցին Մեծ Հայքի «զգլխաւորս նախարարացն և զկուսակալս», Մամիկոնյանները հիշատակվում են հինգերորդ տեղում, իսկ Ռշտունիները՝ միայն իններորդ հորիզոնականում<sup>34</sup>: Նույն պատկերն է նաև թե՛ Մեսրոպ Երեց Վայոցձորեցու երկում, որտեղ պատմիչը տալիս է Արշակ Բ-ի (346-368 թթ.) օրոք 167 տոհմերի ցուցակ, այստեղ Ռշտունիները ևս մեծամեծ նախարարների շարքում չէին՝ զբաղեցնելով համեստ տեղ<sup>35</sup>: Ստ. Օրբելյանը ևս, նկարագրելով Արշակունյաց շրջանում Մեծ Հայքի նախարարական կազմը, ռազմական բաժանումը, բղեշխների և մեծամեծ իշխանների ցանկը, ընդհանրապես չի հիշատակում Ռշտունիներին թե՛ գահազուլիսների, թե՛ չորս դռների հրամանատարների շարքում<sup>36</sup>: Կարծում ենք՝ Եղիշեի աշխատանքում Ռշտունիների հայտնվելն առաջին եռյակում ինչ-որ սխալմունք է, և նրանից օգտված Ղազար Փարպեցին, ձեռքի տակ ունենալով Եղիշեի աշխատությունը<sup>37</sup>, տալիս է նույն ցանկը՝ ավելացնելով միայն վրաց Աշուշա բղեշխին<sup>38</sup>, մինչ այդ հոգևոր և աշխարհիկ պետերի Արտաշատյան ժողովին ընդհանրապես չհիշատակելով Ռշտունիներին<sup>39</sup>:

Արտաշատի ժողովի հոգևոր աստիճանակարգում Տարոնի եպիսկոպոս Սահակը ևս արժանավոր տեղ էր զբաղեցնում՝ հիշատակվելով կաթողիկոսի տեղապահ Հովսեփից հետո երկրորդը<sup>40</sup>: Սակայն Ղազար Փարպեցին երկրորդ տեղում հիշատակում է Սյունյաց եպիսկոպոսի, իսկ չորրորդը՝ նոր

<sup>32</sup> Տե՛ս Адопц 1971, 249, 263:

<sup>33</sup> Տե՛ս Յակոբեան 2011, 532, ծան. 20:

<sup>34</sup> Տե՛ս Ագաթանգեղայ 1983, 446:

<sup>35</sup> Տե՛ս «Սոփերք Հայկականք» 1853, 32-33:

<sup>36</sup> Տե՛ս Ստեփաննոսի Օրբելեան 1910, 24, հմմտ. Յակոբեան 2011, 494: Ս. Կոզյանը, քննելով Կամսարականների տեղը և դիրքը հայ նախարարների շարքում, նույնպես գալիս է նմանատիպ եզրահանգման, տե՛ս Կոզեան 1926, 47:

<sup>37</sup> Տե՛ս Նալբանդյան 1987, 212:

<sup>38</sup> Տե՛ս Ղազարայ Փարպեցոյ 1982, 108:

<sup>39</sup> Տե՛ս Ղազարայ Փարպեցոյ 1982, 100, 102:

<sup>40</sup> Տե՛ս Եղիշե 1989, 54:

միայն Տարոնի եպիսկոպոսին<sup>41</sup>, որն ուսումնասիրողները կապում են Վասակ Սյունու պաշտոնական դիրքի հետ և համարում, որ Սյունյաց եպիսկոպոսի առաջնային տեղը բխում էր այդ ժամանակ Սյունիքի ազդեցիկ դերից<sup>42</sup>: Նույն պատկերն է նաև Մամիկոնյանների մյուս տիրույթի՝ Տայքի եպիսկոպոս Տաճատի պարագայում, երբ Եղիշեն վերջինիս հիշատակում է վեցերորդ տեղում<sup>43</sup>, իսկ Ղազար Փարպեցին՝ վերջին տեղերից մեկում<sup>44</sup>:

### **Մամիկոնյանները ազատագրական պայքարի առաջին փուլում**

Մամիկոնյանները ոչ միայն գլխավորեցին միջնադարյան Հայաստանի ամենահուժկու ազատագրական շարժման երկրորդ փուլը (ապստամբության առաջին շրջանում՝ մինչև 450 թ. աշուն, այն ղեկավարում էր Վասակ Սյունին), այլև աչքի ընկան գործնականում բոլոր բնագավառներում: Առաջ անցնելով նշենք, որ երբ Բյուզանդիայից աջակցություն ստանալու նպատակով պատվիրակություն<sup>45</sup> մեկնեց Կոստանդնուպոլիս, նրանում առաջնային դեր ուներ սպարապետի եղբայրը՝ Հմայակ Մամիկոնյանը, որի գործունեությանը կանդադառնանք ստորև:

450 թ. գարնանը Տիգրան կանչված նախարարներն ընկնում են անելանելի վիճակի մեջ՝ կա՛մ պետք է ընդունեին կրոնափոխության առաջարկը, կա՛մ նրանց սպառնում էին մահապատժով: Վերջիվերջո այդ վիճակից դուրս գալու միակ միջոցը նախարարները գտնում են կեղծ ուրացության մեջ և վերադառնում հայրենիք: Սակայն տեսնելով երկրում ստեղծված անբարենպաստ իրավիճակը, որը պայմանավորված էր ներքին և արտաքին տարբեր հանգամանքներով, 450 թ. մայիսին<sup>46</sup> Վարդան Մամիկոնյանը դիմում է այնպիսի հուսահատական քայլի, որ մինչ այդ նրանց տոհմում որևէ սպարապետ չէր կատարել: Ըստ Ղազար Փարպեցու հաղորդման՝ ամբողջ ընտանիքով Բյուզանդիա գաղթելու որոշում է ընդունում, որն արժանանում է եղբայրների և տոհմակիցների հավանությանը<sup>47</sup> դրանով ինքնական հրաժարվելով մարզպանական Հայաստանում իրենց դիրքից ու նշանակությունից՝ օտարության մեջ հանգիստ գտնելու համար<sup>48</sup>՝ հույս ունենալով կայսրությունից կալվածքներ ստանալ արևմտյան Հայաստանում<sup>49</sup>: Դրա վկայությունն է պարսկա-բյուզանդական սահմանի մոտակայքում նրանց սպասումը. «Եւ եկեալ հասանէին ի գիւղ մի, որոյ անունն էր Արամանայ, ի նա-

<sup>41</sup> Տե՛ս Ղազարայ Փարպեցոյ 1982, 100:

<sup>42</sup> Տե՛ս Վարդանյան 2005, 191:

<sup>43</sup> Տե՛ս Եղիշէ 1989, 54:

<sup>44</sup> Տե՛ս Ղազարայ Փարպեցոյ 1982, 100:

<sup>45</sup> Տե՛ս Ղազարայ Փարպեցոյ 1982, 148:

<sup>46</sup> Տե՛ս Մուրադյան 1989 53-54:

<sup>47</sup> Տե՛ս Ղազարայ Փարպեցոյ 1982, 130, 132:

<sup>48</sup> Տե՛ս Լեո 1967, 69:

<sup>49</sup> Տե՛ս Իսկանյան 1991, 71:

հանգին Բագրաւանդայ, մերձակայ սահմանակից Բասենոյ և Տուարձատափու<sup>50</sup>. ուր և սակաւ ինչ աուրս կամեցեալ հանգչել, և զուշ եղեալ ճանապարհին գնալ պատրաստէին ստիպով»<sup>51</sup> հավանաբար բանակցություններ վարելով քյուզանդական իշխանությունների հետ՝ սահմանն անցնելու համար:

Մամիկոնյանների փախուստն այնքան հապճեպ էր, որ անակնկալի եկած Վասակ Սյունին, որը պարսից արքունիքի առջև պատասխանատվություն էր կրում երկրում կատարվող մեծ ու փոքր իրադարձությունների համար, և Մամիկոնյանների ազդեցիկ դերը թե՛ որպէս սպարապետներ, թե՛ խոշորագույն հողատերեր Հայաստանի քաղաքական կյանքում հաշվի էին առնում նաև Սասանյան տիրակալները, ու նրանց օրինակը կարող էր վարակիչ լինել մյուս մեծ ու փոքր նախարարների համար, փորձեց ամեն գնով վերադարձնել գաղթականներին: Վասակ Սյունու հրամանով ավագ նախարարներից և հոգևորականներից կազմվեց պատգամավորություն՝ Արշավիր Կամսարականի և Ղևոնդ երեցի գլխավորությամբ<sup>52</sup>: Վերջիններս սպարապետին տանում էին նաև մարզպանի անձնական նամակը, որտեղ, ի թիվս այլ հավաստիացումների և նախատինքի, նշվում է. «ես մինչ Վրաց մարզպանն էի և դուռն Աղուանից յիմում ձեռին էր՝ բազում զօրագլուխք Հոնաց ընդ իս բարեկամացան ուխտի և երդմամբ և այսօր նովին երդմամբ երթեակես առ իս.»<sup>53</sup>: Մարզպանի պատվիրակներին Բագրևանդի Արամանյա գյուղում հաջողվում է համոզել սպարապետին վերադառնալ ու միանալ ապստամբությանը, և այդ դարձի մեջ վճռական ազդեցություն ուներ նաև Արշավիր Կամսարականը<sup>54</sup>, որը պայմանավորված էր թե՛ Մամիկոնյանների տան փեսա<sup>55</sup> լինելու հանգամանքով, թե՛ երկու տոհմերի դարավոր բարեկամությամբ: Հետագա ամիսներին՝ մինչև աղվանական արշավանքը, որը Հ. Դավթյանի բնորոշմամբ սպարապետի կենսագրության ամենափառավոր էջն է<sup>56</sup>, սկզբնաղբյուրներում Վարդան Մամիկոնյանի վերաբերյալ տեղեկությունները սակավ են: Չմանրամասնելով հետագա իրադարձություն-

<sup>50</sup> Ըստ Ս. Երեմյանի՝ Տվարածատափը Տուրուբերան նահանգի 7-րդ գավառն է, այժմ՝ Ղարայազի դաշտը, տե՛ս Երեմյան 1963, 86, 116 և կից քարտեզը Գ 4-Գ5:

<sup>51</sup> Տե՛ս Ղազարայ Փարպեցոյ 1982, 132: Եղիշեն ընդհանրապես չի անդրադառնում Մամիկոնյանների փախուստին, որը, Բ. Կյուլեսերյանի բնորոշմամբ, պայմանավորված է Վարդանանց պատերազմի դյուցազուն հերոսի՝ սպարապետի քաջագործությունների վրա սովեր չձգելու համար, տե՛ս Կիլիսեւերեան 1909, 197:

<sup>52</sup> Տե՛ս Ղազարայ Փարպեցոյ 1982, 134:

<sup>53</sup> Ղազարայ Փարպեցոյ 1982, 196: Այս նամակը, որը պահպանվել էր սպարապետի փեսա Արշավիր Կամսարականի մոտ, 452 թ. Տիգրանում նախարարների դատավարության ժամանակ դարձավ Վասակ Սյունու դեմ ուղղված գլխավոր մեղադրանքներից մեկը, տե՛ս Ղազարայ Փարպեցոյ 1982, 194, 196, 198:

<sup>54</sup> Տե՛ս Կոզեան 1926, 98:

<sup>55</sup> Տե՛ս Ղազարայ Փարպեցոյ 1982, 152: Արշավիր Կամսարականն ամուսնացած էր Վարդան Մամիկոնյանի դուստր Վարդանույշի հետ, տե՛ս Կիլիսեւերեան 1909, 384-385, Կոզեան 1926, 66, 97:

<sup>56</sup> Տե՛ս Դավթյան 2015, 621:

ները, քանի որ 450 թ. աշնանը ծավալված իրադարձություններին մանրակրկիտ անդրադարձ է եղել մեր վերջին աշխատանքում<sup>57</sup>, նշենք միայն, որ, ելնելով տարածաշրջանում տիրող ռազմաքաղաքական վիճակից, Աղվանք Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ արշավանքի մեկնեց հայկական երրորդ զորաբանակը՝ փորձելով ոչ միայն փրկել աղվանական պետությունն ու եկեղեցին կործանումից, ինչպես նաև կասեցնել հյուսիս-արևելքից պարսկական բանակի մուտքը մարզպանական Հայաստան: 450 թ. հոկտեմբերին տեղի ունեցած Խաղխաղի նշանավոր ճակատամարտը հետարշակունյաց շրջանի հայկական ռազմուժի փայլուն հաջողություններից էր: Դրան հաջորդեց սպարապետի կողմից Ճորա պահակի<sup>58</sup> գրավումը և խայլանդուր հոների հետ դաշինքի կնքումը<sup>59</sup>:

Կանխելով Մամիկոնյանների գաղթը Բյուզանդիա՝ մարզպանի և ապստամբության ղեկավարության գերխնդիրը մնում էր դաշնակիցներից՝ մասնավորապես Բյուզանդիայից և հոներից օգնություն ստանալը Պարսկաստանի դեմ առաջիկա գոտեմարտում: Որոշվեց պատվիրակություն առաքել կայսրություն: Եղիշեն հիշատակում է Ատոմ Գնունուն, որը Թեոդոս կայսրին է տանում հայ քաղաքական և հոգևոր վերնախավի խնդրանք նամակը<sup>60</sup>: Սակայն, ըստ Ղազար Փարպեցու, մարզպանի և մյուս տանուտերերի կողմից Բյուզանդիա ուղարկվեցին «գիշխանն տանն Ամատունեաց Վահան, որպէս զայր մտացի և խորհրդական, և զտուրբ սեպուհն զՀմայեակ, զեղբայրն երանելի զօրավարին Հայոց Վարդանայ ի Մամիկոնէից տոհմէն, և զերանելին Մերհուժան զեղբայր սրբոյն Աղանայ՝ ի տոհմէն Արծրունեաց»<sup>61</sup>: Կայսրություն մեկնած երկու պատվիրակությունների վերաբերյալ ուսումնասիրողները հայտնել են տարբեր տեսակետներ<sup>62</sup>, քանի որ այն մեր աշխատանքի շրջանակներից դուրս է, նշենք միայն, որ հավաստի է թվում այն փաստը, Կոստանդնուպոլիս է մեկնել ոչ թե երկու, այլ մեկ պատվիրակություն, և չենք կարող համաձայնել Բ. Հարությունյանի այն տեսակետին, որ երկրորդ պատվիրակությունը կայսրություն է մեկնել Խաղխաղի ճակատամարտից հետո նոր ձևավորված իշխանության՝ Վարդան Մամիկոնյանի կողմից<sup>63</sup>, քանի որ Ղազար Փարպեցու հաղորդման մեջ նշվում է, որ կայսերն ուղղված նամակը կնքեցին «նախ ինքն իշխանն Սինեաց Վասակ իւրով մատանեալ, և ապա ամենայն տանուտեարքն Հայոց»<sup>64</sup>: Այս առումով Վ. Վարդանյանը նշում է, որ ճշմարիտ է Ղազար Փարպեցու հաղորդումը, քանի որ

<sup>57</sup> Տե՛ս Վարդանյան 2023, 35-52:

<sup>58</sup> Ճորա պահակը նույն Դերբենդի լեռնանցքն է, տե՛ս Кудрявцев, Кудрявцев 2015, 19-20:

<sup>59</sup> Տե՛ս Манасерян 2011, 73:

<sup>60</sup> Տե՛ս Եղիշէ 1989, 142, 144:

<sup>61</sup> Տե՛ս Ղազարայ Փարպեցույ 1982, 148:

<sup>62</sup> Հարցի մանրամասն քննությունը տե՛ս Իսկանյան 1991, 76-89:

<sup>63</sup> Տե՛ս Հարությունյան 2003, 48:

<sup>64</sup> Տե՛ս Ղազարայ Փարպեցույ 1982, 148:

Ատոմ Գնունին միայնակ այն ազդեցությունը չէր կարող ունենալ դիվանագիտական առաքելության ընթացքում, որը կղրսևորեին Հայաստանի երեք զորեղ ու նշանավոր տոհմերի ներկայացուցիչները<sup>65</sup>, և նման հույժ կարևոր հանձնարարականով մի նախարարից կազմված դեսպանությունչէր ուղարկվի կայսեր հետ բանակցությունների<sup>66</sup>: Պատվիրակությունը Բյուզանդիայի մայրաքաղաք մեկնեց 450 թ. սեպտեմբերի վերջին<sup>67</sup>: Նոր կայսր հռչակված Մարկիանոսը (450-457 թթ.) երկար ձգձգելուց հետո ոչ միայն հրաժարվեց հայերին որևէ կերպ օգնություն ցույց տալ, այլև «փութացաւ արձակեաց դեսպանս առ թագաւորն Պարսից գնոյն Եղփարիոսն, և եմուտ ընդ նմա յուխտ հաստատութեան՝ ձեռնաթափ լինել ի զօրացն Հայոց զօրու և զինու և ամենայն օգնականութեամբ»<sup>68</sup>, քանի որ Բյուզանդիայի համար հաճելի չէր Պարսկաստանից մարզպանական Հայաստանի անկախացումը, որը կարող է օրինակ հանդիսանալ արևմտյան Հայաստանի համար<sup>69</sup>, և այդ ժամանակ ինքնակառավարվող հայկական գավառները կձգտեին միավորվել պարսկական ենթակայությունից դուրս եկած Մեծ Հայքի վերականգնված թագավորության հետ<sup>70</sup>: Հայ պատվիրակները ձեռնունայն վերադառնում են հայրենիք<sup>71</sup>, սակայն Հմայակ Մամիկոնյանը, ըստ Ղազար Փարպեցու, ուշացել էր Բյուզանդիայում՝ հավանաբար փորձելով ամեն գնով ստանալ կայսեր կամ բյուզանդական Հայաստանի իշխանների օգնությունը՝ չկարողանալով մասնակցել 451 թ. մայիսի 26-ի Ավարայրի ճակատամարտին<sup>72</sup>: Ավարայրի դաշտի նահանջող հայկական զորամիավորումները հաստատվեցին երկրի դժվարամատույց վայրերում ու բերդերում՝ շարունակելով պայքարը: Հայոց զորքի մի մասը նահանջեց Տայք. «Ժողովէին առ Հմայեակ եղբայր սրբոյ զօրավարին Վարդանայ»<sup>73</sup>, քանի որ Տայքն իր անմատչելի լեռներով ու բերդերով բնական դաշնակից էր հայ զորականներին: Նրանց դեմ շարժվեց պարսիկներից և սյունեցիներից կազմված զորամիավորում՝ Արտեմ Գաբելյանի և Վարազշապուհ Պալունու գլխավորությամբ: Վերջիններս Տայքի

<sup>65</sup> Տե՛ս Վարդանյան 2003, 56:

<sup>66</sup> Տե՛ս Իսկանյան 1991, 87:

<sup>67</sup> Տե՛ս Օրմանեան 2001, 420, Մուրադյան 1989, 21, 23:

<sup>68</sup> Եղիշէ 1989, 146, Ղազարայ Փարպեցոյ 1982, 172, 174:

<sup>69</sup> Տե՛ս Իսկանյան 1991, 87:

<sup>70</sup> Տե՛ս Айвазян 2019, 75-76: Թովմա Արծրունու հաղորդումից գիտենք, որ Ավարայրի ճակատամարտից ամիսներ առաջ հայ նախարարական վերնախավի շրջանում հայկական թագավորությունը վերականգնելու գաղափար է եղել, և այդ ուղղությամբ որոշակի քայլեր են կատարվել, տե՛ս Հովհաննիսյան 1957, 97-100, Նալբանդյան 1986, 177-189, Հարությունյան 2003, 49-50, Հարությունյան 2016, 93-96:

<sup>71</sup> Ատոմ Գնունին, Վահան Ամատունին և Մերուժան Արծրունին մասնակցել են Ավարայրի ճակատամարտին և հաջորդ տարի Տիգրանում դատապարտվել աքսորի, տե՛ս Եղիշէ 1989, 200, 388: Ղազարայ Փարպեցոյ 1982, 204:

<sup>72</sup> Ավարայրի դաշտի տեղադրության վերաբերյալ ուսումնասիրողները հայտնել են տարբեր կարծիքներ, վերջին քննությունը տե՛ս Յակոբեան 2017, 101-126:

<sup>73</sup> Ղազարայ Փարպեցոյ 1982, 172:

Որջնհաղ գյուղում լուսաբացին հարձակվում են ապստամբական ուժերի վրա: Անակնկալի եկած հայերին հաջողվում է մեծ կորուստներ պատճառել թշնամու զորաբաժնին, սակայն հայկական կողմի ամենամեծ կորուստը Հմայակ Մամիկոնյանի մահն էր. «յանխնայ քաջութեամբ մարտուցեալ՝ կատարեցաւ նահատակութեամբ ի վերայ սուրբ ուխտին միաբանութեան»<sup>74</sup>: Մամիկոնյան իշխանի<sup>75</sup> մահը կազմալուծեց հետագա պայքարը, որ կարող էր նաև նրա հմուտ ղեկավարման ներքո համահայկական բնույթ ընդունել: Ապստամբների մեծ մասը նահանջեց Պարխարյան լեռները՝ դադարեցնելով պայքարը և հավատալով պարսիկների և Վասակ Սյունու խոստումներին:

V դ. կեսին գործունեություն ծավալած հաջորդ Մամիկոնյանը Վարդան սպարապետի կրտսեր եղբայր Համազասպն է, որի վերաբերյալ դարաշրջանի սկզբնաղբյուրները սակավախոս են՝ ի տարբերություն ավագ եղբայրների: Մովսես Խորենացու հաղորդումից գիտենք, որ Սահակ կաթողիկոսի հանձնարարությամբ Համազասպը ևս Մեսրոպ Մաշտոցի հետ մասնակցել է արևմտյան Հայաստանում հայ գրի ու դպրության տարածմանը<sup>76</sup>: Հետագայում թե՛ Եղիշեն, թե՛ Ղազար Փարպեցին Համազասպին հիշատակում են Ավարայրի դաշտում, երբ սպարապետը, ճակատամարտից առաջ մարտակարգի է դասավորում հայկական բանակը, այն, ըստ Եղիշեի, բաժանելով չորս զորագնդի<sup>77</sup>, ըստ Ղազար Փարպեցու՝ երեք թևերից և Համազասպ Մամիկոնյանի վերջապահ ուժերից<sup>78</sup>: Չխորանալով հարցի մանրամասների մեջ, քանի որ այն մեր աշխատանքի շրջանակից դուրս է և սպառնիչ պատասխան է տվել Հ. Հակոբյանը<sup>79</sup>, հավելենք միայն, որ Եղիշեի հիշատակած չորրորդ գունդը համարվել է պահեստային, և Համազասպ Մամիկոնյանն Ավարայրի դաշտում գլխավորել է հայկական պահեստային գնդերը, որոնք ոչ միայն պետք է օգնության շտապեին թևերից որևէ մեկին, այլև, ըստ Ղազար Փարպեցու հաղորդման, «Եւ զՀազասպեան զիւր եղբայրն թողոյր վերջապահ, և պատուիրէր նմա մի զոք բռնադատել, այլ յորդորել միայն բանիք՝ յաղագս իւրեանց փրկութեան»<sup>80</sup>: Ճիշտ է, պատմիչների մոտ չկա ուղղակի հաղորդում գլխավոր հրամանատարի փոխարինողի վերաբերյալ, սակայն Ղազար Փարպեցու վերը նշված հաղորդումից կարելի է եզրակացնել, որ Համազասպ Մամիկոնյանն Ավարայրում համակարգում

<sup>74</sup> Եղիշէ 1989, 256, Ղազարայ Փարպեցոյ 1982, 174:

<sup>75</sup> Հմայակ Մամիկոնյանն ամուսնացած էր Վասակ Արծրունու դուստր Զվիկի հետ, որը, Ղազար Փարպեցու բնորոշմամբ, «նտաւոր մասամբք յամենայն կանայս ի Հայաստան աշխարհիս.», տե՛ս Ղազարայ Փարպեցոյ 1982, 266: Այդ ամուսնությունից ծնվեցին Վահան, Վասակ, Արտաշես և Վարդ Մամիկոնյանները՝ V դ. երկրորդ կեսի հայ ազատագրական պայքարի առաջամարտիկները:

<sup>76</sup> Տե՛ս Մովսէս Խորենացի 1991, 337:

<sup>77</sup> Տե՛ս Եղիշէ 1989, 234:

<sup>78</sup> Տե՛ս Ղազարայ Փարպեցոյ 1982, 168:

<sup>79</sup> Տե՛ս Հակոբյան 2003, 40-43:

<sup>80</sup> Տե՛ս Ղազարայ Փարպեցոյ 1982, 168:

էր այդ պարտականությունները, քանի որ բոլոր զորագլուխներն ունեին իրենց փոխարինողները, և գլխավոր հրամանատարն էլ պետք է այն ունենար: Սակայն Մամիկոնյան իշխանը չկարողացավ կատարել իր առջև դրված խնդիրը, քանի որ Տղմուտի ափերից, սպարապետի զոհվելուց հետո հայկական բանակն ոչ թե կանոնավոր կերպով նահանջեց ընդհանուր հրամանատարության ներքո, այլ զորագնդերը շարժվեցին տարբեր ուղղություններով՝ ապաստանելով երկրի անառիկ վայրերում, ինչն էլ հնարավորություն տվեց պարսիկներին և հայ դավաճաններին հեշտությամբ ճնշել այդ տեղային դիմադրությունները: Ապստամբության մասնակից նախարարները, այդ թվում Համազասպ Մամիկոնյանը ձերբակալվեց<sup>81</sup> և 452 թ. Տիզրոնի դատավարությունից հետո աքսորվեց Ապար աշխարհի Նյուշապուհ քաղաքը<sup>82</sup>: Հետագա տարիներին Մամիկոնյան իշխանի վերաբերյալ տեղեկությունները չեն պահպանվել: Հայտնի է, որ նախարարները մինչև Պերոզի արքայի (459-484 թթ.) «յամն վեցերորդ միանգամայն արձակեալ զամենեսեսան կենօք և պատուով»<sup>83</sup>: Հավանաբար 465 թ. հայրենիք վերադարձավ նաև Համազասպ Մամիկոնյանը՝ տասներեք տարի մնալով գերության մեջ<sup>84</sup>:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում մյուս հայտնի Մամիկոնյանը Վասակն է. «որ կար ի ծառայութեան Յունաց: ...այրն այն սպարապետ էր Ստորին Հայոց, և հաատարիմ զօրացն Հոռոմոց ի սահմանին Պարսից»<sup>85</sup>: Վասակ Մամիկոնյանի վերաբերյալ սկզբնաղբյուրներում տեղեկությունները սուղ են: Հավանաբար Արշակ III-ի հետ արևմտյան Հայաստան էին անցել

<sup>81</sup> Տե՛ս Եղիշէ, 1989, 388, Ղազարայ Փարպեցոյ 1982, 204:

<sup>82</sup> Ապար աշխարհը (այժմյան՝ Խորասան), գտնվում է Պարսկաստանի հյուսիս-արևելքում, տե՛ս «Աշխարհացոյց» 1881, 40:

<sup>83</sup> Եղիշէ 1989, 400:

<sup>84</sup> Համազասպ Մամիկոնյանի սերունդների վերաբերյալ սկզբնաղբյուրներում ուղղակի հաղորդում չկա: Սակայն Ղազար Փարպեցին V դ. 80-ական թվականներին հիշատակում է. «բարեսէր մեծի և պատուական նախարարին Մամիկոնենին» տե՛ս Ղազարայ Փարպեցոյ 1982, 448: Եթե Համազասպը հայոց մարզպան, սպարապետ և տանուտեր Վահան Մամիկոնյանի գործունեության պայմաններում կոչվում էր նախարար, ապա ամենայն հավանականությամբ ավագ ճյուղի ներկայացուցիչ էր: Բ. Ուլուբաբյանն առանց որևէ բացատրության, սակայն իրավացիորեն նկատել է, որ Համազասպը Վարդան սպարապետի եղբայր Համազասպի որդին էր կամ թոռը, քանի որ միջնադարյան հայ նախարարական տներում սովորություն էր պապի անունով կոչել թոռանը տե՛ս Ղազարայ Փարպեցոյ 1982, 512, ծան. 4: Ավելին, Մամիկոնյան տոհմում ոչ միայն թոռներին, այլև որդիներին էլ էին կոչում հայրերի անունով, IV դ. Վարդան նահապետի որդին կոչվում էր Վարդան, V դ. առաջին կեսին սպարապետ Համազասպ Մամիկոնյանի երրորդ որդին կրում էր Համազասպ կամ Համազասպյան անունը: Ամենայն հավանականությամբ, Համազասպը վերջինիս որդին էր և հոր հետ կիսել է պարսկական տասներեքամյա աքսորը: Այդ առումով Եղիշեն նշում է, որ Մամիկոնյան տոհմից ձերբակալվեցին և Պարսկաստան աքսորվեցին. «Համազասպեան և Համազասպ և Արտաազդ և Մուշեղ.» տե՛ս Եղիշէ 1989, 388: Ղազարայ Փարպեցոյ 1982, 204: Կրտսեր Համազասպը 465թ. Վերադարձել է աքսորից և 482-484 թթ. ազատագրական հաղթական պայքարից հետո օգնել պատմիչ Ղազար Փարպեցուն՝ վերադառնալու Ամիդ քաղաքից, ձեռնարկելու գրել «Հայոց պատմությունը» տե՛ս Ղազարայ Փարպեցոյ 1982, 448:

<sup>85</sup> Եղիշէ 1989, 188:

նաև Վասակի նախնիները, քանի որ սպարապետության գործակալությունն Արշակունիների ժամանակ գլխավորում էին Մամիկոնյանները, սակայն Խոսրով IV-ը այն հանձնեց Սահակ Բագրատունուն: Այդ պատճառով էլ Սամվել Մամիկոնյանը դարձավ Արշակ Գ-ի եռանդուն գործակիցը<sup>86</sup>: Վերջինիս մահից հետո մյուս նախարարների շարքում նա ոչ միայն չվերադարձավ Արևելահայկական թագավորություն, այլև Արկադիոս (395-408 թթ.) կայսեր արքունիքում ընդունվեց բարեկամաբար<sup>87</sup>: Եվ Մամիկոնյան իշխանի ընտանիքը մնաց Բյուզանդիայում՝ հետագայում ունենալով բարձր պաշտոններ, քանի որ վերջինիս ծառայությունների դիմաց թե՛ Արկադիոս, թե՛ Թեոդոս կայսերը լայն ասպարեզ էին բացել նրա ընտանիքի և շառավիղների առջև, մասնավորապես որդին՝ Մուշեղը, 414 թ. առաջ կայսեր պրեպոզիտոսն էր (սենեկապետ)<sup>88</sup>: Հավանաբար Մուշեղի որդին էր Ստորին Հայքի սպարապետ Վասակ Մամիկոնյանը, որը ներկայումս ուղղակի փաստերով հնարավոր չէ հիմնավորել, սակայն արևմտյան Հայաստանում կամ կայսերական արքունիքում այլ Մամիկոնյաններ չկային, բացի Սամվել Մամիկոնյանի ընտանիքից, և ժամանակագրական տվյալներով էլ այն համապատասխանում է իրականությանը:

Ուսումնասիրելով Կորյունի և Եղիշեի հաղորդումները՝ Մ. Աբեղյանը և Ս. Երեմյանը նույնացնում են սպարապետ և դուքս կոչումները, Վասակ Մամիկոնյանին անվանում են Հայաստանի դուքս<sup>89</sup>. այն կայսեր վստահելի պաշտոնյան էր Բյուզանդիայի արևելյան սահմաններին, Ստորին Հայքի տեղական ուժերից կազմված սահմանապահ զորքերի սպարապետը<sup>90</sup>: Վասակ Մամիկոնյանը ոչ միայն դարձավ Վասակ Սյունու գործակիցը, այլև նրա միջոցով կարողացավ կայսեր մայրաքաղաք փոխանցել Հազկերտի նոր հրովարտակը, որով խոստանում էր լիակատար կրոնական հանդուրժողականության<sup>91</sup>: Երկու Մամիկոնյան գործիչների հակադիր ճամբարում գտնվելը ուսումնասիրողները բացատրում են որպես Վարդան սպարապետի հան-

<sup>86</sup> Տե՛ս Անդրիկեան 1904, 102:

<sup>87</sup> Սամվել Մամիկոնյանի գործունեության մասին տե՛ս Բարթիկյան 1986, 11-15, Վարդանյան 2021, 22-23:

<sup>88</sup> Տե՛ս Բարթիկյան 1986, 13: Հ. Բարթիկյանը կարծիք է հայտնում, որ Մուշեղը Սամվելի կամ որդին էր, կամ եղբայրը, տե՛ս Բարթիկյան 1986, 14: Սակայն հավանական է, որ որդին էր, այլապես եղբոր դեպքում Փավստոս Բուզանդը նախ կհիշատակեր այդպիսի Մամիկոնյանի, բացի այդ, նա ևս չէր կարող նրա եղբայրը լինել, քանի որ կայսերական սենեկապետ Մուշեղն իր գործունեությունը ծավալել է V դ. 20-30-ական թվականներին, իսկ նրա «հայրը»՝ Վահան Մամիկոնյանը, սպանվել է 369 թ:

<sup>89</sup> Աբեղյան 1968, 328, Еремян 1951, 46, 57:

<sup>90</sup> Եղիշե 1946, 37-38:

<sup>91</sup> Եղիշե 1989, 188: Ըստ Ե. Տեր-Մինասյանի՝ Վասակ Սյունին չէր կարող այդպիսի նամակներ գրել Բյուզանդիա, քանի որ մինչ այդ կայսրությանը պաշտոնապես դիմել էր օգնության խնդրանքով և մի քանի ամիս հետո հակառակ գործողություն չէր կարող անել, և բյուզանդացիներն այդպիսի մարդու չէին վստահի, տե՛ս Եղիշե 1946, 39:



դեպ ունեցած նախանձի և ատելության հետևանք<sup>92</sup>: Դրան պետք է ավելացնել նաև այն հանգամանքը, որ Վասակ Մամիկոնյանի նախնիները ոչ վաղ անցյալում զրկվել էին Արևելահայկական թագավորությունում իրենց կալվածքներից. դրանք անցել էին Վարդանի ու իր եղբայրների տնօրինության տակ: Հավանաբար դա էր պատճառը, որ Մամիկոնյան իշխանը գործակցում էր մարզպանի հետ՝ հույս ունենալով հայոց թագավորության վերականգնումից հետո<sup>93</sup> հետ ստանալ իրենց կալվածքները: Ժամանակաշրջանի մյուս հայտնի Մամիկոնյանը արեպոզիտոս<sup>94</sup> և սենատոր Արտաշեսն էր, որը բյուզանդական արքունիքում հասել էր բարձր դիրքի. նույնիսկ մասնակցել էր 451 թ. Քաղկեդոնի Չորրորդ տիեզերական ժողովի աշխատանքներին<sup>95</sup>: Արտաշես Մամիկոնյանը գործել է Հայաստանի սահմաններից դուրս և եղել է գերազանցապես բյուզանդական գործիչ, որի հետագա գործունեության վերաբերյալ տեղեկություններ չեն պահպանվել: Մամիկոնյան տոհմի ներկայացուցիչները զանազան հանգամանքների հետևանքով հետագա դարերում ևս հաստատվեցին Բյուզանդիայում՝ հասնելով բարձրագույն պաշտոնների: Մանվել, Վարդ և Պետրոնաս Մամիկոնյանները գլխավորել են կայսերական զորաբանակները, իսկ Թեոդորա Մամիկոնյանը (842-856 թթ.) և նրա որդի Միքայել Գ-ն (856-867 թթ.) զբաղեցրել են բյուզանդական գահը<sup>96</sup>:

### Եզրակացություններ

Հետարշակունյաց շրջանում Մամիկոնյանները, որոնց հեղինակությունն ու քաջությունը անառարկելի էին հայ ազնվականության շարքերում, պայքարեցին արտաքին վտանգի դեմ, քանի որ պարսից արքունիքը չէր հաշտվում Հայաստանի ներքին ինքնուրույնության հետ: Նա փորձեց ոչ միայն ոչնչացնել հոգևոր և նախարարական դասը, այլև դիմեց կտրուկ քայլերի՝ տարածաշրջանում զրադաշտականության հաստատման համար: Ինչպես IV դարում, այնպես էլ V դարի առաջին կեսին այդ պայքարի դրոշակակիրները ևս հանդիսացան Մամիկոնյան նոր սերունդները՝ Վարդան սպարապետի գլխավորությամբ և իր եղբայրների մասնակցությամբ: 450 թ. հոկտեմբերին Խաղխաղի ճակատամարտին, որտեղ հայկական բանակը Մամիկոնյան սպարապետի գլխավորությամբ հաղթություն տոնեց, հաջորդեց 451 թ. մայիսի 26-ի Ավարայրի ճակատամարտը, որը կողմերից ոչ մեկին լիակատար հաղթանակ չբերեց. «այլ քաջք ընդ քաջս ելեալ՝ երկոքին կողմանքն ի պար-

<sup>92</sup> Փորթուզալ 1903, 326, ծան. 2:

<sup>93</sup> Պարսից հազարապետ Միրնեբսեիը Վասակ Սյունուն խոստացել էր պարսից գերակայությամբ հայոց թագավորության վերականգնումը, տե՛ս Եղիշե 1989, 182:

<sup>94</sup> Պրեպոզիտոսը կայսեր տնտեսությունների վերակացուն էր՝ լիազորված դատաստան տեսնելու իրավունքով, տե՛ս Բարթիկյան 1986, 14:

<sup>95</sup> Արտաշես Մամիկոնյանի գործունեության վերաբերյալ տե՛ս Բարթիկյան 1986, 14-15:

<sup>96</sup> Տե՛ս Թեոփանես Շարունակող 1990, 53-54, 64-65, 69, Ադոնց 2006, 281-366:

տուփին մտորնեցան»<sup>97</sup>: Սակայն ճակատամարտում զոհվեց Վարդան սպարապետը, իսկ նույն թվականի աշնանը՝ նաև Հմայակ Մամիկոնյանը: Համազասպը տասներեք տարի մնաց գերության մեջ, իսկ Վասակը, որը Մուշեղի որդին էր և Սամվել Մամիկոնյանի թոռը, քաղաքական այլ ուղղություն որդեգրեց՝ թողնելով իր տոհմակիցներին պարսից վտանգին դեմ հանդիման՝ սատար կանգնելով Մամիկոնյանների թշնամիներին: Այդ ժամանակահատվածում հրապարակի վրա եղած մյուս Մամիկոնյանների՝ Մուշեղի և Արտաշեսի վերաբերյալ քիչ բան է հայտնի, քանի որ նրանք գործել են բուն Հայաստանի սահմաններից դուրս՝ սպասարկելով բյուզանդական շահերը:

### Օգտագործված գրականություն

- Աբեղյան Մ. 1968, Հայոց հին գրականության պատմություն, Երկեր, հ. գ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 693 էջ:
- Ագաթանգեղայ 1983, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, Երևան, ԵՊՀ հրատ., 700 էջ:
- Ադոնց Ն. 2006, Մամիկոնյան իշխանուհին բյուզանդական գահի վրա, Երկեր, հ. Ա, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 281-366:
- Աճառյան Հ. 1979, Հայերեն արմատական բառարան, հ. Դ, Երևան, ԵՊՀ հրատ., 674 էջ:
- Անդրիկեան Հ. 1904, Բիզանդի Մամիկոնեանները, Վենետիկ, Սուրբ Ղազար, 164 էջ:
- Աշխարհացոյց Մովսեսի Խորենացոյ յաւելուածովք նախնեաց 1881, Վենետիկ, ի տպ. Մխիթարեանց, 46 էջ:
- Արմէն Հ. 2021, Մարզպան եւ սպարապետը, կազմեց եւ խմբագրվեց Յովսէփ Նալպանտեան, Երևան, «Էդիտ Պրինտ», 338 էջ:
- Բարթիկյան Հ. 1962, "Narratio de rebus Armeniae" հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր, Բանբեր Մատենադարանի, N 6, էջ 457-470:
- Բարթիկյան Հ. 1986, Առաջին Մամիկոնյանները բյուզանդական արքունիքում, Պատմաբանասիրական հանդես, N 3, էջ 11-15:
- Դանիելյան Է. 2010, Հայոց պատմական և քաղաքակրթական արժեհամակարգի պաշտպանության անհրաժեշտությունը, Լրաբեր հասարակական գիտությունների, N 3, էջ 53-74:
- Եղիշե 1946, Վարդանանց պատմությունը, թարգմանությամբ ներածական ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով Ե. Տեր-Մինասյանի, Երևան, «Հայպետհրատ», 322 էջ:
- Եղիշե 1989, Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, թարգմանությունը և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի, Երևան, ԵՊՀ հրատ., 448 էջ:
- Երեմյան Ս. 1963, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 152 էջ:
- Թեոփանես Շարունակող 1990, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրությունները Հրաչ Բարթիկյանի, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 438 էջ:
- Թովմա Արծրունի և Անանուն 1985, Պատմութիւն տանն Արծրունեաց, բնագիրը հրատարակության պատրաստեց, աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Վ. Վարդանյանի, Երևան, ԵՊՀ հրատ., 560 էջ:

<sup>97</sup> Եղիշե 1989, 240:

- Իսկանյան Վ. 1991, Հայ-բյուզանդական հարաբերությունները IV-VII դդ., Երևան, «Գիտելիք», 639 էջ:
- Լեո 1967, Հայոց պատմություն, Երկերի ժողովածու, հ. Բ, Երևան, «Հայաստան», 786 էջ:
- Կանոնագիրք Հայոց 1964, հ. Ա, աշխատասիրությամբ՝ Վազգեն Հակոբյանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 740 էջ:
- Կատվայան Մ. 1985, Վարդան Մամիկոնյան, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 11, Երևան, Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆ կոմբինատ, 718 էջ:
- Կիլիկեյեան Բ. 1909, Եղիշե. քննական ուսումնասիրութիւն, Վիեննա, Մխիթարեան տպարան, 469 էջ:
- Կիրակոս Գանձակեցի 1961, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 426 էջ:
- Կոզեան Ա. 1926, Կամսարականները «տեսարք Շիրակայ եւ Արշարունեաց», Վիեննա, Մխիթարեան տպարան, 179 էջ:
- Հակոբյան Հ. 2003, Ավարայրի ճակատամարտը (Պատմաքննական տեսություն), Պատմա-բանասիրական հանդես, N 1, էջ 40-67:
- Հարությունյան Բ. 1976, «Գահնամակի» թվագրման հարցի շուրջը, Պատմա-բանասիրական հանդես, N 2, էջ 57-74:
- Հարությունյան Բ. 2003, Սպարապետ Վարդան Մամիկոնյանը՝ Հայոց թագավոր, Ավարայրի խորհուրդը, «Մուղնի», էջ 31-51:
- Հարությունյան Բ. 2012, Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության բանակն ըստ «Զորանամակի», «Վէմ», համահայկական հանդես, N 1, էջ 23-41:
- Հարությունյան Բ. 2016, Արծրունյաց իշխանական ընտանիքը հայոց պատմության մեջ, Երևան, «Մեկնարկ», 304 էջ:
- Հովհաննիսյան Ա. 1957, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. Ա, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 523 էջ:
- Ղազար Փարպեցու 1895, Հայոց Պատմութիւնը եւ Վահան Մամիկոնեանին գրած թուղթը, թարգմանեց Մինաս Տէր-Պետրոսեանց, Ալէքսանդրապոլ, տպ. Աբրահամ Մ. Մալխասեանցի, 522 էջ:
- Ղազարայ Փարպեցույ 1982, Պատմութիւն Հայոց թուղթ առ Վահան Մամիկոնեան, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, Երևան, ԵՊՀ հրատ., 540 էջ:
- Մալխասեանց Ա. 1945, Հայերէն բացատրական բառարան, Երևան, ՀՍՍՌ պետական հրատ., 646 էջ:
- Մելիքսեթ – Բեկ Լ. 1934, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա (Ե-ԺԲ դար), Երևան, հրատ. Մելքոնյան ֆոնդի, 268 էջ:
- Մովսէս Խորենացի 1991, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 560 էջ:
- Մուշեղյան Ա. 2007, Մովսէս Խորենացու դարը, Երևան, ԵՊՀ հրատ., 412 էջ:
- Մուշեղյան Ա. 2013, Վարդանանց պատմության հեղինակ Եղիշեն եւ նրա նոր անձնավորության բացահայտումը, Էջմիածին, դեկտեմբեր, էջ 37-54:
- Յակոբեան Ա. 2011, «Գահնամակ ազատաց և տանուտրանց հայոց» եւ «Զարանամակ», Բազմավէպ, Վենետիկ, թիւ 3-4, էջ 485-550:
- Յակոբեան Ա. 2017, Կրկին Արտազ գաւառում Աւարայրի դաշտի տեղորոշման խնդրի մասին, Արևելագիտությունը Հայաստանում, հ. 3, Հին և միջնադարյան Հայաստանը և իր հարևանները, Երևան, «Գիտություն», էջ 101-126:

- Նալբանդյան Վ. 1986, Հայոց թագավորության վերականգնման հարցը Վարդանանց պատերազմի ժամանակ, Պատմա-բանասիրական հանդես, N 1, էջ 177-189:
- Նալբանդյան Վ. 1987, Եղիշե, Պատմա-բանասիրական հանդես, N 2, էջ 210-225:
- Պատմություն նահանգին Սիսական 1910, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սինեաց, տպ. Օր. Ն. Աղանեսնցի, Թիֆլիս, 619 էջ:
- Պատմություն Սրբոյն Ներսիսի Պարթեի Հայոց Հայրապետի 1853, «Սուփերը Հայկականք», հ. 2, ի Վենետիկ, ի տպ. Մխիթարեանց, 147 էջ:
- Վարդանյան Ա. 2019, Մամիկոնյան նախարարական տան տիրույթները, Հայագիտության հարցեր, N 1, էջ 18-33:
- Վարդանյան Ա. 2021, Մամիկոնյանները վերջին Արշակունիների օրոք, Հայագիտության հարցեր, N 2, էջ 21-32:
- Վարդանյան Ա. 2023, Հայ-աղվանական զինակցությունը պարսկական տիրապետության դեմ (V դարի կեսին), Պատմա-բանասիրական հանդես, N 2, էջ 35-52:
- Վարդանյան Ա. 2023, Վարդան Մամիկոնյանի գործունեությունը 415-442 թթ., Լրաբեր հասարակական գիտությունների, N 3, էջ 75-85:
- Վարդանյան Վ. 2003, 450-451 թթ. ժողովրդազատագրական պատերազմի մասին տեղայնացված պատումի հետնախորքը, Ավարայրի խորհուրդը, Երևան, «Մուղնի», էջ 52-64:
- Վարդանյան Վ. 2005, Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչուղիներում, Էջմիածին, Մայր աթոռ Սուրբ Էջմիածին, 400 էջ:
- Տաշեան Յ. 1937, Հին Հայաստանի արևմտեան սահմանը՝ Փոքր-Հայք եւ Կողովենէ (Սեբաստիա), Հանդէս ամսօրեայ, թիւ 1-5, էջ 6-48:
- Տեր-Մինասյան Ե. 1964, Հազկերտ Բ-ի արշավանքների հարցը դեպի հոռոմոց երկրները իր թագավորության առաջին տարիներին, Բանբեր Մատենադարանի, N 7, էջ 270-274:
- Փորթուզալ Մ. 1903, Եղիշի Վարդապետի վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին եւ քննադատութիւնք, Վենետիկ, ի տպ. ս. Ղազարու, 477 էջ:
- Օրմանեան Մ. 2001, Ազգապատում, Էջմիածին, տպ. Ս. Էջմիածին, 1780 սյուն:
- Адонц Н. 1971, Армения в эпоху Юстиниана, Ереван, изд. Ереванского университета, 526 с.
- Айвазян А. 2019, Армяно – персидская война 449–451 кампании и сражения, Санкт-Петербург, «Алетейя», 516 с.
- Дьяконов М. Мандельштат А. 1958, Средняя Азия в III-V вв., Очерки истории СССР. III-IX вв., Москва, изд. Академии Наук СССР, 994 с.
- Еремян С. 1951, Народно-освободительная война армян против персов в 450-451 гг., Вестник древней истории, N 4, Москва-Ленинград, с. 41-60.
- Колесников А. 1981, О термине «марзбан» в Сасандском Иране, Палестинский сборник, вып. 27, Ленинград, с. 49-56.
- Кудрявцев А. Кудрявцев Е. 2015, Феодалный город Северного Кавказа (средневековый Дербент в VI-XIII вв.), Ставрополь, изд. Северо – Кавказский федеральный университет, 307 с.
- Манасерян Р. 2011, Европейские гунны и Ближний Восток, Ереван, «Лусакн», 80 с.
- Массон М. 1975, К вопросу о северных границах государство «Великих Кушан», Центральная Азия в кушанскую эпоху, т. II, с. 42-49.
- Хуршудян Э. 2003, Армения и Сасандский Иран (историко-культурологическое исследование), Алматы, «Print-S», 474 с.

**ДЕЯТЕЛЬНОСТЬ МАМИКОНЯНОВ В ПЕРВОЙ ПОЛОВИНЕ V ВЕКА**

Аргишти Варданын

Резюме

В 428 году, после падения царства Аршакидов, в политической жизни марзпанской Армении первоисточники упоминают сыновей спарапета Амазаспа Мамиконяна-Вардана, Амаяка, Амазаспа. В 442 г. Вардан возглавил институт спарапетства, что совпало с очередной персидско-кушанской войной, в которой участвовала также армянская конница. Имевшие место с середины V века гнет со стороны персидского двора, попытки утверждения зороастризма и искоренения христианства привели к всенародному восстанию против персидского господства. В 450 г. Вардан Мамиконян нанес сокрушительное поражение в Хагхахе многочисленному персидскому войску и освободил Алуанк, но через год, в 451 г. он погиб в Аварайрской битве. Амаяк Мамиконян, с дипломатической миссией отправившийся к византийскому императору, возглавил в Тайке борьбу против армяно-персидского войска и погиб в селе Ворджегах. Младший брат спарапета – Амазасп, в 452 г. был приговорен в Тизбоне к ссылке и 13 лет провел в плену. Спарапет Нижнего Айка (Второй Айка, с центром Мелитене – А.В.) Васак Мамиконян, в отличие от представителей своего рода, придерживался другого политического вектора. Он сотрудничал с марзпаном Васакком Сюни, в результате раскольнической деятельности которого армяне в Аварайрском сражении оказались лицом к лицу с численно превосходящим персидским войском. А препозиты Мушег и Арташес Мамиконяны развернули деятельность за пределами Армении – в византийском дворе. Они являлись самыми известными Мамиконянами первой половины V века.

**Ключевые слова** – Вардан Мамиконян, Васак Сюни, Амаяк, Амазасп, Васак Мамиконян, Персия, Византия.

**ACTIVITIES OF THE MAMIKONYANS IN THE FIRST HALF OF THE V CENTURY**

Argishti Vardanyan

Abstract

In 428, after the fall of the Arsacid kingdom, in the military-political life of Marzpan Armenia, primary sources mention the sons of the Sparapet (supreme commander of the armed forces) Hamazasp Mamikonyan – Vardan, Hmayak and Hamazasp. In 442, Vardan became the head of the institution of Sparapet, which coincided with the next Persian-Kushan war, in

---

which the Armenian cavalry also participated. The oppression of the Persian court, which took place from the middle of the V century, attempts to establish Zoroastrianism and eradicate Christianity led to a nationwide uprising against Persian rule. In 450 Vardan Mamikonyan inflicted a crushing defeat on a large Persian army in Khaghakh and liberated Caucasian Albania, but a year later, in 451, he died in the Battle of Avarayr. Hmayak Mamikonyan, who visited on a diplomatic mission the Byzantine emperor, led the fight against the Armenian-Persian army in Tayk and died in the village of Vordzhegh. The younger brother of the Sparapet, Hamazasp, was sentenced to exile in Tizbon (Ctesiphon) in 452 and spent 13 years in captivity. Sparapet of Lower Hayk (Second Hayk, with the center of Melitene) Vasak Mamikonyan, unlike representatives of his family, adhered to a different political vector. He collaborated with Marzpan Vasak Syuni, as a result of whose schismatic activities the Armenians in the Battle of Avarayr found themselves face to face with a numerically superior Persian army. Both Praeposituses Mushegh and Artashes Mamikonyans developed activities outside of Armenia – in the Byzantine court. They were the most famous Mamikonyans of the first half of the V century.

**Key words** – Vardan Mamikonyan, Vasak Syuni, Hmayak, Hamazasp, Vasak Mamikonyan, Persia, Byzantium.

«ՂԱՓԱՆԻ ԴԵՊՔԵՐԻ» ԱՌԱՍՊԵԼԸ ՆԱԽԱՍՈՒՄԳԱՅԻԹՅԱՆ,  
ՍՈՒՄԳԱՅԻԹՅԱՆ ԵՎ ՀԵՏՍՈՒՄԳԱՅԻԹՅԱՆ  
ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ

Արսեն Հակոբյան

Պատմական գիտությունների թեկնածու  
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ  
ՀՀ, Երևան, Չարենցի 15  
Էլ. հասցե՝ arsenhakobyan@ysu.am  
ORCID: 0009-0008-6437-3478

Հոդվածը ներկայացվել է 04.10.2023, գրախոսվել է 30.06.2024, ընդունվել է տպագրության 02.08.2024  
DOI: 10.53548/0320-8117-2024.2-63

Ամփոփում

«Կապանի դեպքերը» կամ Հայաստանի Կապան քաղաքից «ադրբեջանցի փախստականների պատմությունները» Սումգայիթում 1988 թ. փետրվարի 27-29-ին տեղի ունեցած հայկական ջարդերի հիմնական գաղափարախոսական առանցքներից էին:

«Կապանի դեպքերը» կազմակերպվել ու ներդրվել էին Սումգայիթից անմիջապես առաջ՝ մամուլի հրապարակումների, «կապանցիների» անունից շինծու բողոք-հեռագրերի, կեղծ լուրերի տարածման միջոցով Ադրբեջանի կոմունիստ պաշտոնյաների կողմից՝ հատուկ նպատակով: Խորհրդային Ադրբեջանի իշխանությունները Հայաստանից, մասնավորապես Կապանից այդ նպատակով ադրբեջանցի «փախստականներ» կերտեցին, որոնք ավելի վաղ, մինչև հակամարտությունը նույն իշխանությունների կողմից հրավիրվել էին բնակություն հաստատելու Ադրբեջանի Ապշերոնի շրջանում՝ բնակարան, հող ստանալու խոստումով և այլ արտոնություններով այդ շրջանի գյուղատնտեսության զարգացման համար:

«Կապանի դեպքերի» կեղծ գործընթացը կազմակերպելով՝ Ադրբեջանի իշխանությունները նպատակ ունեին քաղաքական հակակշիռ ստեղծել Հայաստանում և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում նոր սկիզբ առած Ղարաբաղյան շարժմանը:

1988-ի փետրվարին և ավելի ուշ Կրեմլի նախաձեռնած և իրականացրած հարցի վերաբերյալ հետաքննությունը ցույց է տվել, որ 1987-1988 թվականներին Կապանում տեղի ադրբեջանցիների նկատմամբ հալածանքներ չեն եղել: Շինծու բողոքները, կեղծ լուրերը ծնունդ են առել ու տարածվել են հենց Ադրբեջանում, մասնավորապես Ապշերոնում. դրանք կազմակերպվել ու աջակցություն են գտել հենց ադրբեջանական իշխանությունների կողմից: Դրանց հետևում կանգնած էին պաշտոնյաներ, որոնց կարիերան վերելք էր ապրում արդեն Հեյդար Ալիևի նախագահության օրոք:

**Բանալի բառեր՝** Սումգայիթ, Լեռնային Ղարաբաղ, Խորհրդային Հայաստան, Ադրբեջան, Կապան, բռնություն, ջարդեր:

Ներածություն

Հայ-ադրբեջանական վերջին 35-ամյա փոխհարաբերությունները, որոնք մի կողմից թելադրված են առկա կոնֆլիկտային իրավիճակով, մյուս կողմից՝ հարաբերությունների պատմական ենթատեքստով, պարունակում են բազում ծայրեր (քաղաքացիական և ռազմական բռնություններ, փախստականու-

թյուն և այլն), ինչպես նաև «հրապարակ նետված», բայց չհետազոտված ու չքննարկված բազմաթիվ իրողություններ, դրույթներ և խնդիրներ, որոնք ունեցել են և ունեն նաև քաղաքական ու քարոզչական բովանդակություն՝ հավակնելով դառնալ հակամարտության պատմության մաս:

Այդ խնդիրներից մեկը, այսպես կոչված, «Ղափանի դեպքերն» են, որոնց մասին կարծեք թե կոնկրետ ոչինչ հայտնի չէ, բայց որոշ հեղինակներ գրել և խոսել են որպես փաստացի հաստատված դեպքեր (Ա. Յունուսով, Թ. դը Վաալ), և որոնք առանց պատշաճ քննության ու վերլուծության տեղ են գտել տարբեր հրատարակություններում: «Ղափանի դեպքերի» հանրայնացման հեղինակը, մեծ հաշվով, Թոմաս դը Վաալն է՝ դարաբաղյան խնդրի վերաբերյալ իր հայտնի գրքով<sup>1</sup>:

Հետազոտության նպատակն է պարզաբանել այն իրողությունները, որոնք վերաբերում են այս առեղծվածային «դեպքերին», այսինքն՝ ի՞նչ է եղել Ղափանում, ե՞րբ է եղել, կամ ի՞նչ է թաքնված «տեղեկությունների» հետևում:

### **«Ղափանի դեպքերը» և հակամարտության կեղծ պատումը**

«Ղափանի դեպքերի» խնդիրը վերաբերում է մինչև սումգայիթյան ջարդերը ՀԽՍՀ Ղափանի (այսօր՝ Կապան) շրջանում ադրբեջանական բնակչության նկատմամբ իբր տեղի ունեցած բռնություններին (1987 թ. նոյեմբեր, 1988 թ. հունվար): «ԼՂԻՄ-ի կոնֆլիկտի» շուրջ իրադարձությունների մասին 2000-ականներից հետո խոսելիս դրանք ներկայացվում են որպես առաջին բռնության դրսևորում, որպես «միջհամայնքային բախումներ»<sup>2</sup>, և այդ դրույթը սովորաբար ընկած է դարաբաղյան հակամարտության ժամանակագրության «ադրբեջանական տարբերակի» հիմքում<sup>3</sup>:

Պետք է նկատել, որ «Ղափանի դեպքերը» հիմնականում ստեղծվեցին ու տիրաժավորվեցին հենց Թ. դը Վաալի կողմից: Մինչ այդ ադրբեջանական հասարակական գիտակցության մեջ մասսայականություն էր վայելում «բունիաթովյան վարկածը», որը սումգայիթյան ջարդերի պատասխանատուներ էր համարում հայ ազգայնականներին, որոնք այդ ջարդերը իբր կազմակերպել էին ադրբեջանցիներին անվանարկելու նպատակով: Զ. Բունիաթովի հոդվածը սումգայիթյան դեպքերի «ադրբեջանական վարկածի» կառուցման առաջին հասարակական քայլն էր, որն էլ տարածվեց Ադրբեջանում<sup>4</sup>: 2018 թ. «բունիաթովյան վարկածը» պաշտոնական կարգավիճակ ձեռք բերեց այն բանից հետո, երբ Ադրբեջանի գլխավոր դատախազության ներկայացուցիչը, ըստ սումգայիթյան դեպքերի իրենց «հետաքննության», հայտարարեց, որ Սումգայիթի հայերը փորձել են այրել իրենց տները՝ ադրբեջանցիների վրա

<sup>1</sup> De Waal 2003, 18-19.

<sup>2</sup> Այս ձևակերպման հեղինակը Թ. դը Վաալն է:

<sup>3</sup> Տե՛ս Յունուսովի կազմած ժամանակագրությունը. Юнусов 1991, 1998:

<sup>4</sup> Буниатов 1989.



զցելու համար, բացի այդ, սադրիչ հարձակումներ կազմակերպելու նպատակով քաղաք է մտել 20-25 հոգանոց դիվերսիոն խումբ, որի անդամները միմյանց հետ խոսել են հայերեն<sup>5</sup>:

Վերջին ժամանակներս «բունիաթովյան վարկածը» դիտարկվում է որպես «դավադրության տեսության» ակնառու օրինակ<sup>6</sup>: Բացի այդ վարկածից, սում-գայիթյան ջարդերի առնչությամբ, հիմնականում Թ. դը Վաալի ու Ա. Յունուսովի ջանքերով, շրջանառվում են նաև այսպես կոչված «Ղափանի դեպքերը»:

«Ղափանի դեպքերի» առնչությամբ պետք է նկատել, որ բացի քարոզչական կամ մերձգիտական տիրաժավորումից, մինչ այսօր ադրբեջանական կողմը (Ա. Յունուսով) հրաժարվում է հրատարակել կամ ներկայացնել դրանց վերաբերող նյութերը<sup>7</sup>: Ավելին, դրանց շուրջ զարգացումները, ըստ էության, «դավադրության տեսության» հերթական պալարն են ներկայացնում: Այսպես, 2006 թ. պատասխանելով «Open Armenia» ֆորումի օգտատերերի հարցերին՝ Ա. Յունուսովն ասում է, որ Ղափանի դեպքերի, ինչպես նաև Հայաստանից ադրբեջանցի փախստականների հետ կապված նյութերն ուղարկել է ՀԽՍՀ ՊԱԿ-ին, նախագահ Մ. Յուզբաշյանին<sup>8</sup>: Իսկ թե ինչու՞ պարզ չէ: Մյուս կողմից էլ հայտնում է, որ դրանք բնօրինակ են եղել, քանի որ այդ տարիներին Ադրբեջանում պատճենահանման ընդամենը մի սարք կար, այն էլ ակադեմիայում՝ Խորհրդային Ադրբեջանի ՊԱԿ-ի հսկողության տակ, այդ իսկ պատճառով դրանց պատճենները չունի<sup>9</sup>: Թե ինչու Յունուսովը պիտի վստահեր ՀԽՍՀ ՊԱԿ-ին, խուսափեր Բաքվում դրանք պատճենահանելուց, իբր թե հնարավոր չէր, պարզ չէ, ու ավելի շատ հարցեր է առաջացնում, քան պատասխաններ տալիս:

Մյուս կողմից էլ նա հույս է հայտնում, թե դրանք կարող են լինել Հայաստանի ՊԱԿ-ի արխիվում, եթե հետագայում Մոսկվա չեն տարվել ու վաճառվել ամերիկացիներին 1990-ական թթ. կեսերին: Նա օրինակ է բերում Թոմաս դը Վաալին, որն իբր իրեն ցույց է տվել Սումգայիթի դեպքերի հետ կապված ԽՄԿԿ քաղբյուրոյի նիստի արձանագրությունը, մինչդեռ 1994 թ. այն արդեն հրատարակվել էր «Ռոդինա» ամսագրում<sup>10</sup>:

Վերոշարադրյալը ցույց է տալիս, որ ոչ միայն դեպքերը, այլև դրանց առնչվող «հիմքերն» ու «փաստերը» հերթական «դավադրության» հետևան-

<sup>5</sup> Кусера 2018.02.22.

<sup>6</sup> Атанесян, Зейналов 2020.02.26.

<sup>7</sup> Մեզ հետ մասնավոր զրույցում, որը տեղի է ունեցել 2013 հունիսի 30-ին Երևանում, Թ. դը Վաալը նույնպես որևէ փաստի մասին չի նշել՝ հայտարարելով, որ ինքը հավատում է դրան: Ավելին նա զարմացել է, որ այստեղ՝ Հայաստանում դա կարևորում են, որն ըստ իրեն՝ այնքան էլ կարևոր դրվագ չէ դարաբաղյան հակամարտության մեջ: Զրույցին ներկա են եղել նաև ազգագրագետներ Հրանուշ Խառատյանն ու Լևոն Աբրահամյանը:

<sup>8</sup> Մարիուս Յուզբաշյանը Հայկ. ԽՍՀ ՊԱԿ-ի նախագահ է եղել 1978-1988 թթ.:

<sup>9</sup> Юнусов 2006, 7.05.

<sup>10</sup> Родина 1994, N 4, 82-90.

քով բացակայում են, քանի որ «կեղծ պատմական» կամ «պսևդոգիտական» են, կամ էլ «պատմական գաղտնիքի» պնդումները խարսխված են լինում համապատասխան աղբյուրների «անհասանելիության», դրանք միտումնավոր «փակ» պահելու կամ էլ արդեն «գողացված» կամ «կորսված լինելու» մոտեցումների վրա<sup>11</sup>: Տվյալ դեպքում գործ ունենք աճպարարության հետ:

Ըստ էության, ղափանյան վարկածը ադրբեջանական հանրությանը թերևս պաշտոնապես առաջին անգամ հրամցվել է 1990 թ. հունվարին Բաքվի ջարդերի ժամանակ, որին անմիջապես հրապարակայնորեն արձագանքել է Ղափանի կուշռջկոմի առաջին քարտուղար Ռ. Ղոնյանը<sup>12</sup>: Հետաքրքրական է, որ հենց 1990 թ., առանց որևէ փաստական ու աղբյուրագիտական հղման, այն տեղ է գտնում ԼՂԻՄ-ի Վ. Պոլյանիչկոյի գլխավորած հանրապետական կազմկոմիտեի հրատարակած «ԼՂԻՄ ժամանակագրություն: 1988 փետրվար - 1990 փետրվար»<sup>13</sup> բրոշյուրում՝ կազմված Ադրբեջանի ԿԿ մամուլի կենտրոնի կողմից: Այս թողարկման պատասխանատուներն են Թ. Զուլֆուգարովը և Ռ. Թոսուկը: 1988 թ. սկսած՝ Թ. Զուլֆուգարովը եղել է ԼՂ հարցով վերլուծական խմբի անդամ Ադրբեջանում, իսկ 1998-1999 թթ.՝ Ադրբեջանի արտգործնախարար Հեյդար Ալիևի օրոք:

Ուշագրավ է դեպքերի նկարագրությունը: Այն ուղղակիորեն բխեցված է Հայաստանում ու ԼՂԻՄ-ում արցախյան շարժման զարգացումներից: Շարադրված է, որ 1987-88 թթ. նամակներ, խնդրագրեր են գրվել, պատվիրակություններ են ուղարկվում Մոսկվա՝ ԼՂԻՄը Հայաստանին միացնելու պահանջով և այլն, և առանց որևէ աղբյուրի հղման նշվում է, որ ՀԽՍՀ-ի Ղափան քաղաքում այդ զարգացումները վերաճում են զանգվածային անկարգությունների, որի հետևանքով **1988 թ. հունվարի 25-ին մի քանի հարյուր ադրբեջանցիներ հարկադրված հեռանում են, իսկ փետրվարին հեռացածներն արդեն մի քանի հազար էին**<sup>14</sup>: Այստեղ, սակայն, խոսք չկա նրանց նկատմամբ իրականացված բռնությունների մասին: Հրատարակությունը դրանց համարում է հետպատերազմյան (1941-45 թթ.) շրջանում խորհրդային առաջին փախստականներ:

Թերևս օրինաչափ է, որ ղարաբաղյան դեպքերի ադրբեջանական վարկածի ձևավորմամբ ու կեղծարարությամբ պաշտոնապես զբաղվում է Վ. Պոլյանիչկոյի հայատյաց Կազմկոմիտեն, որն էլ հենց տվյալ հրատարակության սկզբում կոչ է ուղղում ընթերցողներին Կազմկոմիտեին ու Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմին տրամադրելու լրացուցիչ նյութեր ու փաստաթղթեր հակամարտության վերաբերյալ ավելի ամբողջական հրատարակություն պատրաս-

<sup>11</sup> Тогоева 2012, 12.21.

<sup>12</sup> Коммунист, 9.1.1990.

<sup>13</sup> Зулфугаров, Тосоев 1990, 9.

<sup>14</sup> Зулфугаров, Тосоев 1990, 9.

տելու համար: Ըստ էության, դա առաջին փորձն էր կեղծ աղբյուրագիտական հիմք ստեղծելու այդ մանիպուլյատիվ պնդման համար:

Ավելի ուշ, 1992 թ. «Ղափանյան դեպքերը» տեղ են գտնում Ա. Յունուսովի կազմած ղարաբաղյան կոնֆլիկտի ժամանակագրության մեջ, իսկ արդեն հետագայում նրա բանավոր հաղորդման հիման վրա՝ Թ. դը Վաալի աշխատանքում: Ուշագրավ է, որ «Ղափանի ջարդված փախստականների» մասին ուշացած «տեղեկությունները» հայտնվում են 1990 թ. հունվարին՝ Բաքվի հայերի ջարդերի ժամանակ: Բնականաբար, իրենց ժամանակագրական ու այլ ցուցիչներով տարբեր են նաև «վարկածները» (Ադրբեջանի ԿԿ, Կազմկոմիտե, Ա. Յունուսով, Թ. դը Վաալ):

Ըստ Թ. դը Վաալի վարկածի, 1987 թ. նոյեմբերից մինչև 1988 թ. փետրվարի վերջը իբր թե «հայերի բռնարարքների» հետևանքով Ղափանի շրջանից ադրբեջանցիները գնում էին Բաքու և այնտեղից ուղղվում դեպի Սումգայիթ: Ըստ Յունուսովի, Խոսքն իբր մոտ 4000 «բռնագաղթածների» մասին է<sup>15</sup>: Ազգագրագետ Հ. Խառատյանը այս հարցի շուրջ խոսել է «Ղափանի դեպքերի» հիմնական աղբյուր Ա. Յունուսովի հետ, որը Բաքվում նաև դը Վաալի տեղեկությունների հիմնական բանավոր շտեմարանն է: Ըստ Խառատյանի պատմածի, Յունուսովը 1995-96-ականներին նախ Հայաստանի հանրային հեռուստատեսությամբ ուղիղ եթերում պատմել է, որ ինքն անձամբ Բաքվում տեսել է «Ղափանում ծեծված ադրբեջանցիներով լեցուն» վեց<sup>16</sup> կարմիր գույնի «Իկարուս» ավտոբուս, խոսել է այդ ավտոբուսներում գտնված մարդկանց հետ: Նրանք, ըստ Յունուսովի, փախել էին Ղափանից: Հ. Խառատյանը հենց եթերի ընթացքում զանգել է և հարցրել, թե ինչու՞ այդ մասին միայն հիմա է պատմում, որևէ տեղ այդ մասին տեղեկություն կա՞: Յունուսովն էլ հենց եթերում պատասխանել է, որ մինչ այդ չէր կարող խոսել գրաքննության պատճառով: Եթերից մեկ-երկու օր հետո Հ. Խառատյանը հանդիպել է Յունուսովի հետ: Արի՞Ֆ Յունուսովը պատմել է, որ այդ մարդկանց հագուստը պատահողոված էր, դեմքերին արյուն կար: Հարցին, թե ինչու՞ այդ մասին անմիջապես չի բարձրաձայնել, պատասխանել է, որ գրաքննությունը թույլ չէր տա: Իսկ փորձե՞լ է բարձրաձայնել, պատասխանը եղել է՝ «Ոչ, չի փորձել, և նույնիսկ չգիտի, թե ինչպե՞ս կարող էր փորձել» (սա անհավատալի պատասխան է բոլոր առումներով: Յունուսովի կինը՝ Լեյլա Յունուսովան, Ադրբեջանի ժողովրդական ճակատի առաջնորդ Էլչիբեյի կառավարության հանրային կապերի պատասխանատուն էր և ամենից շատ էր եթերը ցնում «հայկական վայրագությունների տեղեկություններով»): Ո՞վ էր այդ մարդկանց ավտոբուսներ տրամադրել՝ Յունուսովը տեղյակ չէր: Ո՞վ էր այդ ավտոբուս-

<sup>15</sup> De Waal 2003, 18-19.

<sup>16</sup> Հետագայում դը Վաալը, մեջբերելով Ա. Յունուսովին, ավտոբուսների թիվը դարձնում է չորս: De Waal 2003, 19:

ներն ուղեկցել մինչև Բաքու՝ նույնպես չգիտեր: Ինչու՞ էին այդ մարդիկ դեռևս ավտոբուսների մեջ, ինչու՞ հիվանդանոց չէին տարվել, ինչու՞ նրանց գոնե առաջին բուժօգնություն չի ցուցաբերվել, արյունը չի մաքրվել, չեն վիրակապվել՝ նույնպես տեղյակ չէր: Դիմե՞լ են այդ մարդիկ ՀԽՍՀ իրավապահ մարմիններին, չգիտեր: Մյուս հարցին, թե՞ որտե՞ղ են հիմա այդ ղափանցի ադրբեջանցիները, հնարավոր չէ՞ արդյոք նրանց հետ հանդիպել, հասկանալ, թե ովքեր, որտեղ, ինչպես են բռնության ենթարկել այդ քանակի մարդկանց, ովքեր էին բռնարարները և այլն, պատասխանը եղել է, որ ինքը հիմա չգիտե նրանց տեղը: Հաջորդ հարցին, թե քանի որ ինքը խոսել է Ղափանից փախստականների հետ, կարո՞ղ է արդյոք կոնկրետ անուններ տալ, որով թերևս հնարավոր լինի Ղափանում պարզել, թե կոնկրետ այդ մարդկանց հետ ի՞նչ է եղել այստեղ, ե՞րբ և ինչպե՞ս են նրանք փախել Ղափանից, մի խոսքով՝ քիչ թե շատ հասկանալ խնդիրը, պատասխանը կրկին եղել է՝ «Չգիտեմ, չեմ հիշում»: Իսկ հնարավոր չէ՞ պարզել, գտնել գոնե մեկ-երկու մարդու, ասել է՝ «Չգիտեմ, չեմ փորձել» Կապանից վեց ավտոբուս լեցուն ադրբեջանցի փախստականներն անհետացե՞լ են Բաքվում<sup>17</sup>:

Բաքվում հայտնված՝ «Ղափանի ծեծված ադրբեջանցիների» վերաբերյալ դե Կապի նկարագրությունը հետևյալն է. «Տղամարդիկ՝ գյուղական, երկար մազերով և մորուքներով»<sup>18</sup>: Նախ՝ Ղափան քաղաքի ադրբեջանցիները գյուղացի չէին, երկրորդ, ինչպես նկատում է Ա. Մելիք-Շահնազարովը, ադրբեջանցի տղամարդիկ, հատկապես գյուղաբնակները, երբեք չէին կրում «երկար մորուք» (բացառությամբ մի քանի մահմեդական հավատացյալների) և հատկապես՝ «երկար մազեր»: Նրանք կարճ էին կտրում մազերը, իսկ մեծ մասը բեղեր էին պահում, որն այդ ժամանակ և միշտ եղել է առնականության խորհրդանիշ, իսկ երկար մազերը, հակառակը, համարվում էին ամոթալի բան տղամարդկանց համար: Ա. Մելիք-Շահնազարովը նկատում է, որ երկար մորուք կամ մազեր չէին կարող աճել Ղափան-Բաքու մի քանի ժամվա կամ առավելագույնը կես օրվա ճանապարհի ընթացքում<sup>19</sup>:

Վաալը, քննարկելով սումգայիթյան դեպքերը, ընթերցողի երևակայությանն է թողնում այն տրամաբանական հարցի պատասխանը, թե ի վերջո ուղղակի կամ անուղղակի որևէ դեր խաղացե՞լ են «Ղափանի փախստականները» Սումգայիթի հայերի ջարդերի ժամանակ, և եթե այո՞ ինչու՞ այդ դերը որևէ կերպ չի արտահայտվել հանցագործների դատավարությունների ընթացքում:

Ղափանը խորհրդային շրջանում հանրապետական ենթակայության քաղաք էր, որը 1988 թ. հունվարի մեկի դրությամբ ուներ 39,1 հազար բնակիչ,

<sup>17</sup> Նյութը մեզ է տրամադրել Հրանուշ Խառատյանը: Մեզ տված նյութերի և քննարկումների համար մեր շնորհակալությունն ենք հայտնում նրան:

<sup>18</sup> De Wall 2003, 19.

<sup>19</sup> Мелик-Шахназаров 2009, 242.

իսկ շրջանը՝ 50 բնակավայր: Շրջանում բնակվում էին 61,5 հազար մարդ, որոնցից հայեր՝ 49,9 հազ., ադրբեջանցիներ՝ 10,7 հազ., ռուսներ՝ 600<sup>20</sup>: Ըստ Վաալի ու Յունուսովի՝ արդեն իսկ կոնֆլիկտի սկզբում ադրբեջանցի բնակչության կեսը Ղափանի շրջանը լքել էր:

Մի քանի ամիս այդ անձանց բռնության ենթարկելու մասին Թոմաս դը Վաալի «տեղեկությունները» որևէ կերպ չեն վավերացվում ու փաստաթղթավորվում, կենտրոնական իշխանությանը կամ լրատվական միջոցներին հրապարակելու համար ոչինչ չի տրամադրվում, այս ամենը մատնվում է «լռության»: Պատճառը հեղինակը չի բացատրում ու հղում է իր իսկ ենթադրությունը, թե ադրբեջանական խորհրդային իշխանությունները ձգտում էին այն թաքցնել (sic !!!)<sup>21</sup>: Թե նրանք ինչու պիտի այն թաքցնեին, հեղինակը չի բացատրում, ավելին, «մոռանում» է, որ ԽՍՀՄ-ի տարածքում կային նաև Հայկական ԽՍՀ ու կենտրոնական իշխանություններ: Ի վերջո, Ղափանը Հայկական ԽՍՀ-ի շրջան էր:

Այսինքն, փաստերի բացակայությունը Վաալը բացատրում է հերթական «դավադրությամբ»՝ իբր խորհրդային ադրբեջանական (sic!!!) իշխանությունների թաքցնելու մտադրությամբ, որը հակասում է հենց Ա. Յունուսովի մեջբերած վկայությանը, թե այդ հայաձված՝ չորս «Իկարուս» ավտոբուսներով «փախստականներին», ինքը տեսել է Բաքվի կենտրոնում, կառավարության շենքի դիմաց: Պատմաբան Հ. Աբրահամյանը նշում է, որ «թաքցնելու» նպատակ ունեցող իշխանությունները այդ ավտոբուսներին թույլ չէին տա կայանելու Բաքվի կենտրոնում, այն էլ կառավարության շենքի դիմաց<sup>22</sup>:

Արիֆ Յունուսովի՝ «գրաքննությունը թույլ չէր տա» փաստարկը, անշուշտ, աճապարարություն է: Ի դեպ, դա ուղղակիորեն կրկնում է նաև դը Վաալը: Ըստ էության, դը Վաալը ոչ միայն տիրաժավորում է Յունուսովի հորինովի փաստերը, այլև կրկնում նրա փաստարկները:

Դեռևս 1987 թ. նոյեմբերին կենտրոնական մամուլը հրապարկել է Ադրբեջանի Չարդախլու գյուղում հայերի նկատմամբ ադրբեջանական իշխանությունների կազմակերպած բռնությունների վերաբերյալ մի հոդված, որը հայտնի է նաև դը Վաալին: Սակայն, չգիտես ինչու, նա չի բացատրում, թե ինչո՞ւ պիտի Չարդախլուի դեպքերը տեղ գտնեին կենտրոնական մամուլում, իսկ «Ղափանի դեպքերը»՝ ոչ<sup>23</sup>: Բաց է մնում նաև այն հարցը, թե՛ Ղափանում ինչո՞ւ պետք է հայ-ադրբեջանական բռնություններ ծագեին, և որո՞նք էին դրանց պատճառները, որոնք, ըստ իրենց, հանգեցրին մարդկանց հոսքերի: Այս հարցադրումների բաց լինելը թույլ է տալիս եզրակացնելու, որ այդ պնդումը կառուցված է «դավադրության տեսության» շրջանակում, երբ որևէ

<sup>20</sup> Ադամյան 1988, 9, 39-40:

<sup>21</sup> De Waal 2003, 18-19.

<sup>22</sup> Աբրահամյան 2019, 65:

<sup>23</sup> Беккер 1987, 12.24.

երևույթ բացատրելու անկարողությունը կամ անհնարինությունը պատճառաբանվում է «դավադրությամբ», տվյալ դեպքում՝ այն թաքցնելու խորհրդային ադրբեջանական իշխանությունների (!!!!) մտադրությամբ: Սակայն պարզ չէ նաև «թաքցնելու» շարժառիթը, և այդ պարագայում ո՞ր էին կենտրոնական և Հայկական ԽՍՀ իշխանությունները:

Հարկ է ընդգծել, որ Միջազգային ճգնաժամային խմբի հանձնարարությամբ Լևոն Ջուրաբյանը 2007 թ. այցելում է Ղափան, փնտրելու «ղափանյան պոգրոմների» հետքերը, սակայն ոչինչ էլ չի գտնվում, իսկ դը Վասալի արձագանքը լինում է հետևյալը. «Եկեք հետազոտենք (...)»<sup>24</sup> ըստ էության, խոստովանելով, որը ինքը չի էլ հետազոտել:

### Ի՞նչ են ասում փաստաթղթերը

1988 թ. մարտի 4-ին, թերևս դարաբաղյան խնդրի ու սումգայիթյան դեպքերի կապակցությամբ, ԽՍՀՄ ՊԱԿ-ի նախագահ Վ. Չերրիկովը, ի կատարումն տրված հանձնարարականի, ԽՍՀՄ կոմկուսի գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովին է ներկայացնում ԽՍՀՄ-ում 1957-1987 թթ. տեղի ունեցած զանգվածային անկարգությունների վերաբերյալ տեղեկանք: Փաստաթուղթը, որը ներառված է եղել ԽՍՀՄ կոմկուսի քաղբյուրոյի հատուկ թղթածրարում, ներկայացնում է տեղի ունեցած դեպքերի ամսաթիվը, վայրը, ներգրավված անձանց թիվը, զենքի գործածման, զոհերի, վիրավորների ու դատապարտվածների վերաբերյալ տեղեկություններ: Հույժ գաղտնի գրիֆով այս տեղեկանքը որևէ տվյալ չի պարունակում ո՛չ Ղափանի, ո՛չ էլ ՀԽՍՀ-ի վերաբերյալ, բայց կան տվյալներ, օրինակ՝ Սումգայիթի 1963 թ. զանգվածային անկարգությունների և Ստեփանակերտի 1967 թ. դեպքերի մասին<sup>25</sup>:

Այս փաստաթղթի առնչությամբ ծագում է նաև մեկ այլ հարց, թե՛ ինչո՞ւ խորհրդային իշխանությունները պետք է վավերացնեին 1957 թ. ԽՍՀՄ-ում տեղի ունեցած բոլոր զանգվածային բռնությունները, իսկ «Ղափանի դեպքերը» թաքցնեին: 4000 մարդը բավարար չէ՞ր դրանք «զանգվածային» համարելու:

ԽՍՀՄ ՆԳՆ բարձրաստիճան պաշտոնյա Վ. Կրիվոպուսկովը, որը հակամարտության հենց սկզբից զբաղվում էր իրավիճակի օպերատիվ գնահատմամբ, գրում է, որ ինքը հատուկ վերլուծել է Սումգայիթի օպերատիվ իրադրության վերաբերյալ 1988 թ. սկզբի ու 1987 թ. ամփոփագրերը, և որևէ հատկանշական բան այնտեղ չկա, կան միայն քրեական-կենցաղային խնդիրներ<sup>26</sup>:

<sup>24</sup> Шахназаров 2009, 244-245.

<sup>25</sup> Источник (Вестник архива президента Российской Федерации 1995, 146-153).

<sup>26</sup> Кривописков 2007, 147-148.

**Ղափան, 1988 թ.**

Այնուամենայնիվ, 1988 թ. փետրվարին Ղափանի անունը ԼՂԻՄ-ի հակամարտության շրջանակներում շրջանառվում է: Այդ մասին զինվորական բժիշկ, Ջուլֆայի (Ջուղա) զորամասի զինծառայող, ավագ լեյտենանտ Արտաշես Աբեյանն ուշագրավ վկայություն է հաղորդում, որը հրատարակվել է 1989 թ. «Сумгаит...Геноцид...Гласность»?: հայտնի ժողովածուում<sup>27</sup>: Ըստ Աբեյանի, փետրվարի 15-18-ն ընկած ժամանակահատվածում Ադրբեջանի Նախիջևանի ԻԽՍՀ-ի խորհրդային բանակի Ջուլֆայի զորամասից իրեն ու մի քանի այլ զինծառայողների, որպես օպերատիվ խումբ, ուղարկում են Ղափան: Քաղաքական գծով հրամանատարի տեղակալը վերջիններիս հայտնում է, որ լուրեր են տարածվել, թե հայերը մտադրվել են փետրվարի 20-ին<sup>28</sup> ադրբեջանցիների ջարդեր կազմակերպել: 1988 թ. փետրվարի 20-ը պատահական ամսաթիվ չէր: Բոլորին հայտնի էր, որ ԼՂԻՄ-ի գերագույն խորհուրդն այդ օրը պատրաստվում էր որոշում ընդունել ԼՂԻՄ-ը Հայաստանին միացնելու մասին: Աբեյանը նշում է, որ առավոտյան հասնում են Ղափան, հանդիպում զինկոմի, քաղխորհրդի նախագահի, միլիցիայի պետի հետ, որոնք, խիստ զարմանալով նման տեղեկությունից, ասում են, որ առաջին անգամ են այդ մասին լսում: Աբեյանը նշում է, որ իրենք զինվորական համազգեստով շրջում են քաղաքում, համոզվում, որ ամեն ինչ հանգիստ է, և համապատասխան տեղեկություն փոխանցում իրենց զորամասին: Նա հիշում է, որ մի դեպք է եղել, երբ ադրբեջանական դպրոցի տնօրենը ցանկացել է վառել իրենց դպրոցը, սակայն բռնվել է, իսկ միջադեպը գրանցվել է միլիցիայում: Մեկ այլ դեպք, երբ հոսանքի պատճառով մի ադրբեջանցու տուն է այրվել, նույնպես գրանցվել է:

Փետրվարի 23-ին երկաթգծի ադրբեջանական տեղամասում քարկոծվում է Երևան-Ղափան գնացքը, կոտրվում են 25 լուսամուտի ապակիներ, սակայն մարդիկ չեն տուժում: Ղափանի շրջկոմի առաջին քարտուղար Ռ. Ղոնյանի վկայությամբ, գնացքը արագ, երեք ժամվա մեջ վերանորոգում են, իսկ այդ միջադեպը շրջանում ու քաղաքում պատասխան գործողություններ չի հարուցում<sup>29</sup>:

Աբեյանը նշում է, որ չնայած այդ ժամանակ Ղափանում ամեն ինչ հանգիստ էր, Մոսկվայից եկած գեներալ-լեյտենանտի (Ա. Մակաշով - Ա.Հ.) հրամանով իրենց գնդից զրահամեքենաներով երկու գումարտակ Մեղրու լեռնանցքով շարժվում է դեպի Ղափան, սակայն ճանապարհի սառած ու դժվարանցանելի լինելու պատճառով հետ է վերադառնում: Փետրվարի 24-ին նրանց

<sup>27</sup> Улубабян, Золян, Аршакян 1989, 49-50. Այս ժողովածուն հայտնի է նաև Թ. դը Վաալին, սակայն չգիտես ինչու՝ նա հարկ չի համարում անդրադառնալ Ա. Աբեյանի վկայությանը:

<sup>28</sup> 1988 թ. փետրվարի 20-ին տեղի էր ունենալու ԼՂԻՄ-ի Մարզային խորհրդի նիստը՝ մարզը Հայկ. ԽՍՀ-ին միանալու որոշումն ընդունելու նպատակով:

<sup>29</sup> Коммунист, 9.1.1990.

խումբը վերադառնում է զորամաս, իսկ փետրվարի 24-25-ին զորամասը, իբր զորավարժությունների համար, գնացքով տեղափոխվում է: Փետրվարի 26-ին հասնում են Բալաջար, որը Բաքվից 15 կմ էր հեռու, այնուհետև՝ Փերիքյուշքյուլի, որը Սումգայիթից հեռու էր 20 կմ: Արդեն փետրվարի 29-ից մասնակցում են Սումգայիթի հայերի տարհանմանը, իսկ ապրիլի 4-ին վերադառնում են Ջուլֆա<sup>30</sup>: Ըստ էության, Ղափանի համար նախատեսված զորախումբը հայտնվում է Սումգայիթում՝ իրական բռնության կիզակետում: Այդ զորախմբի երթուղին իրապես ցույց է տալիս «երևակայական» բռնության գոտուց բռնության իրական տարածք տանող երթուղին:

Առաջին հանրահավաքը Ղափանում տեղի է ունենում փետրվարի 23-ին, քաղաքային մարզադաշտում: Ինչպես նշում է Ռ. Ղոնյանը, նախաձեռնությունը գալիս էր Ղափանում ուսանող դարաբաղցիներից, և իշխանությունների թույլտվությամբ հանրահավաքը տեղի է ունենում քաղաքային մարզադաշտում՝ քաղաքում ավելորդ իրարանցումից ու հնարավոր լարվածությունից խուսափելու նպատակով: Այդ տարիներին ուսուցիչ, հետագայում Կապանի երկրագիտական թանգարանի տնօրեն Գ. Սմբատյանը իր հուշագրության մեջ գրում է, որ այդ առաջին հանրահավաքում հնչեցին «հակակոմունիստական ելույթներ, ազգանպաստ պահանջներ»<sup>31</sup>: Նա նշում է, որ փետրվարի 25-ին եղավ երկրորդ հանրահավաքը, հետո ակտիվությունն սկսեց մարել, մասնակիցները պակասեցին, ու «երևի այդ պատճառով» նրանք տեղափոխվեցին քաղաքի կենտրոն: Նա հիշում է, որ հաճախ մոռանում էին ԼՂԻՄ-ը Հայաստանին միացնելու պահանջն ու սկսում քննադատել կոմունիստ ղեկավարներին, պահանջում պատժել կաշառակերներին: Այս քննադատությունը դուր էր գալիս մարդկանց. «Հերթական հանրահավաքը մարդաշատ էր լինում, երբ նախօրոք հայտարարում էին, թե քննարկվելու է շրջանի կաշառակերների հարցը»<sup>32</sup>:

Ռ. Ղոնյանը պատմում է, որ փետրվարի 23-ին, 24-ին, 25-ին, 26-ին երևանից իրենց հայտնում էին, որ ադրբեջանցիները ուզում են գնալ, Ջանգելան, Նախիջևան: Ղոնյանը տարակուսում է. «Մեզ համար անհասկանալի էր՝ հա, միտինգներ կան և այլն, մեր մտահոգությունն էլ ա, որ միջադեպ չլինի, բայց տենց բաներ չկային»:

Այդ օրերին Ղափանում էին նաև ԽՄԿԿ քաղբյուրոյի, ՆԳՄ, ՊԱԿ, դատախազության բարձրաստիճան ներկայացուցիչները, իսկ փետրվարի 26-ին այստեղ է գալիս Անդրկովկասյան զինվորական օկրուգի հրամանատարի առաջին տեղակալ, գեներալ-լեյտենանտ Ա. Մակաշովը՝ անհրաժեշտության դեպքում Նախիջևանից Ղափան զորք մտցնելու լիազորությամբ: Ինչպես

<sup>30</sup> Улубабян, Золян, Аршакян 1989, 49-50.

<sup>31</sup> Սմբատյան 2003, 10:

<sup>32</sup> Սմբատյան 2003, 10:



նշում է Ղափանի շրջկոմի առաջին քարտուղարը, Ա. Մակաշովը մի քանի օր շրջեց գյուղերում, համոզվեց, որ իրադրությունը հանգիստ է և զորք մտցնելու անհրաժեշտություն չկա<sup>33</sup>: Այս ամենը, սակայն, հուշում է, որ ինչ-որ տեղից ինչ-որ բան էր նախապատրաստվում Կապանում, որին թերևս տեղյակ էին Մոսկվայում, բայց տեղում՝ ոչ:

Ռ. Ղոնյանը հիշում է Ա. Մակաշովի այցը Ղափան, երբ իրեն Երևանից զանգահարեցին ու ասեցին, որ գեներալ-լեյտենանտը Թբիլիսիից Ղափան է գալիս: Նա եկել էր ուղղաթիռով, 3-4 սպաների ուղեկցությամբ: Նրանց դիմավորել է անձամբ Ռ. Ղոնյանը, և մեկնել են Ղափանի շրջկոմ: Հասկանալով, որ որևէ խնդիր չկա, Մակաշովը բարյացակամորեն հայտնում է, որ Ղափանում պետք է մնան, քանի որ մտահոգություններ կան թե՛ Նախիջևանի, թե՛ այս կողմից: Ինչին ի պատասխան՝ Ղոնյանն էլ տարակուսած ասում է, որ այստեղ զորք չկա, և «մերոնք էլ չեն կարող հարձակվել», նման իրավիճակ չկա: Մակաշովն էլ հայտնում է, որ «ինֆորմացիա կա», որին «դուք [Ղափանի իշխանությունները] չեք տիրապետում»:

Ա. Մակաշովը ցանկություն է հայտնում մնալ Ղափանում ու գիշերել դրսում (ըստ երևույթին, իրավիճակը հասկանալու, զգալու համար - Ա.Հ.), ոչ թե հյուրանոցում, որն արդեն ապահովված էր շրջկոմի կողմից: Ինչին ի պատասխան՝ Ռ. Ղոնյանն ասում է, որ դա ամոթ ու ծիծաղելի կլինի՝ քաղաքում վրան դնել ու գիշերել, ու այստեղ «քաղաքում նման իրավիճակ չի, ու դրսում մնաք»: Համոզվելով՝ Ա. Մակաշովը իրեն ուղեկցող սպաների հետ միասին հաստատվում է քաղաքային հյուրանոցում:

Ղոնյանը հիշում է, որ հաջորդ օրը Ա. Մակաշովը փորձում է Մեղրու լեռնանցքով գնալ Նախիջևան, բայց քանի որ փետրվար ամիսն էր, ճանապարհը փակ էր, չի կարողանում անցնել: Ղոնյանը զանգում է Քաջարանի կոմբինատի ղեկավարներին, որոնք հզոր տեխնիկա են ուղարկում գեներալին օգնության հասնելու համար:

«Գնացել հանել, բերել են, էկել ա՛ստում եմ, ի՞նչ գործ ունեիր, ասում ա՛ ուզում էի Նախիջևան գնայի, պատմում է Ղոնյանը, - ասում եմ՝ էս ժամին չեն գնում, ճանապարհը բացվում-փակվում ա, առավոտյան կբացվեր էլի.. Դե չէ, ասում ա՛ ես ուրիշ ինֆորմացիա ունեի»:

Ա. Մակաշովը «որոշ փակագծեր է բացում», թե իրեն «ադրբեջանցիներն ասել են, որ Ղափանը պիտի հարձակվեր Նախիջևանի վրա. «Ես եկել եմ, որ զորք բերեմ Քաջարանի վրա կանգնեցնեմ, որ ղափանցիները չհարձակվեն Նախիջևանի վրա: Հա, մի երկու բան էլ էին բերել, ԵՄՔ էր եկել Ղափան, երեխեքը բարձրանում, նստում, նկարվում էին: Ասում ա՛ սա պիտի բերեինք, տեխնիկա պիտի բերեինք, սա ինձ համար ա եկել: Չորս հատ բերել էին ԵՄՔ,

<sup>33</sup> Հարցազրույց Ռ. Ղոնյանի հետ 2012, օգոստոսի 30, Коммунист газ., N 7, 1.09.1990:

դրանցից մեկով էր, որ չէր կարողացել անցնել Մեղրու լեռնանցքը: Իրան շատ բաներ էին ասել, դրա համար էին եկել»<sup>34</sup>:

Պետք է նշել, որ բացի մոսկովյան ներկայացուցիչներից, փետրվարյան այդ օրերին Ղափանում էին նաև ՀԽՍՀ կուսակցական ու պետական բարձրաստիճան ներկայացուցիչներ ՀԿԿ Կենտկոմից, Մինիստրների խորհրդից, ՆԳՄ-ից:

Իր աշխատանքային նոթատետրում այդ ժամանակ Ղափանի շրջկոմի երկրորդ քարտուղար Ա. Բաբայանը գրել է, որ փետրվարի 24-ին, ժամը 17.00-ին ՍՍՀՄ դատախազությունից Վ. Զիկովը իրեն հարցաքննել է «Ղարաբաղի իրադարձությունների հետ կապված միտինգների ու ցույցերի կազմակերպիչների մասին»: Այն տևել է երեք ժամ: «Ամեն ինչից երևում է, որ նրանց հետաքրքրում է այսպես կոչված «Ղարաբաղ» կոմիտեն և նրա ակտիվիստների գործունեությունը: Նրանք նախօրոք լրիվ ինֆորմացիա ունեին տեղի ունեցած իրադարձությունների և կազմակերպիչների մասին»<sup>35</sup>:

Ըստ էության, 1988 թ. փետրվարից սկսած՝ Ղափանը Կրեմլի քաղաքական, զինվորական, իրավապահ, պետանվտանգության օրգանների անմիջական ուշադրության կենտրոնում էր:

Ըստ Ռ. Ղոնյանի՝ Մոսկվայի ներկայացուցիչներին առհասարակ հետաքրքրում էր շրջանում ադրբեջանական բնակչության վիճակը, իշխանության մարմիններում նրանց ներկայության համամասնությունը և այլն: «Հա, եկան հարցրին՝ ինչպես, ոնց, ծանոթացան, իմացան, կիսազարմացան, թե ինչո՞ւմ ա մտահոգությունը, քանի որ ադրբեջանական գյուղերում իրանք ինֆորմացիա ունեին, երևի իրանց ասել էին, որ խտրականություն ա դրվում»: Ասում էին՝ «Դուք հրապարակեք, հոդվածներում գրեք ձեր արածների մասին: Այ էդ կարգի պրոպագանդիստական հարցեր էին անում, որ չկա էդպիսի պրոբլեմ, զոյություն չունի...»<sup>36</sup>:

Գ. Սմբատյանը գրում է, որ ԽՍՀՄ Կենտկոմի ազգամիջյան հարաբերությունների սեկտորի վարիչ Սերգեյ Սլոբոդանյուկին հայտնել էին, թե Ղափանում ադրբեջանցիների համար անտանելի պայմաններ են ստեղծված. օրինակ՝ բոլորն անխտիր բնակեցված են առաջին հարկերում ու ներքնահարկերում: Նա շրջել էր քաղաքում, զրուցել ադրբեջանցիների հետ, բախել առաջին հարկի դռները, իջել ներքնահարկերը: Նա ներքնահարկերում ընդհանրապես բնակվող մարդ չհայտնաբերեց, իսկ առաջին հարկերում բնակվում էին թե՛ հայեր, թե՛ ադրբեջանցիներ<sup>37</sup>: Այս այցելության մասին, ի դեպ, Կապանի շատ բնակիչներ են հիշում:

<sup>34</sup> Հարցազրույց Ռ. Ղոնյանի հետ 2012:

<sup>35</sup> Ա. Բաբայանը օրագրի այդ հատվածի կրկնօրինակը տրամադրել է մեզ (անձնական արխիվ):

<sup>36</sup> Հարցազրույց Ռ. Ղոնյանի հետ 2012:

<sup>37</sup> Սմբատյան 2003, 10:

Ո՞րն էր Ղափանի նկատմամբ նման ուշադրության ու համապատասխան միջոցառումների պատճառը: Դրան կանդրադառնանք ստորև՝ սումգայիթյան դեպքերի առնչությամբ համարները փոխել մոսկովյան հետաքննության հետ կապված: Այստեղ մանրամասնենք մի ուշագրավ երևույթ: Պարզվում է՝ 1988 թ. փետրվարի 25-ից սկսած՝ ղափանցի ադրբեջանցիների անունից Մոսկվա հեռագրեր են ուղարկվել իբր Ղափանում նրանց նկատմամբ բռնությունների ու խտրականությունների վերաբերյալ: Մոսկվայում կենտրոնական իշխանությունների հետաքննությունը պարզել է, որ դրանց զգալի մասը ուղարկվել էր Ադրբեջանից, իսկ կազմակերպիչները տեղի կուսակցական գործիչներն էին, մինչդեռ ղափանցի ադրբեջանցիների զգալի մասը չի էլ իմացել, որ իրենց անունով դիմումներ ու հեռագրեր են հղվել<sup>38</sup>:

Ռ. Ղոնյանը հիշատակում է Ղափանի շրջկոմի կուսիրահանգիչ Խ. Ռաիմովի դեպքը, երբ վերջինիս ընտանիքի անդամները չեն էլ իմացել, որ իրենց անունից իրենց իբրև թե ծանր վիճակի մասին հեռագիր է ուղարկվել: Այդ բոլոր հեռագրերն ու դիմումները մանրակրկիտ քննել է Ղափանում գտնվող մոսկովյան հանձնաժողովը (ԿԿ, ՊԱԿ, ՆԳՄ), կազմվել են համապատասխան գործեր, ու որևէ փաստ չի հաստատվել: Ղափանի շրջկոմի երկրորդ քարտուղար Ա. Բաբայանի արխիվում պահվում է դրանցից մեկի պատճենը՝ Ջարիֆա Շիրինովայի անունով, որը Ջանգելանից (Ադրբեջան) ուղարկվել է ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրճյանին, ԽՄԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Մ. Գորբաչովին, Ադրբեջանի ԿԿ առաջին քարտուղար Բադիրովին: Հեռագրում նշված է, որ, ԼՂ իրավիճակի հետ կապված, Ղափանում իրենց՝ որպես ադրբեջանցիներ, հայիոյում են, քշել են տներից, ու հիմա իրենք գտնվում են Ադրբ. ԽՍՀ Ջանգելանի շրջանում և խնդրում են շուտափույթ միջոցներ ձեռնարկել: Սակայն քննությունն ու դրա հետ կապված տեղեկանքում (թվագրված 9 մարտի, 1988 թ.), նշվում է հետևյալը. «Ես Շիրինովա Ջարիֆա Սաֆար դզին, տեղեկանք եմ տալիս, որ ոչինչ չգիտեմ իմ անունով ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովին ուղղված հեռագրի մասին: Իմ խոսքերի ճշմարտացիությունը հաստատում եմ»<sup>39</sup>: Բողոքների կազմակերպման այս ընթացքը խոսում է որոշակի ցանցի առկայության մասին, որը ներառում էր թե՛ Ղափանի ադրբեջանցիներին, թե՛ Ադրբեջանի իշխանական որոշակի շրջանակներ, որոնք փորձում էին Հայաստանի տարածքում, կոնկրետ Ղափանում քաղաքական հակակշիռներ ստեղծել ԼՂԻՄ-ի հայության կողմից բարձրացված խնդիրներին:

<sup>38</sup> Коммунист, 9.01.1990.

<sup>39</sup> Ա. Բաբայանը մեզ է տրամադրել փաստաթղթի կրկնօրինակը, որը ռուսերեն է: Անձնական արխիվ:

### Ղափան-Բաքու գնացքը

Մինչ «ղափանցիների» անունով վերոհիշյալ դիմում-բողոքներն ու հեռագրերը հղվում էին Մոսկվա, առջևում սումգայիթյան իրադարձություններն էին: Փետրվարի 27-ին մոտ 200 ադրբեջանցի, ինչպես հետո պարզվեց, տուրք տալով Ադրբեջանից եկած սադրիչ զանգերին, տարածվող կեղծ լուրերին ու հեռագրերին, Ղափան-Բաքու գնացքով հեռանում են: Սակայն հետագա սրացումներից խուսափելու համար գնացքը Ադրբեջանում՝ Իմիշլում, կանգնեցվում է: Այդ տարիներին Ղափանի շրջկոմի երկրորդ քարտուղար Ա. Բաբայանի խոսքերով, գնացքի միջադեպը կազմակերպված էր, քանի որ երկաթգիծը պատկանում էր Ադրբեջանին, և այդ գիշեր ընդհանուր շարժակազմից վագոններ, այդ թվում՝ բեռնատար, ուղարկվում են Ղափան: Այսինքն, դա սովորական երթուղային գրաֆիկով նախատեսված գնացք չէր:

Մինչ այդ, փետրվարի 26-ին, Սումգայիթում արդեն տեղի էր ունեցել առաջին ոչ մարդաշատ հանրահավաքը: Այն վարող անձնավորությունը հայտարարում է, թե իբր հայերը Ղափանում կոտորել են ադրբեջանցիներին, այրել ամբողջ գյուղեր, անարգել կանանց և այլն: Հաջորդ օրը, փետրվարի 27-ին, նույն անձը նույն ոճով, բայց ավելի ազդեցիկ երանգներ ավելացնելով, կրկին ելույթ է ունենում<sup>40</sup>:

Ուշագրավ վկայություն է հաղորդում «Գրական Ադրբեջան» հանդեսի այդ տարիների բաժնի վարիչ Լևոն Ադյանն<sup>41</sup> իր հուշագրության մեջ և պատմում է մի իրողության մասին՝ նշելով, որ Երևանի ադրբեջանական թատրոնի նախկին տնօրեն Հիդայաթ Օրուջևը, որն արդեն Ադրբեջանում «Գյանջլիք» հրատարակչության գլխավոր խմբագիրն էր, հանրապետական երիտասարդական «Ազերբայջան Գյանջլարի» թերթում Սումգայիթից առաջ հանդես է գալիս մի հոդվածով, «ուր, խոսելով Ղափանում ապրող ադրբեջանցիների հանդեպ հայերի՝ իբր գործած բռնությունների մասին, չբերելով ոչ մի կոնկրետ օրինակ ու չնշելով ոչ մի անուն, հոդվածն ավարտում է պաթետիկ բացականչությամբ. «Ինչե՛ր, ինչե՛ր ասես, որ չեղան այնտեղ, գրիչն անկարող է վերարտադրել այդ ամենը»: Այդ կապակցությամբ Լ. Ադյանը մեջբերում է իր զրույցը հեղինակի՝ Օրուջևի հետ, որի հետ իրենք վաղեմի ծանոթներ էին. «Հոդվածդ կարդացի «Ազերբայջան Գյանջլարի» թերթում: Ինչո՞ւ որևէ փաստ չես նշում, որևէ տուժած մարդու անուն չես տալիս:

- Իմ հ-հ-հ-հ-հոդվածը Է-Է-Է-Է-Է փոխել են, - ուժեղ կակազելով հայերեն սասց նա, շիլ աչքերով չգիտես ինձ, թե վերելակի առաստաղին նայելով: - Իմ գ-գ-գ-գրածից բ-բ-բ-բան չի մնացել: Փ-փ-փ-փ-փոխել են»<sup>42</sup>:

<sup>40</sup> Շահմուրադյան 2003, 39:

<sup>41</sup> Արձակագիր, թարգմանիչ Լևոն Ադյանը (1940-2021) Բաքվում լույս տեսնող Ադրբեջանի գրողների միության «Գրական Ադրբեջան» հանդեսի բաժնի վարիչն էր, գլխավոր խմբագիրը (1979-81):

<sup>42</sup> Ադյան 2018, 236: Լ. Ադյանը մեզ հետ զրույցում հաստատեց եղելությունը: Հարցազրույց (18.07.2021):

Ռ. Ղոնյանը հիշում է, որ ԽՄԿԿ Կենտկոմի ներկայացուցիչ Կոնդրատը, որը Ղափանում էր, առավոտյան կանչում է, 4-5-ն էր գիշերվա, «լույս 28-ի գիշերն էր: ասեց՝ գնացքով ահագին մարդ ա գնացել»:

Ի տարբերություն Կոնդրատի, Ռ. Ղոնյանը դեռ չգիտեր Ադրբեջանում ծավալվող իրադարձությունների մասին: Մոսկվայի ներկայացուցիչն ասել էր. «Եթե ձերոնք (Ղափանի ադրբեջանցիները) գնան, հասնեն Բաքու, սրանք կարող են ավելորդ բաներ պատմել ու դժվարություններ լինեն: Գնացքը կանգնեցրել են Իմիշլիում [...]: Ինձ թվում է՝ ճիշտ կլինի, որ գնաք, էստեղ բացատրեք, կանգնեցրել ենք, և [...] (Ադրբեջանական ԽՍՀ) կառավարության նախագահի տեղակալն էլ է էստեղ: Դուք էլ խմբով գնացեք... 4-5 հոգով, ադրբեջանցի ղեկավարին տարեք, որ միասին էստեղ բացատրեք, ասեք՝ ո՞ր էք գնում, ինչի՞»: Ռ. Ղոնյանը պատասխանել է. «Ինդիր չկա, ես, Կենտկոմի առևտրի բաժնի վարիչը և քաղսովետի նախագահն ու մեր սովխոզի՝ Գեդլի ադրբեջանցի դիրեկտորը...»:

Ղափանի շրջանի ու ՀԿԿ Կենտկոմի ներկայացուցիչները մեկնում են Իմիշլի, որտեղ Ջանգելյանի, Իմիշլիի շրջկոմների ղեկավարների, Ադրբեջանի ԽՍՀ կառավարության նախագահի առաջին տեղակալ Ա. Ռասիզադեի, իրավապահների մասնակցությամբ հանդիպում են գնացքի ուղևորների հետ: Նրանցից ոչ մեկը որևէ դժգոհություն չի հայտնում ու չի բողոքում հայերից, ու սովորաբար ասում էին, որ ազգական է զանգել Բաքվից, ասել՝ շտապ դուրս եկեք: «Գնացինք կայարանի սպասարահ, զրուցեցինք, - շարունակում է Ռ. Ղոնյանը. - էդ գնացքի ուղևորների հետ, որևիցե դեպք, ինցիդենտ, արյուն, ծեծ չի եղել Ղափանում, որովհետև մենք 40-50 հոգու կանչել, զրուցել ենք»:

Այդ գնացքով հեռացած ադրբեջանցիները, ըստ վագոնների՝ գնացք N 671-672, ցուցակագրված էին տեղական ադրբեջանական իշխանությունների կողմից: Ցուցակը պարունակում էր 276 անուն-ազգանուն. հիմնականում ընտանիքներ էին<sup>43</sup>:

Իմիշլիի կայարանում հայ ու ադրբեջանցի ներկայացուցիչները մնում են մինչև երեկո, հանդիպում Ղափանի ադրբեջանցիների հետ, սակայն վերադարձի ժամանակ ադրբեջանական ղեկավարության մեքենաները, որոնց մեջ նաև Ղափանի շրջանի ներկայացուցիչներն էին, հավաքված ադրբեջանական ամբոխի կողմից կանգնեցվում ու քարկոծվում են: Ռ. Ղոնյանը հիշում է, որ երբ իրենք՝ ՀԿԿ Կենտկոմի բաժնի վարիչը և Ջանգելյանի շրջկոմի առաջին քարտուղարը, պատրաստվում էին նստել Ռասիզադեի մեքենան, «մեկ էլ մի փոքր քար ա գալիս: Ինքը՝ (Ռասիզադեն) վեր ա կենում, դուռը բացում, ձմեռ էր, ցուրտ և պալտոններով ու մորթե գլխարկներով էինք: Գլխարկը հանում, առանց մագի, քաչալ գլխով, ասում ա՝ եթե մի բան խփեք, իմ գլխին ա կաչե-լու: Ղափանի ղեկավարությունն ու իրենց՝ Հայաստանի Կենտկոմից մարդիկ

<sup>43</sup> Ա. Բաբայանը մեզ է տրամադրել այդ փաստաթղթի պատճենը, որը գտնվում է մեզ մոտ:

են երեք ժամ էստեղ կանգնած, շատերին կանչել ենք, մեկը չի ասել՝ Ղափանում մի դեպք ա եղել, մեկի քիթը չի արնել, մի քար չեն խփել որևիցե մեկի: Հիմա, իրենք ստեղ են, եթե մի բան լինի՝ մեզ եք խայտառակում»: Ղոնյանը նշում է, որ «...կեսը ծակված են, կեսը՝ խմած, որովհետև մենք մեջով էինք անցնում և ասում էինք՝ մեկը կարող ա դանակ խրի մեջո, որովհետև դեմքից երևում էր՝ թե անքուն ա, թե ինչ ա. էդ քաղաքի՝ {Իմիշլիի} ամենաայլանդակ մասան էնտեղ էր»:

Սակայն Ռասիզադեի կոչը չի ազդում: «Վերջը, սա նստում ա մեքենա, մի հատ մեծ քար են խփում, ավելի մեծ քարով: Էլի նորից վեր ա կենում, որ բացի, հետո զգում ա, որ չէ, սա չի կառավարվում: Նստում ա ու սկսում են, քարերը մտնում են երկու կողմից մեջը, ես մեջտեղն եմ, Չանգելանի քարտուղարն ա ու Ալիկը: Երկու կողմից քարերով խփում են: Էդ մեքենան ջարդում են, բայց ինքը չի կանգնում: Հետևում՝ [մյուս մեքենան] քաղսովետի նախագահն ա, սովխոզի դիրեկտորը, իրենց ղեկավարներից, երկի քաղկոմի քարտուղարը և այլն: Բայց Չանգելանի քաղկոմի քարտուղարի մեքենան էլ ա, իրանցն էլ քշած գալիս ենք անցնում: [...] Չանգելանի քարտուղարի մեքենան էլ էին ջարդել»:

Մինչ Իմիշլիում Հայաստանի ու Ադրբեջանի ներկայացուցիչները հանդիպում էին գնացքով հեռացած ղափանցիների հետ ու փորձում կարգավորել իրավիճակը, «գնացքի» թեման, ըստ սումգայիթյան դատավարության նյութերի, փետրվարի 29-ին արդեն սկսել էր հակահայկական բռնությունների գեներացման գործիք դառնալ: Գլխավոր բռնարարներից Ահմեդովը, որը հետագայում մահապատժի դատապարտվեց, մի ձեռքին բարձրախոսը, իսկ մյուսին՝ կացին, հայտարարում էր. «Հայաստանում մորթում են մեր քույրերին ու եղբայրներին: Կայարանում մի վագոն է կանգնած՝ բերել են մեր հայրենակիցների կտրված գլուխներն ու ձեռքերը: Հարյուր քսան ադրբեջանցի աղջիկ է միանգամից կորել Հայաստանում»<sup>44</sup>:

Միևնույն ժամանակ, բացի Ղափանում գնացքի հետ կապված միջադեպից, ադրբեջանցիների հոսք է տեղի ունենում դեպի հարևան Ադրբ.ԽՍՀ Չանգելանի ու Կուբաթլուի շրջաններ:

Վերադարձի գործով զբաղվում է նաև Ղափանի շրջկոմի երկրորդ քարտուղար Ա. Բաբայանը, և ադրբեջանցիներին հետ բերելու համար ավտոբուսներ են ուղարկվում Չանգելան: Ղափանի ադրբեջանական դպրոցի ռուսաց լեզվի ուսուցչուհին, մատնացույց անելով Բաբայանին, Ադրբեջանի ներկայացուցիչների առջև ասել է, որ «նա միտինգում մեր ժողովրդի դեմ ելույթ է ունեցել և ասել, թե Ղարաբաղը Հայաստանի մաս է»:<sup>45</sup> Ուսուցչուհուն սաստել է

<sup>44</sup> Շահմուրադյան 2003, 46:

գործկոմի նախագահ Հուր Հուսեյնովան՝ նրան համարելով «անպարկեշտ ու երախտամոռ, որ Ղափանի հացը կերել, ավել-պակաս դուրս է տալիս»<sup>45</sup>:

Ա. Բաբայանը հիշում է, որ վերադարձողների հետ եկան նաև այլ վայրերից եկած և օտար, կիսաքրեական կամ քրեական ագրեսիվ տարրեր, որոնք, ինչպես նաև հարևան ադրբեջանական շրջանների իշխանության ներկայացուցիչները, հեռացածների հետ գալով Ղափան, համոզվում են, որ այնտեղ և ադրբեջանական գյուղերում հանգիստ իրավիճակ է:

Մինչ շրջանային ու հանրապետական իշխանության մի մասը Իմիշլիում էր, փետրվարի 28-ին Ղափանում տեղի է ունենում շրջանային ակտիվի ժողով, որին մասնակցում են նաև ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Թ. Դիլանյանը, ՀԽՍՀ ՆԳ մինիստրի առաջին տեղակալ Բ. Մելիքսեյանը, ՀԽՍՀ բնակարանային կոմունալ տնտեսության մինիստր Ռ. Մինասյանը, Ղափանի գործկոմի նախագահ Մկրտչյանը, Ղափանի շրջկոմի երկրորդ քարտուղար Ա. Բաբայանը: Թ. Դիլանյանը նշում է, որ ԼՂԻՄ-ի հարցը կենտրոնական իշխանությունների ուշադրության կենտրոնում է, և անմտություն է ներկայումս ցույցի կամ հանրահավաքի դուրս գալը, անթույլատրելի են գործադուները, ուսումնական գործընթացի խաթարումները, և անհրաժեշտ է վերադառնալ կյանքի բնականոն դիմին:

Ռ. Մինասյանը նշում է, որ Ղափանում «միտինգներն ու ցույցերը ոչ մի դեպքի ու հանցագործությունների տեղիք չեն տվել», սակայն, ի տարբերություն Երևանի, տարերային բնույթ ունեին: Հանրահավաքին մասնակցելու քողի տակ դասերը ուսանողներն ու աշակերտները լքում էին, շատ երիտասարդ բանվորներ էլ՝ աշխատանքը: Օրինակ՝ փետրվարի 27-ին քաղաքի փողոցներով վազվզող մի քանի փոքրիկ խմբերի՝ հիմնականում աշակերտների ու ուսանողների գոռում-գոչյուններն ու Ղարաբաղ-Ղարաբաղ վանկարկումները «ո՛չ գործին կարող էին օգնել և ո՛չ էլ կարելի է դա ասելիք կամ էլ ներկայացվող պահանջ համարել»:

Մինիստրը նշում է, որ «նման միտինգներն ու ցույցերը, որ սահմանադրական շրջանակներում են տեղի ունենում», իրենց համար ևս նորություն են ու մի փոքր անսովոր: Նա հայտնում է, որ կան «պրոպոկացիոն լուրեր», հերյուրանքներ: Օրինակ՝ քաղաքի ադրբեջանական դպրոցի տնօրեն Ս. Ջամալովն ասում է, որ Բաքվից գանգել և հարցնում են իր քայքայված առողջության և ավերված դպրոցի մասին, քանի որ լուր է տարածվել, որ դպրոցը հրդեհել են ու տնօրենին էլ խոշտանգել:

Ակտիվը որոշում է՝ հավանական սադրանքները կանխելու նպատակով բնակչության մեջ բացատրական լայն աշխատանքներ տանեն ստեղծված իրավիճակի վերաբերյալ, բնականոն կյանքի վերադառնալու համար<sup>46</sup>:

<sup>45</sup> Սմբատյան 2003, 10:

<sup>46</sup> Նիստի արձանագրության կրկնօրինակը մեզ է տրամադրել Ա. Բաբայանը:

1988 թ. փետրվարի 29-ին, այն օրը, երբ Սումգայիթում հայերի ջարդերը հասել էին մեծ ծավալների, Ղափանում տեղի է ունենում հեռացած և վերադարձած ադրբեջանցիների հետ հանդիպում, որին արդեն մասնակցում էին կենտրոնական, հանրապետական ու տեղական իշխանությունների ներկայացուցիչները՝ ԽՄԿԿ Կենտկոմի սեկտորի վարիչ Կոնդրատենկոն, գեներալ-լեյտենանտ Ա. Մակաշովը, Ռ. Ղոնյանը, Բ. Մելիքսեթյանը, Կ. Մկրտչյանը: Մասնակիցներից, օրինակ, Արիֆ Նազարովը (Քաջարանշին տրեստ, հասցե՝ ք. Ղափան, Բաղաբերեդ 9, բն. 35), ելույթ է ունենում՝ ասելով, որ միտինգների երկրորդ օրն ինքը եկել է Բաքվից, սակայն իր հարազատները, վախենալով միտինգներից, հեռացել են շրջանից: Նա ուզում էր իմանալ, թե ինչո՞ւ են հեռացել և որտե՞ղ են: Նազարովը, սակայն, ուներ իր պատասխանը: «Մեզ այստեղից հայերը քշում են: Ահա, խնդրեմ, այս գրությունը, ուր հայերեն լեզվով գրված է, որ մենք պետք է հեռանանք այստեղից, եթե ոչ՝ ապա մեզ կմորթեն: Այս գրությունը փակցված էր իմ դռանը», - ասում է Նազարովը ու այն փոխանցում նիստին ներկա շրջկոմի առաջին քարտուղար Ռ. Ղոնյանին: Ղոնյանն այդ գրությունը կարդալով՝ ժպտում է ու խնդրում ներկա ադրբեջանցիներից որևէ մեկին, որ հայերեն կարդալ գիտեր, բարձրաձայն կարդա այն: Կարդալուց հետո պարզվում է, որ այն քաղաքի կոմունալ տնտեսության ու բարեկարգման կոմբինատի հայտարարությունն էր այն մասին, որ աղբը փողոցում չթափեն: Նազարովը շարունակում է բողոքել, որ իրենց թուրք են ասում<sup>47</sup>, որ քրեական գործերն անարդարացի են վարում, և օրինակ է բերում ոմն Իսմայիլ Իսմայիլովի դեպքը, որ դատապարտվել է անչափահասի բռնաբարության համար: Նրա բերած մյուս օրինակն էլ Ազադ Վելիևի գործն էր, որ «Բարեկամություն» պիոներական ճամբարում հանցագործություն էր կատարել<sup>48</sup>: Մեկ այլ մասնակից՝ աշխատանքի վետերան Թադիև Մուսանը, որն իր խոսքով՝ ԽՄԿԿ անդամ էր 1947 թ., պատերազմի մասնակից էր ու

<sup>47</sup> Հայերն իսկապես ադրբեջանցիներին ավանդաբար «թուրք» են անվանում, ինչպես վրացիները՝ «թաթար»: Ներկայիս «ադրբեջանցի» անունը շրջանառության մեջ է մտել միայն 1937 թ. ի վեր, իսկ մինչ այդ նրանց պաշտոնապես «թուրք» կամ «թուրք» էին կոչում:

<sup>48</sup> Ազադ Վելիևի գործով դատը տեղի է ունեցել 1988 թ. հունվարի 29-ին Կապան քաղաքի ժողովրդական դատարանում: Վելիևը՝ Ազադ Վալի-օղլին, 1960 թ. մայիսին Բաքվում ծնված ադրբեջանցի էր, կոմկուսի թեկնածու, Բաքվի նավթաքիմիական ինստիտուտի 5-րդ կուրսի ուսանող: Բաքվում երկու անգամ դատվել էր՝ 1979 և 1981 թթ.՝ հափշտակության մեղադրանքով: 1987 թ. օգոստոսի 10-ին մոր և քրոջ հետ եկել էր Կապան՝ իր ազգականի հարսանիքին մասնակցելու նպատակով: Օգոստոսի 12-ի լույս 13-ի գիշերը ցանկապատի վրայով գաղտագողի մտել էր «Դրուժբա» պիոներական ճամբար, մտել դպրոցական աղջիկների սենյակ, ծածկոցները քաշել և ածելով կտրտելով քնած աղջիկներից երեքի ներքնաշորերը՝ նրանց մերկացրել: Մինչ պատրաստվում էր անցնել չորրորդին՝ նրան նկատել են և աղմուկ բարձրացրել: Փորձելով փախչել՝ նա ջարդել է պատուհանի ապակին և դուրս թռել, բայց ընկել է փոսը և բռնվել ճամբարի աշխատողների կողմից: Նրան դատել են խուլիգանական գործողությունների մեղադրանքով, բայց դատարանը, «հաշվի առնելով նրա արարքի նվազ հասարակական հետևանքները և այն հանգամանքը, որ նա զբաղվում է հասարակայնորեն օգտակար աշխատանքով», սահմանափակվել է երկու տարվա կալանքով (ՀԱԱ, ֆ. 10, ց. 2, գ. 43): Նյութը մեզ է տրամադրել Հ. Խառատյանը:



հաշմանդամ, նշում է. «Մինչև այժմ ինձ ոչ ոք բան չի ասել, մենք ապրել ենք համերաշխ: Ես ցանկանում եմ միայն իմանալ, թույլատրվո՞ւմ են արդյոք ցույցեր: Եթե թույլատրվում է, ապա բանակի 70-ամյակի առթիվ չկային ցույցեր: Կարծում եմ, որ հայերը չպետք է նշեն ապրիլի 24-ը»:

Կան նաև այլ ելույթներ:

Մակաշովը, ամփոփելով հանդիպումը, նշում է, որ մի խումբ սադրիչների պատճառով շրջանի ղեկավարությունը զբաղված է իրավիճակի հանդարտեցմամբ: Ուստի՝ «...պահանջում եմ լինել սթափ և պրովոկացիոն լուրերին տուրք չտալ: Ձեզ ոչինչ չպիտի վախեցնի ու ոչինչ էլ չի պատահի»: Իսկ Կոնդրատևը եզրակացնում է, որ ոմանք մատնվել են խուճապի՝ տուրք տալով սադրիչ լուրերին, որոնց համար ոչ մի հիմք չկա<sup>49</sup>:

Պետք է նշել, որ Ղափանից հեռացած աղբբեջանցիների թեման շրջանառվում էր նաև տեղական ու հանրապետական մամուլում, որտեղ հրապարակվում են նրանց նամակները: Վերին Գյոդաքլու գյուղի տնտեսության կթվորուհի Քուրուրա Գադիրովան պատմում է. «Ես հիմա միայն համոզվեցի, թե ինչ ծանր հետևանքներ կարող է թողնել սուտ լուրը: Մի քանի օր անընդհատ մեզ մոտ՝ Վերին Գյոդաքլու, մեկը մյուսից սարսափելի լուրեր էին հասնում. այսինչ գյուղում հայերը այսպես են արել, այստեղ այսպես են արել, և տարօրինակն այն էր (հիմա եմ միայն այդ մասին մտածում), որ այդ «լրաբերների» մեջ չկար գոնե մեկը, որ իր աչքով տեսած կամ ականջով լսած լիներ կատարվածի մասին: Միայն մի գլուխ կրկնում էին՝ ասում են, տեսել են, պատմում են...»: Ինքն էլ, հավատալով այդ սուտ լուրերին, թողել է տղաներին, տուն ու տեղը և աղջիկների, հարսների ու թոռների հետ, չգիտի ինչու, հասել է Կուբաթլու, երեք օր մնացել այնտեղ, մինչև շրջանի ղեկավարությունը հավաքել է փախստականներին ու հորդորել վերադառնալ իրենց տեղերը: Քուրուրան հայտարարել է, որ հայերից ոչ մեկը իրենց «ոչ մի վատ բան չի արել...»<sup>50</sup>: Զանգելանի շրջանի «30-րդ կիլոմետր» կայարանի բնակչուհի Ռոզա Մամեդովան իր «Ստի ոտքերը կարճ են» նամակում պատմում է իրենց բնակավայրի բնակչության մեկ ոտքը այստեղ, մյուսը՝ Ղափանում լինելու մասին: «Բացի այդ, մեր գյուղացիների մեծ մասը աշխատում է, սովորում քաղաքի տարբեր ձեռնարկություններում և ուսումնական հաստատություններում: Մի քանի օր շարունակ մեր գյուղը դարձել էր «հայերից հալածվածների» (ղժվար էլ է ասել) հավաքատեղ: Կարգին և հավաստի բան չիմացանք, թե ինչն է այդ խուճապի պատճառը: Մի օր լուր հասավ, թե մի տղայի սպանել են, և ինչքան մեծ եղավ բոլորիս ուրախությունը, երբ հաջորդ օրը մերձքաղաքային գնացքում այդ տղայի մորը տեսանք, ու նա վրդովված, «լրաբերին» անիծելով, հերքեց ամեն ինչ: Ռոզա Մամեդովան նաև պատմում է, որ

<sup>49</sup> Հանդիպման արձանագրության կրկնօրինակը (ռուսերեն) մեզ է տրամադրել Ա. Բաբայանը:

<sup>50</sup> Ղափան, N 28, 3.05.1988:

մեկնողներից մեկն էլ երեք օր մնացել է իրենց տանը: Հետո համոզվելով, որ իր գլուխը լցվածը սուտ է, վերադառնում է: «Մեզ մոտ էլ ժողով անցկացվեց և ասվեց, որ այդ ամենը սուտ է: Փորձում էին ինձ էլ համոզել, որ ես էլ գործի չգնամ: Աշխատում էի մաքրման կայանում, բայց ես չլսեցի»<sup>51</sup>:

«Արմենպրես» պետական գործակալությունը ևս անդրադառնում է թեմային՝ «Այսօր առավոտյան Ղափանի շրջան վերադարձան 80 ադրբեջանցիներ [...] որոնք հեռացել էին Ադրբեջանի տարբեր շրջաններ»: Նրանց այստեղ դիմավորել են նաև տեղի ադրբեջանցիները, օրինակ՝ Սյունիքի սովխոզի անասնապահ Ղ. Ղազիևը, որը հայտնել է, որ իր համար անհասկանալի էր ադրբեջանցի առանձին մարդկանց նման վարմունքը, որոնք խուճապահար են եղել, թողել իրենց ընտանիքները, հայ բարեկամներին: Երկաթուղային կայարանի գծային բանվոր Ի. Իսմայիլովը նշել է, որ ոչ միայն անխոհեմ քայլ է կատարել, այլև Զանգեզուրի շրջան է տարել երեխաներին: Իրեն ոչ ոք չի սպառնացել կամ ստիպել ու այժմ էլ զոջում է: Ադրբեջանցիները հիմնականում մեկնել էին Ղափանից, Զեյվա, Մասսլահ, Գեղի գյուղերից<sup>52</sup>:

Ռ. Ղոնյանի կարծիքով, սադրիչ լուրերի տարածման հիմնական աղբյուրը եղել են Ադրբեջանից Ղափանի ադրբեջանցիներին արված հեռախոսագանգերը: Ըստ Ա. Բաբայանի տրամադրած մի տեղեկանքի՝ փետրվարի 24-29-ին Ղափանի շրջանից հեռացել է 97 ադրբեջանցի, որոնց մեջ չեն մտնում գնացքով հեռացած 276-ը: Այդ օրերին հեռացած մոտ 100-ին հաջողվում է հետ վերադարձնել<sup>53</sup>: Ռ. Ղոնյանը հիշում է, որ կային նաև չվերադարձողներ, քանի որ արդեն հայտնի էր, թե Սումգայիթում ինչ է եղել, ու հիմնական սադրիչները հենց չվերադարձողների մէջ էին:

1988 թ. մարտի 3-4-ին Ղափանի շրջկոմի բյուրոն, քննարկելով «Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ ստեղծված իրադարձությունների կապակցությամբ ադրբեջանական ազգության մարդկանց հանրապետության սահմաններից դուրս տեղափոխելու փաստերի մասին» ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի 1988 թ. փետրվարի 28-ի որոշման կատարման միջոցառումների մասին» հարցը, եզրակացրել է, որ շրջանից ադրբեջանական բնակչության տեղափոխման համար հիմքեր չկային: Առանձին մարդկանց ահաբեկելու, կարգուկանոնի խախտման, խուլիգանական որևէ դեպք չի արձանագրվել, չնայած հենց այդ ժամանակ որոշ մարդիկ կեղծ լուրեր էին տարածում, որոնց հավատալով՝ բնակիչները ստիպված տեղափոխվում էին շրջանից<sup>54</sup>:

Ղափան-Բաքու գնացքի հետ կապված զարգացումները ցույց են տալիս այդ իրադարձությունների կազմակերպված բնույթը ադրբեջանական իշխանությունների կողմից: Երկաթուղային համակարգը խորհրդային պայմաններ

<sup>51</sup> Ղափան, N 30, 3.10.1988:

<sup>52</sup> Ավանգարդ 1988, 3.06:

<sup>53</sup> Հակոբյան 2008, 51:

<sup>54</sup> ՀԱԱ, ֆ. 16, ց. 38, գ. 21, թ. 68-69:

րում ու ընդհանրապես չէր կարող գործել առանց համապատասխան վարչակազմակերպական կարգավորման, մանավանդ որ այդ երկաթգիծը պատկանում էր հենց Ադրբեջանին: Մյուս հանգամանքն այն էր, որ Ղափանից ադրբեջանցիների հեռացումն այդ երկաթուղով հախուռն չէր, այն կազմակերպված, համաժամանկյա կոլեկտիվ գործընթաց էր ու համաձայնեցված էր երկաթուղային վարչակազմի հետ: Դա խոսում է ոչ միայն ադրբեջանական իշխանության ներգրավման, այլև Ղափանի ադրբեջանցիների միջավայրում որոշակի ոչ ֆորմալ ցանցի գոյության մասին, որի միջոցով էլ կազմակերպվում էր գործընթացը:

Ըստ դաշտային նյութերի, ինչպես նաև Թ. Հակոբյանի, Հ. Աբրահամյանի հաղորդումների համաձայն՝ Ղափանի ադրբեջանցիների շրջանում կարևոր դերակատարում ուներ, օրինակ, Իսլամ Մամեդովը: Նա մսավաճառ էր և համարվում էր տեղի ադրբեջանցիների ոչ ֆորմալ ու ազդեցիկ ներկայացուցիչը: Ասենք, որ խորհրդային առևտրի համակարգում ներգրավված լինելը նաև ենթադրում էր ստվերային ֆինանսական հոսքերի տնօրինում ու տարաբնույթ կապեր: Հ. Աբրահամյանը և Թ. Հակոբյանը նշում են, որ Մամեդովը ներգրավված է եղել այս գործընթացի կազմակերպման գործում, ըստ Բաքի հրահանգի, գնացքով, ավտոբուսներով տեղափոխություններ իրականացնելու գործում և այլն<sup>55</sup>: Արժե հիշատակել այն իրողությունը, որ վերոնշյալ դեպքերից 10 տարի անց նա սպանվում է Բաքվում, իսկ տղան՝ Մոսկվայում<sup>56</sup>:

Ըստ Հ. Աբրահամյանի մեջբերած վկայության՝ դեռևս մինչև հակամարտությունը Մամեդովը ներգրավված էր տեղի ադրբեջանցիների՝ Բաքու և Ադրբեջանի այլ վայրեր մշտական բնակության տեղափոխման գործում: 1988 թ. հունվարին Ղափանի տրիկոտաժի միավորում իր այցելության ժամանակ Հ. Աբրահամյանը Շաֆիգա խանումին հարցնում է. «Դու՞ք էլ եք մեկնում Բաքու», նա պատասխանում է, որ Բաքվի իրենց բարեկամները կանչել են. «Ամուսինս խոսել է Իսլամ մուալլիմի հետ, նա խոստացել է մեզ գումար տալ»<sup>57</sup>:

Իսլամ Մամեդովը կապանցիների բանավոր պատմություններում մինչև այժմ էլ հիշատակվում է որպես այդ դեպքերի կազմակերպիչներից մեկը. «Էդ Իսլամն էր դրանց ղեկավարը: Իսլամն ու բժշկական ուսումնարանի տնօրենը: Իրանք են կազմակերպել թուրքերի գնալը»<sup>58</sup>:

Ըստ կապանցիների, Իսլամ Մամեդովի անվան հետ է կապված հետևյալ պատմությունը.՝ «Ասում են, որ ինչ-որ կով են մորթել, արյունոտել են գնացքը, որ Բաքվում ցույց տան, թե հայերն իրենց հետ ինչպես են վարվել՝ ծեծել են,

<sup>55</sup> Հակոբյան 2008, 47:

<sup>56</sup> Աբրահամյան 2019, 70:

<sup>57</sup> Աբրահամյան 2019, 69-70:

<sup>58</sup> Նյութը մեզ է տրադրել Հ. Խառատյանը:

ջարդել են, ճնշել են»<sup>59</sup> կամ էլ՝ «Այդ արյունով ներկել են շորեր, հագուստներ... Իսլամն ա արել»<sup>60</sup>:

Գ. Սմբատյանի հուշագրության մեջ խոսվում է այն մասին, որ Ղափանից աղբրեջանցիների հեռանալը կազմակերպել են նրանց մտավորականները<sup>61</sup>: Հիրավի, տարբեր վկայություններ ցույց են տալիս աղբրեջանական դպրոցների ու մանկավարժների առնչությունները այդ իրադարձությունների հետ, օրինակ, Ղափանի աղբրեջանական դպրոցի ուսուցչուհիներից մեկը, որն ագրեսիվ ու սադրիչ պահվածքով էր իրեն դրսևորում Չանգելանում<sup>62</sup>: Ռ. Ղոնյանը նշում է, որ գնացքով հեռացածների մեջ էր նաև Ղափանի աղբրեջանական դպրոցի տնօրենի տղան:

Ըստ դաշտային նյութերի, կապանցիները պատմում են նաև, որ իրենց ծանոթ աղբրեջանցիների պատմելով՝ «մոլլան է ասել, որ գնան: Մոլլան ասել է՝ կգնաք, կասեք, որ հայերը մեզ հետ վատ են վարվում, մեզ ճնշում են»<sup>63</sup>:

Զմոռանանք, որ սումգայիթյան ջարդերին մասնակցել են նաև այդ օրերին հատուկ նպատակով Հայաստանից Սումգայիթ մեկնած այլ աղբրեջանցիներ, ինչպես, օրինակ, Կալինինոյի շրջանի Ղզլ Շաֆագ գյուղի բնակիչներից մեկը<sup>64</sup>: Վերոշարադրյալ իրողությունները ցույց են տալիս, որ այդ գործընթացները կազմակերպվել են Աղբրեջանից՝ իշխանությունների կողմից որոշակի շրջանակների ներգրավմամբ:

### **Սումգայիթ. «Ղափանը մեզ համար ծուղակ էր»**

«Ղափանը մեզ համար ծուղակ էր», - ըստ Ղոնյանի հիշողությունների, ասել է ԽՄԿԿ Կենտկոմի ներկայացուցիչ Կոնդրատևը, որը, ինչպես մոսկովյան մյուս ներկայացուցիչները, Ղափանից շտապ մեկնել է Սումգայիթ:

Իրականում, 1988 թ. փետրվարից սկսած, Ղափան քաղաքն ու համանուն շրջանը հանրապետական ու կենտրոնական իշխանությունների ուշադրության կենտրոնում էին: Միևնույն ժամանակ, հենց սկզբից և եթե՝ սումգայիթյան առաջին հանրահավաքում, փետրվարի 26-ից սկսած, խաղարկվում էր «ղափանյան» թեման՝ իր կիզակետին հասնելով «կտրված գլուխներով ու ձեռքերով» ժամանած գնացքի վերաբերյալ հայտարարություններից հետո: Բռնությունների մասին այդ սադրիչ քարոզչությունը մերկացրել է կենտրոնական մամուլը: Այդ առիթով «Социалистическая индустрия» պարբերականը գրում է, որ Սումգայիթում արված հարցումներով բացահայտվել է սադրիչ գործողությունների մի ամբողջական շղթա, որի նպատակն էր խուճապ,

<sup>59</sup> Նյուիթը տրամադրել է Հ. Խառատյանը:

<sup>60</sup> Հակոբյան 2008:

<sup>61</sup> Սմբատյան 2003, 10:

<sup>62</sup> Սմբատյան 2003, 10:

<sup>63</sup> Նյուիթը մեզ է տրամադրել Հ. Խառատյանը:

<sup>64</sup> Տե՛ս Гусейнова, Аюпян, Румянцев 2008, 112-113, Հակոբյան 2006-2007:

անվտանգություն ու դաժանություն սերմանել բնակչության մեջ: Այսպես, հրապարակում, հանրահավաքի ժամանակ մեկը պատմել էր Ղափանում հայերի «դաժանությունների» մասին հիստերիկ պատմություններ, որոնց իբր զոհ է գնացել իր ընտանիքը: Երբ իրավասու մարմինները զբաղվում են «տուժածով», պարզվում է, որ նա ոչ թե Ղափանի «խաղաղ բնակիչ» է, այլ նախկինում դատապարտված կրկնահանցագործ, առանց որոշակի բնակության վայրի<sup>65</sup>:

Այդ «փախստականները» ինչպես հանկարծակի երևացին, այնպես էլ հանկարծակի անհետացան Սումգայիթից, որոնցից ոչ մեկն էլ հետագայում չենթարկվեց պատասխանատվության, - գրում են լրագրողներ Ի. Բաբանովն ու Կ. Վոնոգակին<sup>66</sup>: Ինչպես ցույց է տվել հետաքննությունը, Ղափանից ոչ մի աղբրեջանցի այդ օրերին հանրահավաքներում ելույթ չի ունեցել<sup>67</sup>:

Այդ օրերին Ղափան-Սումգայիթ իրադարձությունների կապի ժխտմամբ հանդես էր գալիս նաև Աղբրեջանի պետական հեռուստատեսությունը<sup>68</sup>: Այս թեմային խորհրդային մեդիա անդրադարձը թերևս պայմանավորված էր այդ կապի վերաբերյալ կենտրոնական իշխանությունների հետաքննության արդյունքներով: Այսպես, Սումգայիթի գործի հետ կապված՝ Անդրկովկասյան զինվորական օկրուգի շտաբի պետի տեղակալ, գեներալ Վ.Ի. Դրեևի նախագահությամբ Ղափանում գործել է հանձնաժողով, որի «հաշվետվության մեջ անվերապահորեն ժխտվում է Ղափանում էթնիկական հողի վրա տեղի ունեցած որևէ դեպք»<sup>69</sup>:

ԽՍՀՄ գլխավոր դատախազի տեղակալ Ալեքսանդր Կատուսեն աղբրեջանական մամուլում 1988 թ. մարտին հայտարարել է, որ Սումգայիթում բռնությունների դրդապատճառը անհիմն լուրերն ու ասեկոսեներն էին, իսկ 1988 թ. օգոստոսի դեպքերը կապում 1988 թ. փետրվարին ԼՂԻՄ-ում տեղի ունեցած իրադարձությունների հետ<sup>70</sup>:

Ռ. Ղոնյանը հիշում է, որ Սումգայիթից հետո իրենից տեղեկանքներ ու տեղեկատվություն էին պահանջում շրջանից աղբրեջանցիների շարժի, աշխատանքից ազատվելու պայմանների ու միգրացիայի մասին, և միայն հետագայում է պարզ դառնում, թե ինչի համար:

Այս խնդիրների վերաբերյալ ուշագրավ վկայություն է տալիս այդ տարիներին Բաքվում ապրած Լ. Ադյանը. «Այդ օրերին հնամաշ պորտֆելը ձեռքին Ղափանից մեր խմբագրություն (Բաքու) եկավ Մուխտար Բախշալիևը՝ վաթսունն անց, երկար հովարով գլխարկը փոքրիկ գլխին, վիթխարի բոյով,

<sup>65</sup> Кулиш, Меликов 1988, март 27.

<sup>66</sup> Бабанов, Воеводский 1992, пр. 10:

<sup>67</sup> Коммунист, 9.01.1990.

<sup>68</sup> Коммунист, 9.01.1990.

<sup>69</sup> Бабанов, Воеводский 1992, Карабахский кризис, пр. 10.

<sup>70</sup> Бакинский рабочий, N 60, 3.12. 1988 и N 195, 19.08.1988.

նիհար մի մարդ: Պատմական թե բանասիրական գիտությունների թեկնածու՝ նա ոչ այն է՝ բուն Ղափանում, ոչ այն է՝ Ղափանի մոտ գտնվող գյուղերի դպրոցներից մեկում ուսմասվար էր, դոկտորական դիսերտացիա էր գրում, և դա էր պատճառը, որ շուտ-շուտ Բաքու էր գալիս»: Լ. Ադյանը ներկայացնում է իրենց զրույցը. «Մուխտար մուալլիմ, ազնվաբար ասեք, խնդրում եմ, - ասացի ես, - իրո՞ք Ղափանում ընդհարումներ են եղել հայերի և ադրբեջանցիների միջև, մարդ չգիտի, թե ում հավատա: Ըստ Սումգայիթում տարածված լուրերի ու նաև Օրուջ Հիդայաթովի<sup>71</sup> հոդվածի, այնտեղ, Ղափանում ադրբեջանցիներ են սպանվել: Ճի՞շտ է»: «Հացը սուրբ է ու ահա այս սուրբ հացով եմ երդվում, պատրաստ եմ նույնիսկ յոթ անգամ երդվել Ղուրանով, գնալ մեր բոլոր երեք սրբավայրերը՝ Մադինա, Մեքքա ու Էլլ-Քուդս, ձեր լեզվով՝ Երուսաղեմ, այսինքն, Ղափանում ոչ մի ադրբեջանցու սպանություն, ոչ մի բռնություն ադրբեջանցիների նկատմամբ չի եղել: Վալլահ-բիլլահ, սուտ է: Ասում են, իբր, ադրբեջանուհիների հանրակացարան է եղել Ղափանում, դա էլ է սուտ: Բաքվում հայ աղջիկների առանձին հանրակացարան կա՞, որ Ղափանում ադրբեջանուհիների նման հանրակացարան լինի: Այդպիսի ստերին ո՞նց կարելի էր հավատալ: ...Մեզ՝ Ղափանի մեծահասակ ադրբեջանցիներին համար շատ ամոթալի է, որ մեր անունն օգտագործելով, այդպիսի հրեշավոր բան կազմակերպվեց Սումգայիթում: Ձեզ ասեմ, նույնիսկ Սումգայիթի դեպքերից հետո մեր հանդեպ ոչ մի բռնություն չի եղել: Ջահել լակոտ-մակոտ մի երկուսի տուն, ասում են, զանգել են, ահաբեկել են, ես չգիտեմ, թե որքանով է դա ճիշտ: Ինձ, օրինակ, զանգող չի եղել: Բայց դա էլ եղել է Սումգայիթից հետո: Իսկ թե որևէ ադրբեջանցու Ղափանում մատով կպած լինեն՝ այս լույսն ինձ քոռացնի, թե ճիշտ չեմ ասում, էդպիսի բան չի եղել, սուտ է... Մեր երկու հարևան ժողովուրդներին թշնամացրին իրար, - շարունակեց նա, ամբողջ Խորհրդային Միության մեջ ոչ մի ժողովուրդ ոչ մի ժողովրդի հետ այնքան մոտ ու հարազատ չէր, ինչքան մեր երկու ժողովուրդներն էին, չկար մի հայ կամ ադրբեջանցի, որ դոստ ու քիրվա չունենար: Ափսոս, հազար ափսոս... ստոր մարդիկ, ինչպես միշտ, պատիժ չեն կրելու, ընդհակառակը՝ ավելի բարձր պաշտոններ են ստանալու: ...Ապշերոնի շրջկոմի առաջին քարտուղար Ջոհրաբ Մամեդովը մեր կողմերից է, նա էլ շատ մեղք ունի այս գործում: Երևանի ադրբեջանական թատրոնի դերասանների մեղքը նույնպես անասելի մեծ է Սումգայիթի սպանությունների մեջ: Այդ նրանք էին որպես տուժած ղափանցիներ հանդես գալիս Սումգայիթում, Օրուջ Հիդայաթովի ու Խըղըր

<sup>71</sup> Օրուջ Հիդայաթովը Երևանի ադրբեջանական թատրոնի նախկին տնօրեն, գրող, 1986-1992 թթ. ադրբեջանական «Գեոսկ» («Երիտասարդություն») հրատարակչության գլխավոր խմբագիր Հիդայաթ Օրուջեն էր: Ադյանը մեզ հետ զրույցում (18.07.2021) նշեց, որ ինքը գրքում անունը ձևափոխել է, քանի որ ծանոթ է եղել:

Ալովլու հատուկ սցենարով սարքած՝ չեղած բաներ պատմում, գրգռում ժողովրդին»<sup>72</sup>:

Բախշալիևը տալիս է երեք անուն: Դրանցից մեկը՝ Հիդայաթ Օրուջևը, Ադրբեջանում լույս տեսած, արդեն իսկ հիշատակված հոդվածի հեղինակն էր: Նա եղել էր նաև Երևանի ադրբեջանական թատրոնի տնօրենը, ուստի սում-գայիթյան հանրահավաքներին հուզականություն հաղորդելու նպատակով դերասանների մասնակցությունը տրամաբանական է: Լ. Ադյանը նշում է, որ հենց Հիդայաթ Օրուջևն էլ սումգայիթյան թատերական ներկայացումների կազմակերպման գործում ունեցած ծառայությունների համար կղառնար նախագահ Հեյդար Ալիևի օգնականը<sup>73</sup>:

Եվ պատահական չէ, որ Օրուջևը Հեյդար Ալիևի օրոք գործնական հաջողությունների է հասել: Ծնունդով Հայաստանից էր, Մեղրու շրջանի Մարալզամի գյուղից: Գրող, դրամատուրգ, թարգմանիչ և արձակագիր էր: Աշխատել է «Սովետ Էրմանիստան» թերթում, Հայկական մանկավարժական ինստիտուտում: Երկար տարիներ եղել է Երևանի ադրբեջանական թատրոնի տնօրենը: 1986-1992 Բաքվի Gənclik (Երիտասարդություն) հրատարակչության գլխավոր խմբագիրն էր: 1992-1993 թթ. Օրուջևը եղել է Ադրբեջանի նախագահի՝ ազգամիջյան հարաբերությունների հարցերով պետական խորհրդական, 1993-2006 թթ.՝ ազգային քաղաքականության հարցերով պետական խորհրդական, 2005-2006 թթ.՝ ազգային փոքրամասնությունների և կրոնական կազմակերպությունների հարցերով Ադրբեջանի նախագահի խորհրդական: 2006 թ. նշանակվել է Ադրբեջանի Հանրապետության կրոնական կազմակերպությունների հետ աշխատանքի պետական կոմիտեի նախագահ: 2012-2021 թթ. եղել է Դրողզատանում Ադրբեջանի դեսպան:

Մյուսը՝ Խըղըր Ալովլուն կամ Ալուևը, Սումգայիթի 25-րդ դպրոցի տնօրենն էր, ծնունդով նույնպես Հայաստանից, պոետ: Եղել է Հ. Ալիևի կուսակցության սումգայիթյան մասնաճյուղի ղեկավարը, այնուհետև՝ Սումգայիթի քաղաքային վարչակազմի ղեկավար, Միլի մեջլիսի պատգամավոր: Հակահայկական ընդգծված ելույթներ է ունեցել սումգայիթյան դեպքերի ժամանակ՝ «մահ հայերին» կոչերով: Ըստ Ադյանի հուշագրության, միտինգի ժամանակ ներկայացել է իբրև տուժած «ղափանցի»<sup>74</sup>:

Երրորդը՝ Ապշերոնի շրջկոմի առաջին քարտուղար Ջոհրաբ Մամեդովը: Թեև աղբյուրներում ու ադրբեջանական հանրային ընկալումներում նա «հիշատակվում է» որպես «հայաստանցի», սակայն պաշտոնական կենսագրության մեջ ծննդյան վայր է նշված ԼՂ-ին սահմանակից Թարթառի շրջանի Խորխուզ գյուղը, 1941 թ.: 1949 թ. գյուղը բնակեցվել է հիմնականում ՀԽՍՀ

<sup>72</sup> Ադյան 2018, 236-238:

<sup>73</sup> Ադյան 2018, 332:

<sup>74</sup> Ադյան 2018, 208:

Եղեգնաձորի ու Վայքի շրջանների ադրբեջանցիներով: Մամեդովը 1980-1985 թթ. եղել է Ղափանին սահմանակից Կուբաթլուի շրջկոմի առաջին քարտուղար, տեղափոխվել է Ապշերոն, որտեղ 1985-1990 թթ. զբաղեցրել է շրջկոմի առաջին քարտուղարի պաշտոնը: 1980-ական թթ. վերջերին հեռացվել է կոմկուսից (հնարավոր է՝ սումգայիթյան դեպքերին նրա դերակատարմամբ պայմանավորված), իսկ հետագայում պաշտոնավարում է Ադրբեջանի նախագահին կից Գլխավոր տեսչական մարմնում, ինչպես նաև Պետական գույքի կոմիտեում, զբաղվում է գործարարությամբ:

Շենց նրա՝ Ապշերոնի շրջկոմի քարտուղար եղած ժամանակ էլ ծավալվում են սումգայիթյան իրադարձությունները, որոնց ղափանյան հետքը ուղղակի կապ ունի այդ պաշտոնյայի ու Ապշերոնի շրջանի հետ: Նրա օրոք էր, որ 1984 թ. Ղափանի ու Կուբաթլուի միջև սահմանային միջադեպ տեղի ունեցավ: Ղափանի շրջկոմի առաջին քարտուղար Ռ. Ղոնյանը 1990 թ. հունվարի սկզբին, պատասխանելով «Коммунист» թերթի հարցերին ու վկայակոչելով Սումգայիթի հետ կապված մոսկովյան հետաքննության նյութերը, նշում է, որ 1987 թ. վերջերին և 1988 թ. սկզբներին Ղափանից սկսել են հեռանալ որոշ ադրբեջանցիներ: Նրանց տեղաշարժի հիմնական պատճառն այն էր, որ 1987 թ. դեկտեմբերին Ադրբեջանի ղեկավարության մի մասը մտադիր էր Ապշերոնի շրջանի չօգտագործված հողատարածությունները, որոնք ընկած են Բաքվի և Սումգայիթի միջև, բաժանել և օգտագործել արդյունաբերական ձեռնարկություններ ու բանջարաբուծական ընկերություններ հիմնելու համար: Այդ հարցը քննարկվել էր հանրապետության կուստնտեսական ակտիվում, և չնայած այդ մասին վերջնական որոշում չէր ընդունվել, սակայն Ապշերոնի շրջկոմի առաջին քարտուղար Զ. Մամեդովն անցնում է գործի՝ ձգտելով շրջանը փրկել լուծարումից<sup>75</sup>:

Հրաման է արձակվում չօգտագործված հողերի վրա ստեղծել սովխոզներ և կառուցել անհատական տներ: Այդ մասին 1988 թ. հունվարին մամուլում հայտարարություն է տարածվում, որտեղ նշված էր, թե այդտեղ բնակվողները կստանան արտոնություններ և առանձնատուն կառուցելու համար մինչև 40 հազար ռուբլի վարկ: Այդ լուրը հասել էր նաև Հայաստանում ապրող ադրբեջանցիներին, հայտարարությունները տարածվել են նաև ԶԼՄ-ում: Որպես հետևանք՝ Հայաստանից բավականին թվով ադրբեջանցիներ ցանկություն են հայտնում մեկնել Ադրբեջան, այնտեղ հողամասեր ստանալ և բնակարան կառուցել Բաքվի ու Սումգայիթի մոտակայքում: Այդ նպատակով 1988 թ. հունվարի 12-ից մինչև փետրվարի 15-ը Ղափանի շրջանից 100 ադրբեջանցիներ դուրս են եկել գրանցումից ու մեկնել<sup>76</sup>:

<sup>75</sup> Коммунист, 9.01.1990.

<sup>76</sup> Коммунист, 9.01.1990.



Ղոնյանը, որը կուսակցության գծով հաճախ էր լինում Բաքվում, մոտիկից գիտեր այդ խնդիրները ու նաև Ադրբեջանի ղեկավարության ներսում դրա հետ կապված լուրջ տարածայնությունների մասին: «...մինչև շարժումը, էստեղ՝ Ապշերոնի թերակղզու մոտ, իրենց պրոբլեմներն են ունեցել: [...] Հակասություն կար կառավարության, կենտրոնական կոմիտեի, գյուղի կոմիտեի... գյուղը ղեկավարող մարդկանց միջև, որոնք գտնում էին, որ չի կարելի էր տարածքները, [որոնք] գյուղատնտեսության զարգացման համար հեռանկարային հողակտորներ են [...] չի կարելի տալ այգեգործական ընկերություններին, այլ ընդհակառակը՝ պետք են նոր սովխոզներ, որոնք պետք է զարգացնել: ...էդպիսի հակասություն կար նրանց մոտ, և էն թևը, որ էդ ձգտումն ուներ, որը որ գտնում էր, որ գյուղատնտեսական նպատակների համար պետք է օգտագործել, նրանք կարողացել էին հասնել էդպիսի որոշումների: Միջոցներ, անհատական վարկեր էին տրամադրել մարդկանց, որոնք ցանկանում էին էդ ամայի տարածքներում, նոր ստեղծված սովխոզներում աշխատել և կառուցել բնակարաններ: Նույնիսկ Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի պլենումում էդպիսի ընդհարում է եղել, որ մի հատվածը՝ քաղաքային կոմիտեն, քաղաքային ղեկավարությունը պահանջում էին էդ հողակտորները թողնեն այգեգործության համար, և ընդհակառակը՝ գյուղի ղեկավարության աշխատողները, շրջկոմի քարտուղարներ բացահայտ ելույթ են ունեցել, դեմ են եղել, ասել են, որ սխալ որոշում է, քայքայում եք, չեք թողնում, որ գյուղատնտեսությունը զարգացնենք, ձեր դաշաների համար է, և այլն և այլն»<sup>77</sup>:

Ապշերոնում հաստատվել ցանկացողներին հողակտորներ էին տրամադրում, ժամանակավորապես տեղավորում նախկին բանակային զորանոցներում, ապահովում աշխատանքով, որի պատճառով էլ միգրացիոն հոսքը շարունակվում էր<sup>78</sup>: Այստեղ գալիս էին ոչ միայն Ղափանից, այլև Հայաստանի ու Ադրբեջանի տարբեր շրջաններից<sup>79</sup>:

1988 թ. փետրվարին, դարաբաղյան իրադարձությունների հետ կապված, հենց այդ ապշերոնյան միջավայրն էլ դառնում է կեղծ ու սադրիչ լուրերի տարածման օջախ, որի մասին, վկայակոչելով մոսկովյան հետաքննության արդյունքները, նշվում է Ղափանի շրջկոմի կազմած մի տեղեկանքում: ԽՍՀՄ դատախազության, կուսակցական, վարչական մարմինների հետաքննության շնորհիվ պարզվել է, որ 1988 թ. փետրվարի 25-27-ին Ղափանի շրջանից ադրբեջանցիների հեռանալուն առնչվող ասեկոսեների համար պատրվակ է եղել Ադրբ. ԽՍՀ Ապշերոնի շրջանում (որը Սումգայիթի մոտ է գտնվում), Ղափանի շրջանի նախկին բնակչության հավաքը (поводом для слухов был

<sup>77</sup> Հարցազրույց Ռ. Ղոնյանի հետ 2012, օգոստոս:

<sup>78</sup> Коммунист, 9.01.1990.

<sup>79</sup> Коммунист, 9.01.1990.

сбор в Апшеронском районе Азербайджанской ССР), որոնք գրանցումից դուրս էին եկել ու մեկնել այդտեղ հունվարի 12-ից մինչև փետրվարի 20-ը: Ադրբ. ԽՍՀ Ապշերոնի շրջանում այդ մարդկանց տրամադրվել էին աշխատանք, հողամաս և ժամանակավոր կացարաններ՝ նոր սովխոզներ կազմակերպելու նպատակով: Սակայն «հայտնի իրադարձություններից հետո» Ապշերոնի շրջանային ղեկավարությունը հրաժարվում է նրանց աշխատանքով ու կացարանով ապահովելուց և պահանջում է վերադառնալ նախկին բնակավայրեր, այն է՝ Հայաստան, զանգվածային դժգոհություններ հարուցելով: Հենց այդ բողոքներն են դառնում Ղափանում ադրբեջանցիների նկատմամբ իբր վատ վերաբերմունքի վերաբերյալ լուրերի առիթ<sup>80</sup>:

Ըստ էության, ապշերոնյան վերաբնակիչներին աշխատանք ու կացարան տրամադրելուց հրաժարվելով և պահանջելով, որ վերադառնան Հայաստան՝ ադրբեջանական իշխանությունները նպատակ ունեին նրանցից «փախստականներ կերտել» ու հակահայկական տրամադրությունների գործիք դարձնել, ինչի մասին վկայում են հետագա իրադարձությունները: Այդ մասին ուղղակի նշում է Ադրբեջանի ժողովակառուցի հիմնադիրներից ու հասարակական գործիչ Ջարդուշտ Ալիզադեն՝ մեջբերելով Սումգայիթի քաղկոմի առաջին քարտուղար Մուսլիմ Ջադեհին, ըստ որի՝ Ապշերոնի շրջկոմի առաջին քարտուղար Զ. Մամեդովն էր կազմակերպում ավտոբուսային շարասյուները, որոնք ապշերոնյան «ղափանցիներին» տանում էին սումգայիթյան ուսանողական ու բանվորական հանրակացարաններ՝ հակահայկական տրամադրություններ հարուցելու<sup>81</sup>: Նա ընդգծում է դրա նպատակային լինելը, քանի որ Ադրբեջանի ԿԿ, Մինիստրների խորհուրդ գնալու ու բողոքելու փոխարեն, դրանք ուղղվում էին Սումգայիթ, և երբ ինքն արգելեց դրանց մուտքը քաղաք, արդեն ուշ էր<sup>82</sup>: Ըստ էության, այստեղ դեր ունեին նաև Ապշերոնի շրջկոմի ու Սումգայիթի քաղկոմի միջև հիշյալ հողատարածքների հեռանկարի հետ կապված հակասությունները:

Ադյանը բերում է մի ադրբեջանցի տաքսու վարորդի վկայությունը. «Ապշերոնի քարտուղար Զոհրաբ Մամեդովը Հայաստանից եկած փախստականներին ամեն առավոտ ավտոբուսներ լցրած ուղարկում էր Սումգայիթ ցուցերի: Հատուկ նպատակով, իհարկե: Ինքս եմ քանի անգամ տեսել ավտոբուսներով մարդկանց»<sup>83</sup>:

Եվ քանի որ Ապշերոնի շրջանի ղեկավար Զ. Մամեդովը, մինչ այդ եղել էր Ղափանին սահմանակից Կուբաթլուի շրջկոմի քարտուղարը, բնականա-

<sup>80</sup> ՀԱԱ, ֆ. 16, ց. 38, գ. 18, թ. 5: Справка о деятельности Кафанского РК КП Армении по выполнению решений XXVII съезда КПСС.

<sup>81</sup> Агаев, Али-Заде 2006, 310.

<sup>82</sup> Агаев, Али-Заде 2006, 310.

<sup>83</sup> Ադյան 2018, 262:

բար, համապատասխան կապեր ունենալու նաև Ղափանի շրջանի ադրբեջանցիների հետ, ինքն էր կազմակերպում այդ ամենը:

### **Եզրակացություններ**

«Ղափանյան» թեման սումգայիթյան բռնությունների գաղափարախոսական առանցքներից էր: Այն ոչ թե տարերային բնույթ ուներ, այլ կազմակերպվել ու ներդրվել էր հատուկ նպատակով՝ Սումգայիթից առաջ մամուլի հրապարակմամբ, «ղափանցիների» անունից Ադրբեջանի կուսակցական ֆունկցիոներների կազմակերպած բողոք-հեռագրերով, որոնց հետևանքով, փետրվարից սկսած, Ղափանը հայտնվել էր Կրեմլի խոշորացույցի տակ, ինչպես նաև Ապշերոնում հաստատված հայաստանցի, մասնավորապես ղափանցի ադրբեջանցիներից «փախստական կերտելու» և դա տարածելու ադրբեջանական իշխանական միջոցառումներով: Մնացած ամեն ինչից բացի, սա իր հերթին վկայում է այդ առումով նույնպես սումգայիթյան դեպքերի կազմակերպված լինելու մասին:

Մինչ սումգայիթյան իրադարձությունները Ղափանը կեղծ բողոքներով թիրախավորելու ադրբեջանական ֆունկցիոներների քաղաքական նպատակը սկիզբ առած Ղարաբաղյան շարժմանը քաղաքական հակակշիռ ստեղծելն էր, որը ոչ միայն թիրախավորում էր Ղափան քաղաքն ու Ղափանի շրջանը, այլև դառնում «երևակայական բռնության» արտահանման օջախ, որը մարմանավորվում է Սումգայիթում՝ դառնալով որպես մեկ այլ հակակշիռ: «Ղափանի դեպքերի» հետ կապված գործընթացը ձևավորվում ու զարգանում է Ադրբեջանում: Կեղծ բողոքներին հաջորդում են կեղծ լուրերն ու ասեկոսեները, որոնք ծագում ու զարգանում են Ադրբեջանում, հիմնականում Ապշերոնի շրջանում, ապա փոխադրվում Ղափանի ադրբեջանցիների միջավայր՝ ձևավորելու կեղծ փախստականության երևույթը: Այդ երևույթի կրողն են դառնում նաև դեռևս մինչ հակամարտությունը աշխատանքային միգրացիայի հետևանքով Ադրբեջանում, Բաքվի հարակից տարածքներում հաստատված ղափանցի ադրբեջանցիները:

Գործընթացների կազմակերպման ընթացքը վերաբերում է ոչ միայն կեղծ լուրերին, այլև կոնկրետ գործողություններին, որոնք պետք է ապահովեին դրանց «ճշմարտացիությունը», օրինակ՝ ադրբեջանական երկաթուղու Ղափան-Բաքու գնացքով ադրբեջանցիների որոշակի մասի հեռանալը Ղափանից սումգայիթյան դեպքերի նախօրյակին և Սումգայիթում հայկական վայրագությունների ներկայացումը: Այս ծրագիրը ձախողվում է, «փախստական ադրբեջանցիները» Սումգայիթ չեն հասնում, բայց սցենարը պատրաստ էր, և հենց առաջին սումգայիթյան հանրահավաքում բեմադրվում է «Հայաստանում՝ Ղափանում հայերի կողմից կտրված գլուխների, բռնաբարված և առևանգված հարյուրավոր ադրբեջանուհիների» և այլ ահասարսուռ թեմաներով ներկայացումը:

Այս գործընթացում ընդհանուր առմամբ ընդգրկված էին հայաստանյան ծագում կամ Ղափանի/Մեղրու հետ կապեր ունեցող ադրբեջանական կուսակցական կամ հանրային ֆունկցիոներները: Մեծ դեր էին խաղում նաև Ադրբեջանի ղեկավարության ներսում առաջացած՝ ապշերոնյան տարածքի հեռանկարներին առնչվող խմբերի լուրջ տարածայնությունները: Այդ ֆունկցիոներների շրջանակը հարում էր ալիևյան խմբավորմանը և հետագայում Հ. Ալիևի օրոք կարիերայի վերելք է ունենում:

«Ղափանյան դեպքերի» պաշտոնականացման առաջին փորձերը ադրբեջանական իշխանությունները կատարել են 1990 թ. Բաքվի ջարդերի ժամանակ, իսկ արդեն դարաբաղյան հակամարտության մաս են դառնում նույն 1990 թ. Վ. Պոլյանիչկոյի գլխավորած ԼՂ հանրապետական կազմկոմիտեի և Ադրբեջանի կոմկուսի կազմած հակամարտության ժամանակագրության միջոցով:

Հետագայում կեղծ «ղափանյան դեպքերը» տիրաժավորվում են Ա. Յունուսովի և Թ. դը Վաալի կողմից՝ հագեցվելով նոր անհիմն և հակասական «նկարագրություններով» ու «փաստերով»՝ ձևավորելով դարաբաղյան հակամարտության ու ժամանակագրության կեղծ պատում:

### **Օգտագործված գրականություն**

- Աբրահամյան Հ. 2019, Խորհրդային Հայաստանը համազգային պայքարի տարիներին (1988-1990 թթ.), Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 384 էջ:
- Աղամյան Ն. (խմբ.) 1988, Հայկական ՍՍՀ վարչա-տերիտորիալ բաժանումը, Երևան, «Հայաստան», 211 էջ:
- Աղյան Լ. 2018, Հեռացող եզերք, Երևան, «Հաշ ընդ հաշ փրինթ», 340 էջ:
- Ավանզարդ 1988, մարտի 6, Վերադառնում են հարազատ օջախ:
- Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 10, ց. 2, գ. 43:
- ՀԱԱ, ֆ. 16, ց. 38, գ. 21, թ. 68-69:
- ՀԱԱ, ֆ. 16, ց. 38, գ. 18, թ. 5. Справка о деятельности Кафанского РК КП Армении по выполнению решений XXVII съезда КПСС:
- Հակոբյան Ա. 2006-2007, Դաշտային ազգագրական նյութեր (ԴԱՆ), գ. Ջյունաշող:
- Հակոբյան Ա. 2008, ԴԱՆ, Կապան, օգոստոս:
- Հակոբյան Ա. 2012, Հարցազրույց Ռ. Ղոնյանի հետ, օգոստոսի 30:
- Հակոբյան Թ. 2008, Թ. «Կանաչ ու սև». արցախյան օրագիր, Երևան-Ստեփանակերտ, Ա.Հ., 584 էջ:
- Ղափան 1988, 5.03, ՀԿԿ Ղափանի շրջանային կոմիտեի և ժողովրդական դեպուտատների Ղափանի շրջանային ու քաղաքային սովետների օրգան:
- Ղափան 1988, 10.03, ՀԿԿ Ղափանի շրջանային կոմիտեի և ժողովրդական դեպուտատների Ղափանի շրջանային ու քաղաքային սովետների օրգան:
- Շահմուրադյան Ա. 1988, Հատուցման շեմին. դատարանի դահլիճից, Գրական թերթ, 28.10:
- Շահմուրադյան Ա. 1988, Հատուցման շեմին. դատարանի դահլիճից, Գրական թերթ, 4.11:
- Շահմուրադյան Ա. 2003, Մեր քաղցր հողը, Երևան, «Առերեսում»-Անի, 96 էջ:

- Ամրատյան Գ. 2003, Հարյուրամյա պատերազմ... Օրեր և մարդիկ, Երևան, «Չանգակ»-97, 247 էջ:
- Агаев Р., Али-Заде З. 2006, Азербайджанская элита и массы в период распада СССР (Статья-мемуары о бурном времени), Москва, «Граница», 310 с.
- Атанесян Г., Зейналов М. 2020, Как Азербайджан и Армения распространяют теории заговора о Карабахском конфликте, 02.26, <https://www.bbc.com/russian/features-51549094> (ներբերումն օրը՝ 26.09.2023).
- Бабанов И., Воеводский К. 1992, Карабахский кризис, СПб., Санкт-Петербургский комитет гуманитарной помощи Карабаху, <https://nashasreda.ru/i-babanov-k-voevodskij-karabaxskij-krizis/> (ներբերումն օրը՝ 26.09.2023).
- Бакинский рабочий 1988, N 60 (12.03).
- Бакинский рабочий 1988, N 195 (19.08).
- Беккер, А. 1987, У прошлого в плену, газета Сельская жизнь, N 294 (12.24), Москва.
- Бунятов З. 1989, Почему Сумгаит?, Элм, 05.13, еженедельник Академии наук Азербайджанской ССР. сб. Азербайджанская аргументация и ее опровержение, Ереван, ЕГУ, с. 21-26.
- Гусейнова С., Акопян А., Румянцев С. 2008, Кызыл-Шафаг и Керкендж: история обмена селами в ситуации Карабахского конфликта, Тбилиси, Heinrich Böll Stiftung South Caucasus, 148 с.
- Зулфугаров Т., Тосоев Р. (отв. за вып.) 1990, Хроника НКАО: февраль 1988 - февраль 1990: Брошюра республиканского комитета по НКАО Азербайджанской ССР о событиях в Нагорном Карабахе 1988-1990 гг., Баку, «Коммунист», 41 с.
- Источник (Вестник архива президента Российской Федерации 1995, N 6), О массовых беспорядках с 1957...», с. 146-153.
- Коммунист (газета) 1990, Что было в Кафане и как это стараются преподнести, N 7 (09.01) Ереван.
- Кривопусков В. 2007, Мятёжный Карабах. Из дневника офицера МВД СССР. Издание второе, дополненное, Москва, «Голос-Пресс», 384 с.
- Кулиш О., Меликов Д. 1988, Черным семенам не прорасти, газета «Социалистическая индустрия», 27.03.
- Мелик-Шахназаров А. 2009, Нагорный Карабах: факты против лжи. Информационно-идеологические аспекты нагорно-карабахского конфликта, Москва, «Волшебный фонарь», 242 с.
- Родина 1994, журнал, Заседание политбюро ЦК КПСС, 29 февраля 1988 года, N 4, с. 82-90.
- Тогоева О. 2012, Почему нас привлекают исторические «секреты», 21.12, <https://postnauka.org/longreads/5402/> (ներբերումն օրը՝ 02.07.2024).
- Улубабян Г., Золян С., Аршакян А. (сост.) 1989, Сумгаит...Геноцид...Гласность?, Ереван, Общество «Знание», 63 с.
- Юнусов А. 1991, Погромы в Армении в 1988-1989 годах, газета «Экспресс-Хроника», N 9, Москва.
- Юнусов А. 1998, Армяно-азербайджанский конфликт: демографический и миграционные аспекты, журнал Центральная Азия и Кавказ, N 16, [https://ca-c.org.ru/journal/1998/16-1998/st\\_10\\_junusov.shtml](https://ca-c.org.ru/journal/1998/16-1998/st_10_junusov.shtml) (ներբերումն օրը՝ 27.09.2023).
- Юнусов А. 2006, Он-лайн интервью с Арифом Юнусовым, [https://openarmenia.am/profile/3460-%D0%B0%D1%80%D0%B8%D1%84-%D1%8E%D0%BD%D1%83%D1%81%D0%BE%D0%B2/content/?type=forums\\_topic\\_post](https://openarmenia.am/profile/3460-%D0%B0%D1%80%D0%B8%D1%84-%D1%8E%D0%BD%D1%83%D1%81%D0%BE%D0%B2/content/?type=forums_topic_post) (ներբերումն օրը՝ 27.09.2023).

- De Waal T. 2003, Black Garden: Armenia and Azerbaijan through Peace and War. New York University Press, New York and London, 390 p.
- Kucera J. 2018, Baku Embraces Conspiracy Theory Blaming Armenians for Own Pogrom, EurasiaNet, 02.22, <https://eurasianet.org/baku-embraces-conspiracy-theory-blaming-armenians-for-own-pogrom> (ներբերման օրը՝ 26.09.2023).
- Trend.az 22.02.2018, Armenian provocation to blame Azerbaijanis in Sumgayit events - senior investigator. <https://en.trend.az/azerbaijan/politics/2864140.html> (ներբերման օրը՝ 26.09.2023).

## МИФ О «КАПАНСКИХ СОБЫТИЯХ» В ПРЕДСУМГАИТСКОМ, СУМГАИТСКОМ И ПОСТСУМГАИТСКОМ РАЗВИТИИ

Арсен Акопян

### Резюме

«Капанские события» или «истории азербайджанских беженцев» из армянского города Капан являются одной из идеологических основ армянских погромов в Сумгаите (Азербайджан) 27-29 февраля 1988 года.

«Капанские события», непосредственно предшествовавшие сумгайтским погромам, были организованы коммунистическими функционерами Азербайджанской ССР от имени «азербайджанцев Капана» и осуществлены при помощи сфабрикованных слухов, телеграмм – жалоб и т.п. С этой целью власти Азербайджана ввели в оборот образ азербайджанских «беженцев» из Армении, в частности из Капана, которые теми же властями, еще до конфликта, были приглашены в Азербайджан с целью их поселения в Апшеронском районе на льготных условиях и с предложением получить жилье, землю и прочее для развития сельского хозяйства региона.

Организовав этот процесс на основе неподтвержденных слухов и жалоб, власти Азербайджана попытались создать политический противовес Карабахскому движению, сформировавшемуся в Армении и в Нагорно-Карабахской автономной области. Между тем, расследования по этому делу, инициированные и проведенные Кремлем в феврале 1988 года и позднее, показали, что в 1987-1988 годах в Капане не имели место преследования в отношении местных азербайджанцев.

Распространение фейковых новостей и слухов было поддержано властями Азербайджана, в частности, в Апшеронском районе. За всем этим стояли партийные функционеры, сделавшие карьеру в годы президентства Гейдара Алиева.

**Ключевые слова** – Сумгаит, Нагорный Карабах, Советская Армения, Азербайджан, Капан, насилие, погром.

---

**THE MYTH OF "KAPAN EVENTS" IN PRE-SUMGAIT, SUMGAIT AND  
POST-SUMGAIT DEVELOPMENTS**

Arsen Hakobyan

## Abstract

"Kapan events" or "stories of Azerbaijani refugees" from city of Kapan, Armenia were one of the ideological pillars of the Armenian pogroms in Sumgait, Azerbaijan on February 27-29, 1988. "Kapan events" were organized and implemented for a special purpose, with fabricated telegrams of complaints preceding the Sumgait pogroms and orchestrated by the Communist functionaries of Azerbaijani SSR on behalf of "Azerbaijanis from Kapan". For that purpose, Azerbaijani authorities created "refugees" out of Azerbaijanis from Armenia, particularly from Kapan, which were invited by the same authorities to settle in Absheron region earlier (before the start of the conflict), with a promise to receive housing, land and other things for the development of the region's agriculture.

With organizing this process, Azerbaijani authorities aimed at creating political counterbalance to the Karabakh Movement that had just commenced in Armenia and Nagorno Karabakh Autonomous Oblast. The investigation into the matter initiated and implemented by the Kremlin in February 1988 and later, showed that no persecutions of local Azerbaijanis took place in Kapan in 1987-1988.

Fabricated complaints, fake news and rumors were backed by the Azerbaijani authorities and originated in Azerbaijan, mainly in the Absheron region. Behind those activities were functionaries whose career was on the rise during Heydar Aliyev's presidency.

**Key words** – Sumgait, Nagorno Karabakh, Soviet Armenia, Azerbaijan, Kapan, Violence, pogroms.

# ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ՄԵՐՕՐՅԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

## Միեր Հարությունյան

Պատմական գիտությունների թեկնածու  
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ  
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4  
Էլ. հասցե՝ hamher@yandex.ru  
ORCID: 0000-0002-0719-8860

## Հայկ Հարությունյան

Հայաստանի ազգային ագրարային համալսարան  
ՀՀ, Երևան, Տերյան 74  
Էլ. հասցե՝ hayk33817@gmail.com  
ORCID: 0009-0009-5937-1854

Հոդվածը ներկայացվել է 09.11.2023, գրախոսվել է 25.06.2024, ընդունվել է տպագրության 02.08.2024  
DOI: 10.53548/0320-8117-2024.2-96

### Ամփոփում

Արցախի Հանրապետության դեմ ադրբեջանաթուրքական ագրեսիայի 2016 և 2020 թվականների ռազմարշավների ռազմագիտական վերաիմաստավորման ու վերլուծության հիման վրա Պաշտպանության բանակի նորոգյա պատմության ուսումնասիրությունը թելադրված է դրա վերաբերյալ օբյեկտիվ ճշմարտությունը համաշխարհային գիտական համակարգում և ՀՀ-ի ու սփյուռքի մեր հայրենակիցների հասարակական գիտակցության մեջ ամրագրելու, ինչպես նաև պետական կառավարման ու ռազմական շինարարության ոլորտներում թույլ տրված սխալների շտկման ուղիների առաջադրման անհրաժեշտությամբ:

Պաշտպանական-անվտանգային ոլորտում գիտատեսական, գիտակիրառական ռազմավարական հետազոտությունների, գիտահրատարակչական, փորձագիտական և համապատասխան այլ գործունեության իրականացումը կարևոր է համապետական հիմնախնդիրներին լուծումներ գտնելու տեսակետից:

ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարությանը, այդ թվում՝ Անվտանգության խորհրդին տարածաշրջանային անվտանգության դինամիկայի վերաբերյալ ռազմավարական պիլոտային հետազոտությունների արդյունքների, դրանց հիման վրա համապատասխան առաջարկների ներկայացումը պետք է նպատակաուղղված լինի 2020 թ. նոյեմբերի 9-ի զինադադարի և 2023 թ. սեպտեմբերի 19-ի ուկրաինա-ադրբեջանական աղետաբեր հետևանքներից բխող մարտահրավերներին դիմագրավելու և պաշտպանական-անվտանգային միջավայրի հուսալիության ու արդյունավետության բարձրացման հնարավորությունների տեսական ու գործնական հիմնավորումները գիտականորեն ձևակերպելուն:

**Բանալի բառեր՝** ադրբեջանաթուրքական ագրեսիա, բռնի տեղահանություն, պաշտպանական-անվտանգային միջավայր, հիբրիդային պատերազմ, աշնանային ռազմարշավ, ռազմական շինարարություն, զինված ուժեր:



### **Ներածություն**

2020 թ. սեպտեմբերի 27-ի ադրբեջանաթուրքական ագրեսիայի և Արցախի Հանրապետության (ԱՀ) ինքնիշխան տարածքի շուրջ 75 տոկոսի բռնազավթումից, այնուհետև 2023 թ. սեպտեմբերին արցախցիների բռնի տեղահանությունից հետո ՀՀ-ն հայտնվել է անվտանգային-պաշտպանական բարդագույն մարտահրավերների առաջ: Լրջորեն վտանգված է հայկական պետականությունը: Թշնամին անթաքույց ձգտում է ամրապնդել ագրեսիվ պատերազմի անընդունելի հետևանքները: Հայկական պետականությունը վերացնելու և հայ ժողովրդի ցեղասպանությունն ավարտին հասցնելու ակնհայտ նպատակներով Ադրբեջանը Թուրքիայի բացահայտ աջակցությամբ ՀՀ-ի դեմ անդադար մղում է հիբրիդային պատերազմ, որի կարևորագույն ճակատներից է տեղեկատվական-քարոզչական արշավը: Հետևողականորեն խեղաթյուրվում են թուրք-հայկական հակամարտության էությունն ու կերպարը, կեղծվում է պատմությունը, և շինծու փաստարկներ են գեներացվում շրջանառելու համար: Ավելի քան երբևէ հրատապ է դարձել գիտության, մշակույթի, տեղեկատվության ու քարոզչության ոլորտներում թշնամու ոտնձգությունների դեմ համակարգված ու անդադրում պայքարելը՝ ճշմարտությունը թիրախային խմբերին հասցնելու և օբյեկտիվ հասարակական կարծիք ձևավորելու համար:

Արցախի Հանրապետության դեմ ադրբեջանաթուրքական ագրեսիայի 2016 և 2020 թվականների ռազմարշավների ռազմագիտական վերաիմաստավորման ու վերլուծության հիման վրա Պաշտպանության բանակի նորօրյա պատմության ուսումնասիրությունը թելադրված է դրա վերաբերյալ օբյեկտիվ ճշմարտությունը համաշխարհային գիտական համակարգում և ՀՀ-ի ու սփյուռքի մեր հայրենակիցների հասարակական գիտակցության մեջ ամրագրելու, ինչպես նաև պետական կառավարման ու ռազմական շինարարության ոլորտներում թույլ տրված սխալները շտկելու ուղիների առաջադրման անհրաժեշտությամբ:

### **Ուսումնասիրության նպատակը և խնդիրները**

Հոդվածում հիմնավորվում է ՊԲ-ի նորօրյա պատմությունն ուրվագծելու, մանավանդ 2016 թ. գարնանային և 2020 թ. աշնանային ռազմարշավների առանձնահատկությունների վերհանմամբ Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի զավթողական պատերազմի ռազմագիտական տեսանկյունները վերլուծելու արդիականությունը:

Այդ նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1) ագրեսիայի դիմած և պաշտպանվող կողմերի ուժերի հարաբերակցության համապատկերի վրա ներկայացնել Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի՝ 2016-2020 թթ. միջոցառումների արդյունքների

ընդհանրացման կարևորությունն այդ ժամանակաընթացքում՝ ռազմական շինարարության արդյունավետությունը գնահատելու համար:

2) 2016 և 2020 թթ. ռազմարշավների տարբեր փուլերում կողմերի կիրառած մարտավարության, ռազմարվեստի այլ տարրերի օգտագործման առանձնահատկությունների համեմատության միջոցով կարևորել ՊԲ-ի ձեռքբերումների ու բացթողումների վերլուծությունը,

3) ռազմական գործողությունների նախապատրաստման և վարման տեսության ու պրակտիկայի սկզբունքներին կողմերի մոտեցումների զուգակշռությամբ ցույց տալ ՊԲ-ի մարտավարության գնահատման պահանջված լինելը,

4) 2016 և 2020 թթ. ռազմարշավներին նախորդած ռազմաքաղաքական և ռազմավարական իրադրության, ինչպես նաև ստեղծված սպառնալիքների համալիր գնահատման հիման վրա հաստատել զինված հակամարտությունների սանձազերծման և դրանց ընթացքում մարտական գործողությունների վարման ռազմագիտական տեսանկյունները քննելու, ՊԲ-ի զորատեսակների ու խմբավորումների ձևավորման, ԱՀ ՁՈՒ-ի կազմակերպվածքի<sup>1</sup> ու տեխնիկական զինվածության ցուցանիշները համադրելու անհրաժեշտությունը,

5) թեմայի մասին հնարավորինս լիակատար մատենագիտություն կազմելու և գիտահետազոտական հիմնահարցերի շրջանակը հստակեցնելու միջոցով ներկայացնել թեմայի հետագա ուսումնասիրությունները խթանելու նպատակահարմարությունը:

6) մասնագիտական հանդեսներում և (կամ) առանձին ու կոլեկտիվ մենագրություն(ներ)ում սկզբնավորել գիտահետազոտական աշխատանքների արդյունքների հրատարակման, անհրաժեշտության դեպքում՝ ռազմական և պաշտպանական-անվտանգային խնդիրներով զբաղվող այլ գերատեսչություններին կամ հիմնարկներին փակ (զաղտնի) զեկույցներ ներկայացնելու հրատապ գործընթացը:

### **Թեմայի ուսումնասիրվածության աստիճանը**

Հրատարակված ու մեր հայթայթած գրականության տեսությունը հնարավորություն է ընձեռում որոշարկելու ՊԲ-ի 2016-2020 թթ. պատմությունը գիտահետազոտական նյութ դարձնելու անհրաժեշտությունը դրա ոչ բավարար ուսումնասիրվածության համապատկերում:

<sup>1</sup> Այնպիսի կառուցվածք, որի դեպքում ապահովվում են ՁՈՒ-ի առավել նպատակահարմար կազմը, զորատեսակների և զինատեսակների առավել օպտիմալ հարաբերակցությունն ու զուգակցումը, բարձր մակարդակի մարտական պատրաստությունը և մարտական գործողություններ վարելու կարողությունը (Զիլինգարյան, Երզնկյան 2015, 279):

2016 թ. գարնանային ռազմարշավի վերախմաստավորման, ռազմագիտական վերլուծության նպատակով հրատարակված աշխատանքները<sup>2</sup> որոշակի գիտական հիմքեր են ստեղծել հետագա ուսումնասիրությունների համար:

2016 թ. գարնանային ռազմարշավի վերաբերյալ ՊԲ մամուլի ծառայության հաղորդագրությունները և տեղեկատվական նյութերն ի պաշտոնե հավաքել ու հրատարակել է Ս. Հասրաթյանը<sup>3</sup>:

Ադրբեջանի բռնապետական վարչախմբի 2016 թ., ինչպես նաև 2020 թ. ձեռնարկած հերթական ագրեսիվ գործողություններին լրատվամիջոցների անդրադարձներին են նվիրված մի շարք հոդվածագիրների հետազոտությունները<sup>4</sup>:

2016 թ. ապրիլին մղված պաշտպանական ծանր մարտերում ՊԲ զինծառայողների սխրագործությունների մասին թարմ հետքերով գրել<sup>5</sup>, իսկ հետագայում առանձին մենագրության համապատասխան գլխում<sup>6</sup> անդրադարձել է նաև պատմաբան Մ. Հարությունյանը:

2016 թ. և հետագա ռազմարշավների լուսաբանման տարբեր տեսանկյուններից ելնելով՝ մասնագետները<sup>7</sup> բացահայտել են իրականության կանխակալ ներկայացման, փաստերի միակողմանի մեկնաբանության միտումները մի շարք, հատկապես ադրբեջանաթուրքական տանդեմի շահերը սպասարկող հեղինակների հրապարակումներում:

Իբրև դրական երևույթ՝ կարելի է նշել այն փաստը, որ 2016 թ. գարնանային ռազմարշավի թեման դարձել է հետազոտական աշխատանքի նյութ<sup>8</sup> և ընդհանրացվել առանձին հերոսների օրինակով<sup>9</sup>:

Այդ շրջանի մարտական գործողություններին ու դրանց ռազմաքաղաքական տեսանկյուններին են նվիրված պարբերական մամուլի բազմաթիվ հրապարակումները<sup>10</sup>:

2020 թ. աշնանային ռազմարշավի թեմայով գրքերում<sup>11</sup> ու գիտական հոդվածներում<sup>12</sup> լուսաբանվում են ադրբեջանաթուրքական ագրեսիայի աշ-

<sup>2</sup> Խաչատրյան 2016(Բ), մաս I, մաս II, մաս III, Մինասյան 2016, 22-24, Հովհաննիսյան Ա. 2017, 448-464, Էբրակյան 2018, 84-92, Պողոսյան 2018, 93-100, В ожидании бури: Южный Кавказ 2018, 71-79, 155-167:

<sup>3</sup> Հասրաթյան 2017:

<sup>4</sup> Զոհիրաբյան 2017, 122-131, Մենենշյան 2018, 103-110, Ղարիբյան, Գասպարյան 2021, 3-20:

<sup>5</sup> Հարությունյան 2016(Ա), Հարությունյան 2016(Բ), Հարությունյան 2016(Գ), Հարությունյան 2016(Դ), Հարությունյան 2016(Ե), Հարությունյան 2016(Զ), Հարությունյան 2016(Է), Հարությունյան 2016(Ը):

<sup>6</sup> Հարությունյան 2021(Գ), 167-172:

<sup>7</sup> Люктерхандт 2022, 136-163, Mkrtchyan 2023, 17-22.

<sup>8</sup> Սահակյան Ս. 2022:

<sup>9</sup> Հարությունյան Լ. 2021:

<sup>10</sup> Հովհաննիսյան 2016, Խաչատրեան Մ. 2016(Ա):

<sup>11</sup> Հայաստան-2016. չներտած դասեր 2016, Մնացականյան Վ. 2017, Буря на Кавказе 2021, Փոթորիկ Կովկասում 2022, Բաղդասարյան 2023:

<sup>12</sup> Սարգսյան 2016, 135-145, Մնացականյան 2018, 40-49, Սարգսյան 2021, 47-63, Հակոբյան 2022, 47-61, Թորոսյան 2021, Հարությունյան 2021(Ա), 40-64, Հարությունյան 2021(Բ), 213-224, Հարությունյան 2022(Ա), 80-101, Հարությունյան 2022(Բ), 42-45, Петросян 2023, 20-24:

խարհաքաղաքական, ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական, մարդասիրական, իրավական և այլ տեսանկյունները: Արդեն իսկ լայն շրջանառության մեջ են զանազան հրատարակություններ<sup>13</sup>, որոնք մեծ մասամբ նվիրված են զոհված ազատամարտիկներին և տեղավորվում են դիմանկարի (ակնարկի) ժանրում<sup>14</sup>: Հետաքրքիր տեղեկություններ կարելի է գտնել հուշագրություններում<sup>15</sup>, օրագրություններում<sup>16</sup> կամ այդ ժանրերին մոտ հրատարակություններում<sup>17</sup>:

Հայ ժողովրդի լավագույն զավակների հերոսական պայքարը թշնամու մեծաքանակ ուժերի դեմ արտացոլվել է «Հայրենյաց քսանամյա նվիրյալները» մատենաշարում<sup>18</sup> և անհատական<sup>19</sup> ու կոլեկտիվ<sup>20</sup> հրատարակություններում:

2020 թ. ադրբեջանաթուրքական ագրեսիայի նախօրեին ՀՀ և ԱՀ ռազմական ներուժի ու ռուս-հայկական հարաբերությունների, Հայաստանում ՌԴ ռազմական ներկայության վերաբերյալ որոշակի տեղեկություններ են հաղորդել Յու. Լյամինը<sup>21</sup> և այլ ուսումնասիրողներ<sup>22</sup>:

Պատերազմի առանձին դրվագներ իրենց արտացոլումն են գտել լուսանկարների գիրք-ալբոմներում<sup>23</sup> ու արվեստի գործերի ժողովածուներում<sup>24</sup>:

Պատերազմն արտացոլվել է նաև գեղարվեստական բնույթի ստեղծագործություններում<sup>25</sup>, որոնք կարող են պարունակել փաստագրական ճշգրտումներ կատարելու համար պիտանի տեղեկություններ:

<sup>13</sup> Մնացականյան 2021, Նավոյան 2021, Մելքունյան 2021, Ալեքսանյան 2021, Բադալյան 2021, Օնֆրե 2021:

<sup>14</sup> Երդվյալները 2021, Խաչատուրյան 2021, Հակոբյան 2021, Հարությունյան Ա. 2021, Հրետանավորը 2021, Հարությունյան Պ. 2021, Երդվյալները 2022, Բարսեղյան 2022, Կարապետյան 2022, Հարությունյան Ն. 2022, Սահակյան Մ. 2022, Գրիգորյան 2023:

<sup>15</sup> Սահակյան 2021, Սողոմոնյան 2021, Քեոսայան 2021, Աբրահամյան, Գասպարյան, Աբրահամյան 2022, Ավավերյան 2022, Մելքոնյան 2022, Պետրոսյան 2022, Նանե 2023, Եղիազարյան 2023 և այլն:

<sup>16</sup> Հակոբյան 2021(Ա), Հակոբյան 2021(Բ), Պողոսյան 2021, Վանյան 2020:

<sup>17</sup> Ազգային հերոսը. Վաչագան Մանուկյան 2021, Ասրյան 2022, Միքայել. Կյանքս՝ հայրենիքին, հոգիս՝ Աստծուն 2022, Տոնոյան-Սարգսյան 2023:

<sup>18</sup> Ավետիսյան 2021, Նիկողոսյան 2022(Ա), Նիկողոսյան 2022(Բ):

<sup>19</sup> Շահինյան 2021(Ա), Շահինյան 2021(Բ), Սահրադյան 2021, Շահինյան 2022, Մուշեղյան, Ասատրյան 2022, Պետրոսյան 2022, Վարդխաթունյան 2022:

<sup>20</sup> «Ձեզ բացակա չենք դնի» 2021, Պետրոսյանց 2021, Վարդանյան, Բաբուջյան 2021, Պետրոսյանց 2022, Պապոնց Առաքելյան 2022, Ավանեսյան 2022, Վարդանյան, Բաբուջյան 2023, Պապոնց Առաքելյան 2023:

<sup>21</sup> Союзники 2020, 9-29.

<sup>22</sup> В ожидании бури: Южный Кавказ 2018, 11-79, հմմտ. Պետրոսյան 2021:

<sup>23</sup> Արզումանյան սրկ. 2021, Դավիթ Թորոսյան. 44-ի տղերքը 2022, Խաչատրյան 2023, Սյունմեզ 2022, Արցախ. անավարտ պատերազմ 2023:

<sup>24</sup> Ես եմ, ես կ'մ 2022:

<sup>25</sup> Հնչող ձայներ 2021, Ամատունի 2022, Բեզլարյան 2021, Գրիգորյան 2021, Մելիքբեկյան 2023, Մխչյան 2022(Ա), Մխչյան 2022(Բ), Զիբուխյան 2022(Ա), Զիբուխյան 2022(Բ), Սայիյան 2021, Սարիբեկյան 2022(Ա), Սարիբեկյան 2022(Բ), Սարիբեկյան 2022(Գ), Սարիբեկյան 2022(Դ), Սարիբեկյան 2023, Վարոսյան 2023:

**ՊԲ 2016-2020 թթ. պատմության ուսումնասիրության անհրաժեշտությունը**

ԱՀ ՊԲ-ի կազմավորման, մարտական ուղու և կազմալուծման հանգամանքներին հայ պատմագրությունն անդրադարձել է մասամբ, թեմատիկ գրականությունը վերաբերում է հիմնականում 1991-1994 և 2016 թվականների ռազմարշավներին ու բանակաշինության գործընթացին<sup>26</sup>: Հազվագյուտ աշխատանքներ կան Արցախի Հանրապետությունում 1991-2016 թթ. ռազմական շինարարության վերաբերյալ<sup>27</sup>: Իսկ 2020 թ. աշնանային ռազմարշավից մինչև 2023 թ. աշնանային ռազմարշավը հիմնականում արտացոլված են զանգվածային տեղեկատվության միջոցներում (էլեկտրոնային ու եթերային): 2023 թ. սեպտեմբերի 19-ի ադրբեջանական հերթական ագրեսիայից հետո ԱՀ-ում ոչնչացվել են ՊՆ արխիվային նյութերը, պետական կառույցների ու հիմնարկ-ձեռնարկությունների գործավարության փաստաթղթերը: Այս տխուր փաստը կասկածի տակ է դրել ընդհանրապես ԱՀ-ի, մասնավորապես ՊԲ-ի պատմությունը սկզբնաղբյուրների հիման վրա գիտականորեն ուսումնասիրելու հեռանկարը: Ուստի ներկայումս խիստ անհրաժեշտ է անհապաղ ձեռնամուխ լինել առանձին անհատների մոտ մնացած վավերագրերի, նյութերի հավաքմանը, համակարգմանը և հրատարակմանը՝ հետագա ուսումնասիրությունների համար գիտական հիմքեր ստեղծելու նպատակով:

Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի զավթողական պատերազմի ռազմագիտական տեսանկյունները 2016 թ. ապրիլի 2-ի և 2020 թ. սեպտեմբերի 27-ի ագրեսիաների օրինակներով ուսումնասիրելը պահանջված և պայմանավորված է 2020 ու 2023 թթ. աշնանային ռազմարշավների հետևանքով բարդացած մարտահրավերները և ստեղծված ծանր իրավիճակի դժվարությունները հաղթահարելու ուղիների տեսական մշակումների ու գործիքակազմի ձևավորման վերաբերյալ հիմնավոր ու կիրառական նշանակության առաջարկությունների ներկայացման անհրաժեշտությամբ: Այդ նպատակով պաշտպանական-անվտանգային ոլորտում գիտատեսական, գիտակիրառական ռազմավարական հետազոտությունների, գիտահրատարակչական, փորձագիտական և համապատասխան այլ գործունեության իրականացումը կարևոր է համապետական հիմնախնդիրներին լուծումներ գտնելու տեսակետից:

ՀՀ-ում ռազմական գիտության և ռազմական տեսության, այդ թվում՝ ռազմարվեստի ու ռազմական պատմագիտության զարգացմանը կարող են նպաստել համաշխարհային ռազմական գիտության, ռազմական տեսության, ռազմարվեստի զարգացման ու ռազմապատմական գիտության նվա-

<sup>26</sup> Հարությունյան 2024, 10-18, 340-402:

<sup>27</sup> Հասրաթյան 2017, Հարությունյան 2024:

ճումներին հաղորդակից լինելը, առավել ևս՝ սեփական ռազմական անվտանգության ապահովման և ռազմական անվտանգության համակարգի կատարելագործման հույժ կարևոր գործում դրանք կիրառելու արդյունավետ եղանակների հատկանշումն ու տարածումը:

Հանրային գիտակցության վրա արագ տեմպերով զարգացող տեղեկատվական տեխնոլոգիաների ունեցած ակնհայտ ազդեցությամբ հանդերձ, կարծում ենք, որ մարդկային ու տարածքային սահմանափակ ռեսուրսներով այնպիսի երկրների համար, ինչպիսիք ՀՀ-ն ու ԱՀ-ն են, ոչ բարեկամ հարևանների կամ հավանական այլ հակառակորդների հետ նախ ռազմապաշտպանական-անվտանգային ներուժի ու հնարավորությունների հաշվեկշռի, ապա նաև՝ նրանց նկատմամբ ռազմական գերազանցության հասնելու համար անհրաժեշտ են գիտատեսական մշակումներ՝ հզոր տնտեսության, գիտելիքատար հիմքերի վրա կառուցված կրթության, գիտատեխնիկական առաջընթաց ապահովելու արդյունավետ ուղիներ գտնելու նպատակով: Միաժամանակ, դրանց տեսական հիմքերի վրա անհետաձգելի պաշտպանական բարեփոխումները նպատակաուղղված պետք է լինեն հակառակորդի զինված ուժերի համեմատ ՀՀ զինված ուժերի մարտունակության ու մարտավարության գերազանցության ապահովմանը, զինված ուժերում ՀՀ-ի պետական անվտանգության առանձնահատկություններին լիարժեքորեն համապատասխանող չափանիշների ստեղծումն ու ներմուծումը՝ առաջնորդվելու և կենսագործելու հստակ գործիքակազմով ու ժամանակացույցով: Ստեղծված իրավիճակում պետք է նորովի հետազոտվեն պետության պաշտպանության գործառույթի բաղադրիչները և դրա իրագործման հիմնական մեթոդաբանությունը: Դիտարկելով պաշտպանության ոլորտի կառավարման ներկայիս կարգավորումները՝ անհրաժեշտ է նաև ուրվանշել պաշտպանության ոլորտի կառավարման բարեփոխումների հնարավորությունները, հիմնական դերն ու նշանակությունը անվտանգային ու ռազմաքաղաքական հիմնախնդիրների լուծման գործընթացում:

Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարությանը, այդ թվում՝ Անվտանգության խորհրդին տարածաշրջանային անվտանգության դինամիկայի վերաբերյալ ռազմավարական պիլոտային հետազոտությունների արդյունքների, դրանց հիման վրա համապատասխան առաջարկների ներկայացումը պետք է նպատակաուղղված լինի 2020 թ. նոյեմբերի 9-ի զինադադարի և 2023 թ. սեպտեմբերի 19-ի ուխտադրուժ ագրեսիայի աղետաբեր հետևանքներից բխող մարտահրավերներին դիմագրավելու և պաշտպանական-անվտանգային միջավայրի հուսալիության ու արդյունավետության բարձրացման հնարավորությունների տեսական ու գործնական հիմնավորումները գիտականորեն ձևակերպելուն:

**Թեմայի ուսումնասիրության գիտաճանաչողական ու իմացաբանական նշանակությունը, ելակետային հասկացությունները**

Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի 2016-2020 թթ. պատմության հնարավորինս լիարժեք վերաիմաստավորման համար անհրաժեշտ է վեր կանգնել հակառակորդի քարոզչամեքենայի ներգործության տակ հայտնված զանգվածային տեղեկատվության միջոցների, առանձին ռազմաքաղաքական գործիչների ու նրանց մեքենայաբար կրկնող ուսումնասիրողների ակնհայտ միակողմանի դրոյթներից և քարոզչական կադապարներից՝ հիմք ընդունելով միմիայն փաստերն ու իրականության օբյեկտիվ ընկալումը: Այս առումով, կարծում ենք, անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալ իրողությունները:

2020 թ. ադրբեջանաթուրքական ագրեսիան Արցախի Հանրապետության դեմ ուղեկցվել է միջազգային ահաբեկիչների զանգվածային ներգրավման, ռազմական ու ցեղասպանության հանցագործությունների բազմաթիվ դրսևորումներով: Օգտվելով թագավարակի և աշխարհաքաղաքական բարդ զարգացումների հետևանքով իր համար ստեղծված նպաստավոր պայմաններից և այն հանգամանքից, որ Արցախի Հանրապետությունը և նրա անվտանգության երաշխավոր Հայաստանի Հանրապետությունը պատրաստ չէին նոր սերնդի պատերազմին՝ ադրբեջանցի զավթիչները բռնազավթեցին մեր հանրապետության շուրջ 75 տոկոսը, ցեղասպանական գործողություններով ու էթնիկական զտումների միջոցով հայաթափեցին 121 համայնքներ և ստիպեցին Հադրութի, Ասկերանի, Շահումյանի, Քաշաթաղի, Շուշիի, Մարտունու, Մարտակերտի և այլ շրջանների բնակիչներին (նրանցից շատերին՝ կրկնակի ու եռակի անգամ) բռնագաղթել իրենց հայրենի օջախներից:

Ադրբեջանաթուրքական ագրեսիան աղետալի հետևանքներ ունեցավ Արցախի Հանրապետության համար և նոր մարտահրավերներ նետեց տարածաշրջանի անվտանգային միջավայրին ու կայունությանը: Ի տարբերություն 1994 թ. մայիսյան զինադադարի, որը կանգնեցրեց Ադրբեջանի սանձազերծած ագրեսիվ-նվաճողական պատերազմը Արցախի Հանրապետության ու Հայաստանի Հանրապետության դեմ և ուժերի հաշվեկշռի արդյունք էր, 2020 թ. աշնանը Ադրբեջանի կողմից ստատուս քվոյի խախտումը երկար, անորոշ ժամանակով հետաձգել է հակամարտության կարգավորման հնարավորության իրացումը, խորացրել հակամարտության կողմերի հակասությունները և տարածաշրջանային անվտանգության համար սպառնալիքներ ստեղծել: Ակնհայտ սպառնալիքներից էին ագրեսիվ արտաքին քաղաքականություն վարող ու Մերձավոր Արևելքի մի շարք երկրներ զինված ներխուժում կատարած Թուրքիայի հայտնվելը մեր տարածաշրջանում և Ադրբեջանի ագրեսիվ-նվաճողական հավակնությունները խրախուսելն ու այդ երկրին անվերապահորեն աջակցելը:

Պատերազմի հետևանքով ստեղծված իրադրությունն անընդունելի է, քանի որ այն հակասում է ուժի կիրառման անթույլատրելիության միջազգային սկզբունքին, Ադրբեջանի ու Թուրքիայի ագրեսիվ-զավթողական քաղաքականության շարունակությունն է և վտանգում է հայկական պետության իսկ գոյությունը:

Ադրբեջանի ագրեսիվ վարքը նախադեպ է ստեղծում ուժի գործադրմամբ քաղաքական նպատակներին հասնելու հնարավորության ու հայտնի միջազգային սկզբունքների նկատմամբ չգրված այդ սկզբունքի գերակայության պատրանքներ առաջացնելու համար:

Հակառակ Արցախի Հանրապետության դեմ ադրբեջանաթուրքական պատերազմն ավարտված համարելու քաղաքական ու ռազմական որոշ գործիչների գայթակղությանը, հաճախակի են տեղի ունենում կամ այդպես էլ չեն դադարել հիբրիդային պատերազմի դրսևորումները: Մեր տարածաշրջանի վերջին չորս տարիների ռազմաքաղաքական քրոնիկոնը գալիս է փաստելու, որ 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունը զինադադարի վերաբերյալ պատերազմի ավարտի մասին պատրանքներ ունենալու որևէ հիմք չի տալիս մանավանդ հայկական կողմերին: Այդուհանդերձ, քիչ չեն այն գործիչները, որոնք կամա թե ակամա հայտնվել են թշնամու քարոզչական-դիվանագիտական նոր ծուղակում և մեքենայորեն կրկնում են պատերազմն ավարտվելու մասին Ադրբեջանի ու Թուրքիայի միակողմանի պնդումները:

ԱՀ-ի և ՀՀ-ի դեմ շարունակվող հիբրիդային պատերազմի հետևանքով 2023 թ. սեպտեմբերին արցախցիները տեղահանվեցին իրենց բնօրրանից: ԱՀ-ի անվտանգության երաշխավորի դերը ստանձնած Հայաստանը կանգնած է նույնիսկ սեփական անվտանգությունն ապահովելու և ՀՀ-ի սահմանները ներխուժած ադրբեջանցի զավթիչներին դուրս շարտելու բարդությունների առաջ: Ադրբեջանն ու Թուրքիան աներևակայելի կերպով շահավետ դիրքերով ու պայմաններով են դուրս եկել իրենց իսկ սանձազերծած նվաճողական պատերազմի հերթական փուլից, ուստի պատերազմն ավարտված են համարում, այսինքն, ամեն կերպ, այդ թվում՝ սահմանագծման ու սահմանազատման, ինչպես նաև Հայաստանին մտացածին միջանցք բացելու քաղաքական օրակարգ պարտադրելու եղանակով ձգտում են ամրագրել, իրավական տեսք տալ զավթողական պատերազմի՝ բոլոր առումներով անընդունելի հետևանքներին: Իսկ հայկական կողմերի համար պատերազմը չի ավարտվել, քանի դեռ նշված և այլ մարտահրավերներ հաղթահարված չեն, մանավանդ վերականգնված չէ Արցախի Հանրապետության տարածքային ամբողջականությունը և միջազգայնորեն դեյուրե ճանաչված չէ նրա՝ անկախ պետության կարգավիճակը, իրացված չէ տեղահանված արցախցիների՝ հայրենի եզերք վերադառնալու անկապտելի իրավունքը:



### Գիտական ներուժը

ՊԲ-ի 2016-2020 թթ. գործունեության գիտական ուսումնասիրության արդյունավետության գրավական կարող են լինել ոլորտի հիմնախնդիրներին քաջատեղյակ մասնագետների նպատակային հետազոտությունները, որոնց հիմնադրույթները որոշակիորեն արտահայտվել են գիտական հրապարակումների, գիտահետազոտական աշխատանքների ու դրանց՝ գիտական շրջանառության մեջ դրված արդյունքներում, մասնագիտական խորհրդատվություններում, հեղինակավոր գիտնականների և ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի, ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի<sup>28</sup>, Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի, «Արարատ» ռազմավարագիտական կենտրոնի, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի (Ցանցային հետազոտական ինստիտուտի) և ուսումնական ու գիտահետազոտական այլ հանրահայտ հաստատությունների հետ համագործակցությամբ: Թեմայի ուսումնասիրության կարևոր գործում անհրաժեշտ է ներգրավել գիտահետազոտական, իմացական ու գործնական կարողությունների բավարար ներուժ ունեցող, անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների արդյունավետ օգտագործման հմտությունների տիրապետող, գիտակրթական համագործակցության ու ինտեգրման, գիտական արդյունքների կիրառման և ֆինանսական միջոցների ռացիոնալ տնօրինման գործում փորձառու գիտնականների, որոնք մասնակցել են ՀՀ և ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների կազմակերպած գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական հետազոտական նախագծերի մրցույթներին և ՀՀ ԲՈԿ-ի սահմանած պայմանները բավարարող ամսագրերում, տարեգրքերում և ժողովածուներում հրատարակել են գիտագործնական նշանակության աշխատանքներ: Լայնածավալ աշխատանք ունեն կատարելու ռազմական թեմատիկայով մասնագիտացած լրագրողներն ու բանասերները՝ խնդիր ունենալով հարցազրույցներ վարելու պատերազմի մասնակիցների ու ականատեսների հետ, մշակելու և համակարգելու ԶՏՄ-ներից հայթայթված տեղեկությունները, այդպիսով լրացնելու գաղտնագրծված փաստաթղթերի և որևէ կարևոր տեղեկույթի պակասը:

Խնդրո առարկա թեմայի ուսումնասիրությունների արդյունավետությունը պայմանավորված է նաև նյութատեխնիկական ապահովվածությամբ,

<sup>28</sup> Ձևավորվել է 2023 թ. սեպտեմբերին ՀՀ ՊՆ ռազմաուսումնական հաստատությունների՝ Մ. Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան-ուսումնարան համալիրի, ԲԶԲՈՒ-ի (այժմ՝ ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարան), ՀՀ ՊՆ ռազմասպիացիոն ուսումնական կենտրոնի (այժմ՝ Ա. Խանփեդյանցի անվան ռազմավիացիոն համալսարան) միաձուլմամբ:

գիտական գործունեության իրականացման համար անհրաժեշտ սարքերի, սարքավորումների կամ այլ միջոցների առկայությամբ:

Միջազգային գիտակրթական տարածքում ինտեգրվելու հնարավորությունները սահմանափակվում են այն թեմայի առանձնահատկություններով, որն ունենալով յուրատեսակ մասնագիտական ուղղվածություն և հանրայնացման ոչ ենթակա կիրառելիություն՝ ըստ էության, չի տեղավորվում միջազգային կամ օտարերկրյա պետությունների (գիտական կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների) կողմից դրամաշնորհների կամ այլ ֆինանսական միջոցների տրամադրման հարթակներում: Նպատակահարմարության համատեքստում նման արհեստական խոչընդոտները հաղթահարելու միջոց կարող են դառնալ ցանկալի թեմատիկայով ու օրակարգով միջազգային գիտաժողովների, աշխատանքային խորհրդակցությունների (համաժողովների) կամ փաստաթղթային ձևով հաստատված գիտական այլ միջոցառումների կազմակերպումը կամ դրանց հնարավորինս ներկայացուցչական լայն մասնակցության ապահովումը:

Ջանքեր պետք է գործադրել ապահովելու հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների բաղադրիչը, որը համապատասխանում է գիտության միջազգային արդի մակարդակին և պիտանի է հանրապետության պաշտպանական-անվտանգային համակարգի համար:

Խնդրո առարկա թեմայով գիտական հրատարակությունները, համապատասխանելով հանրապետության գիտության զարգացման գերակա ուղղություններին (օրինակ՝ պետական, նամանավանդ՝ ռազմական շինարարությանը, ազգային անվտանգությանը և այլն), պահանջված են պաշտպանական-անվտանգային հիմնախնդիրներին լուծումներ գտնելու համար: Ակնհայտ է, որ առանց ռազմագիտության զարգացման հնարավոր չէ լուծել պետության պաշտպանական-անվտանգային համալիրի առաջ ծառայած հիմնախնդիրները, պետությունը պատրաստել պաշտպանության և ճշգրտորեն որոշել ռազմական շինարարության ու ռազմարվեստի ռազմավարությունը, նոր սերնդի պատերազմի մարտավարության հիմնական ուղղությունները:

### **Եզրակացություններ**

Այսպիսով, ավելի քան ակնհայտ է ՊԲ-ի նորօրյա պատմությունն ուրվագծելու, մանավանդ 2016 թ. գարնանային և 2020 թ. աշնանային ռազմարշավների առանձնահատկությունների վերհանմամբ Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի զավթողական պատերազմի ռազմագիտական տեսանկյունները վերլուծելու արդիականությունը:

Այդ նպատակով ներկայացվել է ագրեսիայի դիմաձև և պաշտպանվող կողմերի ուժերի հարաբերակցության համապատկերի վրա Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի 2016-2020 թթ. միջոցառումների

արդյունքների ընդհանրացման կարևորությունը այդ ժամանակաշրջանում ռազմական շինարարության արդյունավետությունը գնահատելու համար:

2016 և 2020 թթ. ռազմարշավների տարբեր փուլերում կողմերի կիրառած մարտավարության, ռազմարվեստի այլ տարրերի օգտագործման առանձնահատկությունների համեմատությամբ ՊԲ-ի ձեռքբերումների ու բացթողումների վերլուծությունը հնարավորություն կընձեռի ամբողջացնել այդ ժամանակամիջոցում Արցախի Հանրապետությունում կատարված ռազմական շինարարության արդյունավետության և նպատակասլացության մասին մեր պատկերացումները:

Ռազմական գործողությունների նախապատրաստման և վարման տեսության ու պրակտիկայի սկզբունքներին կողմերի մոտեցումների զուգակշռմամբ ՊԲ-ի մարտավարության գնահատումը կարող է լինել ռազմագիտական մտքի զարգացածության ու գործնականում կիրառման արդյունավետության ցուցիչը:

2016 և 2020 թվականների ռազմարշավներին նախորդած ռազմաքաղաքական և ռազմավարական իրադրության, ինչպես նաև ստեղծված սպառնալիքների համալիր գնահատման հիման վրա զինված հակամարտությունների սանձազերծման և դրանց ընթացքում մարտական գործողությունների վարման ռազմագիտական տեսանկյունների քննումը, ՊԲ զորատեսակների ու խմբավորումների ձևավորման, ԱՀ ՁՈՒ-ի կազմակերպվածքի ու տեխնիկական զինվածության ցուցանիշների համադրումը կբացահայտեն 2020 թ. աշնանային ռազմարշավում և ՀՀ-ի ու ԱՀ-ի դեմ ադրբեջանաթուրքական տանդեմի վարած հիբրիդային պատերազմում հայկական կողմերի անհաջողությունների խորքային պատճառները:

Թեմայի մասին հնարավորինս լիակատար մատենագիտություն կազմելու և գիտահետազոտական հիմնահարցերի շրջանակը հստակեցնելու միջոցով հնարավոր է նոր շունչ հաղորդել հետագա ուսումնասիրություններին:

Ստեղծված իրավիճակում, երբ Ադրբեջանը սպառնում է ագրեսիվ պատերազմի աշխարհագրության ընդլայնմամբ և հայկական պետականության նկատմամբ էքսպանսիոնիստական նկրտումներով, ՀՀ պաշտպանական-անվտանգային համակարգի կատարելագործմանը նվիրված գիտահետազոտական աշխատանքների արդյունքների հրատարակումը մասնագիտական հանդեսներում և առանձին ու կոլեկտիվ մենագրություններում, իսկ անհրաժեշտության դեպքում ռազմական և պաշտպանական-անվտանգային խնդիրներով զբաղվող այլ գերատեսչություններին կամ հիմնարկներին փակ (զաղտնի) զեկույցների ներկայացումը պահանջված են ծառայած հիմնախնդիրներին անհապաղ լուծումներ գտնելու առումով:

**Օգտագործված գրականություն**

- Աբրահամյան Ե., Գասպարյան Ա., Աբրահամյան Ն. 2022, Հուշեր, փառք հերոսներին, էջեր կյանքից (Արցախյան երկրորդ գոյամարտ), Երևան, «Լուսակն», 128 էջ:
- Ազգային հերոսը. Վաչագան Մանուկյան 2021, Մանուկյան Խ. (կզմ.), Փաստեր, հուշեր, վկայություններ, Երևան, «Արմավ», 215 էջ:
- Ալավերդյան Ա. 2022, Փրկության արահետով (Հուշագրություն), Երևան, «Ղիշա», 71 էջ:
- Ալեքսանյան Ա. 2021, Թիկունքում, Մ. Հովհաննիսյան (խմբ.), Երևան, հեղ. հրատ., 215 էջ:
- Ամատունի Ռ. 2022, Իշխան. Արա լեռան հավերժ զինվոր, Լ. Մարգարյան (խմբ.), Երևան, հեղ. հրատ., 72 (+XVI) էջ:
- Ասրյան Ա. 2022, Պատերազմն իմ աչքերում, Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս», 96 էջ:
- Ավանեսյան Դ. 2021, Արծվազարդ երկինք, Երևան, հեղ. հրատ., 64 էջ:
- Ավանեսյան Ե. 2022, Վախենալ չկա, նահանջ չկա, Ա. Մելքումյան (խմբ.), Երևան, «Մեկնարկ», 38 էջ:
- Ավետիսյան Մ. 2021, Սարովանի հերոս զավակը (Հայրենյաց քսանամյա նվիրյալները. 3. Հակոբ Արայիկի Հարությունյան), Երևան, «Սպիկա», 99 էջ:
- Արզումանյան սրկ. Ռ. 2021, Հանուն իմ կյանքի: Արցախյան 44-օրյա պատերազմում Տավուշի նահատակված զավակները (Ալբոմ), Ա. Ավանեսյան (խմբ.), Երևան, «Տա-Հույս», 130 էջ:
- Արցախ. անավարտ պատերազմ 2023, Դավիթ Ղահրամանյան (լուսանկ. հեղինակ), Հ. Ավագյան (կզմ.), Գաբրիելյան Ա. (խմբ.), Համազգային հայ կրթական և մշակութային միություն, Երևան, «Ոսկան երևանցի», 132 էջ:
- Բաղայան Ն. 2021, 44 զարկի զարկերակներ, Երևան, հեղ. հրատ., 120 էջ:
- Բաղդասարյան Մ. 2023, Աղետ (44-օրյա պատերազմի պատմություն), Ա. Խառատյան (խմբ.), Ազատագրում. 13, Երևան, հեղ. հրատ., 378 էջ:
- Բարսեղյան Մ. 2022, Մարտում անմահացածները... Վլ.Ջ. Ստեփանյան (խմբ.), Երևան, «Գիտություն», 173 էջ:
- Բեգլարյան Հ. 2021, Խեղված ողնաշարը երկրի, Ա. Նիկողոսյան (խմբ.), Երևան, «Անտարես», 226 էջ:
- Գրիգորյան Գ. 2021, Սևուսպիտակ կազմով գիրքը, Ս. Ղազարյան (խմբ.), Երևան, հեղ. հրատ, «Մագաղաթ պլյուս», 119 էջ:
- Գրիգորյան Ռ. 2023, Իմ որդին գնում է պատերազմ (պատմություն), Մոսկվա, Армянский музей Москвы и культуры наций, 64 էջ:
- Դավիթ Թորոսյան. 44-ի տղերքը 2022, (Ֆոտոալբոմ), Դ. Թորոսյան (լուսանկարիչ), Գասպարյան Ա. (խմբ.), Երևան, «Թումո Դիզայն» ՍՊԸ, 784 էջ:
- Եղիազարյան Ա. 2023, Բժիշկ Հարություն. Իմ զինվորներին ե՛ս եմ պետք, Կ. Չոբանյան (խմբ.), Երևան, «ՎՄՎ-Պրինտ», 129 (+20 նրդ.) էջ:
- Ես եմ, ես կ'մ 2022 (Պատկերագիրք): Գեղանկար, քանդակ, գրաֆիկա = It's me, iexist. Paintings, sculptures, graphics, Ա. Բաղդասարյան (թարգմ.), Դ. Գասպարյան (խմբ.), Համազգային հայ կրթական և մշակութային միություն, Երևան, «Տիգրան Մեծ», 59 էջ:
- Երդվյալները 2021, Արզումանյան Վ. (խմբ.), մաս 1, Երևան, «Ղիշա», 101 էջ:
- Երդվյալները 2022, Արզումանյան Վ. (խմբ.), մաս 2, Երևան, «Ղիշա», 118 էջ:
- Զոհրաբյան Ե. 2017, Ապրիլյան պատերազմի լուսաբանումը միջազգային լրատվամիջոցներում, Հայագիտության հարցեր, N 3, էջ 122-131:
- Էլբակյան Է. 2018, ՊԲ 23524 զորամասի մասնակցությունը 2016 թ. ապրիլյան պատերազմին (ԵՊՀ ռազմավարական հետազոտությունների ԳՀ լաբորատորիա, Տեղեկատվական

- անվտանգության կենտրոն), «Ստրատեգ», Տարեկան ամփոփիչ հանրապետ. գիտա-  
ժողովի հողվածների ժողով., N 1, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 84-92:
- Թորոյան Տ. 2021, 2020 թ. պատերազմ. նախադրյալները, հետևանքները և աղետի հաղթա-  
հարման հնարավորությունները, 50 էջ, <https://www.luys.am/img/artpic/small/17421d60c00deb> (ներբեռնման օրը՝ 29.06.2024):
- Խաչատրեան Մ. 2016(Ա), Քառօրյա պատերազմ, «Ազգ» օրաթերթ, N 14, 15.04.2016 թ.,  
<https://archive.azg.am/AM/2016041516> (ներբեռնման օրը՝ 03.11.2023):
- Խաչատրյան Մ. 2016(Բ), Արցախի 2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմը և պատե-  
րազմների էվոլյուցիան, «Անդին» (գրական-գեղարվեստական, հասարակական-  
քաղաքական ամսագիր), Մաս I, N 4, ապրիլ, էջ 104-115, Մաս II, N 5, մայիս,  
էջ 114-117, Մաս III, N 6, հունիս, էջ 108-116:
- Խաչատրյան Մ. 2022, Հավերժության ճանապարհին, Մ. Գևորգյան (խմբ.), Հ. Հակոբյան  
(սրբ. և առաջաբ. հեղ.), Գյումրի, «Էլդորադո», 91 էջ:
- Խաչատրյան Շ. 2023, Ռոմանտիկ խաղաղապահը: Գիրք-ալբոմ: Հուշապատում,  
Ա. Ավագյան (խմբ. և վերստ. սրբագր.), Վանաձոր, «Օրին» տպարան, 256 էջ:
- Խաչատրյան Լ. 2021, Եղեք ձեր լավագույն տարբերակը (գիրքը արցախյան երկրորդ  
պատերազմում անմահացած Գագիկ Խաչատրյանի մասին է), Լ. Քալաշյան  
(խմբ.), Երևան, «Մեկնարկ», 82 էջ:
- Կարապետյան Ա. 2022, Երկնքի ժպիտները, հ. 1-ին, Մ. Ավագյան (խմբ.), Երևան, հեղ.  
հրատ., 144 էջ:
- Հակոբյան Ա. 2022, 1920 թ. թուրք-հայկական և 2020 թ. արցախյան 44-օրյա պատե-  
րազմների պատմահամեմատական զուգահեռներ, Լրաբեր հասարակական գի-  
տությունների, N 2, էջ 47-61:
- Հակոբյան Դ. 2021, Մխիթարը: Անհավատալի երազ, Հ. Խաչատրյան (խմբ.), Երևան,  
«Գիտություն», 124 էջ:
- Հակոբյան Թ. 2021(Ա), Մահվան հովիտ, 44-օրյա աղետ. 27 սեպտեմբեր - 10 նոյեմբեր,  
2020: Լրագրողի օրագրից, Երևան, «Լուսակն», 359 էջ:
- Հակոբյան Թ. 2021(Բ), Կանաչ ու սև: Արցախյան օրագիր: 2020-ի հայկական աղետը,  
չորրորդ հրատ., Երևան, «Լուսակն», 515 էջ:
- Հայաստան-2016. չտրտած դասեր 2016, Մանվել Սարգսյան (գիտ. խմբ.), Ռազմավարական և  
ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, Երևան, ՌԱՀՀԿ, 230 էջ:
- Հասրաթյան Ս. 2017, Ապրիլյան քառօրյա առճակատում (Արցախ. 02 - 05.04.2016 թ.),  
Տ. Առուշանյան (խմբ.), Երևան, «Տիգրան Մեծ», 168 էջ:
- Հասրաթյան Ս. 2017, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բա-  
նակ, երրորդ հրատ., Երևան, «Տիգրան Մեծ», 324 էջ:
- Հավերժի ճամփորդ Դավիթ Խլղաթյան 2023 (գիրքը 44-օրյա պատերազմում անմահա-  
ցած հերոս Դավիթ Աշոտի Խլղաթյանի մասին է), Երևան, «Վան Արյան», 30 էջ:
- Հարությունյան Ա. 2021, Խոսող լռություն, Կ. Հովհաննիսյան (առաջ. հեղ.), Վ. Մնացա-  
կանյան (խմբ. և սրբագր.), Երևան, «Մուսալեռ տպագրատուն» ՍՊԸ, 231 էջ:
- Հարությունյան Լ. 2021, Արցախի հերոս Ռոբերտ Աբաջյան: Հուշագիրք, Երևան, «Ծի-  
ծեռնակ», 96 էջ:
- Հարությունյան Մ. 2016(Ա), Նախահարձակ թշնամին արժանի հակահարված է ստանում,  
Մարտիկ (ԼՂՀ ՊՆ պաշտոնաթերթ), N 13-14, 24 մարտի - 7 ապրիլի, հմմտ.՝  
Հայ զինվոր (ՀՀ ՊՆ պաշտոնաթերթ), N 13, 13-19 ապրիլի:
- Հարությունյան Մ. 2016(Բ), Հայ զինվորների զանգվածային սխրանքը, Մարտիկ, N 15-16,  
7-21 ապրիլի:

- Հարությունյան Մ. 2016(Գ), Պայթեց ադրբեջանական կեղծ քարոզչության հերթական փուլիկը, Մարտիկ, N 15-16, 7-21 ապրիլի:
- Հարությունյան Մ. 2016(Դ), Ձախտղման է դատապարտված հակառակորդի նախահարձակումը նաև տեղեկատվական ճակատում, Մարտիկ, N 15-16, 7-21 ապրիլի:
- Հարությունյան Մ. 2016(Ե), Հայ ռազմիկների խիզախումները մարտադաշտում..., Մարտիկ, N 17-18, 21 ապրիլի - 5 մայիսի:
- Հարությունյան Մ. 2016(Զ), Զինճառայողների ընտանիքների անվտանգությունը պետական հոգաձուլության տակ, Մարտիկ, N 17-18, 21 ապրիլի - 5 մայիսի, հմմտ.՝ «Հայ զինվոր», N 17 (1137), 11-17 մայիսի:
- Հարությունյան Մ. 2016(Է), Զախցախված թշնամին սարսափած է..., Մարտիկ, N 17-18, 21 ապրիլի - 5 մայիսի, էջ 6:
- Հարությունյան Մ. 2016(Ը), Սխրանք (կրտսեր սերժանտ Ռոբերտ Աբաջյանը ԼՂՀ նախագահի հրամանագրով հետմահու արժանացել է «Արցախի հերոսի» կոչման և պարգևատրվել «Ոսկե Արծիվ» շքանշանով), Հայ զինվոր, N 17, 11-17 մայիսի:
- Հարությունյան Մ. 2021(Ա), Արցախի զինված ուժերի ռազմավարության մասին, Նորակազմ (չճանաչված) պետությունները պատերազմից հետո. խնդիրներն ու դրանց լուծման ուղիները, «Մեսրոպ Մաշտոց» համալսարան, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս», էջ 40-64:
- Հարությունյան Մ. 2021(Բ), Նոր սերնդի պատերազմների վարման մի քանի առանձնահատկությունների մասին (2020 թ. աշնանային պատերազմի լույսի ներքո), Արցախի պետական համալսարանի «Գիտական տեղեկագիր», պրակ 2. Հասարակական գիտություններ, Ստեփանակերտ, ԱրՊՀ, էջ 213-224:
- Հարությունյան Մ. 2021(Գ), Արցախում ռազմարվեստի զարգացման արդի փուլի առանձնահատկությունները, Շուշի-Երևան, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 352 էջ:
- Հարությունյան Մ. 2022(Ա), Արցախի Հանրապետության պաշտպանական-անվտանգային հիմնախնդիրների մասին, Արցախի Հանրապետության և Հայաստանի (երրորդ) Հանրապետության հռչակման 30-ամյակ, միջազգային գիտաժողովի նյութեր (Ստեփանակերտ-Երևան, 19-23 սեպտեմբեր, 2021 թ.), Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, էջ 80-101:
- Հարությունյան Մ. 2022(Բ), Արցախի Հանրապետության դեմ ադրբեջանա-թուրքական ագրեսիայի հետևանքները վերացնելու մի քանի ուղիների մասին, «Կովկասյան տարածաշրջանի արդի հիմնախնդիրները. հնարավորություններ և մարտահրավերներ». Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու (12 մարտի 2022 թ. Ստեփանակերտ), «Մեսրոպ Մաշտոց» համալսարան, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս», էջ 42-45:
- Հարությունյան Մ. 2022(Գ), Արցախի պաշտպանության և անվտանգության հիմնախնդիրների լուսաբանման առաջնահերթությունների մասին, «Մրցունակ կրթության և գիտության հիմնախնդիրները հարափոփոխ աշխարհում». միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, Հյուսիսային համալսարան, էջ 185-193:
- Հարությունյան Մ. 2024, Ռազմական շինարարությունը Արցախում 1991-2006 թթ., Երևան, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 424 էջ:
- Հարությունյան Ն. 2022, Աշնան վերջին անվանականը (Պատումներ), Երևան, հեղ. հրատ., 194 (+24) էջ:
- Հարությունյան Պ. 2021, Կգամ... խենթ հայրենասերը, Երևան, «Արմավ», 131 էջ:
- Հնչող ծայներ 2021, Արցախյան պատերազմում զոհվածների ստեղծագործություններ, Երևան, «Արմավ», 224 էջ:

- Հովհաննիսյան Ա. 2017, Ռազմարվեստի զարգացումը 20-րդ դարում. հեռանկարներ: Համառոտ ուսումնասիրություն, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 661 էջ:
- Հովհաննիսյան Ա. 2020, Հարձակման «Սիմֆոնիան» կամ ջախջախման պատերազմի հասունացումը ռազմարվեստում: Համառոտ ուսումնասիրություն, Երևան, ՀՀ ՊՆ աշխատակազմի վարչատնտես. վարչ. հրատ., 152 էջ:
- Հովհաննիսյան Ն. 2016, Ղարաբաղյան քառօրյա պատերազմը, «Ազգ» օրաթերթ, N 14, 15.04.2016 թ., <https://archive.azg.am/AM/2016041503> (ներբեռնման օրը՝ 3.11.2023):
- Հրետանավորը 2021, Հարությունյան Ն. (լզմ.), Մ. Հովհաննիսյան (խմբ. և առաջաբ. հեղ.), Երևան, հեղ. հրատ., 150 (+32) էջ:
- «Ձեզ բացակա չենք դնի» 2021 (համահեղ.՝ Վ.Ռ. Բալայան, Ռ.Ա. Բալայան Մ.Ա. Հարությունյան, Զ.Գ. Սառաջյան, Լ.Ա. Մարգարյան), Ստեփանակերտ, Արցախի պետական համալսարան, 112 էջ:
- Ղարիբյան Ա. Գասպարյան Ռ. 2021, Արցախյան 44-օրյա պատերազմի վերաբերյալ ռուսական պաշտոնական արձագանքները, Հայագիտության հարցեր, N 2, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 3-20:
- Մանասյան Ա. 2023, Արցախ. տեղեկատվական պատերազմում և բանակցային խոսույթում անտեսված փաստարկներ, Լրաբեր հասարակական գիտությունների, N 1, էջ 317-334:
- Մելիքբեկյան Մ. 2023, Հադրութի հերոս Արկոն: Հայրենասիրական ստեղծագործությունների ժողովածու, Հ. Ջավախբեցի (խմբ. և սրբ.), Երևան, հեղ. հրատ., 92 էջ (+6 նրդ. թերթ):
- Մելքումյան Ռ. 2021, Քառասունչորսօրյա հերոսապատում: Փաստագրական, Երևան, ՀԳՄ, 100 էջ:
- Մելքոնյան Հ. 2022, Խաղաղությունից պատերազմ տանող ճանապարհին, Երևան, «Լուսաբաց», 64 էջ:
- Մենենձյան Ա. 2018, Քառօրյա պատերազմ. մեդիաարձագանքներ, Ժուռնալիստկա և հաղորդակցություն, N 1 (13), Երևան, ԵՊՀ հրատ., էջ 103-110:
- Մինասյան Ս. 2016, Ապրիլյան չորսօրյա պատերազմը. պատճառներ և հետևանքներ, «Անդին» ամսագիր, N 4, ապրիլ, էջ 22-24:
- Միքայել. Կյանքս՝ հայրենիքին, հոգիս՝ Աստծուն 2022, Հարությունյան Գ. (լզմ.), Ա. Դեմիրճյան (խմբ.), Երևան, «Հայաստան», 55 էջ (+8 նրդ. թերթ):
- Մխչյան Ա. 2022(Ա), Գոլք անմահ հերոսներին (փաստավավերագրական իրապատումների և բանաստեղծությունների ժողովածու), գիրք 1, Երևան, «Հայ արվեստի տուն», 252 էջ:
- Մխչյան Ա. 2022(Բ), Գոլք անմահ հերոսներին (փաստավավերագրական իրապատումների և բանաստեղծությունների ժողովածու), գիրք 2, Երևան, «Հայ արվեստի տուն», 300 էջ:
- Մնացականյան Ա. 2018, Հայ-թուրքական հարաբերությունները ՀՀ ազգային անվտանգության համատեքստում, Լրաբեր հասարակական գիտությունների, N 1, էջ 40-49:
- Մնացականյան Վ. 2017, Աննվաճ Հայաստան, Երևան, «Լուսակն», 658 էջ:
- Մնացականյան Վ. 2021, Առաջաձոր ու նորից պատերազմ, Երևան, «Լուսաբաց», 486 էջ:
- Մուշեղյան Լ. Ասատրյան Ա. 2022, Շուշիի չբացված լուսաբացը (գրքում զետեղված է 44-օրյա պատերազմում զոհված Վ. Ասատրյանի կարճ կյանքը, մարտական ուղին), Երևան, «Նուռ» տպագրատուն, 171 էջ:
- Նանե 2023, Լավագույն տղերքը մենք ենք: Հուշապատում, Ա. Հովհաննիսյան (խմբ.), Երևան, «էդիթ Պրինտ», 287 էջ:
- Նավոյան Շ. 2021, Խոսողը՝ չգիտի, իմացողը չի խոսում, Երևան, «Մուղնի», 178 էջ:

- Նիկողոսյան Տ. 2022(Ա), Նախնյաց ոգուն հավատարիմ (Հայրենյաց քսանամյա նվիրյալները. 4. Վիզեն Արսենի Եղիազարյան), Երևան, «Սպիկա», 99 էջ:
- Նիկողոսյան Տ. 2022(Բ), Խրամատից՝ անմահություն (Հայրենյաց քսանամյա նվիրյալները. 5. Ռաֆայել Զալիկի Խեքոյան), Երևան, «Սպիկա», 99 էջ:
- Շահինյան Մ. 2021(Ա), Երդվյալը (Զաբրայիլի արծիվը), առաջաբ.՝ Ա. Սահակյանի, Երևան, «Էդիթ Պրինտ», 111 (+24) էջ:
- Շահինյան Մ. 2021(Բ), Առաջնագծի մարտիկը, Գ. Հովհաննիսյան (խմբ.), Երևան, «Էդիթ Պրինտ», 104 (+16) էջ:
- Շահինյան Մ. 2022, Վերելքի ճանապարհ, Երևան, «Էդիթ Պրինտ», 96 (+8) էջ:
- Չիրուխյան Լ. 2022(Ա), Ամեն ինչ անցնելու է գնա, վերջում մնալու է Քրիստոսը և դու՝ իր առաջ: Հերոսապատում, Ոգեգարթանք մշակութային կենտրոն Երևան, հեղ. հրատ., 326 էջ:
- Չիրուխյան Լ. 2022(Բ), Պահիր վերջին փամփուշտը, որդիս... Ոգեգարթանք մշակութային կենտրոն, Երևան, հեղ. հրատ., 258 էջ:
- Չիլինգարյան Դ. Երզնկյան Ե. 2015, Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան, Երևան, «Լիմուշ», 1200 էջ:
- Պապոնց Առաքելյան Ն. 2022, Անկատար երազանքներ (Հուշամատյան), գիրք 1, Երևան, «ՎՄՎ-Պրինտ», 287 էջ:
- Պապոնց Առաքելյան Ն. 2023, Անկատար երազանքներ (Հուշամատյան), գիրք 2, Երևան, «ՎՄՎ-Պրինտ», 439 էջ:
- Պետրոսյան Մ. 2021, Պատերազմի սերունդներ. պատերազմի զարգացումը արդի փուլում, Հայկական բանակ (ՀՀ ՊՆ ՊԱՀՀ ռազմագիտական հանդես), N 1, էջ 19-20:
- Պետրոսյան Ս. 2022, Դավիթը, Ա. Ավագյան(խմբ.), Երևան, «Տիգրան Մեծ», 207 էջ:
- Պետրոսյանց Տ. 2021, Հայրենիքի համար: Կենսագրական հանրագիտարան, Հ. Պետրոսյանց (խմբ.), Երևան, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ, 212 էջ:
- Պետրոսյանց Տ. 2022, Հայրենիքի համար 2: Կենսագրական հանրագիտարան, Հ. Պետրոսյանց (խմբ.), Երևան, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ, 72 էջ:
- Պողոսյան Ն. 2021, Պատերազմական օրագիր: 2020-ի սեպտեմբերի 27-ից... Լ. Ղարախանյան (առաջաբ. հեղ. և խմբ.), Երևան, «Էդիթ Պրինտ», 443 էջ:
- Պողոսյան Վ. 2018, Պաշտպանության բանակի չորրորդ պաշտպանական շրջանն ապրիլյան մարտական գործողությունների օրերին (ԵՊՀ ռազմավարական հետազոտությունների ԳՀ լաբորատորիա, Տեղեկատվական անվտանգության կենտրոն), «Ստրատեգ» (Տարեկան ամփոփիչ հանրապետ. գիտաժողովի հոդվածների ժողով., N 1, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 93-100:
- Սահակյան Լ. 2021, Կռիվ տալով (Հուշապատում), Ա. Ավանեսյան (խմբ.), Երևան, «Արմավ», 108 էջ:
- Սահակյան Մ. 2022, Արա լեռան Չորիկը, Ա. Ավանեսյան (խմբ.), Երևան, «Արմավ», 172 էջ:
- Սահակյան Ս. 2022, Քառօրյա պատերազմ, «Ինտերակտիվ կրթության զարգացում» հիմնադրամ, Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթաց, հետազոտական աշխատանք «Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն» առարկայից, 24 էջ, <https://lib.armedu.am/files/resource/files/2023-02-01/4c2871e53e259b5b847f97f8f3e6dbd4.pdf> (ներբեռնման օրը՝ 4.11.2023):
- Սահարայան Մ. 2021, Տո՛ւր ձեռքդ, ընկե՛ր (Արցախյան երկրորդ պատերազմում անմահացած Մաքսիմ Հովհաննիսյանի հիշատակին), Երևան, հեղ. հրատ., 28 էջ:



- Սայիյան Ա. 2021, Երկրի արևը (բանաստեղծություններ), Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս», 52 էջ:
- Սարգսյան Ա. 2016, ՀՀ ռազմական անվտանգության համակարգը տարածաշրջանային ռազմաքաղաքական զարգացումների համատեքստում, Պատմաբանասիրական հանդես, N 3, էջ 135-145:
- Սարգսյան Վ. 2021, Արցախյան վերջին գոյապայքարը, Վրաստանը, տարանցիկ նոր նախագծերը և Հայաստանի շրջափակման գործընթացը, Պատմաբանասիրական հանդես, N 1, էջ 47-63:
- Սարիբեկյան Ա. 2022(Ա), Քաջերի երթը, գիրք 1, Հակունց Մ. (խմբ.), Երևան, «Նուռ» տպագրատուն, 256 էջ:
- Սարիբեկյան Ա. 2022(Բ), Քաջերի երթը, գիրք 2, Երևան, «Նուռ» տպագրատուն, 302 էջ:
- Սարիբեկյան Ա. 2022(Գ), Առաջ, իմ առյուծներ: Վայքի հերոսներ, Լ. Մարգարյան (խմբ.), Երևան, «Նուռ» տպագրատուն, 114 էջ:
- Սարիբեկյան Ա. 2022(Դ), Դեպի հավերժություն: Բանաստեղծություններ: Աղոթքներ, թևավոր մտքեր, Երևան, «Նուռ» տպագրատուն, 114 էջ:
- Սարիբեկյան Ա. 2023, Քաջերի երթը, գիրք 5, Հակունց Մ. (խմբ.), Երևան, «Նուռ» տպագրատուն, 304 էջ:
- Սյունեզ Դ. 2022, Վիրավոր Արծիվը: Լեռնային Ղարաբաղի (Արցախի) պատերազմը = The wounded eaglet: The Nagorno-Karabakh (Artsakh) war, Երևան, «Տիգրան Մեծ», 125 էջ:
- Սողոմոնյան Ն. 2021, Պատերազմի հետքը (Հուշապատումներ զոհված եղբայրների մասին), Երևան, «Ղրիմ» հրատ., 62 էջ:
- Վանյան Դ. 2020, Վերլուծություն (Արցախյան երկրորդ պատերազմ), [https://david-vanyan.livejournal.com/482112.html?utm\\_source=3userpost](https://david-vanyan.livejournal.com/482112.html?utm_source=3userpost) (ներբեռնման օրը՝ 05.11.2023):
- Վարդանյան Գ. Բաբուջյան Ա. 2021, Հայրենիքի անմնացորդ նվիրյալները: Հերոսները չեն մահանում: Հուշալրամ 17, Երևան, «Էդիթ Պրինտ», 280 էջ:
- Վարդանյան Գ. Բաբուջյան Ա. 2023, Հայրենիքի անմնացորդ նվիրյալները, գիրք Բ, Երևան, «ՎՄՎ-Պրինտ», 319 էջ:
- Վարդխաթունյան Շ. 2022, Անանուն բարձունքի արծիվը. Առնող Հովսեփյան: Ս. Հովսեփյան (խմբ.), Երևան, «Արտագետ», 123 (+8) էջ:
- Վարոսյան Ս. 2023, Երկնքում շողացող աստղը (գիրք՝ իրական դեպքերի հիման վրա): Ա. Մելքումյան (առաջաբ. հեղ., խմբ. և սրբագր.), Երևան, «Մեկնարկ», 103 էջ:
- Տոնոյան-Սարգսյան Հ. 2023, Հայրենիքի նվիրյալները: Հուշեր, բանաստեղծություններ, Լ. Մարգարյան (խմբ.), Երևան, «Նուռ» տպագրատուն, 152 էջ:
- Փոթորիկ Կովկասում 2022, Պոլիսով Ռ. (խմբ.), 12 քաղաքագետ՝ արցախյան 44-օրյա պատերազմի պատճառների ու հետևանքների մասին, Կ. Հարությունյան (ոուս. թարգմ.), «Օրակույ» հայ-ռուսական մատենաշար, Երևան, «Newmag», 264 էջ:
- Քեոսայան Թ. 2021, Տիգրանի երգը = Tigran's song: Հիշողություններ, Երևան, «Արմավ», 40 էջ:
- Օնֆրե Մ. 2021, Երկու տեքստ Հայաստանի համար = Deux textes pour L'Arme'nie = Два текста для Армении, Ա. Ավետիսյան, Ա. Հայրապետյան (թարգմ.), Երևան, «Գրատուն», 78 էջ:
- Буря на Кавказе 2021, Москва, Центр анализа стратегий и технологий, 128 с.
- В ожидании бури: Южный Кавказ 2018, Москва, Центр анализа стратегий и технологий, 200 с.
- Люхтерхандт О. 2022, Нагорный Карабах: борьба за независимость и международное право, Москва, «Особая книга», 203 с.
- Петросян Л. 2023, Характеристика развития армяно-иранских экономических отношений после Арцахской войны 2020 года, Регион и мир (научно-аналитический жур-

- нал), т. XIV, N 2, Ереван, Общественный институт политических и социальных исследований Черноморско-Каспийского региона, с. 20-24.
- Союзники 2020, Москва, Центр анализа стратегий и технологий, с. 9-29, [https://russiancouncil.ru/library/library\\_rsmd/soyuzniki/](https://russiancouncil.ru/library/library_rsmd/soyuzniki/) (տեղեկուման օրը՝ 05.11.2023).
- Mkrtchyan V. 2023, Blockade of Artsakh: Reactions of the French Side on the Illegal Closing of the Goris-Stepanakert Road. Регион и мир (научно-аналитический журнал), т. XIV, N 3, Ереван, Общественный институт политических и социальных исследований Черноморско-Каспийского региона, с. 17-22.

## РЯД ПРОБЛЕМ ОСВЕЩЕНИЯ СОВРЕМЕННОЙ ИСТОРИИ АРМИИ ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРЦАХ

Мгер Арутюнян, Айк Арутюнян

### Резюме

Изучение новейшей истории армии обороны на основе военно-научной реинтерпретации и анализа военных кампаний азербайджано-турецкой агрессии против Республики Арцах 2016 и 2020 годов диктуется необходимостью установления объективной истины о ней в мировой научной системе и в общественном сознании наших соотечественников из РА и Диаспоры, а также важностью предложения пути исправления ошибок в сфере государственного управления и военного строительства.

Осуществление научных, научно-прикладных стратегических исследований, научно-издательской, экспертной и другой соответствующей деятельности в сфере обороны и безопасности важно с точки зрения поиска решений национальных проблем.

Представление военно-политическому руководству РА, в том числе Совету безопасности, результатов стратегических пилотных исследований по динамике региональной безопасности и соответствующих предложений на их основе должно быть нацелено на предотвращение вызовов, возникших в результате трёхстороннего заявления о прекращении огня от 9 ноября 2020 года и катастрофических последствий вероломной агрессии 19 сентября 2023 года, на научное формулирование теоретических и практических обоснований возможностей повышения надёжности и эффективности системы обороны и безопасности.

**Ключевые слова** – азербайджано-турецкая агрессия, депортация, среда обороны и безопасности, гибридная война, осенняя кампания, военное строительство, вооруженные силы.

---

**SOME PROBLEMS OF COVERING THE MODERN HISTORY OF THE DEFENCE  
ARMY OF THE REPUBLIC OF ARTSAKH**

Mher Harutyunyan, Hayk Harutyunyan

## Abstract

The study of the modern history of the Defence Army on the basis of military-scientific reinterpretation and analysis of the military campaigns of the Azerbaijani-Turkish aggression against the Republic of Artsakh in 2016 and 2020 is dictated by the need to establish the objective truth about it among the world scientific circles and in the public consciousness of our compatriots from the RA and the Diaspora, as well as the importance of proposing ways to correct mistakes in the sphere of state administration and military construction.

The implementation of scientific, scientific-applied strategic research, scientific-publishing, expert and other relevant activities in the field of defence and security is important in terms of finding solutions to national problems.

The presentation to the military-political leadership of the Republic of Armenia, including the Security Council, of the results of the strategic pilot studies on regional security dynamics and the relevant proposals based on them should be aimed at preventing the challenges resulting from the tripartite ceasefire declaration of 9 November 2020 and the catastrophic consequences of the treacherous aggression of 19 September 2023, the scientific formulation of theoretical and practical substantiations of the possibilities to improve the reliability and effectiveness of the regional security situation in the Republic of Armenia, and the elaboration of the recommendations of the strategic pilot studies.

**Key words** – Azerbaijani-Turkish aggression, deportation, defence and security environment, hybrid warfare, autumn campaign, military construction, armed forces.

# ՍԻՐԻԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ «ԿԻԼԻԿԵԱՆ» ԴՊՐՈՑԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (2012-2013 ԹԹ.)

## Քնարիկ Ավագյան

Պատմական գիտությունների թեկնածու  
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ  
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4  
Էլ. հասցե՝ lira777@yahoo.com  
ORCID: 0009-0000-5496-4997

Հոդվածը ներկայացվել է 30.04.2024, գրախոսվել է 30.06.2024, ընդունվել է տպագրության 02.08.2024  
DOI: 10.53548/0320-8117-2024.2-116

### Ամփոփում

2012 թվականից սիրիահայերի՝ Հայաստան զանգվածային ներհոսքին զուգընթաց, ՀՀ կառավարությունը լծվել է նրանց սոցիալ-տնտեսական, ուսումնակրթական և այլ բնույթի համակողմանի օժանդակություն ցուցաբերելու գործին:

2012-2013 թթ. ուսումնական տարում Երևանում նույնիսկ գործել է Սիրիայի ծրագրով «Կիլիկեան» արաբական դպրոցը: Այն բացվել է որոշ սիրիահայերի ցանկությամբ, ՀՀ նախագահի համաձայնությամբ, ՀՀ սփյուռքի, Կրթության և գիտության նախարարությունների համակարգմամբ, Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ և սփյուռքի նյութական օժանդակությամբ:

«Կիլիկեան» դպրոցի բացումը համայնքի նկարագիրը պահպանելուն էր ուղղված, այդուհանդերձ, առանձին դեպքերում այն դարձավ հայրենի ժողովրդի ու միջավայրի հետ ընտելացնող, ժամանակավոր և միջանկյալ հանգրվանային փորձառություն:

**Բանալի բառեր՝** Սիրիայի պատերազմ, ՀՀ կառավարություն, ՀՀ սփյուռքի նախարարություն, Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն, սիրիական ուսումնական ծրագիր, «Կիլիկեան» դպրոց, Հայաստան:

### Ներածություն

2012 թվականից ՀՀ կառավարությունը, սիրիահայերի՝ Հայաստան զանգվածային ներհոսքին զուգընթաց, լծվել է նրանց սոցիալ-տնտեսական, ուսումնակրթական և այլ կարգի համակողմանի օժանդակություն ցուցաբերելու գործին: Սակայն, ի հակադրություն տարբեր երկրներում գաղթական-փախստականների հանդեպ ցուցաբերվող ընդհանուր բնույթի աջակցության, ՀՀ կառավարությունն առանձին դեպքերում իրականացրել է նույնիսկ չափազանցված միջոցներ՝ նպատակ ունենալով բավարարել սիրիահայ մեր հայրենակիցների տարատեսակ ցանկությունները գոհացնելու և դժգոհության առիթ չտալու առաջնահերթությունից ելնելով:

Այդ մասին է վկայում այն հանգամանքը, որ ՀՀ ղեկավարությունը, ընդ-առաջելով Սիրիայից եկած մեր որոշ հայրենակիցների ցանկությանը, թույլատրել է հայրենի հողում նրանց երեխաների համար այլ երկրի՝ Սիրիայի կրթական ծրագրով դպրոց բացել՝ հիմք ընդունելով սիրիահայ երեխաների

համար պատշաճ պայմաններ ստեղծելու մասին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրամանը<sup>1</sup>:

### **Սիրիայի կրթական ծրագրով «Կիլիկեան» արաբական հիմնական դպրոցը Երևանում**

Ինչպես վկայել է սիրիահայ հայրենադարձ «Հալեպ» հայրենակցական բարեսիրական հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Սարգիս Բալխյանը, Հալեպում հայկական դպրոց հաճախող երեխաները ընդհուպ 12-15 տարեկան հասակը տակավին վարժված չեն լինում արաբերեն լեզվին<sup>2</sup>, բայց և այնպես, որոշ սիրիահայեր ցանկություն են հայտնել, որ իրենց երեխաների համար Հայաստանում սիրիական ուսումնական ծրագրով արաբական հանրակրթական դպրոց բացվի:

Սիրիահայ նախաձեռնող խումբն արաբական դպրոց բացելու անհրաժեշտությունը կարևորել է «այն երեխաների համար, ում ծնողները իրավիճակի բարելավումից հետո նպատակ ունեին վերադառնալ Սիրիա»<sup>3</sup>:

Ընդառաջ գնալով առանձին սիրիահայերի կողմից հայրենի իշխանություններին ներկայացված այդ արտառոց պահանջին՝ ՀՀ սփյուռքի նախարարությունը, այնուամենայնիվ, ձեռնամուխ է եղել դրա իրականացմանը: Վերջինիս կողմից ստեղծվել է աշխատանքային-կրթական հանձնախումբ, որը բաղկացած էր սիրիահայ կազմակերպությունների ներկայացուցիչներից, կրթական գործի պատասխանատուներից ու մանկավարժներից: ՀՀ սփյուռքի նախարարությունը սիրիական կրթական ծրագրով դպրոցի ստեղծման գործընթացը համակարգել է ՀՀ կրթության և գիտության նախարարության, Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչության, ինչպես նաև նախաձեռնող կազմակերպության հետ համատեղ<sup>4</sup>:

Դասարանները համալրելու նպատակով ՀՀ սփյուռքի, կրթության և գիտության նախարարությունների համատեղ գործունեության շնորհիվ 2012 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին հաշվառվել են Հայաստանում, մասնավորապես Երևանում գտնվող և արաբական դպրոց հաճախել ցանկացող սիրիահայ երեխաներն ու ուսուցիչները: Սիրիայից ձեռք է բերվել 1-9-րդ դասարաններում դասավանդվող առարկաների համապատասխան դասագրքերից մեկական օրինակ և պատճենահանմամբ բազմացվել: Կատարվել է դպրոցի ընտրություն, դասարաններն ապահովվել են դպրոցական կահույքով և

<sup>1</sup> ՀՀ սփյուռքի նախարարն այցելեց «Կիլիկյան» դպրոց 2012:

<sup>2</sup> Balkhian 2014.

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 1786, ց. 1, գ. 137, թ. 1:

<sup>4</sup> Երևանում կգործի սիրիական ծրագրով դպրոց՝ Հայաստան տեղափոխված սիրիահայ երեխաների համար 2012:

անհրաժեշտ պարագաներով, լուծվել են ուսումնական գործընթացի հետ առնչվող այլ խնդիրներ ևս<sup>5</sup>:

2012 թ. հոկտեմբերի 2-ին և 3-ին տեղի է ունեցել սիրիահայ աշակերտների ցուցակագրումը: Եվ արդեն 2012 թ. հոկտեմբերի 9-ին<sup>6</sup> մայրաքաղաքի Նար-Դոսի անվան N 14 դպրոցում<sup>7</sup> բացվել է «Կիլիկեան» կոչվող արաբական կրթական ծրագրով հիմնական դպրոցը<sup>8</sup>:

Երևանում արաբական դպրոցը գործել է «Կիլիկիա» բարեսիրական միության (ԱՄՆ) և Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության նյութական օժանդակությամբ, ինչպես նաև ՀՀ սփյուռքի, Գիտության և կրթության նախարարությունների ու Երևանի քաղաքապետարանի բարոյական ու վարչական աջակցության շնորհիվ<sup>9</sup>:

«Կիլիկեան» վարժարանի բացման հետ կապված՝ Երևանի քաղաքապետը հանդիպել է «Կիլիկիա» բարեսիրական միության անդամների՝ Դամասկոսի Հայոց թեմի առաջնորդ Արմաշ եպս. Նալբանդյանի, Կիլիկյան շրջանակի խնամակալության անդամներ Վազգեն Մեսրոպյանի և Հարութ Բալաբանյանի, ինչպես նաև «Կիլիկեան» դպրոցի տնօրեն Նորա Փիլիպոսյանի հետ<sup>10</sup>:

ՀՀ իշխանությունները սիրիական ծրագրով դպրոցի բացումը դիտարկել են որպես սիրիահայ երեխաների համար արաբականից հայկական միջավայրին ընտելանալու և համարկվելու (ինտեգրացիա) անցումային՝ միջանկյալ փուլ, ուստի և համաձայնել են աջակցել դպրոցի աշխատանքներին: Այդ առիթով Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանն ասել է. «Սիրիական ծրագրով հիմնական հանրակրթական դպրոցը է՛լ ավելի դյուրին կդարձնի սիրիահայ երեխաների ուսուցումը Երևանում: Սիրիահայ ընտանիքները առաջին իսկ օրվանից եղել են մեր ուշադրության կենտրոնում և այսուհետ նույնպես քաղաքապետարանն անելու է հնարավորը, որ մեր հայրենակիցները Երևանում իրենց զգան ինչպես տանը»<sup>11</sup>: Միաժամանակ, Երևանի քաղաքապետարանը հաղորդել է, որ աշակերտները պետք է արտաժամյա

<sup>5</sup> Երևանում կգործի սիրիական ծրագրով դպրոց՝ Հայաստան տեղափոխված սիրիահայ երեխաների համար 2012, Malek Alia 2012:

<sup>6</sup> Սիրիահայերի համար կկազմավորվի սիրիական ծրագրով կրթության դպրոց 2012, Երևանում կգործի սիրիական ծրագրով դպրոց՝ Հայաստան տեղափոխված սիրիահայ երեխաների համար 2012:

<sup>7</sup> Բացի Նար-Դոսի անվան N 14 դպրոցում բացված «Կիլիկեան» դպրոցից, Երևանում Խաչիկ Դաշտենցի անվան N 114 պետական հանրակրթական դպրոցում ևս դասասենյակներ են տրամադրվել սիրիահայ երեխաների համար Սիրիայի ծրագրով ուսուցում իրականացնելու նպատակով: Տե՛ս Armenia Welcomes Immigrating Compatriots: The Wall Street Journal Dwelled on Syrian Armenian Issues 2012:

<sup>8</sup> ՀԱԱ, ֆ. 1786, ց. 1, գ. 137, թ. 1:

<sup>9</sup> Հայաստան-Սփիւռք չորրորդ համաժողովում արված առաջարկությունների կատարման վերաբերյալ 2011, 76, ՀԱԱ, ֆ. 1786, ց. 1, գ. 137, թ. 1, Mouradian 2013:

<sup>10</sup> ՀԱԱ, ֆ. 1786, ց. 2, գ. 78, թ. 46:

<sup>11</sup> Երևանում կգործի սիրիական ծրագրով հիմնական հանրակրթական դպրոց 2012:

ուսանեն «Հայոց լեզու» (արևելահայերեն) և «Հայոց պատմություն» առարկաները<sup>12</sup>:

Նար-Դոսի անվան N 14 դպրոցի շենքում «Կիլիկեան» վարժարանին հատկացվել են վերանորոգված 13 դասասենյակ, 3 աշխատասենյակ, առանձին սանհանգույցներ, նոր հեռախոսագիծ, ապահովվել է աշակերտական գույքը<sup>13</sup>: Ֆիզիկական կուլտուրայի դասերն անցկացվել են կահավորված մարզադահլիճում, իսկ պարուսույց Սոֆի Դեոյանի օժանդակությամբ սիրիահայ երեխաներն անվճար հաճախել են նաև պարի դասերի<sup>14</sup>:

Սիրիայի հայկական վարժարանների 1-9-րդ դասարանների ուսումնական ծրագրով դպրոց հաճախող երեխաների թիվը սկզբում կտրուկ աճել է: Այսպես, եթե 2012 թ. հոկտեմբերին դպրոցն ուներ շուրջ 220 սիրիահայ աշակերտ, ապա դեկտեմբերի սկզբին նրանց թիվը հասել է արդեն 255-ի, իսկ արդեն 2013 թ. առաջին կեսին՝ շուրջ 300-ի<sup>15</sup>:

Դասարաններում աշակերտների քանակը միջին հաշվով 30 էր, մինչդեռ 7-9 դասարաններում դարձավ 40-ից ավելի: Առարկաների մեծ մասը հաղորդվել է արաբերեն, միաժամանակ դասավանդվել է հայերեն և անգլերեն, իսկ 7-9 դասարաններում՝ նաև ֆրանսերեն<sup>16</sup>:

Դպրոցն ուներ 16 սիրիահայ ուսուցիչ, որոնց աշխատավարձը փոքր-ինչ ավել էր (ամիսը՝ 300 դոլար), քան Հայաստանի ուսուցիչներինը: Դպրոցի բյուջեն ամսական կազմել է 7.000-8.000 դոլար<sup>17</sup>:

Վաղ առավոտյան դպրոցին հատկացված ավտոբուսները Երևանի և մերձակա տարածքների սիրիահայ երեխաներին տանում էին դպրոց, իսկ երեկոյան նրանց հասցնում տուն: Սիրիահայ աշակերտների համար առանձնաշնորհված դպրոցական այդ շքեղության մասին ամերիկահայ մամուլը մասնավորապես գրել է. «Դպրոցական ավտոբուսի համակարգը անսովոր է Հայաստանում, որտեղ տեղացի երեխաները հաճախում են կամ [բնակատեղիին] մոտ դպրոցները կամ օգտվում են հանրային տրանսպորտից»<sup>18</sup>:

Ընդհանուր առմամբ, 2012-2013 թթ. ուսումնական տարվա ընթացքում կրթություն է ստացել 1-9-րդ դասարանների 304 սիրիահայ աշակերտ<sup>19</sup>:

2012-2013 թթ. առաջին ուսումնական տարում «Կիլիկեան» վարժարանը տվել է 38 շրջանավարտ, որոնց ընդհանուր առաջադիմությունը, ըստ

<sup>12</sup> Սիրիահայերի համար կկազմավորվի սիրիական ծրագրով կրթության դպրոց 2012:

<sup>13</sup> ՀԱԱ, ֆ. 1786, ց. 2, գ. 78, թ. 46:

<sup>14</sup> ՀՀ սփյուռքի նախարարն այցելեց «Կիլիկեան» դպրոց 2012:

<sup>15</sup> ՀԱԱ, ֆ. 1786, ց. 2, գ. 8, թ. 116, գ. 78, թ. 46, Markosian 2013:

<sup>16</sup> Mouradian 2013.

<sup>17</sup> Hakobyan 2013, ՀՀ սփյուռքի նախարարություն. Սիրիահայերի հիմնախնդիրները՝ համահայկական կառույցների ուշադրության կենտրոնում 2012, Markosian 2013:

<sup>18</sup> Mouradian 2013.

<sup>19</sup> Հայաստան-Սփյուռք չորրորդ համաժողովում արված առաջարկությունների կատարման վերաբերյալ 2011, 76, ՀԱԱ, ֆ. 1786, ց. 1, գ. 137, թ. 1:

տնօրեն Նորա Փիլիպոսյանի հաղորդման, բարձր էր: Ընդ որում, հայերեն առարկայից աշակերտների ուսման առաջադիմությունը գերազանցել է (100%) արաբերեն առարկային (70%), որը բացատրվել է առկա հայաստանյան միջավայրով: Ավելին, «բոլոր շրջանավարտները պատրաստվել են ուսումը շարունակել Երևանի ավագ դպրոցներում կամ քոլեջներում»<sup>20</sup>:

2013 թ. մայիսի 8-ին Երևանի քաղաքապետարանը, քննարկելով ՀՀ սփյուռքի նախարարության կողմից հաջորդ ուսումնական տարվա համար ևս հիշյալ «սիրիահայերի համար դասընթացներ կազմակերպելու խնդիրը», նորից առաջարկել է դասերն անցկացնել Նար-Դոսի անվան N 14 հիմնական դպրոցում<sup>21</sup>:

Հատկանշական է այն փաստը, որ շատ շուտով սիրիահայ ծնողները, համոզվելով, որ մոտ ապագայում Սիրիա վերադարձն անիրատեսական է, իսկ հայրենիքում նրանց տրամադրված աջակցությունն ու ընձեռված հնարավորությունները «խորթություն»<sup>22</sup> զգալու առիթ չեն տալիս, ընդհակառակը, նպաստել են իրենց երեխաների, ինչպես նաև իրենց համարկմանը (ինտեգրում) հայաստանյան միջավայրին, որոշել են նրանց «Կիլիկեան» վարժարանից փոխադրել տեղի հիմնական և ավագ դպրոցներ: Այսպես, աշակերտների թվի հետզհետե նվազումով մեկ տարուց դադարել է գործել Սիրիայի ուսումնական ծրագրով արաբական դպրոցը: Ապա կարճ ժամանակով այն փոխարինվել է շաբաթական երկժամյա արաբերենի դասընթացով<sup>23</sup>:

Հարկ է նշել, որ Հայաստան ժամանած սիրիահայերի արաբերենի և արևմտահայերենի գիտելիքներն ու կարողությունները նպատակային օգտագործելու անհրաժեշտությունից ելնելով՝ ՀՀ սփյուռքի նախարար Հ. Հակոբյանը նույնիսկ դիմել էր ՀՀ կրթության և գիտության նախարարություն՝ Երևանի «Կիլիկեան» դպրոցն արաբերեն և արևմտահայերեն թեքումով դպրոցի վերածելու առաջարկով: Հաստատվելու դեպքում նախատեսվում էր դպրոցի առկա ծրագիրը փոխել, ներառել նոր առարկաներ, այդ թվում՝ հայոց պատմություն, հայ գրականություն և այլն: Այն մատչելի պիտի դառնար նաև տեղացի երեխաների համար<sup>24</sup>:

Սակայն շուտով իրենց երեխաներին արաբական ծրագրով դպրոց ուղարկած սիրիահայերի զգալի մասը, տեսնելով, որ պատերազմը ձգձգվում է, և իրավիճակը Սիրիայում վատթարանում է, իրենց իսկ բնորոշմամբ՝ քանի որ «...[այլևս] Սիրիա չէ մնացել», հետևաբար «արաբերենի պետքությո-

<sup>20</sup> Սիրիահայ երեխաները պատրաստվում են ուսումը շարունակել Երևանում 2013:

<sup>21</sup> ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 86, թ. 82:

<sup>22</sup> ՀՀ սփյուռքի նախարարն այցելեց «Կիլիկյան» դպրոց 2012:

<sup>23</sup> Գալստյան 2015:

<sup>24</sup> Harutyunyan 2014, Չաքարյան. Սիրիահայերից շատերը մտափոխվել են, ցանկանում են Հայաստանում հաստատվել 2013:



յունը» նույնպես վերացել է, ուստի և զավակների ապագան որոշակիացնելու նպատակով հրաժարվել է սիրական ծրագրից, կողմնորոշվել Հայաստանում մնալու օգտին ու երեխաներին փոխադրել Հայաստանի պետական ծրագրով հանրակրթական հիմնական և ավագ դպրոցներ<sup>25</sup>: Այնպես որ, արդեն 2014 թ. ընդհանրապես ինքնալուծարվել է «Կիլիկեան» արաբական դպրոցը<sup>26</sup>:

«Հ կրթության և գիտության նախարարության պատասխանատու Նարինե Հովհաննիսյանը, անդրադառնալով որոշ սիրիահայերի նախաձեռնությամբ բացված արաբական դպրոցի փակմանը, նշել է. «...Կիլիկիան [դպրոցը – Բ.Ա.] ժամանակավոր լուծում էր [սիրիական] դպրոցներում իրենց դասերը բաց թողած երեխաների համար: Սակայն ժամանակի ընթացքում պարզ դարձավ, որ նրանց մեծ մասը Սիրիա չի վերադառնալու, ինչը նշանակում էր, որ անհրաժեշտ էր գտնել մշտական՝ տևական լուծումներ»<sup>27</sup>:

Իսկ լուծումը Հայաստանի հանրակրթական դպրոցներում նրանց տեղավորելն էր: Այդ առիթով Երևանի քաղաքապետարանի կրթության գծով ղեկավար Գայանե Սողոմոնյանը շեշտել է, որ բոլոր պետական դպրոցները բաց են սիրիահայերի համար. «Նախկինում սիրիահայերն ուսանում էին միայն «Կիլիկեա» դպրոցում, սակայն այժմ նրանք հնարավորություն ունեն ուսանելու ցանկացած դպրոցում, որը մոտ է նրանց կեցավայրին»<sup>28</sup>:

Այսպես, պատերազմի ձգձգման և Սիրիայում իրավիճակի վատթարացման պայմաններում տատանվող սիրիահայերի մի մասը, այնուամենայնիվ, համակերպվել ու շարունակել է մնալ Հայաստանում: Ուստի և շատ շուտով իրենց երեխաների ուսումը շարունակելու նպատակով նրանց տեղափոխել են հայրենի հանրակրթական դպրոցներ: Երեխաների տեղական դպրոցներ հաճախելու հանգամանքը բարենպաստ պայմաններ է ստեղծել նաև սիրիահայ ծնողների՝ հայրենիքում արագ համարկման համար<sup>29</sup>:

Այդ մասին արտահայտվել է նաև ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի ղեկավար Ֆիրդուս Զաքարյանը՝ նշելով, որ հակամարտության հետևանքով Հայաստանում հաստատված սիրիահայերի մեծ մասը մտափոխվել է և մտադիր է հաստատվել Հայաստանում. «Պատերազմն այնքան երկարեց: Միտումները փոխվել են, շատերի մեջ արդեն տրամադրություն կա մնալ: Եթե անցած տարի նրանց 80-90 տոկոսն ասում էին՝ հետ ենք վերադառնալու, ապա հիմա մտածում են այստեղ մնալու մասին: Ծնողները նույնիսկ դիմել են [արաբական] վարժարանից երեխաներին այլ դպրոցներ տեղափոխելու խնդրանքով»<sup>30</sup>:

<sup>25</sup> Գալստյան 2015, Զաքարյան 2018, 573:

<sup>26</sup> Գալստյան 2015:

<sup>27</sup> Harutyunyan 2014.

<sup>28</sup> Harutyunyan 2014.

<sup>29</sup> Warm Welcome for Syrian Armenians 2016.

<sup>30</sup> Զաքարյան 2013:

Անշուշտ, ցանկալի կլիներ, որ Երևանում արաբական ուսումնական ծրագրով դպրոց բացելու և մեկ տարի անցկացնելու փոխարեն, ջանքեր գործադրվեին հենց սկզբից սիրիահայ աշակերտներին նախապատրաստելու տեղի կրթական համակարգին արագ ինտեգրվելուն, մասնավորապես՝ խթանվել արևելահայերեն և ռուսերեն լեզուների յուրացումը: Այդ դեպքում, Հայաստանից արտագաղթածների թիվը ևս, հավանաբար, ավելի նվազ կլիներ:

Արաբական դպրոց, ապա արաբական դասընթացների հաճախած սիրիահայ 14-ամյա Ջորջը և նրա նմաններն ուշացումով սկսել են հայերեն դասընթացների հաճախել՝ նպատակ ունենալով ուսումը շարունակել Հայաստանում: Ժամանակի ընթացքում այդ ուղղությամբ կողմնորոշված նրա մայրը՝ Մարիան, որը 4 տարեկան մի զավակ ևս ուներ, Հայաստանում իր երեխաների տարբեր լեզուների իմացության մասին հետևյալ տեսակետն է արտահայտել, որը հետզհետե բնութագրական է դարձել ավագ սերնդի սիրիահայ մեր հայրենակիցների գրեթե գերակշիռ մասի համար. «Ես կուզեմ իմ պզտիկներս արաբերենն ալ լաւ իմանան, ռուսերենն ալ լավ իմանան, անգլերենն ալ: Մենք կարող ա մինչեւ մեր կեանքի վերջ չկարողանանք [վերա]դառնանք, բայց ես ուզում եմ պահեմ ծննդավայրս և ծննդավայրիս լեզուն, ես պէտք եմ զգում»<sup>31</sup>:

Ի դեպ, Երևանում Ռոսսոտրուդնիչեստվոյի [Россотрудничество] գրասենյակի կազմակերպած ռուսերենի դասընթացներին հաճախել են նույնիսկ արաբերենի և արևմտահայերենի ուսուցման ջատագով ուսուցիչները, ինչպես, օրինակ՝ սիրիական ուսուցման ծրագրով բացված «Կիլիկեան» դպրոցի արևմտահայերենի ուսուցչուհի Տիրանուհի Կարապետյանն իր ամուսնու և որդու հետ: Նրանք, գիտակցել են, որ Հայաստանում լիարժեք կյանքով ապրելու համար պետք է սովորել նաև այդտեղ լայնորեն տարածված ռուսաց լեզուն: Ու թեև սկզբում դժվար է եղել տեղի պայմաններին հարմարվելը, բայց և այնպես, ժամանակի ընթացքում ընտելանալով, որոշել են վերջնականապես հաստատվել հայրենիքում<sup>32</sup>:

### **ՀՀ աշխարհիկ ու հոգևոր կառույցների և միջազգային կազմակերպությունների աջակցությունը «Կիլիկեան» վարժարանին**

ՀՀ սիյուրքի նախարար Հ. Հակոբյանը, գնահատելով սիրիահայ ուսուցիչների աշխատանքը, կարևորելով բացված արաբական դպրոցի միջանկյալ դերը, նշել է. «Մեր ուսուցչուհիներն այսօր հերոսական գործ են անում, նվիրյալ աշխատանք, որպեսզի ոչ մի աշակերտ խորթություն չզգա: Բնականաբար, մենք չէինք կարող անտեսել սիրիահայերի ցանկությունը՝ ունենալ

<sup>31</sup> Գալստյան 2015:

<sup>32</sup> Syrian-Armenian Refugees to Learn Russian "To Get By" in Armenia 2013, Hakobyan 2013.

սիրիական ծրագրով դպրոց: Այս դպրոցի բացումն առաջին հերթին ՀՀ Նախագահի քաղաքական կամքի դրսևորումն էր: Եվ երբ կարգավորվի իրավիճակը Սիրիայում, մեր հայրենակիցները որոշեն գնալ հետ, երեխաները որևէ դժվարություն և ուսումնական բացթողում չեն ունենա՝ ի շնորհիվ նրանց համար կազմակերպված դպրոցի»<sup>33</sup>:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի իրականացրած՝ սիրիահայերի կրթական աջակցության ծրագրի շրջանակում ԱՄՆ-ի արևմտյան ափի իր մասնաճյուղը հանգանակել է 10.000 դոլար, որը նվիրաբերվել է Երևանում սիրիահայ երեխաների համար բացված «Կիլիկեան» դպրոցին<sup>34</sup>:

Դեռևս 2013 թ. հուլիսի 4-ին ՀՀ սփյուռքի նախարարությունը և «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ն մի շարք միջազգային կազմակերպությունների հետ (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի – UNICEF, "World Vision"-ի, "Save the Children International" հայաստանյան գրասենյակներ և ներկայացուցչություն) ստորագրել են փոխըմբռնման հուշագիր՝ «Սիրիահայ երեխաների հոգեբանասոցիալական բարեկեցության աջակցության ծրագիր»: Հուշագրի շրջանակում մշակվել և, ի շարս սիրիահայ նախադպրոցական տարիքի երեխաների կրթությանն աջակցելու ծրագրի, ինչպես նաև սիրիահայ դպրոցահասակ երեխաների ամառային հանգստի կազմակերպման և համատեղ այլ միջոցառումների, իրականացվել է նաև «Կիլիկեան» վարժարանի 20 սիրիահայ ուսուցիչների և ամառային ճամբարներում հանգստացող ուսանողների համար վերապատրաստման դասընթացների ծրագիր<sup>35</sup>: Այն ներառել է նաև հնգօրյա դասընթաց՝ «Ինչպես օգնել երեխաներին սթրեսային իրավիճակներում» թեմայով, որն անցկացվել է 2013 թ. հուլիսի 9-13-ին Երևանում<sup>36</sup>:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի 2013 թ. հեռուստամարաթոնների ընթացքում հավաքված, ինչպես նաև առանձին անհատների կողմից սիրիահայերին աջակցելու նպատակով տրամադրված գումարային փոխանցումների ցուցակից պարզ է դառնում, որ ՀՀ-ում սիրիահայերի աջակցության ծրագրերի հետ օժանդակություն է տրամադրվել նաև Երևանում բացված «Կիլիկեան» դպրոցին<sup>37</sup>:

Եվ կամ՝ 2013 թ. նոյեմբերի 21-ին Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում քննարկվել է «Հայ Կաթողիկե եկեղեցու առաջնորդարանին կից հյուրատանն ապաստանած արաբախոս երեխաներին «Հայկական Կարիտաս» կազմակերպության «Աջակցություն սիրիահայ փախստականներ»

<sup>33</sup> ՀՀ սփյուռքի նախարարն այցելեց «Կիլիկյան» դպրոց 2012:

<sup>34</sup> Hayastan All-Armenian Fund Continues to Raise Worldwide Support for Syrian-Armenian Community 2013.

<sup>35</sup> ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 9, թ. 27:

<sup>36</sup> ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 24, թ. 70-71:

<sup>37</sup> ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 95, թ. 12, 13-16:

րին» ծրագրի շրջանակում «Կիլիկեան» վարժարան փոխադրելու հարցը: Որոշվել է, դպրոցի ինքնալուծարմամբ պայմանավորված, սիրիահայ երեխաներին այդուհետև ուղարկել առաջնորդարանի հարևանությամբ գործող դպրոցը՝ միաժամանակ, օրակարգից հանելով երեխաներին տեղափոխող փոխադրամիջոցի հարցը<sup>38</sup>:

Չնայած Հայաստան ժամանած որոշ սիրիահայերի՝ իրենց երեխաներին հայաստանյան միջավայրից մեկուսացնելու փորձերին՝ ՀՀ ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր իշխանությունները ջանքեր չեն խնայել Հայաստանում իրենց հայրենակիցների ներկայությունը հայեցի, արդյունավետ ու օգտաշատ դարձնելու ուղղությամբ:

Այսպես, 2013 թ. մայիսի 8-ին Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը, ՀՀ կրթության և գիտության, սփյուռքի, մշակույթի նախարարությունների, Երևանի քաղաքապետարանի և Արարատյան Հայրապետական թեմի «Արարատ» հոգևոր միության հետ համագործակցած, կազմակերպել է Համբարձման տոնին նվիրված միջոցառում, որին, ի շարս Երևանի հանրակրթական հիմնական դպրոցների տնօրենների, Հայոց եկեղեցու պատմություն առարկայի ուսուցիչների, ՀՀ սփյուռքի նախարարության միջոցով հրավիրվել է մասնակցելու նաև «Կիլիկեան» դպրոցի սիրիահայ մանկավարժական անձնակազմը<sup>39</sup>:

### Սիրիահայի ինքնության երկվությունը

Եթե արաբական միջավայրում հայկական ինքնությունը պահպանելու նպատակով սիրիահայ ծնողներն իրենց երեխաներին թեկուզև արաբական ծրագրով գործող հայկական դպրոցներ էին ուղարկում, ապա Հայաստանի Հանրապետությունում արհեստական արաբական միջավայր ստեղծելու՝ առանձին սիրիահայերի անսովոր ցանկությունը հիմնավորվել է իրենց «երեխաների կրթական գործընթացը չընդհատվելու» մտահոգությամբ<sup>40</sup> և վերադարձի դեպքում արաբական կրթական ծրագրի շարունակականությունը պահպանելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև տեղական դպրոցներում արևելահայերենի յուրացման դժվարությամբ:

Հետևաբար, կարելի է ենթադրել, որ ինչպես այդ ծրագրի նախաձեռնողների, նույնպես և սիրիահայերի մի որոշ մասի համար Հայաստանն ի սկզբանե չի դիտարկվել որպես «վերադարձի նախատեսված»<sup>41</sup> հանգրվան: Ընդհակառակը, հայրենիքում նորեկ հայրենակիցների և հատկապես նրանց

<sup>38</sup> ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 92, թ. 93:

<sup>39</sup> ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 86, թ. 60:

<sup>40</sup> Երևանում կգործի սիրիական ծրագրով դպրոց՝ Հայաստան տեղափոխված սիրիահայ երեխաների համար 2012:

<sup>41</sup> Երևանում կգործի սիրիական ծրագրով դպրոց՝ Հայաստան տեղափոխված սիրիահայ երեխաների համար 2012:

երեխաների ինտեգրմանը նպաստելու փոխարեն, միտում է նկատվել ամեն կերպ շեշտել նրանց «ակամա հայրենադարձ», առանձին դեպքերում նույնիսկ՝ փախստական<sup>42</sup> լինելու հանգամանքը: Ուստի, պատահական չէ, որ նրանց կողմից հայրենի հողը՝ հայրենիքը, դիտարկվել է որպես ժամանակավոր հանգրվան-կացարան՝ վաղ թե ուշ «սիրիական հայրենիք» վերադառնալու կամ այլ երկրներ տարանցելու անխուսափելի հեռանկարով<sup>43</sup>:

Այդ մասին օտար լրատվամիջոցին տված հարցազրույցում անկեղծացել է նաև «Կիլիկեան» դպրոցի տնօրինուհի Նորա Փիլիպոսյանը, որը 2012 թ. ամռանն էր Հալեպից ելել Հայաստան. «Նրանք, ովքեր գալիս են այստեղ [Հայաստան], հստակ ուզում են վերադառնալ: Հայերենը մեր լեզուն է, սակայն մեր մշակույթը սիրիական է: Դժվար է այստեղ գալ»<sup>44</sup>: Նրա գնահատմամբ, «դպրոցի ապագան կախված է Սիրիայում քաղաքական իրավիճակից՝ թե որքան մարդ կվերադառնա հնարավորության ի հայտ գալուն պես», քանի որ, «երբ դպրոցները բացվեցին անցյալ տարի սեպտեմբերին, շատ սիրիահայ ընտանիքներ չգիտեին ինչ անել՝ իրենց երեխաներին տա՞լ [տեղի] հանրային դպրոցներ, թե՞ սպասել մինչև հակամարտության ավարտը և վերադառնալ: Դպրոցը բացվել է, որպեսզի երեխաներին հնարավորություն տրվի սովորել սիրիական ծրագրով, որպեսզի, երբ վերադառնան, հետ չմնան [ծրագրից]»<sup>45</sup>:

Այսպիսով, ի սկզբանե դպրոցի տնօրինուհու, ինչպես նաև որոշ ծնողների ու աշակերտների իսկ խոստովանությամբ, նրանց գիտակցության մեջ Հայաստանը չի դիտարկվել որպես մշտական բնակության վայր, այլ որպես Սիրիա վերադառնալու համար ժամանակավոր հանգրվան<sup>46</sup>: Մինչդեռ Սիրիայում ռազմական գործողությունների հետզհետե ծավալմանն ու խորացմանը զուգընթաց, երբ պարզ դարձավ, որ տևական պատերազմը նրանց զրկում է այդ հնարավորությունից, շատերը, առիթից օգտվելով, գաղթականական տարբեր ծրագրերով արտագաղթեցին Հայաստանից՝ ընտրելով օտար երկրներում հանգրվանելու տարբերակը<sup>47</sup>:

Հարկ է նշել, որ Հայաստանում «Կիլիկեան» դպրոցի գործունեությունը զերծ չէր քննադատություններից: Ըստ որոշ աղբյուրների, աշակերտներին

<sup>42</sup> Սկզբնական շրջանում Սիրիայից Հայաստան ներգաղթող հայերը հիմնականում դիմել են հայրենիքում փախստականի կարգավիճակ ստանալու համար: Տե՛ս Հայաստանում հաստատվել են 16 հազար սիրիահայեր, 1000 իրաքահայեր և փախստականի կարգավիճակ ունեցող 130 ուկրաինացիներ 2015:

<sup>43</sup> Սիրիայի հայությունը կմնա սիրիական հայրենիքի ու իր ժողովրդի կողքին. Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Կաթողիկոս 2012: Դէպի Վերականգնում. Արամ Ա.ի Կոչը Հայ Ժողովուրդին՝ Տագնապահար Հալեպին 2017:

<sup>44</sup> Malek 2012.

<sup>45</sup> Hakobyan 2013.

<sup>46</sup> Hakobyan 2013.

<sup>47</sup> Ավելի մանրամասն տե՛ս Ավագյան 2022, 63-80, Ավագյան 2023, 61-74:

չեն թույլատրել սովորել հայոց պատմություն, նրանց չեն ծանոթացրել հայկական տոներին, հայ հերոսներին, դասերը սկսվել են սիրիական քայլերգով, իսկ պատերին ամրացված պաստառներն արաբերենով գովերգել են «սիրիական հայրենիքը»՝ «Ես սիրում եմ Սիրիան, Սիրիան իմ տունն է», տնօրենի սեղանին սիրիական դրոշն է եղել<sup>48</sup> և այլն:

Բայց և այնպես, «Կիլիկեան» վարժարանի հովանավոր Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության (ՄԴՀԿ) հայտարարությամբ հերքվել են քննադատությունները՝ պարզաբանելով, որ դպրոցում աշակերտները դասերը սկսել են ոչ թե Սիրիայի քայլերգով, այլ Տերունական աղոթքով, ինչպես ընդունված էր համայնքի հայկական դպրոցներում: Եվ քանի որ Սիրիայի հայկական դպրոցների համար գործող ծրագրում առանձին դասաժամով «Հայոց պատմություն» առարկա ներառված չէր, այլ այն մատուցվել է կրոնի և հայոց լեզվի դասաժամերին, ուստի և սիրիական ուսումնական ծրագրով գործող «Կիլիկեան» վարժարանում ևս ծրագիրը նույն կերպ էր կազմված: Ինչ վերաբերում է հայկական տոներին, ապա դրանք, ըստ ՄԴՀԿ-ի հայտարարության, հիշատակվել են նույնիսկ Սիրիայի հայկական դպրոցներում<sup>49</sup>:

Երևանում սիրիական ծրագրով արաբական դպրոցը փակվել է, երբ մեր սիրիահայ հայրենակիցների համար պարզ է դարձել, որ քաղաքացիական պատերազմի ավարտը տակավին շատ հեռու է, և իրենք այլևս հազիվ թե կարողանան վերադառնալ Սիրիա<sup>50</sup>, ուստի և անհրաժեշտ էր կողմնորոշվել՝ մնալ պատմական հայրենիքում, թե՛ «հայրենիքներ» փնտրել օտար ափերում:

«Նյու Յորք թայմսի» արաբ լրագրող Ալիա Մալեկը, Երևանում «Կիլիկեան» դպրոցի առկայության փաստից ելնելով, կարողացել է դիպուկ եզրակացության հանգել Հայաստանում սիրիահայերի մի որոշ մասի մեջ տիրող «սփյուռքյան» տրամադրությունների վերաբերյալ. ««Կիլիկեան» դպրոցն իր 250 [300] աշակերտներով արտացոլում է սիրիահայերի երկվությունը. [նրանցից] շատերը ցանկանում են վերադառնալ իրենց սփյուռքյան գոյությանը, նույնիսկ այն դեպքում, երբ իրենց պատմական հայրենիքում նրանց ողջունում են»<sup>51</sup>:

Բնութագրական է դպրոցահասակ երկու երեխա ունեցող սիրիահայ Ալինա Պողոսյանի խոսքը, ըստ որի, սիրիահայն այժմ էլ մտատանջությունների մեջ է, թե ինչպես վերադառնա ավերակված Սիրիա. «Այժմ մենք ապ-

<sup>48</sup> Hakobyan 2013, Malek 2012.

<sup>49</sup> ՄԴՀԿ կոչը. Չփորձել սևացնել Կիլիկյան բարեսիրական միության և դպրոցի տնօրինության քարի համբավը 2013:

<sup>50</sup> Warm Welcome for Syrian Armenians 2016, Syria's Armenians are Fleeing to Their Ancestral Homeland 2017.

<sup>51</sup> Malek 2012.

րում և աշխատում ենք Երևանում, սակայն, երբ պատերազմն ավարտվի, մենք վերադառնալու ենք Հալեպ: Սիրիայում մենք թողել ենք մեր տները, մեր ունեցվածքը: «Կիլիկեան» դպրոցը լուծեց մեր խնդիրները, քանի որ այն բաց չթողեց դասերը և քայլ պահեց սիրիական դպրոցների ծրագրի հետ: Պարզապես այժմ մենք չգիտենք, թե ինչ պիտի անենք, երբ վերադառնանք»<sup>52</sup>:

Այս և այսպես մտածող սիրիահայերի համար ի սկզբանե Հայաստանում մնալն իրենց ծրագրերում չի եղել, հետևաբար, չեն ցանկացել, որ երեխաները տեղական դպրոցի միջոցով ընտելանան հայրենի միջավայրին, միաժամանակ, իրենց հետագա կյանքը չեն պատկերացրել Սիրիայում:

Հայրենի միջավայրին ընտելանալ չեն ցանկացել նաև այն սիրիահայերը, որոնք արդեն իսկ մտադրվել էին փոխադրվել արտերկիր: Ավելին՝ հայրենիքում նրանց համար ընձեռված բարենպաստ պայմանների առկայության դեպքում իսկ հեռու են մնացել հայեցի միջավայրին համարկվելու հնարավորությունից: Ուստի և, արտագաղթելու հետ կապված հետագա անհարմարություններից զերծ մնալու նպատակով իրենց երեխաներին մի որոշ ժամանակ տեղավորել են արաբական դպրոցում, որպեսզի երբ արտագաղթելու ժամանակը գա, նրանց սահուն տեղափոխեն օտար, գլխավորապես արևմտյան երկրների հանրակրթական դպրոցներ: Մանավանդ որ արտերկրի ոչ մի կառավարություն հայրենի կառավարության նման նրանց համար սիրիական ծրագրով արաբական դպրոց չէր բացելու, ուստի և կամա թե ակամա պիտի համարկվեին տեղի ոչ արաբական միջավայրին:

Այսպիսով, հակառակ Հայաստանում սիրիահայերին ցուցաբերած ամեն կարգի օժանդակության, այն սիրիահայ ընտանիքները, որոնք ի սկզբանե չեն ցանկացել հաստատվել հայրենիքում և տրամադրված չեն եղել ինտեգրվել Հայաստանի կյանք ու կենցաղին, իրենց զավակներին ուղարկել են սիրիական ուսումնական ծրագրով նորաբաց «Կիլիկեան» արաբական դպրոց՝ հույսով, որ ժամանակին կա՛մ կվերադառնան ավերակված Սիրիա, կա՛մ կարող են Հայաստանն օգտագործել որպես տարանցման հարթակ՝ արևմուտքի երկրներ արտագաղթելու նպատակադրումով: Ոմանք էլ, սկզբնական շրջանում չկողմնորոշվելով կամ չցանկանալով կտրվել կորցրած ծննդավայրի հիշատակների՝ թերևս վերջին խորհրդանիշը հանդիսացող արաբերենից, այնուամենայնիվ, սովորույթի համաձայն, իրենց զավակներին մի որոշ ժամանակ դեռ ուղարկել են արաբական դպրոց:

### **Եզրակացություններ**

Ամփոփելով նշենք, որ մեկամյա կարճատև գոյություն ունեցած Սիրիայի ուսումնական ծրագրով «Կիլիկեան» արաբական դպրոցը բացվել էր որոշ

<sup>52</sup> Harutyunyan 2014.

սիրիահայերի ցանկությամբ, ՀՀ նախագահի համաձայնությամբ, ՀՀ սփյուռքի, կրթության և գիտության նախարարությունների համակարգմամբ, Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ և սփյուռքի նյութական օժանդակությամբ:

Թեպետ սիրիահայերի համար Երևանում «Կիլիկեան» դպրոցի բացումը համայնքի նկարագիրը պահպանելուն և հայաստանցիների հետ հաղորդակցվելիս «խորթություն» չզգալուն էր ուղղված, այդուհանդերձ, առանձին դեպքերում այն դարձավ հայրենի ժողովրդի ու միջավայրի հետ ընտելացնող ժամանակավոր և միջանկյալ հանգրվանային փորձառություն՝ Սիրիա վերադառնալ, Հայաստանում մնալ, նույնիսկ օտար երկրներ արտագաղթել ցանկացողների համար՝ հայրենի աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների, ինչպես նաև ժողովրդի ցուցաբերած անսակարկ աջակցության շնորհիվ:

### **Օգտագործված գրականություն**

- Հայաստանի ազգային արխիվ. ՀՀ սփյուռքի նախարարություն, ֆ. 1786, ց. 1, գ. 137, թ. 1, գ. 2, գ. 8, թ. 116, գ. 78, թ. 46, գ. 3, գ. 9, թ. 27, գ. 24, թ. 70-71, գ. 86, թ. 60, 82, գ. 92, թ. 93, գ. 95, թ. 12, 13-16:
- Ավագյան Բ. 2022, Սիրիահայերի արտագաղթը Կանադա (2013-2016 թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, N 3, էջ 63-80:
- Ավագյան Բ. 2023, Սիրիայի հայերի տեղաշարժը արտերկիր 2012-2018 թթ. (Լիբանան, Թուրքիա, Հորդանան, ԱՄՆ, Շվեդիա, Ավստրալիա), Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, N 3, էջ 61-74:
- Գալստյան Հ. 2015, Սիրիահայեր. վերադարձ, որ չէին նախատեսել, 3 հունիսի, <http://hetq.am> (ներբեռնման օրը՝ 24.01.2024):
- Դէպի Վերականգնում. Արամ Ա.ի Կոչը Հայ Ժողովուրդին՝ Տագնապահար Հալէպէն 2017, 9 Յունուար, <http://asbarez.com> (ներբեռնման օրը՝ 16.08.2023):
- Երևանում կգործի սիրիական ծրագրով դպրոց՝ Հայաստան տեղափոխված սիրիահայ երեխաների համար 2012, 8 հոկտեմբերի, <http://www.panarmenian.net> (ներբեռնման օրը՝ 12.11.2023):
- Զաքարյան. Սիրիահայերից շատերը մտափոխվել են, ցանկանում են Հայաստանում հաստատվել 2013, 29 հունիսի, <https://www.panorama.am> (ներբեռնման օրը՝ 24.01.2024):
- Զաքարյան Ֆիրդոս, Սիրիայի հայ համայնքի հետ տարուող աշխատանքները (2008-2015) 2018, «Սուրիոյ հայերը. Գիտաժողովի նիւթեր (24-27 Մայիս, 2015)», խմբ.՝ Անդրանիկ Տագեւեան, Պէյրոյթ, Haigazian University Press, էջ 573:
- Հայաստան-Սփյուռք չորրորդ համաժողովում արված առաջարկությունների կատարման վերաբերյալ 2011, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն, Երևան, 19-20 սեպտեմբերի, էջ 76:
- Հայաստանում հաստատվել են 16 հազար սիրիահայեր 2015, 1000 իրաքահայեր և փախստականի կարգավիճակ ունեցող 130 ուկրաինացիներ, 29 դեկտեմբերի, <https://armenpress.am> (ներբեռնման օրը՝ 24.01.2024):
- ՀՀ սփյուռքի նախարարն այցելեց «Կիլիկյան» դպրոց 2012, 22 հոկտեմբերի, <https://www.aravot.am> (ներբեռնման օրը՝ 12.11.2023):



- ՀՀ սփյուռքի նախարարություն. Սիրիահայերի հիմնախնդիրները՝ համահայկական կառույցների ուշադրության կենտրոնում 2012, 31 հոկտեմբերի, <https://www.aravot.am> (ներբեռնման օրը՝ 16.08.2023):
- ՍԴՀԿ կոչը. Չփորձել սևացնել Կիլիկյան բարեսիրական միության և դպրոցի տնօրինության բարի համբավը 2013, 16 մարտի, <https://www.panorama.am> (ներբեռնման օրը՝ 12.11.2023):
- Սիրիահայ երեխաները պատրաստվում են ուսումը շարունակել Երևանում 2013, 20 հունիսի, "Yerevan.am", <https://yn.am> (ներբեռնման օրը՝ 24.01.2024):
- Սիրիահայերի համար կկազմավորվի սիրիական ծրագրով կրթության դպրոց 2012, 28 սեպտեմբերի, <https://168.am> (ներբեռնման օրը՝ 16.08.2023):
- Սիրիայի հայությունը կմնա սիրիական հայրենիքի ու իր ժողովրդի կողքին. Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Կաթողիկոս 2012, 21 հուլիսի, <https://www.tert.am>, <http://www.slaq.am> (ներբեռնման օրը՝ 12.11.2023):
- Armenia Welcomes Immigrating Compatriots: The Wall Street Journal Dwelled on Syrian Armenian Issues 2012, December 5, <https://armenypress.am> (ներբեռնման օրը՝ 16.08.2023).
- Balkhian Sarkis. The Housing Conundrum: Syrian Armenians in Armenia 2014, January 14, <https://armenianweekly.com> (ներբեռնման օրը՝ 24.01.2024).
- Hakobyan Julia. Middle East Meets Armenia: Armenians Flee Syria for the Motherland 2013, June 1, <https://agbu.org> (ներբեռնման օրը՝ 24.01.2024).
- Hakobyan Julia 2013, Some Syrian Armenians Hope Learning Russian Will Help Them to Better Integrate into Armenian Society, January 18, <http://armenianow.com> (ներբեռնման օրը՝ 16.08.2023).
- Harutyunyan Arpi 2014, School Barriers for Syrian Armenians, September 15, "Institute for War and Peace Reporting", <https://iwpr.net> (ներբեռնման օրը՝ 24.01.2024).
- Hayastan All-Armenian Fund Continues to Raise Worldwide Support for Syrian-Armenian Community 2013, June 27, <http://www.armradio.am> (ներբեռնման օրը՝ 24.01.2024).
- Malek Alia. Armenians Fleeing Anew as Syria Erupts in Battle 2012, December 11, <https://www.nytimes.com> (ներբեռնման օրը՝ 12.11.2023).
- Markosian Diana. Armenia Tries to Help as Christian Armenians Flee Syria 2013, February 13, <http://www.usatoday.com> (ներբեռնման օրը՝ 24.01.2024).
- Mouradian Khatchig. School for Syrian-Armenian Kids Forges Ahead in Yerevan 2013, 4 March, <http://www.armenianweekly.com> (ներբեռնման օրը՝ 16.08.2023).
- Syria's Armenians are fleeing to their ancestral homeland. The war may bring an end to a Christian minority's century-long story 2017, June 26, <http://www.economist.com> (ներբեռնման օրը՝ 24.01.2024).
- Syrian-Armenian Refugees to Learn Russian "To Get By" in Armenia 2013, January 15, <http://hetq.am> (ներբեռնման օրը՝ 12.11.2023).
- Warm Welcome for Syrian Armenians 2016, May 9, "Institute for War and Peace Reporting", <https://iwpr.net> (ներբեռնման օրը՝ 16.08.2023).

---

---

## ШКОЛА «КИЛИКЕАН» В АРМЕНИИ, ОСНОВАННАЯ НА СИРИЙСКОЙ ОБРАЗОВАТЕЛЬНОЙ ПРОГРАММЕ (2012-2013 ГГ.)

Кнарик Авакян

### Резюме

С 2012 года, в связи с массовым притоком сирийских армян в Армению, правительство РА вплотную занялось оказанием им всесторонней помощи как в социально-экономической, так и образовательной сфере.

В 2012-2013 учебном году в Ереване даже действовала арабская школа «Киликеан» с сирийской программой, которая была открыта по просьбе сирийских армян, с согласия Президента РА, координируемая министерствами диаспоры, образования и науки РА и функционирующая при поддержке мэрии Еревана и на основе материальной помощи диаспоры.

Открытие школы «Киликеан» было направлено на сохранение особенностей общины, однако она скорее была предназначена для адаптации отдельных сирийских армян к новой среде и функционировала весьма недолго.

**Ключевые слова** – война в Сирии, Правительство РА, Министерство диаспоры РА, Социал-демократическая партия Гнчакян, сирийская учебная программа, школа «Киликеан», Армения.

## THE "CILICIAN" SCHOOL IN ARMENIA, WITH SYRIAN EDUCATIONAL PROGRAM (2012-2013)

Knarik Avagyan

### Abstract

Since 2012, along with the massive influx of Syrian-Armenians into Armenia, the RA government was engaged in the task of providing them with comprehensive socio-economic, educational and other assistance.

During 2012-2013 academic year, the "Cilician" Arabic School with the Syrian program even was operated in Yerevan. It was opened at the request of some Syrian-Armenians, with the agreement of the RA President, with the coordination of the RA Ministries of Diaspora, Education and Science, with the support of the Yerevan Municipality and with the financial assistance of the Diaspora.

The opening of the "Cilician" School was aimed at preserving the image of the community, however, in some cases, it became a temporary and intermediate landmark experience of adaptation with the native people and environment.

**Key words** – War in Syria, Government of the RA, Ministry of Diaspora of the RA, Social-Democratic Hnchakian Party, Syrian educational program, "Cilician" School, Armenia.

# ՈՎՔԵՐ ԵՆ ՂԵԿԱՎԱՐԵԼ ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ

## Խորեն Գրիգորյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայցորդ

ՀՀ, Երևան, Չարենցի 15

Էլ. հասցե՝ khorenethnography@gmail.com

ORCID: 0009-0003-1745-632X

Հոդվածը ներկայացվել է 05.06.2024, գրախոսվել է 10.07.2024, ընդունվել է տպագրության 02.08.2024

DOI: 10.53548/0320-8117-2024.2-131

### Ամփոփում

Օսմանյան կայսրությունում 1915 թ. Հայոց ցեղասպանության օրերին Իսկանդերուն-Ալեքսանդրեթի սանջակի *Մուսա լեռ* կոչվող լեռան հարակից հայկական գյուղերը չենթարկվեցին աքսորի հրամանին և բարձրացան Մուսա լեռ, ռազմական դիմադրություն ցույց տվեցին թուրքական կանտոնավոր զորքերին և ֆրանսիական նավերով տեղափոխվեցին Եգիպտոս՝ Պորտ Սաիդ: Առաջին աշխարհամարտում Օսմանյան կայսրության պարտությունից հետո Իսկանդերուն-Ալեքսանդրեթի սանջակը հանձնվեց Ֆրանսիային, և Ֆրանսիան Պորտ Սաիդում ապաստանած հայերին վերադարձրեց իրենց բնակավայրերը: Սույն շրջանից սկսած՝ հայկական կուսակցական շրջանակներում վիճելի է դարձել այն հարցը, թե ովքե՞ր են ղեկավարել ինքնապաշտպանական մարտերը Մուսա լեռան բարձունքում: 1940-ականներին, երբ մուսալեռցիների մի մասը Այնճար բնակավայրը լքեց և տեղափոխվեց Հայաստան, այս ջրբաժանն ավելի խորացավ, քանի որ Խորհրդային Հայաստանում, համաձայն տիրող գաղափարախոսության, ինքնապաշտպանական մարտերի ղեկավարը չէր կարող լինել ՀՅԴ անդամ: Հայաստանում ապաստանած մուսալեռցիների ընկալումների մեջ ամրապնդվեց այդ տեսակետը, մինչդեռ Այնճարի մուսալեռցիները հակառակ համոզմունքն ունեն:

**Բանալի բառեր՝** Պորտ Սաիդ, Մուսա լեռ, Օսմանյան կայսրություն, Այնճար, ՀՅԴ, Ալեքսանդրեթ, Իսկանդերուն:

### Ներածություն

Օսմանյան կայսրությունում 1915 թ. Հայոց ցեղասպանության ժամանակ Իսկանդերուն-Ալեքսանդրեթի սանջակի *Մուսա լեռ* կոչվող լեռան հարակից հայկական գյուղերը, չենթարկվելով աքսորի հրամանին, բարձրացան Մուսա լեռ՝ ռազմական դիմադրություն ցույց տալով թուրքական կանտոնավոր զորքերին և ֆրանսիական նավերով տեղափոխվեցին Եգիպտոս՝ Պորտ Սաիդ: Առաջին աշխարհամարտում Օսմանյան կայսրության պարտությունից հետո Իսկանդերուն-Ալեքսանդրեթի սանջակը Ֆրանսիային հանձնվեց, և Ֆրանսիան Պորտ Սաիդում ապաստանած հայերին վերադարձրեց իրենց բնակավայրերը: Սակայն 1938-ին՝ Երկրորդ աշխարհամարտի նախօրեին, Ֆրանսիան Ալեքսանդրեթի սանջակը հանձնեց Թուրքիային և փախստական կիլիկիահայերին օգնեց լքելու Թուրքիային անցած և այլևս *Հաթայ* անվանված Ալեք-

սանդրեթը: 1939 թ. սանջակը քրեցին նաև (այս անգամ ընդմիջտ) Մուսա լեռան փեշերի վեց հայկական գյուղերի՝ հայրենիք վերադարձող հայերը: Ֆրանսիան մուսալեռցիների մյուս մասին օգնեց տեղափոխվելու Լիբանան և հիմնադրելու Այնճարը, որն այսօր հայտնի է որպես մուսալեռցիների գյուղ: Գյուղը հիմնադրելուց մոտ քսան տարի հետո միայն հայերի այս խումբը սկսեց վերագնահատել իր ինքնապաշտպանական անցյալը՝ որպես հերոսական դրվագ, և հիմա հպարտորեն կրում է «մուսալեռցի» անունը:

### **Ո՞վ էր ղեկավարում Մուսա լեռան ինքնապաշտպանական մարտերը**

Թերևս սա այն հարցն է, որը տարիներ շարունակ եղել է ամենաքննարկվող թեմաներից մեկը: Այս հարցին Խորհրդային Հայաստան տեղափոխված և Լիբանանի Այնճար համայնքում բնակվող մուսալեռցիները իրենց հուշագրություններում, հրատարակվող աշխատություններում տարբեր պատասխաններ են տալիս, և այդ տարբերություններն էլ մասամբ «մուսալեռցի» ինքնության ու մուսալեռցու անցյալի պատմության հիշողության բաժանարարն են: Այս իրողությունը, որ սկսել է քննարկվել Պորտ Սաիդ հասնելուց ի վեր (1915 թ. սեպտեմբեր), ցայսօր լուրջ դիտարկման կարիք ունի:

Ինքնապաշտպանական մարտերը ղեկավարող հայտնի կերպարները իրականում լուրջ մասնակցություն են ունեցել ինքնապաշտպանական մարտերի կազմակերպման գործում:

**Վեր. Տիգրան Անդրեասյանը** Յողունօլուքից էր, Ջեյթունի տարագիր ավետարանական եկեղեցու պատվելի, որը տեղյակ էր տարագրության իրական ընթացքի, ճանապարհի և հանգրվանի, կոտորածների, տարագրվողների զրկանքների, ողբերգության մասին, մասնակցել էր տարագրությունն ընտրելու կամ լեռ բարձրանալով՝ դիմադրելու հարցի քննարկմանը, ժողովի ժամանակ իր մեծ ազդեցությունն ունեցավ լեռ բարձրանալու և մինչև վերջին փամփուշտը կռվելու տեսակետը պնդելու առումով:

**Մովսես Տեր-Գալուստյանը**, որը ընդհանուր զինվորական հրամանատար էր նշանակվել ղեկավար մարմնի կողմից (որն էլ ղեկավարում էր հենց Տ. Անդրեասյանը), ռազմական գործողությունների պատասխանատուն էր:

**Եսայի Յաղոբյանը** դեռ մինչև տարագրության հրամանն ստանալը նախկին կամավորական էր, զինված չեթեական խմբի ղեկավարը: Նրա անունը քանիցս հիշատակում է նաև Տ. Անդրեասյանն իր հուշագրությունում:

Խնդիր չդնելով պարզելու ինքնապաշտպանական մարտերը ղեկավարողի վիճելի հարցը՝ նշենք, որ յուրաքանչյուր պատմության կամ իրապատումի վերաբերյալ կարծիքների ու մեկնաբանությունների տարբերությունները պատճառներ ունեն. պատմական իրականության ու բոլորովին անընդունելի ենթադրության միջև բազմաթիվ երանգներ կան: Կարևոր ենք համարում շեշտադրում անել տվյալ կարծիքի կամ մեկնաբանության տրամաբանական զարգացումը քննելու և ոչ թե դրա վերջնական եզրակացության գաղափար-

րախոսական կամ ճշգրիտ լինելը պարզելու անհրաժեշտության վրա<sup>1</sup>: Հայ Յեղափոխական Դաշնակցության կողմից ինքնապաշտպանական մարտերը կազմակերպած լինելու և ղեկավարի կերպարը Մովսես Տեր-Գալուստյանին վերագրելու գլխավոր աղբյուրը հենց իր՝ Մ. Տեր-Գալուստյանի «Մուսա լեռան դյուցազներգություն» աշխատությունն է<sup>2</sup>, ինչպես նաև Տ. Անդրեասյանի՝ վերոնշյալ սկզբնաղբյուրն ու ինքնապաշտպանական մարտերին մասնակցած, հետագայում ՀՅԴ անդամ դարձած Մ. Տեր-Գալուստյանի կուսակից ընկերներների հուշագրությունները<sup>3</sup>: Վերակազմյալ հնչակյան/Ռամկավար կուսակցությանը ինքնապաշտպանական մարտերի կազմակերպչի դերի վերագրումը պատկանում է հենց այս կուսակցության հուշագրություններին, Խորհրդային Հայաստանի տարածքում լույս տեսած պատմական, գեղարվեստական և գիտական աշխատություններին<sup>4</sup>:

Այս վեճի մանրամասներին ծանոթանալու համար ներկայացնենք մի դրվագ: Այսպես. 1970 թ. և 1979 թ. Խորհրդային Հայաստանում «Լույս» հրատարակչությունը Վ. Պարսամյանի խմբագրությամբ տպագրեց «Հայոց պատմություն 1801-1917 թթ.» և «Հայոց պատմություն 1801-1978 թթ.» երկու հսկայածավալ աշխատությունները: Այս աշխատություններում անդրադարձ կա նաև Հայոց մեծ եղեռնի տարիներին հայերի ինքնապաշտպանական մարտերին: Վ. Պարսամյանը, անդրադառնալով Մուսա լեռան ինքնապաշտպանական մարտերին, մասնավորապես գրել է. «Արևմտահայերի ազատագրական կռիվների պատմության մեջ իր արժանի տեղն ունի Սուետիայի հայերի հերոսական ինքնապաշտպանությունը: Մայր Հայրենիքից կտրված, Միջերկրականի ափին գտնվող Սուետիայի հայերը գերազանցապես երկրագործությամբ ու արհեստով զբաղվող խաղաղ, աշխատասեր մարդիկ էին: Պատերազմը և երիտթուրքերի կառավարության հայաջինջ քաղաքականությունը վտանգի տակ դրեցին նաև նրանց գոյությունը: 1915 թ. հուլիսի սկզբներին Ջեյթունից իր հայրենի Յողունօլուք վերադարձած Տիգրան Անդրեասյանի միջոցով սուետացիք արդեն իսկ տեղյակ էին հայերի աքսորին ու կոտորածներին: Երբ հուլիսին հրաման եկավ Սուետիայի 6 գյուղերի հայերի տեղահանության մասին, նրանք կանգնեցին երկրնտրանքի առաջ: Մի մասը (2000 հոգի) Պիթիաս գյուղի քարոզիչ Նոխուստյանի ղեկավարությամբ բռնում է գաղթի ուղին, իսկ մեծ մասը (ավելի քան 4000 մարդ), գերադասելով պատվավոր մահը անպատիվ կյանքից, որոշում է բարձրանալ Մուսա լեռը և պաշտպանվել: Տեղահանվածների մեծ մասին թուրքերը կոտորում են: Մուսա լեռ բարձրացած հայերն ունեին երեք ամսվա պաշար: Բայց շատ քիչ էր զենքը և ռազմամթերքը: Շուրջ 600 կոպողներ ունեին մոտ 150 մարտական և

<sup>1</sup> Այս մասին հմմտ. Սանջյան Ա., Միջիգանի համալսարանի դոկտոր, հարցազրույց, 10.11.2018:

<sup>2</sup> Սալբի 1919, 25:

<sup>3</sup> Անդրեասեան 2000, 60, Պուրսալեան 2004, 49, Շերպեթճեան 2010, 69:

<sup>4</sup> Boyadjian 1981, 20, Գուշագճեան 1988, 117, Փաշայան 1965, 151, Սահակյան 1993, 7:

մի քանի հարյուր որսորդական հրացաններ: Մեծ մասը անզեն էին, զենք գործածելու անսովոր: Լեռ բարձրանալուց անմիջապես հետո հայերն ստեղծում են ինքնապաշտպանության մարմին, որը գլխավորում էին անվեհեր հայրենասերներ **Եսայի Յաղությանը, Տիգրան Անդրեասյանը, Պետրոս Տմլաքյանը** և ուրիշներ: Նրանք արագ թափով սկսում են վրաններ պատրաստել, ճանապարհը փակել, դիրքեր ու խրամատներ փորել...»<sup>5</sup>: Սույն դրվագն Այնճարի մուսալեռցիների աչքից չէր վրիպել, և «Մուսա լեռ տարեգրքում» 1972 թ. ընդարձակ անդրադարձ կատարվեց հենց Վ. Պարսամյանի տեսակետին: Այնճարի մուսալեռցիներին վրդովեցրել էր խորհրդահայ գիտնականի՝ ինքնապաշտպանական մարտերի կազմակերպիչների անդրադարձի հատվածի «կողմնակալ» շարադրանքը. «Յարգելի՛ փրոֆեսոր, ձեր աշխատասիրած «Հայ ժողովուրդի պատմութիւն» գրքի երրորդ հատորին մէջ, որ կընդգրկէ մեր ժողովուրդի պատմութեան վերջին ժամանակաշրջանը, 1801-1917 թուականները, արժանի տեղ յատկացուած է Մուսա Լեռան քառասունօրեա հերոսամարտին...: Հպարտութեամբ կը հաստատենք, որ հայ ժողովուրդի պատմութեան մէջ Մուսալեռցիներու ըմբոստութիւնը գնահատուած է ձեր կողմէ: ...Սակայն, աւա՛ղ, ցաւօք սրտի հաստատեցինք, որ հիմնական սխալի մէջ ինկած էք Մուսա լեռան քառասունօրեայ հերոսամարտի ղեկավարման պատկերացումին մէջ: Երեւի դուք ալ չէք կրնար ձերբազատուիլ այն ընդհանուր ժխտական տրամադրութենէն, որ Սփիւռքի մէկ հատուածը եւ հայրենիքի ղեկավարութիւնը ունին Հ.Յ. Դաշնակցութեան հանդէպ, եւ զայն դատապարտելու ու մութին մէջ ձգելու համար՝ նոյնիսկ ճշմարտութիւններ խեղաթիւրելու չեն վարանիր եւ խղճի ամենա՛յն հանդարտութեամբ կրնան ստորագրել նմանօրինակ գրութիւններ»<sup>6</sup>: Ապա նույն հոդվածում նշվում է ինքնապաշտպանական մարտերի իրական կազմակերպիչ Մովսես Տեր-Գալուստյանի և Հայ Յեղափոխական Դաշնակցության՝ ինքնապաշտպանական մարտերի կազմակերպման միակ ղեկավարար լինելու մասին: Պետք է նշենք, որ Խորհրդային Հայաստանում տպագրվող՝ Մուսա լեռան ինքնապաշտպանական մարտերի վերաբերյալ բոլոր աշխատություններում բաց էր թողնվում Մովսես Տեր-Գալուստյանի անունը, քանի որ իրոք կար գրաքննություն ընդդեմ ՀՅԴ կուսակցության: Փաստացի, այդ գրաքննությունն ինքնապաշտպանական մարտերին վերաբերող բոլոր աղբյուրներից, այն է՝ գիտական, գեղարվեստական, հուշագրային, հանել էր ՀՅ Դաշնակցությանը վերաբերող բոլոր հիշատակումները: Հայաստանի Հանրապետությունում տպագրված մամուլում Մովսես Տեր-Գալուստյանի՝ ինքնապաշտպանական մարտերի կազմակերպիչ լինելու դրվագը վիճարկվում էր ու կասկածի տակ դրվում: Պետք է նշենք նաև, որ Այնճարի և ՀՅ Դաշնակցության հրատարակութե-

<sup>5</sup> Պարսամյան 1970, 465-468, Պարսամյան, Հարությունյան 1979, 380-381:

<sup>6</sup> Մուսա լեռ տարեգրք 1972, 150-151:

յուններից և ոչ մեկում չի հիշատակվում, Մովսես Տեր-Գալուստյանից բացի, այլ հերոսի անուն: Ավելին, եթե խորհրդահայ տեքստերում ինքնապաշտպանական մարտերի կազմակերպիչն ու նախաձեռնողն անորոշ «ժողովուրդն էր՝ մի խմբի նախաձեռնությամբ», ապա մյուս դեպքում հանդիպում ենք միմիայն Հայ Յեղափոխական Դաշնակցությանն ու Մովսես Տեր-Գալուստյանին: Խորհրդահայ ամբողջ տարածքում ՀՅԴ-ն գրավոր տեքստերից վերացնելու միտումը ցայսօր Հայաստանի մուսալեոցիների (և ոչ միայն նրանց) ընկալումներում ու կոլեկտիվ հիշողության մեջ ամրացրել է այն տեսակետը, որ հենց Եսայի Յաղությանն է կազմակերպել ինքնապաշտպանական մարտերը: Նույն կերպ, ՀՅԴ նախաձեռնությամբ, Լիբանանում հրատարակվող՝ թեմային վերաբերող մյուս բոլոր աշխատություններում բացակայում են այլ հերոսներ, որոնք այլ կուսակցության անդամ կամ անկուսակցական են եղել: Սա իր հերթին կոլեկտիվ ինքնության ու հիշողության մեջ և բանավոր պատմություններում, անցյալի պատումներում կարծրացրել է այն համոզումը, որ ինքնապաշտպանության միակ նախաձեռնողը ՀՅԴ-ն է, իսկ ինքնապաշտպանական մարտերի միակ կազմակերպիչը՝ Մ. Տեր-Գալուստյանը:

Վերոնշյալ անձինք՝ Մովսես Տեր-Գալուստյանն ու Եսայի Յաղությանը, լուրջ մասնակցություն են ունեցել ինքնապաշտպանական մարտերի ժամանակ: Նրանք երկուսն էլ հերոսաբար մարտնչել և կազմակերպել են ժողովրդի փրկության գործը: Տիգրան Անդրեասյանը երկու այրերի մասին էլ հստակ նշում է որպես կազմակերպիչ և ակտիվ մասնակցություն ունեցող անձինք: Թերևս միմիայն քաղաքական դրդապատճառներից ելնելով է, որ հարյուրամյա ինքնապաշտպանական մարտերի վերաբերյալ պատկերացումները ցայսօր դեռ մնում են իրարամերժ:

Այսօրվա Այնճարում ապրող յուրաքանչյուր մուսալեոցի գիտե, որ ինքն անհրաժեշտության դեպքում կարող է և պետք է «ցեղին հանճարը ապացուցանել»: Դա արել են իր նախնիները, և դա կանի ինքը: Այս ընկալումը խոր ազդեցություն ունի Այնճարի մուսալեոցու ինքնության վրա: Բայց այս ընկալումը Այնճարում զուգակցված է «մուսալեոցու տարբերակման» հետ՝ «ցեղին հանճարը ապացուցանել» կարող են գլխավորապես դաշնակցական մուսալեոցիները: Այս համոզմունքն է պատճառը, որ, օրինակ, ժամանակին «Ազդակ» օրաթերթը գրել է, որ «Մուսա լեռան 40 օրը» վեպի՝ Գաբրիել Բագրատյանի կերպարով հեղինակը Մովսես Տեր-Գալուստյանին «կակնարկե»: Մովսես Տեր-Գալուստյանը Մուսա լեռան ինքնապաշտպանության կազմակերպիչներից դաշնակցականն էր: Այս համոզմունքն է պատճառը, որ Այնճարի մուսալեոցիները խանդոտ կերպով հետևում են Մուսա լեռան ինքնապաշտպանության կազմակերպիչների անունների հիշատակումներին և զգայականորեն արձագանքում յուրաքանչյուր «շրջանցումի»: Սրա ակնառու օրինակն այն է, որ, երբ Խորհրդային Հայաստանում հրատարակված Հայոց պատմության դասագրքի՝ Մուսա լեռան ինքնապաշտպանության դրվա-

գում ինքնապաշտպանական մարմնի անդամներ են ներակայացվում «անվեհեր հայրենասերներ Եսայի Յաղուբյանը, Տիգրան Անդրեասյանը, Պետրոս Տնվաքյանը և ուրիշներ», Այնճարի մուսալեռցի «Մուսա լեռ տարեգրքի» 1972 թ. համարում անմիջապես արձագանքում է՝ կշտամբելով խորհրդահայ պատմագիրներին ինքնապաշտպանության կազմակերպիչների վերաբերյալ քաղաքական ընտրության մեջ և պնդելով, որ ինքնապաշտպանական մարտերի իրական կազմակերպիչը և միակ դերակատարը Մովսես Տեր-Գալուստյանը և Հայ Յեղափոխական Դաշնակցությունն են: Մի կողմից՝ Դաշնակցության դերը հետևողականորեն շրջանցելու խորհրդային քաղաքականությունը, մյուս կողմից՝ Այնճարում իշխող դաշնակցական կուսակցության աչալուրջ վերահսկողությունը չափազանց սրել են ոչ վաղ անցյալի դեպքերի զարգացումների գնահատումների հարցը և ազդել դրանց միակողմանիության վրա:

### Եզրակացություններ

Մուսա լեռան ինքնապաշտպանական մարտերի դեկավարի հարցը տարիներ շարունակ եղել է ամենաքննարկվող թեմաներից մեկը: Այս հարցին մուսալեռցիների հուշագրություններում, հրատարակվող աշխատություններում, տարբեր պատասխաններ ունեն խորհրդային Հայաստան տեղափոխված և Լիբանանի Այնճար համայնքում ապրող մուսալեռցիները, և այդ տարբերությունն էլ մասամբ մուսալեռցու ինքնության ու նրա անցյալի պատմության հիշողության բաժանարարն է:

### Օգտագործված գրականություն

- Անդրէասեան Տ. 2000, Ձեյթունի տարագրութիւնը եւ Սուէտիոյ ապստամբութիւնը, Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւն, Նիւ Ճըրսի-Պէյրուօ, 108 էջ:  
 Գուշագճեան 1988, Մուսա լեռան հայկական գաղթածախը, տպ. Տօնիկեան, Պէյրուօ, 190 էջ:  
 Մուսա լեռ տարեգրք 1972, Այնճար, «ազգ Գ. Կիլպենկեան Գոլեճի», 119 էջ:  
 Շերպեթճեան 2010, Պատմութիւն Սուէտահայերու, Այնճար/Պէյրուօ Համազգայինի «Վահէ Սէթեան» տպ., 270 էջ:  
 Պարսամյան Շ.Ռ., Հարությունյան Շ.Ռ. 1970, Հայ ժողովրդի պատմություն 1801-1917, հ. 4, Երևան, «Լույս», 524 էջ:  
 Պարսամյան Շ.Ռ., Հարությունյան Շ.Ռ. 1979, Հայ ժողովրդի պատմություն 1801-1978, Երևան, «Լույս», 752 էջ:  
 Պուրսալեան Յ.Գ. 2004, Մուսա-լեռան հերոսամարտը, Այնճար, Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան, 104 էջ:  
 Սալբի 1919, Ալեակներ եւ խլեակներ Հայ վրանաքաղաքին տարեգրքը, Ադեքսանդրիա, Ա. Գասապեան տպ., 271 էջ:  
 Սահակյան Ա.Լ. 1993, Մուսա լեռը հայոց գոյամարտի պատմության մեջ, Վանաձոր, «Գրական վերնատուն» տպ., 28 էջ:  
 Փաշայան 1965, Լեռ, որ ապրում է ժողովրդի սրտում, Էջմիածին, Մայր աթոռ Ա. Էջմիածին տպ., 122 էջ:  
 Boyadjian H. 1981, Musa Dagh and my Personal Memoirs, New Jersey, Rosekeer Press, 135 p.



---

**КЕМ БЫЛА ВОЗГЛАВЛЕНА САМООБОРОНА ПРИ МУСАЛЕРЕ?**

Хорен Григорян

Резюме

Армянские селения у подножья горы Мусалер в санджаке Искендерун-Александрет, не подчинившись приказу об изгнании, поднялись на гору Муса, чтобы оказать вооруженное сопротивление турецким регулярным войскам. На французских кораблях им удалось перебраться в Порт-Саид в Египте. После поражения Османской империи в Первой мировой войне санджак Искендерун-Александрет был передан Франции, которая содействовала возвращению армян, обосновавшихся в Порт-Саиде, в их родные очаги. В связи с этим событиями среди армянских партийных лидеров возник спор о том, кто возглавил оборону Мусалера. В 1940-е годы, когда часть мусалерцев покинула поселок Айнджар и переселилась в Армению, мнения в этом вопросе разделились: для мусалерцев, волею обстоятельств обосновавшихся в Советской Армении, руководителями этих боев являлись лица, не принадлежавшие к партии АРФД, а для ливанских мусалерцев – наоборот.

**Ключевые слова** – Порт-Саид, Мусалер, Османская империя, Айнджар, АРФД, Искендерун, Александрет.

**WHO WAS LEADING THE SELF-DEFENSE BATTLES AT MUSA DAGH?**

Khoren Grigoryan

Abstract

During the Armenian Genocide of 1915, the Armenian villages near Musa Dagh in the sanjak of Iskenderun-Alexandretta of the Ottoman Empire did not comply with the deportation order. Instead, they ascended Musa Dagh and offered military resistance to the Turkish regular army. With the help of French ships, they were able to relocate to Port Said in Egypt. After the defeat of the Ottoman Empire in World War I, the sanjak of Iskenderun-Alexandretta was handed over to France, and France returned the Armenians who had taken refuge in Port Said to their homes. From that time on, the question of who led the defense of Musa Dagh became a contentious issue among the leaders of the Armenian parties. In the 1940s, when some Musa Dagh residents left the village of Anjar and resettled in Armenia, this division deepened. For Soviet Armenia Musa Daghians, members of the ARF could not be acknowledged as the leaders of the self-defense, and for the Lebanon Musa Daghians vice versa.

**Key words** – Port Said, Musa Dagh, Ottoman Empire, Anjar, ARF, Alexandrett, Iskenderun.

# ԱԶԳԱՅՆԱՄՈՒԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՒՏՈՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ XXI ԴԱՐՈՒՄ

## Գոռ Հովհաննիսյան

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի ասպիրանտ

ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 1

Էլ. հասցե՝ gor.hovhannisyanyan@ysu.am

ORCID: 0009-0005-6230-9446

Հոդվածը ներկայացվել է 08.07.2024, գրախոսվել է 20.07.2024, ընդունվել է տպագրության 02.08.2024

DOI: 10.53548/0320-8117-2024.2-138

### Ամփոփում

«Գորշ գայլի» նշանը թուրքական ազգայնամոլական թերևս ամենահայտնի խորհրդանիշներից է և հատկապես վերջին տարիներին, ներքաղաքական դաշտից զատ, արտահայտվում է նաև արտաքին քաղաքականության մեջ: Ի սկզբանե ծագելով թյուրքական առասպելաբանությունից՝ այն սկզբնական շրջանում օգտագործվում էր ծայրահեղ ազգայնամոլական «Ազգայնական շարժում» կուսակցության (ԱՇԿ) և դրա զինված թևի՝ «Գորշ գայլեր» կառույցի կողմից: Հատկանշական է, որ նշանի հանդեպ վերաբերմունքն ի սկզբանե հակասական էր, և նույնիսկ աջակողմյան որոշ ուժեր վերապահումով էին մոտենում դրան:

Իրավիճակը փոխվեց 2015 թվականից ի վեր, երբ իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցությունը (ԱԶԿ) սկսեց վարել իսլամի և ազգայնականության սինթետի քաղաքականություն՝ դաշինք կազմելով ԱՇԿ-ի հետ: 2017 թվականից նախագահ Էրդոգանն անձամբ սկսեց օգտագործել այդ նշանը՝ ճանապարհ բացելով դրա հետագա տարածման համար ոչ միայն Թուրքիայում, այլև թուրքաբնակ համայնքներ ունեցող այլ երկրներում: «Գորշ գայլի» նշանի ազդեցության և կիրառության աճը ներկայիս թուրքական հասարակության շրջանում ազգայնամոլական տրամադրությունների առավել խոսուն ցուցիչներից մեկն է:

**Բանալի բառեր՝** «Գորշ գայլեր», ազգայնամոլություն, «Ազգայնական շարժում» կուսակցություն, «Արդարություն և զարգացում» կուսակցություն, իսլամի և ազգայնականության սինթեզ, Դիվերսի Բահչեյի, Ռեջեփ Թայյիփ Էրդոգան:

### Ներածություն

«Գորշ գայլի» նշանը, որը թուրքական ազգայնամոլության խորհրդանիշներից մեկն է, ունի կարևոր նշանակություն ժամանակակից Թուրքիայի քաղաքական-հասարակական կառուցվածքի մեջ: Թյուրքական առասպելաբանությունից ծագող այս նշանը «թյուրքականությունը» խորհրդանշող ժեստ է: XX դարի վերջին այս նշանը «որդեգրել» են «Ազգայնական շարժում» կուսակցությունը և դրա երիտթևի՝ «Գորշ գայլեր» (Bozkurt) անունով ռազմականացված և ահաբեկչական կառույցը՝ մշակութային խորհրդանիշից այն վերածելով ազգայնամոլական, ֆաշիստական նշանի:

Թուրքիայում և այլ երկրներում նշանն ունի աջակողմյան ծայրահեղականության և ֆաշիզմի խորհրդանիշի ընկալում: Արևմտյան որոշ քաղաքա-

կան գործիչներ այն համեմատում են Հիտլերի ողջույնի նշանի հետ<sup>1</sup>: Նշանի վերաբերյալ քննարկումները ակտիվացան հատկապես 2024 թ. հուլիսին, երբ Եվրո-2024 ֆուտբոլային մրցաշարի ընթացքում Թուրքիայի հավաքականի ֆուտբոլիստ Մերիհ Դեմիրալը խաղադաշտում այդ նշանը ցույց տալու համար որակագրկվեց: Իրադարձությունը շատ արագ դուրս եկավ զուտ մարզական համատեքստից՝ դառնալով դիվանագիտական, քաղաքական լարվածության պատճառ:

Հոդվածը նպատակ ունի ուսումնասիրելու թուրքական քաղաքական դաշտում «գորշ գայլերի» նշանի էվոլյուցիան՝ զուտ առասպելաբանական խորհրդանիշից ընդհուպ թուրքական ֆաշիզմի խորհրդանիշ: Ուսումնասիրելով քաղաքական դաշտում դրա առաջին դրսևորումները, նշանի ընդունման հիմքում ընկած մոտիվները և նշանի հանդեպ իշխանությունների վերաբերմունքի փոփոխությունները՝ կարող ենք հասկանալ նշանի դերը թուրքական քաղաքական նոր ինքնության ձևավորման և գործող քաղաքական խոսույթի մեջ: Ազգայնամոլական ուժերի կողմից ի սկզբանե որպես հպարտության և միասնության նշան ընդունված ժեստը ժամանակի ընթացքում հակասական ընկալումներ առաջ բերեց ոչ միայն Թուրքիայում, այլև արտերկրում:

### «Գորշ գայլի» նշանի ծագումն ու նշանակությունը

Գորշ գայլի կերպարն ու գայլ պատկերող նշանը խոր արմատներ ունեն թուրքական առասպելաբանության և ժամանակակից թուրքական ազգայնամոլության մեջ: Վեր բարձրացված ցուցամատն ու ճկույթը խորհրդանշում են գայլի ականջները, իսկ ուղիղ պարզած միջնամատը, մատնեմատն ու բույթը՝ գայլի բերանը: Ինչպես նշեցինք, գորշ գայլի խորհրդանիշն ունի առասպելաբանական ծագում. այն հին թուրքական ցեղերի տոտեմական կենդանին է: Թյուրքական առասպելաբանության մեջ կան զգալի թվով գորշ գայլի կերպարին նվիրված առասպելներ: Դրանից հատկապես հայտնի են Գորշ գայլի (Bozkurt Destani), Օղուզ Քաղանի (Oğuz Kağan Destani) և Էրգենեքոնի առասպելները (Ergenekon Destani)<sup>2</sup>: Գորշ գայլը որոշակի դրսևորումներ ունի նաև մոնղոլական առասպելաբանության մեջ<sup>3</sup>:

XX դարի վերջին «գորշ գայլի» նշանը որդեգրեցին թուրքական ծայրահեղ աջ՝ «Ազգայնական շարժում» կուսակցությունը (ԱՇԿ) և դրա երիտասարդական կառույցը և զինված ահաբեկչական թևը՝ «Գորշ գայլերը»: 1969 թ. գնդապետ Ալփարսլան Թյուրքեշի հիմնադրած ԱՇԿ-ն ազգայնամոլական կուսակցություն է, որը գործում է թուրքական ֆաշիզմի և պանթյուրքիզմի

<sup>1</sup> Politiker gegen Wolfs-Grüß 2018.

<sup>2</sup> Çetin 2005, 10-21.

<sup>3</sup> Başkurdistanlı 2010, 131-132.

գաղափարախոսության ծիրում: «Գորշ գայլեր» կազմակերպության անդամներն ահաբեկչական գործունեությամբ հատկապես աչքի են ընկել 1970-ականներին Թուրքիայում մոլեգնող ներքաղաքական բախումների ժամանակ ձախակողմյան քաղաքական ակտիվիստների, մտավորականների և հանրային գործիչների հանդեպ: Կազմակերպությունը հատկապես հայտնի դարձավ 1981 թ.<sup>4</sup> «գորշ գայլ» Մեհմեթ Ալի Աղջայի կողմից Հռոմի պապ Հովհաննես Պողոս II-ի հանդեպ մահափորձից հետո: 1990-ականներին «գորշ գայլերը» մասնակցել են նաև ռուս-չեչենական և արցախյան պատերազմներին<sup>4</sup>: Արդեն XXI դարում նրանք մասնակցել են Սիրիայում և Լիբիայում ընթացող ռազմական գործողություններին<sup>5</sup>, ինչպես նաև 44-օրյա պատերազմին<sup>6</sup>:

### **Ազգայնամուլական խորհրդանիշների դերն ու դրսևորումները թուրքական քաղաքական դաշտում**

Անդրադառնալով ԱՇԿ-ի կողմից նշանի ընդունմանը՝ հարկ է նշել, որ նշանի «որդեգրման» պատմության վերաբերյալ չկա հստակ ընդունված դիրքորոշում: Գազաուզ հասարակական գործիչ Գյուլլու Քարանֆիլի պնդմամբ՝ ԱՇԿ-ականները նշանն առաջին անգամ ընդօրինակել են հենց գազաուզներից: Նա նշում է, որ 1991 թ. օգոստոսին Թուրքիա կատարած այցի շրջանակում իրենց պատվիրակությունը հանդիպել է ԱՇԿ-ի ղեկավար Թյուրքեշին, և հենց իրենք են նրան ցույց տվել այդ նշանը<sup>7</sup>: Ադրբեջանցի քաղաքական-հասարակական գործիչ, պանթյուրքիստական հայացքներով հայտնի Հանըմ Հալիլովան էլ նշում է, որ 1992 թ. Ադրբեջանում կայացած հանրահավաքներից մեկի ժամանակ ինքն է Թյուրքեշին ցույց տվել այդ նշանը և պատմել դրա նշանակությունը<sup>8</sup>: Ըստ այդմ էլ նշանը ԱՇԿ-ն սկսել է օգտագործել 1991-1992 թվականներից: Սակայն կան նաև վարկածներ, որ նշանը ԱՇԿ-ականները օգտագործել են շատ ավելի վաղ. 2022 թ. հունվարին ԱՇԿ-ի աջակիցներից Բարըշ Մուրաթ Այդողանի հրապարակած լուսանկարում պատկերված է Անկարայի տեխնիկական ուսումնարանի դիմաց կանգնած երիտասարդ, որը ցույց է տալիս «գորշ գայլի» նշանը: Ըստ Այդողանի՝ լուսանկարն արված է 1978 թ.<sup>9</sup>:

Մինչև 2017 թ. նշանն օգտագործվում էին միայն ԱՇԿ-ի անդամները և աջակիցները, իսկ մնացած ուժերը չեզոք կամ բացասական վերաբերմունք ունեին դրա հանդեպ: Իրավիճակը փոխվեց 2017 թվականից, երբ իշխող

<sup>4</sup> Langmoe 2022, 72.

<sup>5</sup> «Серые волки» на службе у Эрдогана в Сирии и Ливии.

<sup>6</sup> «Գորշ գայլեր»-ի հետքերը. «Հայկական հարց»:

<sup>7</sup> BOZKURT İŞARETİ HAKKINDA.

<sup>8</sup> Hanim Halilova, Başbuğ Alparslan Türkeş'e bozkurt işaretini nasıl öğrettiğini anlatıyor!

<sup>9</sup> Aydoğan, Bariş Murat [@budun9]. "Çok ilginç bir foto".

«Արդարություն և զարգացում» կուսակցությունը սկսեց համագործակցել ԱՇԿ-ի հետ: 2018 թ. խորհրդարանական ընտրություններին ընդառաջ՝ կողմերը հանդես եկան դաշինքով, որն էլ նշանավորեց ԱՇԿ-ի օգտագործած խորհրդանիշների, այդ թվում՝ «գորշ գայլի» նշանի լայնածավալ օգտագործումն ու տարածումը:

2018 թ. մարտին՝ հանրահավաքներից մեկի ժամանակ, Էրդողանը Սիրիայի Աֆրին քաղաքում զարգացումներին նվիրված իր ելույթի ընթացքում ձեռքով ցույց տվեց «գորշ գայլի» նշանը<sup>10</sup>: Դրանից հետո լրատվամիջոցների այն հարցին, թե ինչու է նման նշան արել, հայտարարել էր, որ «իմ կամքից անկախ էր ստացվել, սակայն գեղեցիկ էր ստացվել»<sup>11</sup>: Հատկանշական է, որ նույն օրերին ԱՇԿ միջոցառումներից մեկի ժամանակ ներկաներից մի աղջիկ ռաբիա նշանի<sup>12</sup> փոխարեն ցույց տվեց «գորշ գայլերի» ողջույնը, իսկ երբ տեսախցիկները մեծ էկրանով ցույց տվեցին այդ տեսարանը, Էրդողանը, որ օրեր առաջ նույն կերպ ողջունել էր իր համակիրներին, բեմից նկատողություն արեց աղջկան, ինչից հետո վերջինս արագորեն «ուղղեց իր սխալը»<sup>13</sup>:

Այս համատեքստում կարելի է հետևել, թե ինչպես է փոխվել Էրդողանի և ընդհանուր իշխանության վերաբերմունքը վերոնշյալ նշանի հանդեպ ԱՇԿ-ի հետ կոալիցիոն գործընկերությունից հետո: 2015 թ. մայիսի 27-ին Էրդողանի՝ Ուշաք քաղաք այցի ժամանակ ԱՇԿ անդամ Սեհեր Քայրհանը նախագահի շարասյունը «ողջունել էր» «գորշ գայլի» նշանով, որի համար ձերբակալվել էր: Քայրհանը մեղադրվում էր «նախագահին վիրավորելու» մեջ, դատախազը նրա համար պահանջում էր 4 տարի ազատազրկում: Դատավարությունը շարունակվեց 1.5 տարի, և ի վերջո Քայրհանը դատարանի կողմից արդարացվեց<sup>14</sup>:

2015 թ. խորհրդարանական ընտրությունների նախընտրական շրջանում ԱՇԿ պատգամավորական թեկնածու, հետագայում ներքին գործերի նախարար Սուլեյման Սոյլուն հրապարակայնորեն քննադատում էր ԱՇԿ ղեկավար Դեվլեթ Բահչելիին՝ նշելով, որ «նրանց ազգայնականությունը միայն մատների նշանների ազգայնականությունը է»<sup>15</sup>:

2015 թ. դրությամբ իշխանության կողմից դատապարտվող նշանը շատ արագ յուրացրեց հենց իշխանության ղեկավարը՝ համապատասխան

<sup>10</sup> Cumhurbaşkanı Erdoğan "Bozkurt" İŞareti Yaptı, 0:07.

<sup>11</sup> Erdoğan: Bozkurt işareti yaptığimin farkında degildim ama güzel oldu.

<sup>12</sup> Բույթը ծավալած չորս թիվը մատներով ցույց տալու նշան, որը, ըստ Էրդողանի, նշանակում է «մեկ ժողովուրդ, մեկ դրոշ, մեկ հայրենիք, մեկ ազգ»:

<sup>13</sup> Erdoğan'dan Bozkurt işareti yapan kiza ayar.

<sup>14</sup> Erdoğan'a bozkurt işareti yaptığı için gözaltına alınan MHP'li isyan etti: Benim günahim neydi.

<sup>15</sup> Süleyman Soylu (Bahçeli'ye): Git Diyarbakir'da yap o (bozkurt) işaretini de delikanliliğini göreyim!

ներով Էրդողանի ղեկավարած ուժի իսլամի ու ազգայնականության սինթեզի քաղաքականությանը:

Ժամանակի ընթացքում ազգայնամոլական նշաններ սկսեցին կիրառել նաև բարձրաստիճան այլ պաշտոնյաներ և իշխանամետ գործիչներ. այն կրեց գրեթե համատարած բնույթ: 2017 թ. փետրվարին Թուրքիայի այդ շրջանի վարչապետ Բինալի Յըլդըրըմը ԱԶԿ համագումարում իր ելույթի ընթացքում «գորշ գայլի» նշանով ողջունեց համագումարին ներկա ԱՇԿ-ականներին<sup>16</sup>: 2022 թ. ապրիլին Ուրուգվայի մայրաքաղաք Մոնտեվիդեո այցի ժամանակ Թուրքիայի արտգործնախարար Մևլութ Չավուշօղլուն «գորշ գայլի» նշանով «ողջունեց» Հայոց ցեղասպանության տարելիցի առիթով Չավուշօղլուի այցի դեմ բողոքի ակցիա կազմակերպած հայ ակտիվիստներին<sup>17</sup>: Օրեր անց Ադրբեջանում անցկացված «Teknofest 2022» ավիացիայի, օդատիեզերական տեխնիկայի և տեխնոլոգիաների փառատոնի ժամանակ «գորշ գայլի» նշանը տեսախցիկի առջև ցույց տվեց նաև Էրդողանի փեսան՝ «Baykar» ռազմարդյունաբերական ընկերության համահիմնադիր և տեխնիկական ղեկավար Սելջուք Բայրաքթարը<sup>18</sup>:

Հատկանշական է, որ ժամանակի ընթացքում նշանը սկսեցին օգտագործել ոչ միայն իշխանության, այլև ընդդիմության ներկայացուցիչները: 2023 թ. նախագահական ընտրությունների նախընտրական քարոզարշավի ընթացքում ընդդիմության միասնական թեկնածու ՀԺԿ-ական Քեմալ Բըրլըչդարօղլուն իրեն «գորշ գայլի» նշանով ողջունած անձին պատասխանեց նույն կերպ<sup>19</sup>:

Ազգայնամոլական հռետորաբանության աճը, որը պայմանավորված էր գերազանցապես Թուրքիայի ներքաղաքական զարգացումներով, իր ազդեցությունն ունեցավ նաև այլ երկրների թուրքական համայնքներում: Հատկապես Եվրոպայում թուրքական ազգայնամոլության աճը հանգեցրեց նրան, որ «գորշ գայլի» նշանն արգելվեց, այնուհետև քրեականացվեց նախ Ավստրիայում<sup>20</sup>, այնուհետև Ֆրանսիայում<sup>21</sup>:

«Գորշ գայլի» նշանի շուրջ քննարկումները վերստին ակտիվացան 2024 թ. հուլիսին, երբ Եվրո-2024 ֆուտբոլային մրցաշարի շրջանակներում անցկացված Թուրքիա-Ավստրիա հանդիպման ժամանակ Թուրքիայի հավաքականի ֆուտբոլիստ Մերիհ Դեմիրալը Ավստրիայի հավաքականի դարպասը խփած գնդակը տոնեց «գորշ գայլի» նշանը ցույց տալով: Հետխաղային մամուլ ասուլիսի ընթացքում էլ հայտարարեց, որ «այդ նշանը թյուրքա-

<sup>16</sup> Başbakan Binali Yıldırım'dan bozkurt işareti.

<sup>17</sup> Bakan Çavuşoğlu Uruguay'da protestoculara "bozkurt" işaretiyle tepki verdi.

<sup>18</sup> Selçuk Bayraktar, Türklüğün sembolü Bozkurt işareti yaparak Azerbaycan Teknofest'e damga vurdu!

<sup>19</sup> Kılıçdaroğlu'ndan bozkurt selami... 25 Nisan 2023 Selçuk Tepeli ile Fox Ana Haber.

<sup>20</sup> Austria: Ban on Turkish nationalist salute in practice.

<sup>21</sup> France has banned the "Grey Wolves" – but who are they?

կանության նշանն է», և որ «շատ ուրախ է, որ այդպես է վարվել»<sup>22</sup>: Այդ արարքի հետևանքով մեծ աղմուկ բարձրացավ, Եվրոպական ֆուտբոլային ասոցիացիաների միությունն էլ (ՈՒԵՖԱ) նախ հետաքննություն սկսեց հարցի շուրջ, այնուհետև Դեմիրալին որակագրկեց 2 խաղով: Մարզական իրադարձությունը շատ արագ քաղաքական աստառ ստացավ. Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը դատապարտեց ՈՒԵՖԱ-ի քայլը՝ համարելով այն «անընդունելի»<sup>23</sup>: Գերմանիայի ներքին գործերի նախարար Նենսի Ֆայգերը ևս անդրադարձավ Դեմիրալի արած նշանին՝ հայտարարելով. «Թուրք աջ ծայրահեղականների նշանները մեր մարզադաշտերում տեղ չունեն: Ֆուտբոլի Եվրոպայի առաջնությունը որպես ռասիզմի հարթակ օգտագործելն անընդունելի է: Ակնկալում ենք, որ ՈՒԵՖԱ-ն կուսումնասիրի իրադարձությունն ու պատժամիջոցներ կկիրառի»<sup>24</sup>: Հայտարարությամբ հանդես եկավ նաև ծագումով թուրք, Գերմանիայի գյուղատնտեսության նախարար Ջեմ Օզդեմիրը. «Այս նշանը աջ ծայրահեղական է, ներկայացնում է ահաբեկչությունն ու ֆաշիզմը: ՈՒԵՖԱ-ն պարտավոր է պատիժ կիրառել»<sup>25</sup>:

Ի պաշտպանություն Դեմիրալի հանդես եկան Թուրքիայի մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ թվում՝ փոխնախագահ Ջևդեթ Յըլմազն<sup>26</sup> ու նախագահ Ռեջեփ Թայյիփ Էրդողանը, որը Դեմիրալի ցույց տված նշանը համեմատեց Գերմանիայի խորհրդանիշ արծվի և Ֆրանսիայի խորհրդանիշ աքաղաղի հետ՝ նշելով, որ «Մերիին այդ կերպ արտահայտել է իր հուզմունքը»<sup>27</sup>: Դեմիրալին X-ի (նախկինում՝ Twitter) իր միկրոբլոգում հրապարակային աջակցությունը հայտնեց նաև Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը. «Մերիի հանդեպ կիրառված պատիժն անարդար է, ես այն դատապարտում եմ: Հոլանդիայի դեմ խաղում Թուրքիայի հավաքականին մաղթում եմ հաղթանակ: Կեցցե թուրքական աշխարհը»<sup>28</sup>: Թուրքիայի նախագահ Էրդողանը նույնիսկ չեղարկեց Թուրքական պետությունների կազմակերպության ոչ պաշտոնական գագաթնաժողովի կապակցությամբ նախատեսվող այցը Ադրբեջան՝ փոխարենը մեկնելով Գերմանիա՝ ստեղծված իրավիճակում Թուրքիայի հավաքականին աջակցելու<sup>29</sup>: Թուրքիա-Հոլանդիա խաղից առաջ Բեռլինում թուրք երկրպագուների բազմահազարանոց երթի գրեթե բոլոր մասնակիցները տեսախցիկների առաջ ցույց էին տալիս

<sup>22</sup> Gol sevincinde neden bozkurt işareti yaptı!? Merih Demiral açıkladı..., 2:15.

<sup>23</sup> No: 128, 3 Temmuz 2024, Milli Futbolcumuz Merih Demiral'a Karşı Açılan Disiplin Soruşturması Hk.

<sup>24</sup> Türkiye düşmanı Cem Özdemir Merih Demiral'ın 'bozkurtlu' gol sevincini hedef aldı.

<sup>25</sup> Türkiye düşmanı Cem Özdemir Merih Demiral'ın 'bozkurtlu' gol sevincini hedef aldı

<sup>26</sup> Cumhurbaşkanı Yardımcısı Yılmaz'dan UEFA'nin Merih Demiral'a verdiği cezaya tepki.

<sup>27</sup> Erdoğan'dan Merih Demiral'ın bozkurt işaretine yorum: "Kimse Fransızların formasında horoz var, niye horozlanıyorsun diyor mu?".

<sup>28</sup> □iyev, İlham [azpresident]. "Almaniyada keçirilən futbol üzrə..."

<sup>29</sup> Erdoğan cancels Azerbaijan trip for Türkiye's Euro tie: Reports.

«գորշ գայլի» նշանը<sup>30</sup>: Խաղից առաջ երկրների օրհներգի ընթացքում Թուրքիայի երկրպագուներն իրենց օրհներգն ուղեկցում էին «գորշ գայլի» նշանով<sup>31</sup>: Ֆուտբոլի Եվրոպայի առաջնությունը ի ցույց դրեց ժամանակակից Թուրքիայում և ժամանակակից թուրք հասարակության մեջ ազգայնամոլության ծավալն ու դրա հանդեպ հասարակության տարբեր շերտերի, այդ թվում՝ իշխող վերնախավի դիրքորոշումը:

### **Էրդողանը սպառնում է «մի գիշեր հանկարծակի գալ»**

Բացի գորշ գայլի նշանից, Էրդողանը իր ելույթներում, հրապարակային հանդիպումներում հաճախ օգտագործում է նաև ԱՇԿ-ի և «Գորշ գայլեր» կառույցի կարգախոսները: Դրանցից հատկապես հայտնի է «Bir gece ansizin gelebiliriz» (մի գիշեր հանկարծակի կարող ենք գալ) արտահայտությունը, որը վերցված է սիրային մի երգից, սակայն համարվում է «գորշ գայլերի» սպառնալից զգուշացումը իրենց հավանական զոհերին: Օրինակ՝ նման բովանդակությամբ սպառնալիքներ իր սպանությունից առաջ ստանում էր նաև Հրանտ Դինքը<sup>32</sup>:

Էրդողանն այդ արտահայտությունը սկսել է ակտիվորեն գործածել 2017 թվականից՝ ԱՇԿ-ի հետ մերձեցման գործընթացի մեկնարկից ի վեր: 2017 թ. ապրիլին վերջինս, խոսելով Իրաքի Սինջան քաղաքի շրջանում թուրքական զինված ուժերի իրականացրած ռազմական գործողության մասին, հայտարարեց, որ «երբ պահը գա, մենք շատ լավ գիտենք, թե ինչ անել՝ մի գիշեր հանկարծակի կարող ենք գալ»<sup>33</sup>: Հետագայում արտահայտությունը սկսեց ավելի հաճախ կիրառվել:

Նույն թվականի սեպտեմբերի սկզբին TEKNOFEST փառատոնին ելույթով հանդես եկած Էրդողանը. խոսելով այդ օրերին թուրք-հունական հարաբերություններում լարվածության աճի մասին՝ Հունաստանին սպառնաց՝ ասելով, որ «թող նրանք չմոռանան Իզմիրը», և որ «Հունաստանի կողմից կղզիների բռնազավթումը կամ նման այլ իրադարձություններ մեզ չեն կարող սահմանափակել, երբ պահը գա, մենք կանենք այն, ինչ անհրաժեշտ է: Ասում ենք՝ մի գիշեր հանկարծակի կարող ենք գալ»<sup>34</sup>: Ընդամենը 3 օր անց Էրդողանը կրկնեց իր սպառնալիքները Հունաստանի նկատմամբ. «Հունաստանը պետք է շատ ավելի մտածված որոշում կայացնի, թե Թուրքիայի հետ ինչպիսի հարաբերություններ է ցանկանում: Հակառակ դեպքում, կրկին հայտարարում եմ՝ մի գիշեր հանկարծակի կարող ենք գալ»<sup>35</sup>:

<sup>30</sup> Bozkurtlar Berlin'de! Türkiye-Hollanda Maçı Öncesi Almanya Sokakları Kirmizi-Beyaz.

<sup>31</sup> Taraftarımız İstiklal Marşı'ni bozkurt işareti yaparak okud.

<sup>32</sup> Neden hedef seçildim?

<sup>33</sup> Cumhurbaşkanı Erdoğan: Bir gece ansizin gelebiliriz, 0:14.

<sup>34</sup> Cumhurbaşkanı Erdoğan'dan Yunanistan'a: Bir Gece Ansizin Gelebiliriz! - TGRT Haber, 1:17.

<sup>35</sup> Cumhurbaşkanı Erdoğan'dan Yunanistan Açıklaması: "Bir Gece Ansizin Gelebiliriz", 1:32.



Հատկանշական է, որ ահաբեկչական այս արտահայտությունը ոչ միայն ավելի ու ավելի հաճախ է կիրառվում Թուրքիայի բարձրաստիճան պաշտոնյաների, այլև օգտագործվում է ավելի ու ավելի բարձր ամբիոններից: 2022 թ. հոկտեմբերին Պրահայում կայացած Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովի ընթացքում Էրդողանը, պատասխանելով հույն լրագրողի հարցին, կրկնեց իր սպառնալիքը Հունաստանի հանդեպ<sup>36</sup>:

**Ազգայնամոլական գաղափարների ու խորհրդանիշների տարածմանը հանգեցրած հանգամանքները**

Եզրափակելով ներկայիս Թուրքիայում ազգայնամոլական խորհրդանիշների՝ մասնավորապես «գորշ գայլի» նշանի դերի և նշանակության մասին վերլուծությունը՝ կարող ենք պնդել, որ վերջին տարիներին՝ սկսած հատկապես 2017 թվականից, թուրք հասարակության շրջանում նկատվում է ազգայնամոլական գաղափարների շեշտակի աճ: Հատկանշական է, որ այն դրսևորվում է ոչ միայն բուն Թուրքիայում, այլև այլ երկրներում (Ֆրանսիա, Ավստրիա, Գերմանիա)՝ թուրքերի շրջանում: Իրավիճակին հանգեցրած հանգամանքները կարող ենք պայմանականորեն բաժանել մի քանի մասի.

- **Իշխանական քարոզչություն.** Թուրքիայի ներկա քաղաքական ղեկավարությունը մեծ դեր ունի ազգայնամոլական խորհրդանիշների, նաև «գորշ գայլի» նշանի և նմանատիպ դրսևորումների աճի մեջ: Իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցությունը՝ նախագահ Էրդողանի գլխավորությամբ, իր ընտրազանգվածին միավորելու համար, քաղաքական խստամի հռետորաբանությանը զուգահեռ, օգտագործում է ազգայնամոլական, երբեմն ծայրահեղական հռետորաբանություն: Ինչպես նշեցինք, Էրդողանն անձամբ է օգտագործում թուրք ազգայնամուլների կարգախոսներն ու նշանները՝ կոտրելով դրանց շուրջ նախկինում առկա տարուները: Էրդողանի և իր մերձավորների կողմից ազգայնամոլական խորհրդանիշների բացահայտ քարոզչությունը հանգեցրել են այդ խորհրդանիշների համընդհանուր տեսանելիությանն ու ընդունմանը:

- **Ազգայնամոլական ուժերի հետ համագործակցություն.** Ազգայնամոլական ուժերի՝ հատկապես ԱՇԿ-ի հետ ԱԶԿ-ի դաշինքն ու համագործակցությունը ևս նպաստել են ազգայնամոլական խորհրդանիշների տարածմանն ու ամրապնդմանը: Ազգայնամոլական, ֆաշիստական ու այլատյաց հիմքերի վրա դրված ԱՇԿ-ն հատկապես կարևոր դեր ունի այդ խորհրդանիշների «առաջխաղացման» մեջ: Անհրաժեշտ է ընդգծել նաև դաշինքի ավելի փոքր անդամ ուժերի՝ հատկապես ԱՇԿ-ի նախկին բարձրաստիճան անդամների հիմնադրած՝ ծայրահեղ ազգայնամոլական «Մեծ միություն» կուսակցության (Büyük Birlik Partisi) գործունեությունը:

<sup>36</sup> Erdoğan ile Yunan gazeteci arasında 'bir gece ansizin gelebiliriz' diyalogu 06.10.2022, 0:35.

• **Մշակութային քարոզչություն.** Վերջին տարիներին՝ հատկապես ԱԶԿ կառավարման ժամանակաշրջանում, նկատվում է Թուրքիայի պատմության օսմանյան և նախասօմանյան շրջանի շուրջ լայն, պետականորեն կազմակերպված հետաքրքրություն, որն ուղեկցվում է նաև ազգայնամոլական քարոզչությամբ: Նշված գործընթացի շրջանակներում նորովի են ներկայացվում թուրք ազգայնականության որոշ տարրեր, այդ թվում՝ «գորշ գայլի» գաղափարը: Այս իրողության լավագույն օրինակներն են պետական բարձրաստիճան ղեկավարների մասնակցությամբ տարբեր միջոցառումների ընթացքում տարբեր դարերի թյուրքական զորքերի համազգեստները կրող զինվորների և թյուրքական տարբեր խորհրդանիշների ներկայացումը, ինչպես նաև օսմանյան անցյալը պատկերող, շատ հաճախ պատմական իրողություններին հակասող և ազգայնամոլական գաղափարներ քարոզող ֆիլմերի ու հեռուստասերիալների թվի աճը: Մեր ուսումնասիրության առարկա թեմայի քննարկման համատեքստում տեղին ենք համարում առանձնացնել թուրքական պետական TRT1 հեռուստաալիքով ցուցադրված «Գահակալը՝ Աբդուլ Համիդ» («Payitaht Abdulhamid») հեռուստասերիալի մի հատված: Հեռուստասերիալի 12-րդ սերիայում Աբդուլհամիդ II-ի կերպարը մարմնավորող դերասանը խոսում է թուրքերի պայքարի մասին՝ նշելով, որ «մենք գորշ գայլ ենք... որոնք մահանում են, բայց չեն հանձնվում»<sup>37</sup>: Այսպիսով փորձ է արվում գորշ գայլի գաղափարը ներկայացնել նաև նեոսօմանիզմի ծիրում՝ այն ավելի ընդունելի դարձնելով հասարակության լայն շերտերի համար:

• **Արձագանք արտաքին մարտահրավերներին.** Թուրքիայի աշխարհաքաղաքական դիրքն ու հատկապես արևմտյան երկրների հետ երբեմն անհարթ հարաբերություններն ևս նպաստել են ազգայնամոլական գաղափարների և խորհրդանիշների աճին ու տարածմանը: Այլ երկրներից ստացվող թվացյալ կամ իրական սպառնալիքներն ու քննադատությունները պաշտպանողական որոշակի արձագանքների պատճառ են դառնում, որոնք երբեմն արտահայտվում են ազգայնամոլական գաղափարների արտահայտման, խորհրդանիշների կիրառման եղանակով: Այդ երևույթներն էլ հմտորեն օգտագործում են քաղաքական խաղացողները: Ազգայնամոլական տրամադրությունների աճին նպաստում են նաև Թուրքիայի «թյուրքական աշխարհի առաջնորդի» փաստացի դերի ստանձնումն ու այդ թեմայով իշխանական քարոզչությունը, որի հիմքերը դրվել են դեռ 1990-ականներին:

### Եզրակացություններ

Ամփոփելով աշխատանքը՝ կարող ենք նշել, որ «գորշ գայլի» նշանը ժամանակի ընթացքում զուտ առասպելաբանական խորհրդանիշից վերած-

<sup>37</sup> Payitaht Abdülhamid 12. Bölüm – Bozkurt, 04:38.

վել է թուրքական/թյուրքական ազգայնամոլության և քաղաքական ինքնության խորհրդանիշի: «Գորշ գայլի» էվոյուցիան թյուրքական առասպելներից մինչև «Ազգայնական շարժում» կուսակցության կողմից որդեգրումը մատնանշում են այն մշակութային և պատմական արմատները, որոնք շարունակում են ազդեցություն ունենալ ժամանակակից թուրքական հասարակության վրա:

Վերջին տարիներին «գորշ գայլի» նշանի շեշտակի տարածումը Թուրքիայում ազգայնամոլության վերելքի ամենախոսուն ցուցիչներից մեկն է: Այնպիսի գործոնները, ինչպիսիք են նախագահ Էրդողանի կողմից բացահայտ քարոզչությունը, իշխող ուժի և ազգայնամոլական, ֆաշիստ ուժերի միջև ռազմավարական դաշինքներն ու համագործակցությունը, մշակութային քարոզչության աճն ու սոցիալական հարթակներում արդյունավետ քարոզչությունը, էականորեն նպաստել են ազգայնամոլական խորհրդանիշների հաստատուն աճին:

Մինչ խորհրդանիշը որոշ անձանց համար ունի հպարտության, միասնության և ուժի խորհուրդ, այն փաստացի Թուրքիայում այլատյաց ազգայնամոլության, աջ ծայրահեղականության և ֆաշիզմի խորհրդանիշ է: Ֆուտբոլիստ Մերիհ Դեմիրալի մասնակցությամբ իրադարձությունն ու դրան հետևած միջազգային արձագանքը ևս ցույց են տալիս նշանի վիճելի էությունն ու դրանից բխող հետևանքները թե՛ Թուրքիայում, թե՛ արտերկրում:

### Օգտագործված գրականություն

- «Գորշ գայլեր»-ի հետքերը. «Հայկական հարց» 21.06.2021, <https://hy.armradio.am/archives/345410> (ներբեռնման օրը՝ 21.06.2024):
- «Серые волки» на службе у Эрдогана в Сирии и Ливии 20.08.2020, <https://hawarnews.com/ru/159793632011835> (ներբեռնման օրը՝ 21.06.2024).
- Politiker gegen Wolfs-Gruß 12.10.2018, <https://www.nachrichtenleicht.de/politiker-gegen-wolfs-gruss-100.html> (ներբեռնման օրը՝ 21.06.2024).
- Langmoe S. 2022, The ideological framework of the Turkish MHP and the grey wolves', Politika nacionalne bezbednosti (Special issue 2022), p. 69-78.
- Austria: Ban on Turkish nationalist salute in practice, 01.03.2019, <https://www.aa.com.tr/en/europe/austria-ban-on-turkish-nationalist-salute-in-practice/1406731> (ներբեռնման օրը՝ 21.06.2024).
- France has banned the "Grey Wolves" – but who are they?, 24.11.2020, <https://www.aljazeera.com/features/2020/11/24/france-has-banned-the-grey-wolves-but-who-are-they> (ներբեռնման օրը՝ 21.06.2024).
- Erdoğan cancels Azerbaijan trip for Türkiye's Euro tie: Reports, 04.07.2024, <https://www.dailysabah.com/sports/football/erdogan-cancels-azerbaijan-trip-for-turkiyes-euro-tie-reports> (ներբեռնման օրը՝ 05.07.2024).
- Çetin Y. 2005, Türk Tarihinde ve Kültüründe Bozkurt Belirtkesi (Sembolü), Yayimlanmamış Yüksek Lisans Tezi, Kafkas Üniversitesi Fen-Edebiyat Fakültesi, s. 10-21.
- Başkurdistanlı A. 2010, Türk Rivayetlerinde "Bozkurt". Türkiyat Mecmuası, 2, p. 131-138.

- Aydoğan, Barış Murat [@budun9]. "Çok ilginç bir foto; 1990 li yıllardan önce bilinmeyen, yapılmayan 'Bozkurt' işaretini, 1978 de Ankara Teknik Yüksek Öğretmen Okulunda yapan 'Baki Akin' ağabey", X, 26.01.2022, <https://x.com/budun9/status/1486383022219968525> (ներբերումն օրը՝ 21.06.2024).
- Başbakan Binali Yıldırım'dan bozkurt işareti, 21.02.2017, <https://www.youtube.com/watch?v=ApBjJMUz8fo> (ներբերումն օրը՝ 21.06.2024).
- Bakan Çavuşoğlu Uruguay'da protestoculara "bozkurt" işaretiyle tepki verdi, 24.04.2022, <https://www.youtube.com/watch?v=N7EKSyelNSs> (ներբերումն օրը՝ 21.06.2024).
- Bozkurtlar Berlin'de! Türkiye-Hollanda Maçı Öncesi Almanya Sokakları Kırmızı-Beyaz, 06.07.2024, <https://www.youtube.com/watch?v=WBI5xSEjxyY> (ներբերումն օրը՝ 21.06.2024).
- Bozkurt İşareti Hakkında. 02.05.2017, <https://www.kamudannethaber.com/yazarlar/dr-gullukaranfil/bozkurt-isareti-hakkinda/1418/> (ներբերումն օրը՝ 21.06.2024).
- Cumhurbaşkanı Erdoğan "Bozkurt" İşareti Yaptı, 10.03.2018, <https://www.youtube.com/watch?v=F9nrYdc4a04> (ներբերումն օրը՝ 21.06.2024).
- Cumhurbaşkanı Yardımcısı Yılmaz'dan UEFA'nin Merih Demiral'a verdiği cezaya tepki, 05.07.2024, <https://www.ntvspor.net/futbol/cumhurbaskani-yardimcisi-yilmaz-dan-uefa-nin-merih-demiral-a-verdigi-cezaya-tepki-6687ddd71ace45004f3139de> (ներբերումն օրը՝ 07.07.2024).
- Cumhurbaşkanı Erdoğan: Bir gece ansizin gelebiliriz, 29.04.2017, <https://www.youtube.com/watch?v=sw1h8K718-M> (ներբերումն օրը՝ 21.06.2024).
- Cumhurbaşkanı Erdoğan'dan Yunanistan'a: Bir Gece Ansizin Gelebiliriz! - TGRT Haber, 03.09.2022, <https://www.youtube.com/watch?v=NVuthIVWDXk> (ներբերումն օրը՝ 21.06.2024).
- Cumhurbaşkanı Erdoğan'dan Yunanistan Açıklaması: "Bir Gece Ansizin Gelebiliriz" 06.09.2022, <https://www.youtube.com/watch?app=desktop&v=pfm-E4rAIT4> (ներբերումն օրը՝ 21.06.2024).
- Erdoğan: Bozkurt işareti yaptığimin farkında değildim ama güzel oldu, 28.03.2018, <https://www.gazeteduvar.com.tr/politika/2018/03/28/erdogan-bozkurt-isareti-yaptigimin-farkinda-degildim-ama-guzel-oldu> (ներբերումն օրը՝ 21.06.2024).
- Erdoğan'dan Bozkurt işareti yapan kiza ayar, 26.03.2018, [https://www.youtube.com/watch?app=desktop&v=WKV\\_h7HrUdo](https://www.youtube.com/watch?app=desktop&v=WKV_h7HrUdo) (ներբերումն օրը՝ 21.06.2024).
- Erdoğan'a bozkurt işareti yaptığı için gözaltına alınan MHP'li isyan etti: Benim günahim neydi, 14.03.2018, <https://www.cumhuriyet.com.tr/haber/erdogana-bozkurt-isareti-yaptigi-icin-gozaltina-alinan-mhp-li-isyan-etti-benim-gunahim-neydi-942212> (ներբերումն օրը՝ 21.06.2024):
- Erdoğan'dan Merih Demiral'in bozkurt işaretine yorum: "Kimse Fransızların formasında horoz var, niye horozlanıyorsun diyor mu?", 05.07.2024, <https://medyascope.tv/2024/07/05/erdogan-dan-merih-demiral-in-bozkurt-isaretine-yorum-kimse-fransizlar-in-formasinda-horoz-var-niye-horozlanıyorsun-diyor-mu/> (ներբերումն օրը՝ 05.07.2024).
- Erdoğan ile Yunan gazeteci arasında 'bir gece ansizin gelebiliriz' diyalogu 06.10.2022, <https://www.youtube.com/watch?v=R51cFAltrIE> (ներբերումն օրը՝ 21.06.2024).
- Gol sevincinde neden bozkurt işareti yaptı!? Merih Demiral açıkladı..., 03.07.2024, <https://www.youtube.com/watch?v=WXCN3iF2k4g> (ներբերումն օրը՝ 04.07.2024).
- Hanim Halilova, Başbuğ Alparslan Türkeş'e bozkurt işaretini nasıl öğrettiğini anlatıyor! 20.03.2013, <https://www.youtube.com/watch?v=wOXmaAZussQ> (ներբերումն օրը՝ 21.06.2024).
- Kılıçdaroğlu'ndan bozkurt selami... 25 Nisan 2023 Selçuk Tepeli ile FOX Ana Haber, 25.04.2023, <https://www.youtube.com/watch?v=cHHqGAMzCx0> (ներբերումն օրը՝ 21.06.2024).

- Neden hedef seçildim?, 12.01.2007, <https://hrantdink.org/tr/hrant-dink/hrant-dink-yazilari/72-7-neden-hedef-secildim> (ներբեռնման օրը՝ 21.06.2024).
- No: 128, 3 Temmuz 2024, Milli Futbolcumuz Merih Demiral'a Karşı Açılan Disiplin Soruşturması Hk., 03.07.2024, [https://www.mfa.gov.tr/no\\_128\\_milli-futbolcumuz-merih-demiral-a-karsi-acilan-disiplin-sorusturmasi-hk.tr.mfa](https://www.mfa.gov.tr/no_128_milli-futbolcumuz-merih-demiral-a-karsi-acilan-disiplin-sorusturmasi-hk.tr.mfa) (ներբեռնման օրը՝ 04.07.2024).
- Payitaht Abdülhamid 12. Bölüm – Bozkurt, 19.05.2017, <https://www.youtube.com/watch?v=F1tBkdM0Hkl> (ներբեռնման օրը՝ 04.07.2024).
- Selçuk Bayraktar, Türklüğün sembolü BOZKURT işareti yaparak Azerbaycan TEKNOFEST'e damga vurdu!, 29.05.2022, <https://www.youtube.com/shorts/HWOMyKLWlBU> (ներբեռնման օրը՝ 21.06.2024):
- Süleyman Soylu (Bahçeli'ye): Git Diyarbakir'da yap o (bozkurt) işaretini de delikanliliğini göreyim!, 20.02.2023, <https://www.youtube.com/watch?v=nNp9prwT01M> (ներբեռնման օրը՝ 21.06.2024).
- Taraftarımız İstiklal Marşı'ni bozkurt işareti yaparak okudu, 07.07.2024, <https://www.youtube.com/watch?v=SF1p287I5Is> (ներբեռնման օրը՝ 09.07.2024).
- Türkiye düşmanı Cem Özdemir Merih Demiral'in 'bozkurtlu' gol sevincini hedef aldı, 04.07.2024, <https://www.yenisafak.com/gundem/turkiye-dusmani-cem-ozdemir-merih-demiralin-bozkurtlu-gol-sevincini-hedef-aldi-4631033> (ներբեռնման օրը՝ 09.07.2024).
- Əliyev, İlham [azpresident]. "Almaniyada keçirilən futbol üzrə Avropa çempionatında uğurla çıxış edən qardaş Türkiyə milli komandasını 1/4 mərhələyə vəsiqə qazanaraq 8 ən güclü Avropa millisi arasında yer alması münasibətilə təbrik edirəm. Xüsusilə, 1/8 final mərhələsində 2 qol vuraraq oyunun ən yaxşı futbolçusu seçilmiş Merih Demiralə təbrik edirəm. Merihə qarşı tətbiq edilən cəza ədalətsizdir və bunu qətiyyətlə pisləyirəm. Türkiyə millisinə Hollandiya ilə oyunda qələbə arzu edirəm! Yaşasin Türk dünyası!", X, 06.07.2024, <https://x.com/azpresident/status/1809457521221902634> (ներբեռնման օրը՝ 09.07.2024).

## НАЦИОНАЛИСТИЧЕСКИЕ СИМВОЛЫ В ТУРЕЦКОЙ ПОЛИТИЧЕСКОЙ РИТОРИКЕ XXI ВЕКА

Гор Оганесян

Резюме

Знак «Серых волков» считается одним из самых популярных символов турецкого национализма, и особенно в последние годы он нашел отражение не во внутренней, но и внешней политике Турции. Знак, восходящий к тюркской мифологии, первоначально использовался ультра националистической Партией националистического движения (ПНД) и ее вооруженным крылом – «Серыми волками». Примечательно, что отношение к знаку изначально было неоднозначным, и даже некоторые правые силы отнеслись к нему с пренебрежением.

Ситуация изменилась начиная с 2015 года, когда правящая Партия справедливости и развития (ПСР) стала проводить политику синтеза ислама и национализма, вступив в альянс с ПНД. С 2017 года президент Эрдоган начал использовать символ «Серых волков», тем самым открыв путь для его дальнейшего распространения не только в Турции, но и в других странах с турецкими общинами. Растущее влияние и использование знака «Серых волков» является одним из наиболее ярких индикаторов националистических настроений в нынешнем турецком обществе.

**Ключевые слова** – «Серые волки», национализм, Партия националистического движения, Партия справедливости и развития, синтез ислама и национализма, Девлет Бахчели, Реджеп Тайип Эрдоган.

## NATIONALISTIC SYMBOLS IN TURKISH POLITICAL RHETORIC IN THE XXI CENTURY

Gor Hovhannisyan

Abstract

The "Grey Wolf" sign is considered one of the most popular symbols of Turkish nationalism, and especially in recent years, it has been expressed not only in the domestic political field, but also in the foreign policy. Originating from Turkic mythology, it was initially used by the ultra-nationalist Nationalist Movement Party (MHP) and its armed wing, the "Gray Wolves". It is noteworthy that the attitude towards the sign was controversial from the beginning, and even some right-wing forces approached it with reservations.

The situation changed starting in 2015, when the ruling Justice and Development Party (AKP) began to pursue a policy of synthesis of Islam and nationalism, forming an alliance with MHP. Since 2017, President Erdogan personally started using the "Grey Wolf" symbol, paving the way for its further spread not only in Turkey, but also in other countries with Turkish communities. The growing influence and use of the "Grey Wolf" sign is one of the telling indicators of the nationalist sentiments among the current Turkish society.

**Key words** – "Grey Wolves", nationalism, Nationalist Action Party, Justice and Development Party, synthesis of islam and nationalism, Devlet Bahceli, Recep Tayyip Erdogan.

# ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 1946-1948 ԹԹ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ

## Գայանե Ղազարյան

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ  
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4  
Էլ. հասցե՝ gayane.ghazaryan.1992@mail.ru  
ORCID: 0009-0001-6403-140X

Հոդվածը ներկայացվել է 17.06.2024, գրախոսվել է 18.06.2024, ընդունվել է տպագրության 02.08.2024  
DOI: 10.53548/0320-8117-2024.2-151

### Ամփոփում

XX դարում հայոց ներգաղթի երրորդ փուլը, որը թե՛ ընդգրկման ծավալով, թե՛ մարդկանց քանակով ամենամեծն էր, գիտական շրջանառության մեջ մտավ «Մեծ հայրենադարձություն» անունով: Ճակատագրի բերումով «պետականություն» և «պատմական հայրենիք» հասկացությունները հայության գիտակցության մեջ երկփեղկված են, այստեղից էլ՝ հայրենիքի տարբեր ընկալումները: Ուստի այս առումով շատ կարևոր է նաև հասկանալ, թե ինչպես էր տարագիրն ընկալում Խորհրդային Հայաստանը, ի՞նչ էր արդյոք դա իր համար՝ վերագտած հայրենիք, ապահով ապրելավա՞յր, տարա՞ծք, թե՛ ժամանակավոր կացարան՝ բնիկ հողատարածք վերադառնալու համար: Այս առումով ուշագրավ է երիտասարդության մտայնությունը: Նրանց մի մասը, օրինակ, թեև ուներ հայրենագրվման և պատմական հայրենիքը վերագտնելու հիշողություն, սակայն դժվար էր կտրվում այն իրականությունից, որում ապրում էր և նոր կյանք էր կառուցել: Մյուս մասը իր ծննդավայրն էր համարում հայրենիք: Մյուսները հայրենիքը վերագտնելու գաղափարը կյանքի էին կոչում Խորհրդային Հայաստան գալու տեսքով: Իսկ մյուսների համար էլ Խորհրդային Հայաստանի՝ հայրենիքի գաղափարը նյութեղեն էր, բայց նրանք դժվարանում էին սահմաններ գծել հայրենիքի և ծննդավայրի միջև: Նման մտայնություններին միս և արյուն էին տալիս նաև մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ հանգամանքներ՝ սկսած հյուրընկալ երկրների սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակներից, վերջացրած հայրենիքը վերագտնելու և սեփական փոքրիկ ունենալու հույսերով:

**Բանալի բառեր՝** Խորհրդային Հայաստան, հայրենադարձություն, ներգաղթ, պատմական հայրենիք, ծննդավայր, սոցիալիստական մտածելակերպ, պատմական հիշողություն:

### Ներածություն

Հայրենական մեծ պատերազմում ԽՍՀՄ հաղթանակը մեծ և կարևոր փուլ էր ոչ միայն Միությունում ապրող ժողովուրդների, այլև աշխարհի տարբեր մասերում գտնվող հայության կյանքում: Ստեղծված բարենպաստ պայմանները թույլ տվեցին հազարավոր սփյուռքահայերի գալ և բնակվել Խորհրդային Հայաստանում: Դա փաստացիորեն դարձավ հայոց ներգաղթի երրորդ փուլը՝ 1946-1948 թթ.: Այն թե՛ ընդգրկման ծավալով և թե՛ մարդկանց

քանակով ամենամեծ ներգաղթն էր, որ գիտական շրջանառության մեջ մտավ «Մեծ հայրենադարձություն» անունով<sup>1</sup>:

Ճակատագրի բերումով «պետականություն» և «պատմական հայրենիք» հասկացությունները հայության գիտակցության մեջ երկփեղկված են, այստեղից էլ հայրենիքի տարբեր ընկալումներն են: Ուստի այս առումով շատ կարևոր է նաև հասկանալ, թե ինչպես էր տարագիրն ընկալում Խորհրդային Հայաստանը, ի՞նչ էր արդյոք դա իր համար՝ վերագտած հայրենի՞ք, ապահով ապրելավա՞յր, տարա՞ծք, թե՞ ժամանակավոր կացարան՝ բնիկ հողատարածք վերադառնալու համար: Եվ, վերջապես, ի՞նչ պատկերացումներ ունեւր Խորհրդային երկրի և Խորհրդային իրականության մասին:

### **Երիտասարդ սփյուռքահայերի ընկալումները հայրենիքի գաղափարի մասին**

Վերը նշվածի առումով ուշագրավ էր երիտասարդության մտայնությունը: Բանն այն է, որ ծնվել էր ցեղասպանությունից փրկվածների երկրորդ սերունդը, որոնք թեև ունեին հայրենագրկման և կորսված հայրենիքը վերագտնելու հիշողություն, սակայն շատերի համար դժվար էր կտրվել այն իրականությունից, որտեղ փորձում էին ինքնահաստատվել ու նոր կյանք կառուցել: Նրանց մի մասը հենց իրենց, այլ ոչ թե ծնողների ծննդավայրն էր ընկալում որպես հայրենիք: Դա շատ դեպքերում անընդունելի էր ծնողների համար, որոնք զգուշանում էին օտարազգիների հետ նոր սերնդի ձուլվելուց, նաև համայնքի առջև ունեին պատասխանատվության զգացում: Այս խնդիրը հատկապես ցավոտ էր ընդունվում արաբական երկրներում ապաստանած հայության դեպքում: Ահա թե ինչպես է արձագանքում Եգիպտոսում ապաստանած Սաթենիկը իր դստեր՝ Զիի մահմեդականի հետ փախչելու և ամուսնանալու փաստին. «...ան մահմեդական է, մենք հայ ենք: Ի՞նչ պիտի ըսեն Ալեքսանդրիայի հայերը, որ դեռ ջարդերը չեն մոռցած: Մենք ինչպե՞ս պիտի անոնց երեսը նայինք»<sup>2</sup>: Այսինքն՝ իր և ամուսնու համար ոչ միայն աններելի և անընդունելի էր դստեր քայլը, քանի որ անտեսվել էին հայկական և քրիստոնեական արմատները, այլև հատկապես կար համայնքի առջև պատասխանատվության զգացում: Իր հերթին, Զիի համար վիրավորական էր, որ ինքը չի կարողանում տնօրինել սեփական կյանքը, և համոզված էր, որ խտրականությունը կրոնական պատկանելությունների միջև անիմաստ է, ինչպես և ավելորդ է ցեղասպանության հիշողությանը տրվելը<sup>3</sup>:

Մեկ այլ վառ օրինակ է 1947 թ. Ֆրանսիայից հայրենադարձած 16-ամյա Լիդիա Կյուրեղյանի պատմությունը. նա իրեն համարում էր ֆրանսիացի և կտրականապես դեմ էր Խորհրդային Հայաստան տեղափոխվելուն: Բայց

<sup>1</sup> Հայոց պատմություն 2016, 91-100:

<sup>2</sup> Մարիկյան 2011, 99:

<sup>3</sup> Մարիկյան 2011, 101:



քանի որ անչափահաս էր, պարտավոր էր կատարել ծնողների պահանջը: Այդ մասին Լ. Կյուրեղյանը պատմում է. «Ես ինձ համարում էի ֆրանսիացի: Հայրս ինձ ասաց, որ դու պարտավոր ես ենթարկվել, ասաց՝ քեզ կշղթայեմ կտանեմ, որովհետև պատկանում ես ինձ: Ըստի, եթե չափահաս լինեմ, դու կթողնե՞ս, որ ետ գամ, ասեց՝ անպայման: Մի թուղթ հանի, գրեց, որ երբ չափահաս լինես, ես երդվում եմ, որ քեզ բաց կթողնեմ»<sup>4</sup>: Լ. Կյուրեղյանի եղբայր Ժան Կյուրեղյանը պատմում է. «Մենակ քույրս չէր, ջահելներ կային, որ չէին ուզում, բայց պարտադրված գայիս էին»<sup>5</sup>: Շատ դեպքերում նաև այդ հարցում ընտանիքի անդամներից որևէ մեկն էր ներագդում երեխաների ընտրության ու աշխարհայացքի ձևավորման վրա: Խոսքը ընտանիքում խորհրդային երկրի և ընդհանրապես հայրենադարձության վերաբերյալ կարծիքների երկփեղկման մասին է: Բանն այն է, որ որոշ դեպքերում հատկապես կանայք, անցնելով գաղթի բարդ ու դժվարին ճանապարհը, գտել էին ընտանեկան հանգստություն ու, գաղափար անգամ չունենալով խորհրդային երկրի մասին, իրենց երեխաներին ներարկում էին ոչ թե նոր և անծանոթ երկիր գնալու, այլ կորսված հայրենիքի փափագը: Ու դա շարունակվում էր նաև Խորհրդային Հայաստան գալուց հետո: 1946 թ. Բեյրութից Խորհրդային Հայաստան եկած Վահե Կարապետյանը գրում է. «Պիտի խոստովանեմ, որ այդ ժամանակ ինձ համար չկար ոգի կամ գաղափար հայրենիքին ծառայելու: Նման երևույթներն այնքան խորթ էին մեզ կամ այնքան ներշնչող էին, որ նույնիսկ չգիտեինք, թե որն է այդ հայրենիք ասվածը: Մորս դաստիարակությունից ելնելով՝ մեզ միշտ թվում էր, որ մեր հայրենիքը Սովետական Միությունը չէ, մեր հայրենիքն այնտեղ է, որը կորցրել էինք: Դրա համար էլ հայրենիք ասվածի զգացումը չկար, ուստի ամոթ չկար, որ չենք ծառայում նրա բանակին: Այս է տրամաբանությունը»<sup>6</sup>:

Երիտասարդների մյուս մասի մեջ հայրենիքը վերագտնելու գաղափարը մարմնավորվում էր կոչվում Խորհրդային Հայաստան գալու տեսքով: Նրանք հույս ունեին արմատները, ազգայինը և հայրենիքը գտնել մի վայրում, որի մասին գաղափար անգամ չունեին: Դա բխում էր ընտանիքներում և, ընդհանրապես, համայնքներում տիրող մթնոլորտից: Չէ՞ որ խորհրդային երկիրը հաղթանակից հետո սկսվեց ընկալվել որպես խաղաղ ու հանգիստ ապրելու և ստեղծագործելու բնօրրան, աշխարհը մեծագույն չարիքից՝ ֆաշիզմից փրկած պետություն: Երիտասարդները տոգորվեցին հայրենասիրությամբ և երագում էին ոտք դնել այնտեղ: Շատերը նաև կայանալու, հյուրընկալվող երկրներում իրենց ոլորտում հաջողություններ գրանցելու և ամուր հողում կանգնելու խնդիր ունեին: Ուստի Խորհրդային Հայաստանը նրանց համար

<sup>4</sup> «Վերջին երազանք կամ Game Over» 2017:

<sup>5</sup> «Վերջին երազանք կամ Game Over» 2017:

<sup>6</sup> Կարապետյան 2011, 75-46:

կարծես դառնում էր իրենց չօգտագործված ուժերի ներդրման, նպատակների և երազանքների իրականացման վայր: 1946 թ. Բեյրութից Խորհրդային Հայաստան եկած նկարչուհի Արմինե Կալենցն այդ մասին գրում է. «Երկաթե վարագույրի ետևում, ինչ էլ լինի, քո հայրենիքն է: Ես այնտեղ գնացի փնտրելու արդարություն, նա (իր ամուսինը՝ նկարիչ Հարություն Կալենցը, որը նույնպես հայրենադարձվել էր - Գ.Ղ.) գտնելու գնաց հայրենիքը՝ Հայաստանը, օտար լինելու զգացմունքից ազատվելու միակ վայրը, նրա համար ի սպաս դնելու իր բոլոր չօգտագործված ուժերը»<sup>7</sup>: Իսկ մեկ այլ հայրենադարձ՝ Հակոբ Ճղյանը, գրում է. «Մեր ապուսպապերից հայրենիքի կարոտը ժառանգած և սիրո հուշերը սրտերում՝ մեր երազանքն էր՝ օր առաջ տեսնել Երևանը»<sup>8</sup>: Նույնպիսի «հայրենակարոտ սրտերի» համար «լուսապայծառ հեռանկար» էր պատկերացնում նաև Բեյրութից հայրենադարձված Սայենի Պալյանը<sup>9</sup>: Այսինքն՝ այս մարդկանց համար հայրենիքի վերագտման միտքն էր կարևոր: Կարևոր չէ, թե ինչ վարչակարգի տակ, կարևորը այդ պետությունը համարում էին իրենցը, և դա էր ամենակարևոր գիտակցումը: Եղան նաև 16-17 տարեկան երիտասարդներ, որ, ծնողների կամքին հակառակ, թաքնվում էին Հայաստան մեկնող նավերում և հասնում իրենց երազանքի հայրենիքը:

Երիտասարդների մյուս մասի համար Խորհրդային Հայաստանի՝ հայրենիքի գաղափարը նյութեղեն էր, բայց նրանք դժվարանում էին սահմաններ գծել հայրենիքի ու ծննդավայրի միջև և դժվարությամբ էին լքում այն: 1947 թ. Բեյրութից հայրենադարձված Սուրեն Բուրսայանն այդ մասին պատկերավոր գրում է. «Մնաս բարով, իմ ջքնաղ, սիրելի ծննդավայր: Մնաս բարով ազնիվ, բարի արաբ ժողովուրդ, որ ապաստան տվիր մեզ և երբեք օտարի աչքով չնայեցիր: Մնացեք բարով... Հեռվում քաղաքի լույսերի բոցկլտացող ծովն աստիճանաբար փոքրանում է, աղոտ մի կետ է դառնում ու... մարում, կորչում է հավետ... խաղաղ գիշեր, անհուն, անսահման ծով, ես՝ աշխարհի իմ ամենասիրած կետերի՝ ծննդավայրիս և հայրենիքիս արանքում...»<sup>10</sup>:

### **Հայրենադարձների պատկերացումները Խորհրդային Հայաստանի մասին**

Սակայն Ֆրանսիայում, ԱՄՆ-ում ապրող հայությանը չէր կարելի համեմատել Պարսկաստանում, Բուլղարիայում և առավելապես Հունաստանում ապրողների հետ: Դա պայմանավորված էր ոչ թե ավելի քիչ կամ շատ հայրենասեր լինելու, այլ այն սոցիալ-տնտեսական և առավելապես քաղաքական պայմաններով, որում ապրում էր այդ երկրների հայությունը: Բանն այն էր, որ

<sup>7</sup> Կալենց 2000, 60:

<sup>8</sup> Ճղյան 1994, 5:

<sup>9</sup> Պալյան 1988, 25:

<sup>10</sup> Բուրսայան 1993, 22:

տարբեր երկրներում ապաստանած հայությունը սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման տարբեր աստիճանների վրա էր: Հատկապես ծանր էր ներքին բախումների, քաղաքացիական կռիվների կիզակետում գտնվող երկրներում բնակվող հայության դրությունը: Ահա թե ինչ է գրում Անդրանիկ Անդրեասյանը. «Հունաստանեն մինչև Պաղեստին ու Պարսկաստան ներքին հեղաշրջումներու, քաղաքացիական կռիվներու և արտաքին պատերազմի աղետներն ու արհավիրքները կահաբեկեին նաև պանդուխտ հայ բազմությունները: Եվ նոր գաղթերու, թշվառության ու սարսափերու այդ մղձավանջին դեպի ապահով ու խաղաղ ապաստան մը ճողոպրումի ու փրկության ճանապարհ մըն էր ներգաղթը»<sup>11</sup>: Հատկապես ծանր էր հունահայերի վիճակը: Պատերազմից հետո Հունաստանը դարձել էր ԱՄՆ-ԽՍՀՄ հակասությունների թիրախ: Մեծ Բրիտանիայի ու ԱՄՆ-ի աջակցությունը ստացող կառավարությունը հալածանքներ էր սկսել հայության նկատմամբ, որոնք աջակցում էին խորհրդամետ ուժերին: Սկսվեցին հալածանքներ, և հայությունը կանգնեց երկրից արտաքսվելու վտանգի առաջ<sup>12</sup>: Ուստի շատերի համար Հայաստան գալն ուղղակի փրկություն էր: Ահա թե ինչ է ասում 1946 թ. Հունաստանից եկած Հարություն Քեհեյանը. «Հունաստանում պատերազմ էինք տեսել և գերմանացիների օկուպացիա, սով: Էնպես որ, մեր հետևում դրախտ չէր, որ թողեցինք. ամեն դժվարություն արդեն տեսել էինք»<sup>13</sup>:

Կարևոր էր նաև այսպես կոչված «ագիտատորների» գործոնը: Որոշումներ կայացնելու և Խորհրդային Հայաստանի մասին պատկերացումներ ձևավորելու առումով խորհրդային կողմը մեծ աշխատանք էր կատարում: Ներգաղթի մասին համապատասխան որոշումից հետո գործի դրվեց խորհրդային քարոզչամեթոդներ, որին միացան նաև Սփյուռքի որոշ կազմակերպություններ: Կազմակերպվում էին հանդիպումներ, դասախոսություններ՝ բացատրվում էր ներգաղթի կարևորությունն ու նշանակությունը, ցուցադրվում էին ֆիլմեր: Մասնավորապես Եգիպտոսում բոցաշունչ ելույթներ էր ունենում հատկապես եգիպտահայ անվանի հասարակական գործիչ, հրապարակախոս, գրող և ծաղրանկարիչ Գառնիկ Սվազյանը: Նա իր հրապարակախոսական ճառերում և ելույթներում ամրապնդում էր այն միտքը, որ աշխարհով մեկ սփռված հայության փրկության միակ օղակը ներգաղթն է հայրենիք՝ Խորհրդային Հայաստան<sup>14</sup>: Խորհրդային Հայաստանը համայնքներ էր գործուղում մարդկանց, որոնց հանձնարարված էր Հայաստանը ներկայացնել իբրև դրախտավայր, որտեղ «հոսում էին կաթի և մեղրի գետեր», և «հավերը պատերի տակ ոսկե ձվեր էին աճում»: Ահա թե ինչ է պատմում 1946 թ. Պարսկաստանից ներգաղթած Վահան Քամալյանը. «Մեզ մոտ գալիս էին

<sup>11</sup> Անդրեասյան 1962, 16:

<sup>12</sup> Սարգսյան 2014, 35-36:

<sup>13</sup> Հարություն Քեհեյանի հարցազրույցը 2023:

<sup>14</sup> Սվազյան 1965, 3-5:

մարդիկ, կոստյումով, գեղեցիկ հագնված, հագուկապով: Մտածում էինք բոլորը սենց հագուկապով են Հայաստանում: Հաճելի բուրում էին: Հետո իմացանք, որ էդ ամենը սուտ էր, էդ կոստյումներն էլ էնտեղ էին կարել, որ մարդկանց մոտ վատ տպավորություն չթողնեն»<sup>15</sup>: Այսինքն՝ սփյուռքահայերի համար ստեղծել էին նաև տեսողական գրավչություն: Իհարկե, կային նաև մարդիկ, որոնք առանձին անհատների միջոցով պարզում էին իսկությունը կամ շատ լավ հասկանում էին, որ պատերազմը նոր-նոր ավարտած պետությունը չի կարող դրախտավայր լինել ու ունի սոցիալ-տնտեսական շատ լուրջ խնդիրներ, բայց հոգեբանորեն պատրաստ էին տանել այդ բարդությունները: Մեծամասնությունը, սակայն, չէր պատկերացնում սոցիալ-տնտեսական խնդիրների այդ որջ շղթան, որին հետագայում բախվեց: Դրան գումարվեց նաև իրենց անձանոթ հասարակարգը: Ուստի հետագայում սփյուռքահայության մեծամասնությունը խոստովանում է, որ ներգաղթելու գործում վճռական էր քարոզչության նշանակությունը: Ահա թե ինչ է գրում 1947 թ. Ֆրանսիայից ներգաղթած Ալբերտ Մոսկոֆյանը. «Ազիտացիա էին անում, որպեսզի ֆրանսահայերը ներգաղթեին Հայաստան: Մեր հայրենասիրությունն էին շահարկում. գիտեինք, որ երկիրը բավական կորուստ տված էր պատերազմի պատճառով, և աշխատող բազուկի պետքը կար: Բնական է, երբեք չէին կարող մտածել էստեղից մեկնողները այն նյութական վիճակը, որ գոյություն ունեւր Հայաստանում այդ ժամանակ»<sup>16</sup>: Այս իրողությունները հետագայում նրանց մեջ խոր հիասթափության պատճառ դարձան: Հայրենադարձները, այս ամենով հանդերձ, արդարացնում էին «մեզ խաբելով բերեցին» մտայնությունը:

Որոշումների կայացման վրա մեծ ազդեցություն ունեցավ նաև Թուրքիայից հայկական հողերի պահանջատիրության հարցը: Բանն այն էր, որ պատերազմի ավարտից հետո՝ 1945 թ. հուլիսի 17-ից օգոստոսի 2-ը տեղի ունեցող Պոտսդամի կոնֆերանսում ԽՍՀՄ առաջնորդ Ի. Ստալինը դաշնակից երկրների ղեկավարներին ներկայացրել էր Թուրքիայից Կարսի, Արդվինի և Արդահանի մարզերի վերադարձի հարցը: Այն դարձավ նաև մեծ հաղթաթուղթ սփյուռքահայությանը դեպի խորհրդային երկիր կողմնորոշելու և անձամբ Ստալինի անձի նկատմամբ հարգանք և պատկառանք ձևավորելու հարցում: Նրանց համար ԽՍՀՄ-ը դարձավ աշխարհի հզորագույն հաղթանակած երկիրը, իսկ Ստալինը՝ աշխարհը մեծագույն չարիքից՝ ֆաշիզմից փրկած և իրենց պատմական իրավունքների համար պայքարող մի գործիչ: Ուստի Խորհրդային Հայաստան գալը ներշնչում էր նոր կյանքի, պայծառ ապագայի ակնկալիք:

<sup>15</sup> Հեղինակի անձնական արխիվ 2017:

<sup>16</sup> Ալբերտ Մոսկոֆյանի հարցազրույցը 2023:

Վերոհիշյալ հարցը դեռևս 1945 թ. հունիսին Մոսկվայում՝ խորհրդաթուրքական բանակցությունների ժամանակ բարձրացրել էր նաև ԽՍՀՄ արտգործոժողկոմ Վ. Մոլոտովը: Թվում էր, թե հարցը միս ու արյուն պետք էր ստանար Պոտսդամի կոնֆերանսում, և բազմաժողով հայեր վերադառնային Կարս, Արդահան և Սուրմալու<sup>17</sup>, սակայն ԽՍՀՄ-ը հանդիպեց ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի համառ դիմադրությանը, որոնք ամեն կերպ ուզում էին պաշտպանել Թուրքիայի շահերը խորհրդային «ոտնձգություններից»՝ վախ ունենալով, որ հակառակ պարագայում կնպաստեն Մերձավոր Արևելքում ԽՍՀՄ-ի տնտեսական և ռազմավարական շահերի ամրապնդմանը<sup>18</sup>:

Փաստորեն, վերը նշված սուբյեկտիվ և օբյեկտիվ հանգամանքներն էլ հենց ձևավորեցին սփյուռքահայության ընկալումներն ու պատկերացումները խորհրդային Հայաստանի մասին և ակնկալիքներն այդ երկրից: Նրանք ընկալեցին խորհրդային Հայաստանը յուրովի՝ որոշների համար դա դարձավ վերագտած հայրենիք, մյուսների համար՝ ապահով ապրելավայր, մի մասի համար՝ նպատակների և նվիրական երազանքների կատարման վայր, իսկ ոմանք այն ընկալեցին որպես ժամանակավոր կացարան՝ կորսված բնիկ հողատարածքը վերադառնալու ճանապարհին: Այս պատկերացումներին ու ընկալումներին շուտով միախառնվեցին նաև իրենց համար ամբողջովին խորթ հասարակարգն ու ապրելակերպը: Ուստի երկար ժամանակ պահանջվեց, մինչև որ նրանք կարողացան գիտակցական և զգացական մակարդակում հաղթահարել այդ աններդաշնակությունը:

### «Հայրենադարձություն» և «ներգաղթ» եզրույթները

Վերոգրյալ ընկալումները, մոտեցումներն ու պատկերացումներն էլ մեծ մասամբ պատճառ դարձան, որ մերթ ընդ մերթ քննարկումներ ծավալվեն «հայրենադարձություն» և «ներգաղթ» եզրույթների առնչությամբ: Գիտական գրականության մեջ բացակայում է մեկ միասնական կարծիք այս հարցի վերաբերյալ՝ պայմանավորված այն հանգամանքով, թե ինչպես են այս երկու եզրույթները սահմանվում, մեկնաբանվում և ընկալվում: Փորձենք տալ եզրույթների պարզ սահմանումները և հասկանալ նրանց էական տարբերությունը: Սովետական մեծ հանրագիտարանում «*հայրենադարձություն*» (լատ.՝ *re-կրկին patria-հայրենիք*) *տերմինը նշանակում է արտագաղթողների վերադարձ իրենց հայրենիք՝ քաղաքացիության իրավունքների վերականգնմամբ*<sup>19</sup>: *Իսկ «ներգաղթը» (լատ.՝ imigrare-հաստատվել) մեկ պետության քաղաքացիների հաստատումն է մեկ այլ պետության տարածքում՝ մշտական բնակության նպատակով*<sup>20</sup>: *Էդուարդ Աղայանի բացատրական բառարանում հայրե-*

<sup>17</sup> Հայոց պատմություն 2016, 81:

<sup>18</sup> Հայոց պատմություն 2016, 90-91:

<sup>19</sup> Большая советская энциклопедия 1969, <https://www.booksite.ru/fulltext/1/001/008/096/574.htm>

<sup>20</sup> Большая советская энциклопедия 1969, <https://www.booksite.ru/fulltext/1/001/008/053/234.htm>

նադարձությունը բնորոշվում է որպես գաղթաշխարհից հայրենիք վերադառնալ՝ վերադարձ<sup>21</sup>, իսկ ներգաղթը՝ որևէ երկրի վայրից տվյալ երկիր՝ վայր գաղթելը՝ ներգաղթելը<sup>22</sup>: Այսինքն՝ առաջինի դեպքում ակնհայտ է, որ նրանք վերադառնում են պատմական հայրենիք՝ կոնկրետ ազգային պատկանելության մեջ, իսկ երկրորդի դեպքում այս հանգամանքը բացակայում է: Չնայած էական տարբերությանը, այնուամենայնիվ, եզրույթները, տարբեր ժամանակներում կրելով իրավական և պատմական ենթատեքստեր, տարբեր կերպ են մեկնաբանվել:

Խորհրդահայ պատմագրության մեջ տարագիր հայերի՝ հայրենիք վերադառնալու հարցի լուծումը բնութագրվել է իբրև «հայրենադարձություն»: Այն հատկապես գիտական շրջանառության մեջ մտավ պատմաբան Հ. Մելիքսեթյանի երկու ամբողջական և ամփոփ աշխատությունների հրատարակումից հետո<sup>23</sup>: Հետխորհրդային շրջանում հիմնականում պահպանվեց այս տեսակետը<sup>24</sup>: Սակայն դրանց կողքին ի հայտ եկան այնպիսի հետազոտողներ, որոնք այն բնորոշում էին որպես «մասնակի հայրենադարձություն» կամ ուղղակի «ներգաղթ»՝ հիմք ընդունելով պատմական հայկական տարածքների օտարման և դրանց օրինական վերադարձի խնդիրը: Չէ որ սփյուռքահայը գալիս էր Խորհրդային Հայաստան՝ իր պատմական հայրենիքի մի հատվածը, այլ ոչ թե բնիկ այն հողերը, որտեղից բռնի տեղահանվել էր<sup>25</sup>: Հասկանալի պատճառներով վերոհիշյալին հակված էին նաև սփյուռքահայ հեղինակները: Պատմաբան Էդուարդ Մելքոնյանը իր հոդվածում, այդ տերմինները հետաքրքրի վերլուծության է ենթարկում՝ դրանք հաշտեցնելով ժամանակահատվածի իրականության հետ, համապատասխանեցնելով Խորհրդային Հայաստանում և ընդհանրապես ԽՍՀՄ-ում վարվող ներքին և արտաքին քաղաքականության տրամաբանությանը<sup>26</sup>:

Հարցի առնչությամբ ուշագրավ է Լուսինե Գևորգյանի հոդվածը, որտեղ, հաշվի առնելով եզրույթների իմաստային տարբերությունները, հեղինակն առաջարկում է 1946-1948 թթ. համար օգտագործել «էթնիկ ներգաղթ» եզրույթը, որը բովանդակում է թե՛ հայրենադարձության և թե՛ ներգաղթի տարրեր<sup>27</sup>:

<sup>21</sup> Աղայան 1976, 815:

<sup>22</sup> Աղայան 1976, 1063:

<sup>23</sup> Մելիքսեթյան 1975, Մելիքսեթյան 1985:

<sup>24</sup> Հարկ է նշել թեմայի առնչությամբ հրատարակված հետևյալ աշխատանքները՝ Վիրաբյան 2005, Սարգսյան 2014, Հայոց պատմություն 2016:

<sup>25</sup> Ստեփանյան 2010: Խորհրդային կյանքը բանավոր պատմություններում (նյութերի ժողովածու) 2019:

<sup>26</sup> Մելքոնյան 2011, 12-15:

<sup>27</sup> Գևորգյան 2013, 13-14:

### Եզրակացություններ

Այսպիսով, եթե մինչև 1945 թ. աշխարհով մեկ սփռված հայության պատկերացումները խորհրդային երկրի, մասնավորապես խորհրդային Հայաստանի մասին սահմանափակվում էին նրանով, որ այդ երկիրը ներգրավված է ֆաշիզմի դեմ պայքարին կամ էլ սփյուռքյան մտավորականության մատուցած ընկալումներով ու պատկերացումներով, ապա հետպատերազմյան իրականությունը փոխեց իրավիճակը: XX դարի և՛ ծավալով, և՛ մարդկանց քանակով ամենամեծը որակված հայրենադարձությունը կարողացավ ցեղասպանությունից հետո աշխարհով մեկ սփռված հայության մեջ ձևավորել պատկերացումներ հայրենիքը խորհրդային Հայաստանի տեսքով վերագտնելու վերաբերյալ: Դա էլ, իր հերթին, առաջ բերեց պատմական հայրենիքի, ծննդավայրի ու ապրելավայրի մասին նոր ընկալումների ձևավորման ու կարծիքների երկփեղկվածության: Հայրենադարձների այս ընկալումներն ու պատկերացումները, իհարկե, փոփոխության ենթարկվեցին խորհրդային Հայաստանի իրականությանը ծանոթանալուց հետո և երկար տարիներ այնտեղ ապրելու ընթացքում:

### Օգտագործված գրականություն

- Ալբերտ Մոսկոֆյանի հարցազրույցը <https://hayrenadardz.org/hy/lifestory/albert-moskofyan> (ներբեռնման օրը՝ 8.11.2023):
- Աղայան Է. 1976, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան», 1642 էջ:
- Անդրեասեան Ա. 1962, Սփիւռք եւ հայրենիքը (Տպատրութիւններ եւ դատումներ), Պէյրոս, «Զարթօնք», 262 էջ:
- Բուրսայյան Ս. 1993, Ամորձատված սերունդ, Լոս Անջելես, «Հայ կեանք», 352 էջ:
- Գևորգյան Լ. 2013, Սփյուռքահայության ներգաղթի իրավական կարգավորման հիմնախնդիրը «Մեծ հայրենադարձության» և միջազգային փորձի համատեքստում, «ՎԷՄ», N 4, էջ 9-29:
- Խորհրդային կյանքը բանավոր պատմություններում (նյութերի ժողովածու) 2019, Կազմումը, ծանոթագրությունները, խմբագրումը, նախաբանը՝ պ.գ.թ. Հրանուշ Խառատյանի, Երևան, «ՀԱԻ», 671 էջ:
- Կալենց Ա. 2000, Ներիր ինձ, Հարություն, Երևան, «Նաիրի», 208 էջ:
- Հայրենադարձ Վահան Քամայանի հուշերից, Հեղինակի անձնական արխիվ, 15.09.2017 թ.:
- Կարապետյան Վ. 2011, Բախտը, որ հայինն է, Երևան, «Նոյան տապան», 471 էջ:
- Հայոց պատմություն 2016, հ. IV, Գիրք II (նորագույն ժամանակաշրջան (1945-1991)), Երևան, «Զանգակ», 700 էջ:
- Հարություն Քեհեյանի հարցազրույցը, <https://hayrenadardz.org/hy/lifestory/harutyun-keheyan-1> (ներբեռնման օրը՝ 25.10.2023):
- Ճղյան Հ. 1994, Զսպված ըմբոստություն կամ ուշացած խոստովանանք, Երևան, «Հայկական բաց համալսարան», 168 էջ:
- Մարիկյան Սոնա-Մարիան 2011, Հույսը զորավիզ, ընտանեկան ճակատագիր, Երևան, «ՎՄՎ Պրինտ», 332 էջ:
- Մելիքսեթյան Հ. 1975, Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան (1915-1940 թթ.), Երևան, ԵՊՀ հրատ., 296 էջ:

- Մելիքսեթյան Հ. 1985, Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), Երևան, ԵՊՀ հրատ., 476 էջ:
- Մելքոնյան Է. 2011, Ներգաղթ, հայրենադարձություն դիսկուրսիվ տերմինաբանությունը Հայաստան-սփյուռք հարաբերություններում, Հայ գաղթականությունը և հայրենիք-սփյուռք կապերը 1918-1985 թթ., միջազգային գիտաժողովի զեկուցումներ, Երևան, էջ 3-15, <https://www.armeniandiaspora-am.armin.am/images/menus/345/meikonian-hodvats.pdf> (ներբեռնման օրը՝ 24.04.2024):
- Պալեան Ս. 1988, Յուշեր ստալինեան օրերից, Լոս Անճելլոս, հեղ. հրատ., 202 էջ:
- Սարգսյան Ն. 2014, Սփյուռքահայերի մեծ հայրենադարձը, Երևան, հեղ. հրատ., 286 էջ:
- Սվազյան Գ. 1965, Հայրենիքիս համար, Երևան, «Հայաստան», 208 էջ:
- Ստեփանյան Ա. 2010, XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Երևան, «Գիտություն», 374 էջ:
- «Վերջին երազանք կամ Game Over» 2017, Ֆիլմ (Տիգրան Պասկևիչյանի անձնական արխիվ):
- Վիրաբյան Ա. 2005, Հայաստանը Ստալինից մինչև Խրյուշչով, Երևան, «Գիտություն», 237 էջ:
- Большая советская энциклопедия, гл. ред. А.М. Прохоров 1969, Москва, «Сов. Энциклопедия», 719 с.

## СОВЕТСКАЯ АРМЕНИЯ 1946-1948 ГГ. В ПРЕДСТАВЛЕНИЯХ РЕПАТРИАНТОВ

Гаяне Казарян

Резюме

Третий этап армянской иммиграции в XX веке, самый крупный по численности, вошёл в историю под названием «Большая репатриация». Волею судьбы в сознании армян «государство» и «историческая родина» являются отдельными понятиями, отсюда исходит и разное восприятие Родины. Этим было обусловлено неоднозначное восприятие армянами диаспоры Советской Армении как Родины. Для некоторых представителей диаспоры, в частности, для молодежи, переехать в Советскую Армению означало воссоединиться с исторической родиной, которую потеряли их предки. Однако им трудно было свыкнуться с советской реальностью, в которой они вынуждены были жить и строить свое будущее. Другая часть приехавшей в Советскую Армению молодежи продолжала считать своей родиной страну своего рождения. Для третьей группы иммигрантов трудно было провести четкую грань между Родиной и местом своего рождения. Эти смещенные представления обретали плоть и кровь в силу объективных и субъективных обстоятельств как в плане социально-экономического и политического положения принимающих стран, так и надежд вновь обрести родину и здесь же – собственный дом.



---

**Ключевые слова** – Советская Армения, репатриация, иммиграция, историческая родина, место рождения, социалистическое мышление, историческая память.

### SOVIET ARMENIA OF 1946-1948 IN THE PERCEPTION OF THE REPATRIATES

Gayane Ghazaryan

#### Abstract

The third phase of Armenian immigration in the 20th century, which was the largest in both registration and in terms of a large number of people, is known in academic circles as the "Great Repatriation". By fate, the concepts of "statehood" and "historical homeland" are divided in the Armenian consciousness, hence the different perceptions of the homeland. In this sense, it is also essential to understand how the exiles perceived Soviet Armenia and what it was for them: a rediscovered homeland, a safe place to live, just an area or a temporary residence. In this framework, the mentality of the youth of the given period is fascinating. For example, some of them, although they remembered being expelled and had a feeling of rediscovering their historical homeland, found it difficult to break away from the reality in which they lived and build a new life. The other part considered their place of birth their homeland. For others, the idea of rediscovering the homeland took the form of coming to Soviet Armenia. For another part, the idea of Soviet Armenia as a homeland was material, but they found it difficult to draw boundaries between the motherland and their place of birth. Such mentalities were given flesh and blood by several objective and subjective circumstances, ranging from the socio-economic and political situation of the host countries to the hope of rediscovering the motherland and having a child of one's own.

**Key words** – Soviet Armenia, repatriation, immigration, historical homeland, birthplace, socialist mentality, historical memory.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՇՇՈՒՐԻ ԵՎ ԽԱԹԹԻ ՄԻՋԵՎ  
Մ.Թ.Ա. XIV-XIII ԴԱՐԵՐՈՒՄ

Ռուսլան Ցականյան

Պատմական գիտությունների թեկնածու  
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ  
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղդամյան 24/4  
Էլ. հասցե՝ rooslantsakanyan@gmail.com  
ORCID: 0009-0003-6148-0933

Հոդվածը ներկայացվել է 13.03.2024, գրախոսվել է 19.07.2024, ընդունվել է տպագրության 02.08.2024  
DOI: 10.53548/0320-8117-2024.2-162

Ամփոփում

Մ.թ.ա. XIV դարի 2-րդ կեսից, կրկին վերելք ապրող Աշշուրի տիրակալները սկսեցին հանդես գալ «Արևի փակ փեղ փնփրելու» սկզբունքներով: Օր-օրի հզորացող Աշշուրի հավակնոտ արքաները ձգտում էին մեծացնել իրենց երկրի սուբյեկտայնությունը և անդամակցել, այսպես կոչված, «արքայական եղբայրների ակումբին», որոնց թվին էին պատկանում Եգիպտոսը, Բաբելոնիան և Խեթական թագավորությունը: Այս փուլում Եգիպտոսի և Ասորեստանի շահերի բախում առկա չէր: Բաբելական ուղղությամբ խնդիրը կարծես հավերժական էր, իսկ Խաթթիի հետ հարաբերությունների կարգավորումը օրվա հարց էր դարձել: Այդ բոլորից զատ, Ասորեստանի առջև դրված խնդիրների կարգավորման համար մեծ նշանակություն ուներ արևմտյան ուղղությունը:

Ասորեստանի ծավալումը դեպի արևմուտք ուներ երկու հիմնական բաղադրիչ՝

1. տնտեսական՝ հումքի աղբյուրների և արևմուտքի առևտրական ուղիների վերահսկումը,

2. քաղաքական՝ խոշոր տերության կարգավիճակը: Հենց այս երկու բաղադրիչների իրագործման ճանապարհին էր, որ հատվում էին Ասորեստանի ու Խեթական թագավորության շահերը:

**Բանալի բառեր՝** Միտտանի, Եգիպտոս, արտաքին քաղաքականություն, ռազմարշավ, դիվանագիտական հարաբերություններ, տնտեսական շահեր, քաղաքական շահեր:

Ներածություն

Մ.թ.ա. XIV դարի 2-րդ կեսին, Մերձավոր Արևելքում խոշոր տերության կարգավիճակում էին գտնվում Եգիպտոսի Նոր թագավորությունը, Խեթական Նոր թագավորությունը<sup>1</sup>, Կասսիտական Բաբելոնիան: Փաստացի, վերոհիշյալ խոշոր տերությունների տիրակալներին էր վերապահված տարածաշրջանի ճակատագիրը: Այս պետությունների միջև գոյություն ունեին

<sup>1</sup> Խեթական թագավորության քաղաքական պատմության համար մանրամասն տե՛ս Bryce 2005, 154-326, Weeden 2022, 573-603, Քոսյան 2013, 177-188, Քոսյան 2022, 140-213:

դիվանագիտական սերտ հարաբերություններ, որոնք էլ պարբերաբար ամրապնդվում էին միջդինաստիական ամուսնությամբ: Նրանց արքաները կրում էին «մեծ արքա (աքք.՝ **šarru rabû = LUGAL GAL**)» տիտղոսը և դիվանագիտական նամակագրություններում միմյանց դիմում էին որպես «եղբայր, եղբայրություն (աքք.՝ **ahhū, ahhūtu = ŠEŠ.UT.TA**)»:

Մ.թ.ա. XIV դ. երկրորդ կեսից կրկին վերելք ապրող Աշշուրի պետությունը սկսում է մեծ ակտիվություն ցուցաբերել տարածաշրջանում<sup>2</sup>: Իսկ նրա տիրակալները, շուտով հայտ են ներկայացնում դառնալու «արքայական եղբայրների ակումբի» անդամ<sup>3</sup>: Ռազմականորեն տրամադրված Աշշուրի տիրակալները սկսում են ակտիվորեն միջամտել տարածաշրջանի *status quo*-ին և փորձում դիվանագիտական հարաբերություններ ստեղծել Եգիպտոսի ու Խեթական պետության հետ:

### Աղբյուրները

Աշշուրա-խեթական դիվանագիտական ու քաղաքական հարաբերությունների պատմությունն ուսումնասիրելու պարագայում առկա աղբյուրների սակավությունը և խիստ առանձնահատուկ բնույթը դրանց վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու հնարավորություն չեն տալիս: Միջինասորեստանյան արքաների դիվանագիտական արխիվը մինչ օրս հայտնի չէ: Աշշուրի տիրակալի ու խեթական արքայի միջև տեղ գտած նամակագրությունը հիմնականում էպիստոլյար բնույթ է կրում և հաճախ խիստ հատվածական է: Տեքստերը բացառապես աքքադալեզու են և հիմնականում հայտնի են խեթական թագավորության մայրաքաղաք Խաթթուսասի (*Բողազքյոյ*) պեղումներից, Ուգարիտից (*Ռաս-Շամրա*) և Ախեթաթոնից (*Թէլ-էլ-Ամարնա*), և փաստացի ոչ մի օրինակ չկա Աշշուրից կամ Կար-Թուկուլտի-Նինուրտայից<sup>4</sup>:

### Աշշուրի վերածնունդը մ.թ.ա. XIV դարում

Մ.թ.ա. մոտ XV դարի կեսերին Աշշուրը նվաճվում է միտտանական արքա Սաուսադատտարի /Սաուշատտար/ կողմից<sup>5</sup>: Աշշուրը ժամանակավորապես հայտնվեց միտտանական տիրապետության տակ: Սակայն, պետք է նշել, որ Միտտանիի տիրապետության ներքո Աշշուրի ենթակայության ժամանակագրական խնդիրները շարունակում են մնալ քննարկման փուլում և

<sup>2</sup> Միջինասորեստանյան պետության վերաբերյալ մանրամասն տե՛ս Frahm 2023, 61-81, Reculeau 2022, 707-800, Ցականյան 2018, 19-29, Liverani 2013, 347-354, Bloch 2012, Kertai 2008-2009, 25-51, Cancik-Kirschbaum 2008, 40-56, Kuhrt 1995, 348-358, Harrak 1987:

<sup>3</sup> Bryce 2003, 76, 108.

<sup>4</sup> Hoffner 2009, Mora, Giorgieri 2004, Beckman 1996, Hagenbuchner 1989a, Hagenbuchner 1989b, Widner 1923, Llop 2012, 289-290, Singer 2008, 713-714, Freu 2003, 101.

<sup>5</sup> Ցականյան 2023a, 15-16, Ցականյան 2018, 19-20, Dassow von E. 2022, 455ff.

դուրս են մեր տվյալ ուսումնասիրման շրջանակից: Աշշուրի տիրակալներից Աշշուր-բեյ-նիշեշուն (մ.թ.ա. 1416-1408 թթ.)<sup>6</sup>, ելնելով եգիպտա-միտտանական հակամարտությունից և Միտտանիում օրեցօր նկատվող քաղաքական ճգնաժամից<sup>7</sup>, ամրաշինական ակտիվ գործունեություն է ծավալում: Եվ հենց արդեն Աշշուր-բեյ-նիշեշունի կառավարման սկզբներից կարելի է վստահաբար նշել, որ Աշշուրի միապետը, ամենայն հավանականությամբ, գործում էր որպես անկախ տիրակալ<sup>8</sup>: Դեռ ավելին՝ ելնելով աշխարհաքաղաքական բարենպաստ պայմաններից՝ Աշշուր-բեյ-նիշեշուն, օգտագործելով հարմար առիթը, առաջին հերթին կարգավորում է հարաբերությունները հարավային հարևան Կասսիտական Բաբելոնիայի հետ<sup>9</sup>: Աշշուր-բեյ-նիշեշունի եղբոր որդի Աշշուր-նադին-ախխե II-ը (մ.թ.ա. 1399-1390 թթ.), ըստ Էլ-Ամարնայի EA 16 նամակի՝ ուղարկված փարավոն Ամենհոտեպ IV-ին (Էխնաթոն, մ.թ.ա. 1352-1336 թթ.), Աշշուր-ուբալլիթ I-ի (մ.թ.ա. 1362-1327 թթ.) կողմից, ըստ երևույթին, դիվանագիտական կապ է հաստատել Եգիպտոսի հետ և փարավոնից (Ամենհոտեպ III-ից (մ.թ.ա. 1390-1352 թթ.)<sup>10</sup>) ստացել 20 տաղանդ ոսկի<sup>10</sup>:

#### **Աշշուր-ուբալլիթ I (մ.թ.ա. 1362-1327 թթ.) և Սուպպիլուլիումաս I (մ.թ.ա. 1355-1322 թթ.)**

Աշշուր-ուբալլիթ I-ի<sup>11</sup> կառավարման ընթացքում Աշշուրը ոչ միայն դուրս եկավ իր բնական սահմաններից և անցավ նախահարձակման, այլև սկսեց միջամտել հարևան երկրների ներքին գործերին: Արևելքից աշշուրցիները սկսեցին ակտիվորեն սպառնալ Միտտանիին, դիվանագիտական հարաբերություններ հաստատեցին Եգիպտոսի և Բաբելոնիայի հետ: Այս շրջանում Աշշուրի արտաքին քաղաքականության գլխավոր խնդիրը հյուսիսից արևմուտք ձգվող և խեթերի կողմից վերահսկվող «կիսալուսնի» ճեղքումն էր, որը թույլ կտար ճանապարհի հարթել դեպի հյուսիսի մետաղների աղբյուրները և արևմուտքի առևտրական ուղիներն ու կենտրոնները<sup>12</sup>:

Խեթական պետության ու Ասորեստանի միջև հարաբերությունների պատմության սկիզբը կարելի է համարել միտտանական գահի համար սկսված պայքարում երկու երկրների ներգրավվածությունը: Մ.թ.ա. XIV դարի երկրորդ կեսին սկսված «Սիրիական մեծ պատերազմի» ժամանակ խեթերին հաջողվեց նվաճել Կարքեմիշը: Միտտանիի համար օրհասական այս

<sup>6</sup> Աշշուրի արքայացանկի վերաբերյալ տե՛ս Յականյան 2023a, 15-16:

<sup>7</sup> Մանրամասն տե՛ս Ավետիսյան 2002, 41-63, Аветисян 1984, 43 и сл.

<sup>8</sup> Յականյան 2018, 20:

<sup>9</sup> Glassner 2004, Chron. 10, II.1-7, Յականյան 2018, 20-21:

<sup>10</sup> Moran 1992, EA 16, Յականյան 2018, 21-22:

<sup>11</sup> Harrak 1987, 10-77.

<sup>12</sup> Քոսյան 1999, 13:

Ժամանակահատվածում բռնկվում է քաղաքացիական պատերազմ: Վերջինս ավարտվեց պալատական հեղաշրջմամբ, որի հետևանքով Միտտանիի արքա Տուշրատտան (մ.թ.ա. մոտ 1360-1335 թթ.) սպանվեց<sup>13</sup>: Մի կարծիքի համաձայն, Միտտանիում պալատական հեղաշրջման թիկունքում կանգնած է եղել Խաթթիի արքա Սուպպիլուլիումաս I-ը (մ.թ.ա. 1355-1322 թթ.)<sup>14</sup>: Միտտանիում, ըստ երևույթին, նույն Սուպպիլուլիումաս I-ի օժանդակությամբ գահ է բարձրանում Արտադամա II-ը: Սակայն քիչ անց միտտանական գահին նրան փոխարինում է որդին՝ Շուտտարնա III-ը: Չի բացառվում, որ միտտանական արքունիքի նոր հեղաշրջման հետևում կանգնած լինի Աշշուրի արքա Աշշուր-ուբալլիթ I-ը<sup>15</sup>: Սրան հետագայում իր երախտագիտությունն է հայտնում Շուտտարնա III-ը: Իսկ ինչ վերաբերում է գահի օրինական ժառանգորդ Շատտիվազային, ապա նա, փախուստի դիմելով, հայտնվում է նախ Բաբելոնիայում, այնուհետև՝ Խաթթիում: Խաթթիի արքան իր հովանավորության տակ է վերցնում Շատտիվազային<sup>16</sup>: Շուտտարնա III-ը, հայտնվելով անհուսալի իրավիճակում, օգնության խնդրանքով դիմում է Միտտանիի նախկին «հպատակներին»՝ Աշշուրի արքա Աշշուր-ուբալլիթ I-ին ու Ալգիի (Անտարատլի(°)) արքային<sup>17</sup>: Ինչևէ, միտտանական հարցը ժամանակավոր լուծում ստացավ այն ժամանակ, երբ Շատտիվազան խեթական ուժերի օժանդակությամբ բազմեց հայրական գահին<sup>18</sup>: Սուպպիլուլիումաս I-ի և Շատտիվազայի միջև պայմանագիր կնքվեց, որն էլ ամրապնդվեց Խաթթի արքայի դստեր և Շատտիվազայի ամուսնությամբ՝ «Արքայազն Շապրիվազան կլինի թագավոր Միտտանի երկրի, և Խաթթիի արքայի դուստրը պետք է լինի Միտտանիի թագուհի»<sup>19</sup>: Պայմանագրի տեքստի համաձայն, երկու երկրների միջև սահման էր ճանաչվում Եփրատ գետը, իսկ վերին միջին Եփրատի գրեթե ամբողջ գոտին անցավ Խաթթիին: Նոր տարածքներում Սուպպիլուլիումաս I-ը Կարքեմիշ կենտրոնով արբանյակ կամ քույր-թագավորություն ստեղծեց, որի կառավարումը նա հանձնարարեց իր որդի Պիլասսիլիին (խորրիական անունը՝ Շարրի-Կուշուխ<sup>20</sup>)<sup>21</sup>: Ըստ Ա. Քոսյանի՝ Կարքեմիշի թագավորությանը վերապահված էին մեծ լիազորություններ Խաթթիի կախյալ հարևան քաղաքական միավորների նկատմամբ վերահսկողության հարցերում<sup>22</sup>:

<sup>13</sup> Beckman 1996, N 6A, § 6, Dassow 2022, 500-501, Քոսյան 2022, 155, Bryce 2005, 161-163:

<sup>14</sup> Na'aman 1995, 116-118, Ավետիսյան 2002, 75-76, Аветисян 1984, 82-86:

<sup>15</sup> Koliński 2015, 9.

<sup>16</sup> Koliński 2015, 10, Maidman 2011, 127ff., Bryce 2005, 180, 184.

<sup>17</sup> Beckman 1996, N 6B, §§ 1-2, Weidner 1923, N 2.

<sup>18</sup> Beckman 1996, N 6A, § 7, Քոսյան 2022, 156, Bryce 2005, 185, Bryce 2003, 10.

<sup>19</sup> Beckman 1996, N 6A, § 7, Bryce 2005, 185, Bryce 10.

<sup>20</sup> Քոսյան 2022, 155:

<sup>21</sup> Beckman 1996, N 6A, § 10, Քոսյան 2022, 155, Yamada 2011, 200:

<sup>22</sup> Քոսյան 2022, 155:

Այս գործընթացում Աշշուր-ուբալլիթ I-ն իրեն դրսևորեց որպես հեռա-տես քաղաքական գործիչ և չգնաց բացահայտ ընդհարման խեղճերի հետ<sup>23</sup>:

Ամփոփելով Աշշուր-ուբալլիթ I-ի ժամանակահատվածի Աշշուրի և Խաթթիի առնչությունները<sup>24</sup> անհրաժեշտ է նշել, որ կայսերական նկրտումներ ունեցող Աշշուրի արքան խեղճերի հետ ուղիղ ընդհարման չգնաց: Ըստ երևույթին, ճիշտ գնահատելով իրերի դրույթունն ու Խաթթիի ներուժը՝ Աշշուրի տիրակալը փորձում էր արևմուտքում ի հակակշիռ Խաթթիի օգտագործել Միտտանիին: Փոխարենն առավել ակտիվ էր գործում հարավում ընդդեմ Բաբելոնիայի<sup>25</sup>:

### **Աշշուրը և Խաթթին Ադադ-նիրարի I-ի (մ.թ.ա. 1304-1273 թթ.) կառավարման ժամանակահատվածում**

Աշշուր-ուբալլիթ I-ի հաջորդների՝ Էնլիլ-նիրարի I-ի (մ.թ.ա. 1326-1317 թթ.) և Արիկ-դեն-իլիի (մ.թ.ա. 1316-1305 թթ.) կառավարման ժամանակահատվածում Աշշուրը մեկը մյուսի հետևից ձեռնարկում է մի շարք հաջողված արշավներ. արևմուտքում երբեմնի հզոր միտտանական թագավորությունն էր, արևելքում՝ էլամական ցեղերը, հյուսիսում Հայկական լեռնաշխարհի ցեղերն էին, իսկ հարավում՝ կասսիտները<sup>26</sup>:

Աշշուրի նոր տիրակալ Ադադ-նիրարի I-ը (մ.թ.ա. 1304-1273 թթ.)<sup>27</sup> շնորհիվ իր նվաճողական ակտիվ գործունեության, մուտք գործեց Մերձավոր Արևելքի մեծ քաղաքականություն: Դրա իրականացմանը միտված առաջին քայլը Խեթական պետության վերահսկողության տակ գտնվող Միտտանիի դեմ էր ուղղված: Մ.թ.ա. մոտ 1282 թ. Ասորեստանի զորքերը, ներխուժելով Միտտանի, պարտության մատնեցին Շատտուարան I-ի զորքերին և տիրեցին մայրաքաղաք Վաշշուկանիին<sup>28</sup>: Շատտուարան I-ը գերվեց և տարվեց Աշշուր, որտեղ վերջինս երգվեց հավատարիմ մնալ Աշշուրի արքային, կանոնավոր կերպով հարկ վճարել, որից հետո Ադադ-նիրարի I-ը նրան թույլ տվեց վերադառնալ<sup>29</sup>:

Ադադ-նիրարի I-ն իր հարձակումը հիմնավորում է միտտանական արքայի հակաստորեստանյան կեցվածքով՝ «4-6. ...երբ Շապրուար[ան] (I),

<sup>23</sup> Քոսյան 2022, 157, Bryce 2005, 185:

<sup>24</sup> Հնարավոր է, որ KUB 8.80, KUB 23.61 և KUB 4.93 նամակները վերաբերում են Աշշուր-ուբալլիթ I-ի ժամանակահատվածին, մանրամասն տե՛ս Machinist 1987, 265:

<sup>25</sup> Յականյան 2018, 20-29:

<sup>26</sup> Reculeau 2022, 732-740, Քոսյան 1999, 14-16, 18-28, 73-76, Harrak 1987, 78-80:

<sup>27</sup> Harrak 1987, 81-178.

<sup>28</sup> Թվագրման հեղինակ Բ. Ալեքսանդրովը, ելնելով «թվագրման կարճ ժամանակագրությունից» (տե՛ս Յականյան 2022, 239-247), Ադադ-նիրարի I-ի արշավանքը թվագրում է մ.թ.ա. 1273-ով: Արշավանքի թվագրման և այլ մանրամասների վերաբերյալ մանրամասն տե՛ս Alexandrov 2014, 53, ծնթ. 19:

<sup>29</sup> Grayson 1987, A.0.76.3, II. 4-14, Harrak 1987, 119-125, Аветисян 1984, 94.

Խան[իզ]ալբադի (Միտտանի – Ռ.Ց.) արքան ապստամբեց իմ դեմ և ռազմական գործողություններ կատարեց»<sup>30</sup>:

Ասորեստանցիներից կրած պարտությունից հետո անգամ՝ Միտտանին խեթերի կողմից շարունակվում էր ընկալվել որպես «մեծ տերություններից» մեկը<sup>31</sup>: Սակայն Շատտուարայից հետո իրավիճակն ավելի լարվեց: Վերջինիս որդին՝ Վասաշատտան, անկախության ձգտելով, ապստամբեց և օգնության խնդրանքով դիմեց խեթերին՝

«15-20. Նրա (Շարտուարայի – Ռ.Ց.) մահից հետո Ուասաշատտան (Վասաշատտա – Ռ.Ց.)՝ նրա որդին, ըմբոստացավ, ապստամբեց իմ դեմ և ռազմական գործողություններ ձեռնարկեց: Օգնության համար նա մեկնեց Խաթթի երկիր: (Սակայն) խեթերը նրա փորած նվերները վերցրեցին, բայց օգնություն ցույց չբերեցին»<sup>32</sup>:

Աշշուրում, սակայն, այս ապստամբությունն ընկալվեց որպես նախկին արքայի և, որ ավելի կարևոր է, Աշշուր աստծո առջև երդման խախտում, և պատիժը շատ ավելի խիստ եղավ: Ադադ-նիրարի I-ը ներխուժեց Միտտանի և տիրացավ նրա երկու արքայական քաղաքներին՝ Տաիդեին ու Վաշշուկան-նիին<sup>33</sup>: Եթե անգամ Վասաշատտային հաջողվեց փախուստի դիմել, ապա արքայական ընտանիքն արքայազնացավ<sup>34</sup>: Սրանով լրջորեն վտանգվեցին Խաթթի սիրիական տիրույթները, քանի որ այդուհետև Ասորեստանը գործողությունների ազատություն ստացավ խեթերի սիրիական տիրույթների և այնտեղ նրանց գլխավոր հենակետ Կարբեմիշի անմիջական հարևանությամբ<sup>35</sup>:

Ելնելով հայտնի **KUB 23.102**-ի՝ Ադադ-նիրարի I-ին խեթական արքայի<sup>36</sup> սառը և դատապարտող նամակից՝ կարելի է եզրակացնել, որ Վասաշատտային պարտության մատնելուց հետո Աշշուրի արքան, ամենայն հավանականությամբ, երկու երկրների միջև հարաբերությունները կարգավորելու նպատակով, պատվիրակություն է առաքել Խաթթուսաս: Ադադ-նիրարի I-ի պատվիրակության կամ նամակի մասին ոչ մի հիշատակություն չկա, այն ենթադրվում է խեթական արքայի պատասխան նամակի գոյությամբ: Ելնելով նամակի համատեքստից՝ Ադադ-նիրարի I-ը ցանկություն է հայտնել այցելելու խեթական տիրապետության տակ գտնվող Ամմանուսի լեռ և, ամեն-

<sup>30</sup> Grayson 1987, A.0.76.3, II. 4-6.

<sup>31</sup> Reculeau 2022, 741, Kertai 2008-2009, 28-31.

<sup>32</sup> Grayson 1987, A.0.76.3, II. 15-20.

<sup>33</sup> Grayson 1987, A.0.76.3, II. 15-51.

<sup>34</sup> Reculeau 2022, 742, Harrak 1987, 126-131, Аветисян 1984, 95-97.

<sup>35</sup> Քոսյան 2022, 179, Аветисян 1984, 97:

<sup>36</sup> Ինչ վերաբերում է KUB 23.102-ի հեղինակին, ապա ենթադրվում է, որ նա կարող է լինել կամ Մուվաթալիս II-ը կամ Մուրսիլիս (Ուրիսի-Թեշուր) III-ը կամ Խաթթուսիսիս III-ը, հմմտ. Hoffner 2009, N 104, Mora, Giorgieri 2004, N 20, Beckman 1996, N 24A, Hagenbuchner 1989b, N 192, Freu 2003, 102, Bryce 2003, 76-77, Harrak 1987, 101-102, Alexandrov 2014, 63-70:

նայն հավանականությամբ, երկու երկրների միջև բարիդրացիական հարաբերություններ ստեղծել: Սակայն Խաթթիի արքան Ադադ-նիրարի I-ին ոչ միայն թույլ չի տալիս գալ Ամմանոսի լեռ, այլև՝ հրաժարվում է նրա «**եղբայրը**» լինելուց:

«1-19. Դու անընդհատ խոսում ես Վասաշատուայի պարտության և Խուրրիի (Միտտանիի – Ռ.Յ.) երկրի նվաճման մասին: Դու նվաճեցիր զենքի ուժով: Դու նվաճեցիր ...այսպիսով, դու դարձել ես «մեծ արքա», այդպես չէ՞: Բայց ինչո՞ւ ես շարունակում խոսել «**եղբայրության**» և Ամմանոսի լեռ գալու մասին: Ի՞նչ է դա, (սա) «**եղբայրություն**»: Իսկ ի՞նչ է դա, (սա) «Ամմանա լեռը գալը»: Ինչի՞ համար ես քեզ իմ «**եղբայրը**» անվանեմ: Ո՞վ է օտարին իր «**եղբայրը**» անվանում: Մարդիկ, որոնք միմյանց հետ ազգակցական կապ չունեն՝ իրար «**եղբայր**» չեն անվանում: Այդ դեպքում ինչո՞ւ պետք է քեզ «**եղբայր**» անվանեմ: Ես և դու նույն մորի՞ց ենք ծնվել: Քանի որ պապս և հայրս Ասորեստանի արքային «**եղբայր**» չէին անվանում, դու չպետք է շարունակես ինձ գրել «գալու» և «Մեծ թագավորության» մասին: Դա ինձ դուր չի գալիս»<sup>37</sup>:

Հետաքրքիր է նաև, որ **KUB 23.102**-ին նախորդած **KBo 1.14** նամակում<sup>38</sup>, որի բովանդակությունը մոտ է Ադադ-նիրարի I-ի կողմից Միտտանիի արքա Շատտուարան I-ի դեմ կատարած արշավանքի իրադարձություններին, Խաթթիի արքան հարգանքով ու ակնաճանքով է արտահայտվում Աշշուրի տիրակալի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Միտտանիի արքա Վասաշատուային, ամենայն հավանականությամբ, հաջողվեց փախուստի դիմել: Ամեն դեպքում, ոչ մի աղբյուրի մեջ նա այլևս չի հիշատակվում: Ադադ-նիրարի I-ի արձանագրության մեջ խոսվում է միայն նրա ընտանիքի մասին՝ «*Ես Իրրիդու քաղաքից քշեցի տարա նրա «պալատի կնոջը» (DAM É.GAL-šu), նրա որդիներին (DUMU.MEŠ-šu), դուստրերին (DUMU.MUNUS.MEŠ-šu) և ժողովրդին (ú um-ma-na-ti-šu)*»<sup>39</sup>: Ելնելով այն հանգամանքից, որ Վասաշատուան օգնություն էր խնդրել խեթերից, կարելի է ենթադրել, որ, ամենայն հավանականությամբ, նա փախել ու ապաստան էր գտել հենց Խաթթիում: Անգամ չի բացառվում, որ Ադադ-նիրարի I-ը հանուն խաղաղության Խաթթիի Խաթթուսիլիս III<sup>40</sup> արքայից «**եղբայրության**» դիմաց խնդրեր վերացնել Վասաշատուային, իսկ Միտտանին վերածել խեթա-ասորեստանյան ազդեցության ոլորտի:

<sup>37</sup> KUB 23.102, II. 1-19՝ Hoffner 2009, N 104, Mora, Giorgieri 2004, N 20, Beckman 1996, N 24A, Hagenbuchner 1989b, N 192.

<sup>38</sup> Mora, Giorgieri 2004, N 1, Beckman 1996, N 24B, Hagenbuchner 1989b, N 195.

<sup>39</sup> Grayson 1987, A.0.76.3, II. 45-47.

<sup>40</sup> Alexandrov 2014, 63-70.



Ինչպես երևում է վերոշարադրյալ **KUB 23.102**-ի տեքստից, Միտտանին նվաճելուց հետո Խաթթիի արքան Աշշուրի տիրակալին փաստացի ճանաչում է որպես «մեծ արքա (աքք.՝ **šarru rabû = LUGAL GAL**)»: Սակայն, միաժամանակ, Խաթթուսիլիս III-ը հրաժարվում է ընդունել Ադադ-նիրարի I-ի «եղբայրության (աքք.՝ **abḫūtu**)» առաջարկը: Վերջինով Խաթթուսիլիս III-ը փաստացի մերժում է Ադադ-նիրարի I-ի «արքայական եղբայրների ակումբի» անդամակցության հայտը<sup>41</sup>:

Ամեն դեպքում, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, Միտտանին երկար չմնաց Ասորեստանի վերահսկողության տակ: Եվ, հավանաբար, հենց Ադադ-նիրարի I-ի կառավարման վերջին շրջանում, ըստ Խաթթուսասից հայտնաբերված բավականին վնասված **KBo 1.20** նամակի<sup>42</sup>, Միտտանիում գահ է բարձրանում խեթերի դաշնակից Ալզիի (°) տիրակալ, «շուբարցի արքա» xxx<sup>43</sup>-Շարրուման(°)<sup>44</sup>: Այստեղ ակնհայտ է, որ խեթերը xxx-Շարրումային գերադասել են Վասաշատտայից և գահ բարձրացրել Միտտանիում: Համադրելով **KBo 1.20** և **IBoT 1.34** նամակների<sup>45</sup> բովանդակությունը՝ Բ. Ալեքսանդրովը գալիս է այն եզրակացության, որ Խաթթուսիլիս III-ը մ.թ.ա. մոտ 1278թ. ներխուժում է Միտտանի և գահ բարձրացնում *շուբարցի արքա*» xxx-Շարրումային (°)<sup>46</sup>: Սակայն, ըստ **KBo 1.20** նամակի բովանդակության, Միտտանիի նոր արքան փորձում էր Խաթթիից անկախ քաղաքականություն վարել և կարծես թե ձգտում էր Ասորեստանի հետ հարաբերությունների կարգավորման: Շուտով նրա այս քաղաքականությունը դժգոհություն է առաջացնում խեթահպատակ մի շարք երկրներում: «Շուբարցի արքայի» քաղաքականությունից դժգոհ երկրների շարքում, ինչպես երևում է խեթական արքային ուղղված վերջինիս **IBoT 1.34** նամակից, եղել են Խալպայի (Հալեպ) Խալպացիտիս և Իշուվայի Էխլի-Շարրումա<sup>47</sup> արքաները: Ասորեստանի հաջորդ արքա Շուվանու-աշարեդ (Սալմանասար) I-ի (մ.թ.ա. 1272-1243 թթ.) դեպի Միտտանի կատարած արշավանքի արձանագրության տեքստը ցույց է տալիս, որ որպես Միտտանիի արքա հիշատակվում է Շատտուարա II-ը:

Ընդհանուր առմամբ, ըստ Ա. Քոսյանի՝ արտաքին քաղաքականության մեջ Խաթթուսիլիս III-ը հակված էր հրաժարվելու տարածքային նոր նվա-

<sup>41</sup> Reculeau 2022, 746.

<sup>42</sup> Mora, Giorgieri 2004, N 2, Hagenbuchner 1989b, N 235, Harrak 1987, 80-83.

<sup>43</sup> Անվան սկզբնամասը վնասված է և վերականգման հնարավորություն չի տալիս:

<sup>44</sup> Alexandrov 2014, 69.

<sup>45</sup> Alexandrov 2014, 56-63, Beckman 1996, N 25, Аветисян 1984, 98-100.

<sup>46</sup> Թվագրման համար տե՛ս Alexandrov 2014, 68-69, Harrak 1987, 137, 155-162:

<sup>47</sup> Շատ հետաքրքիր կլինի նաև հետևյալ աշխատանքային վարկածը, ըստ որի՝ հնարավոր է, որ Ալզիի(°) ապա և Միտտանիի թագավոր «շուբարցի արքա» xxx-Շարրուման(°) և Թուկուլտի-Նինուրտա I-ի (մ.թ.ա. 1242-1206 թթ.) կառավարման չորրորդ տարում հիշատակված նույն Ալզիի Էխլի-Թեշուրը (Tsakanyan 2023, 6-8, Ցականյան 2023b, 62-67, 70) լինեն հայր ու որդի կամ պապ ու թոռ:

ճումներից և Խաթթիի ավանդական հակառակորդների հետ հարաբերությունները խաղաղ ճանապարհով կարգավորելու<sup>48</sup>:

Այսպիսով, Ադադ-նիրարի I-ի վարած նվաճողական ակտիվ քաղաքականության շնորհիվ Ասորեստանը Մերձավոր Արևելքում դարձավ խոշոր տերություն, ինչպես Եգիպտոսը կամ Խեթական պետությունը: Խեթա-ասորեստանյան հարաբերությունները շարունակում էին մնալ ոչ բարիդրացիական: Սակայն պետք է արձանագրել նաև, որ Ադադ-նիրարի I-ը, ի տարբերություն իր նախորդների, առավել գործուն էր իր նպատակներին հասնելու հարցում: Նրա օրոք նույնպես խեթերի հետ ուղիղ ընդհարում տեղի չունեցավ: Խեթական պետությունը, ելնելով խեթա-եգիպտական լարված հարաբերություններից, առժամանակ պասսիվ դիրք գրավեց: Ըստ երևույթին, հենց այդ պասսիվությունն էր, որ Ասորեստանին Միտտանիում ազատ գործելու լայն հնարավորություններ տվեց, և Ադադ-նիրարի I-ին հաջողվեց դուրս գալ դեպի Եփրատ<sup>49</sup>: Հյուսիսային Սիրիայի ու հարավարևելյան փոքրասիական առևտրական ճանապարհներն ու հումքի աղբյուրների նկատմամբ վերահսկողություն սահմանելու Ադադ-նիրարի I-ի հաջողությունները փաստացի ժամանակավոր էին: Դիվանագիտական հարաբերություններ երկու երկրների միջև այդպես էլ չհաստատվեցին:

### **Շուլմանու-աշարեդ I (մ.թ.ա. 1272-1243 թթ.). ռազմական ընդհարումից մինչև դիվանագիտական հարաբերությունների հաստատման փուլ**

Ինչպես վերը տեսանք, Ադադ-նիրարի I-ի ռազմական հաջողությունները Միտտանիում ժամանակավոր էին, և խեթերին հաջողվել էր միտտանական գահին նստեցնել իր դրածոյին: Այդ ամենի հետևանքով դրածոյի անկախ քաղաքականության փորձերն ու Ասորեստանի հետ համագործակցելու պատրաստակամությունն ավարտվեցին վերջինիս գահագրկմամբ: Խեթական զորքերը ներխուժում են Միտտանի և գահ բարձրացնում Խաթթի արքային հավատարիմ, նախկին արքայատոհմի ներկայացուցիչ Շատտուարա II-ին<sup>50</sup>: Ինչպես երևում է Շուլմանու-աշարեդ I-ի արձանագրությունից, խեթերն ամենայն հավանականությամբ՝ Շատտուարա II-ին գահ բարձրացնելուց հետո Միտտանիում զորքեր էին տեղակայել:

Խեթերի ռազմական ներկայությունը Միտտանիում անմիջականորեն սպառնալիք էր Ասորեստանին: Ըստ Շուլմանու-աշարեդ I-ի արձանագրության, խեթական ռազմական ներկայությունից զատ, Միտտանիում գտնվում էին նաև ախլամու ցեղի դաշնակցային զորքերը՝ «*mŠat-tu-a-ra LUGAL KUR Էa-ni-gal-bat ÉRIN-an Էa-ti-i ú aš-la-mi-i*»<sup>51</sup>:

<sup>48</sup> Քոսյան 2022, 183:

<sup>49</sup> Reculeau 2022, 755, Kertai 2008-2009, 31.

<sup>50</sup> Մանրամասն տե՛ս KBo 120, IBoT 134, KBo 28.65, KUB 3.80:

<sup>51</sup> Grayson 1987, A.0.77.1, II. 60-61, Shibata 2017, 491-506.

Բազմելով հայրական գահին՝ Շուվմանու-աշարեդ I-ը սկսեց նվաճողական քաղաքականություն վարել և որպես հիմնական թիրախ ընտրեց Խաթթի վերահսկողության տակ գտնվող Հյուսիսային Սիրիայի, Վերին Եփրատի ու Վերին Տիգրիսի տարածքները:

Մ.թ.ա. մոտ 1270 թ.<sup>52</sup> Ասորեստանի զորքերը ներխուժեցին Միտտանի: Խաթթիի, Միտտանիի և ախլամու կոչվող ցեղի հակասորեստանյան ուժերը չկարողացան լուրջ դիմադրություն ցույց տալ ասորեստանցիներին: Միտտանին նվաճվեց, իսկ ասորեստանյան զորքն ասպատակությամբ հասավ Եփրատ գետը՝ Կարքեմիշի դիմաց.

«56-87. Ես կոտորեցի նրա հսկայական բանակի անթիվ բազմությունը: Ինչ վերաբերում է նրան (Շատտուարա II-ին), ես հետապնդեցի նրան նեպապաքով մինչև մայրամուտ: Ես մորթեցի նրանց հորդանները (բայց) նրանցից 14.400-ը (որոնք մնացին) ողջ, կուրացրի (և) փարա: Ես նվաճեցի նրա ինը ամրացված պաշտամունքային կենտրոնները (ինչպես նաև) քաղաքը, որպեղից նա իշխում էր, և ես նրա 180 քաղաքները վերածեցի ավերակների: Ես ոչխարների պես մորթեցի խեթերի և նրանց դաշնակից ախլամուի զորքերը: Այդ ժամանակ ես գրավեցի նրանց քաղաքները (շրջանում)՝ Տաիդուից մինչև Իրրիդու, ամբողջ Քաշիարի լեռը մինչև Էլուխապ քաղաքը, Սուդու ամրոցը, Խարրանու ամրոցը մինչև Կարքեմիշ, որը Եփրատի ափին է: Ես փրեցի նրանց հողերին և հրկիզեցի նրանց քաղաքների մնացորդները»<sup>53</sup>:

Նվաճելով Միտտանին՝ Շուվմանու-աշարեդ I-ը այն, որպես կախյալ քույր-թագավորություն, կցեց Ասորեստանին՝ կառավարիչ նշանակելով իր եղբայր Իբաշի-իլիին: Միտտանիի կամ Մ. Յամադայի բնութագրմամբ՝ «ասորեստանյան Խանիգալբարի»<sup>54</sup> նոր կենտրոնը դարձավ Խաբուր գետի ստորին հոսանքում գտնվող Դուր-Կատլիմմուն (Ժամ. Թէլլ Շէխ Խամադ): «Ասորեստանյան Խանիգալբարի» կառավարիչները կրում էին «մեծ վեզիր» (**sukkallu rabi'u**) և «Խանիգալբատ երկրի արքա» (**šar māt Hanigalbat**) տիտղոսները<sup>55</sup>:

Ասորեստանի և Խաթթիի միջև բախումը դարձավ անխուսափելի: Ինչպես կարելի է ենթադրել **KUB 5.1** և **KUB 5.17** նամակների բովանդակությամբ, իրերի դասավորությունից անհանգստացած Խաթթիի տիրակալ Խաթթուսիլի III-ը Շուվմանու-աշարեդ I-ի դեմ արշավանքի նախապատրաստություններ է տեսնում: Ամենայն հավանականությամբ, Խաթթուսիլի III-ի վերահաս մահը որոշ ժամանակով հետաձգեց բախումը երկու երկրների

<sup>52</sup> Ըստ Յ. Բլոխի՝ Միտտանիի դեմ Շուվմանու-աշարեդ I-ի արշավանքը կարելի է թվագրել նրա կառավարման ութերորդ տարով և Աշշուր-նադին-շումեի էպոնիմատով՝ մ.թ.ա. 1263 թ.՝ հմմտ. Bloch 2012, 200, ծնթ. 22, 406, Bloch 2008, 147:

<sup>53</sup> Grayson 1987, A.O.77.1, ll. 56-87, Bloch 2012, 100-110.

<sup>54</sup> Yamada 2011, 199.

<sup>55</sup> Yamada 2011, 199.

միջև: Իսկ Խաթթիում գահ բարձրացած Թուդխալիյաս IV-ը, ըստ **KBo 18.24**<sup>56</sup>; **KUB 23.88**-ի<sup>57</sup> և **KUB 23.99**-ի<sup>58</sup>, Խաթթիում տիրող ներքաղաքական պայմաններից (խեթական արքայատոհմի որոշ անդամների կողմից գահակալական պայքար էր սկսվել) ելնելով՝ պատվիրակություն է ուղարկում Աշշուր: Նամակում Թուդխալիյաս IV-ը Շուլմանու-աշարեդ I-ին դիմում է որպես «մեծ արքայի» և «եղբոր»՝

«1. Այսպես (ասում է) Արևս՝ Մեծ արքան, Շուլմանու-աշարեդին՝

2. Մեծ արքային, Աշշուրի արքային՝ եղբորս, ասա՛...» (**KBo 18.24**):

Սակայն, հենց նույն **KBo 18.24**-ի (հնարավոր է նաև **KBo 4.14**) տեքստից ակնհայտ է դառնում, որ Աշշուրի և Խաթթիի միջև հարաբերությունները շարունակում են լարված մնալ: Նամակից ակնհայտ է դառնում, որ Թուդխալիյաս IV-ը փորձում է կարգավորել երկու երկրների միջև հարաբերությունները, ինչն ըստ երևույթին անտեսվում է Ասորեստանի արքայի կողմից: Վերջինիս վառ վկայությունը կարող է լինել նույն նամակի հետևյալ տողը, որտեղ Թուդխալիյաս IV-ը բողոքում է. «*քանզի (ես) Մեծ արքա եմ և ոչ երկրորդ կարգի տիրակալ*» (**KBo 18.24**, Ro I.):

Թուդխալիյաս IV-ը բողոքում է նաև այն մասին, որ ասորեստանցիները քաղաքներ են գրավել, որոնք դեռևս Սուպպիլուլիումաս I-ի կառավարումից ի վեր պատկանելիս են եղել Խաթթիին: Թուդխալիյաս IV-ի նամակն ավարտվում է «*Բայց ինչո՞ւ ես դեռ շարունակում ինձ գրել*» (**KBo 18.24**, Vo IV: 9-10) տողով, ինչը վկայում է լարված հարաբերությունների մասին, և այն, որ Խաթթի արքան չի ցանկանում նամակագրական կապ հաստատել Աշշուրի տիրակալի հետ:

Ասորեստանի ծավալումն արևմուտքում Խաթթիի համար հղի էր տնտեսական ու քաղաքական սպառնալիքներով: Ասորեստանի հաջողություններն արևմուտքում կարող էին վերացնել այն արգելապատնեշը, որը Կարքեմիշի քույր-թագավորության շնորհիվ առժամանակ զսպում էր Ասորեստանին: Հարավարևելյան Փոքր Ասիայի մատույցներում ուժերի հարաբերակցությունն աստիճանաբար կարող էր փոխվել հոգուտ Ասորեստանի<sup>59</sup>: Թուդխալիյաս IV-ը Ասորեստանի դեմ պատերազմի նախապատրաստություններ է տեսնում, որի առաջին քայլը Ասորեստանին հումքի աղբյուրներից զրկելն ու տնտեսական շրջափակման մեջ զգելն էր: Ա. Քոսյանի պնդմամբ՝ պայմանագրի համապատասխան մասը դիվանագիտության պատմության մեջ թերևս առաջին դեպքը պետք է համարել, երբ ամրագրվում էր հակառակորդ պետությունների ցամաքային շրջափակման քաղաքականությունը<sup>60</sup>:

<sup>56</sup> Mora, Giorgieri 2004, N 4, Hagenbuchner 1989b, N 188.

<sup>57</sup> Mora, Giorgieri 2004, N 16, Hagenbuchner 1989b, N 331.

<sup>58</sup> Mora, Giorgieri 2004, N 18, Hagenbuchner 1989b, N 223, Harrak 1987, 188-189.

<sup>59</sup> Քոսյան 2022, 193:

<sup>60</sup> Bryce 2005, 301-302, Քոսյան 2022, 198:

Վերջինիս մասին է վկայում Թուդխալիյաս IV-ի և Ամմուրուի տիրակալ Շաուշգամուվայի միջև կնքված (KUB 23.1<sup>61</sup>) համաձայնագիրը՝

«(A IV, §13) 12. Քանիզի **Աշշուրի արքան Արևիս թշնամին է**, 13. քեզ էլ պիտի նա թշնամի լինի: 14. Քո առևտրականը թող Աշշուր 15. չգնա, իսկ նրա առևտրականին 16. դու քո երկիր չթողնես 17. քո երկրով նա թող չանցնի: 18. Բայց եթե նա քո երկիր գա, բռնիր նրան և ուղարկիր նրան Արևիս: Թող այս հարցը [երդման] փակ [ներկայացվի] քեզ:

...(A IV, §15:23-26) [Դու չպետք է թույլ փասս ] (?), (որ) որևէ ախտիյավյան նավ նրա մոտ (Ասորեստանի արքայի - Ռ.Ց.) գնա [...]: Երբ նա ուղարկի (?) [...] ձեր երկրի աստվածությանը [...] պալատը [...]:»:

Այս համաձայնագիրը հետաքրքիր է նաև այն առումով, որ Եգիպտոսի, Բաբելոնիայի տիրակալների հետ միաժամանակ Թուդխալիյաս IV-ը կարգավիճակով իրենց հավասար է դիտարկում նաև Ասորեստանի արքային՝

«(§A III, 12:38-45.Եթե [Միծրիի (Եգիպտոսի – Ռ.Ց.) արքան] Արևիս [ընկերն] է, քեզ էլ պիտի ընկեր լինի: [Բայց] եթե [նա] Արևիս թշնամին է, նա [քո թշնամին] պիտի լինի:

(A IV, §13) 1. **Եվ այն արքաները, որոնք ինձ հավասար են կարգավիճակով՝** 2. Միծրիի արքան է, Կուրանդունիաշի<sup>62</sup> (Բաբելոնիայի – Ռ.Ց.) արքան, 3. **Աշշուրի արքան** և Ախտիյավայի արքան<sup>63</sup>:

4. Եթե Միծրիի արքան Արևիս ընկերն է, 5. քեզ էլ պիտի ընկեր լինի, 6. բայց եթե նա Արևիս թշնամին է, 7. քեզ էլ պիտի թշնամի լինի: 8. Եվ եթե Կարանդունիաշի արքան 9. Արևիս ընկերն է, քեզ էլ նա 10. պիտի ընկեր լինի, և եթե նա Արևիս 11. թշնամին է, քեզ էլ պիտի թշնամի լինի»:

Համաձայնագրի հաջորդ հատվածից իսկ ակնհայտ է դառնում, որ Թուդխալիյաս IV-ն ակտիվորեն պատերազմի է պատրաստվում՝ կախյալ երկրներին նույնպես պատրաստության և միավորման կոչ անելով՝

«(A IV, §14:19-22) 19. Եվ քանզի ես՝ Արևս, ռազմական գործողություններ եմ սկսել Աշշուրի արքայի հետ, և քանի որ ես՝ Արևս, ինձ համար բանակ և մարտակառքերի ջոկատ 20. եմ ձևավորում (")՝ ճիշտ այնպես, ինչպես այդ (հարցը) հրապարակ է և ...Արևիս համար, թող այդ (հարցը) 21. նույնպես հրապարակ լինի և ...ձեզ համար: Խանդավառությամբ (") ձեզ համար բանակ և մարտակառքերի ջոկատ ձևավորեք: 22. Թող այս հարցը երդման փակ ներկայացվի ձեզ»:

<sup>61</sup> Beckman, Bryce, Cline 2011, N 2, §§12-15, Beckman 1996, N 17, §§ 11-13, Kühne, Otten 1971, 14-17: Հայերեն նույնպես մասնակի թարգմանության համար տե՛ս Քոսյան 2022, 198-199:

<sup>62</sup> Ըստ երևույթին, գրչի սխալ է կամ շփոթմունք Բաբելոնիայի «Ka-ra-an-du-ni-aš» անվան փոխարեն արձանագրվել է «Ku-ra-an-du-ni-aš», սակայն ընդամենը 6 տող անց՝ ճիշտ «Ka-ra-an-du-ni-aš» ձևը՝ Kühne, Otten 1971, 14 ծխք. 25:

<sup>63</sup> Մանրամասն տե՛ս Քոսյան 2022, 198-199, Yamada 2011, 200-201, Bryce 2005, 310:

Երկու երկրների միջև բախումն իրեն երկար սպասեցնել չտվեց: Պետք է նշել, որ Թուրքիայի IV-ը, այնուամենայնիվ, մի շարք միջոցառումներ է ձեռնարկել, որպեսզի կանխի Ասորեստանի առաջխաղացումը և փորձել է խուսափել ուղիղ ընդհարումից՝ **KUB 23.92, KUB 23.93, KUB 23.103, KUB 40.77**<sup>64</sup>: Սակայն, չնայած բոլոր այդ միջոցառումներին, չհաջողվեց կանխել ոչ միայն Ասորեստանի առաջխաղացումը, այլև բախումը: Վերջինիս մասին հայտնի է դարձել Շուլմանու-աշարեդ I-ի<sup>65</sup> Ուգարիտի արքա Ամմուրաբիին (ի դեպ, վերջինիս «*եղբայր՝ ahū'a*» անվանելով) առաքված նամակի **RS 34.165**<sup>66</sup> բովանդակությունից: **RS 34.165** տեքստից նույնպես ակնհայտ երևում է, որ ասորեստանյան և խեթական արքանների միջև հարաբերությունները նախապես թշնամական բնույթ չեն կրել, սակայն հետագայում նրանց միջև ծառայած աշխարհաքաղաքական խնդիրները կարգավորվում են Նիխրիայի ճակատամարտում, որտեղ խեթական արքան պարտություն է կրում: Փաստենք նաև, որ Նիխրիայի ճակատամարտի մասին որևէ ակնարկ չկա Ասորեստանի արքաների պաշտոնական տարեգրությունների մեջ: Ինչևէ, հետաքրքիր է նաև, որ ըստ **RS 34.165** նամակի բովանդակության՝ Ասորեստանի արքան Թուրքիայի IV-ին է մեղադրում՝

«12. Եվ *խաթթիի* Թուրքիայի արքան] *ինձ այսպես գրեց՝* 13-14. *ինչո՞ւ նվաճեցիր իմ հպատակին և վերցրեցիր (նրա հողը):* 15-16. *Այսպես. «Եկե՛ք, և մենք կկռվենք միմյանց դեմ (ճակատամարտում): Մի՞թե այդպես չէ: Ես եկել եմ քեզ մոտ մարտի [...]:* 17-18. *Եվ ես այս գրեցի նրան. «Ինչո՞ւ ես եկել: Ես եկա՞ քեզ մոտ»:* 19. *Եվ ես այդ օրը զորքերս ու մարտակառքերս 20. բարձրացրի Թայդու՞*<sup>67</sup> *առանց ժամանելու:* 21-23. *Եվ Թուրքիայիսը՝ Խաթթիի արքան, ինձ մոտ ուղարկեց երկրորդ սուրհանդակին, և նա բերեց թշնամության երկու նամակ և խաղաղության մեկ նամակ: Նա ինձ ցույց տվեց թշնամական երկու նամակ: 24-26. Երբ իմ զորքերը լսեցին թշնամանքի խոսքերը, նրանք փորձեցին գնալ (խեթերի դեմ) և սուրհանդակը տեսավ դա»:*

Սուրհանդակի հետ կապված դիպվածը բավական հետաքրքիր է: Խաթթի արքայի սուրհանդակը Աշշուրի արքային ցույց է տալիս միայն թշնամական բովանդակությամբ նամակները: Մի քանի օր անց Աշշուրի արքայի մոտ խաղաղության նամակով է ժամանում երրորդ սուրհանդակը: Նամակում Խաթթիի արքան նշում է. «*Ինչո՞ւ ենք մենք, եղբայր, թշնամա-*

<sup>64</sup> Hoffner 2009, N 105, Mora, Giorgieri 2004, N 17, Hagenbuchner 1989b, N 223.

<sup>65</sup> Ասորեստանի արքայի հարցը պատմագրության մեջ իր վերջնական լուծումը դեռևս չի ստացել. հնարավոր է, որ նամակի հեղինակը լիներ Թուրուպի-Նինուրտա I-ը: Այս վեցին տեսակետին մենք համամիտ չենք և գտնում ենք, որ Նիխրիայի ճակատամարտի ժամանակ Ասորեստանի արքան եղել է Շուլմանու-աշարեդ I-ը:

<sup>66</sup> Lackenbacher 1982, 141-156, Shibata D. 2017, 491-506, Bányai 2011, 207-237, Yamada 2011, 202-203, Freu 2007, 271-292, Galter 1988, 217-235, Harrak 1987, 185-188, 217-219, 244-245, 260-261.

<sup>67</sup> Harrak 1987, 319.

*ցած միմյանց նկատմամբ*»։ Ամեն դեպքում, նամակի համատեքստից երևում է, որ Նիխրիայի հետ կապված լուրջ մտահոգություններ ուներ Աշշուրի տիրակալը, որը հայտարարում էր, որ քաղաքը թշնամաբար է տրամադրված իր նկատմամբ՝ միաժամանակ հորդորելով խեթերին զորքերը հետ քաշել քաղաքից։ Մինչ այդ, խեթերի զորահրամանատար Զ/Ցիտին (՞) պաշարել ու գրավել էր քաղաքը։ Ինչևէ, ճակատամարտը դարձավ անխուսափելի, և խեթերը, պարտություն կրելով, ստիպված եղան նահանջել։

Ճիշտ է՝ Ասորեստանին հաջողվեց պարտության մատնել խեթերին, սակայն նա նույնպես չզարգացրեց իր հաջողությունը, ըստ երևույթին, բավարարվելով ձեռք բերածով։ Հնարավոր է նաև, որ Նիխրիայի միջադեպը խեթաստորեստանյան հարաբերություններում մի փոքրիկ դիպված լինի<sup>68</sup>։ Ամեն դեպքում, Նիխրիայից հետո Ասորեստանի և Խաթթի միջև կարծես թե լարվածությունը թուլանում է, իսկ երկու երկրների հարաբերությունները, ընդհուպ մինչև Խաթթիի անկումը<sup>69</sup>, կարելի է որակել որպես բարիդրացիական։

### **Թուկուլտի-Նինուրտա I (մ.թ.ա. 1242-1206 թթ.) և Թուդխալիյաս IV**

Ասորեստանի նոր արքայի գահակալության ժամանակահատվածում Խաթթիի ու Աշշուրի միջև լուրջ միջադեպեր չգրանցվեցին<sup>70</sup>։ Երկու երկրների հարաբերությունը դիտարկվում է որպես բարեկամական։ Դրա խոսուն վկայությունը կարող է լինել Թուկուլտի-Նինուրտա I-ի **KUB 3.73** նամակը Թուդխալիյաս IV-ին, որտեղ Ասորեստանի արքան գրում է՝ «10. ... a-bu-ia EN KUR-ka šu-ut 11. [x x x x (x)] a-na-ku EN su-lum-mae ša ŠEŠ-ia – 10-11. *Հայրս՝ քո թշնամին էր։ Ես [և ...բայց] ես եղբորս ընկերն եմ*»<sup>71</sup>։ Այս ժամանակահատվածի, արքայական դիվանագիտական գրագրություններից քիչ բան է հայտնի, սակայն գոյություն ունեն երկու կարևոր նամակներ, որոնք էլ փաստացի բնութագրում են երկու երկրների միջև հարաբերությունները։ Այդ նամակներն են՝ **KUB 23.92** և **KUB 23.103**<sup>72</sup>։ **KUB 23.92**-ը Խաթթիի արքա Թուդխալիյաս IV-ի պատասխանն է Ասորեստանի բարձրաստիճան Բաբա-ախու-իդդինային<sup>73</sup>։ Նամակի բովանդակությունը հետևյալն է՝ մ.թ.ա. մոտ 1242/1241 թ. Բաբա-ախու-իդդինայի հետ միասին Թուդխալիյաս IV-ի արքունիք են ժամանում նաև Ասորեստանի երկու դեսպանները՝ Ծ/Ցիլի-Աշշուրը և Ամուրու-Չարեդը։ Նրանք Խաթթիի արքային հայտնում են նախորդ արքայի մահվան և վերջինիս որդու և իրավահաջորդի՝ Թուկուլտի-Նինուր-

<sup>68</sup> Քոսյան 2022, 194։

<sup>69</sup> Մանրամասն տե՛ս Քոսյան 2022, 204-213, Bryce 2005, 327-371։

<sup>70</sup> Մանրամասն տե՛ս Ցակայան 2024, 9-15, Yamada 2011, 213-217։

<sup>71</sup> Mora, Giorgieri 2004, N 11, Hagenbuchner 1989b, N 202, Yamada 2011, 209, Harrak 1987, 144.

<sup>72</sup> Giorgieri 2011, 189, Hoffner 2009, N 105, Mora, Giorgieri 2004, N 17, Beckman 1996, N 24C, Hagenbuchner 1989b, N 191, Harrak 1987, 147-48, 214.

<sup>73</sup> Վերջինս բարձր դիրք է զբաղեցրել նաև Շուլմանու-աշարեդ I-ի արքունիքում և առաջին անգամ հիշատակվում է նրա կառավարման 14-րդ տարում՝ Bloch 2012, 58-61, 406-407։

տա I-ի գահ բարձրանալու մասին: Նրանք տեղեկացնում են նաև, որ երիտասարդ արքան կամենում է սխրանքներով փառաբանել իր անունը և պատրաստ է պատերազմելու ամեն մեկի դեմ: Թուդխալիյաս IV-ը հավանություն է տալիս երիտասարդ արքայի՝ կարողությունները դրսևորելու ցանկությանը: **KUB 23.103**-ի համաձայն, Թուդխալիյաս IV-ը, ըստ երևույթին, փորձելով շեղել երիտասարդ արքայի ուշադրությունը մերձեփրատյան գոտուց՝ Թուկուլտի-Նինուրտա I-ին առաջարկում է ռազմարշավի համար ընտրել այնպիսի մի տարածաշրջան, որտեղ ասորեստանցիները 3-4 անգամ կգերազանցեն հակառակորդին, և երիտասարդ արքան կարող է առավելագույնս դրսևորել իրեն<sup>74</sup>: Այսպիսով, Թուդխալիյաս IV-ը փաստացի կարողացավ խուսափել երիտասարդ, հավակնոտ արքայի հետ առճակատումից: Սակայն, ըստ երևույթին, Թուկուլտի-Նինուրտա I-ի կառավարման կեսերին, ամենայն հավանականությամբ, դեպի Բաբելոնիա կատարած արշավանքների ժամանակ<sup>75</sup> Խաթթիի ու Ասորեստանի միջև սահմանային ընդհարում տեղի ունեցավ Եփրատ գետի միջին հոսանքի շրջանում: Մ. Յամադայի բնութագրմամբ, այն իրականում տեղական փոքրիկ միջադեպ էր Ասորեստանի և Խաթթիի քույր-թագավորությունների միջև՝ համապատասխանաբար Խանիգալբատի կառավարիչ Աշշուր-իդդինի և Կարքեմիշի կառավարիչ Տալմի-Թեշուբի միջև: Հակամարտություն հրահրող կողմը Աշշուր-իդդին է եղել, որը հարձակվել էր խեթահպատակ տարածքների վրա և մի շարք քաղաքներ գրավել: Սակայն խնդիրը շատ արագ հանգուցալուծվեց կայսերական մակարդակում: Բանակցությունների շնորհիվ Աշշուր-իդդինի կողմից նվաճված քաղաքները վերադարձվեցին, իսկ երկու երկրների միջև հարաբերությունները կրկին ամրապնդվեցին<sup>76</sup>:

Փաստորեն, Ասորեստանի ընդարձակումը դեպի արևմուտք շարունակվում էր, բայց ոչ բուն Ասորեստանի կողմից, որը տվյալ ժամանակահատվածում զբաղված էր Բաբելոնիայի հպատակեցման խնդիրներով, այլ, ինչպես իրավացիորեն նկատում է Մ. Յամադան, իր արբանյակ Խանիգալբատի միջոցով<sup>77</sup>:

Թուդխալիյաս IV-ի և Թուկուլտի-Նինուրտա I-ի հաջորդների օրոք երկու երկրների բարիդրացիական հարաբերությունները պահպանվեցին: Հայտնի է Խաթթիի վերջին տիրակալ Սուպալիլուլիումաս II-ի և Թուկուլտի-Նինուրտա I-ի միջև նամակագրական կապի մասին՝ KUB 57.8, KBo 18.25 (+) 31.69, KUB 23.109(+), KUB 26.70, KBo 12.39, KBo 4.14, KBo 28.61-64: Այդ մասին վկայում են նաև Թուկուլտի-Նինուրտա I-ի հաջորդ Աշշուր-նադին-ապիլի

<sup>74</sup> Թուկուլտի-Նինուրտա I-ի կառավարման առաջին երեք տարիների ռազմարշավների վերաբերյալ մանրամասն տե՛ս Tsakanyan 2023, 5-9, Ցականյան 2023b, 60-63, Harrak 1987, 350:

<sup>75</sup> Ցականյան 2021, 308-323:

<sup>76</sup> Yamada 2011, 217.

<sup>77</sup> Yamada 2011, 217.



(մ.թ.ա. 1205-1202 թթ.)՝ KUB 57.8 և Աշշուր-նիրարի III-ի (մ.թ.ա. 1201-1196 թթ.) միջև եղած՝ KBo 18.25 (+) 31.69, KUB 26.70 նամակները<sup>78</sup>:

### **Եզրակացություններ**

Մ.թ.ա. XIV դ. երկրորդ կեսից կրկին վերելք ապրող Աշշուրի պետությունը սկսում է մեծ ակտիվություն ցուցաբերել տարածաշրջանում: Իսկ նրա տիրակալները հայտ են ներկայացնում Մերձավոր Արևելքում գերիշխող տերություն և տարածաշրջանային «արքայական եղբայրների ակումբի» անդամներ դառնալու: Այս խնդիրը բաղկացած էր երկու կարևոր բաղադրիչներից՝ տնտեսական ու քաղաքական: Իրենց նպատակները իրականացնելու համար անհրաժեշտ էր հյուսիսից արևմուտք ձգվող «կիսալուսինը ճեղքել», որը թույլ կտար ճանապարհի հարթել դեպի հյուսիսի մետաղների աղբյուրները և արևմուտքի առևտրական ուղիներն ու կենտրոնները: Այս ճանապարհին Ասորեստանի արքաները անխուսափելիորեն բախվում էին Խաթթի շահերին: Երկու երկրների շահերի բախման թատերաբեմը դարձավ Միտտանին: Երբ Ասորեստանը այն գրավեց, կարծես թե հանգուցալուծվեցին երկու երկրների միջև եղած թշնամական հարաբերությունները:

### **Օգտագործված գրականություն**

- Ավետիսյան Հ.Մ. 2002, Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի պետական կազմավորումների քաղաքական պատմությունը մ.թ.ա. XVII-IX դդ., Երևան, ԳԱԱ ՊԻ հրատ., 212 էջ:
- Ցականյան Ռ. 2018, Միջինասորեստանյան տերության արտաքին և ներքին քաղաքականության որոշ հարցերի շուրջ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, N XXXI, էջ 19-33:
- Ցականյան Ռ. 2021, Թուկուլտի-Նինուրտա I-ի պատերազմը Բաբելոնիայի դեմ, Գիտական տեղեկագիր, Վանաձորի պետական համալսարան, պրակ Բ, էջ 308-323:
- Ցականյան Ռ. 2022, Ասորեստանի պատմության ժամանակագրական խնդիրները (գերերկար, երկար, միջին, կարճ և գերկարճ թվագրումներ), Արևելագիտության հարցեր, N XXI, էջ 239-247:
- Ցականյան Ռ. 2023a, Աշշուրի պետությունը մ.թ.ա. III հազարամյակի սկզբներից մինչև մ.թ.ա. XV դարի վերջերը, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, N 2 (26), էջ 5-22:
- Ցականյան Ռ. 2023b, Ասորեստանի արքա Թուկուլտի-Նինուրտա I-ի (մ.թ.ա. 1242-1206 թթ.) Նաիրյան արշավանքը, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, էջ 57-75:
- Ցականյան Ռ. 2024, Դրվագ՝ Ասորեստանա-խեթական միջպետական հարաբերությունների պատմությունից, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, N 1 (27), էջ 5-17:
- Քոսյան Ա. 1999, Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, «Ձանգակ-97», 264 էջ:

<sup>78</sup> Giorgieri 2011, 189.

- Քոսյան Ա. 2013, Խեթական պետությունը, Հայաստանի հարակից երկրների պատմություն, հ. 1, խմբ. Ա.Վ. Քոսյան, Երևան, էջ 174-200:
- Քոսյան Ա. 2022, Խեթական թագավորություն (քաղաքական պատմություն), ՀՀ ԳԱԱ ԱԻ, Երևան, «Քուփի Փրինթ», 252 էջ:
- Аветисян Г.М. 1984, Государство Митанни (военно-политическая история в XVII-XIII вв. до н.э.), Ереван, изд. НАН РА, 130 с.
- Alexandrov B. 2014, The letters from Hanigalbat in the Boğazköy archives. In Taracha, P. (ed.), Proceedings of the eighth international congress of Hittology, Warsaw: Agade, p. 52-76.
- Bányai M. 2011, Die Niḫriya-Schlacht. Vorher und danach, *Anatolica* N 37, p. 207-237.
- Beckman G. 1996, Hittite Diplomatic Texts, Writings from the Ancient World N 7, Atlanta: Society of Biblical Literature, XX+206 p.
- Beckman G.M., Bryce T.R., Cline E.H. 2011, The Ahhiyawa Texts, Writings from the Ancient World N 28, Atlanta: Society of Biblical Literature, XIV+302 p.
- Bloch Y. 2008, The Order of Eponyms in the Reign of Shalmaneser I, *Ugarit-Forschungen* N 40, p. 143-178.
- Bloch Y. 2012, Studies in Middle Assyrian Chronology and Its implications for the History of the Ancient Near East in the 13th Century B.C.E., Ph.D. diss., The Hebrew University of Jerusalem, Jerusalem, 485 p.
- Bryce T.R. 2003, Letters of the Great Kings of the Ancient Near East. The Royal Correspondence of the Late Bronze Age. New York: Routledge, 272 p.
- Bryce T.R. 2005, The Kingdom of the Hittites, Oxford University Press Inc., New York, 584 p.
- Cancik-Kirschbaum E.C. 2008, Die Assyrer: Geschichte, Gesellschaft, Kultur, München, 128 p.
- Dassow von E. 2022, Mittani and Its Empire, *The Oxford History of the Ancient Near East*, Editors: Radner K., Moeller N. and Potts D.T., Vol. 3, From the Hyksos to the Late Second Millennium BC. Oxford, p. 455-528.
- Frahm E. 2023, Assyria: The Rise and Fall of the World's First Empire, Basic Books, New York, 528 p.
- Freu J. 2003, De la confrontation à l'entente cordiale: Les relations assyro-hittites à la fin de l'âge du Bronze (ca. 1250-1180 av. J.C.), *Hittite Studies in Honor of Harry A. Hoffner Jr. on the Occasion of His 65th Birthday*, Edited by G. Beckman R. Beal and G. McMahon, EISENBRAUNS, Winona Lake, Indiana, p. 101-118.
- Freu J. 2007, La bataille de Niḫriya, RS 34.165, KBo 4.14 et la correspondance assyro-hittite, in *Tabularia Hethaeorum: Hethitologische Beiträge Silvin Košak zum 65. Geburtstag*. Edited by D. Groddek and M. Zorman, DBH 25, Wiesbaden: Harrassowitz, p. 271-292.
- Galter H.D. 1988, 28.800 Hethiter, *Journal of Cuneiform Studies*, N 40(2), p. 217-235.
- Giorgieri M. 2011, Das Verhältnis Assyriens Zum Hethiterreich, in *Assur – Gott, Stadt und Land: 5. Internationales Colloquium der Deutschen Orient-Gesellschaft*, 18. – 21. Februar 2004 in Berlin. Im Auftrag des Vorstands der Deutschen Orient-Gesellschaft herausgegeben von Johannes Renger, Harrassowitz Verlag, Wiesbaden, p. 169-190.
- Glassner J.-J. 2004, Mesopotamian Chronicles, Writings from the Ancient World N 19, Atlanta: Society of Biblical Literature, XX+365 p.
- Grayson A. 1987, The Assyrian Rulers of the Third and Second Millennium BC (to 1115 BC), *The Royal Inscriptions of Mesopotamia Assyrian Periods*, Vol. I, Toronto-Buffalo-London, XXII-355 p.

- Hagenbuchner A. 1989a, Die Korrespondenz der Hethiter, 1. Teil, Texte der Hethiter N 15, Heidelberg: Carl Winter, XXIX+175 p.
- Hagenbuchner A. 1989b, Die Korrespondenz der Hethiter, 2. Teil, Texte der Hethiter N 16, Heidelberg: Carl Winter, XIV+483 p.
- Harrak A. 1987, Assyria and Hanigalbat: A Historical Reconstruction of Bilateral Relations from the Middle of the Fourteenth to the End of the Twelfth Centuries B.C. Texte und Studien zur Orientalistik, Band 4, Georg Olms Verlag, Hildesheim-Zürich-New York, XVIII-315 p., maps.
- Hoffner H.A. Jr. 2009, Letters from the Hittite Kingdom, Writings from the Ancient World, N 15, Atlanta: Society of Biblical Literature, XVII+450 p.
- Kertai D. 2008-2009, The History of Middle-Assyrian Empire, TALANTA, XL-XLI, p. 25-51.
- Koliński R. 2015, Making Mittani Assyrian, Understanding Hegemonic Practices of the Early Assyrian Empire, Essays dedicated to Frans Wiggermann, B.S. During (ed.), Leiden, p. 9-32.
- Kuhrt A. 1995, The Ancient Near East c. 3000-330 BC, Vol. I, London-New York, XXVIII+381 p.
- Kühne C., Otten H. 1971, Der Šaušgamuwa-Vertrag: (eine Untersuchung Sprache und Grp-hik), Studien zu den boğazköy-texten. Heft 16 Otto Harrassowitz Verlag, Wiesbaden, IX+80 p.
- Lackenbacher S. 1982, Nouveaux documents d'Ugarit. I, Une lettre royale, Revue d'Assyriologie et d'archéologie orientale, N 76, p. 141-156.
- Liverani M. 2013, The Ancient Near East: History, Society and Economy, Routledge, 648 p.
- Llop J. 2012, Middle Assyrian Letters: a New Survey, Aula Orientalis, N 30, p. 289-306.
- Machinist P. 1987, Assyrians and Hittites in the Late Bronze Age, in: Mesopotamien und seine Nachbarn. Politische und kulturelle Wechselbeziehungen im Alten Vorderasien vom 4. bis 1. Jahrtausend v. Chr., XXV. Rencontre Assyriologique internationale Berlin, 3. Bis 7. Juli 1978, Nissen H.J., Renger J. (Hrsg.): Berliner Beiträge zum Vorderen Orient, Band 1, Teil 1, Dietrich Reimer Verlag, Berlin, p. 265-267.
- Maidman M. P. 2011, Nuzi, the Club of the Great Powers, and the Chronology of the Fourteenth Century, KASKAL 8, p. 77-139.
- Mora C., Giorgieri M. 2004, Le Lettere tra i re ittiti e i re assiri ritrovate a Hattuša, History of the Ancient Near East/Monographs, N VII, Padova: S.A.R.G.O.N. Editrice e Libreria, XII+270 p.
- Moran W. L. 1992, The Amarna Letters, The Johns Hopkins University Press: Baltimore-London, XLVII+393 p.
- Na'aman N. 1995, Tushratta's Murder in Shuppiluliuma's Letter to Akhenaten (EA43), AbNahrain, N 33, p. 116-118.
- Reculeau H. 2022, Assyria in the Late Bronze Age, The Oxford History of the Ancient Near East, Editors: Radner K., Moeller N. and Potts D.T., Vol. 3, From the Hyksos to the Late Second Millennium BC, Oxford, Oxford University Press, p. 707-800.
- Shibata D. 2017, An Expedition of King Shalmaneser I and Prince Tukult-Ninurta to Carchemish, in: Y. Heffron, M. Worthington and A. Stone (eds.), At the Dawn of History: Ancient Near Eastern Studies in Honour of J.N. Postgate, Eisenbrauns, p. 491-506.
- Singer I. 2008, A Hittite-Assyrian diplomatic exchange in the Late 13<sup>th</sup> Century BCE, SMEA 50/2, VI Congresso Internazionale di Ittitologia: Roma, 5-9 settembre 2005, a cura di A. Archi e R. Franchia, p. 713-720.

- Tsakanyan R. 2023, The Nairian Campaign of Tukulti-Ninurta I (1242-1206 BC) in the Context of the Conquests in the First Three Years of his Reign, *Journal of Ancient History and Archaeology*, N 10/1, p. 5-9.
- Weeden M. 2022, The Hittite Empire, *The Oxford History of the Ancient Near East*, Editors: Radner K., Moeller N. and Potts D.T., Vol. 3, From the Hyksos to the Late Second Millennium BC, Oxford, Oxford University Press, p. 529-622.
- Weidner E.F. 1923, Politische Dokumente aus Kleinasien. Die Staatsverträge in akkadischer Sprache aus dem Archiv von Boghazkoi. *Boghazkoi-Studien*. H. 8. 9, Leipzig, J.C. Hinrichs, 152 p.
- Yamada M. 2011, The second military conflict between 'Assyria' and 'Ḫatti' in the reign of Tukulti-Ninurta I, *Revue d'assyriologie et d'archéologie orientale*, N 1, Vol. 105, p. 199-220.

## ПОЛИТИЧЕСКИЕ И ДИПЛОМАТИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ МЕЖДУ АШШУРОМ И ХАТТИ В XIV-XIII ВЕКАХ ДО Н.Э.

Руслан Цаканян

Резюме

Со второй половины XIV века до н.э. вновь набиравшие силу правители Ассирии стали выступать по принципу «*поиска места под Солнцем*». Амбициозные цари растущей с каждым днем страны стремились стать субъектом ближневосточной международной политики и присоединиться к так называемому «*клубу королевских братьев*», в состав которого входили такие страны как Египет, Вавилония и Хеттское царство. На этом этапе между Египтом и Ассирией не было конфликта интересов. В Вавилонском направлении проблема стала вечной, а урегулирование отношений с Хатти стало насущным вопросом. Помимо всех других векторов большое значение для решения проблем, стоявших перед Ассирией, имело западное направление.

Фактически, экспансия Ассирии на запад включала два основных компонента:

1. экономический – контроль над экономическими источниками сырья и торговыми путями запада;
2. политический – статус сверхдержавы. Именно на пути к реализации этих двух составляющих компонентов пересеклись интересы Ассирии и Хеттского царства.

**Ключевые слова** – Митанни, Египет, внешняя политика, военная кампания, дипломатические отношения, экономические интересы, политические интересы.

---

**POLITICAL AND DIPLOMATIC RELATIONS BETWEEN AŠŠUR AND HATTI IN THE XIV-XIII CENTURIES B.C.**

Ruslan Tsakanyan

## Abstract

From the 2nd half of the 14th century BC. the rulers of Assyria again gained strength based on the principle of "*searching for a place under the Sun*". The ambitious kings of the day-by-day growing country sought to become a Near-Eastern international subject and join the so-called "*Club of Royal Brothers*", which included Egypt, Babylonia and the Hittite kingdom. At this stage, there was no conflict of interest between Egypt and Assyria. In the Babylonian direction, the problem became eternal, and the settlement of relations with Hatti became the order of the day. In addition to all directions, the western direction was of great importance for solving the problems facing Assyria.

In fact, Assyria's westward expansion had two main components:

1. economical: control of economic raw material sources and trade routes to the west, and
2. political: holding superpower status.

It was on the way to the realization of these two components that the interests of Assyria and the Hittite kingdom intersected.

**Key words** – Mittani, Egypt, foreign policy, military campaign, diplomatic relations, economic interests, political interests.

# THE PALESTINIAN POLICY OF QATAR (1995-2013)

**Knarik Sargsyan**

Institute of Oriental Studies, NAS RA  
Marshal Baghramyan 24/4, Yerevan, RA  
Email: Kn.sargsyan.yasu@gmail.com  
ORCID: 0009-0006-3567-279X

The article has been delivered on 15.03.2024, reviewed on 02.08.2024, accepted for publication on 02.08.2024  
DOI: 10.53548/0320-8117-2024.2-182

## **Abstract**

In recent periods, Qatar has become one of the key players in the Israel-Palestine, particularly the Israel-Hamas conflict. Doha has made significant efforts to peacefully resolve the Palestinian issue and support the creation of the Islamist project of an independent Palestinian State. This includes mediation missions between Israel and Hamas, Israel and Palestine, intra-Palestinian consolidation, financial and humanitarian aid, and other related matters.

During the rule of Sheikh Hamad Al Thani (1995-2013), Qatar sought to establish itself as an influential player on the world stage, particularly in the Middle East. Sheikh Hamad Al Thani has played a crucial role in shaping Qatar's foreign policy, particularly in mediation missions and conflict resolution. Qatar's Palestinian policy balanced both efforts to support the Palestinian people and establish ties as well as peaceful coexistence with Israel. Qatar managed to create a platform for dialogue between Hamas and Fatah. The "Doha Declaration", signed in 2012, became one of the important achievements of the Hamas-Fatah reconciliation process in those years.

**Key words** – Qatar, Palestine, Hamas, Fatah, Israel, conflict, mediation.

## **Introduction**

Qatar, which has become a key player in Israel-Palestine relations, has made significant efforts to peacefully resolve the Palestinian issue and support the Islamist project of an independent Palestinian State. This includes mediation missions, intra-Palestinian consolidation, financial and humanitarian aid, and other related matters.

The research aims to introduce the concept and tools of Qatar's foreign policy towards the peaceful settlement of the Palestinian issue, including the mediation mission. The research goals include identifying the main motivations and tendencies of Qatari policy in the Palestinian issue during 1995-2013 years, and disclosure of the ways by which the soft power resources of Qatar turn into possible results. The goal of the article is to reveal how Doha managed to become one of the most active mediators in the Palestinian conflict and how successful Qatar's mediation mission was in the abovementioned years.

Joseph Nye defines *soft power* as "the ability to affect others to obtain the outcomes you want". According to him "one can affect other's behavior in three

main ways: threats of coercion (sticks), inducements and payments ('carrots'), and attraction that makes others want what you want"<sup>1</sup>. Nye highlights that soft power relies on three primary resources: cultural – places where it is attractive; political values – when the promoter adheres to them at home and abroad; and foreign policies – regarded as legitimate and having moral authority<sup>2</sup>. Qatar's mediation policy has effectively worked as a soft power tool, raising Qatar's international profile and creating a brand for the country. The Qatari policy towards the Palestinian case and its mediation efforts can also be explained in this regard.

The methodology of the research is based on content and discourse analysis. The research contributions of M. Kamrava, S. Barakat, J. Dorsey, L. Eddin, M. Rabbani, M. Yaari and other esteemed authors have been pivotal in studying the role of Qatar's mediation in the Palestinian conflict during Sheikh Hamad Al Thani's reign.

The first chapter provides a comprehensive historical overview of the development of Qatari-Palestinian relations, outlining the beginning of Qatar's involvement in the Palestinian-Israeli conflict. The second chapter of the article shows the Qatari mediation mission towards the Palestinian conflict during 1995-2009, including the efforts for intra-Palestinian reconciliation. The final chapter discusses Qatar's policy towards the Palestinian cause at the sunset of Sheikh Hamad Al Thani's rule.

The research concludes that Qatar has played a significant role in mediating and supporting efforts for the peaceful resolution of the Israeli-Palestinian conflict and in advocating for the creation of an independent Palestinian state. However, Qatar's humanitarian initiatives were more successful during this period than political ones.

### **Historical Overview**

The relationship between Palestine and the Gulf states was initially founded on the bond among the people of those countries, which later became a solid foundation for the collaboration between governmental authorities and leaders. The formation of Israel in 1948 led to the refugee problem among Palestinians. It also directly and indirectly caused upheavals in the Arab world<sup>3</sup>. After the occupation of Palestinian territories, Qatar provided shelter to the Palestinian refugees who actively who actively participated in the country's development process<sup>4</sup>.

In the 1960s, the sentiments of the pan-Arab awakening swept Qatar. It was a time of urgency, as different circles of Qatari society demanded immediate

---

<sup>1</sup> Nye 2008, 94.

<sup>2</sup> Nye 2008, 96.

<sup>3</sup> Zahlan 2009, 1.

<sup>4</sup> Eddin 2021, 7.

protection from the country's authorities. The national liberation movement was gaining momentum in the Arab East, and the movements in support of Palestine needed swift action. Qatar could not remain apart from these political processes in the Arab world<sup>5</sup>.

In 1965, diplomatic relations were established between Qatar and Palestine with the opening of one of the Palestinian Liberation Organization's (PLO) first representative office in Doha. However, the PLO was officially recognized as the sole representative of the Palestinian people by Qatar in 1995<sup>6</sup>.

The Arab-Israeli conflict escalated sharply after the June 1967 war. The Palestinian issue became the central focus of the Arab world. Following the Six-Day War, on June 20, Qatar announced an embargo on oil exports to Great Britain and the United States and refused to load tankers with the flags of those two countries. This embargo joined one declared before by several Arab countries and continued until September of the same year.

A new phase of the politics of the Gulf states towards the Palestinian issue began in the early 1970s when, not long after the Gulf states independence in October 1973, the fourth Arab-Israeli war began<sup>7</sup>. The Fourth Arab-Israeli War was pivotal for the Middle East region and the Arab world, ushering in transformation. During the war, the unity of the Arab world was demonstrated, of which Qatar was also a part. Besides political and moral support, Doha provided large amounts of financial aid to Egypt and Syria. In 1973, Arab countries used oil as a political weapon during the Arab-Israeli war. Qatar also participated in the five-month suspension of oil deliveries by several Arab countries<sup>8</sup>.

On 15 November 1988, the Palestine Liberation Organization (PLO) declared the formation of the State of Palestine, affirming its authority over the West Bank, including East Jerusalem and the Gaza Strip<sup>9</sup>. On the next day, Qatar became one of the first countries which recognized the State of Palestine, with Jerusalem as its capital and with the territories that existed before the 1967 war<sup>10</sup>.

Following the Gulf War of 1991, the Madrid Peace Conference took place in November 1991 under the auspices of Security Council Resolutions. This marked the first attendance of Gulf delegates from GCC countries, notably Qatar. In September 1993, bilateral and multilateral negotiations resulted in the signing of the Oslo I Accord between the PLO and Israel. As per the Oslo Accord, Israel

---

<sup>5</sup> Hovhannisyan 2006, 764.

<sup>6</sup> D'Acunto 2016, 54.

<sup>7</sup> Zahlan 2009, 47-50.

<sup>8</sup> Karapetyan 2019, 372.

<sup>9</sup> Institute for Palestine Studies. Palestinian Declaration of Independence, 1988. Interactive Encyclopedia of the Palestine Question.

<sup>10</sup> D'Acunto 2016, 54.



and the PLO have formally recognized each other for the first time, resulting in the power shift over the central Palestinian territories in the West Bank and the Gaza Strip to the Palestinian National Authority (PNA)<sup>11</sup>. Hamas strongly rejected the Accords and the mutual recognition of the PLO and Israel. According to Hamas, these agreements are considered a betrayal of Islam, as they involve the potential displacement of Palestinians from their homeland and the legitimization of Israel's existence, a matter of grave concern. Hamas argued that the Oslo Accords resulted from the PLO moving away from its Islamic roots and the National Charter agreeing to the limited self-rule<sup>12</sup>.

Following the 1993 Oslo Accord, a series of significant developments unfolded. The Qatari media, which had been critical of Israel in the past, adopted a more moderate stance. Additionally, Israeli and Qatari officials convened a number of meetings to explore opportunities for economic collaboration. Qatar's active participation in the multilateral issues initiated after the Madrid conference showed that the Qatari leadership sought to meet with Israeli representatives. This period also marked the beginning of rapprochement, primarily focusing on Qatari gas and establishing new trade relations with Israel<sup>13</sup>. This shift in Qatar's approach towards Israel post the Oslo Accord signified the complexity of regional dynamics and the pursuit of economic cooperation alongside diplomatic efforts.

As shown, Qatar was involved in the Arab-Israeli conflict even before independence. After achieving independence, it supported the Palestinian people with concrete steps and advocated for their liberation. Qatar also established ties with the Israeli side, which was an important achievement for a newly independent Arab state.

### **Palestinian Conflict and Qatari policy from 1995 to 2009**

On June 27, 1995, Sheikh Hamad Al Thani became the Emir of Qatar after a bloodless palace coup. This event marked the beginning of a transformative period in Qatar's political landscape, characterized by reshaping Qatar's policy's main principles and direction<sup>14</sup>.

In September 1995, the Oslo II Accord was signed between the PLO and Israel. Sheikh Hamad attended the signing ceremony, demonstrating his willingness to be involved in the settlement process between Israel and Palestine. This step also marked the de facto recognition of Israel's existence and the beginning of commercial ties with Israel. The same year, Doha accommodated the Israeli trade office, making Qatar the only Gulf state to allow a permanent Israeli pre-

---

<sup>11</sup> Eddin 2021, 8-9.

<sup>12</sup> Ali 2020, 3381.

<sup>13</sup> Yaari 2020, 4.

<sup>14</sup> Cooper and Momani 2011, 117.

sence. Despite the office offering embassy services, it was not authorized to have a flag or a sign at its entrance. This significant move was followed by an official visit from Prime Minister Shimon Perez the following year<sup>15</sup>. However, the anticipated rapprochement between Qatar and Israel, which was expected to follow the establishment of the trade office in Doha, did not materialize as expected, because of the further escalation of the Arab-Israeli conflict.

The Oslo II Accord delineated the West Bank into three distinct areas: A, B, and C. In Areas A and B, the PNA assumed governance over most civil matters, including education, health, and the economy, while security remained under Israeli control. Area C was intended to fall under the jurisdiction of the PNA; however, Israel has maintained authority over this region<sup>16, 17</sup>.

In 1996, "Al Jazeera" was launched in Qatar under the patronage of Sheikh Hamad. Through "Al Jazeera", Qatar began to act as "the voice of the Arab streets". Gathering under its roof figures with religiopolitical and radical views from the Arab Islamic world, Qatar gained a powerful lever of ideological influence in the Middle East and North Africa<sup>18</sup>. The Qatari Permanent Committee for Al Quds Support (QPCSA) was established in 1998 to discuss issues related to Jerusalem, which demonstrated Qatar's stance on Palestine<sup>19</sup>.

In 1999, King Abdullah of Jordan expelled Hamas's leadership from the country and closed its offices. He accused the group of interfering in Jordan's fragile relations with its Palestinian population. Doha granted temporary asylum to the exiled leadership of Hamas after their expulsion from Jordan on the condition of avoiding direct political activities<sup>20</sup>.

Sheikh Hamad's first visit to Palestine occurred after the establishment of the PNA in 1999 when he met Yasser Arafat in Gaza<sup>21</sup>. This historic visit was the beginning of Qatar's mediation mission to consolidate the Palestinian factions.

Meanwhile, Israel continued building settlements, Judaizing Jerusalem, and maintaining aggressive policy toward Palestinians. In response, Palestinians carried out bombings and attacks. The second Palestinian uprising, also known as the Al-Aqsa Intifada, started on September 28, 2000, after Israeli Prime Minister Ariel Sharon's visit to the Al-Aqsa Mosque in Jerusalem<sup>22</sup>. As a result of the

---

<sup>15</sup> Yaari 2020, 4-5.

<sup>16</sup> Al Jazeera. "What are areas A, B, and C of the occupied West Bank?"

<sup>16</sup> The Oslo Accords fell ap.

<sup>17</sup> The Oslo Accords fell apart following the second Palestinian intifada in September 2000.

<sup>18</sup> Dorsey 2013, 12.

<sup>19</sup> D'Acunto 2016, 54.

<sup>20</sup> Fromherz 2012, 104.

<sup>21</sup> Eddin Zweiri & Rahma 2021, 16.

<sup>22</sup> Eddin, 2021, 134.

outbreak of the Second Intifada, Doha made the decision to close the Israeli trade office in Doha<sup>23</sup>.

Հարցն այն է, թե հետազոտողն ինչ չափով է հիմնավոր և ճիշտ, ինչպես գտնում էր Մ. Բլոկը՝ «տալ այն հարցերը»<sup>22</sup>, որոնք թույլ են տալիս հաղթահարել փոխանցվող վկայությունների սուբյեկտիվությունը և օբյեկտիվացնել դրանք, տրամաբանորեն դասավորել նկարագրված փաստերը տարածա-ժամանակային անընդհատության մեջ, համեմատել դրանք այլ փաստերի հետ, հետևաբար՝ ստեղծել յուրաքանչյուր պատմության համակարգային իմաստավորման նախադրյալները և դրա հիման վրա վերակազմել իրադարձությունների իրական ընթացքը: Վերոշարադրյալ փաստարկները՝ բանավոր պատմության մեթոդի միջոցով ստացված բովանդակության որակի օգտին, և այդ աղբյուրին դիմելը կարող են նպաստել տեղեկատվական բացակների լրացմանը նոր սյուժեներով՝ խորություն հաղորդելով հասարակության զարգացման տարբեր փուլերի պատկերներին:

### **Եզրակացություններ**

Համադրական լոնգիթյուդ սոցիոլոգիական հետազոտությունների նյութերի ներգրավումը, որտեղ արձանագրվել են տարբեր սերունդների ներկայացուցիչների կյանքի նկարագրերը, հնարավորություն տվեցին նորովի գնահատելու և հետագայում համակարգային օգտագործելու դրանց վերլուծական ռեսուրսը՝ առկա վիճակագրական, արխիվների, գրական և գիտական աշխատությունների տվյալների հետ ամբողջության մեջ: «Սոցիալական հիշողության» այդպիսի ներուժը, որն ի հավելումն ունի վիճակագրական արժանահավատություն և բովանդակության բարձր որակ, մեծացնում է անցյալի իրադարձությունների վերակազմման հնարավորությունը: Մասնա-

<sup>20</sup> Каранетян 1966, 43-44.

<sup>21</sup> Հենց անցած դարակզբին իրադարձությունների վկաների հիշողությունները (Եղեռնից փրկվածների բանավոր պատմությունները) հնարավորություն տվեցին Վ. Սվազյանին իր հիմնարար աշխատության մեջ վերականգնել Օսմանյան Թուրքիայում 1915-1923 թթ. հայերի ցեղասպանության պատկերը: Հմմտ. Սվազյան 2011:

<sup>22</sup> Блок 1973, 39.

վորապես, սոցիոլոգիական հետազոտությունների նյութերի օգնությամբ մենք դիտարկել ենք տարբեր ժամանակահատվածներում տարբեր միջավայրերից ներգաղթած հայերի՝ Հայաստանի քաղաքներում ողջ XX դարի ընթացքում տեղի ունեցած էթնոսոցիալ գործընթացներում մասնակցության բնույթը: Ենթադրվում է, որ քաղաքային բնակչության ձևավորման գործում այդ միգրացիոն հոսքերի յուրաքանչյուր հատվածի դերի բացահայտումը հնարավորություն կտա ստանալու երևույթների դինամիկ պատկերի ուրվագիծը իր վիճակագրական արժանահավատությամբ, այդպիսով՝ գնահատելու իրավիճակը և վերակազմելու Հայաստանի պատմական իրադարձությունների համապատկերը:

### **Օգտագործված գրականություն**

- Սվազյան Վ. 2021, Հայոց ցեղասպանություն: Ականատես վերապրողների վկայություններ, 2 համալրված հրատ., Երևան, «Գիտություն», 880 էջ:
- Арутюнян Ю.В., Карапетян Р.С., Овсепян А.А. 1976, Опросной лист, Ереван, изд. АН АРМССР, 1125 с.
- Ананьев Б.Г. 1977, О проблемах современного человекознания, Москва, «Наука», 379 с.
- Сорокин П.А. 1994, Общедоступный учебник социологии. Статьи разных лет (Социологическое наследие), Москва, «Наука», 354 с.
- Население Еревана 1986, Этносоциологические исследования. Академия наук Армянской ССР. Институт археологии и этнографии. Отв. ред. Ю.В. Арутюнян, Э.Т. Карапетян, Ереван, изд. АН Армянской ССР, 250 с.
- Карапетян Р.С. 2014, Формирование населения городов Армении. Этносоциологическое исследование, Ереван, «Гитутюн», 412 с.
- Количественные методы в исторических исследованиях 1984, Москва, «Высшая школа», 384 с.
- Переведенцев В.Н. 1975, Методы изучения миграции населения, Москва, «Наука», 231 с.
- Рубинштейн С.Е. 1946, Основы общей психологии, Москва, «Учпедгиз», 960 с.
- Тоу Д. 2000, Стремление к истине. Как овладеть мастерством историка, Москва, «Академический проект», 354 с.
- Томпсон П. 2003, Голос прошлого. Устная история, Пер. с англ., Москва, «Академический проект», 324 с.
- Блок М. 1973, Апология истории или ремесло историка, Москва, «Наука», 256 с.
- Гарскова И.М. 1995, Некоторые тенденции и проблемы технологии баз данных в исторических исследованиях, Круг идей: развитие исторической информатики. Труды II конференции Ассоциации, изд. «История и компьютер», aik-sng.ru/text/krug/95/krug\_95.pdf (ներբեռնման օրը՝ 04.11.2023).
- Головаха Е.Н., Кроник А.А. 1984, Психологическое время личности, Киев, «Наукова думка», 247 с.
- Карапетян Э.Т. 1966, Родственная группа «азг» у армян, Ереван, изд. АрмССР, 240 с.
- Логонова Н.А. 1978, Развитие личности и ее жизненный путь. Принцип развития в психологии, Москва, «Наука», 320 с.
- Поршнева О.С. 2006, Концепции и методы социологии в историческом исследовании, <https://www.semanticscholar.org/paper> (ներբեռնման օրը՝ 04.11.2023).

Урланис Б.Ц. 1968, История одного поколения (социально-демографический очерк), Москва, «Мысль», 176 с.

Karapetyan R.S. 2013, Migration in Cities of Armenia, Yerevan, "Gitutyun", 287 p.

## ИСТОРИЧЕСКАЯ РЕКОНСТРУКЦИЯ МИГРАЦИЙ В СОЦИОЛОГИЧЕСКОМ ИССЛЕДОВАНИИ

Рубен Карапетян, Сюзанна Барсегян

### Резюме

Обращение к живым носителям информации о прошлом весьма полезный метод в исторических реконструкциях. Такая цель была поставлена при организации в Армении социологических исследований в 1980, 1993 и 2005 гг., во время реализации которых методом стандартизированного интервью, фиксирующего устные истории (oral history) больших массивов населения, была собрана и систематизирована информация о реальном жизненном пути представителей всех поколений на момент их опроса. Полученная от представителей разных (возрастных, социальных, субкультурных) групп населения городов Армении информация о произошедших в течение их жизни событиях стала ресурсом, позволившим разрабатывать новые подходы к интерпретации фактов, опровергать или подтверждать справедливость прежнего истолкования исторических событий и демонстрировать, как они воспринимались на индивидуальном уровне. На основе лонгитюдных эмпирических исследований, в которых обеспечиваются периодичность проведения и, подобно материалам переписей населения, сопоставимость получаемых данных, можно вывести содержательную и статистически значимую динамику событий.

Привлечение материалов сопоставимых лонгитюдных социологических исследований дало возможность по-новому оценить и в дальнейшем системно использовать их аналитический ресурс в совокупности с имеющимися в наличии данными статистики, архивов, литературных памятников, научных изысканий.

**Ключевые слова** – миграция, историческая реконструкция, социологическое исследование, лонгитюдные исследования, стандартизированное интервью, устная история, социальная память.



---

**HISTORICAL RECONSTRUCTION OF MIGRATION IN SOCIOLOGICAL STUDY**

Ruben Karapetyan, Suzanna Barseghyan

## Abstract

Repatriation to living informants about the past is a very useful method in historical reconstructions. Such a goal was set during the organization of sociological studies in Armenia in 1980, 1993, and 2005, during which the method of standardized interviews was used to record oral histories of large population groups. Information about the real life paths of representatives of all existing generations during the survey period was collected and systematized. The information obtained from representatives of various (age, social, subcultural) groups of the population of the cities of Armenia about the events that took place during their lifetime became a resource that allowed for developing new approaches to the interpretation of facts, refuting or confirming the fairness of previous interpretations of historical events, and demonstrating how they were perceived at an individual level. Based on longitudinal empirical studies, which ensure the periodicity of conducting surveys and, based on the materials of population censuses, the comparability of the data obtained, it is possible to derive a comprehensive and statistically significant dynamics of events.

The use of materials from comparable longitudinal sociological studies allowed us to reassess and subsequently systematically use their analytical potential in conjunction with the available statistics, archives, literary monuments, and scientific research.

**Key words** – migration, historical reconstruction, sociological research, longitudinal studies, standardized interviews, oral history, social memory.

# ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ. 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԱՑՈՒՄԸ ՀՀ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

## Գարիկ Աթանեսյան

Պատմական գիտությունների թեկնածու  
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ  
ՀՀ, Երևան, Չարենցի 15  
Էլ. հասցե՝ atanesyangarik@gmail.com  
ORCID: 0009-0006-2647-8397

## Միհրան Գալստյան

Պատմական գիտությունների դոկտոր  
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ  
ՀՀ, Երևան, Չարենցի 15  
Էլ. հասցե՝ akoonk@yahoo.com  
ORCID: 0009-0009-1537-2847

Հոդվածը ներկայացվել է 04.03.2024, գրախոսվել է 09.07.2024, ընդունվել է տպագրության 02.08.2024  
DOI: 10.53548/0320-8117-2024.2-210

### Ամփոփում

44-օրյա պատերազմից կարճ ժամանակ անց Երևանի Եռաբլուր պանթեոնը դարձավ պատերազմի պաշտոնական խորհրդանիշը՝ հետագայում հիմք հանդիսանալով ՀՀ կառավարության իրականացրած սուբվենցիոն ծրագրի համար, որի ֆինանսավորմամբ մի շարք համայնքներում տեղադրվեցին 44-օրյա պատերազմի զոհերի միանման գերեզմանաքարերը՝ ստեղծելով համայնքային զինվորական պանթեոններ: Հետագայում ՀՀ իշխանությունները հայտարարեցին արցախյան բոլոր պատերազմների զոհերի հիշատակը հավերժացնելու պաշտոնական նախաձեռնությունը՝ Կյանքի պուրակի կառուցման ծրագիրը, որի խորհրդանշանային արտահայտումը Կենսաց ծառի տեղադրումն էր պատերազմի զոհերի հիշատակի հավերժացման ավանդական խորհրդանիշ դարձած հուշարձանների փոխարեն: Պատերազմի հետևանքով սահմանամերձ դարձած համայնքներում, չնայած պատերազմի հիշատակման պաշտոնական մոտեցումներին ու գործընթացներին, նկատվում են 44-օրյա պատերազմի հիշողության կարևորման ու հուշարձանացման պրակտիկաների լոկալ դրսևորումներ և առանձնահատկություններ՝ պայմանավորված այդ համայնքների անվտանգային խնդիրներով, լոկալ ինքնության պատումներով, գործող նշանային ենթակառուցվածքներով ու հիշողության քաղաքականության հուշային (մնեմոնիկ (mnemonic)) դերակատարների օրակարգերով (զոհվածների ծնողներ, բարեկամներ, ընկերներ, բարերարներ և այլն): Պատերազմի հուշարձանացման գործընթացը Սյունիքի մարզի Կապան քաղաքում վերարտադրել է արցախյան նախորդ պատերազմների հիշատակման պրակտիկաները՝ առանձնահատուկ խորհրդանշանային արտահայտում չստանալով քաղաքի հիշողության լանդշաֆտում: Մինչդեռ 44-օրյա պատերազմի հիշողությունն առանձնահատուկ հիշատակման է արժանացել նույն մարզի Գորիս քաղաքի հանրային տարածքներում՝ այն վերածելով սահմանամերձ դարձած համայնքի լոկալ ինքնության կարևոր պատումներից մեկի: Միևնույն ժամանակ, պատերազմի հիշողությունը համայնքի պաշտպանության, շարունակական պայքարի ու ապագա սխրագործությունների խորհրդանշանային արտա-

հայտում է ստացել պատերազմից հետո սահմանամերձ բնակավայրի կարգավիճակ ստացած Ջերմուկ առողջարանային քաղաքում<sup>1</sup>:

**Բանալի բառեր՝** հիշողության քաղաքականություն, պատում, ինքնություն, պատերազմ, հուշարձան, սահմանամերձ համայնք, հիշատակման պրակտիկաներ:

### Ներածություն

Պատմական անցյալի սոցիալական ներկայացումների պահպանման և տարածման խնդիրներին անդրադառնալիս հետազոտողները հաճախ դիմում են հիշողության քաղաքականության հայեցակարգին, որը սովորաբար ձևակերպվում է որպես պետության և սոցիալական այլ դերակատարների ջանքերի մի շարք՝ տարածելու և պահպանելու կոլեկտիվ անցյալի որոշակի ներկայացումների շրջանառությունը<sup>2</sup>: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նորանկախ Հայաստանի Հանրապետության հիշողության քաղաքականությունը հիմնականում ձևավորվել է ազգային պետության կառուցման շուրջ. ազգային ինքնության գլխավոր պատումն է ցեղասպանության հիշողությունը՝ գերիշխելով հիշողության լանդշաֆտում, իսկ հաջորդ կարևորագույն պատումը Արցախյան ազատամարտն ու պատերազմում հաղթանակն է<sup>3</sup>, որը դեռ Ղարաբաղյան շարժման ժամանակներից միահյուսվել է ցեղասպանության պատումին: Ադրբեջանցիների գործողությունները Սումգայիթում, Բաքվում և Արցախում որակվեցին որպես ցեղասպանության շարունակություն, և «նոր ցեղասպանություն թույլ չտալու» մղումը նպաստեց Հայաստանի առջև կանգնած կենսական խնդրի շուրջ հասարակության էթնիկ մոբիլիզացիայի, որը և նորանկախ Հայաստանի ձևավորման ու կայացման հիմք հանդիսացավ<sup>4</sup>:

Ցեղասպանության ու Արցախյան պատերազմի հիշողությունները գերիշխել են հետխորհրդային Հայաստանի հիշողության քաղաքականության մեջ՝ ձևավորելով հետխորհրդային Հայաստանի հիշողության սոցիալ-մշակութային ենթակառուցվածքները: Նման ենթակառուցվածքների տարրեր են հուշարձանները, թանգարանները, հուշահամալիրները, պաշտոնական տոնացույցը, հանրային ծեսերը, տեղանուններն ու անվանակոչումները, գրականության, արվեստի գործերը և այլն<sup>5</sup>: Անկախության տարիներին ՀՀ իշխանությունների ձևավորած հիշողության սոցիալ-մշակութային ենթակառուցվածքները խորհրդանշանային ազգային ինքնության պաշտոնական պատումների վերարտադրման ու նոր պատմական իրադարձությունների հիշատակման ռեսուրս են հանդիսացել նրանց համար: Այնուամենայնիվ, հնարավոր է, որ պետությունները

<sup>1</sup> Ուսումնասիրությունն իրականացրել ենք «Պատմություն և հիշողություն. Արցախյան երկրորդ պատերազմի հուշարձանացման հիմնախնդիրը և հեռանկարի ուրվագծումը» (ծածկագիր՝ 21T-6A136) ծրագրի շրջանակներում՝ ԲԿԳԿ-ի ֆինանսական աջակցությամբ:

<sup>2</sup> Bernhard, Kubik 2014, 7.

<sup>3</sup> Խառատյան, Շաֆոյան 2022, 4:

<sup>4</sup> Մարության 2009.

<sup>5</sup> Малинова 2017, 11. Verov?ekVerov?ekVerov?ek

ժամանակի ընթացքում պատմական բարդ ու ողբերգական իրադարձությունների բախվեն, որոնք կարող են լրացնել, փոփոխել և նույնիսկ վերակառուցել նրանց գործող հիշողության լանդշաֆտները: Հետխորհրդային Հայաստանի համար նմանօրինակ բարդ ու ողբերգական իրադարձություն դարձավ Արցախյան երկրորդ պատերազմը (հայտնի է նաև որպես 44-օրյա պատերազմ):

2020 թ. նոյեմբերի 9-ին ստորագրվեց Ղարաբաղյան երկրորդ պատերազմը կանգնեցնելու մասին Ռուսաստանի Դաշնության նախագահի, Ադրբեջանի նախագահի և Հայաստանի վարչապետի եռակողմ հայտարարությունը՝ վերջ դնելով 44 օր տևած պատերազմին, որի հետևանքով հայկական կողմն ունեցավ երեք հազարից ավելի զոհ ու կորսված տարածքներ, ադրբեջանական զորքերը օկուպացրին ՀՀ արևելյան որոշ շրջաններ, իսկ Արցախի վրա 2023 թվականի Ադրբեջանի ներխուժման հետևանքով Արցախի Հանրապետության տարածքը ոչ միայն հայաթափվեց, այլև ամբողջությամբ անցավ Ադրբեջանի վերահսկողության տակ:

Պարտություն Արցախյան երկրորդ պատերազմում, կորսված տարածքներ, բազմաթիվ զոհեր, տեղահանվածներ և ապագայի անորոշություն. այս ամենը հայ հասարակության ու քաղաքական տարբեր խմբերի տեղի ունեցած իրադարձություններին գնահատական տալու, ազգային ինքնության ու պատմական հիշողության համակարգում և ապագայի ռազմավարության ծիրում դրանց դերը որոշելու բարդագույն խնդրի առջև են կանգնեցրել:

Սույն աշխատանքը քննարկում է Արցախյան երկրորդ պատերազմի հիշատակման պաշտոնական ու լոկալ (համայնքային) գործընթացներն ու նրանց հուշարձանային դրսևորումները ՀՀ սահմանամերձ դարձած համայնքներում՝ Վայոց ձորի մարզի Ջերմուկ ու Սյունիքի մարզի Գորիս և Կապան քաղաքների օրինակով: Դիտարկում ենք պատերազմի հիշատակման հուշային (մնեմոնիկ) դերակատարներին, պատերազմի հիշողության նրանց մեկնաբանումն ու պատերազմի հիշատակման ռազմավարությունները: Փորձ ենք կատարում հասկանալու, թե ինչպես են վերաիմաստավորվում Արցախյան առաջին պատերազմի, հաղթանակի ու Ապրիլյան պատերազմի հիշողությունները սահմանամերձ համայնքներում 44-օրյա պատերազմում կրած պարտությունից հետո, ինչպես են լոկալ դերակատարները փորձում մեկնաբանել ու ներկայացնել պատերազմի հիշողությունը համայնքային հուշարձանային լանդշաֆտներում:

Թեև հիշողության քաղաքականության նկատմամբ մոտեցումները կարող են տարբեր լինել՝ կախված այն բանից, թե դրանք կենտրոնանում են ինստիտուտների<sup>6</sup> կամ դիսկուրսների<sup>7</sup> վրա, նրանցից շատերը սովորաբար այն սահմանում են որպես հուշային (մնեմոնիկ) դերակատարների կազմակերպված և ինստիտուցիոնալացված գործունեություն: Մ. Բերնարն ու Յ. Կու-

<sup>6</sup> Lebow 2006.

<sup>7</sup> Verovšek 2016.

բիկը բնութագրում են մենմոնիկ դերակատարներին որպես քաղաքական ուժերի, որոնք հետաքրքրված է անցյալի կոնկրետ մեկնաբանմամբ<sup>8</sup>: Մենմոնիկ դերակատարները պայքարում են խորհրդանշական տարածության մեջ գերակայություն հաստատելու համար, որը մասամբ արտահայտվում է որևէ անձի կամ իրադարձության պատվին հուշահամալիրներ կամ այլ տիպի կառույցներ ստեղծելով: Հուշարձանները, որոնք սովորաբար բնութագրվում են որպես հիշողության վայրեր (lieux de mémoire)<sup>9</sup>, անցյալի և երևակայական ինքնությունների<sup>10</sup> կոլեկտիվ ներկայացումների ձևավորման հիմնական նյութական գործիքներից են:

Պատերազմի հիշողության դեպքում գործ ունենք հիշողության քաղաքականության հետ: Պատերազմի հուշարձանացումը և հիշատակման գործընթացը միշտ հիշելու ու մոռանալու միջև ընտրություն կատարելու գործընթաց են<sup>11</sup>: Հիշողության քաղաքականության դերակատարների վերաբերմունքն այս հարցում կարող է չհամընկնել, որը լրացուցիչ հիմք կարող է դառնալ «հիշողության» կոնֆլիկտների համար: ՀՀ ՏԻՄ-երը իրավասու են վարելու լոկալ հիշողության քաղաքականություն, իսկ համայնքների հիշողության լանդշաֆտները կարող են ունենալ սեփական առանձնահատկություններ: Ուստի, գտնում ենք, որ բարդ հիշողության հիշատակման համայնքային գործընթացների վերլուծումը նույնքան կարևոր է Հայաստանի ազգային ինքնության ձևավորման ու հիշողության քաղաքականությունը հասկանալու գործում, որքան համազգային գործընթացների ուսումնասիրություններն են:

Հիմնախնդրի ուսումնասիրության համար հետազոտություն ենք անցկացրել Սյունիքի մարզի Կապան ու Գորիս և Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքներում: Հետազոտության շրջանակներում կիրառել ենք փորձագիտական ու խորին հարցազրույցների և ոչ կառուցվածքային դիտման մեթոդները: Փորձագիտական հարցազրույցներն (10 հարցազրույց) անցկացրել ենք ՀՀ Սյունիքի և Վայոց ձորի մարզպետարանների Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի ու Կրթության, մշակույթի եւ սպորտի վարչությունների պետերի հետ, ինչպես նաև Կապան, Գորիս ու Ջերմուկ խոշորացված համայնքների ղեկավարների տեղակալների եւ համայնքապետարանների Հանրային կապերի, կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի բաժինների պետերի հետ: Խորին հարցազրույցներն (24 հարցազրույց) իրականացրել ենք այդ բնակավայրերում զոհվածների հիշատակին նվիրված հուշարձանների տեղադրումը նախաձեռնող և իրականացնող անձանց հետ (զոհվածների ծնողներ, բարեկամներ, ընկերներ ու հարևաններ): 2021 թ. հոկտեմ-

<sup>8</sup> Bernhard, Kubik 2014, 9.

<sup>9</sup> Nora 1989.

<sup>10</sup> Bodnar 1992, Hass 1988.

<sup>11</sup> Малинова 2017, 11.

բերի 1-ից մինչ 2023 թ. հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում դիտում ենք իրականացրել պատերազմի զոհերին նվիրված հուշարձանների տարածքներում, հուշարձանների բացման ու հիշատակման արարողությունների ժամանակ (5 հուշարձան Ջերմուկում, 7-ական հուշարձան Կապանում ու Գորիսում), բովանդակային վերլուծության ենք ենթարկել այդ իրադարձությունների ժամանակ հնչեցված ելույթները (բոլոր հնչեցված ելույթները՝ զոհվածների, ծնողների, ՏԻՄ-ներկայացուցիչների, հոգևորականների, դպրոցի տնօրենների, բարերանների և այլն):

#### **44-օրյա պատերազմի հուշարձանացման պաշտոնական պրակտիկաները**

Հիշողության քաղաքականությունը գործ ունի ոչ թե անցյալի, այլ նրա վերաբերյալ հանրային պատկերացումների հետ: Խթանելով կամ աջակցելով հավաքական անցյալի որոշ մեկնաբանություններ, իշխող վերնախավի ներկայացուցիչները հետապնդում են քաղաքական նպատակներ՝ խնդիր դնելով լեգիտիմացնել սեփական իշխանությունը, ամրապնդել համայնքի համերաշխությունը, արդարացնել կայացվելիք որոշումները և մոբիլիզացնել ընտրազանգվածի աջակցությունը<sup>12</sup>: Պատերազմի դեպքում հիշողությունը առավել սուր քաղաքական համատեքստ է ստանում, և շատ կարևոր է դառնում հետևել իշխող քաղաքական իշխանությունների կողմից պատերազմի հիշատակման ու մոռացման որդեգրած քաղաքականության դրսևորումներին<sup>13</sup>:

Պատերազմում պարտված երկրի հիշողության կամ մոռացման գործընթացների պարտականությունները հիմնականում ընկնում են նոր քաղաքական էլիտաների ուսերին, որոնք, հաջորդելով պարտված ռեժիմին, փորձում են վերախմաստավորել պատմական բարդ իրադարձությունը և համախմբել հանրությանը ապագայի նոր տեսլականի շուրջ: Սակայն, հետպատերազմական Հայաստանում այլ գործընթացի ականատես եղանք. պատերազմի ընթացքում իշխանության գլուխ կանգնած քաղաքական ուժը արտահերթ ընտրությունների միջոցով վերարտադրվեց և լեգիտիմացրեց երկրի ապագային ուղղված իր ռազմավարության իրականացումը:

ՀՀ քաղաքական էլիտան նոր քաղաքականություն է սկսել վարել հետպատերազմական իրավիճակում երկրի ապագայի կառուցման հարցում, որի համատեքստում էլ անհրաժեշտ է դիտարկել վերջին տարիներին իրականացվող հիշողության պաշտոնական քաղաքականությունը. պատերազմի ավարտից հետո Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է խաղաղության օրակարգ՝ առաջարկելով տարածաշրջանի բոլոր երկրներին կարգավորել հարաբերությունները և համագործակցել: ՀՀ-ն ներգրավվել է Ադրբեջանի հետ խաղաղության բանակցություններում ու նպատակ ունի կնքել

<sup>12</sup> Малинова 2017, 9.

<sup>13</sup> Ачкасов 2013, 106.

խաղաղության պայմանագիր՝ «ապագա սերունդների համար խաղաղ համակեցության դարաշրջանը հնարավոր դարձնելու համար»<sup>14</sup>: Հետպատերազմական Հայաստանը շահագրգռված է նաև Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորմամբ և սահմանների ու հաղորդակցուղիների բացմամբ և առանց նախապայմանների ներգրավվել է բանակցությունների մեջ: Հայաստանի Հանրապետության նոր տեսլականը լավագույնս արտահայտված է «Խաղաղության խաչմերուկ» նախագծում, որը պետք է արտահայտվի հետևյալ կերպ. տարածաշրջանի բոլոր երկրներն ապրում են բաց սահմաններով, ճանապարհներով և ենթակառուցվածքներով, կապված են ակտիվ տնտեսական, քաղաքական, մշակութային կապերով, կուտակել են բոլոր հարցերը դիվանագիտության և երկխոսության գործիքներով լուծելու փորձ ու ավանդույթ:

ՀՀ քաղաքական վերնախավի կողմից առաջ քաշված խաղաղության օրակարգի և հարևանների հետ վերակառուցվող ապագայի տեսլականի համատեքստում է անհրաժեշտ դիտարկել 44-օրյա պատերազմին տրվող գնահատականը, արցախյան ազատամարտի ու առաջին պատերազմում տարած հաղթանակի վերաիմաստավորումը ու պատերազմի հուշարձանացման պրակտիկաներն առհասարակ:

Արցախյան երկրորդ պատերազմի խորհրդանշանային արտահայտումը Եռաբլուրն էր դեռ պատերազմի ընթացքում և նրա ավարտից հետո ընկած ժամանակահատվածում: Հայաստանյան ՋԼՄ-ները և սոցիալական ցանցերը անդադար անդրադառնում էին Եռաբլուրում ավելացող գերեզմանների, ՀՀ դրոշների ու զոհվածների շիրիմների մոտ սգացող հարազատների: Պատերազմից հետո Եռաբլուրը պատերազմի հիշատակման առաջնային նշանը դարձավ նաև իշխանության ներկայացուցիչների համար. 2020 թ. դեկտեմբերի 19-ին՝ 44-օրյա պատերազմի ավարտին հաջորդած 40-րդ օրը, ՀՀ կառավարության նախաձեռնած անդրանիկ հանրային միջոցառումն անցկացվեց հենց Եռաբլուր զինվորական պանթեոնում, որտեղ վարչապետը պատերազմի զոհերի հիշատակին եռօրյա սուգ հայտարարեց<sup>15</sup>: Հետագայում Եռաբլուրի հայեցակարգը դարձավ իշխանությունների՝ պատերազմի հիշատակման իրենց քաղաքականության հիմնասյունը. կառավարությունը սկսեց ֆինանսավորել այլ համայնքներում զոհվածների միանման շիրիմների տեղադրմամբ զինվորական գերեզմանների կառուցումը (սուբվենցիոն ծրագրերով), որոնք հիմնականում սկսեցին դրսևորվել տարբեր համայնքներում զինվորական պանթեոնների տեսքով՝ հաճախ կրկնօրինակելով Եռաբլուրի հիշատակման պրակտիկաները: ՀՀ համայնքներում, բնակավայրերի գերեզմանային առանձնացված տարածքներում զինվորական

<sup>14</sup> ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի ելույթը ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի աշնանային նստաշրջանում, [http://www.parliament.am/news.php?cat\\_id=2&NewsID=19659&year=2023&month=11&day=18](http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=19659&year=2023&month=11&day=18)

<sup>15</sup> Խառատյան, Շագոյան 2022, 20:

գերեզմանների կառուցման ֆինանսավորման ծրագիրը ՀՀ իշխանությունների կողմից պատերազմի զոհերի հիշատակման ամենախոշոր ծրագիրն է պատերազմի ավարտից հետո:

ՀՀ իշխանությունների կողմից պատերազմի զոհերի հիշատակման հաջորդ կարևոր նախագիծը Կյանքի զբոսայգու կառուցումն է, որի մասին 2021 թ. սեպտեմբերի 21-ին՝ Հայաստանի անկախության 30-ամյակին, հայտարարեց վարչապետ Փաշինյանը: Նախագիծը նախատեսում է արցախյան բոլոր պատերազմների զոհերի կենդանությունն ու ներկայությունը խորհրդանշող ծառեր տնկել, իսկ, Փաշինյանի խոսքերով, «պուրակի կուլմինացիան կլինի Կենաց ծառը, մեր բոլոր նահատակներին և հայրենիքին տված նրանց կյանքը խորհրդանշող: Դա չի լինելու հուշակոթող, դա լինելու է կենաց պուրակ, որտեղ վազվզելու, աղմկելու, խաղալու են երեխաները, երիտասարդները ժամանց են ունենալու, մեծահասակները ճեմելու են ու զրուցելու, և այդ պուրակը լինելու է նրա մասին, որ ահա այդ բոլոր մարդկանց, այս բոլոր մարդկանց՝ Հայաստանի ու Արցախի ապրելու համար են զոհվել նրանք»<sup>16</sup>: Տեսնում ենք, որ պատերազմի հիշատակմանն ուղղված պետական երկրորդ խոշոր նախագիծը նույնպես չի նախատեսում հանրային վայրում հուշարձանի տեղադրում, ինչպես նաև Արցախյան երկրորդ պատերազմի առանձնահատուկ հիշատակում և կարևորում. վերջին պատերազմը դրվում է նախորդ պատերազմների հետ մեկ հարթության մեջ և մեկնաբանվում է որպես շարունակական պայքար ու զոհողություն՝ Հայաստանի խաղաղ ապագայի կերտման համար:

Հայաստանյան քաղաքական վերնախավի մոտեցումը պատերազմի հուշարձանացման պրակտիկաներին հստակ արտահայտում ստացավ վարչապետի 2024 թ. մի ելույթում. սիսիանցի աշակերտների հետ հանդիպման ժամանակ մասնավորապես ասել է. *«Որ գնում ենք, ասում ենք՝ եկեք խաչքար դնենք, խաչքար դնենք... Ինչքա՞ն խաչքար դնենք... Եկեք ամեն մեկի վզից մի խաչքար կապենք, ասենք՝ քարշ փվեք, երեխեք, սա ձեր առաքելությունն է... Մեծ խաչքարեր կապենք երեխաների ոտքից, ասենք՝ դե քարշ փվեք, որովհետեւ Վարդան Մամիկոնյանի սերունդներն եք դուք: Մեր նահապարակները զոհվել են, որ երեխաների վզերից խաչքարերը կախենք, հա՞»*<sup>17</sup>:

Մեր հետազոտության ընթացքում Սյունիքի մարզպետարանների ներկայացուցիչների հետ հարցազրույցների ժամանակ տեղեկացանք, որ պատերազմից հետո ծրագրվել է բոլոր համայնքներում տեղադրել պատերազմի

<sup>16</sup> ՀՀ անկախության 30-ամյակին նվիրված գլխավոր միջոցառումը Հանրապետության հրապարակում, ՀՀ անկախության 30-ամյակին նվիրված գլխավոր միջոցառումը Հանրապետության հրապարակում (youtube.com):

<sup>17</sup> Ինչքա՞ն խաչքար դնենք, հասկացանք. եկեք ամենքի վզից էլ մի հատ խաչքար կապենք, ասենք՝ քարշ տվեք, երեխեք. Նիկոլ Փաշինյան, <https://newspress.am/?p=216160&l=am>



զոհերի հիշատակն հավերժացնող միանման հուշարձաններ, որը, սակայն, հետագայում չի իրականացվել<sup>18</sup>:

Պատերազմի ընթացքում և ավարտից շատ չանցած ՀՀ-ի գրեթե բոլոր համայնքները հանդես եկան 44-օրյա պատերազմի մասնակից իրենց համայնակիցների հիշատակն հավերժացնող տարաբնույթ նախաձեռնություններով: Պատերազմի զոհերի հիշատակն հավերժացնող նախաձեռնությունների թվում են փողոցների անվանակոչումներն ու վերանվանումները, հուշարձանների, հուշահամալիրների տեղադրումը, դպրոցներում, որոշ մանկապարտեզներում և ԲՈՒՀ-երում «հիշատակի անկյունների» ստեղծումը, շենքերի պատերին զոհված զինվորների գրաֆիտի դիմանկարների պատկերումը:

### **Կապան քաղաքի հիշողության լանդշաֆտը**

Հետխորհրդային Հայաստանի հիշողության լանդշաֆտն ունի նաև տարածաշրջանային (մարզային) ու տեղային (համայնքային) առանձնահատկություններ ու գործող նշանային ենթակառուցվածքներ: Տեղական ինքնակառավարման մարմինները իրավասու են վարելու լոկալ հիշողության քաղաքականություն, որը կամ կարող է կրկնօրինակել համապետական քաղաքականությունը, կամ ազդվել տարածաշրջանային դրսևորումներից ու պրակտիկաներից, կամ իրականացնել սեփական համայնքային հիշողության քաղաքականություն՝ կառուցելով լոկալ ինքնության պատումներ և դրանց հիշատակման համապատասխան պրակտիկաներ: Միևնույն ժամանակ, բարդ հիշողության հուշարձանացման ժամանակ ՏԻՄ իշխանությունները կարող են բախվել լոկալ հիշողության քաղաքականության մենտոնիկ դերակատարների հիշատակման գործունեությանը և ստիպված մտնել նրանց հետ բանակցությունների մեջ՝ լոկալ հուշարձանային լանդշաֆտի վերակառուցման հարցում:

44-օրյա պատերազմի զոհերի շիրիմների կառուցմանն ուղղված սուբսիդավորման ծրագրի շրջանակում զինվորական պանթեոններ կառուցվեցին տարբեր համայնքներում՝ հիմնականում կրկնելով Եռաբլուրի հիշատակային կառուցվածքն ու պրակտիկաները: Կան նաև համայնքներ, որոնք դեռ Արցախյան ազատամարտից արդեն ունեին գործող զինվորական պանթեոններ՝ ձևավորված հիշողության քաղաքականությամբ, հիշատակման պրակտիկաներով և ավանդույթներով. ամենավառ օրինակն է Բաղաբուրջի հուշահամալիրը պատերազմից հետո սահմանամերձ դարձած Կապանում: Համայնքային իշխանությունները դեռ 44-օրյա պատերազմի ընթացքում լոկալ հիշողության քաղաքականության վերարտադրության ուղին են բռնում ու պատերազմը և նրա զոհերի հիշատակումը որոշում են իրականացնել ընդունված պրակտիկաների ու ավանդույթի համաձայն՝ զոհերին հուղարկա-

<sup>18</sup> Աթանեսյան, Գալստյան 2023, ԴԱՆ, Սյունիքի մարզ, Կապան:

վորելով զինվորական պանթեոնում, իսկ նրանց սիրանքը հիշատակող հուշարձանը տեղադրում են հուշահամալիրի տարածքում:

Սյունիքի մարզի մարզկենտրոն Կապան քաղաքը արդեն ուներ գործող զինվորական պանթեոն դեռ առաջին պատերազմից հետո: Ավելին, հուշարձանային գրեթե ողջ լանդշաֆտը հիմնականում կենտրոնացած է Բաղաբուրջի հուշահամալիրի տարածքում: Հուշահամալիրը Կապանից 200 մ հարավ, Բաղաբուրջ տանող ճանապարհի ձախակողմյան բարձունքին է, կառուցապատվել է 1970-1990 թթ. և բաղկացած է չորս հարթակներից: Առաջին հարթակում կանգնեցված է Մեծ եղեռնի և 1988 թ. Սումգայիթի ու Բաքվի զոհերին նվիրված հուշակոթող սյունը, երկրորդում՝ Արցախյան ազատամարտում զոհված կապանցի հայորդիների եղբայրական գերեզմանն է (1992-1994 թթ.): Երրորդ հարթակի վրա է անհայտ զինվորի հիշատակին նվիրված խաչքարը (2005 թ.), իսկ չորրորդում Երկրորդ աշխարհամարտի զոհերին նվիրված հուշարձանն է (1987 թ.): Մինչև 44-օրյա պատերազմի զոհերի հուշաքարերի տեղադրումը 2015 թ. հուշահամալիրում տեղադրվել էր նաև ՀՀ ազգային հերոս Վազգեն Սարգսյանի կիսանդրին:

Պատերազմի զոհերի հուղարկավորումը, գերեզմանների կառուցումը և պատերազմի հիշատակման հիմնական վայրի տեղափոխումը գործող համալիր եղել են Կապանի լոկալ իշխանությունների սեփական քաղաքականության արդյունքը և որոշումը: Այս պրակտիկան անկախության տարիներին ձևավորված ավանդույթի վերարտադրության գործընթաց կարելի է համարել: Մեզ հետ զրույցում հետևյալը հստակեցվեց համայնքապետարանից. «Մենք հուշահամալիր ունենք, պանթեոն ունենք: Կապանն առաջիններից է, եթե ոչ առաջինը, որ համայնքը գերեզմանները սարքեց: Մենք այնպես ենք արել, որ զոհվածների փարին լրանալուն պես պատրաստ լինի իրենց գերեզմանը: Համայնքային միջոցներով ենք արել, ոչ թե փոխհատուցումներով: Հուշահամալիրում մեր 92 թվականի զոհերն են, Ապրիլյանի և շարունակությունը՝ 44-օրյայի: Բոլորը նույն ձև, ինչպես եղել է 92 թվականին: Հուշաքարերը նույն տրամաբանության մեջ են, բոլորինը նույն ձևով»<sup>19</sup>:

Կապանի դեպքում պատերազմի հիշատակման հիմնական վայրը բուն քաղաքային հանրային տեսանելի վայրում չէ, այլ առանձին վայրում, որին մասնակից լինելու համար պետք է նպատակաուղղված այցելել հուշահամալիր: Բացի այդ, գործ ունենք հիշատակման մեկտեղման հետ, քանզի պանթեոնը նոր զոհերին շարունակության մեջ է դրել Արցախյան առաջին և Ապրիլյան պատերազմի զոհերի հետ՝ առանձնահատուկ չառանձնացնելով 44-օրյա պատերազմի հիշատակումը:

Չնայած կառավարության ֆինանսական աջակցությանը և համայնքային իշխանությունների իրականացրած հիշատակման պրակտիկաներին ու արա-

<sup>19</sup> Աթանեսյան, Գալստյան 2023, ԴԱՆ, Սյունիքի մարզ, Կապան:

րողություններին, միևնույն է, Կապանում, ինչպես ՀՀ այլ բնակավայրերում, գրանցվել է զոհվածների ծնողների, բարեկամների, հարևանների ու ընկերների կողմից նրանց հիշատակը հավերժացնող հուշարձանների տեղադրում Կապանի հանրային վայրերում: Դաշտային աշխատանքի շնորհիվ՝ Կապանում գրանցել ենք հինգ հուշաղբյուր՝ նվիրված 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակին: Հուշաղբյուրները տեղադրված էին զոհվածների բնակության վայրերի բակերում կամ փողոցների վրա: Հասկանալի է, որ հուշաղբյուրներից միայն երկուսն էին հիշատակում 44-օրյա պատերազմը (երկու դեպքում էլ հուշաղբյուրների վրա միևնույն սաղավարտն էր, որի մեջ պատկերված էր «44 օր» գրությունը): Մյուս դեպքերում Արցախյան ազատամարտի կամ Ապրիլյան պատերազմի զոհերին նվիրված քաղաքի շենքերի ու տների բակերում հանդիպող հուշաղբյուրների օրինակով միայն գրված են զոհվածների անունները՝ երբեմն էլ հիշատակելով «հերոս» գրությունը: Հուշարձաններ ենք գրանցել նաև Կապանի երեք դպրոցի բակերում՝ խաչքարի, ինքնաձիգով և համազգեստով պատկերված զինվորի ու հուշաղբյուրի տեսքով: Այս դեպքերում ևս, չնայած զոհերի անունների, զինվորական ու գերեզմանային զանազան խորհրդանիշների առկայության, նկատում ենք 44-օրյա պատերազմի վերաբերյալ ցանկացած հիշատակման բացակայություն. այդ պատերազմը հիշատակվում է միայն դպրոցներում տեղադրված հիշատակի անկյուններում<sup>20</sup>: Բացի այդ, զոհվածների հարազատների ու ընկերների նախաձեռնությամբ քաղաքին հարող անտառների տարածքներում կառուցվում են զոհվածների հիշատակին նվիրված տաղավարներ, որը դեռ առաջին պատերազմից տարածաշրջանում շատ ընդունված հիշատակման պրակտիկա է:

### **Գորիս քաղաքի հուշարձանային լանդշաֆտը**

Պատերազմի զոհերին զինվորական պանթեոնում հուղարկավորելու և նմանօրինակ գերեզմանների կառուցման լոկալ համայնքային դրսևորման դեպք է նաև Սյունիքի մարզի մեկ այլ սահմանամերձ բնակավայր դարձած Գորիս համայնքը: Նորակառույց զինվորական պանթեոնում հանգչում են միայն Արցախյան երկրորդ պատերազմում զոհվածները: Այն կառուցվել է Գորիսի համայնքապետարանի նախաձեռնությամբ և միջոցներով, իսկ տարածք է ընտրվել Հայրենական մեծ պատերազմի և Արցախյան ազատամարտի զոհերի հիշատակը հավերժացնող հուշահամալիրի տարածքին անմիջապես հարող վայրը: Այս դեպքում գործ ունենք քաղաքի կենտրոնական հատվածներից մեկում գտնվող հուշահամալիրի հետ, որը բանուկ զբոսայգի է համարվում նաև երիտասարդության համար: Բացի այդ, ըստ նախագծի, զինվորական պանթեոնը ունենալու է նաև մատուռ. 2021 թ. Գորիս կատարած հովվապետական այցի շրջանակում Ամենայն հայոց կաթողիկոսը այ-

<sup>20</sup> Աթանեսյան, Գալստյան 2023, ԴԱՆ, Սյունիքի մարզ, Կապան:

ցելել է պանթեոն, ծանոթացել պանթեոնի տարածքի կառուցման նախագծին՝ իր աջակցությունը հայտնելով մատուռի կառուցման նախագծին:

Ի տարբերություն Կապանի, որտեղ արդեն գործող հուշարձանային համալիրին ավելացվել էր ևս մեկ հիշողություն, Գորիսի պանթեոնի դեպքում ոչ միայն գործ ունենք 44-օրյա պատերազմի առանձին հիշատակման հետ, այլև քաղաքի նշանային ենթակառուցվածքի լրացման հետ՝ հուշարձանային լանդշաֆտում նոր դոմինանտ խորհրդանիշի արտահայտմամբ: Միևնույն ժամանակ, գերեզմանային հիշատակման տարածքը գտնվում է հանրային վայրում և պետք է ունենա նաև կրոնական բաղադրիչ: Ինչպես մեզ տեղակացրին համայնքապետարանից, «Պանթեոնը, բոլորի գերեզմանները քաղաքապետարանն է սարքել: Բոլորինը չէ, ովքեր որ ցանկացել են այստեղ հուղարկավորել<sup>21</sup>: Հիմա էլ մշտապես քաղաքապետարանի ուշադրության կենտրոնում է, միջոցառումներ են անցկացվում: Անհայր կորած զինվորների հիշատակին, մայիսի 9-ին 44-օրյային զոհված տղաների նկարներով մենք քայլերթ ենք կազմակերպել 1-ին դպրոցի հուշարձանից պանթեոն»<sup>22</sup>:

Պատերազմից հետո Գորիսի համայնքային իշխանությունները նաև ակտիվ համագործակցել են քաղաքի հուշարձանային լանդշաֆտի ձևավորման մենմոնիկ այլ դերակատարների հետ՝ նրանց նախաձեռնած հուշարձանները կյանքի կոչելու համար: Զոհվածների հարազատների, բարեկամների ու ընկերների ջանքերով Գորիսում տեղադրվել են 44-օրյա պատերազմի զոհերին նվիրված մի շարք հուշարձաններ, դպրոցներում և մանկապարտեզներում կան հիշատակի անկյուններ. Կ. Հայրապետյանի հիշատակին հուշաղբյուր է տեղադրվել Նոր վանքի Տափ թաղամասում, Է. Տատինյանցին նվիրված հուշարձան՝ թիվ 6 հիմնական դպրոցի բակում, թիվ 1 ավագ դպրոցի բակում տեղադրվել է դպրոցի զոհերի հիշատակին նվիրված հուշարձան, Բ. Բազունցի հիշատակին նվիրված հուշաղբյուր իրենց տան բակում՝ Բազունց-Ֆարմի կողքին՝ քաղաքի կենտրոնական փողոցներից մեկի տարածքում:

Գորիսի լոկալ հիշողության քաղաքականության մենմոնիկ դերակատարների համագործակցության շնորհիվ 44-օրյա պատերազմի հիշողությունը վերածվել է լոկալ ինքնության անկյունաքարային պատումներից մեկի՝ ստանալով հուշարձանային տարածված արտահայտում:

### **Ջերմուկի քաղաքի հուշարձանային լանդշաֆտը**

Շատ հետաքրքիր դեպք է Վայոց ձորի մարզի Ջերմուկ առողջարանային քաղաքը, որը մարզկենտրոն Եղեգնաձորից 50 կմ հյուսիս-արևելք է, Արփա գետի ակունքի շրջանում և Հայաստանի երեք առողջարանային քա-

<sup>21</sup> Գորիսի խոշորացված համայնքում 63 զոհ է եղել պատերազմի ժամանակ, սակայն միայն 43 զոհված է հուղարկավորվել նորակառուց պանթեոնում:

<sup>22</sup> Աթանեսյան, Գալստյան 2023, ԴԱՆ, Սյունիքի մարզ, Գորիս:

ղաքներից մեկն է: 1970 թվականից քաղաքը համամիութենական նշանակության առողջարանի կարգավիճակ ուներ, իսկ քաղաքի աջափնյակը, որտեղ գտնվում են առողջարանները, և քաղաքի հյուրերի այցելության հիմնական վայրն է, հիմնականում պատված է եղել դեկորատիվ քանդակներով: Արցախյան շարժման ու հետագա պատերազմի տարիներին առողջարանային քաղաքը մտնում է ազգային-ազատագրական պայքարի մեջ, որն իր արտահայտումն է ստանում նաև քաղաքի հուշարձանային լանդշաֆտում:

Ղարաբաղյան շարժման ու Արցախյան ազատամարտի տարիներին ազգային-ազատագրական պայքարի ականավոր ներկայացուցիչներ Ադրյուր Սերոբին, Արաբոյին, Սոսեին, Նիկոլ Դումանին, Հրայր Դժոխքին և Մախլուտոյին նվիրված ֆիդայիների արձանաշարը հայտնվեց Ջերմուկի ամենաբանուկ զբոսայգու տարածքում՝ անտառային կաճանում (1988-1992): Արցախյան առաջին պատերազմի տարիներին արձանաշարի հարևանությամբ հուղարկավորվել են զոհերից մի քանիսը, ինչպես նաև տեղադրվել է հուշաքար, որը տեղեկացնում է այդ վայրում հետագայում տեղադրվելիք պատերազմի զոհերին նվիրված հուշարձանի մասին: Սակայն հետագայում նախատեսվող այդ հուշարձանը տեղադրվում է քաղաքի մուտքի մոտ (իսկ հուշարձանից քաղաքի ձախափնյակ տանող գլխավոր փողոցը վերանվանվում է «Ազատամարտիկների»): Այդ հուշաքարն ու գերեզմանները մինչև օրս շարունակում են մնալ անտառային կաճանում, իսկ ազատամարտի մյուս զոհերը հուղարկավորվում են քաղաքային գերեզմանատանը:

Արցախյան ազատամարտի ավարտից հետո առողջարան քաղաքը աստիճանաբար սկսեց վերականգնել իր տնտեսական ակտիվությունը, իսկ կառավարության 2008 թվականի որոշմամբ այն հայտարարվեց զբոսաշրջության կենտրոն: Այնուհանդերձ, տեսնում ենք, որ Ջերմուկ առողջարանային քաղաքի լոկալ ինքնության առանցքային պատում դարձած ազգային-ազատագրական պայքարը անկախության հետագա տարիներին նույնպես շարունակեց վերարտադրվել և ամրապնդվել ու իր խորհրդանշանային արտահայտումը ստանալ քաղաքի հուշարձանային լանդշաֆտում:

Այսպես, 2004 թվականին քաղաքի աջափնյակ տանող ճանապարհին տեղադրվում է հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ Իսրայել Օրու արձանը: Իսկ անտառային կաճանի արդեն ձևավորված հուշարձանային լանդշաֆտն ամբողջացվեց ֆիդայիների արձանաշարի ու ազատամարտի զոհերի հուշարձանների անմիջապես հարևանությամբ համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ 2019 թվականին տեղադրված մարշալ Հովհաննես Բաղրամյանի արձանով:

44-օրյա պատերազմից հետո Ջերմուկը դարձավ սահմանամերձ բնակավայր, իսկ 2022 թ. սեպտեմբերյան մարտերի ժամանակ ադրբեջանական զորքերը օկուպացրին սահմանային մի շարք դիրքեր ու տարածքներ, կրակ բացեցին քաղաքի ուղղությամբ ու ներկայումս քաղաքի մատույցներից շատ մոտ

հեռավորության վրա են՝ համայնքի համար ստեղծելով անվտանգային լուրջ խնդիրներ: Չնայած դրան՝ Ջերմուկ առողջարանային քաղաքի լոկալ ինքնության ազգային-ազատագրական պայքարի պատումը միայն ամրապնդվեց ու վերարտադրվեց՝ հուշարձանային լանդշաֆտում ստանալով նոր արտահայտումներ: Ջերմուկ համայնքում 44-օրյա պատերազմից հետո կառավարության ֆինանսավորմամբ կառուցվել է զինվորական պանթեոն, որտեղ հուղարկավորվել են պատերազմի զոհերը: Պանթեոնը գտնվում է քաղաքից դուրս, առանձնացված վայրում՝ համայնքի գերեզմանատան տարածքում: Թեև պանթեոնը առանձնացված է այլ գերեզմաններից, սակայն այն հիշատակում է միայն 44-օրյա պատերազմի զոհերին, իսկ տարածքում բացակայում են այլ հիշատակման հուշարձաններ: Միևնույն ժամանակ, Արցախյան առաջին պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանը գտնվում է հենց քաղաք մտնելու հատվածում՝ հանրային տեսանելի վայրում: 2023 թ. դեկտեմբերին Ջերմուկի ձախափնյակի՝ Ազատամարտիկների փողոցի հարևանությամբ համայնքային իշխանությունների նախաձեռնությամբ բացվեց Ազատամարտիկների պուրակը, որը կառուցվել է սուբվենցիոն ծրագրով: Ակնհայտ է, որ Ջերմուկի համայնքային իշխանությունները 44-օրյա պատերազմի հիշողությունը փորձում են չառանձնացնել Արցախյան ազատամարտից ու հիշատակում են այն որպես մեկ շարունակական պատում:

Միևնույն ժամանակ քաղաքի ձախափնյակում՝ Սուրբ Գայանե եկեղեցու բակում (2007 թ.), բարերար Աշոտ Արսենյանի հովանավորությամբ տեղադրվել է 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակին նվիրված խաչքար, որի մասին նշված է կոթողի վրա: Հարևանությամբ տեղադրված է նաև Յեղասպանության զոհերի հիշատակին նվիրված խաչքար: Եկեղեցուց քիչ հեռու՝ բնակելի շենքերից մեկի բակում, տեղադրվել է պատերազմի զոհերից մեկի հիշատակին նվիրված հուշարձան՝ իր հուշաղբյուրով: Հուշաղբյուրին նշված է զոհվածի անունը, իսկ հուշարձանին նրա նկարն է փորագրված: Լոկալ մեմորիալ դերակատարների նախաձեռնած այս երկու հուշարձաններն են, որ քաղաքի հանրային վայրում առանձնահատուկ հիշատակում են 44-օրյա պատերազմը. մինչդեռ քաղաքի աջափնյակում գտնվող շենքերից մեկի պատին արված մասշտաբային գրաֆիտի նկարում, որը թեև պատկերում է զոհերից ևս մեկին, զոհվածը քաղաքացիական հագուստով է. զինվորական կամ պատերազմի հետ կապված խորհրդանիշները ամբողջությամբ բացակայում են<sup>23</sup>:

Այնուամենայնիվ, Ջերմուկում, բացառությամբ այս երկու-երեք դեպքի, մեմորիալ դերակատարների՝ պատերազմի հիշատակման մոտեցումները հիմնականում համընկնում են համայնքային իշխանությունների մոտեցմանը. քաղաքում Արցախյան ազատամարտի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի

<sup>23</sup> Նման նկարներ հիմնականում հանդիպում են կյանքից երիտասարդ տարիքում հեռացած մարդկանց գերեզմանաքարերին:

հարևանությամբ վերջերս տեղադրվել է ևս մեկ հուշարձան: Բացման արարողությունը եղել է 2023 թ. նոյեմբերի 19-ին, իսկ դրա տեղադրման մտահղացման հեղինակն ու հովանավորը արտերկրում ու Ջերմուկում բնակվող մի խումբ ջերմուկցիներ են: Հուշարձանը տեղադրվել է որպես հիմնական հուշարձանի շարունակություն՝ պատկերում է խաչը մեջքին պատկերված զինվորի, որ քայլում է դեպի մատուռ: Հուշարձանին արված գրությունը նշում է, որ այն նվիրվում է «ի հիշատակ հանուն հավատքի ու հայրենիքի նահատակների»: Բացման արարողությանը նշվեց, որ հուշարձանը նվիրված է 2020 թվականից հետո անմահացած հայորդիների հիշատակին<sup>24</sup> (44-օրյա ու սեպտեմբերյան պատերազմների զոհերի հիշատակին), իսկ երկու հուշարձանները կարծես միավորում են Արցախի համար զոհված բոլոր նահատակների հիշողությունը: Բացի այդ, հաշվի առնելով համայնքի սահմանամերձ բնակավայրի վերածվելը, նոր պատերազմի վտանգը և հավանական նոր զոհերը, հուշարձանը հնարավորություն կտա հիշատակելու նաև նրանց սխրանքը՝ չառանձնացնելով նրանց մյուս պատերազմների զոհերից:

Ջերմուկ առողջարանային քաղաքի լոկալ ինքնության ազգային-ազատագրական պայքարի պատումի ամրապնդմանն էր ուղղված համայնքի դեկավար Վահագն Արսենյանի և Հայաստանի ու Արցախի ազգային հերոս, սպարապետ Վազգեն Սարգսյանի եղբոր՝ Արմեն Սարգսյանի որդու՝ Կառլեն Սարգսյանի նախաձեռնությամբ ու ֆինանսավորմամբ 2023 թ. դեկտեմբերին քաղաքում Վազգեն Սարգսյանի արձանի տեղադրումը: Այն 44-օրյա պատերազմի ժամանակ Արցախի Շուշի քաղաքում թողնված սպարապետի արձանի կրկնօրինակն է: Արձանը տեղադրվել է քաղաքի աջափնյակում գտնվող պուրակներից մեկում, որն անվանակոչվել է Վ. Սարգսյանի անունով:

### Եզրակացություններ

Հետպատերազմական Հայաստանում 44-օրյա պատերազմը հիշելու ու մոռանալու պաշտոնական քաղաքականությունը պատերազմը փորձում է ներկայացնել որպես արցախյան ազատամարտի մեկ շարունակական հիշողության մի դրվագ՝ չառանձնացնելով այն Արցախյան առաջին ու Ապրիլյան քառօրյա պատերազմների պայքարի ու զոհաբերության պատումից: Հետխորհրդային Հայաստանի ազգային ինքնության ձևավորման անկյունաքարային այս պատումը քաղաքական վերնախավը փորձում է վերափմաստավորել և ներկայացնել որպես պայքար ու զոհաբերություն հանուն Հայաստանի խաղաղ ապագայի կերտման՝ մեկնաբանելով այն հարևան երկրների հետ խաղաղության քաղաքականության իր ներկա օրակարգի շրջանակներում: Իսկ ահա Կյանքի պուրակի կառուցումն ու պատերազմի զոհերին զինվորական պան-

<sup>24</sup> Աթանեսյան, Գալստյան 2023, ԴԱՆ, Վայոց ձորի մարզ, Ջերմուկ:

թեոններում հիշատակելու ծրագրերը հանդես են գալիս որպես հիշողության նոր քաղաքականության խորհրդանշանային դրսևորումներ:

Պատերազմի հիշատակման պաշտոնական պրակտիկաները ներմուծվում են ՀՀ տարբեր համայնքային միջավայրեր և փոխազդեցությունների մեջ մտնում տեղային գործող կամ կառուցվող պրակտիկաների հետ, որն առավել սուր արտահայտվում է հատկապես սահմանամերձ դարձած համայնքներում: Մեր հետազոտությունը պարզեց, որ հիշողության լանդշաֆտի կազմակերպման որոշակի ընդհանրություններին զուգահեռ՝ սահմանամերձ համայնքներից յուրաքանչյուրն ունի բարդ հիշողության հուշարձանացման սեփական տեղային մեխանիզմներ ու պրակտիկաներ, որոնք հնարավոր է վերարտադրվեն, լրացվեն կամ փոփոխվեն՝ կախված լրկալ մեմոնիկ դերակատարների պատկերացումներից, առաջ քաշվող օրակարգերից ու միմյանց հետ համագործակցելու պատրաստականությունից:

Բացի այդ, նմանատիպ անվտանգային խնդիրների առջև կանգնած սահմանամերձ դարձած համայնքները կարող են միևնույն բարդ հիշողությանը տալ տարբեր աստիճանի կարևորում տեղային ինքնության համակարգում ու համայնքի ապագայի կառուցման տեսլականում: Մեր հետազոտության առաջին դեպքում 44-օրյա պատերազմի հիշողությունը համալրում է Արցախյան ազատամարտի շարունակական հիշողությունը՝ առանձնահատուկ խորհրդանշանային արտահայտում չստանալով քաղաքի հուշարձանային լանդշաֆտում: Միևնույն ժամանակ, Գորիսի դեպքում կարող ենք արձանագրել պատերազմի հիշողության առանձնահատուկ կարևորում քաղաքի խորհրդանշանային լանդշաֆտում ու լրկալ ինքնության պատումի վերաիմաստավորում: Մեկ այլ դեպքում էլ պատերազմի հիշողությունը կարող է վերարտադրել լրկալ ինքնության անկյունաքարային պատումը՝ հանդիսանալով համայնքի նորովի մոբիլիզացիայի շարժիչ ուժ:

Նշված հիշողության քաղաքականություններն ու դրանց հուշարձանացման պրակտիկաները կարող են փոփոխվել՝ կախված խաղաղության օրակարգի հաջողումից կամ ձախողումից ու սահմանամերձ համայնքների համար անվտանգային նոր մարտահրավերներից:

### **Օգտագործված գրականություն**

Աթանեսյան Գ., Գալստյան Մ. 2023, ԴԱՆ, Սյունիքի մարզ, Գորիս:

Աթանեսյան Գ., Գալստյան Մ. 2023, ԴԱՆ, Սյունիքի մարզ, Կապան:

Աթանեսյան Գ., Գալստյան Մ. 2023, ԴԱՆ, Վայոց ձորի մարզ, Ջերմուկ:

Ինչքա՞ն խաչքար դնենք, հասկացանք. եկեք ամենքի վզից էլ մի հատ խաչքար կապենք, ասենք՝ քարշ տվեք, երեխեք. Նիկոլ Փաշինյան, <https://newspress.am/?p=216160&l=am> (ներբեռնման օրը՝ 09.05.24):

Իսառայան Լ., Շագոյան Գ. 2022, Հիշողության քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում. Հետադարձ հայացք անցած 30 տարիներին, Heinrich Boell Foundation South Caucasus, Երևան, 28 էջ:



- ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի ելույթը ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի աշխանային նստաշրջանում, [http://www.parliament.am/news.php?cat\\_id=2&NewsID=19659&year=2023&month=11&day=18](http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=19659&year=2023&month=11&day=18) (ներբեռնման օրը՝ 09.05.24):
- ՀՀ անկախության 30-ամյակին նվիրված գլխավոր միջոցառումը Հանրապետության հրապարակում, հասանելի է՝ ՀՀ անկախության 30-ամյակին նվիրված գլխավոր միջոցառումը Հանրապետության հրապարակում ([youtube.com](https://www.youtube.com)) (ներբեռնման օրը՝ 09.05.24):
- Մարության Հ. 2009, Հայ ինքնության պատկերագրությունը: Յեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը, Երևան, «Գիտություն», 432 էջ:
- Ачкасов В. 2013, «Политика памяти» как инструмент строительства постсоциалистических наций, Журнал социологии и социальной антропологии, 16(4), с. 106-123.
- Малинова О.Ю. 2017, Коммеморация исторических событий как инструмент символической политики: возможности сравнительного анализа, Политика: Анализ. Хроника. Прогноз, N 4 (87), с. 6-22.
- Bernhard M., Kubik J. 2014, A Theory of the Politics of Memory, In: Twenty Years after Communism: The Politics of Memory and Commemoration, edited by Michael Bernhard and Jan Kubik, Oxford and New York, Oxford University Press, p. 7-34.
- Bodnar J. 1992, Remaking America: Public Memory, Commemoration, and Patriotism in the Twentieth Century, Princeton, NJ, Princeton University Press, 312 p.
- Hass K. 1998, Carried to the Wall: American Memory and the Vietnam Veterans Memorial, Berkeley, University of California, 205 p.
- Lebow R. 2006, The Memory of Politics in Postwar Europe, In: The Politics of Memory in Postwar Europe, edited by Richard N. Lebow, Wulf Kansteiner, and Claudio Fogu, Durham, NC, Duke University Press, p. 1-39.
- Nora P. 1989, Between Memory and History: Les Lieux de Mémoire, Representations 26, p. 7-24.
- Verovšek P. 2016, Collective Memory, Politics, and the Influence of the Past: The Politics of Memory as a Research Paradigm, Politics, Groups, and Identities 4, no. 3, p. 529-543.

## ВОЙНА И ПАМЯТЬ: МЕМОРИАЛИЗАЦИЯ 44-ДНЕВНОЙ ВОЙНЫ В ПРИГРАНИЧНЫХ ОБЩИНАХ РА

Гарик Атанесян, Мигран Галстян

Резюме

Вскоре после 44-дневной войны военный пантеон «Ераблур» в Ереване стал официальным символом войны, а затем – основой Программы поддержки, реализуемой правительством РА, на средства которой в ряде общин РА были установлены идентичные надгробия павшим воинам 44-дневной войны, что позволило создать местные военные пантеоны. Примерно через год власти РА объявили о проекте строительства Парка жизни с целью увековечения памяти жертв всех арцахских войн. Основатели проекта декларировали о возведении Древа Жизни как главного символа парка. Несмотря на официальную политику памяти, инициированную политической элитой РА, в приграничных общинах Республики Армения имеет место практика коммеморации 44-дневной войны,

обусловленная особенностями локальных идентичностей и символических ландшафтов, угрозами новой войны и повестками локальных мнемонических агентов (родители, родственники и друзья погибших воинов, благотворители и другие). Процесс мемориализации 44-дневной войны в городе Капан Сюникской области Республики Армения воспроизводит практики коммеморации предыдущей Арцахской войны, не получая при этом особого символического выражения в символическом пространстве города. Между тем, мнемонические агенты приграничного города Горис (в том же регионе) отводят коммеморации 44-дневной войны чрезвычайно важную роль в формировании будущего города, превращая память о войне в один из ключевых нарративов локальной идентичности, а коммеморация войны в курортном городе Джермук, получившем после войны статус приграничного населенного пункта, символически олицетворяет продолжающуюся борьбу за защиту Родины.

**Ключевые слова** – политика памяти, нарратив, идентичность, война, памятник, приграничный город, коммеморативные практики.

#### WAR AND MEMORY: MEMORIALIZATION OF THE 44-DAY WAR IN THE BORDERLAND COMMUNITIES OF RA

Garik Atanesyan, Mihran Galstyan

##### Abstract

Shortly after the 44-day war, Yerevan's Yerablur military pantheon became the official symbol of the war, later becoming the basis for a subsidy program implemented by the RA government, with the funding of which identical gravestones of the fallen soldiers of the 44-day war were placed in a number of RA communities, creating local military pantheons. About a year later, the authorities of the Republic of Armenia announced the founding of the Park of life, in memory of the fallen soldiers of all the Artsakh wars. Instead of the war memorials that have become traditional tools of war commemoration in post-Soviet Armenia, the founders of the project announced the erection of the Tree of Life as the main symbolical representation of the park. In spite of the official memory politics initiated by the political elite of the RA, in the borderland communities of the country we observe local characteristics and practices of commemoration of the 44-day war, conditioned by the peculiarities of local identities and memorial landscapes, threats of a new war and the agendas of local mnemonic actors (parents, relatives and friends of the soldiers, benefactors and others). The process of memorialization of the 44-day war in the city of Kapan, Syunik region of the Republic of Armenia, reproduces the practices of commemoration of previous Karabakh wars, without getting any special symbolic expression in the memory landscape of the city. Meanwhile, the commemoration of the 44-day war is given an extremely important role in the shaping of the future of the community by the mnemonic actors of the borderland city of Goris (in the same region), turning the memory of the war into one of key narratives of the local identity construction process. Meanwhile, the commemoration of the war in the resort town of Jermuk, which received the status of a border settlement after the war, symbolically represents the ongoing struggle to defend the Motherland and the future martyrdom of the heroes.

**Key words** – politics of memory, narrative, identity, war, monument, border community, commemorative practices.

## ИСТОРИЯ ПРОНИКНОВЕНИЯ ЛЕГЕНДЫ О ВЕЧНОМ ЖИДЕ В СРЕДНЕВЕКОВУЮ ЕВРОПУ

**Гоар Карагезян**

Кандидат филологических наук  
Институт литературы им. М. Абеяна НАН РА  
РА, Ереван ул. Григора Лусаворича 15  
Эл. адрес: gkaragyoian@gmail.com  
ORCID: 0009-0005-3038-5735

**Դև** բառույթը<sup>17</sup> հինհայերենյան շրջանում հանդես է եկել հարուստ իմաստային կառուցվածքով՝ գոյականի արժեքով «այս» միջուկային և «ոգի չար, չար հրեշտակ, հոգեղէն արարածք ապստամբեալք յաստուածայ՝ ընդ գլխատորի իրեանց, որ կոչի սատանայ, բանսարկու», «...մերթ՝ պարզապես ոգի, հոգի...» ծայրամասային իմաստույթներով [*Ամենայն կուռք հեթանոսաց դևք են: Չկեսն բարի դևս, և զկեսն չարս անուանեցին:*]<sup>18</sup>: Նույն շրջանի բառարանագրական այլ վկայություններում մի դեպքում ծայրամասիններում հավելվել է հեթանոսական շրջանի պատկերացմամբ *կուռք* իմաստույթը, այս-

<sup>16</sup> Հմմտ. լատ. genius «պահապան/հովանավոր ոգի» (< գերմ. Genius < ֆրանս. génie < անգլ. genius < ռուս. гений): Աշխարհի բազում հնագույն մշակույթներում առկա է հավատը մարդուն հովանավորող աստվածությունների, ոգիների և դևերի նկատմամբ: Կարծիք կա, որ որոշ ոգիներ կարող են մարդուն ոգևորել՝ նրան ներշնչելով ճշմարտության իմացությամբ, օժտելով բազում շնորհներով, որոնցով նա տարբերվում է սովորական մահկանացուներից: Հայերենում նման մարդկանց անվանում են **հանճար** (հմմտ. ռուս. гений, гениальность): Եթե ռուսերենը այն փոխառել է արևմտաեվրոպական լեզուներից, ապա հայերեն համարժեքը իրանյան է (պահլավերենից՝ hančār, պարսկերենից՝ hangār «ճանապարհ, կերպ, եղանակ»): Բառույթի իմաստային կառուցվածքում հինհայերենյան շրջանից կատարվել են էական աստիճանակարգային փոփոխություններ. «*իմաստություն, գիտություն*» միջուկային իմաստույթը, ինչպես նաև «*խելք, խելամտություն*», «*խորհուրդ, խոհեմություն, զգոնություն*», «*ճարտարություն, հնարագիտություն, գիտք, հնարք*» ծայրամասային իմաստույթները չեզոքացվել են (հմմտ. Աւետիքեան, Սիւրմէլեան, Ազգերեան 1837, 45), իսկ աշխարհաբարի խորհրդային շրջանում ռուսերենից *իմաստի պայծենմամբ* ձևավորվել է նոր միջուկային իմաստույթ՝ «մարդկային ստեղծագործական ձիրքի՝ տաղանդի բարձրագույն արտահայտությունը՝ աստիճանը որևէ բնագավառում», նաև՝ *փոխաբերաբար* խոսակցական բառաշերտում որպես գովասանքի արտահայտություն (հմմտ. Մալխասյանց 1944, 50, Աղայան 1976, 821, նաև՝ «**Гений**» ա. 1. հանճար, 2. Հանճար, հանճարեղ մարդ, 3. հնցծ. գերագույն, բարձրագույն մարմնացում. **А добрый ≈ բարի ոգի, բարի հովանավոր, злой ≈ չար ոգի**», Ղարիբյան 1977, 162):

<sup>17</sup> Հայերենում իրանյան փոխառություն է (հմմտ. dēv), նրանից էլ՝ վրացերենին՝ *դեվի*, սերբերենին՝ *divi*, արբաներենին՝ *def*, ասորերենին՝ *devā* (հմմտ. Աճառյան 1926, 657-658, նաև՝ Ջահուկյան 2010, 195), ռուսերենում՝ հին հունարենից (հմմտ. δαίω δαίμων)՝ «*բախտի արժանացնել, բախտ նվիրել, ≈ բաժանել*» իմաստներով:

<sup>18</sup> Հմմտ. Աւետիքեան, Սիւրմէլեան, Ազգերեան 1837, 611:

տեղից էլ՝ դրական երանգավորմամբ՝ դեռ բարի՝ *ոգի*, *հրեշտակ* իմաստույթները, որոնք իմաստով համարժեք են արդեն հիշատակված **գենիուսին**<sup>19</sup>, մեկ այլ դեպքում բառույթի իմաստային կառուցվածքում կատարվել են աստիճանակարգային տեղաշարժեր (հմմտ. «գ. սատանայ, դիանք, ոգի»)՝<sup>20</sup>:

Միջինհայերենյան և վաղաշխարհաբարյան շրջանի բառարանագրության մեջ բառույթի մասին վկայություններ չկան<sup>21</sup>:

Աշխարհաբարի նախախորհրդային շրջանի արևմտահայ և արևելահայ վկայություններում բառույթի իմաստային կառուցվածքում հինհայերենյան շրջանի համեմատությամբ գերակշռում են բացասական երանգավորմամբ իմաստույթները, կատարվել են աստիճանակարգային տեղաշարժեր միջուկից ծայրամաս և հակառակը՝ հիմնականում կառուցվածքի «խտացմամբ»՝ *սալրանա* միջուկային իմաստույթով (հմմտ. «գ. սատանայ, չար ոգի»)՝<sup>22</sup>, նաև՝ «գ. սատանայ, չար ոգի, այս»<sup>23</sup>, նաև՝ որպես հեքիաթի կերպար Արարատյան, Մշո, Վանի խոսվածքներում (հմմտ. «Եօթնգլխեան, կամ երկոտասան գլուխ ունեցող յաղթանդամ գազան՝ հէքաթների մեջ»)՝<sup>24</sup>:

Արևելահայ աշխարհաբարի խորհրդային շրջանի առաջին մեծակտավ վկայությունում, որտեղ ամբողջական կերպով ներկայացվում է բառույթի իմաստային զարգացման ընթացքը, այնուամենայնիվ, սարդում է ժամանակի աթեիստական գաղափարախոսության ազդեցությունը. ծայրամասայինում հավելվել է փոխաբերական կիրառություն (հմմտ. «գ. 1. **Ըստ սնահավատութեան** (-Ա.Մ.) սկզբնապէս՝ ոգի, ոգեղէն գոյացութիւն, բարձր կարողութիւններով, հրեշտակների նման, չար կամ բարի, 2. Քրիստոնէական հասկացողութեամբ՝ չար հրեշտակներ, որոնց գլխաւորը կոչվում է սատանայ, սաղայէլ, որոնք ապստամբեցան աստծու դէմ և որոնք մարդկանց թշնամի են, 3. (հնգ., հզվդպ.) Հեթանոսական աստուած, կուռք, 4. Ժողովրդական հասկացողութեամբ՝ մարդանման արարածներ, բարձր կարողութիւններով օժտված, բարի կամ չար, 5. Հեքիաթների մէջ՝ մարդկային արարածներ՝ անհեթեթ հասակով, սաստիկ ուժեղ և սաստիկ յիմար և մարդակեր, որոնց մարդը յաղթում է ճարպիկութեամբ և հնարագիտութեամբ, 6. (Նման.) Անհաճոյ (տեսքով ու բնաւորութեամբ), ատելի, անդուրեկան մարդ»)՝<sup>25</sup>: Հետագա վկայություններում ծայրամասային փոխաբերական կիրառություններին հավելվել է *չարություն* իմաստույթով վերացական գոյականը (հմմտ. «[Այս

<sup>19</sup> Հմմտ. Զախջախեան 1837, 404:

<sup>20</sup> Հմմտ. Աւգերեան, Ճէլպեան 1865, 240:

<sup>21</sup> Հմմտ. Ղազարյան, Ավետիսյան 2009, Պողոսյան 2014:

<sup>22</sup> Հմմտ. Գաբամաճյան 1910, 368:

<sup>23</sup> Հմմտ. Գայայեան 1938, 101:

<sup>24</sup> Հմմտ. Ամատունի 1912, 164:

<sup>25</sup> Հմմտ. Մալխասյանց 1944, 508:



այն դևն է, ....որ թաքնված է կնոջ մարմնի մեջ...]]<sup>26</sup>, ինչպես նաև՝ «որևէ կրթի՝ մոլության ևն անձնավորում [ապրելության՝ եսասիրության դև]] իմաստությո՞ւր<sup>27</sup>։

Աշխարհաբարի խորհրդային շրջանի արևմտահայ վկայություններում բառույթի իմաստային կառուցվածքում միջուկային իմաստությո՞ւր է դարձել *չար ոգին*, իսկ ծայրամասայիններում տեղ են գտել արևելահայ բառարանագրության վկայությունները (հմմտ. «գ. 1. չար ոգի, 2. սատանայ, այս, ճիվաղ, 3. դիանք, ոգի»<sup>28</sup>, «գ. 1. չար ոգի, 2. սատանայ, այս, ալք»<sup>29</sup>, «գ. 1. հոգի՝ ոգի՝ չար կամ բարի, 2. բարի ոգի, հրեշտակ, 3. չար ոգի, սատանայ, այս, ալք, 4. հեթանոսական աստուած, կուռք, 5. հեքիաթներու մէջ մարդանման վիթխարի՝ ուժեղ եւ մարդակեր արարածներ, հրէշ, 6. ած. անհաճոյ տեսքով եւ բնաւորութեամբ մարդ»<sup>30</sup>):

Բառույթի հիմնայերենյան և արդի շրջանների *հոմանիշային շարքերի* համեմատությունը ակնհայտորեն վեր է հանում նրա իմաստային կառուցվածքում *բառահմաստային տարբերակների քանակական աճը* (հմմտ. **գրաբար**՝ «գ. 1. Այս, դիք<sup>31</sup>, սատանայ: 2. Ոգի, հոգի»<sup>32</sup>, **աշխարհաբար**՝ «գ. 1. (սնտոյ.) Չարք, սատանա, չար ոգի, այս, ոգի, գրող, բեհեղզեբուլ<sup>33</sup>, հրեշ, (հզվդ.) ջին<sup>34</sup>, իբլխ<sup>35</sup>, (հնց.) նեսար, հարամանի, խարամանի, հրամանի,

<sup>26</sup> Հմմտ. Լեզվի ինստիտուտ 1969, 498:

<sup>27</sup> Հմմտ. Աղայան 1976, 291:

<sup>28</sup> Հմմտ. Ճիզմէճեան 1954, 156:

<sup>29</sup> Հմմտ. Տէր Խաչատուրեան, Գանգրունի, Տոնիկեան 1968, 113:

<sup>30</sup> Ճէրէճեան, Տոնիկեան, Տէր Խաչատուրեան 1992, 476:

<sup>31</sup> Հեթանոսական աստված, կուռք:

<sup>32</sup> Հմմտ. Ղազարեան 2006, 211:

<sup>33</sup> Ծագում է եբրայերեն baal՝ «իշխան» և zebub՝ «ճանճ» բառույթներից. Նոր կտակարանում՝ հունարենից՝ «ճանճի իշխան»: «(մեռ., հզվդպ.) գ. 1. Փինիկեցիների և ասորիների հին աստուածը, ճանճիկ (մի հին կուռքի անուն՝ մեծ ճանճի նման), 2. Հրեաների մօտ՝ չար ոգի, դև: Աւետարանի մէջ (Մատթ. ԺԲ, 24) Բեհեղզեբուլը կոչված է դևերի իշխան» (հմմտ. Մալխասյանց 1944, 359, նաև՝ «գ. 2. Սատանայապետ, սատանաների պետ (ըստ հրեաների)» (հմմտ. Լեզվի ինստիտուտ 1969, 311, Աղայան 1976, 185):

<sup>34</sup> Փոխառություն՝ արաբերենից (ջոռո՝ «ոգի»), որը գործածական է հայերենի բարբառներում՝ «դև» իմաստով: Արաբական և պարսկական առասպելաբանության մեջ՝ չար կամ բարի ոգին: Մահմեդական ժողովուրդների առասպելաբանության և բանահյուսության մեջ՝ Ալլահի կողմից «անապակ» (անծուխ) կրակից արարված բազմադեմ ոգի: Բարի ջիները նրանք են, ովքեր ընդունել են մահմեդականությունը և բարին են տարածում, չարերը՝ «անհավատներն» են, որոնք մարդկանց մոլորեցնում են, հիվանդություններ բերում նրանց: Հավատացյալների պատկերացմամբ՝ ջիներն ունակ են տարբեր կերպարանքներով ներդրվել մարդկանց, կենդանիների և բույսերի մեջ: Ջիների նկատմամբ հավատը գոյություն է ունեցել նաև նախամահմեդական արաբական առասպելաբանությունում, որը մահմեդականության տարածմամբ՝ արաբներից անցավ այլ ժողովուրդների՝ մասնակիորեն ձուլվելով նրանց հավատալիքներին: Ռուսերենի ազդեցությամբ արդի խոսույթում հաճախադեպ է **ջինը շի մեջ խցկել**՝ «դիվական՝ սատանայական ուժը զսպել», **ջինը շից** (սափորից, սրվակից) **բաց թողնել/դուրս թռչել**՝ «դիվական՝ սատանայական ուժն արձակվել»։ Բարբառներում՝ «ջղայնություն, բարկություն», **ջինը գալ**՝ «զայրանալ» (հմմտ. Բեդիրյան 2011, 1111, նաև՝ Մալխասյանց 1944, 140, Աղայան 1976, 1242):

<sup>35</sup> Փոխառություն արաբերենից (أَيْلِسْ)՝ սատանայի անվանումը իսլամում, ջինը, որը ջանաց մերձենալ Աստծուն և գոյատևել հրեշտակների շրջապատում, սակայն իր ամբարտավանության

(բրբ.) պև, ճեվեգիկ, խափանուկ, խմբլիկ [տնային]: 2. (առսպ.) Վիշապ, հրեշ, քաջք<sup>36</sup>:

**Ղև** բառույթի իմաստաբանական հատկանիշների տիրույթում հարկ է դիտարկել նաև նրա սեռանիշ և տեսականիշ<sup>37</sup> շարքերը: Բառույթի համար սեռանիշ են **ոգի, էակ**, տեսականիշ են **Սաղայել**<sup>38</sup>, **Բեհեղզերուղ**, **Պիթոն**<sup>39</sup> (հմմտ. վիշապ), **Բելիալ**<sup>40</sup>, **Ասմոդեուս**<sup>41</sup>, **Լյուցիֆեր**<sup>42</sup>, **Սատանա**<sup>43</sup> բառույթները: Վերջիններիս մեկնաբանություններից կարելի է եզրակացնել, որ **ղև** բառույթի նշանակողական-իմաստատարբերակիչ բաղադրիչը կրել է էական փոփոխություններ՝ մասնավորապես բառի սեռատեսակային նշանակության փոփոխության ուղղությամբ: Այս դեպքում բառույթի գերիմաստույթի (հմմտ. այս, ոգի չար) պահպանման պարագայում առկայացվել կամ չեզոքացվել<sup>44</sup> են միջու-

պատճառով վտարվեց երկնքից: Այդ գահավիժումից հետո Իբլիսը թշնամացավ մարդկանց հետ՝ շեղելով նրանց ճշմարիտ ուղուց: Հումանիշային այս շարքում կարող է հավելվել **ագգել** (հմմտ. հուն. angelos՝ «լրաբեր») հնացած փոխառյալ ձևը՝ «չար ոգի, սատանա, սատանայի ծառա» իմաստներով:

<sup>36</sup> Հմմտ. Սուքիասյան 1967, 166:

<sup>37</sup> Սեռանիշությունը (гиперонимия՝ հուն. ὑπερ՝ «գեր-» + όνομα՝ «անուն») և տեսականիշությունը (гипонимия՝ հուն. ὑπό՝ «տակ, ներքևում» + όνομα՝ «անուն») լեզվաբանության մեջ համապատասխանաբար համարժեք են առարկաների, օբյեկտների միևնույն դասին ընդհանրացնող և սահմանափակող անվանում տալուն: Օրինակ, *գազան* տերմինը *շուն* բառի նկատմամբ սեռանիշ է, իսկ *շուն*-ը իր հերթին սեռանիշ է *բուլդոգ*-ի նկատմամբ: Եվ հակառակը՝ *բուլդոգ*-ը տեսականիշ է *շուն* տերմինի նկատմամբ, իսկ *շուն*-ը՝ տեսականիշ՝ *գազան* տերմինի նկատմամբ:

<sup>38</sup> Հմմտ. Սամաէլ (եբր. sam՝ «թոյն» + el՝ «աստված»). *դիվայեպ*, Թալմուդում՝ *կործանարար ուժ* և *մահվան հրեշտակ*: Հայերենի վկայություններում՝ *սապրանա*, *սապրանայապեպ* հնացած, իսկ բարբառներում՝ *չար, նենգ, խորամանկ* փոխաբերական իմաստույթներով (հմմտ. Մալխասյանց 1944, 167, նաև՝ Լեզվի ինստիտուտ 1969, 257, Աղայան 1976, 1266): Ի թիվս նշվածների՝ բառույթի հոմանիշային շարքում տեղ են գտել *բեհեղզերուղ*, *բելիար*, *դժոխապեպ*, *սանդարապեպ*, *սունափա*, *սալադրամա* հնացած և բարբառային ձևերը (հմմտ. Սուքիասյան 1967, 564):

<sup>39</sup> Հմմտ. նաև՝ Պիֆոն. հին հունական առասպելաբանությունում Պառնաս լեռան լանջին տեղակայված Դեֆյան տաճարի մուտքը հսկող վիշապ օձ: Ըստ ավանդության՝ տաճարը հիմնվել է Ապոլոնի կողմից Պիֆոն հրեշավոր վիշապի նկատմամբ տարած հաղթանակի վայրում:

<sup>40</sup> Հմմտ. նաև՝ *Վելիար*, *Վելիալ*, *Բելիել* (հրեերեն՝ belijjal՝ «անգույթ»). հուդայական և քրիստոնեական առասպելաբանություններում ներկայանում է որպես դիվային կերպար, անգոյության, ստի ու կործանման ոգին: Աստվածաշնչում անկյալ հրեշտակն է, որի անունն առնչակից է *ունայնություն*, *ոչնչություն* հասկացություններին: Հանդես է գալիս որպես մարդուն հանցանքի մղող գայթակղիչ արարած, որը պայքար է մղում իր գլխավոր թշնամի Սաղայելի հետ իշխանության և մարդկանց հոգիների համար: Հայերենում վկայվել է *Բելիար* (հմմտ. եբր., հուն. Belial) ձևով՝ «ապստամբ, դիմակալ, փխբ. ժանտ, չար մարդ» (հմմտ. Մալխասյանց 1944, 358):

<sup>41</sup> Հունարեն՝ Asmodaios, եբրայերեն՝ Աշմեդայ՝ Ašmedāy. բղջախոհության դևը:

<sup>42</sup> [*люцифер* < լատ. lux (lucis) լույս + fero բերում եմ՝ *լուսաբեր*]. հռոմեական առասպելաբանության մեջ այգաբացի աստղի մարմնավորումը՝ Վեներա մոլորակը, հին հունականում՝ Ֆոսֆորը, հին սլավոնականում՝ Դեննիցան: Ուշ միջնադարից քրիստոնեական դիցաբանության մեջ՝ անկյալ հրեշտակը՝ սատանան՝ դժոխքի տիրակալը:

<sup>43</sup> [*сатана* < հուն. satan, satanas հակառակորդ, ոսխ < եբր. sātān]. երկնային ուժերի գլխավոր ախտյանը երկրի վրա և երկնքում (հմմտ. Մալխասյանց 1944, 188, նաև՝ Աւետիքեան, Սիրմէլեան, Աւգերեան 1837, 698, Աղայան 1976, 1283 են):

<sup>44</sup> Հմմտ. актуализация, нейтрализация: Առաջինի համար հանձնարարելի է նաև **գործունացում** տերմինային համարժեքը, որը ենթադրում է ներունակային (պոտենցիալ) նշանի հարաբերակցումը իրականությանը, նրա փոխադրումը լեզվից խոսք (հմմտ. Նազարյան 1993, 40, 339):

կային և ծայրամասային իմաստոյթները. դիտվել է բառույթի *խոսքակարգային իմաստի*<sup>45</sup> առարկայական վերաբերության նեղացում կամ ընդլայնում:

Մահմեդական առասպելաբանության մեջ վերոնշյալ շարքին կարող է հավելվել «*Չար, մութ ուժեր*» բառաիմաստային խմբում գործառող բարբառային **շեյթան**<sup>45</sup> բառույթը (հմմտ. «(գվռ.) 1. Սատանա, 2. փխբ. խորամանկ մարդ, 3. (մտերմ.) չարածնի, 4. փխբ. Դրդապատճառ, հրահրիչ, դրդիչ»)՝<sup>46</sup>: Բառույթի փոխաբերական կիրառությունները հարաբերակից են տարբեր բառաիմաստային ենթաբազմություններում գործառող բառույթների հետ: Մասնավորապես, **խորամանկ-ը** իմաստային հարաբերակցություն ունի «**Ըստ բնավորության գծերի, ինչպես նաև դրանցից բխող արարքի, վարքի**» բառաիմաստային ենթաբազմության «*Խաբեություն, խորամանկություն, շողորթություն, կեղծ բարեպաշտություն, կասկածամտություն*» բառաիմաստային խմբի բառույթների հետ, ինչպես՝ (քրք.) **ավանտյուրիստ, խարդախ**<sup>47</sup>, (փխբ.) **արտիստ**, (խսցկ.) **աֆերիստ**, (բրբռ., հյհյ.) **շուն, պնակալեզ** (հմմտ. շողորթոթ), **սրիկա** (հմմտ. ստոր), **պատեհապաշտ** (հմմտ. конъюнктурищик, конформист), **երկերեսանի**<sup>48</sup>, (դրծվ.) **ճգնավորի հագուստով սատանա**, (փխբ.) **ճիզվիտ**<sup>49</sup>, **կարիերիստ**, (քրքգ.) **ամբոխավար** (հմմտ. демагог), **կոմբինատոր**<sup>50</sup>, (քրք.) **կոնսպիրատոր**<sup>51</sup>, (փխբ.) **լակեյ**<sup>52</sup>, (փխբ.) **աղ-**

<sup>45</sup> Փոխառություն՝ արաբերենից (šaytān՝ «մոլորություն, հեռացում»)։ Իսլամական աստվածաբանության մեջ պատկանում է չար ոգիների դասին, որոնք հակոտնեյա են Ալլահին ու մարդկանց։ Նրանց տերը Իբլիսն է, որը նրանց արարել է կրակից կամ ծխից՝ ներկայանալով տարբեր կերպարանքներով, որոնք ապրում են խմբերով տարբեր երկրներում։

<sup>46</sup> Հմմտ. Աղայան 1976, 1105:

<sup>47</sup> Հմմտ. նաև *խաբեբա, նենգ, նենգավոր, գեղծարար, դրուժան*, (փխբ.) *կեղտոր, անազնիվ, (հզվդ.) խարդախամիտ, դժբամիտ, չարարվեստ*, (բրբ.) *էշ ներկող, ներսը՝ սաբանա, դուրսը՝ քահանա*, (փխբ.) *խաչագող, սբահակ, սրիկա, խարդախամիտ* (հմմտ. Սուքիասյան 1967, 259):

<sup>48</sup> Հմմտ. նաև *շողորթոթ, կեղծավոր, մարդահաճ, մարդահաճո, երեսպաշտ, հաճոյատեր, քծնող, քծնատեր, քծնաբան, շողոմարար, շողոմբոր, փաղաքուշ, փարիսեցի, կեղծապաշտ, կեղծապարիշտ, կեղծանույշ*, (հնգ.) *երկերես, մարդեղուց, սուրակասպաս, շնորհավաճառ*, (բրբ.) *պիղպոտ, երկերես, երեսպարան, երկու դուռն շուն, շրջոնք-շիրակ, երկդիմի*, (հզվդ.) *երկլեզու, երկլեզվանի* (տե՛ս և հմմտ. Սուքիասյան 1967, 189):

<sup>49</sup> Եզուիտ (ֆրանս. jésuite՝ «յիսուսեան»), աճ., գ. 1. Նա որ պատկանում է Յիսուսեան կարգին, յիսուսեան կրոնատոր, 2. Փոխ. Կեղծատոր, խարդախ, նպատակին հասնելու համար միջոցների մեջ խտրութիւն չդնող. Ճիզուիթ (հմմտ. Մալխասյանց 1944, 550):

<sup>50</sup> Փոխառություն լատիներենից (combinare՝ բառացի՝ «միահյուսել, միավորել»)՝ ռուսերենի միջնորդությամբ (հմմտ. комбинатор)՝ «գանազան խարդախ ու խորամանկ գործողությունների ունակ մարդ՝ որևէ նպատակի հասնելու համար», նաև հոմանիշ՝ ռուսերենից՝ **машинатор** (լատ. machinatio՝ «գործիք», փխբ. «խորամանկություն»՝ մախինացիա՝ «խորամանկ մանր խարդաասնք, ինտրիգ, գաղտնի արարք, նպատակին հասնելու անբարեխիղճ միջոց» (հմմտ. Մալխասյանց 1944, 235):

<sup>51</sup> Փոխառություն լատիներենից (conspirator՝ «դավադիր»)՝ ռուսերենի միջնորդությամբ։ Իշխանություններից կամ ընդհանրապես գաղտնի, ընդհատակյա գործունեություն իրականացնող։

<sup>52</sup> Փոխառություն ֆրանսերենից (laquais՝ «սպասավոր»)։ Խոսակցական բառապաշարում՝ ստրկամիտ՝ ծառայամիտ՝ ստորաքարշ մարդ՝ արհամարհական երանգավորմամբ, նաև՝ *տողուն, գեպնաքարշ, նվաստ, (հզվդ.) վայրաքարշ, երկրասող, երկրաքարշ, գեպնասող, գեպնագնաց* (հնգ.) *գեպնանախանձ, երկրանախանձ* (հմմտ. Սուքիասյան 1967, 587):

**վես**, (փխբ.) **աճպարար**<sup>53</sup> (հմմտ. մանիպուլյատոր), **գրագող**<sup>54</sup> (հմմտ. плагиатор), (փխբ., արհմ.) **պոլիտիկան**<sup>55</sup>, **ինքնակոչ**, **սիմուլյանտ**<sup>56</sup>, (փխբ.) **փարիսեցի**<sup>57</sup>, **կասկածամիտ** (հմմտ. փոփոխամիտ), (փխբ.) **քամելեոն**<sup>58</sup>, **ճարպիկ**<sup>59</sup> (հմմտ. փխբ. սատանա), **շառլատան**<sup>60</sup> ևն: Այս բառախմաստային խմբում գործառուցում են նաև հարաբերակից *դարձվածքներ*, ինչպես՝ (խսցկ., արհմ.) **քուրջի կտոր**՝ «անկամ, թուլամորթ մարդ, փալաս», **երկերեսանի Յանուս**<sup>61</sup> «խարդախ մարդ», (խսցկ., հեգն.) **բարի քեռի**՝ «աչառու հովանավոր»:

**Շեյթան** բառույթի փոխաբերական կիրառություններից հաջորդ՝ **հրահրիչ** բառույթը գործառուցում է «**Ըստ բնորոշ կամ մեկանգամյա գործողության, արարքի, գործառույթի**» բառախմաստային ենթաբազմության «*Հիմնում, սրբեղծում, սկզբնավորում, վերսրբեղծում*» բառախմաստային խմբի «*Սկզբնավորում, սկզբնապատճառ*» բացասական գնահատողական բաղա-

<sup>53</sup> Արաբերենի aḡab՝ «զարմանալի» + հայ. «արար» բաղադրությամբ՝ «զարմանալի բաներ անող, ձեռնածու, (փխբ.) խաբեբա» (հմմտ. Մալխասյանց 1944, 54): Հմմտ. նաև՝ ռուսերենից՝ мистификатор՝ **միստիֆիկատոր**՝ «մոլորիչ, խաբեբա» (հմմտ. Ղարիբյան 1977, 484): Տե՛ս և հմմտ. նաև՝ **Միստիֆիկացիա** [*мистификация* < ֆր. mystification < հուն. mystēs զաղտնիք իմացող + լատ. facere անել], գ. Դիտավորյալ մոլորեցում՝ խաբկանք՝ խաբեություն (հմմտ. Հայրապետյան 2011, 369):

<sup>54</sup> Պլագիատ [*плагиат* < լատ. plagiatus՝ «գողացված, հափշտակված»], գ. (խսցկ.) 1. Գրագող՝ այլ հեղինակության յուրացնող, բանագող, 2. Գրագողություն (հմմտ. Հայրապետյան 2011, 433):

<sup>55</sup> [*политикан* < ֆրնս. politiguante < հուն.], գ. ած. (հնց.) 1. Քաղաքագետ, 2. (արհմ.) Անսկզբունք քաղաքագետ, շահադիտական նպատակներով գործունեություն ծավալող անձ (հմմտ. Հայրապետյան 2011, 443):

<sup>56</sup> [*симулянт* < լատ. simulans (simulantis)], գ. (խսցկ.) Որևէ բան ձևացնելով կեղծող, մի բանից խուսափելու համար կեղծ կերպով իրեն հիվանդ՝ անաշխատունակ ևն ձևացնող մարդ, կեղծակերպիչ (հմմտ. Հայրապետյան 2011, 509):

<sup>57</sup> [*արամ. perrussim կամ perissin*՝ «բաժանված», < յուն. farisaïos], գ. 1. Հրէաստանում Քրիստոսի ժամանակ գոյութիւն ունեցող մի կրօնական կուսակցութեան անդամ, հակառակ սաղոնկեցիներին և եսսէականներին, կողմնակից հրեաների ազատագրման, թունդ ազգասէր և կրօնական ծէսերին խիստ հավատարիմ, 2. Փոխ. Բարեպաշտ ձևացող, կեղծաւոր մարդ (հմմտ. Մալխասյանց 1944, 491): Հմմտ. նաև (գրք.) «**Ֆիլիստեր** (< филистёр < գերմ. Philister, փղշտացի), գ. Նեղ, քաղբենիական աշխարհայեացքով և կեղծաւոր վարքով մարդ» (հմմտ. Մալխասյանց 1944, 626, նաև՝ *արհամարհական երանգով*՝ հմմտ. Լեզվի ինստիտուտ 1969, 819, Աղայան 1976, 1605):

<sup>58</sup> [*хамелеон* < հուն. chamaileōn < chamai «երկրի վրա» + leon «առյուծ»], գ. 1. (կենդ.) Մողեսների խմբին պատկանող կենդանի, որ ընդունակ է գունափոխման շրջապատի համապատասխան, գույնփոխուկ, 2. (փխբ.) Անհաստատ համոզմունքների տեր, ամենքին հարմարող, տիրող հոսանքին հարող մարդ (հմմտ. Հայրապետյան 2011, 590, Մալխասյանց 1944, 543, Լեզվի ինստիտուտ 1969, 704, Աղայան 1976, 1550):

<sup>59</sup> Հմմտ. նաև՝ *ճարտար, հնարագետ, ճարի, աչքաբաց*, (հզվդ.) *աջողածեռն, արագածեռն, վարժ, փորձ*, (բրբ.) *ջիք, ճսրիկ, ճարիկ, վժվժան, աչքը բաց, բացաչք, բսբոր, պսպոր, սիկ, սլլիկ, սլլուկ, սկլմուր, սպլիկ, սպլու, սպլուզ, սպլպորիկ, սկլմուր, սլխորուն, սլվլիկ, սլու, սլվուն, խլվլիկ, շանկոճի, չուսր, չուսրիկ, չսրիկ, ճսրիկ, փիճ, շքաք, սափանա, կտրող-կապող, մոր ծիծ կտրող: Կախարդ* (հմմտ. Սուքիասյան 1967, 422):

<sup>60</sup> [*шарлатан* < ֆր. charlatan «դեղավաճառ, հեքիմ»], գ. ած. Միամիտ մարդկանց հավատը՝ վստահությունը չարաշահող խաբեբա (հմմտ. Հայրապետյան 2011, 397):

<sup>61</sup> Հին հռոմեական Յանուս աստծու անունից, որը մարմնավորում էր ամեն ինչի մուտքն ու ելքը, սկիզբն ու ավարտը, անցյալն ու ապագան՝ միմյանց հակադիր նայող դեմքերով, որոնցից մեկը հաճախ լինում է երիտասարդ, մյուսը՝ ծեր:

դրիչով ենթախմբում՝ իմաստով հարաբերակից լինելով հետևյալ բառույթների հետ՝ **մեղավոր**<sup>62</sup>, **սադրիչ**<sup>63</sup>, **նախաձեռնող**<sup>64</sup>, (գրք.) **ներշնչող**<sup>65</sup>, **նենգարկու** (հմմտ. պրովոկատոր<sup>66</sup>):

Բառույթը լայնորեն կիրառվել է հայերենի *դարձվածքներում*, ինչպես՝ **յոթգլխանի դև**՝ «ամենակործան հրեշ», **յոթը գլխին դև**՝ «գազանային բնավորության տեր մարդ», մեկի **մեջ դև(ը) բույն դնել**՝ «մեկի ներսում չար մտքեր՝ մտադրություն(ներ) հաստատվել», մեկի **մեջ դևը գլուխ բարձրացնել**՝ «մեկի ներսում եղած չար միտքը՝ մտադրությունը զարթնել, սատանան փորը մտնել», **դևը մեկի մեջ** (գլուխը, փորը) **մտնել**՝ «(հանկարծ) չար միտք հղանալ», **դևի ծնունդ**՝ «չարագործ, խաբեբա մարդ», **դևու փարջա** [«կտոր»]՝ «զորավոր», **դևերը բերել**՝ «զայրացնել, կատաղեցնել», **դևի ծիծ՝ կաթ ծծել**՝ «խորամանկ ու հնարագետ լինել» (հմմտ. Բեդիրյան 2011, 384, Աղայան 1976, 291), նաև՝ *շրջասություններում*, ինչպես՝ **դևերի երկրպագու**՝ «անհավատ, անօրեն», **դևերի իշխան**՝ «սատանա (Բեդեղզեբուր)»<sup>67</sup>:

Բառույթը պատկանում է բառերի այն **դասին**, որոնք պայմանավորել են լեզվում նոր բառերի առաջացումը բառակազմական գործընթացների արդյունքում. այն բաղադրական հիմք է հանդիսացել խոսքիմասային տարարժեք նորակազմությունների համար՝ ոճական զանազան դրսևորումներով, ինչը մի հավելյալ ցուցիչ է բառույթի իմաստային կառուցվածքի ծավալների, պատմության հոլովությունների լեզվակիրների մտղորտի (նոոսֆերայի) փոփոխությունների մասին, ինչպես՝ **դիվային**, **դիվապաշտ**, **դիվահար**, (բնստ.) **դիվաբաշխ**, **դիվաբարո**, **դևերես**, **դիվոտել**, **դևուկ** և այլն: Բառույթով գործառուց են զանազան՝ հիմնականում ռուսերենից փոխառյալ ոչ փոխաբերական և փոխաբերական կայուն կապակցություններ, որոնք առավելապես գործածական են գեղարվեստական ոճերում և առավելապես չունեն բառարանային վկայություններ, ինչպես՝ **թախծոտ դև**, **դժոխքի** ≈, **թշնամանքի** ≈, **ատելության** ≈, **եսասիրության** ≈, **գինեմոլության** ≈ և այլն, նաև՝ **դիվային**

<sup>62</sup> Տե՛ս **մեղապարտ**, հմմտ. նաև *մեղսագործ*, *մեղսապարտ*, *հանցավոր*, *հանցագործ*, *հանցապարտ*, *պարժապարտ*, *մեղադրյալ*, *գլխապարտ*, (հզվդ.) *դատապարտյալ*, *մեղապարտյալ*, *մեղսակիր*, *վնասապարտ*, *մեղանշական*, *մեղսուր*, (հնց.) *թիապարտ*: *Ոճագործ*, *եղեռնագործ*, *պարտազանց*, *զանցառու* (հմմտ. Սուքիասյան 1967, 450):

<sup>63</sup> Հմմտ. նաև *գրգռիչ*, *դրդիչ*, (խսցկ.) *բզբզող*, (զվո.) *դիսիկ դնող* (մեկին մի բանի մղող), (ժող.) *տակը ցնող*, *տակը փորող*, *տակը քանդող* (հմմտ. Սուքիասյան 2009, 972):

<sup>64</sup> Հմմտ. նաև *ծեռնարկող*, *ծեռնարկիչ*, (արևմտհ.) *նախաձեռնարկ* (նախաձեռնություն ցուցաբերող) (հմմտ. Սուքիասյան 2009, 810):

<sup>65</sup> Մարդ, որը որևէ մեկին ներշնչում է սովորաբար անցանկալի կամ դատապարտելի բան:

<sup>66</sup> [*provokator* < լատ. *provocator*՝ «մարտահրավեր նետող»], գ. (խսցկ.) 1. Պրովոկացիաների միջոցով գործող գաղտնի գործակալ, սադրիչ, 2. Պրովոկացիաներ սարքող՝ առաջ բերող գործակալ, 3. Դավաճանական նպատակներով խռովություններ առաջացնող մարդ, խռովարկու, 4. Մատնիչ (հմմտ. Հայրապետյան 2011, 458-459):

<sup>67</sup> Հմմտ. Բեդիրյան 2010, 75:

բառույթով, ինչպես՝ դիվային **էակ**, ≈ **ծագում**, ≈ **քրքիջ**, ≈ **բնավորություն**, ≈ **մթնուրտ**, ≈ **կերպարանք**, ≈ **լեզվով** և այլն:

### Եզրակացություններ

1. *Առասպելաբանական նշանակությամբ՝ դևերը* գերբնական արարածներ են, կիսաստվածներ կամ ոգիներ, որոնք միջանկյալ դիրք են գրավում մարդկանց և աստվածների միջև՝ օժտված մարդկանց, ժողովուրդների կյանքի ու ճակատագրի վրա ազդեցություն թողնելու ունակությամբ: *Կրոնական նշանակությամբ՝* դևերը չար ու հալածող ոգիներն են, սատանան, անկյալ հրեշտակը:

2. **Դև** բառույթը պատկանում է բառույթների այն *դասին*, որի իմաստային կառուցվածքում տարաժամանակյա դիտարկմամբ ընթացել են էական աստիճանակարգային տեղաշարժեր միջուկային և ծայրամասային իմաստույթների միջև: Բառույթի հինհայերենյան և արդի շրջանների *հոմանիշային շարքերի* համեմատությամբ դիտվել է նրա իմաստային կառուցվածքում *բառաիմաստային տարբերակների քանակական աճ* (հմմտ. **գրաբար՝** 1. *Այս, դիք, սափանայ*, 2. *Ոգի, հոգի, աշխարհաբար՝* 1. *Չարք, սափանա, այս, բեհեղզերուղ, ջին, իբլիս, գրող, խափանուկ, խմբիկ*, 2. *Չաստված, 3. Հրեշ*), որը, պայմանավորված մարդու ճանաչողական գործունեության պատմական ընթացքով՝ ընդհանրացման և մասնավորեցման մտածական գործընթացներով, հանգեցրել է *որակական աճի* մի դեպքում *փոխաբերության* (հմմտ. **դև**՝ «անհաճո, ատելի, անդուրեկան մարդ», «չարության մարմնացում», «որևէ կրքի՝ մոլության անձնավորում»), մեկ այլ դեպքում՝ *գործաբանական բաղադրիչի փոփոխության ճանապարհով*, երբ բառիմաստի դրական երանգավորումից անցում է կատարվում դեպի բացասականը և հակառակը՝ բացասականից՝ դրական կամ չեզոք՝ պահպանելով կամ փոփոխելով հիմնանշանակային բաղադրիչը՝ գերիմաստույթը (հմմտ. չար/բարի ոգի). մեր պարագայում այս *անցումները* հերթագայվում են՝ պայմանավորված բառույթի ժանրային-ոճական կիրառությամբ (հմմտ. **հեքիաթներում, ժողովրդական հավատալիքներում՝** բարի/չար դևեր, **կրոնում՝** չար հրեշտակ, **բանաստեղծական-գրքային՝** թախծոտ դև, ատելության դև և այլն):

3. Բառույթով պայմանավորվել է նոր բառերի առաջացումը մի դեպքում *բառակազմական գործընթացների*, ինչպես՝ *բաղադրմամբ* (հմմտ. դիվա-հար, դիվային), *կապակցական դաշտի ընդլայնմամբ* (հմմտ. յոթգլխանի դև, դևի ծնունդ), *շրջատությամբ* (հմմտ. դևերի իշխան), մյուս դեպքում՝ *փոխառության* արդյունքում բառույթի *տեսակային կազմի* ընդլայնմամբ (հմմտ. Սադայել, Բեհեղզերուղ, Պիթոն, Բելիալ, Աամոդեուս և այլն), որոնք այսօր պասիվ բառապաշարի իրողություններ են՝ պատմաբաներ:

4. «*Չար, մութ ուժեր*» բառաիմաստային խմբում գործառող որոշ բառույթների (հմմտ. շեյթան) փոխաբերական իմաստույթները հարաբերակից են **այլ** բառաիմաստային բազմությունների (ենթաբազմությունների) բառույթների համարժեք փոխաբերական իմաստույթների հետ, որոնց օտար համարժեքներն առավելապես գործածական են արդի հայերենի բառապաշարի զանազան ոճական շերտերում (հմմտ. ավանտյուրիստ, խարդախ, աֆերիստ, ճիզվիտ, սադրիչ և այլն):

5. Ճանաչողական-տարածամանակյա դիտանկյունից համադրելով բառույթի իմաստային համակարգը նրա հետահայաց ճանապարհի հետ՝ այն դասվում է բառույթների այն դասին, որոնց իմաստային կառուցվածքը բառի նույնականության տեսակետից թեև կրել է էական փոփոխություններ հին-հայերենյան շրջանից, այնուամենայնիվ պահպանել է այդ շրջանի հոգևոր-կրոնական գերիմաստույթը (հմմտ. ոգի չար): Մեր քննությամբ վերստին փաստվում է լեզվի զարգացման այն անշրջելի օրինաչափությունը, որ *բառային աշխարհը* միշտ ձգտում է համապատասխանել *հասկացական աշխարհին*՝ առավելապես հին բառերին նոր իմաստներ հաղորդելու ճանապարհով:

#### **Օգտագործված գրականություն**

- Աբեղյան Մ. 1975, Երկեր, հ. Է, Հայ ժողովրդական հավատքը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 602 էջ:  
 Աղայան Էդ. 1976, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. Ա-Բ, Երևան, «Հայաստան», 1642 էջ:  
 Ալիշան Ղ. 1910, Հին հաստք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, Սուրբ Ղազար, 566 էջ:  
 Աճառյան Հր. 1926, Հայերեն արմատական բառարան, հ. Ա-Դ, Երեւան, Երեւանի համալսարանի հրատ., 2705 էջ:  
 Աճառյան Հր. 1942-1962, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա-Ե, Երևան, ԵՊՀ հրատ., 3155 էջ:  
 Ամատունի Ս. 1912, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի, 728 էջ:  
 Ալգերեան Մ., Ճէլայեան Գ. 1865, Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, Սուրբ Ղազար, 856 էջ:  
 Աւետիքեան Գ., Սիրմէլեան Խ., Ալգերեան Մ. 1837, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1-2, Վենետիկ, տպարան ի Սրբոյն Ղազարու, 2235 էջ:  
 Բեդիրյան Պ. 2010, Հայերեն շրջասությունների բառարան, Երևան, «Էդիթ Պրինտ», 316 էջ:  
 Բեդիրյան Պ. 2011, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 1410 էջ:  
 Գաբամանճյան Ս. 1910, Նոր բառագիրք հայերեն լեզուի, Կ. Պօլիս, տպագրութիւն Ռ. Սազաեան, 1414 էջ:  
 Գայայեան Յովհ. 1938, Բառարան զանձարան հայերեն լեզուի, Գահիրէ, տպագրութիւն Գալֆա, 550 էջ:  
 Հայրապետյան Ա. 2011, Օտար բառերի բառարան, Երևան, հեղինակային հրատ., 643 էջ:  
 Հարությունյան Ս. 2006, Հայ հին առասպելաբանության հիմնական գծերը, Պատմաբանասիրական հանդես, N 3, 320 էջ:  
 Հարությունյան Ս. 1987, Հայ հին վիպաշխարհը, Երևան, «Արևիկ», 180 էջ:

- Հր. Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտ 1969, ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1-4, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 2763 էջ:
- Ղազարեան Ռ. 2006, Գրաբարի հոմանիշների բառարան, Անթիլիաս, Մեծի Տանն Կիլիկոյ կաթողիկոսութիւն, 707 էջ:
- Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ. 2009, Միջին հայերենի բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 841 էջ:
- Ղարիբյան Ա. 1977, Ռուս-հայերեն բառարան, Երևան, «Հայաստան», 1472 էջ:
- Ճերէճեան Գ., Տօնիկեան Փ., Տէր Խաչատուրեան Արտ. 1992, Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրուֆ, Կ. Տօնիկեան եւ Որդիք հրատարակչատուն, հ. 1-2, 2530 էջ:
- Ճիզմէճեան Պ. 1954, Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. 1-2, Հալէպ, տպարան Անի, 2224 էջ:
- Մալխասեանց Ստ. 1944, Հայերէն բացատրական բառարան, հ. Ա-Ե, Երեւան, ՀՍՍՌ պետհրատ, 2409 էջ:
- Նազարյան Ա. 1993, Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարան, Երևան, «Ապոլոն», 656 էջ:
- Պողոսյան Ն. 2014, Նորահայտ բառեր վաղաշխարհաբարյան աղբյուրներում, Երևան, ԵՊՀ հրատ., 224 էջ:
- Ջախջախեան Մ. 1837, Բառգիրք ի բարբառ հայ և իտալական, Վենետիկ, տպարան Սրբոյն Ղազարու, 1535 էջ:
- Ջահուկյան Գ. 2010, Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, «Ասողիկ», 820 էջ:
- Սուքիասյան Ա. 1967, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 685 էջ:
- Սուքիասյան Ա. 2009, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 1242 էջ:
- Տէր Խաչատուրեան Արտ., Գանգրունի Հ., Տօնիկեան Փ. 1968, Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրուֆ, Կ. Տօնիկեան եւ Որդիք հրատ., 932 էջ:
- Օդաբաշյան Ա. 1978, Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 9, Երևան, ՀՍՍՀ ԳԱ «Գիտություն», 180 էջ:
- Арутюнян С. 2008, Армянская мифология, Мифы народов мира. Энциклопедия, гл. ред. Токарев С.А., Москва, электронное издание, 1147 с.
- Арутюнян С. 1990, Грох. Торк Ангех, Мифологический словарь, гл. ред. Е.М. Мелетинский, Москва, «Советская энциклопедия», 672 с.
- Пиотровский Б. 1939, Вишапы. Каменные статуи в горах Армении, Л., Армянский филиал АН СССР, 40 с.

## МИФОЛОГИЧЕСКОЕ ПРОИСХОЖДЕНИЕ ЛЕКСЕМЫ «ДЕМОН» И РАЗВИТИЕ СЕМАНТИЧЕСКОЙ СТРУКТУРЫ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Арташес Мартиросян

Резюме

Лексема **демон** относится к классу лексем, семантическая структура которых с точки зрения идентичности слова претерпела значительные изменения начиная с древнеармянского периода, сохранив при этом свое изначальное всеобъемлющее духовно-религиозное значение. Сравнение сино-



нимического ряда лексемы древнеармянских и современных периодов выявляет *количественное увеличение лексических вариантов* в его семантической структуре, обусловленное историческим ходом познавательной деятельности человека, процессами обобщения и детализации, приведшими к *качественному росту*, в одном случае через *метафору*, в другом – через *изменение прагматической составляющей*, когда происходит переход от положительной окраски значения слова к отрицательной и наоборот, от отрицательной к положительной или нейтральной, с сохранением или изменением ключевого компонента – архисемы – **злого** или **доброго духа**. Исследование подтверждает нашу гипотезу о необратимой закономерности развития языка, согласно которой *лексический мир* всегда стремится соответствовать *понятийному миру*, особенно посредством придания новых значений старым словам.

**Ключевые слова** – демон, мифологическое значение, лексико-семантическое значение, понятийный мир, лексический мир, когнитивно-транстемпоральное рассмотрение, духовно-религиозная архисема.

#### MYTHOLOGICAL ORIGIN OF THE LEXEME "DEMON" AND DEVELOPMENT OF SEMANTIC STRUCTURE IN THE ARMENIAN LANGUAGE

Artashes Martirosyan

##### Abstract

The lexeme **demon** belongs to a class of lexemes, the semantic structure of which, in terms of the identity of the word, has undergone significant changes since the ancient Armenian period, while retaining its original comprehensive spiritual and religious meaning. A comparison of the *synonymic series* of the lexeme of ancient Armenian and modern periods reveals a *quantitative increase in lexical variants* in its semantic structure, due to the historical course of human cognitive activity, the processes of generalization and detailing, which led to *qualitative growth*, in one case through *metaphor*, in the other through *a change in the pragmatic component*, when there is a transition from a positive coloring the meaning of a word to negative and vice versa, from negative to positive or neutral, with the preservation or change of the key component – archisemes are of an **evil** or **good spirit**. The study confirms our hypothesis about an irreversible pattern of language development, according to which the *lexical world* always strives to correspond to the *conceptual world*, especially by giving new meanings to old words.

**Key words** – demon, mythological meaning, lexical-semantic meaning, conceptual world, lexical world, cognitive-trans-temporal consideration, spiritual and religious archiseme.

# ՏԱՐԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓԻԹԵՐ ՍՈՒՐՅԱՆԻ ՎԻՊԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

## Նեյի Գալստյան

Բանասիրական գիտությունների թեկնածու

Մ. Խորենացու անվ. համալսարան

ՀՀ, Երևան, Կորյուն 19ա

Էլ հասցե՝ hasmikbakurgalstyan@mail.ru

ORCID: 0009-0003-3973-4378

Հոդվածը ներկայացվել է 09.04.2024, գրախոսվել է 19.04.2024, ընդունվել է տպագրության 02.08.2024

DOI: 10.53548/0320-8117-2024.2-258

### Ամփոփում

XX դարում երկու համաշխարհային և տարածաշրջանային պատերազմները, ապա-գաղութացումը գաղթականների, փախստականների և աքսորյալների կյանքում ունեցել են որոշիչ դեր:

Տարագիր գրականությունը գաղթի, աքսորի, նոր կյանքի ակնկալիքով օտար երկիր տեղափոխվածների գրականություն է: Փ. Սուրյանը Վ. Սարոյանի նման իր հերոսներին տարածում է աշխարհով մեկ, տանում բազմաթիվ դժվարին ճանապարհներով, սակայն հաղթահարած դուրս բերում դեպի մեծ աշխարհ: Ինչպես քսաներորդ դարի մի շարք հեղինակների, այնպես էլ Սուրյանի ստեղծագործություններում հերոսները ստիպված են անցնել չարաբաստիկ դարի պարտադրված և թելադրող կանոնների միջով: Կյանք, որը պատուհաս է բոլորի համար, բայց հանուն որի պայքարում են բոլորը, իսկ կրկնակի դժվարությամբ և մաքառումով են պայքարում նրանք, ովքեր կտրված են իրենց արմատներից և ճակատագրի բերումով հայտնվել են օտար և խորթ միջավայրում: Սակայն նրանք ոչ թե բողոքում են այդ միջավայրից, այլ ջանում են ինտեգրվել և դառնալ այդ միջավայրի մի մասնիկը: Կյանքի ճշմարիտ դառը պատկերների միջոցով գրողը ցույց է տալիս տարագիր խլիպների գոյավիճակը օտար հորիզոններում, ուրվագծում ժողովրդի բեկորների ճակատագիրը, հաճումները, կարոտը հայրենի եզերքի հանդեպ:

**Բանալի բառեր՝** տարագիր գրականություն, օտար ափեր, գաղթ, աքսոր, ազգային արմատներ, օտար բարքեր, փորձություններ:

### Ներածություն

Հայապահպանման գործում անկրկնելի է անգլիագիր Փիթեր Սուրյանի դերը: Նա սկզբից ևեթ անդամագրվել է տարագիր գրականությանը: «Ես ամերիկացի գրող եմ և որպես հայկական սփյուռքի անդամ՝ հայ գրող եմ: Սփյուռքը նորություն չէ մեզ համար: Մեր պատմության մեծ մասը, - վկայում է Փիթեր Սուրյանը, - ծավալվել է այս կամ այն սփյուռքում: Եվ, իհարկե,

«սփյուռքյան» մեր պատմությունն առավելապես ծնունդ է ամենասուկալի դժբախտությունների»<sup>1</sup>:

Ամերիկյան գրականության մեջ հետագիծ ունեցող ծագումով հայ արձակագիր Փիթեր Սուրյանը սրտով ու հոգով միշտ կարեկիր է եղել հայության խնդիրներին, ակտիվորեն մասնակցել է Հայրենիքի և Սփյուռքի գրական-մշակութային կյանքին:

Փիթեր Սուրյանի անկուտրում ոգին և ուժն են, որ նրան մղել են գրական ասպարեզ, շնորհիվ որոնց կարողացել է իր ազատ ծայնը հնչեցնել ի լուր աշխարհի, որ համայն մարդկությունը արարող է, ստեղծող և կերտող: Նա մեծ դեր է ունեցել հայ-ամերիկյան անգլիագիր գրական կյանքի կազմակերպման գործում, որին անմնացորդ նվիրվել է XX դարի 50-ական թվականներից: Փիթեր Սուրյանը ամերիկահայ անգլիագիր դասական հեղինակների՝ Լ.՝Ռ. Սյուրմեյանի, Վ. Սարոյանի կողքին է՝ գրական անվիճելի տաղանդով, ընդգծված քաղաքացիական կեցվածքով, որը լի էր ստեղծագործական ավյունով: Հեղինակ է բազմաթիվ պատմվածքների, էսսեների, գրաքննադատական և վերլուծական հոդվածների (մասնավորապես, նվիրված Վիլյամ Սարոյանի և Ֆրանց Վերֆելի ստեղծագործություններին), երեք վեպերի՝ «Միրի» ("Miri", 1957), «Լավագույնը և վատթարը ժամանակներից» ("The Best And Worst Of Times", 1961) և «Դարպաս» ("The gate", 1965), որոնցում պատկերել է ամերիկյան տարագիրների կյանքը՝ անկախ ազգային պատկանելությունից, տեղի ու կոչման համար որոնումները, աններդաշնակ հասարակության մեջ նրանց թշվառությունն ու մենակության դրաման, պարզամտությունը, առուծախի ոգու նկատմամբ ծաղրը, իրականության ու երազանքի հակադրությունը, անհատի ներքին ազատությունն ու արժանապատվությունը, մարդկային զգացմունքների գեղեցկությունը, սիրո և բարու, մարդկանց փոխընթերցման ու համերաշխության հաստատումը:

Սուրյանը Սարոյանի նման իր հերոսներին տարածում է աշխարհով մեկ, տանում բազմաթիվ դժվարին ճանապարհներով, սակայն հաղթահարած դուրս բերում դեպի մեծ աշխարհ: Ինչպես քսաներորդ դարի մի շարք հեղինակների, այնպես էլ Սուրյանի ստեղծագործություններում տարագիր հերոսները ստիպված են անցնել չարաբաստիկ դարի պարտադրված և թելադրող կանոնների միջով. կյանք, որը պատուհաս է բոլորի համար, բայց հանուն որի պայքարում են բոլորը, իսկ կրկնակի դժվարությամբ և մաքառումով են պայքարում նրանք, ովքեր կտրված են իրենց արմատներից և ճակատագրի բերումով հայտնվել են օտար և խորթ միջավայրում: Սակայն

<sup>1</sup> Սուրյան 2017, 6 Մայիս Գրողը և Սփյուռքը, «Գրական թերթ» (Ելույթ Օտարագիր հայ գրողների 4-րդ համաժողովում, Երևան, 12 հոկտեմբերի, 2011 թ.):

նրանք ոչ թե բողոքում են այդ միջավայրից, այլ ջանում են ինտեգրվել և դառնալ այդ միջավայրի մի մասնիկը: Կյանքի ճշմարիտ դառը պատկերների միջոցով գրողը ցույց է տալիս տարագիր խլիպների գոյավիճակը օտար հորիզոններում, ուրվագծում ժողովրդի բեկորների ճակատագիրը, հաճումները, կարոտը հայրենի եզերքի հանդեպ:

Ամերիկահայ գրողն իր իսկ բնորոշմամբ՝ «Սարոյեանից յետոյ երկրորդ արուեստագէտն է, որ խորաքնին «ընթրիքի», այսինքն՝ իմաստալից գրոյցի է նստում «օտարների հետ», յաճախ օտարի, յաճախ հայի զգացումներով ու ճանաչողութեամբ»<sup>2</sup>:

### **Տարագիր գրականության առանձնահատկությունները**

Տարագիր գրականությունը ձևավորվել է XX դարասկզբին: «Տարագիր գրականություն» տերմինը 1890-ականների սկզբներին առաջին անգամ գործածել են ֆրանս-կանադացի քննադատները՝ փորձելով ներկայացնել Քվեբեկ գաղթած աքսորականների նոր սերնդի պոեզիան և արձակը, որը ո՛չ կանադական, ո՛չ էլ քվեբեկական գրականություն չէր կարող համարվել: Տարագիր գրականությունը աշխարհաքաղաքական, սոցիալական փոփոխությունների և տեղաշարժերի հետևանք է, որը լայն տարածում է ստացել ողջ աշխարհում:

XX դարում երկու համաշխարհային և տարածաշրջանային պատերազմները, ապագադուրացումը գաղթականների, փախստականների և աքսորյալների կյանքում ունեցել են որոշիչ դեր:

Տարագիր գրականությունը գաղթի, աքսորի, նոր կյանքի ակնկալիքով օտար երկիր տեղափոխվածների գրականություն է: Այն ժամանակի ընթացքում դարձել է համաշխարհային գրականության անքակտելի մասը: Եթե մեկ դար առաջ տարագրվելը ոչ բնականոն պարտադրված և հարկադրված կյանքի ուղի էր դիտվում, այսօր դարձել է բնականոն կյանքի ուղի: Տարագրությունը փոխում է մարդկանց մտածողությունը, վարքուբարքը, հոգեբանությունը, արտացոլվում մշակույթում, բայց սա չի նշանակում, որ տարագիր արվեստագետներն ամբողջությամբ կտրված են իրենց անցյալից:

Տարագիր գրողների համար գրելը դառնում է գոյածն, իրենց ստեղծագործություններում վերստեղծում են նախկին կյանքը՝ կենդանի շունչ հաղորդելով կորած հայրենիքին, ավերված հարազատ օջախին, հարազատներին. օտարության մեջ գրելը նրանց ուժ ու կորով է հաղորդում, դառնում սպեղանի: Նրանք հաճախ համեմատության մեջ են դնում հին ու նոր կյանքը, երբեմն դրանք միացնում կամ ամբողջացնում են՝ ստեղծելով նոր ինքնուրույն

<sup>2</sup> Դանիելեան 2017, 6 Մայիս (Ելույթ Օտարագիր հայ գրողների 4-րդ համաժողովում, Երևան, 12 հոկտեմբերի, 2011 թ.):

յուն: Նրանց ընդհանուր առանձնահատկությունն իրենց օտար լինելը հնչեցնելն է, լեզվի, կրոնի սահմանափակումը ահազանգելը, մշակույթը անցյալի ու ներկայի, ընդունող հասարակության, վարքի չափանիշների, ընտրությունների ու ցանկությունների, վերադարձի պատկերումը, վերջինիս անհնարիության գիտակցումը. անցյալը ոչ միայն անցած, գնացած, վերջացած ժամանակ է, նաև ներկայի մեջ հարատևող ժամանակ:

Տարագիր գրողները, ամրագրվելով նոր հասարակությանը, դառնում են նրա անքակտելի մասը: Ոմանք, խուսափելով ազգային ինքնությունից, ընտրում են նոր տան լեզուն, հեռանում ազգային ինքնությունից ու ժառանգությունից, կտրվում իրենց պատմությունից, իսկ ոմանք էլ կառչած են մնում ազգային արմատներին, կոսմոպոլիտ համայնքներում ստեղծում էթնոմշակութային տարածքներ, իրենց գրականությունը ներմուծում տվյալ երկրի գրականություն:

XX դարը արևմտահայության համար եղավ ողբերգության, դաժան փորձությունների ժամանակահատված: Ցեղասպանության պատճառով հազարավոր հայեր հարկադրված լքեցին իրենց տունը, հայրենիքը, բռնեցին օտար եզերքների ճամփաները: Գաղթը մարդու և հարազատ վայրի, ես-ի միջև առաջացած խոր անջրպետ է, վերջնական կորուստ<sup>3</sup>:

Հայ տարագիր գրողները աստիճանաբար հարմարվեցին նոր պայմաններին, նրանցից ոմանք պարտադրող նոր թեմաներով և հարցադրումներով շարունակեցին իրենց ավանդական գրականությունը, ոմանք էլ նոր երկրի գրականության մասը կազմեցին: Երկու դեպքում էլ հարեցին տարագիր գրականությանը, որն ինչպես իրավացիորեն հավաստում է ամերիկահայ գրականագետ Խաչիկ Թեոլեոյանը «տեղափոխությունների, կորուստների, փոփոխությունների, բախումների, անզորության և անսահման տխրության էպիկական, քնարական ծանոթ և անծանոթ նոր տեսլականների ու փորձությունների մասին պատմող պատումների ամբողջական դրսևորում է»<sup>4</sup>:

Գաղթի դարաշրջանում տարագրության խնդիրները դառնում են առաջնային: Պատերազմներն ու ժամանակի առաջընթացը միշտ վերափոխում են հինը, և գաղթականի համար դժվար է դառնում փոփոխությունը նկատելը: Տարագրությունը գործընթաց է, որը տեղի է ունենում երկու մակարդակներում՝ և՛ արտաքին, և՛ ներքին:

Գաղթի և դրա ազդեցության վերաբերյալ ստեղծագործությունների սովորական ինքնակենսագրական է: Գաղթը, որպես հայրենիքը լքած և այլ տեղ բնակություն հաստատած տարագրի համար, դառնում է գրելու նյութ:

<sup>3</sup> Eagleton 1990.

<sup>4</sup> Tololyan 1996, 19-42.

Գրելու դրդապատճառները բազմազան են: Գրական նյութն ուղղակիորեն հիմնված է ապրած փորձի վրա: Տարագիր գրականությունը տարբեր մշակութային ծագում ունեցող գրական ոճերի խառնուրդ է:

Հայ-ամերիկյան գրականությունը բոլոր ժամանակներում էլ անդրադառնում է տարագիր գրականությանը Վ. Սարոյանը, Լ.-Ջ. Սյուրմեյանը, Փ. Սուրյանը փորձեցին պահպանել ոչ միայն հայկականությունը, այլև ամերիկյան տարագիրների ազգային պատկանելությունը:

Ամերիկահայ թե՛ հայագիր, թե՛ անգլիագիր գրողներից շատերը զինվորագրվեցին հայության հոգևոր երթին: Ազգային ոգու թելադրությամբ նրանք իրենց առջև դրեցին կարևորագույն խնդիր՝ պարզել հայ ժողովրդի տեղն ու դերը համայն աշխարհում, բացահայտել հնագույն քաղաքակիրթ հայ ազգի ողբերգական կյանքն իր վայրիվերումներով, անկոտրում ոգին, կենսասիրությունը, ապագայի հանդեպ հավատը: Մեր ժողովրդի քաղաքական-բարոյական ճակատագիրը գեղարվեստական հանձնառությամբ ներկայացրին աշխարհին: Թեև լեզուն դիմորոշում է գրականության ազգային տիրույթները, ստեղծագործության նյութը, թեման ազգային-ճանաչողական տիրույթում միշտ ունեցել են երկրորդական, եթե ոչ երրորդական նշանակություն, այնուհանդերձ, օտարալեզու գրված հայ հեղինակներից շատերի երկերը ըստ թեմատիկ ընդգրկման համարում ենք հայ գրականության անքակտելի մաս:

### **Ներգաղթյալների կյանքի արտացոլումը Փիթեր Սուրյանի վեպերում**

Փիթեր Սուրյանը վիպական աշխարհ մտավ ինքնակենսագրական աղբյուրներ ունեցող քնարական ոճով, մտքերի, հիշողությունների ու սենտիմենտալ ապրումների վրա հիմնված «Միրի» վեպով, որն իր երիտասարդական տարիների մտորումների, վերհուշերի, զգացմունքների արտահայտումն է: «Այսօր քիչ կարելի է հանդիպել մի գրողի, - գրում է Նոնա Բալաքյանը, - ով կարող է այդքան հմտորեն փոխանցել զգացմունքներն ու վերաբերմունքը ձևավորող բազմաթիվ ազդակներ և նուրբ ազդեցություններ»<sup>5</sup>: Փիթեր Սուրյանը վեպը գրել է 24 տարեկանում: Այն ամերիկյան էմիգրանտների կյանը պատկերող առաջին վեպն է, որին հաջորդել են «Լավագույնը և վատթարը ժամանակներից» ("The Best And Worst Of Times", 1961) և «Դարպաս» ("The gate", 1965) վեպերը: Իր անդրամիկ վեպով երիտասարդ գրողը նրբորեն կարողացել է ուրվագծել ճակատագրով ամերիկահայերին նմանվող հույն ներգաղթյալների կյանքն իր, նիստուկացով, ապրելակերպով, սովորույթներով, կենցաղով, մտածելակերպով: Հենվելով հայ և հույն ներգաղթյալների ազգային ընդհանրությունների, մտածելակերպի,

<sup>5</sup> Balakian 1958, 25.

ճակատագրի նմանությունի վրա՝ ամերիկացի գրաքննադատ Դեյվիդ Ստեֆան Քալոննը գրել է. «Ենթատեքստում Փիթեր Սուրյանը նկատի ունի հայկական թեման, չնայած գլխավոր հերոսները՝ Լեքսին, նրա հայրը (տիրական դաժան և անազնիվ նավային մագնատը), ինչպես նաև նրա ազգական Միրին հույներ են»<sup>6</sup>: Գրեթե նման տեսակետ է ասուաջ քաշել հայրենի գրաքննադատ Սուրեն Դանիելյանը. «Առաջին վեպում հունական միջավայր է, հարցադրումներ և ճակատագրեր, բայց դա ավելի շուտ հայկական ենթախորք ունի»<sup>7</sup>:

Այն ինչ առնչվում է ներգաղթյալների գրականությանը, դրանցում ջանում ենք գտնել հայերի և օտարազգիների կյանքի, ճակատագրերի նմանություններ. մեր ազգային մտածելակերպից, առանձնահատկություններից ելնելով՝ դրանց խորքում փորձելով տեսնել հայկական թեմատիկա:

Փիթեր Սուրյանը «Միրի» վեպով պատկերել է տարագիր երկու սերունդների կյանքն ու փոխհարաբերությունը, հին ու նոր աշխարհների բախումը: Հները կառչած են իրենց անցյալին, ազգային սովորույթներին, ապրելակերպին, չեն ցանկանում տեղի տալ, նորերը՝ ընդհակառակը, հակված են նոր հարաբերություններին՝ ամերիկացումին, որը վեպում հանդես է գալիս միասիրությունը երկսիրության փոխվող այլասիրությամբ: Լեքսին, ծնվելով և մեծանալով Ամերիկայում, հեռացել է ազգային սովորույթներից, լեզվից և մշակույթից, իրեն համարում է ամերիկացի: Նա հաճախ փորձում է օտարազգիներից թաքցնել իր ազգի պատմությունը, ազգային ինքնությունը:

«Ես ամեն անգամ, երբ մոտեցող ոտնաձայն էի լսում, գիրքն անմիջապես ետ էի դնում գրադարակի վրա, իբր պոռնոգրաֆիա էր կամ նման մի բան, և ձևացնում էի, թե հենց էնպես անցնում էի դրանց կողքով»<sup>8</sup>:

Զարմիկ Միրին պայքարի և կեցության, ողիսականի դժվարին ճանապարհին անցել է կորուստներով. պատերազմի ժամանակ որբացել է և ապաստանել Ամերիկայում՝ հորեղբոր տանը, որի աջակցությամբ էլ Բոստոնի քոլեջներից մեկում կրթություն է ստանում: Նա չի համակերպվում նոր կյանքին, նոր միջավայրին, այստեղ նա իրեն միայնակ, վախեցած օտար է զգում, նրան հետապնդում է գաղթականի բարդույթը: «Քթիս տակ մոմռում էի,-հիշում է Միրին, - հայրենիքից բերած երգերից հատվածներ էի դնդնում, և երբ մարդ էր մոտենում սսկվում էի: Ամաչում էի և չնայած ինձ հիմա ծիծաղելի է թվում, ահավոր վախենում էի մարդկանվից: Հեց մոտենում էին խոճապի էի մատնվում՝ չիմանալով, թե ինչ էի անելու, եթե հանկարծ խոսեին հետս»<sup>9</sup>:

<sup>6</sup> Սուրյան 2010, 6:

<sup>7</sup> Դանիելյան 2011, 283:

<sup>8</sup> Սուրյան 2013, 231

<sup>9</sup> Սուրյան 2013, 10:

Անցյալը չար երազի նման հետապնդում է հերոսուհուն: Հաճախ փորձում է ձերբազատվել դրանից՝ ինքն իրեն մխիթարելով. «դեռ ողջ է, դեռ ապրում է, և դրանով իսկ պարտավոր է իրեն բախտավոր համարել»<sup>10</sup>: Մի որոշ ժամանակ նախընտրում է ամերիկացումը՝ միասիրությունը երկսիրության փոխվող այլասիրությունը: Սուրյանը սիրային եռանկյունու միջոցով ներկայացնում է նոր սերնդի կյանքը, փոխհարաբերությունը, ծուլման վտանգը:

Միրին երկու երիտասարդների՝ ամերիկացի Ջոշիի և զարմիկ Լեքսիի շփման կետն է, նրանք յուրովի թանկ են նրա համար: Սուրյանը ստեղծում է հետաքրքիր սիրային եռանկյունի, որի միջոցով ներկայացնում է իրադարձությունների ծավալումները, հերոսների ներաշխարհը: Սուրյանական հնարանքով հերոսների նախասիրություններն ու հոգեաշխարհը բացահայտվում են հենց իրենց՝ հերոսների միջոցով. նրանցից յուրաքանչյուրն իր մասին քիչ է պատմում, երկու ընկերների երկխոսությունները հնարավորություն են տալիս ճանաչել երրորդի ներաշխարհը: Յուրաքանչյուր հերոսի տեսանկյունը դիտելիս՝ ակամա համակրում ես հենց նրան: «Սիրային եռանկյու խաղարկումը, - ինչպես իրավացիորեն նկատել է Ք. Ավագյանը, - նորություն չէ ո՛չ օտարագիր, ո՛չ հայագիր գրականության մեջ: Դեռևս 1920ականների օրինակները մեզ տալիս են անգլիագիր Մ. Առլենը «Կանաչ գլխարկ» (Լոնդոն, 1924), և հայագիր Շ. Շինունը «Նահանջը առանց երգի» (Փարիզ, 1929) վեպերով»<sup>11</sup>:

«Միրի», «Ջոշի», «Լեքսի» գլուխներում միևնույն իրադարձությունները բացելու հանձնառությունը հրոսներն իրենք են իրենց վրա վերցնում, ինչը Ս. Դանիելյանի դիպուկ գնահատմամբ «Մի կողմից զօրացնում է գործողութեան վրայ հեղինակի նետած լուսարձակը, միս կողմից թուլացնում է հեղինակի ճնշումը ընթերցողի վրայ առ նուազն երեք անգամ»<sup>12</sup>:

Սիրային եռանկյունու միջոցով գրողը ներկայացնում է ազգային ինքնության պահպանման իր տեսլականը: Միրին գրողն օժտել է ապրելու, տոկալու համառությամբ: Նա ոչ միայն դիմակայում է նորին, այլև օտարացման ճանապարհին կանգնած օտարազգիներից իր ազգի պատմությունը, ազգային ինքնությունը թաքցնող Լեքսիին, ով հեռացել էր տանից, ում համար հույն լինելը օտար միջավայրում ամոթանք և նախատինք էր, կարողանում է ուղորդել դեպի ազգային արմատներ: «Ես ամեն անգամ, երբ մոտեցող ոտնաձայն էի լսում, գիրքն անմիջապես ետ էի դնում գրադարակի վրա, - ասում է Լեքսին, - իբր պոռնոգրաֆիա էր կամ նման մի բան, և ձևացնում էի, թե հենց էնպես անցնում էի դրանց կողքով»<sup>13</sup>:

<sup>10</sup> Սուրյան 2013, 9, 41:

<sup>11</sup> Աբրահամյան 2014, 217:

<sup>12</sup> Դանիելյան 2011, 284:

<sup>13</sup> Սուրյան 2013, 231:



Միրին, հավասարապես համակրելով Ջոշին և Լեքսիին, ընտրում է վերջինիս, որը կարելի է կոչել նվիրվածություն և հավատարմություն ազգային արմատներին: Նրա ընտրությունը բխում է արյունակցին մեկ բառից կամ դեմքի, աչքերի արտահայտությունից հասկանալու, նրա հույզերին, ապրումներին կարեկիր լինելու ներքին ազգային կերտվածքից, մտածողությունից: Ջոշին, ինչպես բոլոր ամերիկացիները, անտարբեր են դիմացինի ներկայի և անցյալի հանդեպ, նրա համար կարևորը իր ներկան է, սիրային հարաբերությունները: Անգլո-սաքսոնացի Ջոշն իր պահվածքով, վարքով և շարժունակությամբ տարբերվում է կրակոտ, կյանքով լեցուն Լեքսիից, որին շատ է ուզում նմանվել, նրա նման պատմություններ հորինել, գտնվել ուշադրության կենտրոնում, լինել տարօրինակ և անհասկանալի, այն ինչից զուրկ են ամերիկացիները: Այստեղ՝ Ամերիկայում, ապրելով և շփվելով ամերիկացիների հետ, հերոսուհին հասկանում է, որ «Այստեղ և այժմ, գետի էս ափին լավ մարդ կամ վատ մարդ չկար»<sup>14</sup>: Հանրային բարեկրթությունը մարդկանց տանում է նույնականացման՝ ջնջելով այն ամենն ինչն ազգային է: Կա, սակայն, մի բան, որ տարագիրներին կապում է իրար, թույլ չի տալիս նույնականանալ, դա երակներով հոսող ազգային արյունն է, «ուրիշներով լցված հսկա ծովուն մեջ» չխառնվելու ինքնապաշտպանական բնազդը, որն էլ իրար է կապում Միրին և Լեքսիին:

«Երբ միասին էինք, - ասում է հերոսուհին, - և նա լռում էր, Լեքսիի աչքերում էնպիսի արտահայտություն էր, որ վստահություն էր ներշնչում, թե հասկանում էր ինձ, երբ ես էնպիսի բաներ էի ասում, որ Ջոսը չէր հասկանում մինչև մանրամասն չբացահայտեի, մտածում էի, որ Լեքսին զգում էր, թե ես ինչ նկատի ունեի, և բոլորովին էլ չէր փորձում իմանալ, որովհետև արդեն գիտեր»<sup>15</sup>:

Օտար միջավայրում հերոսներն ապրում են երկակի կյանքով՝ հարմարվում են նոր կյանքին, դառնում նրա մի մասնիկը, բայց, այնուհանդերձ, արյան թելադրանքով կառչած են մնում ազգային արմատներին, որն էլ կարևորում է Սուրյանը և իր ցոլարձակը ուղղում դեպի այն:

1965 թ. Սուրյանը գրում է տարագիրների կյանքը պատկերող իր երկրորդ վեպը՝ «Դարպասը» ("The Gate")՝ ընթերցողի դատին ներկայացնելով հայոց ցեղասպանությունը, 20-րդ դարասկզբի արևմտահայ և 60-ական թվականների ամերիկահայ քաղաքական-հասարակական կյանքն իր խնդիրներով ու բարդույթներով, սփյուռքահայության սերնդափոխությունն ու ապրելու մաքառումները: Ստեփանյանների գերդաստանի պատմությամբ Սուրյանը պատկերում է երկար մի ժամանակահատված՝ 1895 թվականի հայկա-

<sup>14</sup> Սուրյան 2013, 70:

<sup>15</sup> Սուրյան 2013, 70:

կան կոտորածներից մինչև 20-րդ դարի 60-ական թվականները՝ վեպի հիմքում դնելով ցեղասպանությունից անմասն չի մնացած իր գերդաստանի պատմությունը: «Իմ հեղինակած «Դարպաս» վեպում, - վկայում է Փիթեր Սուրյանը, - հատված կա մի կերպարի մասին, որ սքողված կերպով ենթադրում է պապիս՝ Միսաք Սուրյանին, որին երբևէ չեմ տեսել: Ներկայացված է այն պահը, երբ նախկինում կորովի և եռանդուն տղամարդը ցեղասպանությունը վերապրելուց հետո անսպասելիորեն կրկին հայտնվում է Կոստանդնուպոլսում. «Սարգիսը բացեց դուռը: Շեմին մի տղամարդ էր կանգնած՝ կոկիկ, բայց մաշված հագուստով, որ ընդամենը շապիկ էր և անգոտի անդրավարտիք: Հայրն էր: Դեմքը, որ կարծես ավելի լայնացել ու նիհարել էր, թխացել, խորակնճիռ կռու պոպոքի էր նմանվել, աչքերի սպիտակուցները մեծացել էին: Կանգնել էր անշարժ և սարսափելի հոգնած տեսք ուներ»<sup>16</sup>:

Վեպի գլխավոր հորոս Վահան Ստեփանյանը, որը գրողի պապի նախատիպն էր, հայկական կոտորածների ժամանակ կորցնելով ողջ ընտանիքը՝ ծնողներին, երիտասարդ կնոջը, չի հուսալքվում, չի դառնում կույր բնագոյների գերի: Բախտակիցների նման համառորեն կյանքից կառչելը ուժ է հաղորդում հերոսին, իմաստավորում աշխարհընկալումը, զինում ապրելու ջիղով: Հերոսի համար կյանքը գոյության հարաշարժ պայքար է:

Սուրյանը միտումնավոր Վահան Ստեփանյանին պատկերում է վեպի սկզբում և վերջում՝ շեշտելով անցյալի կարևորությունը տարագրվածների հոգեաշխարհում: Գրողը ճշգրտորեն ներկայացրել է տարագիր հայերի փորձություններով լի կյանքն իր վայրիվերումներով, բարդ հանգուցային խնդիրներով: Ամերիկան Վահանի որդուն՝ Սարգիսին, առնելով իր հորձանուսի մեջ փորձում է հեռացնել ազգային ավազանից:

Ամերիկայում, ուր նա մեկնել էր սովորելու, իրեն օտար և միայնակ է զգում: Հերոսի ինչպես դարասկզբի բազմաթիվ հայերի համար դժվար էր համակերպվել նոր անհյուրընկալ միջավայրին, որտեղ յուրաքանչյուր տարագրի չէին ընդունում, ժամանակ և համբերություն էր հարկավոր՝ դառնալու այդ երկրի մի մասնիկը: Հաղթահարելով բոլոր դժվարությունները, զրկանքները, օտարների արհամարհական վերաբերմունքը՝ որպես մի երրորդական անձի, ի վերջո դառնում է նրանցից մեկը, դառնում ամերիկացի: Օտարության մեջ փոխվում են նրա հոգեբանությունն ու մտածելակերպը, նա ընդունում է ամերիկյան բարքերն ու սովորույթները, առաջնորդվում տեղի բարոյական նորմերով և օտար արժեքներով:

Մեծ դժվարությունների և փորձությունների միջով անցած Սարգիսը, Արլեն Ավագի նման, իր զավակներին փորձում է մեծացնել առանց ազգային

<sup>16</sup> Սուրյան 2017, 6 Մայիս (Ելույթ Օտարագիր հայ գրողների 4-րդ համաժողովում, Երևան, 12 հոկտեմբերի, 2011 թ.), [www.grakanter.am/archives/10021](http://www.grakanter.am/archives/10021)

բարոյությունների՝ որպես ամերիկացի նոր, առավել բարենպաստ պայմաններում և սոցիալական ու մշակութային առավել լուսավոր ու հեռանկարային դաշտում: Չհիշել, մոռանալ ողբերգական անցյալը: Նրանց զերծ պահել վշտի ու վրեժի և այլ բարոյություններից. այս դիրքորոշումը, անշուշտ, հետևանք է հայ ժողովրդի ապրած մեծագույն աղետի: Ահա բարդ մի ուղի, որով հարկադրված անցնում են շատ ուշատ տարագիրներ:

«Հայրս հրաժարվում էր հայերեն սովորեցնել մեզ, - վկայում է որդին, - երբ երեխա էինք, և որոշ հայեր լրջորեն նրա հետ վիճում էին՝ նեղելով, որպեսզի բացատրեր, թե ինչու էր այդ կերպ վարվում: Բայց շատ նեղելու կարք չկար:

- Փոլն ու Գրեյսն առաջին հերթին ամերիկացի են, - ասում է հայրս, - և եթե հետագայում իրենց կհետաքրքրի, նաև՝ հայ: Դուք կարող եք կործանել ձեր երեխաներին, նրանց կոտրված անգլերեն և կոտրված սիրտ ավանդելով: Իսկ ես՝ ոչ: Նրանք պետք է մայրենի լեզու ունենան, այն երկրի լեզուն, որտեղ ապրում և աշխատում են: Եվ դա անգլերենն է»<sup>17</sup>:

Ի տարբերություն Արլեն հոր՝ Սարգիսը երբեք չի թաքցրել իր հայ լինելը և դեմ չէ, որ հետագայում, եթե որդին ցանկանա հայերեն սովորել, ինքը նրան կաջակցի, մեկ տարով Սուրբ Ղազար կուղարկի: «Տեղի մենաստանը կապրի, լորդ Բայրոնի մենախցում և հայերեն կսովորի, սակայն ոչ թե որպես աշխատանք, ինչպես Բայրոնը վարվեց՝ սեփական մեղքերին թողություն տալու համար, այլ որովհետև ինքն է այդպես ցանկանում: Լավ հայերեն, որով ժամանակին նրա պապն է գրել»<sup>18</sup>:

Սարգիս Ստեփանյանը փորձում է իր զավակներին ազատել ազգային բարոյություններից: Նա քաջ գիտակցում է, որ եղեռնը ծանր հետք է թողել հայ ժողովրդի հոգեբանության վրա, բացասաբար անդրադարձել և շարունակում է անդրադառնալ աշխարհացրիվ հայության կյանքի վրա, և ջանում է հնարավորինս իր հարազատներին ձերբազատել դրանից: Հերոսը սթափ հայացքով է նայում կյանքին: Յուրաքանչյուր հայ իր տեղը պետք է գտնի աշխարհում, նվաճի իր ապրելու իրավունքը աշխարհի ազգերի ընտանիքում, իր գործով բարձր պահի հայի պատիվը: Ողբալով, անցյալը թմբկահարելով որպես «հավերժական զոհ»՝ հայը չի կարող հարգանքի արժանանալ, չի կարող իր ասելիքը աշխարհի մարդկությանը հասցնել և լուծել ոչ միայն իր, նաև իր ազգի համար կարևորագույն հարցեր: Որդին՝ Փոլը, որ արդեն հայտնի լրագրող էր, Մայքլ Արլեն Կոտսերի նման ձեռնամուխ է լինում որոնելու իր ազգային էությունը, հաստատելու իր ինքնությունը, նախընտրում է իր արմատների վերադարձը, մեկնում է նախնիների հայրենիք՝ Կոստանդնուպոլիս, ուսումնասիրելու 20-րդ դարասկզբի հայոց պատմությունը, ծանոթանալու, շփվելու հայրենակիցների հետ, ճանաչելու թուրքերին, լինելու դեռևս

<sup>17</sup> Սուրյան 2013, 127:

<sup>18</sup> Սուրյան 2013, 128:

պահպանված հայ կրոնական-մշակութային օջախներում: Այստեղ գտնում է իր պապի՝ Վահանի ձեռագրատետրերը՝ դարասկզբի հայոց կյանքը պատկերող գրառումներով, որոնք՝ որպես իրենց հայ լինելության սուրբ մասունք, իր հետ բերում է Բոստոն, որպեսզի շարադրի իր ազգի եղելությունը:

Հոր գրառումները հուզում են Սարգսին: Նա հասկանում է ամենակարևորը. անցյալը կարող է ավելի անմիջական լինել, քան անմիջական ներկան: «Հայրս սկսեց արտասվել: Ուտերը ցնցվում էին: Հազիվ տաս-տասնհինգ վայրկյան տևեց: Հանկարծ նրա կողմից խոր հոգոցիծայն լսեցի՝ «Ա՛խ»<sup>19</sup>:

Սուրյանի վեպում անցյալն ու ներկան սերտաճած են հայի բնավորության, կերտվածքի և լեզվի հետ: Նրանք հանդես են գալիս կողք կողքի՝ որպես մի ամբողջականություն:

Ազգային ինքնությունը որոնելու ճանապարհին՝ հերոսը, որ ինքը գրողն է, առերեսվում է հայոց պատմությանը, վեր հանում նրա ողբերգական դրվագները, անաչառ ներկայացնում է հայ և թուրք ժողովուրդների փոխհարաբերությունները, ցեղասպանության շրջանում գոյություն ունեցող մթնոլորտը:

Հերոսը վեպում խոսում է նաև ներհայկական քաղաքական գործոնի մասին: Նա հայկական կոտորածների գործում քննադատում և մեղադրում է ոչ միայն Թուրքիային և հզոր պետություններին՝ անմիջական կապ տեսնելով ցեղասպանության և մարդկային անտարբերության միջև, իրավացիորեն դատապարտում է նաև հայ անմիաբան քաղաքական կուսակցություններին՝ կիսելով Հեփվորսի տեսակետը<sup>20</sup>, որոնք իրենց մեղքի բաժինն ունեին: Նրանցից յուրաքանչյուրը յուրով էր փորձում կանխել եղեռնը, միայնակ, առանց համագործակցելու մյուսների հետ: Ինչ խոսք, նրանց հայափրկիչ ձգտումներն արդարացի էին, բայց սկզբից ևեթ, ինչպես իրավացիորեն նկատել է Սուրյանը, դատապարտված էին անհաջողության, նրանք սթափ չէին գնահատում իրվաճակը, ունակ չէին իրենց գործողությունները համապատասխանեցնել իրենց հնարավորությունների հետ<sup>21</sup>:

Գրողը կարողացել է վեր հանել ժամանակի պատմաքաղաքական իրավիճակը, քննադատել հայ քաղաքական ուժերի վտանգավոր միտումներ պարունակող, հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանմանը սպառնցող անխոհեմությունը, որը հային հեռացնում էր ազգային ինքնությունից, մղում կարճամյա: Լևոն-Չավեն Սյուրմեյանի նման քաջատեղյակ Ամերիկայում հայ ազգային-քաղաքական կուսակցությունների ներքին տարաձայնություններին, ազգի հավաքականությունը պառակտող, նրա ուժերը ջլատող եսակենտրոն գործիչների գործունեությանը՝ Սուրյանը տալիս է ազգային ինքնությունը պահպանելու իր բանաձևը, որը ոչնչով չի տարբերվում դեռևս դարասկզբին Սյուրմեյանի

<sup>19</sup> Սուրյան 2013, 138:

<sup>20</sup> Hepworth 1980, 344.

<sup>21</sup> Սուրյան 2011, 198-199:

ձևակերպած բանաձևից, այն է՝ հայ քաղաքական գործիչների, մտավորականների, հոգևոր դասի համախմբումը և միասնական գործելը, որը տարեգրության մեջ հայտնվածներին ազգային ոգով, հայրենասիրությամբ կպարուրի և նրանց կմղի համազգային գերխնդիրները լուծելու դժվարին, բայց և հույժ կարևոր գործին, կհանգեցնի հայոց ցեղասպանության դատապարտմանը, հայոց եղեռնի փաստը համաշխարհային հանրությանը ճանաչել տալուն, աշխարհի արդար դատավճռին հասնելուն:

Իր վեպով Սուրյանը փորձեց նպաստել սփյուռքահայի ազգային ինքնության պահպանմանը, որն ինքնին բարդ ու դժվարին գործ է, որին պետք է ձեռնամուխ լինի ազգի հոգսերով ապրող յուրաքաչյուր սփյուռքահայ գրող: «Երբեմն, երբ սիրտը լցված է, բառեր չես գտնում արտահայտելու զգացածո, - 2010 թվականի դեկտեմբերի 12-ին «Ազատություն ռադիոկայանին» տված հարցազրույցում ասել է Փիթեր Սուրյանը, - մեր գործը գրելն է, ոչ թե խոսելը: Իսկ գրելն այնքան բարդ է և առավել պատասխանատու»<sup>22</sup>:

«Սուրյանի ստեղծագործությունները, - ինչպես իրավացիորեն նշել է ամերիկացի գրաքննադատ Դ.Ս. Քալոնն, - ներշնչանքի աղբյուր են ամերիկահայ գրողների հաջորդ սերունդների համար: Նրա ազդեցությունը նկատելի է միմյանցից բոլորովին տարբեր գրողների՝ Մայքլ Արլենի, Փիթեր Նաջարյանի, Փիթեր Բալաքյանի ստեղծագործություններում, որոնցից յուրաքանչյուրը նույնպես պատմական հիմքի վրա ստեղծված պատումը համադրել է հայոց անցյալի բացահայտմանն ուղղված ինքնակենսագրական որոնումների հետ»<sup>23</sup>:

Վեպը ինչպես հայության, այնպես էլ օտար հասարակության շրջանում արժանացել է բարձր գնահատականի: «Կուռ, ուշագրավ, հիացմունքի արժանի վեպ, - գրում է ամերիկացի գրող, գրաքննադատ Ռ. Սուլիվան, - ընտանեկան սեր, հատկապես հայր-որդի հարաբերություններում, քաղաքական զգոնություն, ազգային ուժգին զգացում, կրքոտ հայրենասիրություն և հեզնական մահ»<sup>24</sup>:

### **Եզրակացություններ**

Տարագիր գրականությունը գաղթի, աքսորի, նոր կյանքի ակնկալիքով օտար երկիր տեղափոխվածների գրականություն է: Տարագիր գրողները, ամրագրվելով նոր հասարակությանը, նրա անքակտելի մասն են կազմում: Նրանցից ոմանք, հեռանալով ազգային արմատներից, ընդունում են օտարի

<sup>22</sup> Դանիելյան 2010, 7 Դեկտեմբեր, Հայաստանում է ամերիկահայ գրող Փիթեր Սուրյանը, «Ազատություն ռադիոկայան», <https://www.azatutyun.am/a/2240688.html>

<sup>23</sup> Sourian 1965, քաղվածք մամուլից:

<sup>24</sup> Sourian 1965, քաղվածք մամուլից:

լեզուն, նիստնուկացը, վարքն ու բարքը, դառնում ամերիկացի, անգլիացի, ֆրանսիացի, իսկ ոմանք էլ կառչած են մնում իրենց ազգային արմատներին, կոսմոպոլիտ համայնքներում ստեղծում էթնոմշակութային տարածքներ, իրենց գրականությունը ներմուծում տվյալ երկրի գրականության մեջ:

Փիթեր Սուրյանը, հարելով տարագիր գրականությանը, իր վեպերով ցուց տվեց օտար եզերքներում տարագիրների բարդ ու դժվարին կյանքը, նրանց վերադարձը դեպի ազգային արմատներ:

### Օգտագործված գրականություն

- Աբրահամյան Ք. 2014, Ինքնության հաղթահարման բարդույթը Փիթեր Սուրյանի «Միրի» վեպում, Հայկազյան Հայագիտական Հանդես, հ. ԼԴ., Բեյրութ, էջ 215-220:
- Դանիելյան Գ. 2010, Հայաստանում է ամերիկահայ գրող Փիթեր Սուրյանը, «Ազատություն ռադիոկայան», 7 դեկտեմբեր, <https://www.azatutyun.am/a/2240688.html> (ներբեռնման օրը՝ 12.04.2021):
- Դանիելյան Ա. 2017, Մեզ սպասող ամբողջական Սուրեան, «Գրական թերթ», Երևան, 6 Մայիս (Ելույթ Օտարագիր հայ գրողների 4-րդ համաժողովում, Երևան, 12 հոկտեմբերի, 2011 թ.), [www.grakantert.am/archives/10021](http://www.grakantert.am/archives/10021) (ներբեռնման օրը՝ 12.04.2021):
- Դանիելյան Ա. 2011, Միջուկի տրոհումը, Գիրք Ա, Երևան, «Չանգակ-97», էջ 407:
- Սուրյան Փ. 2017, Գրողը և Սփյուռքը, «Գրական թերթ», Երևան, 6 Մայիս (Ելույթ Օտարագիր հայ գրողների 4-րդ համաժողովում, Երևան, 12 հոկտեմբերի, 2011 թ.), [www.grakantert.am/archives/10021](http://www.grakantert.am/archives/10021) (ներբեռնման օրը՝ 12.04.2021):
- Սուրյան Փ. 2011, Դարպաս, Երևան, ՀԳՄ, 328 էջ:
- Սուրյան Փ. 2010, Ընթրիք օտարների հետ, Երևան, «Լուսակն», 112 էջ:
- Սուրյան Փ. 2013, Միրի, Երևան, «Էդիթ Պրինտ», 292 էջ:
- Balakian N. 1958, The Armenian-American Witer: A New Accent in American Fiction, New York, Armenian General Benevolen Union, 220 p.
- Eagleton T. Jameson F., Said E. 1990, Nationalism, Colonialism, and Literature, University of Minnesota Press, 235 p.
- Hepworth G. 1980, Through Armenia on Horseback, New York, E.P. Dutton & Co Press, 355 p.
- Sourian P. 1965, The Gate, New York: Harcourt, A Helen and Kurt Wolff Book, Brace & World, 314 p.
- Tololyan Kh. 1996, Armenian American Literature, New Immigrant Literatures in the United States, A Sourcebook to Our Multicultural Literary Heritage, London, Greenwood Press, Westport, Connecticut, p. 19-42.

## ЭМИГРАНТСКАЯ ЛИТЕРАТУРА И ХУДОЖЕСТВЕННЫЙ МИР РОМАНОВ ПИТЕРА СУРЬЯНА

Нелли Галстян

Резюме

В XX в. две мировые и региональные войны, деколонизация стран сыграли решающую роль в жизни эмигрантов, беженцев и ссыльных. Эми-

грантская литература – это литература изгнания, людей, переехавших в чужие страны в надежде на новую жизнь. Как в произведениях ряда авторов XX в., в частности У. Сарояна, П. Балакяна, так и П. Сурьяна героям пришлось пройти через многие испытания, выпавшие на их долю. Однако жизнь с ее перипетиями не сломала их волю, не нивелировала их национальную идентичность и стремление интегрироваться в новую среду, частью которой им удалось стать, сохранив человеческое достоинство и веру в грядущее.

**Ключевые слова** – эмигрантская литература, чужие берега, переселение, изгнание, национальные корни, чуждые обычаи, испытания.

#### EMIGRANT LITERATURE AND THE ARTISTIC WORLD OF PETER SURYAN'S NOVELS

Nelli Galstyan

Abstract

In the 20th century, two world and regional wars, decolonization of countries played a decisive role in the lives of emigrants, refugees and exiles. Emigrant literature is the literature of exile, of people who moved to foreign countries in the hope of a new life. In the works of a series of authors of the XX century, in particular W. Saroyan, P. Balakian, as well as P. Surian heroes have to go through many trials that fell to their lot. However, life with its vicissitudes did not break their will, did not neutralize their national identity and desire to integrate into the new environment, a part of which they managed to stand, preserving human dignity and faith in the future.

**Key words** – Emigrant literature, situation, alien shores, resettlement, exile, national roots, alien customs, trials.

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ  
(ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆ) ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՐԴԻ  
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՄ

Ամալյա Բարսեղյան

Բանասիրական գիտությունների թեկնածու  
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ  
ՀՀ, Երևան, Գրիգոր Լուսավորիչ 15  
Էլ. հասցե՝ amalyabarseghyan42@gmail.com  
ORCID: 0009-0006-4941-4724

Հոդվածը ներկայացվել է 05.01.2024, գրախոսվել է 22.01.2024, ընդունվել է տպագրության 02.08.2024  
DOI: 10.53548/0320-8117-2024.2-272

Ամփոփում

Մասնագիտական գրականության մեջ /ժամանակակից հայերենի շարահյուսություն/ գոյություն չունեն միանշանակ ըմբռնում և մեկնաբանություն խնդրառություն եզրույթի և նրա կապային կառուցի միավորների խնդրառության գնահատման վերաբերյալ, թեև բոլորն էլ կապակցության այդ եղանակը համարում են ստորադասական:

Փաստական հարուստ նյութի քննությամբ տրվում են խնդրառություն կապակցության հոլովական լրացումների և հոլովակապային լրացումների կանոնական, ինչպես նաև որոշ դեպքերում ոչ կանոնական դրսևորումները: Այսպես՝ «Հսկա ձեռքերով արկղը գրկած քայլում էր դիմացում /փխ.՝ դիմացը/ գտնվող հարևան մրգավաճառի կրպակ (ԱՊՑ, էջ 208): «Կետրոնն էլ նրանց կարծիքի հիմամբ /փխ.՝ հիման վրա/ գնահատում կամ դատաւիտում էր... (ՌԴԵ, էջ 182) և այլն: Հանդիպում են նաև դերանվան՝ որպես կապի խնդրի հանդես գալու դեպքում, խոսակցական ձևեր (իմ վրա, քո համար և այլն) և կապի սխալ կիրառություններ:

Այսպիսով՝ արդի գեղարվեստական արձակում.

ա) խնդրառություն շարահյուսական կապակցության հոլովական լրացումների դրսևորումները որոշ դեպքերում չեն համապատասխանում գրական հայերենի օրինաչափություններին,

բ) խնդրառություն շարահյուսական կապակցության հոլովակապային ձևավորում ունեցող լրացումների դրսևորումները նույնպես որոշ դեպքերում չեն համապատասխանում գրական հայերենի օրինաչափություններին:

**Բանալի բառեր՝** շարահյուսական կապակցություն, շարահյուսական կապակցության եղանակներ, խնդրառություն (կառավարում), լրացում, լրացյալ, կախում, կապ:

Ներածություն

Լեզվաբանության մեջ, ելնելով կառուցի բաղադրիչների միջև առկա կապից, ստորադաս բառի քերականական ձևավորումից և գերադասի հետ դրա պայմանավորվածությունից, տարբերակվում են կապակցության եղանակներ՝ համաձայնություն, խնդրառություն, առդրություն:

Հայ շարահյուսագիտության մեջ /և ոչ միայն հայ/ առկա են ոչ միանշանակ ըմբռնում և մեկնաբանություն **խնդրառություն** եզրույթի, կապի և կապի



խնդրի կապակցության կապի ուղղվածության մեկնաբանության վերաբերյալ, թեև բոլորն էլ կապակցության եղանակը համարում են ստորադասական:

### Խնդրառություն

«Խնդրառությունը բառերի ստորադասական կապակցության եղանակ է, որի ժամանակ ստորադաս անդամն ընդունում է գերադաս անդամի պահանջած համապատասխան ձևը (հոլովը)<sup>1</sup> պայմանավորված լրացյալի իմաստով, իսկ եթե այն բայ է, նաև սեռով»<sup>1</sup>: Խնդրառությունը բառերի ստորադասական կապակցության եղանակ է համարում նաև անվանի հայագետ Մ. Աբեղյանը: Նա խնդրառությունն անվանում է կախման հարաբերություն:

«...Լրացումի կապակցության եղանակն և հարաբերությունն իր լրացյալի հետ՝ կախված է լրացյալից: Օրինակ՝ տրական հոլովն *ընկերիս* կախված է *օգնեցի* բայի բայիմաստից (ընկերիս օգնեցի). կարդացի բայն իր նշանակությամբ խնդրում է հայցական հոլով *գիրք* (գիրք կարդացի). Իսկ *Տիգրանի* գոյականը սեռական է դրվում *գիրքը* գոյականի պահանջով (Տիգրանի գիրքը)<sup>2</sup>:

«Կախման հարաբերությունը քերականության մեջ կոչվում է *խնդրառություն* կամ *վարում* և արտահայտվում է՝

1. Անմիջապես հոլովներով միայն, - անմիջական կապակցություն.

2. Հոլովների հետ նաև *կապերով* (նախադրությամբ և ետադրությամբ), որոնց միջոցով խնդիրը կապակցվում է իր խնդրառուի հետ, - միջական խնդրառություն»<sup>3</sup>:

Հայ քերականագիտության մեջ *խնդրառությունն* անվանում են նաև *կառավարություն*, *կառավարում*, *վարում*, *կախում*, *հոլովառություն* եզրույթներով: Ըստ Գ. Ջահուկյանի՝ *խնդրառություն* և *հոլովառություն* եզրույթների փոխարեն պետք է գործածել *կառավարություն* եզրույթը, քանի որ հասկացությունը նեղացվում է: Նա գրում է. «Հայտնի է, որ՝ ա) կառավարությունը կարող է լինել ոչ միայն «խնդրառություն», այլև «պարագաառություն» (հմմտ. «պատկանում է քաղաքին» և «բնակվում է քաղաքում»), բ) կառավարությունը կարող է արտահայտվել ոչ միայն իբրև «հոլովառություն», այլև որպես «կապառություն»: Կառավարությունը կախման այն եղանակն է, որ իրականացվում է առաջին հերթին լրացումների հոլովական և կապային ձևավորմանը»<sup>4</sup>:

Ընդունելով Գ. Ջահուկյանի կարծիքը՝ այնուամենայնիվ, գործածում ենք «խնդրառություն» եզրույթը, որը լայն կիրառություն ունի հայ քերականագիտության մեջ:

<sup>1</sup> Աբրահամյան, Պառնայան և ուր. 1976, 406:

<sup>2</sup> Աբեղյան 1974, 324:

<sup>3</sup> Աբեղյան 1974, 324:

<sup>4</sup> Ջահուկյան 1974, 424:

Գ. Ջահուկյանը, կառավարումը իր նախորդների նման նույնպես համարելով ստորադասական կապակցության եղանակ, հայ լեզվաբանության մեջ առաջին անգամ տարբերակում է կառավարման չորս տեսակ. գործառական-շարահյուսական, ձևական-ավանդական, ուժեղ և թույլ, պարտադիր և ոչ պարտադիր և միակի և բազմակի»<sup>5</sup>:

Ժամանակակից լեզվաբանական գրականության մեջ կա կառավարման երկու հիմնական ըմբռնում՝ լայն իմաստով (բոլոր հոլովական և հոլովակապային ձևավորում ունեցող լրացումները կապակցության մեջ) գերադաս բառը կառավարող է: Գ. Ջահուկյանը ուժեղ է համարում այն կառավարումը, որի դեպքում լրացյալը պահանջում է որոշակի հոլովով կամ կապով և հոլովով ձևավորված լրացում և թույլ, եթե լրացյալի և լրացման զուգորդումը կրում է ազատ բնույթ, և լրացյալը կարող է զուգակցվել տարբեր հոլովներով ու կապերով խնդիրների հետ: Հ. Հարությունյանը կարծում է, որ այստեղ չկա հստակ «տարբերակում ուժեղի և թույլի: Պարտադիր է այն, որի դեպքում լրացման առկայությունը պարտադիր է, ոչ պարտադիր, որի դեպքում խնդրի առկայությունը պարտադիր չէ: Պարտադիր կառավարությունը սովորաբար ուժեղ է, ոչ պարտադիրինը՝ թույլ»<sup>6</sup>:

Հ. Հարությունյանը նկատում է, որ ուժեղ և թույլ կառավարման սահմանները որոշելը անհնար է, չկան որոշակի սկզբունքներ, և դրանք բավականին սուբյեկտիվ են, և «Ժամանակակից հայոց լեզու» աշխատության մեջ լեզվաբանների ընդունած *միակի և կրկնակի խնդրառություն* հասկացությունները ըստ էության ոչ թե խնդրառության տեսակներ են, այլ արժույթայնության:

Գ. Ջահուկյանը առաջին անգամ կատարում է բայերի դասակարգումը ըստ արժույթի՝ դրա մեջ ընդգրկելով հոլովական և հոլովակապային լրացումները, որոնք հանդես են գալիս ոչ միայն որպես խնդիր, այլև պարագա:

Հ. Հարությունյանը գրում է. «Կառավարումը որպես ստորադասական կապակցության եղանակ գործում է միայն շարահյուսական այն կառույցներում, որոնցում ստորադաս (կառավարվող) բառի հոլովական կամ հոլովակապային ձևավորումը պայմանավորված է գերադասի (կառավարողի) բառաքերականական հատկանիշներով (եթե կառավարող բառը պահանջում է՝ ստորադաս բառը խնդրային հարաբերությամբ դրվի համապատասխան և անհրաժեշտ ձևով: Հենց սա է կառավարման էությունը և նրա տարբերությունը կապակցության մյուս եղանակներից)»<sup>7</sup>: Հ. Հարությունյանը տարբերակում է լրացումների երկու տեսակ՝ *ընդհանուր* կամ *հասարակ*, որոնք բնորոշ են տվյալ խոսքի մասի մեջ մտնող բոլոր բառերին, լրացումը պայմանավորվում է կառավարող գերադաս բառի խոսքիմասային իմաստով: *Մասնավոր* կամ

<sup>5</sup> Ջահուկյան 1974, 424:

<sup>6</sup> Ջահուկյան 1974, 425:

<sup>7</sup> Հարությունյան 1983, 94:

*հայրուկ* լրացումներ, որոնք բնորոշ չեն տվյալ խոսքի մեջ մտնող բոլոր կառավարող բառերին՝ այսինքն՝ լրացումն ու դրա ձևավորումը պայմանավորվում են գերադաս բառի ներխոսքիմասային իմաստով և քերականական հատկանիշներով, ինչպես նաև խոսքիմասային իմաստով: Այդպիսի լրացումներ են հիմնականում խնդիրները, ենթական, ստորոգելին, որոշ պարագաներ: Ընդհանուր կամ հասարակ լրացումներ են հիմնականում պարագաները<sup>8</sup>:

Լեզվաբանները տարբեր մոտեցումներ ունեն կապի և կապի խնդրի կապակցության խնդրառությանը, թեև բոլորն էլ կապակցության եղանակը ստորադասական են համարում: Այսպես՝ Գ. Զահուկյանը գրում է. «Ընդհանուր առմամբ կապի խնդրի հոլովածնը պայմանավորված է կապի խնդրառությամբ, կապի գործածությունը՝ նրա խնդրի՝ նախադասության մեջ ունեցած դերով կամ այլ բառերի խնդրառությամբ, այսինքն՝ խնդրի հոլովն այս դեպքում ունի ներքին, կապը՝ արտաքին պայմանավորվածություն»<sup>9</sup>: Հ. Հարությունյանի կարծիքով. «Կապվող բառի քերականական ձևը պայմանավորվում է կապի պահանջով, և գոյական+կապ վերլուծական շարահյուսությամբ կապը հանդես է գալիս որպես քերականորեն գերադաս բառ»<sup>10</sup>: Ճիշտ հակառակ տեսակետն է հայտնել Ս. Աբրահամյանը. «Այն հանգամանքը, որ կապն առանց կապվող բառի չի գործածվում, և դրանք միշտ հանդես են գալիս միաժամանակ, ոչ թե կապի գերադաս լինելու ու նրա խնդրառության ապացույց է, այլ ճիշտ հակառակը, կապի ստորադաս, սպասարկու դերի արտահայտություն է, պայմանավորված է այն բանով, որ կապը կարող է գործածվել միայն այն դեպքում, երբ անհրաժեշտ է այս կամ այն բառի քերականական հարաբերությունն արտահայտել գերադաս անդամի՝ մեծ մասամբ ստորոգյալի, մասամբ այլ անդամների նկատմամբ»<sup>11</sup>:

Քննության համար անհրաժեշտ փաստական նյութը քաղել ենք 2000 թվականից հետո հրատարակված արդի գեղարվեստական արձակից<sup>12</sup>, ինչպես, օրինակ՝ «Նավակը բեռնվում է քաղցրահամ ջրի *տակառներով*, ուտելիքի *պաշարով*, մեկուսանում է սառը *ալիքներում*, կորչում *անէության մեջ*» (ԱՊՌ, 12):

**ա) Խնդրառություն կապակցության հոլովական լրացումների ոչ կանոնական դրսևորումներ են ներքոշարադրյալ օրինակները:**

«Հատկապես գյուղերում ծնված տղաների փորն ու միտքը *կապվում էր* մրգի իրենց օրաբաժինը *չստանալուց* (փխ.՝ չստանալու հետ)» (ԱԱ, 51): «Դա

<sup>8</sup> Հարությունյան 1983, 106:

<sup>9</sup> Զահուկյան 1974, 324:

<sup>10</sup> Հարությունյան 1983, 288:

<sup>11</sup> Աբրահամյան 1965, 343:

<sup>12</sup> Վ. Սահակյան, Սև աչքեր, ճերմակ սփռոց (2004), Ռ. Դավոյան, Եթե աստված կամենա (2008), Ա. Համբարյան, Մարդանոց (2008), Ա. Պաշյան, Ցտեսություն ծիտ (2012), Օվկիանոս (2014), Ռոբինզոն (2019), Լ. Խեչոյան, Մհերի դռան գիրքը (2013), Ա. Շահվերդյան, Գարնանային ռեքվիեմ (2016), Արծուի, Այլաստանցի Մուչիկ հայաստանցին (2017), Ա. Աղաբաբյան, Մենակը (2021):

անչափելի մի տարածք է, որ Առնոն հասցրեց նկատելի *ակնթարթի* (փխ.՝ մի ակնթարթում)» (ԱԱՄ, 293): «Բայց դու մեր *կողքն եղիր* (փխ.՝ կողքին եղիր)» (ԱՀՄ, 107): «Նստել եմ *կողքդ* (փխ.՝ կողքիդ), մաշկս հավում է *մաշկիդ*» (ԱՊՕ, 160): «*Աշնան վերջում* (փխ.՝ աշնան վերջին) ծառերը կյանքը պատկերում են առանց հորինելու՝ անպտուղ, մոխրագույն, չոր ցցերով» (ԱՊՕ, 199): «Դու կանգնած ես ավտոբուսի դռների առջև՝ մոմլաթե տոպրակը *ծեռքդ* (փխ.՝ ձեռքիդ)» (ԱՊՅ, 22): «Սենյակի օդը ծանր էր՝ հուզիչ գգացողությամբ, դիմացում (փխ.՝ դիմացը) ուրվագծվում էր մահճակալի գլխամասը»: «Հսկա ձեռքերով արկղը գրկած՝ քայլում էր *դիմացում* (փխ.՝ դիմացը) գտնվող հարևան մրգավաճառի կրպակ» (ԱՊՅ, 208): «Ոչ երկար ծամելով կուլ էր տալիս պատառները՝ զլուխը ոչ մի անգամ չբարձրացնելով *սեղանին* (փխ.՝ սեղանի շուրջը) նստած երեխաների կողմ» (ԱՊՅ, 81): «Այն ժամանակ, այսինքն՝ պատերազմի չորրորդ *տարուց* (փխ.՝ տարվանից) ուղիղ քառասուն տարի առաջ, երբ ձնհալը ճիշտ այսպես նոր-նոր ավարտվել էր...» (ՌԴԵ, 9): «Ինչպես լինում է քարհատի մուրճը սեպին *զարկելուց* (փխ.՝ զարկելիս կամ խփելիս) քարի խորքից տնքոց է գալիս» (ԼԽՄ, 63): Կենտրոնն էլ նրանց կարծիքի *հիմամբ* (փխ.՝ հիման վրա) գնահատում կամ դատափետում էր տվյալ երկրի մշակույթն ու դա ստեղծող անձերին անհատապես» (ՌԴԵ, 182): *Հիմամբ*-ը հնարանություն է, պետք է լինի *հիման վրա*:

**բ) Խնդրառություն կապակցության հոլովակապային ձևավորում ունեցող լրացումների ոչ կանոնական դրսևորումներ:**

«Եվ իսկապես, անկախ բոլոր *դժվարությունների* (փխ.՝ դժվարություններից) իր ահա այս ամենամտերիմ ընկերները մնացին ու կմնան Հայաստանում» (ԱԱ, 145): «Շուտով բոլորը հաշտվեցին մեծ բռնակալի չգոյության սարսափելի *մղքի հետ* (փխ.՝ մտքին)» (ՌԴԵ, 17): «Նախ մտածենք, թե մենք ինչպե՞ս ենք վարվում մեր *քաղաքի հետ* (փխ.՝ քաղաքին), ի՞նչ ենք անում նրա համար» (ԱՇԳ, 22): «Քիչ էր մնացել քեզ մեղադրեի *չարության մեջ* (փխ.՝ չարության համար)» (ԱՀՄ, 14):

Արդի հայերենի համար օրինաչափական չեն *մոտ* կապի հետևյալ կիրառությունները.

«*Մուչիկի մոտ* (փխ.՝ Մուչիկի համար) հայերեն թե ռուսերեն ընթերցանությունը կենսաձև դարձավ...» (ԱԱ, 30): «...Անհանգստացար նրա համար, եկար չէ՛: Ձայն չես հանում: Ընդհանրապես խոսել *քեզ մոտ* (փխ.՝ քեզ հետ) չի ստացվում» (ԱՊՅ, էջ): «Նոր, հաճելի փոփոխություններ էին սկսվել նաև *ինձ մոտ* (փխ.՝ ինձ համար)» (ԱՊՌ, 45): «Հարությունյանն է, մինչև օրվա վերջ կարո՞ղ եք անցնել *մեզ մոտ* (փխ.՝ մեր աշխատավայր)» (ԱԱՄ, 299): «Խիստ բարյացակամ էր և ուշադիր նրա նկատմամբ, ինչը հաճախ չի պատահում այս ոլորտի *մարդկանց մոտ* (փխ.՝ մարդկանց մեջ)» (ԱԱՄ, 290):

Գ. Զահուկյանը նկատում է. «Դերանվան՝ որպես կապի խնդիր հանդես գալու դեպքում երբեմն այն, ըստ կապի հոլովածնի, կարող է հանդես գալ կամ տրական հոլովով (կապի անփոփոխ ձևի դեպքում), կամ սեռական հոլովով (կապի հոլովված լինելու դեպքում): Սա ցույց է տալիս, որ հոլովված կապի դեպքում կապի խնդիրը դեռ գիտակցվում է որպես հատկացուցիչ»<sup>13</sup>:

Մինչդեռ արդի գեղարվեստական արձակում հանդիպում են նաև դերանվան՝ որպես կապի խնդիր հանդես գալու դեպքում, խոսակցական ձևեր (իմ վրա, քո համար և այլն): Բերենք օրինակներ. «Չեմ ուզում, որ ձեզնից մեկն անցնի *ինձ վրայով* (փխ.՝ իմ վրայով)» (ՎՍՍ, 208): «Ամենահավատարիմ շան պես վճռականորեն կընկնեմ *քո վրա* (փխ.՝ քեզ վրա), որովհետև նրանք կփորձեն կրակել *քո վրա* (փխ.՝ քեզ վրա)» (ՎՍՍ, 106): «...որ միշտ իշխի *քո վրա* (փխ.՝ քեզ վրա)» (ՌԴԵ, 34): «Ես միշտ էլ օգնել եմ *քեզ*, դու գիտես, ասա, ե՞րբ եմ մերժել, *քո համար* (փխ.՝ քեզ համար) ամեն ինչ կանեմ, բայց վերջ... վերջ» (ԱՊՌ, 62):

### Եզրակացություններ

Արդի գեղարվեստական արձակում առկա են շարահյուսական կապակցության (խնդրառություն) եղանակների բազմաթիվ կիրառություններ: Փաստական հարուստ նյութի քննությունը ցույց է տալիս, որ՝

ա) խնդրառություն շարահյուսական կապակցության հոլովական լրացումների դրսևորումները որոշ դեպքերում չեն համապատասխանում գրական հայերենի օրինաչափություններին,

բ) խնդրառություն շարահյուսական կապակցության հոլովակապային ձևավորում ունեցող լրացումների որոշ դրսևորումներ նույնպես չեն համապատասխանում գրական հայերենի օրինաչափություններին:

### Օգտագործված գրականություն

Աբեղյան Մ. 1974, Երկեր, հ. 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 848 էջ:

Աբրահամյան Ս. 1965, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 568 էջ:

Աբրահամյան Ս., Պառնասյան Ն. և ուրիշներ 1976, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 857 էջ:

Հարությունյան Հ. 1983, Կառավարումը ժամանակակից հայերենում, Երևան, ԵՊՀ հրատ., 334 էջ:

Զահուկյան Գ. 1974, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 587 էջ:

<sup>13</sup> Զահուկյան 1974, 324:

**Համառոտագրություններ**

ԱԱ – Արծուի, Այլաստանցի Մուշիկ հայաստանցին, ԱՄՆ, Մատեան press հրատ., 2017, 200 էջ:

ԱԱՄ – Աշոտ Աղաբաբյան, Մենակը, Երևան, «Բուկինիստ», 2021, 352 էջ:

ԱՊՌ – Արամ Պաչյան, Ռոբինզոն, Երևան, էլ. հրատ., 2019, 164 էջ:

ԱՊՕ – Արամ Պաչյան, Օվկիանոս, Երևան, «Անտարես», 2014, 200 էջ:

ԱՊՅ – Արամ Պաչյան, Ցտեսություն ծիտ, Երևան, «Անտարես», 2012, 224 էջ:

ԱՀՄ – Արսեն Համբարյան, Մարդանոց, Երևան, ՀԳՄ հրատ., 2008, 140 էջ:

ԱՇԳ – Առլեն Շահվերդյան, Գարնանային ռեքվիեմ, Երևան, հեղինակային հրատ., 2016, 148 էջ:

ԼԽՄ – Լևոն Խեչոյան, Միերի դռան գիրքը, Երևան, «Անտարես», 2013, 396 էջ:

ՌԴԵ – Ռազմիկ Դավոյան, Եթե Աստված կամենա, Երևան, «Տիգրան Մեծ», 2008, 528 էջ:

ՎՍՍ – Վահրամ Սահակյան, Սև աչքեր, ճերմակ սփռոց, Երևան, հեղինակային հրատ., 2004, 224 էջ:

## ПРОЯВЛЕНИЯ ВИДОВ СИНТАКСИЧЕСКИХ СВЯЗЕЙ (УПРАВЛЕНИЕ) В СОВРЕМЕННОЙ ХУДОЖЕСТВЕННОЙ ЛИТЕРАТУРЕ

Амалия Барсегян

### Резюме

В специальной литературе (в современном армянском синтаксисе) нет единого подхода в вопросе интерпретации термина управление и оценки единицы управления в предложных конструкциях, хотя все исследователи считают вид связи подчиненным.

Предметом рассмотрения являются проявления падежных предложных связей и правильных предложно-падежных управлений, а в ряде случаев также неправильных.

Встречаются также разговорные формы предложных дополнений, которые выступают в качестве местоимений и неправильных предлогов. Отметим, что:

а) проявления падежных дополнений в управлении синтаксическими связями в ряде случаев не соответствуют закономерностям армянского литературного языка;

б) проявления падежного и предложного присоединения в управлении синтаксическими отношениями не всегда соответствуют закономерностям армянского литературного языка.

**Ключевые слова** – синтаксическая связь, виды синтаксических связей, управление, дополнение, дополняемое, зависимость, предлог.

**MANIFESTATIONS OF TYPES OF SYNTACTIC CONNECTIONS (MANAGEMENT)  
IN MODERN FICTION**

Amalya Barseghyan

Abstract

In the professional literature (as well as in syntax of modern Armenian) there is an ambiguous understanding and interpretation regarding the evaluation of the term management and the units of its connective structure, although all of them consider the mode of connection to be subordinate.

The article examines the rich factual material and provides the canonical, as well as in some cases, non-canonical manifestations of adverbial additions and adverbial additions.

There are also cases where the pronoun appears as a communication problem, conversational forms and wrong usages of communication.

Hence, the study of rich factual material has shown:

a) Manifestations of case additions in the management of syntactic connections, in some cases do not correspond to the laws of the Armenian literary language.

b) Manifestations of case and prepositional additions, in the management of syntactic relations, in some cases also do not correspond to the law of the Armenian literary language.

**Key words** – syntactic connection, types of syntactic connections, management, addition, complemented, dependence, pretext.

# ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՅՏ ԷՋԵՐԸ

### Մարիաննա Տիգրանյան

Արվեստագիտության թեկնածու  
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ  
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղդասարյան 24/գ  
ԵՊԿ հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոն  
ՀՀ, Երևան, Սայաթ-Նովա 1ա  
Էլ. հասցե՝ tigranyan.marianna@mail.ru  
ORCID: 0009-0009-8960-4911

### Լինդա Սարգսյան

ԵՊԿ երաժշտագիտության բաժին  
ՀՀ, Երևան, Սայաթ-Նովա 1ա  
Էլ. հասցե՝ linda.sargsyan31@mail.ru  
ORCID: 0009-0006-6562-3892

Հոդվածը ներկայացվել է 11.03.2024, գրախոսվել է 03.06.2024, ընդունվել է տպագրության 02.08.2024  
DOI: 10.53548/0320-8117-2024.2-280

### Ամփոփում

Կոմպոզիտոր, դասական ռոմանսի հիմնադիր, մանկավարժ, խմբավար Ռոմանոս Մելիքյանը մեծ ավանդ է ունեցել Խորհրդային Հայաստանի երաժշտական-հասարակական կյանքում: Նա սերունդների գիտակցության մեջ սերմանել է ազգային կրթության ստեղծման և դրանց անհրաժեշտության ու կարևորության հարցը: Ռ.Մելիքյանը Երևանում կրթական-հասարակական բուռն գործունեություն է ծավալել: Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ղեկավարությունից Ստեփանակերտում երաժշտական ուսումնարան հիմնելու առաջարկություն է ստացել, որն ընդունել է սիրով և առանց հետաձգելու մեկնել է Արցախ:

Ներկա ուսումնասիրությունը նվիրված է Ռ. Մելիքյանի արցախյան շրջանի գործունեությանը (1925-1926 թթ.), որը մնացել է պատմության լուսանցքներում: Կոմպոզիտորի՝ Արցախում կատարած աշխատանքների մասին տեղեկանում ենք իր ընկերներին հասցեագրած անտիպ նամակներից, որոնք պահվում են Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի (այսուհետև՝ ԳԱԹ) Ռ. Մելիքյանի արխիվային ֆոնդում: Այսօր, երբ Հայաստանը թերթում է իր պատմության հերթական տխուր էջերից մեկը, երբ մեր հայրենակիցները բռնի կերպով տարահանվել են իրենց պատմական հայրենիքից՝ Արցախից, Ռ. Մելիքյանի արցախյան նամակներն ավելի քան արդիական են և մեծ հետաքրքրություն ու արժեք են ներկայացնում ժողովրդի սեփական սխալները վերլուծելու, նաև ավելի լավ հասկանալու ու ճանաչելու ինքներս մեզ:

**Բանալի բառեր՝** Ռ. Մելիքյանի արցախյան նամակները, Լեռնային Ղարաբաղ, Ստեփանակերտի երաժշտական տեխնիկում, Արուս Բաբայան, Արամ Քոչարյան, Ռուբեն Թերլեմեզյան, Խորեն Թոռյան:



### Ներածություն

Խորհրդային կարգերի հաստատումից հետո կայսրության տարածքում գտնվող բոլոր հանրապետություններում զարկ տրվեց կրթության և մշակույթի նոր օջախների՝ դպրոցների, ուսումնարանների և բարձրագույն կրթական հաստատությունների հիմնադրմանը: Այդ գործընթացում անմասն չմնաց նաև Հայաստանը: Ռոմանոս Մելիքյանն իրեն բնորոշ ոգևորությամբ և անսահման նվիրումով լծվեց աշխատանքի. շատ կարճ ժամանակահատվածում Երևանում հիմնադրեց Երաժշտական ստուդիա (1921), որը վերածվեց կոնսերվատորիայի, իսկ երկու տարի անց նաև Երաժշտական ուսումնարան (1923): Կարծես թե այդ կրթական հաստատությունները ղեկավարելու ահռելի աշխատանքները պետք է ամբողջությամբ կլանեին Ռ. Մելիքյանին, և կասկածից վեր է, որ նա դեռ շատ անելիքներ ուներ, սակայն անմիջապես թողնում է մեծ ճիգերի գնով հիմնված կոնսերվատորիան ու ուսումնարանը և իսկույն արձագանքելով Ստեփանակերտից ստացած նամակին՝ 1925 թ. աշնանը մեկնում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ: Նշենք, որ մեզ հուզող որոշ հարցերի պատասխանները գտնում ենք իր տիկնոջը՝ անվանի երգչուհի Արուս Բաբայանին<sup>1</sup> ուղղված նամակներում: Իսկ Ա. Բաբայանը ոչ միայն կողակից էր, այլև գաղափարակից ընկեր, որը միշտ աջակցել է կոմպոզիտորի համարձակ նախագծերին: Ա. Բաբայանն այն սակավաթիվ մարդկանցից էր, որի հետ Ռ. Մելիքյանն իրապես կարող էր լինել անկեղծ: Նամակներից մեկում կոմպոզիտորը խորը ցավով գրում է<sup>2</sup>. «Հայաստանի երաժշտական կյանքի պատմությունը ստեղծագործ պայթույթի և ներմուծվող քաղաքնիության կռիվի պատմություն է: Այս բոլորը քեզ համար նորություն չէ, ինչպես նորություն չպիտի լինի այն ևս, որ մենք անկարող եղանք մաքառելու (ավելի որոշ՝ մեր առողջությունը ու լարված նյարդերը թույլ չտվեցին շարունակելու այդ կռիվը) ...Մեր հեռանալը չունի անձնական բնույթ, որովհետև մենք կորցրինք... միջակ հարմարությունները հանուն արվեստի և նրա իսկականի պատրաստման - մանկավարժության:

Թող քո սիրտը չցավի կոնսերվատորիայի այժմյան վայրագության համար՝ տիրող ցինիզմը բնորոշում է հենց շոշափածու հարցը: Պետք չի և լուսժողկոմատի աստեսացիան, մի՛ գնա և ոչ ոքի մի՛ դիմի խնդրով թղթի կտորների համար: Մեր գործը ավելի բարձր է քան նրան որակող թղթի կտորները:

Իմ՝ Ստեփանակերտ գալով՝ ինձ համար պարզվեց մի կարևոր հարց՝ թե որչափով կերտվելիս են եղել իսկական աշխատանքից և ինչչափ մակերևու-

<sup>1</sup> Արուս Գրիգորի Բաբայան, ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1954), ծնվել է 1893 թ. Թիֆլիսում, երգչուհի (քնարական սուպրանո), մանկավարժ: Սովորել է Պետրոգրադի կոնսերվատորիայում: 1921-ին ամուսնու՝ Ռոմանոս Մելիքյանի հետ հրավիրվել է Երևան, մասնակցել Կոնսերվատորիայի հիմնադրման արարողությանը: Նույն թվականից դասավանդել է Երաժշտական ստուդիայում, 1932-ից ԵՊԿ-ում եղել է մեներգեցողության առաջին դասատուն (տե՛ս Հայ երաժշտության հանրագիտարան 2019, 96):

<sup>2</sup> Նամակները մեջբերում ենք մասնակի կրճատումներով և ուղղագրական-կետադրական որոշ շտկումներով:

թացրել է շրջապատը (քաղքենի) մեր աշխատանքները, Ղարաբաղը կուսական վայր է: Սիրում են արվեստը (ինչքան որ զգում են) իբրև անհրաժեշտություն և ոչ թե նման эриванский պարտականության: Եվ մենք հնարավորություն ունենք մտնելու այդ կուսական, այդ անմիջական ջենտլմենտ գյուղացու հոգու տառապանքների ծալքերը ու ամոքել նրանց մեր հրեղեն հավատով: Եվ մի երեք տարուց հետո կխոսենք, թե իսկական արվեստը ուր է զարգանում. հեղափոխական Ղարաբաղում՝ թե՞ ...Երևանում:

Թող Ստեփանակերտը լինի ավեր, անհարմարություններով լի, հոգ չէ, մարդկային հարմարություններով չէ միայն ստեղծվում նորը, գեղեցիկը, այլ այն ստիմուլներով, որը դու կգտնես հարյուր հազար անգամ ավելի Ղարաբաղում, քան թե «տիղմոտ» Երևանում...»<sup>3</sup>:

### Ստեփանակերտը 1920-ական թվականներին

1920-ականներին Ստեփանակերտը, ինչպես նաև Արցախի մյուս բնակավայրերն անմխիթար վիճակում էին և ճնշող տպավորություն էին թողնում: XX դ. առաջին տասնամյակների պատմական բազում փորձություններին զուգընթաց, քաղաքում կատարվում էին բարեփոխման աշխատանքներ<sup>4</sup>: Ահա այս ժամանակամիջոցին էլ Ռ. Մելիքյանն այցելում է Լեռնային Ղարաբաղ և իր ներդրումն ունենում քաղաքի զարգացման գործում: Ի դեպ, նշենք, որ կոմպոզիտորն ի սկզբանե Ստեփանակերտում մնալու մտադրություն չի ունեցել, ինչի մասին տեղեկանում ենք կնոջն ուղղված նամակներից մեկում.

«Կարծում եմ՝ քեզ գրել էի, որ այստեղ դեռ սեպտեմբերին միտք չեմ ունեցել ոչ մի երաժշտանոցի մասին, ինձ հրավիրել են, ինչպես կարդացի հեռագրի պատճենը, իբրև դասատու ինստիտուտի և միաժամանակ կամաց-կամաց երաժշտական Ստուդիայի առաջիկա գործը կազմակերպող և ոչ ոք չի սպասել, որ ես կհամաձայնվեմ: Այս օրերը մեկնում եմ Բաքու, որից հետո Թիֆլիս՝ գտնելու երաժշտական գործիքներ: 2-3 դաշնամուր, ջութակներ և այլն, նոտաներ, ճիշտ է, գումարը մեծ չի՝ միայն 3000 ռ., սակայն կանխավճար տալով այս գումարը՝ муз. пред.-ից<sup>5</sup> կարելի է գնել 10.000 ռուբլու ապրանք»<sup>6</sup>:

Զարմանալի դիպուկ, անթաքույց հումորով և ջերմությամբ է նկարագրում Ռ. Մելիքյանը Արցախն ու արցախցիներին.

«Մի քանի խոսք Ղարաբաղի և դարաբաղցիների մասին – Լեռնային Ղարաբաղը Պատմական Արցախն է, բնակիչները՝ բնիկներ, լեզուն՝ տեղական դիալեկտ, լի՝ ժողովրդական հումորով: Ղարաբաղցիները զարմանալի վայելույշ կազմվածք ունեն՝ չկա Երևանի կամ Լենինականի կարճ, ուռած

<sup>3</sup> ԳԱԹ, Ռոմանոս Մելիքյանի արխիվ, ֆ. 1679:

<sup>4</sup> Բալայան 2020, 21:

<sup>5</sup> Муз. пред. – Объединение музыкальных предприятий при Народном комитете просвещения.

<sup>6</sup> ԳԱԹ, Ռոմանոս Մելիքյանի արխիվ, ֆ. 1719 (Ռ. Մելիքյանից Ա. Բաբայանին):

հասակը: Պատավ կանայք զարմանալի գրացիոզ քայլվածք ունեն՝ ուղղահայաց: Չկա կեղծ ամոթխածությունը, զարմանալի անմիջական են և քաղքենու հավակնությունից զուրկ: Սիրում են իրենց երկիրը ոգևորությամբ՝ սկսած Տիգրան Նազարյանից<sup>7</sup> մինչև վերջին գյուղի գյուղացին: Այդ ավերակ վայրը ոտքի են կանգնեցրել երկու տարվա ընթացքում: Հպարտ են նրանք սրանով, ինչպես հպարտ, որ ունեն Տեխնիկում, ինստիտուտ և վերջապես, ունենալու են երաժշտական դպրոց:

Ստեփանակերտը գտնվում է մոտ 100 վիրար (անհասկանալի չափի միավոր – Մ.Տ., Լ.Ս.) հեռավորության վրա, օտոմոբիլով 4-5 ժ. ճանապարհ է, ասում են՝ եկող տարի լինելու է երկաթուղի: Շուրջը սարեր են՝ անտառապատ և թփապատ, ասում են՝ նմանվում է Տիրոլ-ին (նկատի ունի Ավստրիայի նահանգը – Մ.Տ., Լ.Ս.), բայց թե Նազարյանին հարցնես՝ աշխարհումս չկա այս պես շքեղ անկյուն!

Մակերևույթը մոտ երեք հազար ֆուտ է, չոր կլիմա, օդը առատ...»<sup>8</sup>:

### **Կոնսերվատորիա հիմնելու ծրագիր**

Այսպիսով, իրեն բնորոշ ոգևորությամբ, Ռ. Մելիքյանն անձնվիրաբար լծվում է Ստեփանակերտում երաժշտական ուսումնարան (փաստաթղթերում՝ Տեխնիկում) ստեղծելու գործին. կազմում է Տեխնիկումի, ինչպես նաև Կոնսերվատորիայի ծրագրերը: Այդ, կոնսերվատորիայի: Այդ ծրագրերը ներկայացվում են Բաքվի սովնարկոմին (Ժողովրդական կոմիսարների խորհուրդ) և նիստերից մեկում «հաստատվում», սակայն, ինչպես ցույց տվեց ժամանակը՝ ցավոք, իրականություն չդարձան:

Շուրջ մեկ դար առաջ Ռ. Մելիքյանի կազմած՝ Արցախի կոնսերվատորիայի ուսումնական ծրագիրն այսօր էլ զարմանալիորեն արդիական է. որպես պարտադիր պայման՝ կոմպոզիտորն առաջ էր քաշում Արևմուտքի ու Արևելքի ազգային դպրոցների համատեղումը՝ նպատակ ունենալով իրարից տարբերվող երաժշտական համակարգերի համադրումը: Լեռնային Ղարաբաղի կոնսերվատորիան պետք է ունենար տեսական առարկաների, ջութակի, թավջութակի, փողային գործիքների և արևելյան նվագարանների՝ թառի և նոր տեսակի քամանչայի դասարաններ: Կոնսերվատորիայի համար պահանջվում էր ձայնագրիչ սարք (ֆոնոգրաֆ), որի միջոցով պետք է իրականացվեին երաժշտական բանահավաքչական աշխատանքները: Հարկավոր էր

<sup>7</sup> Խմբագիր, հրատարակիչ, հասարակական գործիչ Տիգրան Հակոբջանի Նազարյանը ծնվել է 1858 թ Արցախի Շուշի քաղաքում: 1879 թ. Շուշիում հիմնել է հրատարակչական գրասենյակ: Այնուհետև տեղափոխվել է Թիֆլիս, որտեղ հրատարակել է «Աղբյուր» մանկապատանեկան ամսագիրը, «Տարագ» շաբաթաթերթը, գրքեր, օրացույցներ, տարեցույցներ, ժողովածուներ, պիեսներ («Ճղպատղ քոլադ կտրի», 1887, «Արոգա», 1913): 1925-ին վերադարձել է հայրենիք, Արցախի վերաշինության նպատակով կազմակերպել օգնության կոմիտե:

<sup>8</sup> ԳԱԹ, Ռոմանոս Մելիքյանի արխիվ, ֆ. 1680:

նաև լաբորատորիա՝ հավաքագրված ազգագրական նյութը վերծանելու, վերլուծելու և ուսումնասիրելու համար: Ռ. Մելիքյանի ծրագրում նշված էին նաև երաժշտագիտության և կոմպոզիցիայի հատուկ տեսության դասաժամեր<sup>9</sup>:

Ուսումնարանի ծախսերը վերահաշվարկը (смета) կազմելիս Ռ. Մելիքյանը նախատեսել էր ամեն մանրուք, թանաքամանից և աղբի դոլլից սկսած՝ մինչև հավաքարարի հաստիքը<sup>10</sup>: Ստեփանակերտի, երաժշտական տեխնիկոմում դասավանդելու համար Երևանից ժամանում են Արուս Բաբայանը և այդ ժամանակ տակավին երիտասարդ մասնագետներ երաժշտագետ Արամ Քոչարյանն<sup>11</sup> ու երգչուհի Թամար Շահնազարյանը<sup>12</sup>: Կարճ ժամանակահատվածում, տեխնիկոմում դիմումների թիվը հասնում է 668-ի, որից ընդունվում է 114-ը: Բացվում են դաշնամուրի, երգեցողության, ջութակի, ռիթմիկայի, խմբերգության և տեսական առարկանների դասարաններ<sup>13</sup>: Այսպիսով, հաղթահարելով բոլոր տեսակի տեխնիկական խոչընդոտներն ու բարդությունները, 1925 թ. դեկտեմբերի 23-ին սկսվում են նորաբաց երաժշտական տեխնիկոմի պարապմունքները:

Կատարված աշխատանքները լուսաբանելու նպատակով կոմպոզիտորը դիմում է երաժշտական աշխարհի հեղինակավոր մարդկանց, որոնք ազգային մշակույթի հանդեպ անտարբեր չէին: Երաժշտագետ Ռուբեն Թերլեմեզյանին<sup>14</sup> գրած նամակում, որն այդ տարիներին «Խորհրդային Հայաստան»

<sup>9</sup> ԳԱԹ, Ռոմանոս Մելիքյանի արխիվ, ֆ. 893:

<sup>10</sup> ԳԱԹ, Ռոմանոս Մելիքյանի արխիվ, ֆ. 1452:

<sup>11</sup> **Արամ Կարապետի Քոչարյան** (1903, Վաղարշապատ – 1977, Երևան), կոմպոզիտոր, երաժշտագետ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1960): 1931-ին բանտարկվել է և արքայի երկրամաս, որտեղ մինչև 1934 թ. աշխատել է Լեռնային Ալթայի ԻՄ-ում: Գոռնո-Ալթայսկի մանկավարժական տեխնիկոմին կից ստեղծել է երաժշտական բաժին, ձայնագրել այլաբանների (օյրոթներ), խակասների, տելեուտների երգեր, կազմել համակարգված ժողովածու (գիտ. առաջաբանով): 1934 թ. արքայից վերադարձել է Հայաստան: Ձայնագրել է «Սասունցի Դավիթ» էպոսի երաժշտական հատվածներ, ասքեր, աշուղական սիրավեպեր, հայկական ժողովրդական, քրդական երգեր: ԵՊԿ-ում հիմնադրել է Ռ. Մելիքյանի անվան երաժշտական գիտահրատարակչական կաբինետ և հայ երաժշտության պատմության ամբիոն (1934) (տե՛ս Հայ երաժշտության հանրագիտարան 2019, 691):

<sup>12</sup> ԳԱԹ, Ռոմանոս Մելիքյանի արխիվ, ֆ. 893:

<sup>13</sup> **Շահնազարյան Թամար Կոստանդինի** (1901, Բաքու – 1987, Երևան), երգչուհի (մեցցո-սոպրանո), մանկավարժ: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1961): Ավմաստ (Ա. Սպենդիարյան, «Ավմաստ») դերերգի առաջին հայ կատարողն է: 1945-78-ին դասավանդել է ԵՊԿ-ում, ստեղծել է վոկալ մանկավարժության դպրոց: Հեղինակ է ձայնամշակման և մանկական ձայնի պահպանման խնդիրների մասին գիտամեթոդական աշխատության, «Կոմիտասի տասը պատվիրանները երգչին» գիտական հոդվածի («Կոմիտասական», 2, 1981), «Վոկալ-մանկավարժական երկացանկ հայ կոմպոզիտորների ստեղծագործություններից» (1968) և այլ ուսումնամեթոդական ձեռնարկների (տե՛ս Հայ երաժշտության հանրագիտարան 2019, 505):

<sup>14</sup> ԳԱԹ, Ռոմանոս Մելիքյանի արխիվ, ֆ. 893:

<sup>15</sup> **Ռուբեն Գրիգորի Թերլեմեզյան** (1898, Վան – 1942, Երևան), երաժշտագետ: 1919-ին մեկնել է Վիեննա, սովորել տեղի համալսարանում, ստացել երաժշտական կրթություն: 1933-36-ին ղեկավարել է Հայպետհրատի երաժշտության բաժինը, մասնակցել է Ք. Կարա-Մուրզայի, Կոմիտասի, Գ. Սյունու, Ն. Տիգրանյանի երկերի ժողովածուների հրատարակմանը: Հեղինակ է «Կոմիտաս վարդապետ.

ամսագրի և Երևանի ռադիոյի երաժշտական բաժնի գլխավոր խմբագիրն էր, Ռ. Մելիքյանը խնդրում է հանրության մեջ տարածել Ստեփանակերտում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ նորությունները.

«...Եթե իմանայիք սա ինձ համար և ինձ պես մտածող և արվեստով պարապողների համար ինչպիսի բարոյական մեծ խթան է հանդիսանալու: Եթե դուք իմանայիք! Բավական է հիշել թե ինչ կուլտուրական ոգևորություն է առաջացրել միայն հայտարարությունը, որ վեց ժամվա ընթացքում ցանկացող խնդրատունների քանակը հասել է 300! Ինչ մասսայական կարիք և պահանջ գեղեցկով դաստիարակվելու այս կուսական միջավայրում!

Եվ ես թերևս երջանիկներից մեկն եմ, որ ինձ վիճակվում է հայ իրականության կենտրոններում /Հայաստան և Ղարաբաղ/ հիմք դնել մասսաներին գեղեցիկով դաստիարակելու հիմնարկների – կոնսերվատորիա և տեխնիկոն: Ավելի մանրամասն առիթ կունենամ ձեզ գրելու-պատմելու. բայց մինչ այդ ես ունեմ մի խնդիր և կարծում եմ՝ չէիք զլանա կատարելու: Ահա խնդիրը՝ Խ. Հայաստանում մի փոքրիկ ողջույնի հողված գրելու – Ինքնավար Ղարաբաղի Երաժշտական Տեխնիկոնի բացման առիթով: Շեշտելով նրա կարիքը մասսաների դաստիարակման խնդրում և հայ երաժշտության նորանոր նվաճումների մասին, որ ահա խորհրդայնացման հինգ տարվա ընթացքում ինչքան հնարավորություններ են ստեղծված հայ երաժշտության կուլտուրայի զարգացման համար – Երևան և Ստեփանակերտ երկու կենտրոնական երաժշտ. հիմնարկներ: Ահա իմ խնդիրը, եթե հաջողվի ձեզ կատարելու, կլինեմ անչափ շնորհակալ և գոհացած բարոյապես:

Ձեր Ռոմել»<sup>15</sup>:

Բաքվի «Կոմունիստ» թերթում լուսաբանական հոդված գրելու նմանատիպ «խնդրանքով» Ռոման [Ռ. Մելիքյան] դիմում է նաև Բաքվի Հայարտան<sup>16</sup> ղեկավար, կոմպոզիտոր, հասարակական գործիչ Անտոն Մայիլյանին<sup>17</sup>: Ինչպես նշվեց, կոնսերվատորիայի ուսումնական ծրագրի մաս էին կազմում բանահավաքչական գործունեությունն ու ձայնագրված նմուշների մշակումը: Սակայն ֆինանսական հնարավորությունների սղության պատճառով հնարավոր չէր ձեռք բերել մասնագիտական սարքեր: Ստեղծված պայմաններից ելնելով՝ Ռ. Մելիքյանը նամակ է գրում մշակութային գործիչ Սնար Սնարյա-

կյանքը և գործունեությունը» (1924), «Քրիստափոր Կարա-Մուրզա» (1925), «Կոմիտաս» (1992) աշխատությունների (տե՛ս Հայ երաժշտության հանրագիտարան 2019, 263):

<sup>15</sup> ԳԱԹ, Ռ. Մելիքյանի արխիվ, ֆ. 918 (Ռ. Մելիքյանից Ռ. Թերլեմեզյանին):

<sup>16</sup> Հայարտուն՝ Հայ արվեստի տուն, գրական մշակութային հասարակական կազմակերպություն (1920-1930-ական թթ.): Հայարտներ են ստեղծվել հիմնականում Հայաստանից դուրս՝ հայաշատ քաղաքներում (Թիֆլիս, Բաքու, Կ. Պոլիս, Բաթում), որոնց նպատակն էր նպաստել տեղի հայ արվեստի տարածմանը, հայ բնակչության գեղագիտական դաստիարակությանը՝ կապելով նրանց մայր հայրենիքի մշակութային կյանքին:

<sup>17</sup> ԳԱԹ, Ռ. Մելիքյանի արխիվ, ֆ. 970 (Ռ. Մելիքյանից Ա. Մայիլյանին):

նին, որը կարծում էր, թե Ստեփանակերտի կոնսերվատորիայի համար անհրաժեշտ գումարը պետք է տրամադրվեր ոչ թե Բաքվի (ինչը միանգամայն տրամաբանական կլիներ, քանզի ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմում էր), այլ Երևանի կոնսերվատորիայի անունով գրանցված գումարներից.

«...Հավատացած եմ, մեր երկրի ներկա հոգևոր զարթոնքին, հանձինս Ձեր, մենք կունենանք հեռավոր գաղութում մեր լավագույն բարեկամը՝ պատրաստ աջակցելու մեր գործին, մեր աշխատանքներին: Մեր հիմնարկի հերթական և հարվածային աշխատանքներից է առաջիկա էքսպեդիցիան դեպի երկրի խորքերը գրի առնելու, հավաքելու ու խնամելու մեր ժողովրդի երգն ու երաժշտության – բանահյուսության մնացորդները (կանցնի մի երկու տարի և մենք կկորցնենք այդ ևս): Կարծում եմ՝ այս առթիվ հազիվ թե կարիք զգացվի մի ուրիշ կարծիք արծարծելու եթե ոչ, որ այս աշխատանքները պետք է սկսել շտապ և կարելուն չափ անթերի: Այս առթիվ կարիք կլինի դիմելու Ձեր աջակցությանը նախ Կոնսերվատորիայի անվամբ եղած գումարները պետք է անմիջապես օգտագործել – գնել էքսպեդիցիայի համար անհրաժեշտ իրերը և մնացորդ գումարի հետ շտապ փոխանցել մեզ: Հետո կազմակերպել այս գործի համար մի հատուկ ֆոնդ /այս առթիվ իմ «նամակ խմբագրության»-ը գուցե պետք գա Ձեզ/ և հավաքված գումարները ևս աշխատեիք հասցնել մեզ Լուսավորության Կոմիսարիատ»<sup>18</sup>: Մնար Մնարյանը քաղաքական - հասարակական գործիչ էր, որի ջանքերով Նյու-Յորքում 1922-ին հիմնադրվել է «Բանվոր» («Բանու որ») գրական շաբաթաթերթը (հետագայում՝ եռօրյա օրաթերթ), որն Ամերիկայի բանվորական կուսակցության հայկական հատվածի, այնուհետև ԱՄՆ-ի կոմկուսի պաշտոնաթերթն էր<sup>19</sup>: «Բանվորի» գլխավոր խմբագրի պաշտոնում Ս. Մնարյանը մնացել է մինչև 1924 թ., որից հետո տեղափոխվել է Խորհրդային Հայաստան: Նշենք, որ Ս. Մնարյանը 1931-1932 թթ. ստանձնել է Երևանի կոնսերվատորիայի ռեկտորի (թվով՝ հինգերորդ) պաշտոնը:

Մայրաքաղաքի երաժշտական կյանքում տեղ գտած արատավոր երևույթները, մտավորականների շրջանում հետզհետե արմատացող բացասական դրսևորումները՝ բանասարկությունն ու քծնանքը, Ռ. Մելիքյանին մեծ ցավ էին պատճառում, ինչի մասին նա գրում է իրեն բնորոշ շիտակությամբ.

«Իմ մազերս չալ ընկան և այդ դրությունը ինձ սովորեցրեց մի իմաստություն, որ հայ երաժշտության կուլտուրային, եթե կա մի թշնամի, սա հենց հայ երաժիշտն է, էն հավակնոտ կարիերիստը, էն էգոցենտրիկ քաղքենին, որը

<sup>18</sup> ԳԱԹ, Ռոմանոս Մելիքյանի արխիվ, ֆ. 987 (Ռ. Մելիքյանից Ս. Մնարյանին):

<sup>19</sup> «Բանվոր» շաբաթաթերթն արտացոլել է ամերիկահայ բանվորների առօրյան, լուսաբանել ԱՄՆ-ի կոմկուսի և նրա հայկական բյուրոյի, Կոմինտերնի գործունեությունը, համաամերիկյան բանվորական շարժումը: Ընթերցողներին ծանոթացրել է Խորհրդային Հայաստանի առաջընթացին: Սատարել է ՀՕԿ-ի գործունեությանը, խրախուսել հայրենակցական միությունների շինարարական աշխատանքները: Պարբերականում տպագրվել են հրապարակախոսական նյութեր, արձակ և չափածո գրական ստեղծագործություններ:

երեկ անգիր է արել տեորիայի կատեխիսը և էսօր սպասում է բազկաթոռներ և հավան չի երեկվա հայ երաժշտության մարտիրոսներին – Կ-Մուրզային, Եկմայանին, Կոմիտասին...

Սրա մեղքը որոշ չափով և մեզ վրա է ընկնում – շատ ենք երես տվել: Այժմ մեզ մնում է մի բան բարձրացնել երաժշտական կուլտուրայի մակերևույթը. որից հետո հայ երաժշտությունը կապահովի նման հայ երաժիշտներին աֆյուրաներից:

Դուք գրում եք. «Ձեռք ձեռքի տված տարածենք երաժշտությունը մեր մասսաներում...» Այո՛, մենք պարտական ենք այդ անելու: Երեկ Եկմայանի ձեռագրերը թղթե մեշոկներ պատրաստելու համար հանված էր բազար և նրա արտասովոր աշակերտը, սրտացունց ճառեր էր արտասանում, բայց միաժամանակ նրա «Քոզա» օպերայից հատվածներ յուրացնելով իր համար կարիերա ստեղծում, այսօր Եկմայանի մնացած ձեռագրերը գոնե պահպանվում են Ազգ. թանգարանում: Երեկ, եթե Կոմիտասը «փինաչի» էր անվանվում, այսօր մենք մտահոգված ենք շուտափույթ ի մի հավաքելու մեր Կոմիտասի ձեռագրերը նույնպես Ազգ. թանգարանում:

Այսպես էլ պետք է վարվել մեր բոլոր երեկվա երաժիշտների վերաբերմամբ: Իսկ վաղը, երբ կտեսնենք այդ նյութերը և երաժշտասեր, գիտակից սերունդ, էն ժամանակ կպարզվի, որն է իսկականը և որը՝ ֆալշը՝ կեղծվածը: Սրա համար էլ պետք է աշխատենք – բարձրացնենք երաժշտության այդ մակարդակը:

Ես ուզում եմ ուրախացրած լինել ձեզ, ինձ հաջողվեց ինքնավար Լեռ. Ղարաբաղում կանգնեցնելու հայ երաժշտության պաշտպան երկրորդ հիմնարկը՝ Երաժշտական Տեխնիկումը: Ինչպես հայտարարությունից կտեսնեք, որ սա փաստ է: Այս տարի, իբրև նախապատրաստական տարի կլինենք անչափ համեստ, սակայն եկող տարուց, կարծում եմ, կընդլայնենք գործունեությունը շնորհիվ նյութականի ընդլայնման: Սա բարոյական մեծ խթան կհանդիսանա մեր ինքնավարության համար, որ խորապես զգում է մատաղ սերնդի գեղեցիկ դաստիարակման կարիքը: Եվ հիրավի, վեց ժամվա ցուցակագրությանը տրված է 300-ից ավելի ցանկացողներ!

Ինչքան մեծ պահանջ ունի այսօրվա մարդը գեղեցիկով դաստիարակվելու»<sup>20</sup>: Այդուհանդերձ, Ստեփանակերտում երաժշտական ուսումնարան և կոնսերվատորիա ստեղծելու՝ Ռ. Մելիքյանի ջանքերն ապարդյուն եղան: Մի քանի ամիս գործելուց հետո ուսումնարանը դադարեցրեց իր աշխատանքը: Կոմպոզիտորի արխիվում գտնում ենք 1926 թ. փետրվարին Թ. Շահնազարյանին հասցեագրված նամակներ, որտեղ իրենից պահանջում են վերահաշվարկ անել և վերադարձնել պետության կողմից տրամադրված ամբողջ ուսումնական գույքը, ինչպես նաև պետական աջակցությամբ ձեռք բերված երաժշտական գործիքները<sup>21</sup>: Եվ եթե նման անարդար մոտեցումը կարելի է

<sup>20</sup> ԳԱԹ, Ռ. Մելիքյանի արխիվ, ֆ. 969, Ռ. Մելիքյանի նամակը Ա. Մայիլյանին, 16 նոյեմբերի, 1925 թ.:

<sup>21</sup> ԳԱԹ, Ռ. Մելիքյանի արխիվ, ֆ. 893:

բացատրել Ադրբեջանական ԽՍՀ կառավարության կողմից միտումնավոր կիրառվող հայակործան ծրագրի իրականացմամբ, ապա Խորհրդային Հայաստանի պատկան մարմինների և մշակույթի գործիչների վարքագիծը, մեղմ ասած, անընդունելի է: Իր լավ բարեկամ, երաժշտագետ Խորեն Թոռցյանին<sup>22</sup> ուղղված նամակում կարդում ենք.

«Քո նամակը ստացա «ըյամաթի» մասին – հենց էն ժամանակ երբ հազար ու մի մանրուք աշխատանքներով խառն էր գլուխս, սրա համար էլ ուզում եմ պատասխանել այժմ – երաժշտական գործը, որը քեզ կիետաքրքրի, Ղարաբաղում ամենադժվարագույն գործերից է մեր լուսավորության գործում, այս դժվարությունը հաղթահարելու համար պետք է շատ բան, առաջինը համառ և հետևողական աշխատանք, այս աշխատանքը արդեն սկսել ենք բավականաչափ աննպաստ պայմաններում (շենքի, գործիքների, նոտաների բացակայությունը և այլն)...

Դու գրում ես տեղիս երաժշտական գործերից և գործիչներից: Մեր երաժշտական կյանքը միշտ ցավոտ է եղել և լի բորբոսանքով: Ես, ավելի որոշ՝ մենք աշխատել ենք հեռու պահել գալիք երաժիշտ ուսանողներին այս կյանքից և ստեղծել նրանց համար կյանքի և երաժշտության հմայքներ: Էն աստիճան, որքան ինձ հաջողվում էր դրսի երաժիշտ բորբոսանքների դեմ կռիվ մղել և թույլ չտալ ներս մտնելու մեր երաժշտանոցը, այնքան մեր ուսանողությունը տարված էր գեղեցկին ձգտելու տենչով, որչափ ես դրաղ քաշվեցի, էնքան որ ազատ նկատվում էր այդ փլուզումը, մի բան փաստ է, որ այսօր ունենք երաժշտանոց, որ ունեցել է իր գեղեցիկ կյանքը, վաղվա օրը միշտ լավ է լինում, – և վաղը մենք կունենանք այդ գեղեցիկ ձգտողները: Աշխարհս ալան-թալան չի, որ հազար ու մի թոկից փախած իր ֆալշ /ղալբ/ փողը դգի, արդի հասարակությունը գիտակցում է, թե ինչ կոնսերվատորիա է կորցրել և ինչ կոնսերվատորիա ունի: Դուք պետք է մնաք անսասան Ձեր ձգտումներով դեպի գեղեցիկը, որովհետև տգեղ ու այլանդակը նրա համար է, որ ընդգծի գեղեցիկը, վեհը, բարձրը:

Ոհմակները նրա համար են, որ որսան և թունավորեն, նույնն է և արվեստը, արվեստը ունի իր ոռնացող ոհմակները, և նրանց ոռնոցը կարող է լինել մուգ ու խավարի մեջ, վաղը՝ արևածագին այս ոռնոցները կանհայտանան, երբ անհայտանա մեր մթություն և բթությունը: Ողջ եղիր և ղոչաղ և մի վհատվիր, հայտնիր ընկերներիդ՝ կյանքը մի ճանապարհ է, ուր ռաստ կզան շատ խութեր-քարեր: Ճանապարհի հատվածում (խաչմերուկ) էլի կհանդիպենք

<sup>22</sup> **Խորեն Վարդանի Թոռցյան** (13.01.1905, Արաբկիր – Թուրքիա – 18.12.1991)՝ երաժշտագետ, մանկավարժ: Սովորել է Երևանի կոնսերվատորիայի պատմական և տեսական ֆակուլտետում (1929-1933), կատարելագործվել է Մոսկվայում (Հայաստանի մշակույթի տուն)՝ Գ.Ն. Խուրովի դասարանում (1934-1939): Դասավանդել է Հայաստանի դպրոցներում (1922-1940), Ռ. Մելիքյանի անվան ուսումնարանում (1940-1974), ղեկավարել է ՀԽՍՀ մինիստրների խորհրդի արվեստի հարցերով և երաժշտական դպրոցների կրթական ծրագրերով զբաղվող բաժինը (1946-1948):



և թերևս ավելի լավ հասկանանք իրար, քան հասկացել ենք մինչև օրս»<sup>23</sup>:

### **Եզրակացություններ**

Ռոմանոս Մելիքյանի արցախյան անտիպ նամակները նորովի են բացահայտում երաժշտի ծավալած լուսավորչական մեծ աշխատանքը Լեռնային Ղարաբաղի սահմաններում: Պատմական ծանր ժամանակահատվածում երաժշտական տեխնիկում հիմնելով՝ Ռ. Մելիքյանը զարկ տվեց երաժշտական մշակույթի զարգացմանն ու տարածմանը: Սակայն, ցավալիորեն պետք է նշենք, որ Ռ. Մելիքյանի և այլ նվիրյալների կատարած հսկայական աշխատանքը հաջողությամբ չպսակվեց, և նորաստեղծ ուսումնարանը երկար կյանք չունեցավ:

### **Օգտագործված գրականություն**

- Բալայան Վ. 2020, Արցախի Հանրապետության բնակավայրերի պատմության ուրվագծեր, Երևան, «Զանգակ», 752 էջ:
- Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Ռ. Մելիքյանի արխիվ, ֆ. 893, ֆ. 918, ֆ. 924 (Ռ. Մելիքյանից և Թոռոջյանին), ֆ. 969, Ռ. Մելիքյանի նամակը Ա. Մայիլյանին, 16 նոյեմբերի, 1925 թ., ֆ. 970, ֆ. 987 (Ռ. Մելիքյանից Ս. Մնարյանին), ֆ. 1452, ֆ. 1719, ֆ. 1680:
- Հայ երաժշտության հանրագիտարան 2019, գլխ. խմբ.՝ Հ. Այվազյան, ՀՀ ԳԱԱ ԱԻ, Երևան, Հայկ. հանրագիտարանի հրատ., 712 էջ:

## **НЕИЗВЕСТНЫЕ СТРАНИЦЫ АРЦАХСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ РОМАНОСА МЕЛИКЯНА**

Марианна Тигранян, Линда Саргсян

### **Резюме**

Композитор, основатель жанра армянского классического романса, педагог – Романос Меликян (1883-1935) внёс большой вклад в музыкальную и общественную жизнь Советской Армении. Р. Меликян внедрил в сознание поколений вопрос создания национальных образовательных центров, их необходимость и важность. После интенсивной деятельности в Ереване от руководства Нагорного Карабаха Р. Меликян получил предложение основать музыкальную школу в Степанакерте, которое он принял и без промедления уехал в Арцах. Настоящее исследование посвящено деятельности Р. Меликяна в Нагорном Карабахе (1925-1926 гг.), которая на протяжении длительного пе-

<sup>23</sup> ԳԱԹ, Ռոմանոս Մելիքյանի արխիվ, ֆ. 924 (Ռ. Մելիքյանից և Թոռոջյանին):

риода оставалась вне поля зрения историков и музыковедов. О просветительской работе композитора мы узнаём из адресованных его друзьям писем, которые хранятся в архивном фонде Р. Меликяна Музея литературы и искусства имени Е. Чаренца.

Сегодня, когда Армения перелистывает очередную трагическую страницу своей истории, когда наши соотечественники, подвергшись насильственной депортации, вынужденно покинули свою историческую родину – Арцах, письма Р. Меликяна из Степанакерта более чем актуальны и представляют большой интерес и ценность. Они могут помочь нам осознать собственные ошибки, лучше понять и познать самих себя.

**Ключевые слова** – арцахские письма Р. Меликяна, Степанакертский музыкальный техникум, Нагорный Карабах, Арус Бабалян, Арам Кочарян, Рубен Терлемезян, Хорен Торджян.

#### UNKNOWN PAGES OF ROMANOS MELIKYAN'S ARTSAKH ACTIVITIES

Marianna Tigranyan, Linda Sargsyan

##### Abstract

Romanos Melikyan (1883-1935), a prominent Armenian composer, founder of the classical romance genre, pedagogue, and conductor, made a great contribution to the musical and social life of Soviet Armenia. R. Melikyan instilled in the consciousness of generations the issue of creating national educational centers and their necessity and importance. After intensive activities in Yerevan, R. Melikyan accepted an offer from the leadership of the Nagorno Karabakh Autonomous Region to open a music school in Stepanakert, which he accepted and left for Artsakh without delay.

The present study is devoted to R. Melikyan's activity in Nagorno-Karabakh (1925-1926), which for a long period remained out of the field of view of historians and musicologists. We learn about the composer's activity in Artsakh from letters addressed to his friends (they are unpublished), which are concentrated in the archive fund of R. Melikyan of the Museum of Literature and Art named after Y. Charents. Today, when Armenia is on one of the sad pages of its history, when our compatriots were forcibly evacuated from their historical homeland, Artsakh, R. Melikyan's Karabakh letters are more than relevant and of great interest and value, to help analyze our own mistakes and better understand and know ourselves.

**Key words** – Unpublished letters of R. Melikyan, Nagorno-Karabakh, Music College in Stepanakert, Arus Babalyan, Aram Kocharyan, Ruben Terlemezyan, Khoren Torjian.

# СРЕДНЯЯ АЗИЯ В ТВОРЧЕСТВЕ МАРТИРОСА САРЬЯНА

**Кнар Катвалян**

Соискатель Института искусств НАН РА  
РА, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4

Эл. адрес: katvalyan-k@mail.ru

ORCID: 0009-0002-2645-912X

Статья представлена 07.09.2021, рецензирована 09.01.2021, принята к публикации 02.08.2024

DOI: 10.53548/0320-8117-2024.2-291

## **Аннотация**

В 1934 году М. Сарьян отправился в командировку в Ашхабад. Туркменистан дал ему возможность увидеть Восток изнутри, а также получить новые впечатления и творческие импульсы. Этот период творчества художника мало изучен, его можно рассматривать как уникальное продолжение восточной серии работ Сарьяна. Мастер создал ряд работ, посвященных Средней Азии – рисунки, этюды и зарисовки, в которых особенно выделяются характерные черты лиц людей, национальные костюмы, головные уборы туркменских мужчин и женщин, и всегда и везде – верблюды. В Доме-музее М. Сарьяна хранятся 4 его работы данного периода, еще одна картина находится в Львовской галерее изобразительных искусств. Особо следует привлечь внимание к картинам, о которых в основном узнаем из туркменских источников. В шестом номере Международного журнала «Туркменистан» 2006 года опубликованы 4 работы. Для этих картин характерны уникальные средства выражения, новая комбинация цветов и оттенков. Среди работ, известных нам из туркменского журнала, выделяется картина «Мечеть в Анау», которая, наряду с неоспоримыми художественными качествами, имеет также особое историческое значение для туркменского народа, так как этот средневековый памятник туркменской архитектуры был разрушен страшным землетрясением в 1948 году.

**Ключевые слова** – М. Сарьян, Восток, Средняя Азия, Туркменистан, картина, восточная серия, комбинация цветов.

## **Вступление**

Мартiros Сарьян – один из величайших мастеров мировой живописи XX столетия, который, не становясь последователем какого-либо конкретного направления, умело сочетал передовые тенденции европейского и русского искусства своего времени с национальными традициями, создав таким образом, уникальный и своеобразный мир искусства.

Художник был высоко оценен выдающимися современниками: писателями, учеными, а также любителями и поклонниками искусства. Действительно, Сарьян создал глубоко национальное искусство, которое, объединив принципы и стилистические черты армянской средневековой миниатюрной живописи, фресок и архитектуры, также сочетает в себе творческие инновационные особенности французских художников эпохи постимпрессионизма, таких как Ван Гог, Гоген, Сезанн, Матисс.

Творческий стиль Сарьяна охарактеризован известным русским искусствоведом Николаем Пуниным: «Сарьян – новатор. Он стоит среди европейских художников, которые с последней четверти прошлого века изучали новые традиции за пределами европейского искусства, иной язык форм, чтобы выразить новые и непостижимые чувства по отношению к старому европейскому классическому миру. Сарьян, как и они, является искателем и первооткрывателем...»<sup>1</sup>. По словам известного писателя Ильи Эренбурга, «Сарьян – не локальный художник, его корни в армянской земле, его кисть не знает границ»<sup>2</sup>. Луи Арагон высоко оценил искусство Сарьяна: «...Свет Армении летит к нам благодаря Мартиросу Сарьяну... Этот свет так красив, что века должны отвести Сарьяну рядом с нашими Матиссом и Сезанном одно из первостепенных мест... он живописец счастья»<sup>3</sup>. А композитор Дмитрий Шостакович отметил, что «Творчество Мартироса Сарьяна дорого не только армянскому народу, но и всем советским народам»<sup>4</sup>. Особенности стиля Сарьяна отмечены поэтом и художественным критиком Максимилианом Волошиным: «Инстинкт крови, текущей в его жилах, подсказал ему чисто восточные гаммы цветов, и, ударяя одним простым тоном о другой, он умеет вызвать впечатление разнообразия и роскоши... Врожденным инстинктом своей восточной души он сумел слить острый цветовой анализ современной европейской живописи с простыми синтетическими формами восточного искусства. В нем европейские течения обратились к своим истокам, и, естественно, легко получилось нечто самостоятельное, органическое»<sup>5</sup>.

---

<sup>1</sup> О Сарьяне 1980, 99.

<sup>2</sup> О Сарьяне 1980, 169.

<sup>3</sup> О Сарьяне 1980, 169.

<sup>4</sup> Армения сегодня 1980, 25.

<sup>5</sup> О Сарьяне 1980, 60.



**Рис. 1.** Ашхабад. Дворик. Бумага, цв.карандаш, 32x19 см

**Рис. 2.** АУЛ, АШХАБАД. Бумага, пастель, 21x29,5 см



**Рис. 4.** Туркменские девочки. Бумага, пастель, 21x30 см



**Рис. 5.** Ашхабад. На русском базаре. Бумага, уголь, сангина, 21x30 см




**Рис. 3.** Колхозник за завтраком. Бумага, пастель, 21x29,6 см





**Рис. 6.** Ашхабад. Бумага, соус, сангина, 21x29,5 см

**Рис. 7.** Казахстан. Бумага, пастель, 15x20 см



**Рис. 8.** Казачка. Бумага, соус, 29x20,5 см

**Рис. 9.** Ашхабад. Сбор картофеля в колхозе. Холст, масло, 54x73 см



**Рис. 10.** Дворик колхозников в Ашхабаде. Холст, масло, 54x73 см



Рис. 11. Туркменские дети. Холст, масло, 53,7x73 см

Рис. 12. Туркменский дворик в ауле около Ашхабада. Холст, масло, 54x73,8 см



Рис. 13. Улица в Ашхабаде. Холст, масло, 54x73,5 см



Рис. 14<sup>6</sup>. Один из туркменских пейзажей



<sup>6</sup> Нет информации о картинах 14, 15, 16, 17.



Рис. 15. Сбор винограда

Рис. 16. Местечко Багир под Ашхабадом



Рис. 17. Мечеть в Анау



Рис. 18. Анау. Туркмения. Бумага, акварель,  
30x40 см





### **Сарьян и Восток**

Большая любовь Сарьяна к Востоку и творческий интерес побуждают его путешествовать, чтобы открыть для себя Восток, его характерные черты и продолжить свои уникальные поиски и открытия в живописи. Его интересовала жизнь Востока, повседневная жизнь людей, образ их жизни, цвета Востока, которые могли бы способствовать созданию законченного характера и сущности этого мира. В 1910-1913 гг. художник побывал в Константинополе, Египте и Персии. В результате, как он сам отмечает, ознакомление с Востоком становится для него способом открыть для себя новые формы и методы самовыражения и переосмысления истинного искусства.

Большой интерес к Востоку на этом не заканчивается. На более поздних этапах своего творческого развития Сарьян всегда стремился изыскать новые возможности поглубже узнать Восток, что, к сожалению, ему не часто удавалось из-за геополитических реалий. Он хотел побывать в Японии, Индии, Китае, но Первая мировая война не позволила ему достичь этой цели. Позже Мастеру удалось в какой-то мере восполнить этот пробел.

В 1934 году по приглашению правительства Советского Туркменистана он отправился в командировку в Ашхабад с группой художников из Москвы. Это был для него очень важный визит. В конце концов, Средняя Азия оставалась единственным доступным Востоком для Сарьяна, не имеющего «права» покинуть пределы СССР. В письме искусствоведу Рубену Дрампяну Сарьян пишет: «Очень рад и бесконечно счастлив, что приехал сюда и видел все это. Привезу с собой несколько этюдов и рисунки и сделаю кое-что хорошее»<sup>7</sup>. Туркменистан, с его масштабами и разнообразием, произвел неизгладимое впечатление на Сарьяна, что нашло отражение в его работах. Мастеру нравилось общаться с простыми людьми, узнавать их образ жизни и нравы. Из письма, адресованного своей жене – Лусик Сарьян, мы узнаем, что он жил с двумя русскими художниками, Штеренбергом и Радимовым, в доме одного сельского жителя. Интересны подробные описания разных регионов страны, с их особенностями, экономикой, образом жизни. К примеру, Сарьян был впечатлен столицей страны – Ашхабадом, его улицами и домами, о чем читаем в следующих строках вышеупомянутого письма. «Все дома находятся во дворах и имеют хорошие сады, дома одноэтажные, боль-

---

<sup>7</sup> Сарьян 2012, 109.

шинство улиц выложены камнем, тротуары асфальтированы, а рядом с ними посажены деревья... (рис. 1, 2) Туркмены живут в своих палатках, но во многих местах есть дома, в качестве строительного материала которых использована земля, с такими же плоскими крышами, как у нас. Туркмены и их жены очень красивы, конечно, все это следует воспринимать иным образом. У туркменских мужчин на голове огромные черные папахи, они производят очень монументальное впечатление (рис. 3). Цвет женской одежды – твой любимый цвет – красный, так что я обязательно куплю здесь платье для тебя (рис. 4). Самый замечательный, конечно же, это верблюд, а рядом с ним – любимый и ненавидимый всеми нами осел (рис. 5, 6). Эти два рабочих животных, которые работают в самых трудных и стесненных условиях»<sup>8</sup>. В одном из писем, написанных Дрампяну, Сарьян продолжает с восхищением описывать Ашхабад: «Самыми интересными и привлекательными являются туркмены, туркменки и их верблюды. Все это вместе монументально красиво. Бесконечно любишь и никогда не устаешь... Все это замечательно, ритмично, спокойно, но в то же время в очень строгих оттенках. Все они дети пустыни, ужасной пустыни, которая одновременно очаровательна и богато украшена. Это бурное, окаменелое море, которое оставляет шокирующее впечатление»<sup>9</sup>.

В другом письме Лусик Сарьян он описывает дорогу назад, которая проходила через Казахстан: «Кругом станции – пустыни... всюду специфическая растительность... Это очень сурово, своеобразно и красиво, если прибавить к общей картине замечательных верблюдов, так вяжущихся с этими степями, лишенными воды. Казахи – интересный народ: невысокого роста, но оставляют впечатление здорового народа. Женщины в пижамах чувствуют себя так же свободно, как мужчины... (рис. 7, 8). Туркмения меня очень освежила, я от этой интересной страны получил очень многое, но надо сделать вещи крепко, сильно монументально, с высоким мастерством»<sup>10</sup>. Фактически, Мастер стремился рассмотреть эту тему шире, более масштабно.

---

<sup>8</sup> Сарьян 2012, 104-105.

<sup>9</sup> Сарьян 2012, 108.

<sup>10</sup> Сарьян 2012, 114-115.

### **Среднеазиатская серия картин**

Конечно, путешествие находит свое выражение в оригинальных и своеобразных произведениях художника. Сарьян создал ряд работ, посвященных Средней Азии, в которых воссоздал уникальные пейзажи, краски, колорит, жизненный уклад и занятия людей пустыни, туркменом и казахов. В его рисунках, набросках и эскизах особенно подчеркиваются выражение лиц людей и их национальные костюмы, и почти всегда все это изображается на фоне верблюдов. Вообще, верблюды стали для Сарьяна символом медленного и вечного передвижения, типичного для Востока.

В Доме-музее М. Сарьяна хранятся 4 его работы этого периода, одна из которых находится в постоянной экспозиции – «Ашхабад. Сбор картофеля в колхозе» (рис. 9), а три другие картины – «Двор колхозников в Ашхабаде» (рис. 10), «Туркменские дети» (рис. 11), «Двор в туркменском ауле под Ашхабадом» (рис. 12) хранятся в запаснике.

Картины «Двор колхозников в Ашхабаде» и «Двор в туркменском ауле под Ашхабадом» несколько схожи по колориту и тематике. Здесь преобладают коричневые, синие и белые цвета. Мы видим дворы Ашхабада, повседневную жизнь людей и их занятия. Дома одноэтажные, плоские, глинобитные, люди в своей типичной одежде и головных уборах, их окружают различные животные.

В отличие от двух предыдущих картин, работы «Ашхабад. Сбор картофеля в колхозе» и «Туркменские дети» выделяются своей подчеркнута яркой палитрой: красный, оранжевый, зеленый, розовый. Первая картина – многофигурная, на ней изображены туркмены и туркменки, собирающие картошку в типичной одежде и высоких головных уборах. В этом полотне Сарьян передает движение через различные положения фигур и контрасты ярких цветов их одежды на общем светло-песчаном фоне, создающем впечатление бесконечности горизонта. На небе мы видим обобщенные очертания летящих самолетов. Не сосредотачиваясь на деталях, художник передает ритм сбора урожая с помощью цветowych пятен. В другой работе – «Туркменские дети», доминирует восточное умиротворение. На переднем плане – дети, слева, на дереве – двое других детей, а на заднем плане – поля, деревья, вдали просматриваются дома, горы и небо. Кстати, в будущем эти картины станут незаменимым материалом для Сарьяна при создании великолепного панно «Расцвет

народных ремесел», созданного для павильона советского искусства на Парижской международной выставке<sup>11</sup>.

Картину Сарьяна 1934-го года «Улица в Ашхабаде»<sup>12</sup> (рис. 13), которая находится в Львовской галерее изобразительных искусств, можно считать уникальным синтезом выразительных форм Востока и новых среднеазиатских впечатлений. Здесь художник создал образ улиц Средней Азии, где акцент на синем смягчает контрасты света и тени, не вызывает ощущения жары и зноя, которые присутствуют в картинах 1910-ых годов.

Считаем необходимым привлечь внимание также к картинам, о которых мы в основном узнаем из туркменских источников. В шестом номере Международного журнала «Туркменистан» 2006 года опубликованы работы «Один из туркменских пейзажей» (рис. 14), «Сбор винограда» (рис. 15), «Местечко Багир под Ашхабадом» (рис. 16), «Мечеть в Анау»<sup>13</sup> (рис. 17, 18). Для них характерны уникальные новые средства выражения, новая комбинация цветов и оттенков, преобладание ярких сине-зеленых оттенков. Это может быть связано не только с особенностью видов местности, но и с эмоциональным состоянием художника. Сарьян часто говорил, что больше всего на свете он любит солнце, но во время путешествия по Туркмении его утомили однообразные краски бескрайней пустыни и песчаных дюн. Увидев в некоторых районах страны орошаемые и возделываемые сады, пашни и огороды с пышной растительностью, Сарьян восторгался видом богатого разнообразия сине-зеленых тонов, что и отразилось в нескольких его картинах. Между тем в остальных работах на среднеазиатские темы, которые были созданы уже в Армении, художник использовал цветовую гамму, характерную для сухого песчаного фона Ашхабада.

Среди работ, известных нам из туркменского журнала, выделяется картина «Мечеть в Анау», которая, наряду с неоспоримыми художественными качествами, имеет также особое историческое значение для туркменского народа, так как этот средневековый памятник туркменской архитектуры был разрушен страшным землетрясением в 1948 году<sup>14</sup>.

На остальных трех картинах мы видим обобщенные пейзажи. Не останавливаясь на деталях, благодаря правильному соотношению цвето-

<sup>11</sup> Сарьян 2013, 76.

<sup>12</sup> Находится в Львовской галерее изобразительных искусств.

<sup>13</sup> Международный журнал «Туркменистан» 2006, 60-65.

<sup>14</sup> Международный журнал «Туркменистан» 2006, 65.

вых линий и пятен, Сарьян смог построить пространство композиции на ритмах и контрастах, создать характерные для панно эпическое звучание, ощущение бескрайности и простора. Эти четыре картины, как отмечает В. Байлиева, словно гимн древней туркменской земле<sup>15</sup>.

К сожалению, у нас нет информации о большом панно Сарьяна «Сбор хлопка» (2х3 м), а также о ряде других этюдов, рисунков и одной картине, созданных Сарьяном по заказу, полученному в Туркменистане. Однако известно, что он их выполнил мастерски<sup>16</sup>.

### **Заключение**

В своих работах, посвященных Средней Азии, М. Сарьян воссоздал уникальные пейзажи, колорит, жизненный уклад и занятия людей пустыни. Интересно, что о некоторых из этих работ мы в основном узнаем из туркменских источников. В этих картинах проявляются уникальные новые средства выражения, новая комбинация цветов и оттенков, преобладание ярких сине-зеленых оттенков. Возможно – это связано с эмоциональным состоянием Сарьяна. Думается, что во время путешествия по Туркмении Сарьян увидел и однообразные краски бескрайней пустыни, и орошаемые сады, пашни и огороды. Естественно, Сарьян восторгался видом последних, что и отразилось в нескольких его картинах. А цветовую гамму, характерную для сухого песчаного фона Ашхабада, художник использовал в остальных работах, которые были созданы уже в Армении.

Произведения Сарьяна среднеазиатской серии имеют особое значение для изучения творческого развития Мастера, поскольку дополняют наши представления об искусстве художника. Очевидно, что многие из произведений Сарьяна еще нуждаются в дальнейшем серьезном исследовании и популяризации.

### **Использованная литература**

- Խաչատրյան Շ. 2009, Մարտիրոս Սարյան. Ընտրանի, Երևան, «Փրինթինգ», 304 էջ:  
Ղազարյան Մ., Աղայան Ա. 1980, Մարտիրոս Սարյան. Կյանքի և ստեղծագործության տարեգրություն, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 318 էջ:  
Սարյան Ռ. 2002, Մարտիրոս Սարյան. Նամակներ, հ. 1, Երևան, «Տիգրան Մեծ», 596 էջ:  
Дрампян Р. 1964, Мартирос Сергеевич Сарьян, Москва, «Искусство», 128 с.

<sup>15</sup> Международный журнал «Туркменистан» 2006, 63.

<sup>16</sup> Мы узнаем об этом из его писем: М. Сарьян 2012, 106.

- Օ Տարյան 1980, Страницы художественной критики. Воспоминания современников, Ереван, «Советакан ցրոխ», 482 с.
- Каменский А., Хачатрян Ш., Мирзоян Л. 1987, Мартирос Сарьян. Живопись, графика, акварели, рисунки, иллюстрации, театрально-декорационное искусство, Ленинград, «Аврора», 340 с.
- Տարյան Մ. 1985, Из моей жизни, Москва, «Изобразительное искусство», 301 с.
- Տարյան Մ. 1980, Об искусстве, Ереван, «Советакан ցրոխ», 210 с.
- Տարյան Մ. 2012, Письма, второй том, Ереван, «Тигран Мец», 576 с.
- Տարյան Ք.Լ. 2013, Письма Մ. Տարյան, диссертация, Ереван, 154 с.
- Տարյան Ք., Տարյան Տ., Տոշկուտե Դ. 2017, Մարտիրոս Տարյան, Москва, «Комсомольская правда, Директ-Медиа», 71 с.
- «Туркменистан», международный журнал 2006, N 6 (15), июнь, 97 с.

## ՄԻՋԻՆ ԱՍԻԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Քնար Կատվայան

Ամփոփում

1934 թ. Մ. Սարյանը գործուղվում է Աշխաբադ: Թուրքմենստանը նրան հնարավորություն է տալիս տեսնելու Արևելքը ներսից. դա նաև առիթ էր նոր տպավորություններ և ստեղծագործական ազդակներ ստանալու: Նկարչի աշխատանքի այս շրջանը քիչ է ուսումնասիրված. այն կարելի է համարել Սարյանի ստեղծագործությունների արևելյան շարքի յուրօրինակ շարունակություն: Վարպետը ստեղծել է Միջին Ասիային նվիրված մի շարք գործեր՝ նկարներ, էսքիզներ, ուրվանկարներ, որոնցում աչքի են ընկնում մարդկանց յուրահատուկ դիմագծերը, ազգային տարազը, թուրքմեն տղամարդկանց և կանանց գլխարկները, և միշտ ու ամենուր՝ ուղտերը: Մ. Սարյանի տուն-թանգարանում պահվում է այս շրջանի 4 աշխատանք, ևս մեկ նկար գտնվում է Լվովի գեղարվեստի պատկերասրահում: Հատկապես հարկ է ուշադրություն հրավիրել այն նկարների վրա, որոնց մասին մենք հիմնականում տեղեկանում ենք թուրքմենական աղբյուրներից: 2006 թ. «Թուրքմենստան» միջազգային ամսագրի վեցերորդ համարում տպագրվել է 4 աշխատանք: Այդ նկարները բնութագրվում են յուրահատուկ արտահայտչամիջոցներով, գույների և երանգների նոր համադրությամբ: Թուրքմենական ամսագրից մեզ հայտնի գործերի մեջ առանձնանում է «Ազկիթ Անաուում» նկարը, որը գեղարվեստական անհերքելի որակների հետ մեկտեղ նաև պատմական կարևոր նշանակություն ունի թուրքմեն ժողովրդի համար, քանի որ թուրքմենական ճարտարապետության միջնադարյան այդ հուշարձանը ոչնչացել է 1948 թ. սարսափելի երկրաշարժի հետևանքով:

**Բանալի բառեր՝** Մ. Սարյան, Արևելք, Միջին Ասիա, Թուրքմենստան, նկար, արևելյան շարք, գունային համադրություն:

---

**CENTRAL ASIA IN THE WORKS OF MARTIROS SARYAN**

Кнар Katvalyan

## Abstract

In 1934 M. Saryan went on a business trip to Ashgabat. Turkmenistan gave him the opportunity to see the East from the inside, it was also an opportunity to get new impressions and creative impulses. This period of the artist's work has been hardly studied; it can be considered as a unique continuation of the eastern series of works by Saryan. The Master created a number of works dedicated to Central Asia – drawings and sketches, in which the characteristic features of people's faces, national costumes, headdresses of Turkmen men and women, and always and everywhere – camels are especially prominent. The House-Museum of M. Saryan contains four of his works of this period, another painting is in the Lviv Gallery of Fine Arts. Particular attention should be drawn to the paintings, of which we are mostly informed from Turkmen sources. In the sixth issue of the International Journal "Turkmenistan" in 2006 four works were published. These paintings are characterized by unique means of expression, a new combination of colors and shades. Among the works known to us from the Turkmen magazine, the painting "Mosque in Anau" stands out, which, along with undeniable artistic qualities, also has a special historical significance for the Turkmen people, since this medieval monument of Turkmen architecture was destroyed by a terrible earthquake in 1948.

**Key words** – M. Saryan, East, Middle Asia, Turkmenistan, painting, eastern series, color combination.

# ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ՁԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԻՄԵՐԱԿԱՆ ԵՎ ՍԿՅՈՒԹԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐՈՎ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐՈՒՄ

### Գարեգին Թումանյան

Պատմական գիտությունների դոկտոր  
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ  
ՀՀ, Երևան, Չարենցի 15  
Էլ. հասցե՝ gstumanyan@gmail.com  
ORCID: 0000-0002-6696-0093

Հոդվածը ներկայացվել է 30.04.2024, գրախոսվել է 25.05.2024, ընդունվել է տպագրության 02.08.2024  
DOI: 10.53548/0320-8117-2024.2-304

#### Ամփոփում

Հաշվի առնելով ձիու վճռորոշ դերը կիմերական ու սկյութական ցեղերի կյանքում, «կիմերա-սկյութական» թաղումների առանձնացման համար ընտրված հատկանիշներից մեկը համարվել է ձիու առկայությունը դամբարանային համալիրում: Հայաստանի «կիմերա-սկյութական» դամբարաններում ձիու կամ ձիասարքի առկայությունից կարելի է եզրակացնել, որ դրանցում հեծյալ ռազմիկներ են ամփոփվել: Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. VIII դ. վերջ - VI դ. դամբարաններում ձիու և մարդու համատեղ թաղումների զգալի ավելացումը նշանավորում է թաղման ծեսում փոփոխությունների նոր փուլ, հավանաբար, պայմանավորված էթնիկական այլ խմբերի ներխուժումներով:

Հայաստանի կիմերա-սկյութական մշակութային ընդհանրության հատկանիշներով 144 դամբարաններից 33-ում մարդկանց ու ձիերի համատեղ թաղումներ են կատարվել: Ձին ձիասարքի հետ է ամփոփված 20 դամբարանում: Ձիասարքն առանց ձիու, երբեմն՝ ոչ լրիվ կազմով, առկա է միայն 9 դամբարանում: Ձին կիմերների ու սկյութների համար դարձել էր պատերազմի հիմնական «զենքը»: Իրենց արագաշարժ ձիերին ապավինելով՝ նրանք նոր մարտավարություն էին կիրառում. հանկարծակի գրոհում էին հակառակորդի շարքերի վրա և նույնքան անսպասելի՝ անհետանում:

Սկյութների հետնորդ ժողովուրդների ազգագրական տվյալները նպաստում են վերակազմելու թաղման ծեսում ձիու զոհաբերության ծիսակատարությունը: Օսերի մոտ մինչ այժմ պահպանվել է հանգուցյալի հետ դամբարանում ձիուն զետեղելու ծիսակատարության արձագանքը՝ նժույգի նվիրաբերման արարողությունը: Նման սովորություններ են բացահայտվել նաև հայերի մոտ: Հնդեվրոպական առասպելաբանության մեջ ձին հանդես է գալիս որպես տիեզերական ծառին համարժեք ծիսական խորհրդանիշ: Տիեզերքի տարբեր գոտիների միջև կապը իրականացնելու գործառնությունը կարելի է անվանել «ուղղաձիգ հաղորդակցություն»: Սկյութական վերակազմվող թաղման ծեսում նման հաղորդակցության դեր էր վերապահված ծիսական ձիուն: Ծիսական ձին հանգուցյալին պիտի զերծ պահեր փորձություններից, որոնք ննջեցյալին դարանակալում էին երկնքի ճանապարհին: Ըստ երևույթին, ծիսական ձիուն վերագրվել է նաև պահպանական նշանակություն:



**Բանալի բառեր՝** Հայկական լեռնաշխարհի, կիմերներ, սկյութներ, ձի, ձիասարք, հեծյալ, ննջեցյալ:

### **Ներածություն**

Հին Հայաստանում կիմերական ու սկյութական ցեղերի առկայության փաստը վաղուց է ընդգծվել և դրա վրա է հրավիրվել հնագետների ուշադրությունը<sup>1</sup>: Հայկական լեռնաշխարհում կիմերների և սկյութների ներկայության խնդիրը հնագիտորեն հավաստելու, հնագիտական իրողությունները պատմամշակութային իրավիճակին համաձայնեցնելու և համաժամանակացնելու համար այսօր արդեն կան լուրջ նախադրյալներ: Հայկական լեռնաշխարհի արևելքում մեր կողմից նախկինում առանձնացվել են 55 դամբանադաշտերի կամ դամբանախմբերի 115 դամբարաններ<sup>2</sup>, որոնցից յուրաքանչյուրում, ընտրված 40 հատկանիշներից, առկա են կիմերա-սկյութական մշակութային ընդհանրությանը բնորոշ առնվազն երեք հատկանիշներ: Հաշվի առնելով ձիու վճռորոշ դերը կիմերական ու սկյութական ցեղերի կյանքում՝ «կիմերա-սկյութական» թաղումների առանձնացման համար ընտրված հատկանիշներից մեկը համարվել է ձիու առկայությունը դամբարանում<sup>3</sup>: Կարծում ենք, որ Հայքի «կիմերա-սկյութական» դամբարաններում ձիու կամ ձիասարքի առկայության փաստերից կարելի է եզրակացնել, որ դրանցում հեծյալ ռազմիկներ են ամփոփվել: Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. VIII դ. վերջ - VI դ. երրորդ քառորդի դամբարաններում ձիու և մարդու համատեղ թաղումների զգալի ավելացումը նշանավորում է թաղման ծեսում փոփոխությունների նոր փուլ<sup>4</sup>, որը, հավանաբար, կապված է էթնիկական այլ խմբերի ներխուժման հետ:

### **Ձիով և/կամ ձիասարքով թաղումները**

Հայկական լեռնաշխարհի արևելյան հատվածի կիմերա-սկյութական մշակութային ընդհանրության հատկանիշներով 144 դամբարաններից 33-ում մարդկանց հետ միասին ձիեր են թաղվել: Ձիերի զոհաբերության փաստեր

<sup>1</sup> Ադոնց 1972, 287-305, Մանանդյան 1944, 23, 41, Սամուելյան 1931, 83-87:

<sup>2</sup> Tumanyan 2010, 189: Հիշատակված հողվածում բերված քանակից հանել ենք 2-ական դամբանախումբ և դամբան, որոնք գտնվում են Հայկական լեռնաշխարհի արևմուտքում: Այժմ դամբանախմբերի ու դամբանների քանակը հասել է համապատասխանաբար 60-ի և 144-ի:

<sup>3</sup> Թաղման ծեսերում ձիու զոհաբերության փաստեր են արձանագրվել նաև նախորդ դարաշրջաններում. տե՛ս Туманян 2023, 73: Նշված հողվածում, Հայաստանի բրոնզ-վաղերկաթեդարյան ժամանակաշրջանով սահմանափակվելով, խուսափել ենք երբեմն հարյուրից ավելի ձիերի զոհաբերությամբ ուղեկցվող կիմերա-սկյութական հատկանիշներով թաղումներին անդրադառնալուց՝ համոզված լինելով, որ վաղ երկաթի դարին հաջորդող ժամանակաշրջանում հիշյալ թեման, անկասկած, առանձին մանրակրկիտ հետազոտության կարիք ունի: Սույն աշխատությունը մի փորձ է լրացնելու այդ բացը:

<sup>4</sup> Мартиросян 1954, 99, Алиев 1979, 5-7.

են արձանագրվել Արտաշավանի N 3, 6 ստորգետնյա քարարկղներում<sup>5</sup>, Ոսկեհասկի N 2, 6, 7 կատակոմբներում<sup>6</sup>, Շիրակավանի «հեծյալ ռազմիկի»<sup>7</sup>, N 67 և 122 թաղումներում<sup>8</sup>, Սարատակի<sup>9</sup>, Վանաձորի<sup>10</sup>, Լոռի բերդի N 1, 2, 4, 56, 62, 63, 111<sup>11</sup>, Դմանիքի N 4<sup>12</sup> դամբարաններում, «Պատաշարի» N 2 և Արծվաքարի «Աղբրի գլխի» N 1<sup>13</sup>, Աստղաձորի N 1, 2, 3<sup>14</sup>, Վարդենիսի<sup>15</sup>, Խոջալիի N 2<sup>16</sup>, Մինգեչաուրի I-V դամբանաբլուրներում<sup>17</sup>, Հրաքոտ Պերոժի Փոքր դամբանաբլուրում<sup>18</sup>, Գետաբեկի N 33, 56 դամբաններում<sup>19</sup>: Ձիերով թաղումները կազմում են քննարկվող դամբարանների ընդհանուր թվի 22, 92 տոկոսը:

Ձին ձիասարքի հետ է ամփոփված Արտաշավանի N 6, Վանաձորի, Լոռի բերդի N 1, 2, 4, 56, 62, 63, 111, «Պատաշարի» N 2, Աստղաձորի N 2, Վարդենիսի, Խոջալիի N 2, Մինգեչաուրի I-V, Հրաքոտ Պերոժի Փոքր դամբանաբլուրներում, Գետաբեկի N 56 դամբարանում: Թվարկված 20 դամբարանները կազմում են կիմերա-սկյութական մշակութային ընդհանրության հատկանիշներով թաղումների ընդհանուր թվի 13,89%-ը:

<sup>5</sup> Ավետիսյան և այլք 1998, 210, 214:

<sup>6</sup> Петросян 1989, 69-70, 77.

<sup>7</sup> Khudaverdyan et al. 2016, 49-52, Khudaverdyan et al. 2017, 52-53.

<sup>8</sup> Թորոսյան և այլք 2002, 128-130:

<sup>9</sup> Եգանյան 2002, 4-5:

<sup>10</sup> Мартиросян 1964, 213.

<sup>11</sup> Դևեժյան 1991, 40-41, Devedjian 2010, 76, Devedjian, Davtyan 2017, 186-187: N 111 դամբարանին վերաբերող տվյալները քաղել ենք Լոռի բերդի դամբարանադաշտի պեղումների մասին հնագետ Ս. Դևեժյանի՝ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտխորհրդին 2014 թ. տված հաշվետվությունից: Մեզ հետաքրքիր են թվում նաև այն դիտողությունները, որոնք արվել են Լոռի բերդի N 59 դամբարանում թոջնաձև կանթով բրոնզե անոթի հայտնաբերման կապակցությամբ. «Կաթսայիկը կարող էր բերված լինել Վանա և Ուրմիա լճերի շրջակայքից կամ Մանա-Մարաստան – Լուրիստան ուղղությամբ գտնվող երկրներից ...Մ.թ.ա. VIII-VI դդ., հիշյալ երկրներից, տարբեր ճանապարհներով կամ պատճառներով (հիմնականում ռազմական) Լոռի բերդ ներմուծվել են նյութական մշակույթի բազմաթիվ ու բազմազան առարկաներ, որոնք դամբարաններում ուղեկցվում են ձիերի թաղումներով: Դրանք հատկապես առատ են մ.թ.ա. VII-VI դդ. թվագրվող դամբարաններում». տե՛ս Դևեժյան 2005, 132:

<sup>12</sup> Ботвадзе 1947, 16.

<sup>13</sup> Լալայան 1906, 8, 18, Լալայան 1928, 91-93, Լալայան 1931, 84-86:

<sup>14</sup> Мнацаканян 1957, 109, Մնացականյան 1964, 232:

<sup>15</sup> Мнацаканян 1955, 40.

<sup>16</sup> Кушнарева 1970, 111.

<sup>17</sup> Асланов и др. 1959, 92-96, 107-115.

<sup>18</sup> Иессен 1965, 23.

<sup>19</sup> Ивановский 1911, 106, 128.

Կուրթանի<sup>20</sup>, Նորատուսի N 21 և 22<sup>21</sup>, Կարճաղբյուրի N 27 ու 28<sup>22</sup>, Սողքի<sup>23</sup>, Եղեգնաձորի «Ջոջ դարի»<sup>24</sup>, Խոջալիի N 11<sup>25</sup>, Ներքին Հոռաթաղի<sup>26</sup> դամբաններում առկա է միայն ձիասարքը, երբեմն՝ ոչ լրիվ կազմով: Այս 9 դամբարանները, որոնցում կիրառվել է «մասը փոխարինում է ամբողջին» սկզբունքը, կազմում են խնդրո առարկա դամբանային համալիրների 6,25%-ը:

Ձիերի որոշ ոսկորների մակերևույթին հատող սուր գործիքների հետքեր են հայտնաբերվել: Դրանց հիման վրա հետևություն է արվել, որ ձիու միսը սննդի մաս է կազմել<sup>27</sup>: Այստեղ ավելի ճիշտ կլիներ եզրակացնել, որ բերված փաստերը խոսում են ձիերի զոհաբերության մասին, քանի որ կենդանիների զոհաբերություններն ուղեկցվում են զոհի մսի ճաշակմամբ՝ հասարակական հացկերույթով<sup>28</sup>: Ոսկրաբանական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ուրարտական ժամանակաշրջանի ձիերն իրենց հիմնական ցուցանիշներով շատ մոտ են նախորդ դարաշրջանի ձիերին: Սակայն Կարմիր բլուրում հայտնաբերված ձիերից մեկը խիստ կարճահասակ է եղել (մինչև հետնաբաշն ունեցած բարձրությունը՝ 125,5 սմ) և իր զուգահեռները չի ունեցել 136-140 սմ հասակ ունեցող երկաթեդարյան օրինակների շարքում<sup>29</sup>: Նման տիպի ցածրահասակ ձին կարող է դասվել բեռնակիր ձիերի շարքը, որոնցից նմուշներ են հայտնաբերվել Լոռի բերդի դամբարանադաշտի պեղումներով<sup>30</sup>: Ն. Մանասերյանի դասակարգմամբ՝ ցածրահասակ են համարվում 128-136 սմ հասակ ունեցող ձիերը<sup>31</sup>, իսկ Ս. Մեժլումյանը 139 սմ և 140 սմ հասակ ունեցողներին համարել է միջահասակ և կարճահասակների շարքն է դասել երկու առանձնյակի, որոնք համապատասխանաբար ունեն 136 և 137 սմ բարձրություն: Ելնելով Ս. Մեժլումյանի կազմած՝ ձիերի չափերի փոփոխության դիագրամից, որտեղ արտահայտված է Հայաստանի բրոնզի դարաշրջանից մինչև նախահռոմեական դարաշրջան ձիերի չափերի փոքրացման միտումը<sup>32</sup>, չի կարելի բացառել, որ այս վերջին երկու ցած-

<sup>20</sup> Мартиросян 1964, 290.

<sup>21</sup> Ենգիբարյան 1991, 67-68:

<sup>22</sup> Ենգիբարյան 2014, 40-41:

<sup>23</sup> Եսայան 1979, 278:

<sup>24</sup> Хнкикян 2002, 95.

<sup>25</sup> Кушнарева 1970, 114.

<sup>26</sup> Աւրյան 1973, 297:

<sup>27</sup> Межлумян 1972, 115. Հեղինակը ակնհայտորեն նկատի ունի հոգեհացի արարողությունը:

<sup>28</sup> Витт 1937, 13-14.

<sup>29</sup> Межлумян 1972, 117-118.

<sup>30</sup> Մեժլումյան 1991, 46:

<sup>31</sup> Манасерян 2011, 38.

<sup>32</sup> Межлумян 1972, 123, рис. 19.

րահասակ ձիերը, որոնց ոսկորները հայտնաբերվել են ուրարտական հուշարձաններում, «բուն ուրարտական» չլինեն<sup>33</sup>:

### **Տեղեկություններ այլ տարածաշրջանների վերաբերյալ**

Կիմերական ու սկյութական ցեղերի կենցաղում պատերազմն ընդհանրապես մեծ դեր էր խաղում<sup>34</sup>, իսկ ձին հիշյալ ցեղախմբերի համար դարձել էր պատերազմի հիմնական «զենքը»<sup>35</sup>: Իրենց արագաշարժ ձիերին ապավինելով՝ կիմերներն ու սկյութները նոր մարտավարություն էին կիրառում. հանկարծակի գրոհում էին հակառակորդի շարքերը և նույնքան անսպասելի՝ անհետանում: Իսկ եթե, այնուամենայնիվ, նրանց հետքը գտնվում էր, սկյութներին ու կիմերներին հաջողվում էր խուսափել հետապնդումից, քանի որ նրանք կարողանում էին ձիավարել ծնկներով և սրունքներով, որը հնարավորություն էր տալիս ձիու սրընթաց վազքի ժամանակ հետ շրջվել ու աղեղից նետ արձակել հետապնդող թշնամու վրա: Աննախադեպ շարժունակությունը կիմերական և սկյութական հեծյալ զորախմբերի համար առավելություն էր ապահովում հակառակորդների հանդեպ: Կիմերների ու սկյութների ձիերն արտակարգ դիմացկուն էին ու տիրոջ հետ ասես մի ամբողջություն էին կազմում: Ձիավարելու հմտության և պարսիկների կողմից «կիմերական» կոչված յուրահատուկ նետ ու աղեղի<sup>36</sup> գործածության շնորհիվ հիշյալ ցեղախմբերը կարողանում էին հաղթել ու հսկայական ավար ձեռք բերել:

Կուբանի սկյութական «արքայական» դամբարանները, օրինակ, աչքի են ընկնում գույքի ճոխությամբ՝ զարդաբանված զենքերով, անոթներով, թանկարժեք մետաղներից պատրաստված սկահակներով ու պերճանքի առարկաներով: Այստեղ թաղումներն ուղեկցվել են մարդկանց և ձիերի զոհաբերություններով: Ուսկի աուլի դամբանաբլուրներից մեկի շրջագծով հայտնաբերվել են 360 ձիերի կմախքներ, իսկ ավելի քան 50 ձիերի մնացորդներ հայտնաբերվել են դամբանաբլրի լիցքում<sup>37</sup>: Կարելի է ենթադրել, որ դրանք ննջեցյալի հպատակների ընծաներն են իրենց տիրոջը, որպեսզի նա անդրաշխարհում ևս ապահովված լինի ձիերի երամակներով: Այսինքն՝ սկյութների առօրյա կյանքում ձիու ունեցած վճռորոշ դերն իր արտահայտություններն է գտնում նաև թաղման ծեսում: Կյանքում տիրոջից անբաժան ձին նրան ուղեկցում էր նաև այնկողմնային աշխարհում:

<sup>33</sup> Հնարավոր է համարվում, որ որոշ ձիեր, որոնց կմախքների մասերը հայտնաբերվել են ուրարտական հուշարձաններում, բնորոշ լինեն աշխարհագրորեն հեռու տարածաշրջաններին. տե՛ս Межлумян 1972, 118: Քանի որ դրանք տեղական/էթիոպյան լինել չեն կարող, ուստի առավել հավանական պետք է համարել դրանց հյուսիսային ծագումը:

<sup>34</sup> Мелюкова 1964, 7.

<sup>35</sup> Витт 1937, 14.

<sup>36</sup> Zutterman 2003, 141.

<sup>37</sup> Childe 1944, 95, Артамонов 1974, 63-64.

Կելերմեսի դամբանաբլուրներից մեկում հայտնաբերվել են զոհաբերված 24 ձիերի ամբողջական կմախքներ: Ձիերից 12-ը տեղադրվել են հիմնահողային դամբանասրահի արևմտյան պատի երկայնքով, մյուս 12-ը՝ թաղման սրահի վերին եզրի հարավային կողմում: Ստորին շարքի ձիերից 10-ը առանց սանձերի են թաղվել, վերջին երկուսը՝ երասաններով ու արծաթե կլոր զարդավահանակներով: Վերին շարքի ձիերից 6-ի գլխանոցները զարդարված են եղել ոսկյա թիթեղներով, հաջորդ 6-ի լծասարքի բաղադրիչները պատրաստված են եղել փորագրագարդ ոսկորներից: Առավել ճոխ է հանդերձավորված եղել կենդանիների առաջին զույգը, այնուհետև, գնալով, հանդերձանքը զույգ առ զույգ ավելի համեստ է դարձել: Այսպիսով, զոհաբերված ձիերի շարքում առկա է եղել յուրատեսակ «սոցիալական» աստիճանավորում<sup>38</sup>:

Պազիրիկի (Ալթայ) դամբանաբլուրներում ձիերը թաղված են եղել դամբանախցերի հյուսիսային պատի երկայնքով, գլխով դեպի արևելք, մի քանի շարքով, յուրաքանչյուրում՝ 4-ական առանձնյակ: Քիչ տեղ զբաղեցնելու նպատակով դրանք տեղադրվել են «վիրավոր եղջերուի» դիրքով: Դամբարան իջեցված բոլոր ձիերն արական սեռի են, ենթադրաբար՝ ամորձատված: Այդ կենդանիների պոչերը հյուսված են եղել: Ենթադրվում է, որ հիշյալ երևույթը բնորոշ է թաղման արարողությանը<sup>39</sup>: Այս ենթադրությունը հաստատվում է Հարավային Սիբիրում հայտնաբերված սկյութական գոտիներից մեկի վահանակի պատկերագրությամբ<sup>40</sup>: Պազիրիկի դամբարաններից մեկում հայտնաբերված թաղիքե գորգին պատկերված է մահացած հեծյալը՝ մահվան աստվածուհու առջև<sup>41</sup>: Գորգի վրա պատկերված ձիերի պոչերը նույնպես հյուսված են:

Արժանի (Տուվա) «արքայական» դամբանաբլուրներից մեկում պեղումներով հայտնաբերվել են առնվազն 155-160 հեծկան ձիերի կմախքներ, իսկ դամբանաբլրի շրջագծով, 15-30 մ հեռավորությամբ կառուցված քարե շրջանների ներսում գտնվել են ևս 300 ձիերի ոսկորներ, որոնց միսը, հավանաբար, ճաշակել են հոգեհացի արարողության մասնակիցները: Հեծկան ձիերն արական սեռի են, 12-15 տարեկանից մեծ<sup>42</sup>:

### Ազգագրական տեղեկություններ

Կիմերների սովորությունների վերաբերյալ տեղեկությունները, ցավոք, շատ սուղ են: Իսկ սկյութների հետնորդ ժողովուրդների ազգագրական

<sup>38</sup> Галанина 1983, 33-35, таб. 1, 2.

<sup>39</sup> Витт 1952, 163-168, 182-184.

<sup>40</sup> Гуляев 2013, 13, илл. 2.

<sup>41</sup> Hansen 1980, 35.

<sup>42</sup> Ковалевская 1977, 117, Грязнов 1980, 45-46, 49-50.

տվյալները բավականաչափ նպաստում են վերակազմելու թաղման ծեսում ձիու զոհաբերության ծիսակատարությունը: Օսերի մոտ մինչ այժմ պահպանվել է հանգուցյալի հետ դամբարանում ձիուն զետեղելու ծիսակատարության արձագանքը՝ նժույգի նվիրաբերման արարողությունը: Թաղման ժամանակ ձիուն՝ համապատասխան հանդերձանքով, գերեզմանի մոտ էին բերում և սանձը դնելով հանգուցյալի ձեռքերի մեջ, ասում էին. «Թող այս ձին քոնը լինի»: Կենդանուն երեք անգամ պտտում էին գերեզմանի շուրջը, խուզում էին պոչի ծայրը, ականջին կտրվածք էին անում, կերակրում, թասով տնական գարեջուր էին տալիս ու այդ թասը խփելով ձիու սմբակին՝ ջարդում էին և բեկորները գերեզման դնում: Ծիսակատարությունը վարող անձնավորությունն իր խոսքում նկարագրում էր ննջեցյալին սպասվող դժվարին ճանապարհը և խնդրում էր կենդանուն օգնել իր տիրոջը նախնիների օթևանը տանող ճանապարհին: Այնուհետև ներկաներից մեկը հեծնում էր ձին ու քշում մինչև դրա քրտինքով ծածկվելը<sup>43</sup>: Թաղման ծեսում նժույգների նվիրաբերման արարողությունը իր արտահայտությունն է գտել Սիբիրում պատահաբար գտնված գոտու վահանակի պատկերագրությունում: Տիեզերական ծառի տակ նստած մայրն իր գիրկն է առել մահացած երիտասարդ որդու գլուխը: Զույգ նժույգները տխուր կանգնած են տիրոջ դիակի առջև, դրանց թամբերի փորկապերն արձակված են, որպես սգո նշան: Հայրը կարծես փորձում է սանձը դնել որդու աջ ձեռքի մեջ<sup>44</sup>: Ողջ արարողությունը սերտորեն աղերսվում է տիեզերական ծառին:

Նման սովորություններ են փաստագրվել նաև հայերի մոտ: Աղձնիքում՝ անդրանիկ որդու հուղարկավորության ժամանակ, հայերը մի ձի էին հանդերձավորում, վրան դնում էին մահացածի հագուստը և ձիուց կախում ննջեցյալի սուրը, վահանը, հրացանը<sup>45</sup>: Վայոց ձորում ևս երիտասարդ ննջեցյալի ձին՝ հակառակ կողմից թամբած, հանգուցյալի հագուստները վրան, զենքերը թամբից կապված տարել են մինչև գերեզմանատուն<sup>46</sup>: Տիրոջ հետ ձիու թաղման ավանդույթի արձագանքները պահպանվել էին սվանների մոտ: Երբ սվանը մեռնում էր, նրա ձին բերում էին դագաղի մոտ, իսկ հուղարկավորության ժամանակ երիտասարդներից մեկը սգո թափորի առջևից ձին առաջ ու հետ էր քշում: Ավելի հնում՝ թաղման ծեսը կատարելիս, ննջեցյալի ձին քշում էին մինչև սատկելը<sup>47</sup>: Հնդեվրոպացիների առասպելաբանության մեջ ձին հանդես է գալիս որպես տիեզերական ծառին համարժեք ծիսական խորհրդանիշ<sup>48</sup>: Այս միտքն իր հաստատումն է գտնում

<sup>43</sup> Дюмезиль 1976, 42, Кузьмина 1977, 43.

<sup>44</sup> Гуляев 2013, 13, илл. 2.

<sup>45</sup> Արվանձոյանց 1876, 114:

<sup>46</sup> Լալայան 1928, 116:

<sup>47</sup> Бардавелидзе 1957, 166.

<sup>48</sup> Иванов 1974, 94, 115.

հիշյալ սկյութական գոտու վահանակի պատկերագրությամբ, որտեղ ծիսական զույգ ձիերը և տիեզերական ծառը ասես մեկ ամբողջություն են կազմում: Տիեզերքի տարբեր գոտիների միջև կապը իրականացնելու գործառույթը կարելի է անվանել «ուղղաձիգ հաղորդակցություն»: Սկյութական ու կիմերական հնարավորինս վերակազմվող թաղման ծեսերում նման հաղորդակցության դեր էր վերապահված ծիսական ձիուն: Ննջեցյալը հենց ոտքը հագցնելով ծիսական սև ձիու ասպանդակին, նժույզն ակնթարթորեն նրան երեք անգամ կբարձրացնելով երկինք ու կիջեցնելով գետին: Այդ արտասովոր շարժումը հանգուցյալին երկրային էակից կվերափոխելով երկնային լուսատուի, և նա կուղևորվեր այնկողմնային աշխարհ՝ Բարաստըրի մոտ<sup>49</sup>: Ձին շարժվում էր արագ ու թեթև և հենց այդ հատկանիշներն էլ խորհրդանշում էր: Ձոհաբերվող ծիսական ձին ընկալվում էր որպես երկնային էակ: Այդ կենդանին, ակնհայտորեն, պիտի անդրաշխարհ փոխադրեր իր մահացած տիրոջը<sup>50</sup>: Դավթի կովին հասնելու համար երեք տարբեր գույնի ձիերից Ձենով Հովանն ընտրում է սև ձիուն, որը նրան ասում է. «Որ դու կարնաս քեզ վե՛ր իմ քամակին բռնես՝ // Մեկ ոտ թալես զանգուն, // Չուր մեկ էլ որ շուռ տաս մեկ էլ զանգուն, // Կը հասցնեմ Դավթի կովին»<sup>51</sup>: Սա ակնհայտորեն հիշեցնում է ննջեցյալին այնկողմնային աշխարհ (Բարաստըրի երկիր) ճանապարհելու օսական ծեսը, որտեղ մահացածի համար ընտրվում է երեք սև ձիերից մեկը: Այստեղ նմանություն է դրսևորվում ոչ միայն եռակիության հայեցակարգերի, այլև որոշակի մանրամասնությունների միջև:

Ըստ Ստրաբոնի՝ մասագետները որպես աստված էին երկրպագում միայն արևին ու նրան ձիեր էին զոհաբերում<sup>52</sup>: Երկաթեդարյան Հայաստանում Արևի աստծուն ձիեր էին զոհաբերում իր սրբարանում<sup>53</sup>: Ձիու զոհաբերության հիշյալ փաստերի և մի շարք այլ տվյալների հիման վրա ենթադրվում է Մեծամորի պաշտամունքային համալիրում արևին նվիրված ծեսերի կատարումը<sup>54</sup>: Հիշենք նաև Քսենոփոնի այն վկայությունը, որ իրեն ժամանակակից հայերն արևին ձիեր էին զոհաբերում<sup>55</sup>:

Հնագիտական գտածոների քննարկման միջոցով փորձ է արվել հիմնավորել հելլենիստական դարաշրջանի Հայաստանում Միհրի կերպարի

<sup>49</sup> Раевский 1985, 42.

<sup>50</sup> Ковалевская 1977, 78.

<sup>51</sup> Սաունցի Դավիթ 1961, 240:

<sup>52</sup> Страбон 1964, XI, 8, 6.

<sup>53</sup> Ханзадян 1985, 284-285. Ն. Մադի կարծիքով, հայ ցեղի տոտեմը սկզբնապես եղել է ոչ թե ձի կամ թևավոր ձի, այլ ինչ-որ թռչուն. տե՛ս Март 1922, 133: Ձի-թռչուն նույնականությունը հավաստվում է ձիուն թռչունի անուն տալով. օրինակ՝ Արծիբինի-Արծիվ կամ երկնային թևավոր ձիերի պատկերացումներով. տե՛ս Иванов 1974, 137-138:

<sup>54</sup> Իսանզադյան և այլք 1973, 141:

<sup>55</sup> Քսենոփոն 1970, IV, V (35): «Այդ զոհաբերության իմաստն այն է, որ ամենաարագընթաց աստծուն պետք է զոհաբերել արարածներից ամենաարագընթացին», տե՛ս Հերոդոտոս 1986, I, 216:

առկայությունը՝ ձիու տեսքով: Շիրակավանի սրբարաններից մեկում զոհաբերված երկու ձիերի գանգերի վերևում հայտնաբերված ձիակերպ խեցանոթը համարվում է երկաթեդարյան (այդ թվում՝ կիմերական - Գ.Թ.) ավանդությունների շարունակությունը<sup>56</sup>: Հայշտատյան ու վաղլատենյան դարաշրջաններում լայն տարածում ստացած ձիակերպ շիգդերը<sup>57</sup> պաշտամունքի հետ են կապվում: Ձիու զոհաբերությունը սերտորեն առնչվում է պտղաբերության գաղափարին ու ֆալլիկ խորհրդանիշներին<sup>58</sup>:

Ինչպես կիմեր ռազմիկն ու իր երիվարը, այնպես էլ սկյութն ու իր ձին, ասես, միաձույլ ամբողջություն էին կազմում: Օսական առածն ասում է. «Առանց ձիու մարդն անթև թռչնի նման է»<sup>59</sup>: Կիմերներն ու սկյութներն իրենց կյանքն առանց ձիերի չէին պատկերացնում: Դրանք անբաժան էին իրենցից նաև մահվան ժամանակ: Ծիսական ձին հանգուցյալին պիտի գերծ պահեր փորձություններից, որոնք ննջեցյալին դարանակալում էին երկնքի ճանապարհին: Ըստ երևույթին, ծիսական ձիուն վերագրվել է նաև պահպանական նշանակություն<sup>60</sup>:

### Եզրակացություններ

Այսպիսով, կարելի է փաստագրել, որ Հայկական լեռնաշխարհի արևելյան հատվածի մ.թ.ա. VIII դ. վերջ - VI դ. երրորդ քառորդի դամբարաններում ձիու և մարդու համատեղ թաղումների զգալի ավելացումը նշանավորում է թաղման ծեսում փոփոխությունների նոր փուլ՝ կապված այլթնիկ խմբերի ներխուժման հետ: Այդ ժամանակաշրջանում Հայքում ի հայտ են գալիս կիմերա-սկյութական մշակութային ընդհանրության հատկանիշներով մեծաթիվ դամբարաններ: Կարևոր ու բնորոշ հատկանիշներից են ինչպես ձիու և/կամ ձիասարքի տեղադրված լինելը, այնպես էլ կիմերա-սկյութական տիպի գեների՝ նետասլաքներ, բոլորատեգեր, ակինակներ, կոր դանակներ և այլն, հանդերձանքի, աշխատանքի գործիքների, կենցաղային իրերի (այդ թվում՝ խեցեղենի) առկայությունը դամբարանում: Թեև ձիու ծիսական գործառույթները փաստագրված են թե՛ ուրարտական, թե՛ հնագույն հայկական/էթիոնյան մշակույթներում, այնուամենայնիվ, դրանց հաջորդած հին հայկական մշակույթում այդ սիրված կենդանու ծիսապաշտամունքային նշանա-

<sup>56</sup> Тер-Мартirosов, Караханян 1998, 21.

<sup>57</sup> Metzner-Nebelsick 2007, 713-721.

<sup>58</sup> Иванов 1974, 122-123, прим. 142.

<sup>59</sup> Դավայան 2004, 77:

<sup>60</sup> Ազգագրական տվյալները հաստատում են ձիու չարխափան, պահպանիչ նշանակությունը: Ցանքերը «չար աչքից» ու «չար խոսքից» գերծ պահելու համար ձողին ամրացված ձիու գանգը ցցում էին տվյալ հողատարածքի կողքին. տե՛ս Սամուելյան 1931, 195, Գևորգյան 1980, 17:



կոթյունն ավելի աճեց՝ կապված ժողովրդի կյանքում ձիու առաջնային դերակատարման հետ:

### **Օգտագործված գրականություն**

- Ադոնց Ն. 1972, Կիմերները և սկյութները Առաջավոր Ասիայում, Հայաստանի պատմություն, Ֆրանսերենից թարգմ. Վ.Պ. Սեդրոյանը, Երևան, «Հայաստան», էջ 287-305:
- Марр Н.Я. 1893, Имя Буть или Будь в армянской надписи VII в. по Р.Х. (ред. В.Р. Розен) Записки Восточного отделения императорского русского археологического общества, VII, С.-Петербург, типография Императорской Академии Наук, N 12, с. 322-326.
- Петров В.А. 1940, Этноботаника Нагорного Карабаха, Баку, Азербайджанский филиал АН СССР, 176 с.
- Петросян А.Е. 2016, Миф об аргонавтах: индоевропейские параллели и история, Индоевропейское языкознание и классическая филология, Санкт-Петербург, с. 861-878.
- Страбон 1994, География в 17 книгах, репринтное воспроизведение текста издания 1964 г., перевод С. Утченко, Москва, «Ладомир», 936 с.
- Мовсес Хоренаци 1990, История Армении. Перевод с древнеармянского языка Г. Саркисяна, Ереван, «Айастан», 291 с.
- Britten J. and Holland R. 1886, Dictionary of English Plant Names (DPN), London, Trübner & Co., Ludcate Hill, 660 p.
- Schauer Th., Caspari C. 2005, Der BLV Pflanzen-führer für unterwegs (PUW), München, BLV Buchverlag Gmbh & Co.KG, 425 p.
- IP Primaflora.com/ru/articli/astragal-astragalus (дата обращения 19.01.2024).

**ԱՐԳՈՆԱՎՈՐԴՆԵՐԻ ԱՌԱՍՊԵԼԸ ԵՎ ԲՈՒՅՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ  
ԴԻՑԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Էմմա Պետրոսյան

Ամփոփում

Հոդվածը նվիրված է վայրի բույսերի անվանակարգին, որն արտացոլված է փոխաբերություններում՝ կապված Աստղիկ, Վեներա, Աֆրոդիտե աստվածուհիների և Բուբ կերպարի հետ: Ուսումնասիրության առարկան բուսանունները, դրանց ժողովրդական տարբերակները և անտիկ հեղինակների տեղեկություններն են: Հայ դիցարանում Աստղիկի խորհրդանիշը աստղն է, նաև աստղիկ բույսը, որը վկայված է

հայկական բուսաբանական անվանակարգում: Լատիներեն, անգլերեն, գերմաներեն և ֆրանսերեն լեզուներում աստղիկ ծաղկին համապատասխանում է հին առասպելաբանության վրա հիմնված փոխաբերությունը, ինչպես՝ անգլ. Venus's looking glass, լատ. Legousia speculum Veneris Dur, գերմ. Venusspiegel, Miroir de Venus, որոնք բոլորն էլ թարգմանվում են «Վեներայի հայելի»: Փոխաբերությունների իմաստաբանության վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք ձևավորվել են արգոնավորդների առասպելի և դրա կերպարների՝ Աֆրոդիտեի, Հերայի, Աթենայի, Յասոնի և արգոնավորդ Բուֆի սյուժեների հիման վրա: Բուֆը Աֆրոդիտեի սիրահարն էր և իր անունով կոչվող Բուֆ լեռան վրա գտնվող Աֆրոդիտեի սրբավայրի քրմապետը: Բուֆի մականունը Յուլ էր կամ Եզների հովիվ (βούτης) էր:

Անձնացյաց գավառում հիշատակվում է Բուֆ լեռը, որտեղ գտնվում էր Անահիտի, (ծածկագիրը՝ Աստղիկ) սրբավայրը՝ Բուֆ աստծու տաճարը: Բուֆը նաև հովիվ էր: Կերպարների համեմատությունը բերում է այն եզրակացության, որ արգոնավորդ Բուֆը և հայ Բուֆը նույն անձնավորությունն են:

Արգոնավորդների սյուժեում հիշատակվում է վեգ խաղը (astragalus, ոսկոր) Գանիմեդի և Էրոսի միջև: Հայ հավատալիքներում աստրագալուսը սուրբ բույս է, վեգ խաղը նույնպես սուրբ է համարվում:

Ինչպես ցույց է տալիս եզրույթների և սյուժեների վերլուծությունը, դրանք բոլորն էլ առնչվում են հնդեվրոպական դիցաբանության հետ: Հայկական բարձրավանդակում և Բալկաններում հնդեվրոպական համայնքի քայքայումը, էթնիկ խմբերի հետագա միգրացիան դեպի արևմուտք հանգեցրին բույսերի նոր անվանումների փոխառությունների, որոնց բովանդակությունն անհասկանալի էր տեղի բնակչության համար. Անգլիան, Ֆրանսիան և Գերմանիան բնակեցնող ժողովուրդների պանթեոնում այդպիսի աստվածներ և առասպելներ չկային:

**Բանալի բառեր՝** աստղ, Աստղիկ, Վեներա, Աֆրոդիտե, Բուֆ, բույս, առասպել:

## LEGEND OF ARGONAUTS AND NOMINATIONS OF PLANTS IN THE CONTEXT OF MYTHOLOGY

Emma Petrosyan

Abstract

The article is devoted to consideration of the nomination of wild plants reflected in mythologies and associated with the images of the goddesses Venus, Aphrodite and Astghik. The subject of the study is the names of plants, their folk variants, and data from ancient authors.

The symbol of the goddess Astghik is a star in Armenian mythology, and the plant *astghik* as the plant aster attested in the Armenian botanical nomenclature. The plant *astghik* corresponds to a metaphor in Latin, English, French and German languages, such in Engl. Venus's looking glass, Lat. Legousia speculum Veneris Dur, Germ. Venusspiegel, Fr. Miroir de Venus. Analysis of the semantics of metaphors showed that they were formed on the basis of the plots of Argonautics and its characters – Aphrodite, Hera, Athena, Jason, Boot. Boot was the lover of Aphrodite, a priest on Mount Boot, there was a sanctuary of Aphrodite and the throne of Boot, whose nickname was the bull or bootes (βούτης).

The sanctuary of goddess Anahit (astral code of Astghik) was on the Mount Boot, the priest of Mount Boot was Boot, and there was the throne of Boot. He was also a cattle breeder. The argonaut Boot and the Armenian Booth are the same persons.

The plot of Argonautics is reflected in the game of dice (astragalus) between Gany-mede and son Eros. The astragalus is a sacred plant and a game of animal dice of the Armenians too. The semantics of plant names and plots indicates a relationship to Indo-European mythology. The collapse of the Indo-European communities in the Armenian Highlands and the Balkans, and the migration of ethnic groups to the West led to the emergence of new plant terminology the content of which was unknown to the local population: there were no such gods and myths in the pantheon of populations of England, France, and Germany.

**Key words** – star, Astghik, Venus, Aphrodite, Boot, plant, myth.

# ՄԱՆՈՒԿ ԱՐԵՂՅԱՆԻ «ՎԻՇԱՊՆԵՐ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

## Արսեն Բորոխյան

Պատմական գիտությունների թեկնածու  
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ  
ՀՀ, Երևան, Չարենցի 15

Էլ. hwaugb@arsenbobokhyan@yahoo.com

ORCID: 0000-0002-2277-8281

Հոդվածը ներկայացվել է 15.10.2023, գրախոսվել է 10.02.2024, ընդունվել է տպագրության 02.08.2024

DOI: 10.53548/0320-8117-2024.2-336

### Ամփոփում

«Վիշապներ» կոչված կրթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ՝ մենագրությունը (Երևան, 1941) Մանուկ Աբեղյանի վերջին աշխատանքներից է, որում հեղինակն իր տեսակետներն է առաջարկում հնագիտական հուշարձան վիշապաքարերի և դրանց իմաստաբանության վերաբերյալ: Աշխատանքը գրվել է այն բանից հետո, երբ լույս է տեսել Բ. Պիոտրովսկու «Վիշապներ» գրքուկը (1939 թ.): Հոդվածում ցույց է տրվում, որ այս ձեռնարկման հիմքում ընկած էին մի կողմից անձնական հակասությունները Լենինգրադի հետ՝ «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակին նվիրված միջոցառումների կապակցությամբ (1939 թ.), մյուս կողմից էլ կարևորվում էր գիտական բանավեճը: Դրանով բանագետը այլ տեսակետ էր հայտնում, քան հնագետները՝ տարանջատելով առասպելական և հնագիտական «վիշապ» հասկացությունները: Այստեղ կարևոր էր մեկ ու ավելի խոր պատճառ. Ն. Մառը (և իր դպրոցը) ու Մ. Աբեղյանը տարբեր գիտական աշխարհայացքների կրողներ էին: Մ. Աբեղյանը իր տեսությունները զարգացնում էր հիմնականում հնդեվրոպաբանության տեսանկյունից, մինչդեռ Ն. Մառը էապես դեմ էր հնդեվրոպաբաններին՝ նրանց հակադրելով իր «ասիանիկ» տեսությունը, որը կիրառում էր նաև հայագիտության բնագավառում, մասնավորապես՝ վիշապաքարերի երևույթը մեկնաբանելիս: Ներկայացվող հոդվածը անդրադարձ է կատարում քննարկվող գրքի ստեղծման յուրահատուկ հանգամանքներին՝ հենվելով արխիվային նյութերի և հուշագրությունների վրա:

**Բանալի բառեր՝** Մ. Աբեղյան, «Վիշապներ» գիրքը, արխիվ, Ն. Մառ, Յ. Սմիրնով, Հ. Օրբելի, Բ. Պիոտրովսկի:

### Ներածություն

Մեծանուն հայագետ Մանուկ Աբեղյանի հետազոտություններում կարևորվում են հայկական ժողովրդական հավատալիքներին և առասպելներին նվիրված աշխատանքները, որոնցում էական տեղ են զբաղեցնում վիշապները: Նման ոճի առաջին մենագրություններն էին 1899 թ. լույս տեսած «Հայկական ժողովրդական հավատքը»<sup>1</sup> և «Հայ ժողովրդական առասպել-

<sup>1</sup> Abeghian 1899. Հեղինակի ատենախոսությունն է պաշտպանված 1898 թ. Ենայի համալսարանում (այս մասին տե՛ս Հարությունյան 1970, 51):



ները»<sup>2</sup>, որոնցում առաջին անգամ տրվում էր հայկական հնագույն պատկերացումների համակարգված և համեմատական հետազոտությունը: Թեմատիկ ընդգրկմամբ այս աշխատություններին է հարում 1941 թ. հրատարակված ««Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ» մենագրությունը, որում հեղինակն իր տեսակետներն է առաջարկում հնագիտական հուշարձան վիշապաքարերի և դրանց իմաստաբանության վերաբերյալ: Այս գիրքը Մ. Աբեղյանի վերջին աշխատություններից է: Ստորև մեր նպատակն է անդրադառնալ այդ մենագրության ստեղծման յուրահատուկ հանգամանքներին:

Բայց մինչ այդ նշենք, որ «Վիշապներ» գրքի երկրորդ հրատարակությունը հրատարակման է պատրաստել Սարգիս Հարությունյանը<sup>3</sup>, ով իր տարբեր աշխատանքներում լրացրել և որակապես նոր մակարդակի է բարձրացրել հայկական վիշապների մասին գիտական պատկերացումները<sup>4</sup>: Այս աշխատանքը կցանկանայինք հարգանքով և շնորհակալությամբ նվիրել Ս. Հարությունյանի հիշատակին, որի աշխատանքներում կարմիր թելի նման անցնում է Մ. Աբեղյանի անունը<sup>5</sup>: Այս համատեքստում Պ. Սևակը գրում է. «Սիրահարվածությունը թերևս եզակի բան է կյանքում: Բայց սիրահարվածությունը վատ խորհրդատու է գիտության մեջ, մանավանդ, եթե հարցը վերաբերում է մի ողջուկտոր ազգի հոգևոր կյանքի հիմքին... Բայց բարեբախտաբար Ս. Հարությունյանին... առաջնորդել է ոչ թե սիրահարվածությունը, այլ վսեմ ու ողջախոհ սերը Մ. Աբեղյանի հանդեպ, այն սերը, որ ընդհանրական է բոլոր նրանց համար, ովքեր ծառայում են հայագիտությանը մասնավորապես և գիտությանը ընդհանրապես»<sup>6</sup>: Մեկ այլ աղիթով նա նշում է. «չափազանցում չի լինի, եթե նշենք, որ այսօր նա [Ս. Հարությունյանը] մեր բանագիտության այն սակավաթիվ կարող ուժերից է, որոնք շարունակում են մեծն Մ. Աբեղյանի գործը՝ կատարելով այն, ինչ թերի է մնացել»<sup>7</sup>:

<sup>2</sup> Աբեղյան 1899:

<sup>3</sup> Աբեղյան 1975:

<sup>4</sup> Հարությունյան 1985, Հարությունյան 2000, Հարությունյան 2001, Հարությունյան 2015: Մ. Աբեղյանի «Վիշապներ» գրքի մասին՝ Ս. Հարությունյանի տեսակետների համատեքստում հմմտ. Նահապետյան 2020, 264-265:

<sup>5</sup> Ս. Հարությունյանը բազմիցս անդրադարձել է Մ. Աբեղյանին (Հարությունյան 1959, Հարությունյան 1965ա, Հարությունյան 1965բ, Հարությունյան 1970, Հարությունյան 2006): Վերջինիս է նվիրված նաև Ս. Հարությունյանի՝ 1971 թ. պաշտպանված դոկտորական ատենախոսությունը (հմմտ. Դավալյան 2018, 365):

<sup>6</sup> Սևակ, Արխիվ 1, էջ 16-17: Այս խոսքերը վերցված են Պ. Սևակի՝ Ս. Հարությունյանի դոկտորական ատենախոսության վերաբերյալ գրված կարծիքից: Խորին շնորհակալություն ենք հայտնում բ.գ.դ. Ա.Շ. Սարգսյանին՝ մեզ այս փաստաթղթին ծանոթացնելու և դրա պատճենը տրամադրելու համար (Ս. Հարությունյանը այն փոխանցել է Ա.Շ. Սարգսյանին 2002 թ.):

<sup>7</sup> Սևակ, Արխիվ 1, էջ 2:

### Գրքի ձեռագրերը

Գրականության և արվեստի թանգարանի արխիվում են պահվում Մ. Աբեղյանի «Վիշապներ» գրքին վերաբերող ձեռագրերը, որոնք ամփոփված են երեք աշակերտական տետրերի մեջ<sup>8</sup>: Դրանցից երկուսը 1939 թ. թվագրվող սևագրություններ են, որոնցում բացակայում են էջերը և բովանդակային/կառուցվածքային բաժանումները (կամ դրանք նախնական են)<sup>9</sup>, իսկ երրորդը 1940 թ. թվագրվող մաքրագիրն է՝ նշված էջերով և համապատասխան բովանդակությամբ/կառուցվածքով: Այս վերջին տարբերակը լիովին համապատասխանում է գրքի առաջին հրատարակությանը՝ մասնակի ջնջումներով և ուղղումներով<sup>10</sup>:

Այդ ջնջումների և ուղղումների տրամաբանությունից ելնելով կարելի է ենթադրել, որ աշխատանքը վերնագրելիս Մ. Աբեղյանը տատանվել է և մի քանի անգամ փոխել վերնագիրը: Եթե սևագրային տարբերակում գրքի վերնագիրն է պարզապես «Վիշապներ», ապա մաքրագրում աշխատանքն այսպես է անվանված՝ ««Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո ձկնակերպ դիցուհու արձաններ Հայաստանում»: Ընդ որում, մաքրագրի բոլոր երեք տետրերում «ձկնակերպ» և «Հայաստանում» բառերը ջնջված են, որը նշանակում է, թե սկզբնական վերնագիրը եղել է հիշյալը, ապա ընտրվել է այն վերնագիրը, որը և արտացոլված է գրքում<sup>11</sup>: Ինչպես վկայված է Մ. Աբեղյանի «Հուշիկներում», հեղինակը գրքի վրա աշխատել է հինգ ամիս, երեքը՝ շարադրելու, երկուսը՝ արտագրելու համար: Աշխատանքն ավարտել է 1940 թ. փետրվարի 22-ին<sup>12</sup>:

### Գրքի հրատարակությունները

Մինչև գրքի հրապարակումը Մ. Աբեղյանն իր «Վիշապներ» աշխատանքը ներկայացրել է 1940 թ. ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական բաժանմունքի (Արմֆանի) նիստերի դահլիճում (շենքը գտնվում էր Ազիզբեկովի հրապարակի մոտ) տեղի ունեցած հատուկ նիստում և հրապարակման երաշխավորություն ստացել<sup>13</sup> (նիստի մասին տե՛ս նաև ստորև):

Աշխատությունն ունեցել է երկու հրատարակություն՝ առաջինը որպես առանձին գիրք (1941 թ., Երևան, Արմֆան-ի պատմության և նյութական կուլ-

<sup>8</sup> Ֆոնդի մասին հմմտ. Ազնավուրյան 1962, 29-30: Գրքի մասին տե՛ս Աբեղյան 1975, 586-587 (Ս. Հարությունյանի ծանոթագրությունը):

<sup>9</sup> Աբեղյան, Արխիվ 1 և 2:

<sup>10</sup> Աբեղյան, Արխիվ 3:

<sup>11</sup> «Հուշիկներում» աշխատանքը կոչված է ««Վիշապներ», Աստղիկ-Դերկետոյի ձկնակերպ արձաններ, Հայաստանում», տե՛ս Աբեղյան 1975, 587 (Ս. Հարությունյանի ծանոթագրությունը):

<sup>12</sup> Աբեղյան 1975, 586-587 (Ս. Հարությունյանի ծանոթագրությունը):

<sup>13</sup> Ղանալանյան 1987, 19, 95:

տուրայի ինստիտուտի կողմից), երկրորդը՝ երկերի «Է» հատորում (1975 թ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ գրականության ինստիտուտի կողմից):

Գիրքը բաղկացած է 11 գլուխներից և 38 ենթագլուխներից (որոնք անվերնագիր են), 8 գծանկարներից և 6 լուսանկարներից (բոլորը վերցված են Բ. Պիոտրովսկու գրքույկից, իսկ վերջինում՝ Ն. Մառի և Յ. Սմիրնովի գրքից<sup>14</sup>): Առաջին հրատարակության ծավալը 104 էջ է, երկրորդինը՝ 78 էջ: Երկրորդ հրատարակությունում բացակայում են գծագրերն ու նկարները:

Երկու հրատարակությունները համընկնում են միմյանց. երկրորդ հրատարակությունը համեմատվել է հեղինակի ինքնագրի հետ, և համապատասխանաբար ավելացվել են առաջին տպագրությունից դուրս մնացած որոշ բառեր ու նախադասություններ<sup>15</sup>: Ինչպես արդեն ասվեց, հատորը կազմել, խմբագրել և ծանոթագրել է Ս. Հարությունյանը:

### **Գրքի բովանդակությունը**

Ինչպես շատ ճիշտ նշում է Ս. Հարությունյանը, «Վիշապները» բնույթով «բանավիճային ուսումնասիրություն» է<sup>16</sup>, որում «մի նոր էջով ևս, համալրվում էր հայ հին դիցաբանական-դյուցազնական առասպելների՝ հեղինակի զարգացրած նախորդ տեսությունը»<sup>17</sup>: Սակայն այն մտքերը, որոնք արտահայտված են գրքում, անշուշտ, հեղինակի տարիների հետազոտության արդյունքն են ամփոփում և նպաստակ չունեն միայն ընդդիմախոսություն լինելու:

Եթե փորձենք ի մի բերել Մ. Աբեղյանի՝ գրքում արտահայտված հիմնական տեսակետների բովանդակությունը<sup>18</sup>, կարող ենք ասել հետևյալը.

1. Մ. Աբեղյանը հերքում է մի շարք հնագետների (Ն. Մառ, Յ. Սմիրնով, Բ. Պիոտրովսկի) առաջ քաշված այն միտքը, թե վիշապ կոթողները վիշապդեմոնի արձաններն են, և որ իբր վիշապը սկզբնապես եղել է բարի աստվածություն ու հետագայում՝ քրիստոնեության շրջանում է միայն բացասական դարձել: Ելնելով ժողովրդի կողմից կոթողներին տրված «վիշապ» անվանումից՝ հնագետներն այդ կոթողները շփոթում են առասպելական վիշապի հասկացության հետ և փորձում հաշտեցնել ուշ շրջանի ժողովրդական անվանումն ու վաղ հնագիտական հուշարձանների նախնական պաշտամունքային նշանակությունը:

2. Վիշապը, որպես ամպրոպային օդերևույթի առասպելական մարմնավորում, ի սկզբանե թե՛ վաղ հեթանոսական և թե՛ ուշ քրիստոնեական ժա-

<sup>14</sup> Март, Смирнов 1931.

<sup>15</sup> Աբեղյան 1975, 587 (Ս. Հարությունյանի ծանոթագրությունը):

<sup>16</sup> Հարությունյան 1970, 280, Հարությունյան 2006, 8:

<sup>17</sup> Հարությունյան 2006, 8.

<sup>18</sup> Վիշապների վերաբերյալ ավելի վաղ արտահայտված մտքեր տե՛ս Աբեղյան 1899, Abeghian 1899, Աբեղյան 1944:

մանակաշրջաններում բացասական է գիտակցվել՝ որպես ջուր փակող և արեգակ բանտարկող, որի դեմ պայքարել են բարի հերոսները:

3. Վիշապը ինչպես հին, այնպես էլ արդի հայկական պատկերացումներում հանդես է գալիս տարբեր կենդանիների կերպարանքով, բայց ոչ ձկան:

4. «Վիշապ» բառը հայերենում արտահայտում է տարբեր իմաստներ, որոնցից մեկն է «աժդահա, հսկա», որը հնում կիրառվել է կետերին/մեծ ձկներին (=վիշապաձկներին) բնորոշելու համար: «Վիշապ» անվանումը տրված է հայկական արձաններին առավելապես «մեծ, հսկա» իմաստով, այն էլ ուշ շրջանում, և այդ արձանները ոչ մի կապ չունեն առասպելական վիշապի հետ:

5. Քննարկվող կոթողներն իրականում առնչվում են սիրո և պտղաբերության աստվածուհուն՝ Աստղիկին, որի սեմական զուգահեռն է ձկնակերպ Դերկետոն, և որի արձանները, հայկական կոթողների նման, դրվում էին սրբազան լճերի մոտ:

Այստեղ մենք ամենևին էլ նպատակ չունենք վերլուծել Մ. Աբեղյանի տեսակետի արդիականությունը: Բավարարվենք Ս. Հարությունյանի բնորոշմամբ, որը, օգտագործելով նոր տվյալներ, նշում է, թե այդ հուշարձանները վերագրվում են պատմական առավել վաղ շրջանով, քան հայկական Աստղիկն է կամ սեմական Դերկետոն<sup>19</sup>, սակայն հնարավոր է, որ Աստղիկ-Դերկետոյի պաշտամունքը իր արմատներով սերած լինի ձկնակերպ արձանների վաղնջական պաշտամունքից. «Աբեղյանի աշխատության ամենաարժեքավոր կողմը ձկնակերպ քարակոթողների վիշապ-դեմոնի հետ ունեցած կապի ու այդ դեմոնի բարի աստվածություն լինելու և ենթադրյալ պաշտամունքի հերքումն է, քան նոր աստվածության հետ առնչելու ապացույցը, մի վերջնական հերքում, որ հետագայում հեռանկարներ բացեց «Վիշապ» կոթողները դիտելու իբրև բոլորովին մի այլ աստվածության պաշտամունքի նյութական մնացորդներ»<sup>20</sup>:

Մեզ համար և մեր դարաշրջանի գիտության տեսանկյունից Մ. Աբեղյանի աշխատանքի ամենակարևոր խորհուրդը և ակնարկն այն է, որ հնագույն հասարակությունների վերաբերող յուրաքանչյուր երևույթ հասկանալու համար անհրաժեշտ է միջմասնագիտական համագործակցություն:

Երբ բանագետը, լեզվաբանը ու հնագետը միասին աշխատեն, ավելի դյուրին կլինի պարզել որևէ երևույթի (տվյալ դեպքում՝ վիշապի) լեզվական, հոգևոր և նյութական մշակութային շերտագրությունը:

<sup>19</sup> Մ. Աբեղյանը քննարկվող կոթողները պատկերացնում է «և՛ ուրարտական, և՛ հայկական դարերում» (Աբեղյան 1941, 93):

<sup>20</sup> Հարությունյան 1970, 282: Այստեղ հեղինակը նկատի ունի Գր. Ղափանցյանի տեսակետը, որը կոթողները կապում է Արայի պաշտամունքի հետ (Ղափանցյան 1944):





### **Գրքի ստեղծման հանգամանքները**

1939 թ. սեպտեմբերի 25-ին, բարեկամների խորհրդով, Մ. Աբեղյանը որոշում է «այլևս նոր աշխատության ձեռնամուխ չլինել» և սկսել գրել հուշեր: Սակայն հաջորդ օրը, երբ ստանում է Արմֆանի հրատարակած Բ. Պիոտրովսկու «Վիշապներ» գրքուկը<sup>21</sup>, նա թողնում է հուշագրությունը և որոշում գրել վիշապներին նվիրված իր գիրքը<sup>22</sup>: Ո՞րն էր սրա հիմնական դրդապատճառը:

Աշխատանքի հենց առաջին նախադասությունը կարծես հուշում է այդ պատճառը: Մ. Աբեղյանը մասնավորապես այսպես է սկսում գիրքը. «Անցած 1939 թ. սեպտեմբերի կեսերին, հայ ժողովրդական վեպի հազարամյակի տոնակատարության օրերին, ինձ ուղարկեցին նոր հրատարակված մի գրքուկ ռուսերեն լեզվով՝ «Բ.Բ. Պիոտրովսկի. Վիշապներ», ... և զարմացած մնացի, թե ինչպես, փոխանակ պարզելու Հայաստանի հնագույն նյութական կուլտուրայի և հավատալիքների պատմությունը, ավելի ևս մթեցնում են այն»<sup>23</sup>:

Կարծում ենք, որ Մ. Աբեղյանը պատահական չի շեշտում հայ ժողովրդական վեպի հազարամյակի տոնակատարության հանգամանքը առաջին նախադասության մեջ: Գիտնականի արխիվում աշխատելիս մի շարք փաստաթղթերում և նամակներում<sup>24</sup> նկատեցինք, որ Մ. Աբեղյանը ձգտում է մի տեսակ իրեն հեռու պահել տոնակատարության միջոցառումներից. զգացվում է, որ նա ինչ-որ բանից «վիրավորված է», թեև ակտիվորեն մասնակցում է ընթացքին<sup>25</sup>: Փաստորեն էպոսին կամ դրա տոնակատարությանը վերաբերող խնդիրների վերաբերյալ «լատենտ» հակասություններ են եղել Հ. Օրբելու և Մ. Աբեղյանի միջև<sup>26</sup>:

<sup>21</sup> Пиотровский 1939.

<sup>22</sup> Աբեղյան 1975, 586 (Մ. Հարությունյանի ծանոթագրությունը): «Վիշապները» Մ. Աբեղյանի «վերջին աշխատանքներից է» (Հարությունյան 1970, 130):

<sup>23</sup> Աբեղյան 1941, 5:

<sup>24</sup> Հմմտ. օր.՝ Աբեղյան, Արխիվ 4:

<sup>25</sup> 1938 թ. սեպտեմբերի 7-ին Հայաստանի կոմկուսի Կենտկոմը որոշում է տոնել «Սասունցի Դավիթ» ժողովրդական վեպի հազարամյա հոբելյանը 1939 թ. մայիսին: Կազմկոմիտեի մեջ էր նաև Մ. Աբեղյանը, որն առաջին նիստում առաջարկում է հրատարակել վեպի գիտական համահավաքը, որը և տեղի է ունենում հոբելյանական օրերին: Այն թարգմանվում է նաև ռուսերեն և ունենում երեք տարբեր հրատարակություններ: 1939 թ. օգոստոսի 22-ին հոբելյանական նստաշրջանում Մ. Աբեղյանը կարդում է համապատասխան զեկուցում: 1940 թ. իր կատարած գործի համար Մ. Աբեղյանը պարգևատրվում է Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրով (Հարությունյան 1970, 127-128):

<sup>26</sup> Հմմտ. Юзбашян 1964, 95: Հակասությունը անվանում ենք «լատենտ», քանի որ այլ փաստեր վկայում են երկու մեծ գիտնականների բարիդրացիական կապերի մասին. «Օրբելին մեծապես գնահատում էր Մանուկ Աբեղյանին» (Ղանալանյան 1987, 19), նրան համարում «անվանի» (Օրբելի 1956, 8) և «մեծապատիվ» (հմմտ. Հարությունյան 1970, 133) գիտնական: Հայտնի է նաև, որ 1944 թ. Հ. Օրբելին առաջարկել է Մ. Աբեղյանին զբաղեցնել գրականության ինստիտուտի տնօրենի պաշտոնը, որը Մ. Աբեղյանը մերժել է՝ պատճառաբանելով իր անբավարար ուժերն ու ժամանակի սղությունը (Հարությունյան 1970, 133):

Մ. Աբեղյանի աշակերտ Ա. Ղանալանյանի եղբայրը՝ գրականագետ Հ. Ղանալանյանը, Մ. Աբեղյանի և Հ. Օրբելու մասին այս կապակցությամբ իր հուշերում գրում է, թե երբ 1940 թ.<sup>27</sup> Արմֆանի նիստերի դահլիճում, Հ. Օրբելու նախագահությամբ, Մ. Աբեղյանը հանդես է գալիս ««Վիշապներ կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ» ելույթով, նա մասնակիորեն քննադատում է Ն. Մառին և «կրակի տակ առնում» հատկապես Յ. Սմիրնովին. «Օրբելին, որ երբեք չէր հանդուրժում իր ուսուցչին քննադատողներին, այդ թվում և Մառին աշակերտած Գրիգոր Ղափանցյանին, այս անգամ զսպելով իր հուզմունքը, լարված լսում էր Աբեղյանին՝ «հատակում պահելով իր փրփուրները»: Աբեղյանի խոսքը հիմնավոր էր և անառարկելի: Իսկ երբ Մանուկ Խաչատուրովիչը անցավ Սմիրնովին ու հիմնահատակ ջախջախեց նրան, փայլուն պղծմիստ Օրբելու աչքերը ուրախությունից սկսեցին փայլատակել: Նա հիացած էր Աբեղյանի երկաթե տրամաբանության և բերած ստուգված փաստերի անառարկելիության վրա... Եվ հենց այդ զեկուցումը Օրբելու կարգադրությամբ առանձին գրքով լույս ընծայվեց Արմֆանի հրատարակությամբ»<sup>28</sup>:

Այս լարվածության մասին հիշողություններ է պահպանել նաև Բ. Պիտրովսկին: Նա գրում է, թե «Սասունցի Դավթի» հոբելյանի կապակցությամբ հրապարակվեցին մի քանի գրքեր, որոնց թվում՝ նաև իր «Վիշապները», որն իրեն գրել էր պատվիրել Ս.Կ. Կարապետյանը: Գրքույկի նպատակն էր հակիրճ շարադրել Ն. Մառի և Յ. Սմիրնովի հիմնական տեսությունները՝ ըստ իրենց 1931 թ. լույս տեսած և բավականին խրթին ձևով շարադրված գրքի: Այդ գրքույկում շրջանառվում էր փոքրաքանակ նոր նյութ, մինչդեռ հիմնականում այն զարգացնում էր վիշապի և ջրի իմաստաբանական կապը ու ցույց տալիս աստվածությունների կերպարանափոխությունները ժամանակի ընթացքում. «Պրոֆեսոր Մանուկ Աբեղյանը, ով գտնվում էր հոբելյանի ընդդիմության շարքերում, դաժանորեն քննադատեց իմ գիրքը: Փաստորեն քննադատելով Ն.Յ. Մառի և Յ.Ի. Սմիրնովի տեսակետները, Մ. Աբեղյանը հարձակվեց ինձ վրա՝ մեղադրելով իմաստաբանական կապերի անապացուցելի և քմահաճ լինելու մեջ, բժախնդրորեն մոտենալով տառասխալների/բացթողումների: Չընդունելով համաշխարհային բանահյուսության կերպարների իմաստաբանական օրինաչափությունները, Մ. Աբեղյանը հանկարծակի, անսպասելի ու անարդարացի կերպով եկավ այն եզրակացության, որ Հայաստանի «վիշապները» անմիջականորեն կապված են սիրիա-

<sup>27</sup> 1940 թ. Ա. Ղանալանյանը ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի լեզվի և գրականության ինստիտուտի աշխատակից էր (Ջրբաշյան և այլք 1986, 5), իսկ Հ. Ղանալանյանը՝ «Խորհրդային գրականություն» ամսագրի բաժնի վարիչն էր (Խաչատրյան, Մուրադյան 1986, 273-274):

<sup>28</sup> Ղանալանյան 1987, 19-20, 94-95, նույնը՝ 1979, 185, 1982, 41:



կան Դերկետո աստվածուհու հետ: Նման ուղղակի կապ դժվար է ընդունել, իսկ հիմնավորել՝ անհնարին: Այն ողջ քենը, որ հեղինակը ցանկանում էր ուղղել Օրբելուն և Մառին, թափվեց ինձ վրա: Գ.Ա. Ղափանցյանն ասաց ինձ, որ նա Աբեղյանի գրքույկի հետ համաձայն չէ: Իսկ ինքը՝ հեղինակն ավելի ուշ, երբ լույս տեսավ իմ գիրքը Ուրարտուի մասին, այն շատ գովեց, կարծես դրանով փոխհատուցելով վիշապների մասին իմ գրքի դեմ ունեցած ելույթը»<sup>29</sup>:

Վերն ասվածից կարող ենք եզրակացնել, որ «Վիշապներ» գիրքը գրվել է որոշակի առիթով, որպես պատասխան: Մի կողմից այն մեծ գրախոսության է նմանվում, մյուս կողմից էլ, սակայն, արտահայտում է մեծ գիտնականի տարիներով կուտակված մտքերը, որի կարիքն առաջացել է արտահայտել ամենահասուն տարիքում<sup>30</sup>:

### **Եզրակացություններ**

Մ. Աբեղյանի «Վիշապները» մեծանուն գիտնականի ամենավերջին աշխատանքներից է: Այն մեծարժեք ներդրում է հայ ժողովրդական հավատալիքների ուսումնասիրության ոլորտում և «հեղինակի բանագիտական նախասիրություններից դեպի ազգագրագիտությունն անցնելու տրամաբանական օղակն ու փոխանցիկ հանգույցն է»<sup>31</sup>:

Աշխատությունը ակնհայտորեն գրված է որպես պատասխան Ն. Մառի դպրոցին, թեև նրանում վերջինիս անունը չի շոշափվում. հիմնական քննադատությունն ուղղված է Բ. Պիոտրովսկուն, ապա և Յ. Սմիրնովին<sup>32</sup>: Նախապես Մ. Աբեղյանը նպատակ չի ունեցել գրելու այն, ինչն իրականացրել է, երբ լույս է տեսել Բ. Պիոտրովսկու «Վիշապներ» գրքույկը: Այս ձեռնարկման հիմքում մի կողմից ընկած էին անձնական հակասությունները Լենին-գրադի կամ Հ. Օրբելու հետ՝ «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակին նվիրված միջոցառումների կապակցությամբ (հակասության բուն պատճառն անհայտ է մնում), մյուս կողմից էլ, բնականաբար, կարևորվում է գիտական բանավեճը: Դրանով Մ. Աբեղյանը այլ տեսակետ էր հայտնում, քան հնա-

<sup>29</sup> Пиотровский 2009, 156-157.

<sup>30</sup> «Սասունցի Դավիթ» 1939 թ. համահավաք հրատարակության թերթությունների մասին խոսելիս՝ Պ. Սևակը քննադատում է Մ. Աբեղյանին «տեղի տալու» համար (տե՛ս Սևակ, Արխիվ 1, էջ 12-13. հմմտ. Սևակ 2014, 65): Եթե այդպես է, ուրեմն «Վիշապներ» գիրքը կարելի է մեկնել որպես պատասխան «հարձակում»:

<sup>31</sup> Հարությունյան 1970, 282:

<sup>32</sup> Թեև Մ. Աբեղյանը Ն. Մառի անունը քննադատորեն չի շեշտում իր գրքում, սակայն մինչև գրքի հրատարակումը նա քննադատել է նաև Ն. Մառին ԱրմՖանում տեղի ունեցած վիշապների մասին արդեն հիշված իր ելույթի ժամանակ: Այս մասին վկայող Հ. Ղանալանյանը գրում է. «Ես չեմ հիշում, որ որևէ մեկը հանդգներ քննադատել Մառին Օրբելու ներկայությամբ և նա հանդուրժեք», բայց քանի որ Մ. Աբեղյանի փաստարկները հիմնավոր էին, Հ. Օրբելին անխոս ընդունում է (Ղանալանյան 1979, 185, 1982, 41, 1987, 94):

գետները: Այս իմաստով չի բացառվում, որ Մ. Աբեղյանը նպատակ կարող էր ունենալ գրել վիշապների մասին 1931 թ. հետո, երբ լույս տեսավ Ն. Մառի և Յ. Սմիրնովի հիշյալ գիրքը, բայց արձագանքում է Բ. Պիոտրովսկուն (և Յ. Սմիրնովին), նրա գրքի լույս տեսնելուց հետո միայն (1939 թ.)<sup>33</sup>, այսպիսով նուրբ ակնարկ անելով լենինգրադյան ակադեմիային: Ի դեպ, արդեն 1934 թ. մահացել էր Ն. Մառը, թեև վերջինիս լուրջ քննադատությունը դեռևս չէր սկսվել<sup>34</sup>:

Կարծում ենք, որ այստեղ կար ևս մեկ և ավելի խորը պատճառ: Ն. Մառը (և իր դպրոցը) ու Մ. Աբեղյանը տարբեր գիտական աշխարհայացքների կրողներ էին: Մ. Աբեղյանը իր տեսությունները զարգացնում էր հիմնականում հնդեվրոպաբանության տեսանկյունից, մինչդեռ Ն. Մառը էապես դեմ էր հնդեվրոպաբաններին, որոնց հակադրում էր իր «ասիանիկ» տեսությունը՝ կիրառելով այն նաև հայագիտության բնագավառում: Ն. Մառի այս մոտեցումը էապես արտահայտված է նրա (և Յ. Սմիրնովի) «Վիշապներ» գրքում: Հետևապես մի կողմից սա տարբեր դպրոցների պայքար էր, պայքար հայագիտության մեջ հիմնական խոսքի և/կամ մեթոդի համար, մյուս կողմից էլ՝ գիզանտների բախում, որից ավելի առաջ էր ընթանում գիտությունը: Այդ պայքարը սակայն այդքան դաժան չէր, ինչքան որ թվում է առաջին հայացքից, որի մասին է վկայում մեծ գիտնական Ն. Մառի մի առիթով ասված խոսքը մեկ այլ մեծ գիտնականի մասին. «Աբեղյանը եղել է, Աբեղյաններ՝ հազիվ թե»<sup>35</sup>:

## Օգտագործված գրականություն

### Արխիվ

Աբեղյան, Արխիվ 1 – Աբեղյան Մ., «Վիշապներ», Սևագրություն (2 փաթեթից բաղկացած առանձին թերթիկներ՝ հեղինակի ուղղումներով և լրացումներով), ԳԱԹ, Աբեղյան 26, թ. 95, 1939 թ., Երևան:

Աբեղյան, Արխիվ 2 – Աբեղյան Մ., «Վիշապներ», Սևագրություն (2 տետրակ՝ հեղինակի ուղղումներով և լրացումներով, անվանաթերթի վրա գրված է՝ «արտագրված է»), ԳԱԹ, Աբեղյան 26ա, թ. 70, 1939 թ., Երևան:

Աբեղյան, Արխիվ 3 – Աբեղյան Մ., «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ, Մաքրագիր, որ համապատասխանում է Աբեղյան 1941 գրքի բովանդակությանը (3 տետր՝ հեղինակի թեթև ուղղումներով), ԳԱԹ, Աբեղյան 26բ, թ. 186, 1940 թ., Երևան:

Աբեղյան, Արխիվ 4 – Աբեղյան Մ., Գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի նախագահի տեղակալին գրություն՝ Սասունցի Դավթի հազարամյակի հանդեսի

<sup>33</sup> Пиотровский 1939.

<sup>34</sup> Ն. Մառի հստակ մերժումը սկսվեց ավելի ուշ, մասնավորապես Ի. Ստալինի՝ «Պրավդա» թերթի 1950 թ. հունիսի 20-ի համարում տպված հայտնի հոդվածից հետո:

<sup>35</sup> Ղանալանյան 1987, 24: Մինչ այդ Ն. Մառը արդեն շատ դրական էր արտահայտվել Մ. Աբեղյանի աշխատանքների վերաբերյալ (հմմտ. Հարությունյան 1970, 23):

գեկուցումից հրաժարվելու մասին, ԳԱԹ, Աբեղյան 91, թ. 1, օգոստոս 21, 1939 թ., Երևան:

Սևակ, Արխիվ 1 – Սևակ Պ., Պաշտոնական ընդդիմախոսություն Ս. Հարությունյանի «Մանուկ Աբեղյան» դոկտորական դիսերտացիայի մասին, Ձեռագիր, Սարգիս Հարությունյանի անձնական արխիվ, էջ 18, 19.05.1971 թ., Երևան:

### **Գրականություն**

- Աբեղյան Մ. 1899, Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մէջ, Վաղարշապատ, «Մայր Աթոռի տպ.», 602 էջ:
- Աբեղյան Մ. 1941, «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ, Երևան, «Արմֆանի տպ.», 98 էջ:
- Աբեղյան Մ. 1944, Հայոց հին գրականության պատմություն 1, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 671 էջ:
- Աբեղյան Մ. 1975, «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ, Երկեր Է, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 103-181 էջ:
- Ազնավուրյան Ղ. 1962, Ուղեցույց Գրականության և արվեստի թանգարանի գրական ֆոնդերի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 192 էջ:
- Դալայան Տ.Ս. 2018, Սարգիս Հարությունյան. արդի հայ բանագիտության նահապետը, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, էջ 364-367:
- Խաչատրյան Հ.Շ., Մուրադյան Ռ.Մ. (խմբ.) 1986, Գրական տեղեկատու. 1934-1986 թթ., Հայաստանի սովետական գրողների միություն, Երևան, «Սովետական գրող», 622 էջ:
- Հարությունյան Ս. 1970, Մանուկ Աբեղյան. կյանքն ու գործը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 668 էջ:
- Հարությունյան Ս. 1959, Հայագիտության մեծ երախտավորը, Սովետական Հայաստան, N 9, էջ 15-16:
- Հարությունյան Ս. 1965ա, Մեծ հայագետը, Պատմաբանասիրական հանդես, N 1, էջ 137-152:
- Հարությունյան Ս. 1965բ, Մանուկ Աբեղյանը քննադատ և գրականության տեսաբան, Սովետական գրականություն, N 5, էջ 140-148:
- Հարությունյան Ս. 1985, Վիշապ, Հայկական Սովետական հանրագիտարան 11, Երևան, Հայկական Սովետական հանրագիտարան հրատ., էջ 457-458:
- Հարությունյան Ս. 2000, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, «Համազգայինի Վահէ Սէթեան տպ.», 527 էջ:
- Հարությունյան Ս. 2001, Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Երևան, «Մուղնի», 57 էջ:
- Հարությունյան Ս. 2015, Վիշապաքարերի հնագիտություն, Վիշապ քարակոթողները, Պետրոսյան Ա., Բորոխյան Ա. (խմբ.), Երևան, «Գիտություն», էջ 53-58:
- Հարությունյան Ս. 2006, Մանուկ Աբեղյան. գիտական վաստակի գնահատման ուրվագիծ, Պատմաբանասիրական հանդես, N 1, էջ 3-27:
- Ղանալանյան Հ. 1979, Հողվածներ և հուշեր, Երևան, «Սովետական գրող», 185 էջ:
- Ղանալանյան Հ. 1982, Գիտության երախտավորները (Հուշ-դիմանկարներ), ԵՊՀ հրատ., 171 էջ:
- Ղանալանյան Հ. 1987, Հուշ դիմանկարներ, Երևան, «Լույս», 168 էջ:
- Ղափանցյան Գ. 1945, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 171 էջ:
- Նահապետյան Ռ. 2020, Ազգաբանական ուսումնասիրություններ, գք. 2, Երևան, ԵՊՀ հրատ., 402 էջ:

- Ջրբաշյան Է.Մ., Պիվազյան Է.Ա., Բաբաջանյան Ռ.Ա., Կարապետյան Ռ.Ա. 1986, Արամ Տիգրանի Ղանալանյան, Նյութեր Հայկական ՍՍՀ գիտնականների կենսամատենագիտության, N 36, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 74 էջ:
- Սևակ Պ. 2014, Ականջըդ բեր ասեմ. Սևակյան իմաստախոսություններ, կազմող՝ Ա.Շ. Սարգսյան, Երևան, «Էդիթ Պրինտ», 247 էջ:
- Օրբելի Հ. 1956, Հայկական հերոսական էպոսը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 137 էջ:
- Март Н.Я., Смирнов Я.И. 1931, Вишапы, Ленинград, «Тип. И. Федорова», 108 с.
- Пиотровский Б.Б. 1939, Вишапы: каменные статуи в горах Армении, Ленинград, «Армфан», 40 с.
- Пиотровский Б.Б. 2009, Страницы моей жизни, Москва, «Руда и металлы», 304 с.
- Юзбашян К.Н. 1964, Академик Иосиф Абгарович Орбели, Москва, «Наука», 158 с.
- Abeghian M. 1899, Der armenische Volksglaube, Leipzig, W. Druckolin, 127 S.

## ОБСТОЯТЕЛЬСТВА НАПИСАНИЯ МАНУКОМ АБЕГЯНОМ РАБОТЫ «ВИШАПЫ»

Арсен Бобохян

Резюме

Среди исследований великого арменоведа Манука Абегамяна особое место занимают работы, касающиеся армянских народных верований и мифов, в которых важную роль играют «вишапы» (арм. дракон). Среди них – монография «Памятники, называемые «Вишапы» как статуи богини Астхик-Деркетто» (Ереван, 1941). На основе архивных материалов и мемуаров в настоящей работе рассматриваются специфические обстоятельства создания книги.

Эта монография – ответ школе Н. Марра, хотя его имя в книге не трагируется. Острие критики направлено на Б. Пиотровского, затем на Я. Смирнова. Работа была написана сразу после публикации брошюры «Вишапы» Б. Пиотровского (1939).

Основой для написания книги, с одной стороны, послужили личные противоречия с Ленинградом или с И. Орбели в связи мероприятиями, посвященными 1000-летию эпоса «Давид Сасунский» (1939), а с другой – в своих теоретических воззрениях М. Абегамян основывался на индоевропеистике, но придерживался иного мнения, нежели археологи, усматривая различия между мифическими и археологическими концепциями «вишапа». Здесь крылась еще одна более глубокая причина. Н. Марр (и его школа) и М. Абегамян придерживались различных научных взглядов. Н. Марр, в сущности, был против индоевропеистов, которым он противопоставлял свою «азианическую» теорию, применяя ее в области арменоведения. Следовательно, с

одной стороны, это была борьба разных школ, борьба за привилегии в арменоведении, а с другой – столкновение гигантов, способствующее развитию науки.

**Ключевые слова** – М. Абегиан, книга «Вишапы», архивы, Н. Марр, Я. Смирнов, И. Орбели, Б. Пиотровский.

#### CIRCUMSTANCES OF WRITING OF THE WORK "VISHAPS" BY MANUK ABEGHYAN

Arsen Bobokhyan

##### Abstract

Among the studies of the great armenologist Manuk Abeghyan the works concerning the Armenian folk beliefs and myths are especially important, in which the "vishaps" (Arm. for dragon) play an essential role. Among such works is the monograph "Monuments called "Vishaps" as statues of the goddess Astghik-Derketto" (Yerevan, 1941). Based on the archive materials and memoirs, the present work focuses on the specific circumstances of the book's creation.

The work is written as an answer to the school of N. Marr, though his name is scarcely touched within it. The main criticism is directed to B. Piotrovskiy, then to Y. Smirnov. The book was written just after the publication of B. Piotrovskiy's brochure "Vishaps" (1939).

In the background of this undertaking were the personal contradictions of M. Abeghyan with Leningrad or with H. Orbeli connected with the events dedicated to the 1000th anniversary of the epic "David of Sasun" (1939). On the other hand, through this publication a scientific debate was highlighted, in which M. Abeghyan had different opinion than the archeologists, separating the mythical and archaeological concepts of the "vishap". There was another deeper reason here too: N. Marr (with his school) and M. Abeghyan were the bearers of various scientific world-outlooks. M. Abeghyan developed his theories mainly from the point of view of Indo-European Studies, while N. Marr was essentially against the Indo-Europeanists to whom he opposed his "Asianique" theory by applying it also in the field of Armenology. Hence, on the one hand, this was a struggle of different schools, a struggle for the priveleges in Armenology, and on the other hand – a clash of gigantes, of which the science was moving forward.

**Key words** – M. Abeghyan, the book "Vishaps", archives, N. Marr, J. Smirnov, H. Orbeli, B. Piotrovskiy.

# ԱՇԽԱՐՀԻ ՏԵՍՔԻ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

## Թամար Հայրապետյան

Բանասիրական գիտությունների դոկտոր  
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ՀՀ, Երևան, Չարենցի 15

Էլ. հասցե՝ tamar.hayrapetyan@gmail.com

ORCID: 0009-0001-1023-86-83

Հոդվածը ներկայացվել է 15.11.2023, գրախոսվել է 23.11.2023, ընդունվել է տպագրության 02.08.2024

DOI: 10.53548/0320-8117-2024.2-350

### Ամփոփում

Չնայած գիտական շրջանակներում գերիշխում է Տիեզերական ծառի համապարփակության մասին տեսակետը, սակայն վերջին հետազոտությունները վկայում են, որ այդ առասպելային միարժեքորեն տարածված չէ բոլոր ժողովուրդների ավանդույթներում:

Անհրաժեշտ է փաստել, որ հայ բանավոր ավանդության մեջ արտացոլված Աշխարհի տեսքի ու կառուցվածքի մասին առասպելաբանական պատկերացումները՝ ուղղաձիգ, հորիզոնական և համակցված մոդելներով, հաստատում են Աշխարհակառույցի բազմաստիճանականության արքետիպային բնույթը:

Տիեզերական ծառը համապարփակ հասկացությունների որոշակի համակարգ է, որն ուղղահայաց առանցքի միջոցով միավորում է Տիեզերքի ծավալատարածական երեք գոտիները կամ աստիճանները (Երկինք, Երկիր, Ստորերկրյայք)՝ արտահայտված որոշակի գաղափարներով և կերպարներով, որոնցից տարածված են հատկապես ծառը, սյունը, լեռը, տաճարը, պարանը, սանդուղքը, խաչը, մարդը, որն իր մարմնի մասերով հավասարաձևունակ է ծառին:

Հայոց մեջ Տիեզերքի մոդելն առավել հաճախ ներկայանում է ուղղաձիգ կառուցվածքով, որտեղ Աշխարհի նեցուկ-հենարանի դերում հանդես են գալիս ձուկը և եզը:

Տիեզերքի բնակիչների բնականոն կենսագործունեությունը պայմանավորված է Աշխարհակառույցի կարգուկանոնով և քրոնոտոպային կոնտինումի կատարելությամբ, որն իր արտահայտությունն է ստացել հայ առասպելաբանության և բանահյուսական ավանդության մեջ, մասնավորապես Հանս-Յորգ Ութերի «Միջազգային հեքիաթների տիպերը» նշացանկի համապատասխան թվահամարների տակ գետնոված հայկական հրաշապատում հեքիաթներում, որն էլ սույն հետազոտության նորույթն է:

**Բանալի բառեր՝** հրաշապատում հեքիաթ, առասպել, խորհրդանիշ, ծես, ավանդություն, քրիստոնեություն, Տիեզերական ծառ:

### Ներածություն

«Տիեզերական ծառը» և նրա տեղական փոփոխակները՝ «կենաց ծառը», «երկնային ծառը», «սահմանային ծառը», «շամանական ծառը» և այլն, համապարփակ հասկացությունների որոշակի համակարգ են, որ ժամանակի

երկարատև հոլովոյթում սահմանել են Հին և Նոր աշխարհների պատկերացումները՝ աշխարհի մոդելի մասին»<sup>1</sup>:

«Ռուս հասարակագետների նշանակալի մասը այդ կերպարը (Տիեզերական ծառը՝ Թ.Հ.) համարում է ունիվերսալ՝ յունգյան արքետիպ»<sup>2</sup>, որը վերջնականապես ձևավորվել է 1970-ական թթ. Բ. Լատինինի, Վ. Տոպորովի աշխատանքներում:

ԱՄՆ-ում Տիեզերական ծառը առանձնակի համբավ չի վայելում, թեպետ իր արտահայտությունն է գտել Պ. Ռոեի՝ 1982 թ. լույս տեսած հանրահայտ «Տիեզերական գիզոտ» գրքում և Կ. Կելլերի վաղ շրջանի որոշ հրապարակումներում: Եթե ամերիկացի մարդաբանները կառուցվածքաբանությունը միացրել են հոգեվերլուծության հետ, ապա Ռուսաստանում այն միացել է փոլականության հետ, որը մինչև 1980-ական թթ. կեսերը մնում էր որպես իշխող ուղղություն<sup>3</sup>:

Աշխարհի տեսքի ու կառուցվածքի մասին պատկերացումները դրսևորվել են ուղղաձիգ, հորիզոնական և համակցված մոդելներով (մանրակերտ):

### **Նպատակը**

Սույն աշխատանքի նպատակն է անդրադարձ կատարել հայ և միջազգային բանագիտության մեջ առկա՝ Տիեզերական ծառի շուրջ ձևավորված գիտական տարբեր տեսակետներին:

Նպատակից բխող խնդիրն է համակարգված կերպով վերլուծել աշխարհակառույցի բազմաստիճանականության մասին հայ ժողովրդական հեքիաթներում կենցաղավարող պատկերացումները, որոնք համապատասխանում են Հանս-Յորգ Ութերի «Միջազգային հեքիաթների տիպերը» նշացանկի սյուժեներին ու մոտիվներին:

### **Աշխարհի ուղղաձիգ մոդելը**

Այն միավորում է տիեզերքի ծավալատարածական երեք գոտիները կամ աստիճանները (Երկինք, Երկիր, Ստորերկրյայք), որոնք միշտ չէ, որ հավասար են իրար: Ըստ հայ առասպելաբանության՝ սրանք Աշխարհի երեք հարկերն են, որոնք միմյանց և արտաքին աշխարհի հետ կապված են առանցքով, որն անցնում է անցքի միջով: Աստվածներն այդ անցքով են իջնում Երկիր, մեռյալները՝ Ստորերկրյայք<sup>4</sup>: Աշխարհի երեք հարկերն ունեն իրենց բնակիչները՝ իրերի ու առարկաների գունային որոշակի երանգավորմամբ և դասավորությամբ (գործրինակ՝ Սև, Կարմիր, Սպիտակ ոչխարներ (տար-

<sup>1</sup> Топоров 2010, 1, 210.

<sup>2</sup> Березкин 2012, 3.

<sup>3</sup> Березкин 2012, 3.

<sup>4</sup> Элиаде 1987, 145.

բերակներում՝ խոյ այծ, ձի)<sup>5</sup>, Սև, Կարմիր, Սպիտակ դևերի հողեր, Սև, Կարմիր, Սպիտակ ծովեր, Արևելոց թագավորի երկիր, Արևմտոց թագավորի երկիր), ինչն ակնառու է նաև Մուֆ ու Լուս աշխարհների հակադրության հիմքով ստեղծված հայկական հրաշապատում հեքիաթներում և համապատասխանաբար խորհրդանշում է Տիեզերքի եռամաս կառուցվածքի ուղղաձիգ (ուղղահայաց) և հորիզոնական պատկերացումները:

Երկրի հարկերը (ղաթ) վերից վար դասավորությամբ կրում են հետևյալ անունները՝ Գետինք, Դժոխք, Սանդարամետք, Տարտարոս, Գեհեն, Անդուղք (անդունդ), Յանատակ (անյատակ)<sup>6</sup>, իսկ դժոխքը պատկերացվում է «Գետնի օխթը ղաթում»<sup>7</sup>, որն արտահայտված է հետևյալ հայկական անեծքներում՝ «Գետնին օխթը ղաթը անցնիս»<sup>8</sup>, «Կետնին տակը ասնիս»<sup>9</sup> և այլն:

Երկիրը բաղկացած է Լուս և Մուֆ աշխարհներից: Լուս աշխարհը մարդկանց աշխարհն է, որը գտնվում է երկրի վրա, Մուֆ աշխարհը երկրի խորքում է:

Երկինքն ու Երկիրն ունեն սիմետրիկ կառուցվածք և իրենց հերթին բաժանվում են յոթ հարկերի (որոշ բնագրերում՝ տասներկու): «Կրակոտ ոսպ»<sup>10</sup> (Չարսանճագ) հեքիաթում Կրակոտ ոսպի տունը երկրի խորքում է, «ծովու մեջտեղն է, տասվերկու ղաթ է, մերմեր քարով, խրեճ խորասանով շինած է, էրդիկ ու դուռ չկա, մի փենճերե կա, ո՛ր տի էրթս»<sup>11</sup>:

Հնդեվրոպական հիմնական առասպելում խաղարկվում է Աշխարհի կառուցվածքի ուղղաձիգ մոդելը. ծառի կամ լեռան կատարին գտնվող կայծակի աստվածը ծառի արմատների մոտ խոցում է օձին և ազատում նրա կողմից առևանգված հոտն ու հարստությունը (ծառի միջնամասը)<sup>12</sup>: Իսկ հրաշապատում և կենդանապատում հեքիաթները մեծ մասամբ ծագել են հնագույն առասպելների քայքայումից՝ ապածիսականացումից և ապասրբայնացումից, առասպելական վաղ ժամանակը հեքիաթային անորոշ ժամանակով փոխատեղելուց, պատճառայնության կորստից<sup>13</sup>:

<sup>5</sup> ՀԺՀ 1973, VI, 657, 1979, VII, 13:

<sup>6</sup> Նժդեհեան 1902, IX, 264-265 («Ստորգետնյայքի հայկական անվանումներն են Գետինքը, Անդունդը, Յանատակը (անհատակ), որոնք ոչ միայն բուն հայկական են, այլև՝ վաղնջական» Հարությունյան 2000, 11):

<sup>7</sup> Լալաեան 1896, Ա, 319:

<sup>8</sup> Լալաեան 1896, Ա, 319:

<sup>9</sup> Նժդեհեան 1902, IX, 195:

<sup>10</sup> Հայկունի 1901, Բ, 216-228:

<sup>11</sup> Հայկունի 1901, Բ, 224:

<sup>12</sup> Топоров 1991, 1, 400.

<sup>13</sup> Мелетинский 1976, 262-263.



Հանս-Յորգ Ութերի (այսուհետև՝ ՀՅՍ) «Միջազգային հեքիաթների տիպերը» նշացանկի 301 թվահամարի հեքիաթախումբը<sup>14</sup>, աղերսվելով հնդեվրոպական հիմնական առասպելին, ձևավորում է հեքիաթային հայտնի դիպաշարը, երբ թագավորի ավագ որդիները չեն կարողանում հսկել անմահական (ոսկե) խնձորների ծառը, որն ամեն տարի հափշտակում են 7 12, 24 գլխանի երեք դևերը (վիշապները), իսկ կրտսեր որդին, ի տարբերություն ավագ եղբայրների, որոնք չեն կարողանում իջնել հորը և հետապնդել դևին ու «հարայ են տալիս, էրվե՛ցի, խաշվե՛ցի, քաշե՛ք», պատվիրում է իր աղաչանքին ականջ չդնել և իջեցնել մինչև վառվող հորի հատակը<sup>15</sup>:

Ի դեպ, հնդեվրոպական առասպելաբանական սխեման ճշտելու համար Վ.Ն. Տոպորովը հենվում է հնդկական, իրանական և հայկական սկզբնաղբյուրների վրա՝ մասնավորապես վերլուծության ենթարկելով Մ. Խորենացու «Պատմության» մեջ պահպանված «Վահագնի ծնունդը»<sup>16</sup> երգի կառուցվածքը (Երկինք, Երկիր, Ծիրանի ծով)<sup>17</sup>:

Եղբայրները հորից հանում են դևերի կանանց և նրանց հարստությունը, իսկ փոքր եղբորը թողնում են հորի մեջ (աշխարհակառույցի հարկերը միացնող անցքում): Փոքր դևի կինը տղային զգուշացնում է, որ Լուս աշխարհի դուրս գալու համար պետք է իրեն գցի Սև, Կարմիր, Սպիտակ խոյերի վրա: Տղան, խախտելով հերթականությունը, ընկնում է Մուս աշխարհ: Այստեղ տղան տեսնում է, որ վիշապը, հսկա ծառն ի վեր սողալով, ուզում է ուտել Ջմրուս դուշի (Արծիվ, Սինամահավք, Հնդկահավ, Չեչել-Քերքեզ դուշ) ձագերին: Նա սպանում է 3 (7, 40) գլխանի վիշապին և, ի նշան երախտագիտության, թռչունը նրան Մուս աշխարհից տեղափոխում է Լուս աշխարհ՝ պահանջելով 7 (40) գառան դմակ, 7 (40) տիկ գինի:

Մարդու հիվանդությունն ու բուժումը խաղարկվում է Տիեզերակառույցի եռահարկ մոդելի խաթարման և վերականգնման առասպելությով՝ ներքևում խթոնիկ Վիշապը, վերևում<sup>18</sup> Ջմրուս դուշը, միջնամասում՝ Մարդը:

Ճանապարհին, երբ ընկնում է դուշի համար նախատեսված ոչխարի դմակը, տղան իր ազդրի մսից պոկում է մի կտոր և տալիս նրան (զոհաբերություն): Տեղ հասնելով՝ տղան կաղում է (հիվանդություն): Ղուշը բերա-

<sup>14</sup> Մեր ձեռքի տակ կա տպագիր 16 տարբերակ՝ գրառված Հայաստանի պատմաազգագրական տարբեր շրջաններից (Uther 2011, 177):

<sup>15</sup> ՀԺՀ 1959, II, 25: Տե՛ս նաև ՀԺՀ 1959, II, 23-39, 1963, IV, 244-256, 1966, V, 15-27, 1973, VI, 91-94, 656-659, 1979, VII, 11-15, 585-597, 1968, IX, 13-34, 1984, XII, 29-33, 1985, XIII, 9-13, 2016, XVIII, 133-146, Ատիլ 1899, 475-478, Սրվանձտյանց 1978, 1, 189-199, Խաչատրյան 1999, 19, 70-71, Հովսեփյան 2009, II, 33-40, 40-44 հեքիաթախումբը, որտեղ կրակն ապահովում է աշխարհակառույցի եռաչափ ուղղաձիգ առանցքի կապը:

<sup>16</sup> Խորենացի 1981, 102:

<sup>17</sup> Топоров 1977, 99-101.

<sup>18</sup> Այն հավասարազոր է «յոթերորդ երկինք» դարձվածքին՝ իբրև երկնքի ամենաբարձր և երանելի աստիճան:

նում պահած միսը դնում է տղայի ազդրին և լեզվով, թքով կամ փետուրով կպցնում (բուժում-ապաքինում):

Ընդունված տեսակետի համաձայն՝ հայոց մեջ Տիեզերքի մոդելն ավելի շատ ներկայանում է գագաթնահայաց ուղղաձիգ կառուցվածքով<sup>19</sup>, սակայն Չարսանճագից գրառված նույն «Գորտ»<sup>20</sup> հեքիաթում հաճախ այդ պատկերացումները դրսևորվում են հորիզոնական և համակցված կերպով<sup>21</sup>:

Լուս և Մուֆ աշխարհները, ուղղահայաց լինելով հանդերձ, հակադիր են, ինչը բանաձևված է «Օրերդ մթան անցնես»<sup>22</sup> անեծքում:

Թեև երկնքի յոթնահարկ կառուցվածքը մեծապես ծանրաբեռնվել է ուշ քրիստոնեական հասկացություններով, բայց այն հիմքով նախնական է և հայկական ավանդության մեջ հանդիպում է երեք, յոթ կամ ինը հարկերի տեսքով: «Պյուլպյուլին հեքիաթում»<sup>23</sup> (Ջավախք) հերոսը մտնում է թռչունի կաղապարի մեջ և թևերը շարժելով կարողանում է հասնել մինչև տիեզերակառույցի երրորդ հարկը՝ մարդկանց աշխարհ բերելով տիեզերական ծառի վերին բնակչին՝ Հազարան բլբուլին<sup>24</sup>: Իսկ «Կրակոտ ոսպ»<sup>25</sup> հեքիաթում պահպանվել է երկնքի իննահարկ պատկերացումը: Նվիրագործման ծես անցնող հերոսին «քանի հազար տարեկան» Չեչել-քերքեզ դուշը Մուֆ աշխարհից Լուս աշխարհ տեղափոխելու ճանապարհին կարողանում է հասցնել մինչև երկնքի երրորդ հարկը: Արևը, որը չորրորդ հարկում է, վառում է թռչունի գլուխը<sup>26</sup>:

Տիեզերքի ուղղաձիգ (վերից վար կամ վարից վեր) կառուցվածքի առանցքը կամ ծառ է, կամ սյուն, որն իր վրա է պահում երկնքի ծանրությունը: Աշխարհի կենտրոնը գտնվում է այդ ծառի կամ սյան կատարին, որը մոտ է երկնքին, և որի վրա ուղղաձիգ դիրքով դասավորված կենդանիներից են կախված մարդու վիճակն ու աշխարհի կարգուկանոնը:

<sup>19</sup> Фролов 1984, 65.

<sup>20</sup> ՀԺՀ 2009, XVI, 334-352:

<sup>21</sup> Հերոսը հայտնվում է ծովում, դիմացը՝ պալատը, ներքևում՝ չորսակնյա աղբյուրը, կենտրոնում՝ ոսկի-արծաթ ցայտող շատրվանները, մի կողմում՝ թագավորական այգին, ցանցավանդակի տակ՝ թագավորի փոքր աղջկա սենյակը (ՀԺՀ 2009, XVI, 343):

<sup>22</sup> Գաառացի 1903, 134: Երկինքը նույնպես բաժանվում է յոթ հարկերի: Ըստ Գ. Նժդեհյանի՝ առաջին հարկը երկրի մակերևույթն է, երկրորդը՝ ամպերը, երրորդը՝ լուսինը, չորրորդը՝ արեգակը, հինգերորդը՝ աստղերը, վեցերորդը՝ հրեշտակների և սրբերի կայանը, իսկ յոթերորդը՝ Աստծո աթոռն է (Նժդեհեան 1902, IX, 263):

<sup>23</sup> ՀԺՀ 1963, IV, 404-407:

<sup>24</sup> ՀԺՀ 1963, IV, 405-406:

<sup>25</sup> Հայկունի 1901, Բ, 216-228:

<sup>26</sup> «Ինը խաթ է երկինքը, էլավ մեկ խաթը, արևին մոտեցավ. արևը անցնելուն քիմի գլոխը էարավ. գլոխը կոխեց գինու մեջ, բարսըցավ արևի վրա, իրեք սահաթ արևեն բարսըցավ. Ընկավ սառոցը, ցուրտ տեղը, շատ զարմանալի ցուրտ է: Իրեք դասը անցավ, դեորտյունճի դասը կայնավ: Աստված հրեշտակը ճանփեց. էկավ տեսավ Չեչել-քերքեզին գլոխը էարած է» (Հայկունի 1901, Բ, 226):

Երկնքի և երկրի միջև ուղղահայաց առանցքն արտահայտվում է որոշակի գաղափարներով և կերպարներով, ի շարս որոնց հատկանշական են՝ լեռը, պալատը, տաճարը, Երկնային սյունը, առանցքը, աստիճանները, պարանը, խաչը և այլն<sup>27</sup>:

Տիեզերական ծառի նկատմամբ Վլադիմիր Նապոլսկիխը առաջ է քաշում հստակ սահմանների և չափորոշիչների որոշարկման պահանջ՝ պայմանավորված միայն Ծառով և բացառելով իմաստաբանական փոփոխականները<sup>28</sup>, ինչը, կարծում եմ, սահմանափակում է ժողովուրդների առասպելաբանաստեղծական մտածողության տիեզերագիտական ընկալումները:

Ս. Հարությունյանի դիտարկմամբ՝ հայկական հանելուկներում ծառին հաճախ փոխարինում է մարդը՝ իր մարմնի տարբեր մասերով, որտեղ «նկարագրված է մարդը վերից վար՝ գլուխ, ճակատ, աչքեր, քիթ, բերան, ատամներ, կոկորդ, որովայն»<sup>29</sup>, որոնք խորհրդանշում են Երկինքն ու լուսատուները, Տիեզերքի տարածաժամանակային բաղադրիչները<sup>30</sup>:

Առավել համոզիչ է Վլադիմիր Տոպորովի տեսակետը. «Այդ կերպարի շնորհիվ (և նույն ավանդույթի սահմաններում հերթագայող այլ պատմամշակութային ավանդույթներում դրա «այլակերպումը»՝ «տիեզերական առանցք», «տիեզերական լեռ», «սյուն», «ճուպան», «տաճար», «սանդուղք», «թոկ» և այլն) հնարավոր է դառնում ի մի բերել զանազան ընդհանուր իմաստաբանական հակադրություններ՝ նրա անդամների միջև սահմանելով հարաբերական համարժեքություն, երբեմն նաև նույնականություն՝ դրանով իսկ ստեղծելով վերակազմության առաջին արժանահավատ նշանային համապարփակ համալիրը»<sup>31</sup>:

Հայ առասպելաբանության մեջ, մասնավորապես Սասնա, Ալաշկերտի, Բարձր Հայքի (Ջավախք) ավանդություններում, աշխարհի նեցուկ-հենարանի դերում հաճախ հանդես են գալիս ձուկը և եզրը<sup>32</sup>:

<sup>27</sup> Элиаде 1987, 150, Топоров 1991, 1, 398, Топоров 2010, 1, 210.

<sup>28</sup> Напольских 2012, 20.

<sup>29</sup> Հարությունյան 2000, 20:

<sup>30</sup> Ձի (ինձ) ծառ մը կա՝ ճրճան ի (խճճված),

Ճրճանի տակ մայտան ի,

Մայտանի տակ կըթղա ի,

Կըթղաի տակ գուռնա ի,

Ջուռնաի տակ ակնատ ի (պատուհան, որմնապահարան),

Ակնատի մեջ հըլին (լիք) ուրագ,

Ուրագի տակ տիկ,

Տըկի տակ նեղ ծակ,

Ծակի տակ անտակ ծով (Հարությունյան 1965, 100, N 1010, է):

<sup>31</sup> Топоров 2010, 1, 210.

<sup>32</sup> Պետոյան 1965, 342, Լալաբեան 1896, Ա, 319, Նժդեհեան 1902, IX, 264:

ՀԽՍ-ի «Միջազգային հեքիաթների տիպերը» նշացանկի 430 թվահամարին համապատասխանող հայկական «Ձուկ»<sup>33</sup> (Այրարատ) հեքիաթում անժառանգ առևտրականը մի ծուկ որդի է ունենում, որն ամուսնանում է թագավորի դստեր հետ: Կինը ձկան խրխին կրակն է գցում, բայց ամուսինը մարդու կերպարանք ստանալու փոխարեն դարձվորում է աղունիկի՝ բնակության վայր ընտրելով անտառում գտնվող ծառի կատարը: Տղան՝ որպես ծուկ և աղավնի, մարմնավորում է տիեզերակառույցի ուղղաձիգ դիրքով միմյանց հակոտնյա վերևն ու ներքևը:

ՀԽՍ-ի նշացանկի 510A + 511 թվահամարին համապատասխանող հայկական տպագիր տասը տարբերակ հեքիաթները<sup>34</sup>, որոնք ունեն «Մոխրոտիկ» ընդհանուր վերտառությունը, արտահայտում են Տիեզերական ծառի յուրօրինակ քրոնոտոպային կոնտինումը՝ տարվա կտրվածքով (տարի, ամիս, շաբաթ, օր, գիշեր-ցերեկ, եղանակ), որը հեքիաթներում արտահայտվում է ծառի՝ 3, 7, 12, 24 ճյուղերի, սև և սպիտակ կծիկների, սև և սպիտակ խոյերի (ոչխար, ղոչ) և այլ ցուցիչների այլաբանությամբ: Հեքիաթախումբը տարբերակների մոտիվներում դրսևորում է հետաքրքիր մանրամասներ: Զորօրինակ՝ «Ճշմարտությունը չի կորչի»<sup>35</sup> (Այրարատ) հեքիաթում խորթ մոր կողմից ծովը նետված աղջիկը կերպարանափոխվում է ձկան: Կինը հիվանդ է ձևանում և ուտում ձուկ-աղջկան (տարբերակներում կինը պահանջում է խորթ աղջկան սատարող կարմիր կովի միսը<sup>36</sup>): Գետնին ընկած ձկան փշից խնձորի ծառ է բուսնում, որը կնոջ պահանջով կտրում են: Կտրված ծառի տաշեղից պատուհասված աղջիկը վերածնվում է: Այս նույն հեքիաթախմբի մեկ այլ տարբերակում՝ «Վարդիկ եզան հեքիաթում»<sup>37</sup> (Գուգարք-Լոռի), երբ որբ աղջիկը մասնակցում է արքայազնի հարսնացուի ընտրությանը, թռչունը կանգնում է նրա գլխին: Թեև խորթ մայրը հարսանեկան շքեղ շորերն իր աղջկան է հագցնում, իսկ խորթին մոցնում թոնիրը, բայց որբ աղջիկն ու թագավորի տղան հասնում են իրենց մուրազին: Վերոնշյալ հեքիաթներում թե՛ տղայի և թե՛ աղջկա մարմինը, աղավնու, ձկան, ծառի ուղղաձիգ տեսքով, համադրվում է տիեզերակառույցի առանցքի հետ:

Աշխարհի կառուցվածքի մասին առասպելաբանական պատկերացումներ են պահպանվել «Կարմիր եզն ու հ'ուշապ»<sup>38</sup> (Տուրուբերան), «Բոր եզը»<sup>39</sup> (Մուշ-Տարոն) բանաձևային հեքիաթներում: Խորթ մոր դավադրությ-

<sup>33</sup> ՀԺՀ 1959, I, 407-414:

<sup>34</sup> ՀԺՀ 1962, III, 435-441, 1973, VI, 46-49, 1977, VIII, 72-77, 387-393, 1984, XII, 524-539, 1985, XIII, 161-177, 1999, XIV, 194-205, 2012, XVII, 149-151, Լալայան 1914-1915, Գ, 252-257 և այլն:

<sup>35</sup> ՀԺՀ 1962, III, 435-441:

<sup>36</sup> ՀԺՀ 1977, VIII, 387-393, 1999, XIV, 194-205, 2012, XVII, 149-151:

<sup>37</sup> ՀԺՀ 1977, VIII, 72-77:

<sup>38</sup> ՀԺՀ 1984, XII, 524-539:

<sup>39</sup> ՀԺՀ 1985, XIII, 161-177:

յամբ տղան նետվում է հորը, բայց Կարմիր եզն իր եղջյուրների մեղրով ու անմահության ջրով այնպես է կերակրում և կազդուրում տղային, որ 40 օր հետո «էրկու եզան և գութնի գնճիլի» միջոցով հազիվ են նրան հորից հանում: Հեքիաթներում տղան արդեն իսկ առանցք է Աշխարհի եռամաս հարկերի միջև: Չար կինը, սուտ հիվանդանալով, ստիպում է ամուսնուն մորթել Կարմիր (տարբերակ՝ Բոր<sup>40</sup>) եզը: Եզը, տղային մեջքին առնելով, փախչում-ազատվում է, իսկ տղային պատսպարում է ծառի կատարին: Վիշապը հասնում է եզին, անազնիվ մենամարտում տապալում նրան և համտեսելով զոհի միսը՝ հայտնում է իր գոհունակությունը. «Օխե՛շ, ի՛նչ անուշ է»: Եզը վերջին շնչում ծառի փոխանորդ տղային պահ է տալիս վիշապին. «Ախր՛ր, զիս կերար, իմ ծառ քի ամանաթ էղնի, հ՛ուշա՛յ»<sup>41</sup>:

Վիշապը, վերև նայելով, տղային տեսնում է ծառի կատարին և նրան դարձնում իր հոգեորդին: Վիշապի մոտ տղան նվիրագործման ծեսի փորձություններ է հաղթահարում, բացում է նրա քառասուն փակ դռները, որպեսզի կենդանիներն ու մարդիկ հարմար տեղավորվեն իրենց համար սահմանված տարածական գոտիներում, իր նետով պայթեցնում է հիվանդ առյուծի ոտքի թարախապալարը<sup>42</sup>, կարգավորում բնական լանդշաֆտում նրանց բնականոն կենսընթացը<sup>43</sup>:

Հատկանշական է, որ այս պատկերացումը ամրագրված է նաև հայկական հմայական այն աղոթքներում, որոնք ուղղված են տարբեր հիվանդությունների և մարդու խախտված կենսաոճի դեմ: Աղոթքներում պատկերված ծառն իր վրայի առարկաներով ու կենդանիներով անմիջական հարաբերության մեջ է գտնվում մարդու մարմնակազմության հետ և ընկալվում է իբրև միասնական տիեզերական մոդել: «Այդ հարաբերությունը մեծ մասամբ իրագործվում է ծառի վրա գտնվող թռչունի կամ կենդանու զոհաբերությամբ... կամ նրա որևէ մասի (կաթի) օգտագործումով (դարձյալ զոհաբերության գաղափար)»<sup>44</sup>: Իսկ հիվանդ թագավորի համար բերված բուժամիջոցը նույնպես համադրվում է կենդանու, տվյալ դեպքում առյուծի կամ նրա որևէ մասի՝ կաթի զոհաբերությանը: Վերոնշյալ հեքիաթներում եզը սպանվում է, բայց իր զոհաբերությամբ նպաստում է, որ տղան, իբրև առանցք՝ եզան հանգույն, ապահովի տիեզերքի անխաթար կառուցվածքը:

<sup>40</sup> Բորը մուգ դարչնագույն է, որը դարձյալ աղերսվում է կարմիր գույնին:

<sup>41</sup> ՀԺՀ 1984, XII, 528:

<sup>42</sup> ՀԺՀ 1984, XII, 538, 1985, XIII, 174-175:

<sup>43</sup> Վիլմոս Դիոսեգին Տիեզերական ծառի հունգարական պատկերացումները համադրում է Սիբիրի և Հեռավոր Արևելքի շամանական ավանդույթում ծառ-աստիճանների միջոցով վերևի աշխարհ տեղափոխվելու նվիրագործման ծեսի վերապրուկի հետ, որտեղ հերոսը, մարմնավորելով (տալտոշ-taltos) կախարդական ծիսը, նույնանում է նրա հետ՝ իրագործելով բազում քաջագործություններ (Diószegi 1958, 149 pass.):

<sup>44</sup> Հարությունյան 2000, 23:

### Աշխարհի հորիզոնական մոդելը

Այն, ի տարբերություն ուղղաձիգ մոդելի, բաց համակարգ է, որը ձևավորվում է առանցքի չորս կողմերով, որոնք համապատասխանում են աշխարհի չորս ծագերին և հավասար են իրար:

Յուզանշական է, որ հորիզոնական բաժանումը հաճախ մեկտեղվում է տարբեր աշխարհներն իրար միացնող աստիճանի խորհրդանշանի հետ: Ի դեպ, Տիեզերական ծառի ուղղահայաց ըմբռնումը առավել կապված է առասպելաբանության, իսկ հորիզոնականը՝ ծեսերի և ծիսական մտածողության հետ: Առաջինը իրականացվում է երկրորդի միջոցով՝ քառակուսու կամ շրջանակի պատկերով՝ ներառելով զանազան կենդանիների, թռչունների, ինչպես նաև մարդկանց<sup>45</sup>: Հայկական հեքիաթներում նվիրագործյալ տղան թագավորի առաջադրած երեք դժվարին հանձնարարությունները կատարում է Սև, Կարմիր և Սպիտակ ձիերի օգնությամբ (տարբերակներում՝ բոգ կամ մոխրագույն ձի<sup>46</sup>): Որոշ հեքիաթներում ձիերը չորսն են<sup>47</sup>: Մի շարք ավանդույթներում «3» և «4» թվերը համապատասխանաբար արտահայտում են դինամիկ և ստատիկ կայունություն, իսկ նրանց հանրագումար «7»-ը խորհրդանշում է տիեզերքի ամբողջականության գաղափարը<sup>48</sup>:

Աշխարհի կառուցվածքի հորիզոնական մոդելի պատկերացումներ կարելի է համարել հրաշապատում հեքիաթներում հաճախ հանդիպող ինվարիանտային (անփոփոխ) «յոթ սար էն կողմ, յոթ ծով էն կողմ», «օխտը սարի քըմակի»<sup>49</sup> անստույգ տարածքները, երեք, յոթ, քառասուն դևերի՝ իրար հաջորդող ապարանքները, դևերի՝ Սպիտակ, Կարմիր, Սև հողերը, որոնք շարված են կողք կողքի<sup>50</sup>:

Դժոխքն ու Դրախտը, լինելով անհամեմատ ուշ շրջանի կրոնաառասպելաբանական ավանդության արդյունք, իրենց հիմքով նախաքրիստոնեական են և հայոց մեջ, մեծ մասամբ, հակադիր ուղղահայաց են պատկերացվում. Դրախտը՝ երկնքում, Դժոխքը՝ ստորերկրյայքում<sup>51</sup>: «Գետնի օխթը դաթում»<sup>52</sup> գտնվող Դժոխքը՝ կողք կողքի պարունակներով նույնպես հորիզոնական է պատկերացվում:

<sup>45</sup> Топоров 1991, 1, 401.

<sup>46</sup> ՀԺՀ 1984, XII, 531, 1985, XIII, 165:

<sup>47</sup> ՀԺՀ 1985, XIII, 161-177:

<sup>48</sup> Топоров 1992, 2, 630.

<sup>49</sup> ՀԺՀ 1966, V, 72:

<sup>50</sup> Айрапетян 2015, 147-149.

<sup>51</sup> Հանդիպում են նաև Դրախտ-Դժոխքի հորիզոնական դասավորության ընկալումներ, երբ այդ երկուսը միմյանցից բաժանված են հրեղեն գետով, որի վրա ձգված է Մազե կամուրջը: Դժոխքից փախչողների մեղքի ծանրությունից այն կտրվում է, և մեղավորները թափվում են հրեղեն գետը (Սրվանձտյանց 1978, 1, 150):

<sup>52</sup> Լալաեան 1896, Ա, 319:

Հորիզոնական մոդելն իր հերթին հանդես է գալիս եռամաս բաժանմամբ՝ աջ, ձախ, կենտրոն, ինչը տեսանելի է «Ամյուր-Յաման» (Վան-Վասպուրական) հեքիաթում<sup>53</sup>:

«Միրզա Մահմուտի հեքիաթում»<sup>54</sup> (Բասեն) թագավորի աղջիկը հագնում է «էրկթե հ'ոտնմները», բռնում է «էրկթե բիրը», «մի ջեբն էլ լիք կորեկ լցնում» և գնում ամուսնուն գտնելու: Երկարատև դեգերումներից հետո կոշիկներն ու գավազանը մաշվում են, կորեկն էլ գրպանի մեջ փտում, հող է դառնում՝ համադրվելով անորոշ ժամանակի (տարբերակներում՝ 3 կամ 7 շաբաթ, ամիս, տարի)<sup>55</sup> ու տարածության (Պղնձե, Արծրթի, Օսկե քաղաքներ<sup>56</sup>, հողե, շուշեցե, պղնձե, էրկաթե, պողպատե, արծաթե, օսկեցե բերդեր<sup>57</sup>) հորիզոնական պատկերացումներին: Իսկ հացահատիկային բույսերը, բնական նշանակությունից զատ, ընկալվում են նաև իբրև քրոնոտոպներ, մշակութային աշխարհի ծածկագրումներ<sup>58</sup>:

### Աշխարհի կառուցվածքի համակցված մոդելը

Այն ամենից առաջ պատկերացվում է խաչմերուկի տեսքով: Խաչմերուկի երեք ճանապարհներից յուրաքանչյուրն առանձին պատկերացվում է որպես ուղղահայաց մոդել, որոնք, սակայն, միմյանց նկատմամբ հորիզոնական են, քանի որ դրանցից յուրաքանչյուրով անցնող կամ անցնելիք միավորները մոդելի հորիզոնական, կողք կողքի դրսևորումներն են: Խաչմերուկը կարելի է ընկալել որպես երկու՝ ուղղահայաց և հորիզոնական մոդելների համակցություն (կոմպլեքս)<sup>59</sup>:

Համակցված մոդելի մասին պատկերացումները նշմարվում են «Հագարան բլբուլ կամ Ալո-Դինոյի նաղլը»<sup>60</sup> (Այրարատ) «Պյուլպուլին հեքիաթը»<sup>61</sup> (Ջավախք), «Հագարան բուլբուլ»<sup>62</sup> (Վան) հեքիաթներում, որտեղ թագավորի երեք որդիները բլբուլը ձեռք բերելու նպատակով ճամփա են ընկնում և տեսնում, որ «ճամբահ իրեք ճուղ ի, շիվարան, կայնան»<sup>63</sup>: Երեք

<sup>53</sup> «էդա քյաղաք բիրթուն ոսկուց ի շինուկ, մեկ խատ էլ ոսկի պերթ գյեռ էդա քյաղքի օրթալաղն ի (իմա՝ մեջտեղում)», ոսկե բերդն է, բերդի տակ՝ անմահական աղբյուրն է, որի ջուրը լցվում է ոսկե «գյուլի» մեջ, «էդա ոսկի գյուլի մեջն էլ ոսկի թիվքերով խավքեր կը լողան» (ՀԺՀ 1998, XV, 467):

<sup>54</sup> ՀԺՀ 1963, IV, 195-219:

<sup>55</sup> ՀԺՀ 1963, IV, 20, 1968, IX, 247:

<sup>56</sup> ՀԺՀ 1968, IX, 247-248:

<sup>57</sup> ՀԺՀ 1963, IV, 21:

<sup>58</sup> Агапкина 1998, 183-184.

<sup>59</sup> Ճանապարհների բախտաբաժան մշակույթը խորհրդանշորեն արտացոլված է ռեժիսոր Ուլտեր Խիլիի 1986 թ. նկարահանած ամերիկյան «Խաչմերուկ» երաժշտական դրամայում: Այս տեղեկության համար շնորհակալ եմ հնազետ Բորիս Գասպարյանին:

<sup>60</sup> ՀԺՀ 1959, I, 27-48:

<sup>61</sup> ՀԺՀ 1963, IV, 404-407:

<sup>62</sup> Սրվանձտյանց 1978, 1, 214-218:

<sup>63</sup> Սրվանձտյանց 1978, 215:

ճանապարհների խաչմերուկում նստած զառամյալ ծերունին տղաներին հայտնում է. «Ա՛յ բալեք, առաջին նան էրկունջի ճընապարնին պարի յա, ամմա իրեքինջինը շատ շառ ա, ըտըղավ անց կենողը ետ չի տըրեռնում»<sup>64</sup>:

Տիեզերական ծառը հաճախ շրջված է պատկերվում՝ արմատները երկնքում, իսկ սաղարթը՝ հողի տակ: Այն, ինչ գտնվում է արտացոլանքից վերև ճիշտ դիրքում է, իսկ արտացոլանքից ներքև գտնվողը շրջված է<sup>65</sup>: Թագավորի որդին նայում է երկնքին ու տեսնում ծառի արմատները<sup>66</sup>:

Այրարատից գրառված «Ղուշ-Փարին»<sup>67</sup> հեքիաթում ծառի տակ հանգստացող թագավորի փոքր տղան, որը մշակութային հերոս է, երեկոյան հենց ուզում է բլուրն անցնել, նկատում է արևի արտացոլանքը երկրի վրա. «Ասեց. - Փա՛ռք քեզ Աստված, էս ինչ թավուր աշխարք ա. մի արև երկընքըմն ա, մի արև էլ գեննըմն ա:

Ձին քշեց, քշեց, գնաց տեհավ, որ մի բմբուլ: Ձիուցը վեր էկավ, բմբուլն էտ գեննիցը վե կալավ, խրեց փափախածալը»<sup>68</sup>: Լուրը հասավ թագավորին, «թե մի տղա ա գալի, մի արև երկընքըմն ա, մին էլ դրա փափախածալըմն ա»<sup>69</sup>: Հնագույն մշակույթներում այդ շրջադասությունը ընդունված է բացատրել վերևի ու ներքևի աշխարհների միջև մարդու միջնորդ դերով: Որոշ հետազոտողների կարծիքով՝ շրջված ծառը (արևը, փետուրը) խորհրդանշում է տաքի և սառի, բարձրի և ցածրի, ներքևի և վերևի, գիշերվա և ցերեկվա, ցամաքի և ծովի, ծննդի և մահվան, քառսի և կոսմոսի հակադարձության այլաբանությունը<sup>70</sup>:

Ըստ Վ. Տոպորովի՝ գոյություն ունի հիմնավորումների մի ամբողջ շարք, որոնք համոզում են, որ Տիեզերական ծառի կերպարն ու նրա նմանողությամբ պատկերացումները համապարփակ համալիրներ են<sup>71</sup>: Իսկ ուրալյան լեզվաբանության պատկանող ժողովուրդների առասպելաբանության ուսումնասիրությամբ զբաղվող Վ. Նապոլսկիխի կարծիքով՝ ուրալյան ավանդույթում ձեռագիր և տպագիր նյութի բացակայությունը հիմք չի տալիս վերականգնելու նախաուրալյան առասպելաբանության և Տիեզերական ծառի համապարփակ բնույթը: Սակավ օրինակներն էլ, ըստ հեղինակի, բա-

<sup>64</sup> ՀԺՀ 1966, V, 85:

<sup>65</sup> Топоров 1991, 1, 400-401.

<sup>66</sup> Այս պատկերացումը համադրվում է Բրահմայի «երկու բնույթի միացյալ էություն» ուսմունքին (Топоров 1991, 1, 401), երբ երկու ծառերից մեկը կարող է ընկալվել որպես մյուսի արտացոլանքը. «Մըտածում ա, թա ստի պեն կինի,՝ հանցա լիհա էս ծառը շոռ տված ինի, եշում ա ճրին, էլիա աշկին ըռաջին ծառեն տակեքն ա, իրեք հատն էլ առե մըքցածան մեծ, համ էլ չոված» (Հայրապետյան 2006, 41, հմմտ. Աշխարհի եռաչափ ընկալման առասպելային հետ):

<sup>67</sup> ՀԺՀ 1959, I, 49-61:

<sup>68</sup> ՀԺՀ 1959, I, 52:

<sup>69</sup> ՀԺՀ 1959, I, 52:

<sup>70</sup> Топоров 2010, 1, 215-216.

<sup>71</sup> Топоров 2010, 210.



ցատրվում են որոշակի ավանդույթների շատ թե քիչ ուշացած արեալային կապերով՝ կրելով ամենից առաջ սիբիրյան շամանիզմի, ալթայան և հնդեվրոպական (արիական, բալթիկ-սլավոնական, հնարավոր է՝ գերմանական) մշակույթների ազդեցությունը<sup>72</sup>:

Ի հաստատումն իր ասածի՝ Վ. Նապոլևսկիխը մատնացույց է անում Եկատերինա Պրոկոֆևայի<sup>73</sup> հողվածը՝ շարադրված նկարների և ջրանկարների վերլուծության վրա և եզրակացնում է, որ անգամ սելկուպների շամանական ավանդույթում սրբազան ծառերը ամբողջովին չեն տեղավորվում Տիեզերական ծառի իդեալական մոդելում, քանի որ «ծառը չի գտնվում նկարի կենտրոնական մասում»<sup>74</sup>, և երկինքն ու երկիրը միմյանց կապող ճանապարհը ոչ թե ծառն է, այլ՝ գետը (նկարի տարբերակներում՝ ծառ-աստիճանները):

Ավելորդ չենք համարում հիշեցնել, որ ջուրը խառնակ քառսն է, որը հակադրվում է Տիեզերքի կարգուկանոնին, և նրա առկայությունը նկարում միանգամայն արդարացված պետք է համարել, քանի որ ջրի գոյությունը բոլորովին էլ հակափաստարկ չէ Տիեզերական ծառի առասպելային դեմ: Ստորերկրյալքը հաճախ կոչվում է Անդունդք կամ Սև անհատակ և նույնանում է Քաոսին, «որն ըմբռնվում է իբրև ծով՝ Տիեզերքը բոլոր կողմերից սահմանափակող քաոսային ջրերի տարերք»<sup>75</sup>: Իսկ հին հայերը, մասնավորապես ալաշկերտցիները հավատում էին, որ Երկնքի և Երկրի խորքում կա «Սև ջրի» օվկիանոս, որը, դուրս ժայթքելով, կարող է կործանել Երկիրը<sup>76</sup>: Զորօրինակ՝ Չարսանճագից գրառված «Կրակոտ ոսպ»<sup>77</sup> հեքիաթում Տիեզերակառույցը (Երկինք, Երկիր, Ստորերկրյալք) անհատակ ծով է պատկերացվում, որը «ներքուստ թեպետ հակադիր, բայց իրականում մեկ ամբողջություն է կազմում»<sup>78</sup>:

Յուցանշական է, որ «Этнографическое обозрение» հանդեսի նույն համարում Յուրի Բերյոզկինը, խոսելով մերձբալթյան-ֆիննական ժողովրդական վիպական երգերի մասին, նույնպես նշում է, որ հսկա կաղնին չի գտնվում աշխարհի կենտրոնում, ուստի և չի կարող միացնել Տիեզերքի տարբեր գոտիները<sup>79</sup>:

Վերջին տարիներին շրջանառվող այն տեսակետը, որ աշխարհի բոլոր ժողովուրդների ավանդույթներում չի կարելի համատարած Տիեզերական

<sup>72</sup> Напольских 2012, 25.

<sup>73</sup> Прокофьева 1961, 54-74.

<sup>74</sup> Напольских 2012, 22.

<sup>75</sup> Топоров 1977, 102.

<sup>76</sup> Նժդեհեան 1902, IX, 263:

<sup>77</sup> Հայկունի 1901, Բ, 216-228:

<sup>78</sup> Հարությունյան 2000, 16:

<sup>79</sup> Березкин 2012, 8.

ծառի առասպելային որոնել, իհարկե, տրամաբանական է: Ի վերջո, Տիեզերքի մոդելի պատկերացումը կարող է պայմանավորված լինել ինչպես բնափայտային բուսականության և աշխարհագրական գործոնների առկայությամբ, այնպես էլ կոնկրետ մշակութային ավանդույթների շրջանակներում ձևավորված հանգամանքներով: Բայց տարակուսանք է հարուցում նաև ջրանկարի հիման վրա Ծառը Տիեզերքի կենտրոնում չտեսնելու և այն՝ իբրև Տիեզերակառուցի առանցք բացառելու՝ Վ. Նապոլսկիի եզրակացությունը: Օրինակ՝ հայոց բանահյուսական մշակույթում ժողովուրդը շատ հստակ է սահմանել կենտրոնի մասին պատկերացումը. «Ի՛նչ ալ ըլլայ, երկիրը տափարակ ու բուրջի է, անիւի պէս, առաջին կարծիքի համաձայն, եզան կոտոջի վրայ դրուած, ինչպէս անիւը սոնակի վրայ: Իսկ ըստ երկրորդ կարծիքի՝ օվկիանոսի վրայ դրուած ու Լևիաթանը անիւի երկաթէ շրջանակի պէս շուրջը փաթեում: Ժողովուրդը հաստատելով այս բանը, կը պնդէ միանգամայն, որ աշխարհը ծայր չ'ունի: Աշխարհի ո՛ր կէտին վրայ մարդ կանգնի՝ այնտեղ է թե՛ աշխարհի և թե՛ երկնքի կեդրոնը»<sup>80</sup>:

### Եզրակացություններ

Աշխարհի տեսքի և կառուցվածքի եռաչափ ընկալման պատկերացումներին, ուղղաձիգ, հորիզոնական և համակցված տարածական մոդելներին, դրանց արժեքափայլի բնույթին անդրադարձել են շատ գիտնականներ, ինչը շարունակվում է մինչև մեր օրերը (Ռ. Գեյնոն, Ե. Բլավատսկայա, Ե. Կագարով, Բ. Լատինին, Կ. Յունգ, Գ. Շոլեմ, Մ. Էլիադե, Վ. Դիոսեգի, Ա. Կոնկկա, Լ. Տոյդըբեկովա, Վ. Տոպորով, Ս. Հարությունյան և այլք):

Այսօր արդեն գիտական շրջանառության մեջ են դրված բանագիտական, ազգագրական, մշակութաբանական բնույթի այլ աշխատանքներ, որոնք առաջ են քաշում Տիեզերական ծառի առասպելային մասին նոր մոտեցումներ (Յու. Բերյոզկին, Վ. Նապոլսկի), որոնք, հեղինակների կարծիքով, հիմք չեն տալիս հաստատելու Տիեզերական ծառի համապարփակ բնույթը, ինչը բնութագրական է առավելապես Եվրասիայի հյուսիսային ու որոշ հարավային շրջանների, Մեզոամերիկայի և Պլատոյի հյուսիսամերիկյան արեալի որոշ խմբերի համար: Իսկ մարդու և ծառի հավասարաձևունակությունն ավելի շատ բացատրում են ծառի պաշտամունքով, քան Աշխարհի կառուցվածքի ծառակերպ ընկալմամբ:

Կարծում ենք, որ իմաստաբանական այլազան ըմբռնումներով հանդերձ, այս երկու տեսակետները ոչ միայն միմյանց չեն հակասում, այլև նպաստում են խնդրո առարկա հնագույն պատկերացման փոխլրացնող վերակազմությանը՝ ամբողջացնելով Տիեզերական ծառի առասպելային:

<sup>80</sup> Նժդեհեան 1902, IX, 264:

**Օգտագործված գրականություն**

Ատիլ 1899, Երեք խնձոր, Բիրական, N 30, Կ. Պոլիս, էջ 475-478:

Գալատացի Հ.Մ.Հ. 1903, Երգեր, առակներ հանելուկներ, թերահավատություններ... Խոտորջրոյ, Տփխիս, Տպ. Կ. Տավարտկիլաձե, 134:

Լալաեան Ե. 1896, Ջավախք, Ազգագրական հանդէս Ա, Շուշի, տպ. Ա. Մահտեսի-Յակոբեանց, Ջավախքի էջերը՝ ամբողջ., էջ 117-378:

Լալայան Ե. 1914-1915, Մարգարիտներ հայ բանահիւսութեան, Գ, Թիֆլիս-Վաղարշապատ, տպ. Ս. Էջմիածնի, 269 էջ:

Խաչատրյան Ռ. 1999, Թալին, Հայ ազգագրություն և բանահյուսություն Նյութեր և ուսումնասիրություններ, 19, Երևան, «Գիտություն», 280 էջ:

Հայ ժողովրդական հեքիաթներ (այսուհետև՝ ՀԺՀ) 1959, I, Հատորը պատրաստեց և առաջաբանը գրեց Ա. Մ. Նազինյանը, խմբագիր՝ Ա.Տ. Ղանալանյան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 670 էջ:

ՀԺՀ 1959, II, Հատորը պատրաստեց և նախաբանը գրեց Ա.Մ. Նազինյանը, խմբագիր՝ Կ.Ա. Մելիք-Օհանջանյան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 659 էջ:

ՀԺՀ 1962, III, Հատորը պատրաստեց և նախաբանը գրեց Ա.Մ. Նազինյանը, խմբագիրներ՝ Գ.Ն. Հովնան, Էմ.Ա. Պիվազյան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 671 էջ:

ՀԺՀ 1963, IV, Հատորը պատրաստեց և նախաբանը գրեց Մ.Ս. Մկրտչյանը, խմբագիր՝ Հ.Մ. Մկրտչյան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 551 էջ:

ՀԺՀ 1966, V, Հատորի բնագիրը և ծանոթագրությունները Ա.Մ. Նազինյանի և Մ.Մ. Գրիգորյանի (Սպանդարյան), նախաբանը գրեց Ա.Մ. Նազինյանը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 759 էջ:

ՀԺՀ 1973, VI, Հատորի բնագիրը, նախաբանը, ծանոթագրությունները, բառարանն ու ցանկերը՝ Ա.Մ. Նազինյանի, խմբագիր՝ Ս.Գ. Աբրահամյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 778 էջ:

ՀԺՀ 1979, VII, Հատորը տպագրության են պատրաստել Ա.Մ. Նազինյանը և Մ.Ն. Առաքելյանը, խմբագիր՝ Ս.Գ. Աբրահամյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 767 էջ:

ՀԺՀ 1977, VIII, Հատորի բնագիրը, նախաբանը, ծանոթագրությունները, բառարանն ու ցանկերը՝ Ա.Մ. Նազինյանի և Ռ.Հ. Գրիգորյանի, խմբագիր՝ Հ.Մ. Մկրտչյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 904 էջ:

ՀԺՀ 1968, IX, Հատորը պատրաստեց և առաջաբանը գրեց Մ.Ս. Մկրտչյանը, խմբագիր՝ Ս.Ս. Տարոնցի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 649 էջ:

ՀԺՀ 1984, XII, Հատորը կազմեց և տպագրության պատրաստեց Վ. Սվազյանը, խմբագիր՝ Ս.Ա. Գևորգյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 651 էջ:

ՀԺՀ 1985, XIII, Հատորը տպագրության պատրաստեց և ծանոթագրեց Ա.Ս. Ղազինյանը, խմբագիր՝ Ս.Ա. Գևորգյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 616 էջ:

ՀԺՀ 1999, XIV, Հատորը կազմեց և տպագրության պատրաստեց Ա. Ղազինյանը, խմբագիր՝ Ս.Ա. Գևորգյան, Երևան, ՀՀ ԳԱ հրատ., 590 էջ:

ՀԺՀ 1998, XV, Հատորը տպագրության պատրաստեց և ծանոթագրեց Վ. Սվազյանը, խմբագիր՝ Ս.Ա. Գևորգյան, Երևան, «Ամրոց», 511 էջ:

ՀԺՀ 2009, XVI, Հատորը կազմեցին և տպագրության պատրաստեցին Ա. Նազինյանը և Ա. Ղազինյանը, խմբագիր՝ Ա. Ղազինյան, Երևան, «Գիտություն», 600 էջ:

ՀԺՀ 2012, XVII, Հատորը կազմեց, առաջաբանը գրեց և տպագրության պատրաստեց Թ. Հայրապետյանը, խմբագիր՝ Ա. Ղազինյան, Երևան, «Գիտություն», 839 էջ:

ՀԺՀ 2016, XVIII, Հատորը կազմեց, առաջաբանը գրեց և տպագրության պատրաստեց Թ. Գևորգյանը, խմբագիր՝ Թ. Հայրապետյան, Երևան, «Գիտություն», 656 էջ:

- Հայկունի Ս. 1901, Էմինեան ազգագրական ժողովածու, Բ, Մոսկուա-Վաղարշապատ, հր. Լազարեան ճեմարանի արևելեան լեզուաց, 447 էջ:
- Հայրապետյան Թ. 2006, Անհատական գործունեության նյութեր, Արցախ, տետր N 1:
- Հարությունյան Ս.Բ. 1965, Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 389 էջ:
- Հարությունյան Ս. 2000, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, «Համազգային», 527 էջ:
- Հովսեփյան Հ. 2009, Ղարադաղի հայերը, Բանահյուսություն, II, Երևան, «Գիտություն», 643 էջ:
- Մովսիսի հորենացոյ Պատմութիւն Հայոց 1981, քննական բնագիրը՝ Մ. Արեղյանի և Ս. Հարությունյանի, Երևան, ԵՊՀ հրատ., 588 էջ:
- Նժդեհեան Գ. քհ. 1902, Պատավաշունչ, Երկինքն ու երկիրը, Ազգագրական հանդես IX, Թիֆլիս, տպ. Կ. Մարտիրոսեանցի, էջ 263-265:
- Պետոյան Վ. 1965, Սասնա ազգագրությունը, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 549 էջ:
- Սրվանձտյանց Գ. 1978, Երկեր, 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1668 էջ:
- Агапкина Т. 1998, Мифология деревьев в традиционной культуре славян: лещина (*Corylus avellana*), *Studia Mythologica Lavica*, 1, Pisa, p. 183-194.
- Айрапетян Т.Л. 2015, О представлениях космической модели мира в армянских и дагестанских народных сказках. Лавровский сборник, Материалы XXXVIII и XXXIX среднеазиатско-кавказских чтений 2014-2015 гг., Санкт-Петербург, Российская академия наук, с. 147-149.
- Березкин Ю.Е. 2012, Мифологические деревья в лесу культуры, Этнографическое обозрение, N 6, Москва, с. 3-18.
- Мелетинский Е. 1976, Поэтика мифа, Москва, «Наука», 407 с.
- Напольских В.В. 2012, Мифологема мирового древа и мифологии народов уральской языковой семьи, Этнографическое обозрение, N 6, Москва, 19-29.
- Прокофьева Е.Д. 1961, Представления селькупских шаманов о мире (по рисункам и акварелям селькупов), Сборник Музея антропологии и этнографии, т. 20, Ленинград, с. 54-74.
- Топоров В.Н. 1977, Об отражении одного индоевропейского мифа в древнеармянской традиции, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., N 3, с. 88-106.
- Топоров В. Н. 1991, Древо мировое, Мифы народов мира 1, Москва, «Советская энциклопедия», с. 398-405.
- Топоров В.Н. 1992, Числа, Мифы народов мира 2, Москва, «Советская энциклопедия», с. 629-631.
- Топоров В.Н. 2010, Мировое дерево, универсальные знаковые комплексы, т. 1, Москва, «Рукописные памятники Древней Руси», 448 с.
- Фролов Б. 1984, Начало первобытной символики (по материалам изучения древнейших культур Армении и сопредельных территорий), Պատմա-բանասիրական հանդես, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., N 1, с. 54-65.
- Элиаде М. 1987, Космос и история, Москва, «Прогресс», 312 с.
- Элиаде М. 1998, Миф о вечном возвращении. Архетипы и повторяемость, Санкт-Петербург, «Алетейя», 249 с.
- Diószegi V. 1958, A sámánhit emlékei a magyar népi műveltségben, Budapesht, Akadémiai Kiadó, 472 p.

Uther H.-J. 2011, The Types of International Folktales. A Classification and Bibliography, Part I, Animal Tales, Tales of Magic, Religious Tales, and Realistic Tales, with an Introduction, Helsinki, Academia Scientiarum Fennica, 619 p.

## ПРЕДСТАВЛЕНИЯ О ВИДЕ И СТРОЕНИИ МИРА В АРМЯНСКИХ ВОЛШЕБНЫХ СКАЗКАХ

Тамар Айрапетян

### Резюме

В научных кругах господствует точка зрения об универсальности мирового дерева, однако научные исследования последних лет показывают, что эта мифологема однозначно не распространена в традициях всех народов. Следует отметить, что в армянских устных преданиях отраженные мифологические представления о виде и строении мироздания представлены вертикальной, горизонтальной и совмещенной моделями, что подтверждает архетипический характер многоступенчатости миростроения.

Мировое дерево (или космическое) являет собой образ некой универсальной концепции, с помощью вертикальной оси объединяющей три яруса или ступени объемно-пространственного мироздания (Небо, Земля, Подземный Мир), нашедшие отражение в некоторых образах и идеях, в ряду которых особенно распространены дерево, столп, гора, храм, веревка, лестница, крест, человек, в силу анатомического строения тела напоминающий дерево.

У древних армян модель мироздания чаще всего представлена в вертикальном строении, где опорой мира являются рыба и вол.

Нормальная жизнедеятельность обитателей мироздания обусловлена правопорядком и усовершенствованием хронологического континуума миростроения. Последнее нашло свое отражение в армянской мифологии и фольклорных преданиях, в частности, в армянских волшебных сказках, внесенных под соответствующими номерами в каталог «Типы международных сказок» Ганса Йорга-Утера, что и является новизной данного исследования.

**Ключевые слова** – волшебная сказка, миф, символ, обряд, предание, христианство, мировое дерево.

---

---

**IMAGINATIONS ON THE WORLD'S SHAPE AND STRUCTURE  
IN ARMENIAN FAIRYTALES**

Tamar Hayrapetyan

## Abstract

Among the scientific circles is dominant the idea on universal nature of World Tree, though the recent researches such mythologems are not spread in traditions of all nations. In mythological perceptions on shape and structure of the world represented in Armenian oral tradition, the world is represented in vertical, horizontal and combined models, confirming the multilayered archetypal nature of those perception. The World Tree is a definite system of comprehensive concepts, which combines the three dimensional spaces or degrees of the Universe (Heaven, Earth, and Underworld) through the vertical axis. There are various representations of these visions and the most widespread are constituted in the form of a tree, pillar, mountain, temple, rope, ladder, cross, or a man, whose body parts are resembling a tree. Among Armenians the model of the Universe is most often represented by a vertical structure where the fish and buckle have the role of those who support the base of the World.

The normal functioning of the Universe is conditioned by the order of the World structure and the perfection of the chronotop continuum that can be found in mythological and folklore tradition, particularly in Armenian folktales of wonder corresponding to definite types of HJU "International Types of folktales", moreover, those tales are the object and novelty of this study.

**Key words** – tales of magic, myth, symbol, ritual, legend, Christianity, World Tree.

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՍԱԽՈՍԻ ՌԱԶՄԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Մարատ Բաղդասարյան

Պահեստագրի փոխգնդապետ  
ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիա  
ՀՀ, Երևան, Դավիթ Բեկի 155  
Էլ. հասցե՝ marat.baghdasaryan60@gmail.com  
ORCID: 0009-0006-5881-3241

Հոդվածը ներկայացվել է 16.05.2022, գրախոսվել է 20.05.2022, ընդունվել է տպագրության 02.08.2024  
DOI: 10.53548/0320-8117-2024.2-367

Ամփոփում

Ռազմատեսուհական գործընթացում արժևորելով ուսուցանողի ռազմամանկավարժական գործունեության անփոխարինելի դերակատարությունը՝ ուշադրությունից չպետք է դուրս թողնել զինվորական դասախոսի՝ արհեստավարժ, բարոյագիտական արժեհամակարգին տիրապետելու որակն ու դրսևորման մակարդակը: Վերջինս արտացոլվում է ինչպես ուղղահայաց, այնպես էլ հորիզոնական կապերով զարգացող ռազմամանկավարժական գործառույթների, ինչպես նաև ուսման և դաստիարակչական գործընթացների իրականացման ժամանակ՝ գործադրելով տարբեր մեթոդներ, ձևեր, «գործիքակազմ», միջոցներ:

Այսպիսի խնդրահարույց գործոններն էլ ձևավորում են զինվորական դասախոսի ռազմամանկավարժական բարոյագիտական գործառույթներն ու առաջադրում բարոյական պահանջների, սկզբունքների և նորմերի հիմնական, փոխշաղկապված, սակայն հարաբերական ինքնուրույնությամբ խմբեր:

Դասախոսի ռազմամանկավարժական բարոյագիտության էության ու բովանդակային առանձնահատկությունների պարզաբանմամբ բացահայտվում են նաև դրա գործառույթներն ու բարոյական պահանջները, նորմերը, որոնց կատարելագործումն ու զարգացումը անմիջական ազդեցություն են թողնում ուսուցման արդյունավետության վրա:

Ուսումնական գործընթացում բարոյամանկավարժական պահանջների ու նորմերի նպատակային, հիմնավորված ու ստեղծագործական գործադրումն անվերապահորեն կհանգեցնի ռազմամանկավարժական և ուսումնադաստիարակչական գործընթացների արդյունավետությանն ու որակի բարձրացմանը:

**Բանալի բառեր՝** զինծառայող, դասախոս, ռազմամանկավարժական բարոյակա-  
նություն, դասախոսի բարոյագիտական վարքագիծ, կրթություն, բարոյական պահանջ-  
ներ, սկզբունքներ:

### **Ներածություն**

Պաշտպանական համակարգի զարգացման տեսլականի 4-րդ առաջնահերթությունում կան այսպիսի դրույթներ. **«Զինժառայողների կրթության շարունակականության ապահովումը զինվորական ծառայության ողջ ընթացքում:**

*Մենք պետք է հետևողական աշխատանքներ փորձենք զինժառայողի կրթական ցենզի բարձրացման և ինտելեկտուալ մակարդակի աճի ուղղությամբ՝ որպես զինված ուժերի զարգացման ռազմավարության կարևորագույն ուղղություն:*

*Մեր վերջնական նպատակը բանակում արհեստավարժության և բարոյականության նոր չափանիշների ձևավորումն է՝ հմուտ, պատվախնդիր ու առաջնորդ սպայական կազմով և վարժված, կրթված, շարժառիթավորված ու մարտունակ զինվորներով...*

*Կրթությունը անքակտելիորեն կապված է անձնակազմի կառավարման հետ»<sup>1</sup>:*

### **Զինվորական դասախոսի բարոյամանկավարժական գործունեության բովանդակությունը**

Մեր հայրենիքի անկախության հռչակմանը հաջորդած տասնամյակների հասարակական-բարոյական կյանքի ու ժամանակակից աշխարհաքաղաքական զարգացումները մեր ազգին կանգնեցրել են լուրջ մարտահրավերների առջև: Դրանով պայմանավորված՝ «հարուստ ենք խնդիրներով, ունենք բարոյական խոր ճգնաժամ և չունենք այնպիսի հոգևոր կառույց, որ օգնի հաղթահարել դարի մարտահրավերները, որոնք բոլոր ոլորտներին են առնչվում: Փոփոխությունները կատարվում են արագ, ու չհասցնելով ժամանակին գիտակցել այդ փոփոխությունների ամբողջ խորությունն ու էությունը՝ հայտնվում ենք շփոթության մեջ»<sup>2</sup>:

Տրամաբանական են դառնում հարցադրումները. առաջադրված խնդիրն ինչպես, ինչ ճանապարհներով, ռազմամանկավարժական ինչ մոտեցումներով է հնարավոր լուծել, ինչ դերակատարում կարող են ունենալ կրթական համակարգի բազմազան օղակները, մասնավորապես սպայական կորպուսը, այդ թվում՝ դասախոսական կազմը:

Վերջինիս արհեստավարժ գործունեությունում առանցքային դեր ունեն և այժմ էլ զբաղեցնում են ենթակաների հետ բազմաբնույթ ուսումնական ու դաստիարակչական խիստ համակարգված աշխատանքները, անձնակազմի և նրա ռազմամասնագիտական արհեստավարժ գործունեության նախապատրաստման գործընթացի արդյունավետ ղեկավարումը, բարոյագիտական արժեհամակարգը: Խնդրի կարևորության խորությունը գիտակցե-

<sup>1</sup> Տոնյան 2018, 4:

<sup>2</sup> Ղազարյան 2011, 8:



լու համար պետք է շեշտադրել, որ՝ «Եթե դաստիարակությունը անհատի մտքի, ֆիզիկական և հոգևոր կարողությունների ձևավորմանը, նրան կյանքին նախապատրաստելուն ուղղված հետևողական, նպատակասլաց գործընթաց է, ապա ուսուցումը գիտելիքի որոշակի համակարգի յուրացման և այդ հիմքի վրա անհատի զարգացման համապատասխան մակարդակի ապահովման գործընթաց և արդյունք է»<sup>3</sup>:

Ռազմամանկավարժական բարոյագիտության շատ ու շատ դրույթներ իրենց հաստատուն տեղն են գտել ՁՈՒ կանոնագրքերում, դիրեկտիվ փաստաթղթերում, հրամաններում: Մասնավորապես՝

- անձնակազմի բարձր բարոյական ոգու ձևավորումը,
- սպայի զինվորական բարոյագիտությունը, նրա պարտքը և խիղճը<sup>4</sup>, պատիվը, բարոյական պատասխանատվությունը,
- անձնակազմի բարոյահոգեբանական նախապատրաստումը, սպայի՝ անձնակազմի ղեկավարման ոճի բարոյահոգեբանական և մանկավարժական հայեցակետերը,
- փոխհարաբերությունների հումանիզացման հիմնախնդիրները,
- կանոնադրական փոխհարաբերությունների ձևավորումը և զինվորական կոլեկտիվներում կոնֆլիկտների հաղթահարումը,
- մանկավարժական ներգործության մեթոդները, միջոցները, եղանակները և դրանց կիրառումը հատկապես կարգապահական պրակտիկայի ոլորտում,
- սպայի մանկավարժական մշակույթը և մանկավարժական վարպետությունը,
- սպայի շփման կուլտուրան և վարքը:

Ռազմամանկավարժական գործունեության արհեստավարժ բարոյագիտական հայեցակետերը արտացոլվում են ինչպես զինվորական գործունեության բովանդակային բնութագրում, այնպես էլ կառուցվածքային տարրերում, որոնցից են՝ նպատակները, խնդիրները, դրդապատճառները, «աշխատանքի գործիքի» բնույթը, այդ գործունեության գնահատումը և այն:

Պետք է նշել, որ դասախոսի արհեստավարժ գործունեության կարևորագույն առանձնահատկություններից մեկն այն է, որ զգալի թվով բարոյական պահանջներ օրենսդրորեն ամրագրվել են համազորային կանոնագրքերում, մասնավորապես ՀՀ ՁՈՒ ՆԾԿ հոդվածներում՝ 2, 13-16, 65-72<sup>5</sup>:

<sup>3</sup> Սերբյան 2010, 121:

<sup>4</sup> Гусейнов, Апресян 2006, 253-265.

<sup>5</sup> Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրք 2017, 5, 10-11, 25-27:

Կանոնադրական բարոյաիրավական պահանջների ընդհանրացված վերլուծությունը ցույց է տալիս, որ դասախոսի արհեստավարժ բարոյագիտական դրսևորումներն արտացոլվում են՝

ա. անհատական-պաշտոնական նորմերում,

բ. տարբեր կատեգորիաների զինծառայողների հետ դասախոսի փոխհարաբերությունների համակարգի բարոյաիրավական կարգավորումների ոլորտում,

գ. դաստիարակչական ներգործության տարբեր մեթոդների ու միջոցների, կարգապահական իրավունքների կիրառման ոլորտում:

Ուսուցանողի, ընդհանրապես մանկավարժի, դասախոսի, պատասխանատու և ծանր, բայց պատվավոր առաքելությունն է՝ «լուռ մտապահել, սովորել առանց ձանձրանալու, սովորեցնել առանց հոգնելու...»<sup>6</sup>:

Դասախոսի արհեստավարժ գործունեության առարկան և օբյեկտը զինծառայողն է, նրա ուսուցանումը և դաստիարակությունն են, ուսուցանվողների համակողմանի զարգացումը, բարոյահոգեբանական նախապատրաստումը: Հենց այստեղ են արտացոլվում դասախոսի՝ որպես ուսուցանողի զինվորական բարոյագիտական և մանկավարժական բարձրագույն պարտքն ու պատասխանատվությունը:

Դասախոսի արհեստավարժ գործունեության ինքնատիպությունը սահմանում է առանձնահատուկ նպատակներ ու խնդիրներ, բարոյական պահանջներ և գործունեության շարժառիթներ, դրա կազմակերպման ու խթանման ձևեր, գնահատման ու կարգավորման առավել խիստ բարոյագիտական չափանիշներ: Մանկավարժական գործունեության կարևորագույն շարժառիթներ են հանդես գալիս այնպիսի բարոյագիտական կատեգորիաներ, ինչպիսիք են խորապես գիտակցված ծառայողական և մանկավարժական պարտքը, անձնական բարձր պատասխանատվությունը ենթակաների զինվորական արհեստավարժ պատրաստության համար:

Դասախոսի գործունեության օբյեկտի ինքնատիպությամբ պայմանավորված՝ ուսումնադաստիարակչական խնդիրների լուծումը մշտապես կապված է անհատականությունների հետ: Նրա ռազմամանկավարժական գործունեության գլխավոր ցուցանիշն է իր կողմից ուսուցանվող ներգործության օբյեկտի՝ կոնկրետ զինծառայողի անձի և տվյալ զինվորական կոլեկտիվի վիճակը՝ որպես «մարդկանց միջև հարաբերությունների բնութագիր, բարոյական նորմերի ամբողջություն»<sup>7</sup>: Այդ պատճառով էլ դասախոսի գործունեությանը ներկայացվող արհեստավարժ բարոյագիտական կարևորագույն պահանջներից են այդ օբյեկտի վիճակի համակողմանի իմացությունը, արտաքին բարոյական ազդեցություններից զինծառայողների հոգում

<sup>6</sup> Կոնֆուցիոս 2020, 156:

<sup>7</sup> Гусейнов, Апресян 2006, 12.

կամ կոլեկտիվում կատարվող փոփոխությունները: Չմոռանանք, որ «վերջին տասնամյակում հայ զինվորականության շրջանում ընթացող սոցիալականացման միտումներն ուղեկցվեցին լուրջ բարոյական-արժեքաբանական մոտիվներով»<sup>8</sup>:

Դասախոսի արհեստավարժ գործունեության օբյեկտը միաժամանակ նաև այդ նույն գործունեության սուբյեկտն է: Եվ այդ գործունեության արդյունավետությունը կախված է ոչ միայն ուսուցանվողի նկատմամբ դասախոսի հարաբերություններից, այլ նաև նրա նկատմամբ ուսուցանվողների վերաբերմունքից:

Դասախոսի գործունեության բարոյագիտական հարցերն իրենց արտացոլումն ու կոնկրետ դրսևորումն են ստանում մանկավարժական ներգործության մեթոդներում, միջոցներում, հնարքներում: Այս պարագայում գործունեության հիմնական «գործիքներ» են հանդես գալիս՝

- գրագետ, կրքոտ, համոզիչ, բարձրարժեք բարոյական խոսքը<sup>9</sup>,
- ճարտասանության պարզությունը, հստակությունը,
- մանկավարժական տեխնիկայի տարբեր հնարքներն ու տարրերը,
- ուսուցանվողներին փոխանցվող տարաբնույթ արհեստավարժ զինվորական, հոգեբանամանկավարժական, բարոյագիտական և այլ գիտելիքներ,
- ձևավորված հմտությունները, կարողություններն ու սովորույթները,
- դասախոսի անձնային որակները (բարոյական նկարագիրը, ընդհանուր և արհեստավարժ պատրաստվածությունը, բարոյական պատասխանատվությունը, իմացության մասշտաբայնությունը):

Դասախոսի մասնագիտական գործունեության տարբեր բարոյագիտական հայեցակետերը պայմանավորվում են ուսումնադաստիարակչական աշխատանքի ինքնատիպ արդյունքներով, բարոյամանկավարժական խոչընդոտներով, որոնք ներառված են այդ գործունեության արդյունքների գնահատման և հաշվառման մեջ: Ըստ այդմ՝ դասախոսի գործունեության գնահատականը կազմվում է երկու հիմնական բաղադրիչներից.

1. ուսուցանվողների ուսածության, նրանց ընդհանուր պատրաստվածության գնահատականներ,

2. դասավանդողի անձնական պատրաստվածության գնահատականներ:

Արհեստավարժ բարոյագիտական հայեցակետերը ներառված և արտացոլված են այդ երկու բաղադրիչի ճիշտ հարաբերակցության, կողմերի աշխատանքի՝ շարժառիթների, ուսումնադաստիարակչական աշխատանքի որակի հաշվառման, օբյեկտիվ գնահատման կարողությունում:

<sup>8</sup> Վերանյան 2016, 150:

<sup>9</sup> Лаврентьева, Нечаева 2010, 57.

Դասախոսի արհեստավարժ գործունեության վրա ազդող բազմաթիվ գործոններից բացի, նրան, որպես ուսուցանողի ու դաստիարակողի, առաջադրվում են նաև շատ այլ բարոյական նորմեր ու պահանջներ՝ պայմանավորված ինչպես ներքին, այնպես էլ արտաքին՝ «հրամցված» շարժառիթներով: Հավելենք հետևյալը՝ «Հավատարմություն և անձնուրաց ծառայություն անկախ Հայաստան աշխարհին, երկրին, ...Հայաստանի ժողովրդին, բոլոր բնակիչներին անխտիր՝ անկախ նրանց սոցիալական ծագումից և դիրքից»<sup>10</sup>: Փավստոսի բանաձևած այսպիսի «խնդրի լուծումը դասավանդողից պահանջում է ուսուցման մեթոդների ու զանազան մեթոդական հնարների կիրառում, պատկերավոր խոսք, որում կարևորվում են մեր ժողովրդի հայրենասիրական ավանդույթները»<sup>11</sup>: Եվ այս առումով է, որ նրա արհեստավարժ գործունեությունը և՛ էությանմբ, և՛ կառուցվածքով ընկալվում է որպես բավականին բարդ, մտավոր-բարոյական գործունեության տեսակ:

Ընդհանուր առմամբ, դասախոսի ռազմամանկավարժական բարոյագիտությունը կարելի է սահմանել որպես բարոյական կապերի և հարաբերությունների, բարոյամանկավարժական պահանջների, սկզբունքների, նորմերի բարդ համակարգ, որը բխում է այդ իսկ գործունեության առանձնահատկություններից և որոշում է դասավանդողի հայացքները, բարոյամանկավարժական համոզմունքները, նրա դիրքորոշումները, զգացմունքները զինծառայողների դաստիարակության և ուսուցման ոլորտում: Այս ամենը թույլ է տալիս կարգավորելու վերաբերմունքը ուսումնադաստիարակչական գործընթացի, մասնագիտության, շրջապատի սուբյեկտների և ինքն իր հանդեպ: Կոնկրետ գործողություններում և արարքներում, իրական որակական բնութագրերում երևան են գալիս բարոյամանկավարժական նորանոր պահանջներ ու նորմեր, որոնց զարգացման բարձր մակարդակի ապահովումը թույլ կտա արդյունավետորեն լուծելու ժամանակի մարտահրավերներից ծագած խնդիրները: Իսկ դրանց մեջ գերխնդիրը մեկն է, որն էլ միանշանակ ձևակերպել է հայ ռազմական ու իմաստասիրական ուսմունքների անփոխարինելի ներկայացուցիչ Գարեգին Նժդեհը... «...ով հայրենապաշտ ու գաղափարապաշտ երիտասարդություն ունի, նա էլ ապագա ունի»<sup>12</sup>:

Դասախոսի ռազմամանկավարժական բարոյագիտության էությունն ու առանձնահատկությունները բացահայտվում են դրա գործառույթներում, որոնցից կարելի է առանձնացնել.

1. Կարգավորող գործառույթ. ապահովում է բարոյական գիտակցության, բարոյական վարքի և գործողությունների, ռազմամանկավարժական

<sup>10</sup> Այվազյան 2021, 10:

<sup>11</sup> Սերոբյան 2010, 23:

<sup>12</sup> Նժդեհ 2001, 57:

գործունեության ողջ բնագավառի թե՛ ուղղահայաց, թե՛ հորիզոնական կապերի, փոխհարաբերությունների բարոյագիտական կարգավորումը:

2. Դաստիարակչական-ձևավորող գործառույթ. դրա կիրառմամբ դաստիարակչական ոլորտ են բերվում ազգային-էթնիկական որոշակի բարոյական նորմեր, սովորույթներ, ավանդույթներ, բարքեր, վարքագծի համընդհանուր ընդունված ձևեր, որոնք անմիջականորեն ազդում են զինծառայողների բարոյական կարողությունների ձևավորման ու զարգացման վրա: Այստեղ չպետք է մոռանալ նաև արդեն գոյություն ունեցող մարտական ավանդույթները, որոնք «զինծառայողներին հայրենիքի առջև իրենց պարտքը պատվով և արժանապատվորեն կատարելուն մղող, պատմականորեն ձևավորված կանոններ ու սովորույթներ են»<sup>13</sup>:

3. Ճանաչողական գործառույթ. կապված է հասարակական և անհատական գիտակցությունում բարոյական հայացքների, գնահատականների, պահանջների, տարբեր բարոյական արժեքների ու արժեքային համակարգերի, բարոյագիտական գիտելիքների արտացոլման հետ: Դրանք կուտակվել են պատմության ողջ ընթացքում և թույլ են տալիս մարդկային փոխհարաբերություններում, մասնավորապես ռազմական ոլորտում, տարաբնույթ, արտակարգ, կոնֆլիկտային ու մարտական իրավիճակներում հանդես բերելու հայ էթնոսի՝ բնապատմական զարգացմամբ ձևավորված համապատասխան բարոյական վարքագծի շարունակ կատարելագործվող դրսևորումներ:

Ռազմամանկավարժական բարոյագիտությունը, կառուցվածքային առումով, ներառում է բարոյական պահանջների, սկզբունքների և նորմերի երեք հիմնական, իրար հետ փոխշաղկապված, հարաբերական ինքնուրույնությամբ խմբեր:

Առաջին խումբը կապված է դասախոսի բարոյական գիտակցության հետ և ներառում է.

- ընդհանուր բարոյական և արհեստավարժ բարոյագիտական գիտելիքները,
- բարոյական հայացքները, համոզմունքները և դիրքորոշումները,
- բարոյական դրդապատճառները, որոնք ընկած են նրա գործունեության հիմքում,
- անհատի, զինծառայողի հանդեպ հարգանքի և հոգատարության զգացմունքները,
- պարտքի, պատվի, խղճի, անհատական մասնագիտական գործունեության ուսումնադաստիարակչական արդյունքների նախապատրաստության, իր ենթակաների գործողությունների և արարքների ու իր իսկ գործունեության համար բարոյական պատասխանատվության զգացումները:

<sup>13</sup> Психология и педагогика 2005, 243.

Տեղին է մեջբերել հայի ռազմական ու արիական ոգին առանձնահատուկ արժևորած Նժդեհի գնահատականներից մեկը. «Ժողովուրդները չունեն ավելի մեծ թշնամի, քան կրոնապես պաղ **եկեղեցականը, անոգի ուսուցիչը, կաշվեպաշտ զորականը** (ընդգծումը – Մ.Բ.): Խորագույն անկումի իրենց օրինակով սրանք են անբարոյացնում մարդուն իբրև անհատ և հավաքականություն»<sup>14</sup>:

Երկրորդ խումբը կապված է բարոյամանկավարժական հարաբերությունների և փոխհարաբերությունների համակարգի հետ, որում ներառված է դասախոսը:

Բարոյական հարաբերություններում անչափ կարևոր են նաև՝

- կոլեկտիվ ու խմբային կարծիքի, տվյալ կոլեկտիվում գերակայող տրամադրությունների մշտական ու համակողմանի ուսումնասիրումը. այստեղ չենք կարող շրջանցել այն փաստը, որ «ռազմամանկավարժական գործընթացի ռազմականացված բնույթն ուղղակիորեն հենվում է անհատական և խմբային գիտակցության զարգացման վրա, որն էլ նպաստում է ազգային մտածողության և գիտակցության ձևավորմանը»<sup>15</sup>,

- կոլեկտիվում բոլոր տեսակի ռազմամանկավարժական խնդիրները լուծելիս պետք է տեսնել ոչ միայն մանկավարժական ներգործության օբյեկտին, այլև բարոյական դաստիարակության սուբյեկտին, դաշնակցին և օգնականին,

- զինվորական կոլեկտիվի՝ որպես իրենց սահմանադրական պարտքը կատարող «սոցիալ-օգտակար համատեղ գործունեությամբ, ընդհանուր նպատակներով միավորված»<sup>16</sup> քաղաքացիների կազմակերպված խմբի բարոյահոգեբանական համախմբման մշտական ու խորապես գիտակցված և նպատակաուղղված գործունեությունը,

- բոլոր օգտակար, կոլեկտիվ ձեռնարկումներին, նախաձեռնություններին ակտիվ աջակցությունը, ուշադիր վերաբերմունքը դրանց հանդեպ,

- անհանդուրժողականությունը զինծառայողների փոխհարաբերություններում ամեն տեսակի շեղումների նկատմամբ:

Երրորդ խումբը ներկայացվում է մասնագիտական տարբեր խնդիրների լուծման ժամանակ դրսևորվող կոնկրետ գործողություններում ուսուցանողի վարքագծով, որն էապես պայմանավորված է նաև կազմավորման ու կայացման նախնական, բանակային ընկերության, սոցիալական ու մարտական հասունության փուլերում գտնվող զինվորական կոլեկտիվների առջև ծառայած խնդիրներով<sup>17</sup>:

<sup>14</sup> Նժդեհ 2002, 434:

<sup>15</sup> Սարգսյան 2002, 6:

<sup>16</sup> Психология и педагогика 2005, 223.

<sup>17</sup> Психология и педагогика 2005, 227-228.

Առկա հարաբերություններն ու փոխհարաբերությունները գոյություն չունեն ուսուցանողի գիտակցության և վարքագծի բարոյական ոլորտից դուրս: Դրանք ծառայողական և ուսումնադաստիարակչական խնդիրներ լուծելիս ձեռք են բերում առաջատար նշանակություն ուղղահայաց և հորիզոնական կապերի ժամանակ:

Դասախոսի բարոյագիտական վարքագիծը առանձնապես տեսանելի է մանկավարժական պատշաճության (տակտի) պահպանման կարողությունում ու վերջինիս դրսևորման աստիճանում:

Մանկավարժական տակտը դասախոսի անձի բարդ, ածանցյալ որակներից է, որն արտացոլում է բարոյական հարաբերությունները ենթակաների ու շրջապատող սուբյեկտների հանդեպ, նրանց անձնական արժանապատվության անկեղծ հարգանքը, ինքնատիրապետումը և մանկավարժական չափի պահպանումը ուսումնադաստիարակչական ներգործությունների ժամանակ: Հետազոտողների գնահատմամբ՝ «դա ազդեցության առանձնահատուկ գործիք է, որը պահանջում է վարպետություն, ստեղծագործական ներուժ, բարոյական զգացմունքներ արհեստավարժ մանկավարժական որակների առկայություն»<sup>18</sup>:

Դասախոսի տակտը կարգավորում է ուսուցանողի և դաստիարակողի մանկավարժական գործողությունները բարոյական տեսանկյունից: Իսկ դրանց նպատակահարմարության չափը առավելապես ներկայացվում է մանկավարժական տակտի որակներում.

- պահանջկոտություն առանց կոպտության ու անձնական արժանապատվության նվաստացման,

- շփման պարզություն, բնականություն,

- սկզբունքայնություն,

- ուշադրություն և զգոնություն առանց դրանց ընդգծման,

- ենթականերին ուսուցանելու և դաստիարակելու կարողություն՝ առանց ընդգծելու սեփական գիտելիքների առավելությունը:

Ընդ որում, իր գործի գիտակի «բարոյական հեղինակությունը (որում անչափ կարևոր դեր ունի նաև մանկավարժական տակտը – Մ.Բ.) կախված է ոչ այնքան պաշտոնից, դիրքից, որքան արդարացիություն, զարգացած միտք, ազնվություն, համեստություն, մարդկանց մասին հոգատարություն, արիություն անձնային որակներից»<sup>19</sup>:

Թվարկված և մի խումբ այլ բարոյամանկավարժական պահանջներն ու նորմերը դրսևորվում են գինվորական դասախոսների կողմից ծառայողական և ուսումնադաստիարակչական տարբեր խնդիրներ լուծելիս, որոնք թույլ են տալիս բարձրացնել ռազմամանկավարժական գործընթացների արդյունա-

<sup>18</sup> Лаврентьева, Нечаева 2010, 50:

<sup>19</sup> Волкогонов 1976, 223.

վետությունն ու որակը, հետևաբար նաև բարելավել ողջ կրթական համակարգի ուսումնադաստիարակչական գործընթացը: Մեծածավալ գործառույթների մի ամբողջական համակարգ, որի գործադրման «...արդյունքը պետք է լինի ոչ միայն հոգևոր արժեքների, այլև այնպիսի բարոյամարտական հատկությունների ձևավորումը, ինչպիսիք են հավատարմությունը զինվորական պարտքին և զինվորական երդմանը, զգոնությունը, կարգապահությունը, նախաձեռնողականությունը, արիությունը, տոկունությունը, վճռականությունը և այլն»<sup>20</sup>: Իսկ համընդհանուր վերջնարդյունքը՝ «կրթության և դաստիարակության միասնական գործընթացի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության ու մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է»<sup>21</sup>:

Քաղաքացու բարոյական կենսադիրքորոշման հիմքերը դրվում են ընտանիքում, շրջապատի մերձավոր միջավայրում: Սակայն նրա՝ որպես ուսուցանողի և դաստիարակողի արհեստավարժ բարոյագիտական զարգացման վրա էական, առանձնակի ազդեցություն ունեն արհեստավարժ մասնագիտական գործունեությունը ռազմաուսումնական հաստատությունում և ծառայողական գործունեության ժամանակահատվածը, ինչպես նաև իր առջև դրված համապետական խնդրի բարոյագիտական բաղադրիչի գերկարևորության գիտակցումը:

### **Եզրակացություններ**

Դասախոսի արհեստավարժ, բարոյագիտական զարգացման համալիր պահանջն ու նրա բարոյամանկավարժական նախապատրաստության կատարելագործումն առաջադրում են՝

1. դասախոսի արհեստավարժ, բարոյագիտական դաստիարակության նպատակների ու խնդիրների ամբողջականության հստակ որոշում, պարզաբանում, առաջադրում նրա նախապատրաստության բոլոր փուլերում՝ աչքի առջև ունենալով նաև բարոյական գիտակցության ձևավորման ու զարգացման առանձնահատկությունները,

2. արհեստավարժ, բարոյագիտական դաստիարակության մեթոդների, միջոցների, ձևերի համակարգի ստեղծագործական կիրառում, դրանց օպտիմալ հարաբերակցության ընտրություն՝ հաշվի առնելով կոնկրետ դասախոսի թե՛ ընդհանուր, թե՛ մասնագիտական զարգացման մակարդակն ու առանձնահատկությունները, նրա կենսագործունեության ծառայողական և մանկավարժական պայմանները,

<sup>20</sup> Մարգարյան 2002, 73:

<sup>21</sup> Սերոբյան 2010, 122:



3. բոլոր կատեգորիաների դասախոսների կողմից անձնական օրինակի ապահովում հարաբերությունների և փոխհարաբերությունների համակարգի, մանկավարժական բարոյագիտության նորմերին համապատասխան գործողությունների իրականացման և վարքագծի դրսևորման, ռազմամանկավարժական բարոյագիտության նորմերի ու պահանջների պահպանման ժամանակ,

4. դասախոսի՝ ինքն իր համար համակարգված ու նպատակաուղղված աշխատանքների իրականացման նպաստավոր պայմանների ստեղծում, արհեստավարժ բարոյագիտական ինքնակատարելագործման գործընթացի արդյունավետ մանկավարժական ղեկավարման ապահովում,

5. անկախ մրցույթում հաղթելու հանգամանքից՝ անձին դասախոսական գործունեության մեջ չընդգրկել առանց նախնական մանկավարժական պատրաստության և մանկավարժական փորձի առկայության,

6. ռազմաուսումնական հաստատությունների դասախոսների հասարակական կարգավիճակի վերանայում,

7. դասախոսների նախապատրաստման ու որակավորման բարձրացման սկզբունքորեն նոր մոդելների ու կենտրոնների ստեղծում,

8. թե՛ համակարգում, թե՛ հասարակության մեջ զինվորական դասախոսի ստանձնած «բարձրագույն առաքելության» գիտակցման նորովի արժևորում,

9. համակարգում և հասարակության մեջ ընդհանրապես զինվորականի հանդեպ արժեքային համակարգի վերարժևորում:

### **Օգտագործված գրականություն**

- Այվազյան Ա. 2021, Հայ զինվորականության պատվո վարքականոնը (4-5-րդ դարեր), Երևան, Մատենադարան, «Մուսալեռ տպագրատուն», 96 էջ:
- Կոնֆուցիոս 2020, Զրույցներ. Կոնֆուցիոս: Փոխադրությունը և մեկնությունը՝ Յան Բոճյունի, չինարենից թարգմանեց Պավել Ճաղարյանը, Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի», 504 էջ:
- Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրը 2017, Երևան, ՀՀ ՊՆ հրատ., 272 էջ:
- Ղազարյան Ֆ. 2011, Բարոյականության կարևորությունը երիտասարդ ընտանիքում: Կյանքի այբուբեն, խմբ. Վ. Եղիշյան, Երևան, «Լիմուշ», 193 էջ:
- Մարգարյան Վ.Հ. 2002, Զինծառայողների պաշտպանությունը բացասական տեղեկութահոգեբանական ներգործությունից, «Հայկական բանակ», «Ամարաս» տպարան, թիվ 3 (33), էջ 70-74:
- Նժդեհ Գ. 2001, Հատընտիր, Գ. Նժդեհ, Երևան, «Հայաստան», 405 էջ:
- Նժդեհ Գ. 2002, Երկեր: Երկու հատորով, հ. 1, խմբ. խորհուրդ՝ Ավետիսյան Հ., Ղազախեցյան Վ., Սիմոնյան Ա., Վիրաբյան Ա., Երևան, ՀՀ արխիվային գործի գործակալություն, «Լույսաս» ՍՊԸ տպարան, 530 էջ:
- Սարգսյան Ա. 2002, Հայ զինվորների դաստիարակության գիտատեսական հիմունքները, Երևան, «Զանգակ-97», 40 էջ:

- Սերոբյան Ս. 2010, Դաստիարակության հիմնախնդիրը պատմության դասավանդման գործընթացում, խմբ. Մինասյան Է., Տարեգիրք, Բ. (Պատմագիտական հանդես), Երևան, ԵՊՀ հրատ., էջ 121-134:
- Վերանյան Կ. 2016, Իսրայելի քաղաքականության վերաբերյալ, Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 224 էջ:
- Տոնոյան Դ. 2018, Պաշտպանության համակարգի զարգացման տեսլականը, Հայ զինվոր, թիվ 3 (1250), էջ 3-5:
- Волкогонов Д. 1976, Военная этика, Москва, «Воениздат», 320 с.
- Гусейнов А.А., Апресян Р.Г. 2006, Этика, Москва, «Гардарики», 472 с.
- Психология и педагогика. Военная психология 2005, Учебник для вузов, под ред. А.Г. Маклакова, Санкт-Петербург, «Питер», 464 с.: илл.
- Лаврентьева Н.Б., Нечаева А.В. 2010, Педагогическая этика, учебное пособие, Барнаул, изд. АлтГТУ, 156 с.

## **РОЛЬ И ЗНАЧЕНИЕ ВОЕННО-ПЕДАГОГИЧЕСКОЙ ЭТИКИ ВОЕННОГО ПРЕПОДАВАТЕЛЯ В ПРОЦЕССЕ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ ОБУЧЕНИЯ**

Марат Багдасарян

Резюме

Оценивая незаменимую роль военно-педагогической деятельности обучающего в военно-учебном процессе, нельзя оставлять без внимания качество владения и уровень проявления профессионально-этической системы ценностей военного преподавателя.

Последнее отражается как в вертикальных, так и горизонтальных связях развивающихся военно-педагогических функций, а также в осуществлении учебно-воспитательных процессов с применением различных методов, видов, инструментов, средств.

И такие проблемные факторы формируют военно-педагогические нравственные функции военного преподавателя и выдвигают основные, взаимосвязанные, но относительно самостоятельные группы нравственных требований, принципов и норм.

Путем выяснения сущности и содержательных особенностей военно-педагогической этики преподавателя выявляются также ее функции, нравственные требования, нормы, совершенствование и развитие которых оказывают непосредственное влияние на эффективность обучения.

Целенаправленное, обоснованное и творческое применение нравственно-педагогических требований и норм в образовательном процессе, безус-

---

ловно, приведет к повышению эффективности и качества военно-педагогического и учебно-воспитательного процессов.

**Ключевые слова** – военнослужащий, преподаватель, военно-педагогическая мораль, этическое поведение преподавателя, образование, моральные требования, принципы.

#### THE ROLE AND THE MEANING OF MILITARY PEDAGOGICAL ETHICS OF LECTURER IN THE PROCESS OF TEACHING EFFICIENCY ENHANCEMENT

Marat Baghdasaryan

##### Abstract

Upon assessing the trainer's irreplaceable role in the military-pedagogical training process, the quality of readiness and the level of professional ethical values of the military lecturer should not be overlooked.

The latter is reflected both in vertical and horizontal military-pedagogical tasks, as well as during teaching and educational processes by implementating various methods, types and tools.

Such controversial factors outline the military lecturer's military-pedagogical moral duties and propose primary, interconnected, but relatively independent groups of moral requirements, principles and norms.

By clarifying the essence and content features of the lecturer's military-pedagogical ethics, its moral requirements, functions and norms can be disclosed. The development and improvement of the latter directly impacts on the teaching effectiveness.

The purposeful, justified and creative implication of moral pedagogical requirements and norms in the educational process will undoubtedly increase the efficiency and quality of the military-pedagogical-educational processes.

**Key words** – serviceman, instructor, military pedagogical ethics, instructor's ethical behaviour, education, moral requirements, principles.

## ХАЧИК САМУЭЛЯН



Видный армянский ученый-арменовед, правовед, историк, этнограф, археолог и филолог, доктор-профессор Хачик Степанович Самуэлян более 40 лет своей жизни плодотворно занимался научно-педагогической, литературно-публицистической, юридической и общественно-политической деятельностью. Его труды сыграли значительную роль во многих областях гуманитарных наук, вошли в золотой фонд арменоведческих исследований.

Родился 15 августа 1873 г. в г. Керчь бывшей Таврической губернии (Крым), в семье священника. Среднее образование получил в феодосийской гимназии. В 1895-1900 гг. учился на юридическом факультете Петербургского университета, а в 1901-1903 гг. – в Йенском (Германия) университете. По возвращении из-за границы, жил в Тифлисе и до 1907 г. занимался журналистикой, сотрудничал в 15 газетах и журналах – «Мшак», «Аршалуйс», «Сурандак», «Осанк», «Тифлисский листок», «Тифлисская газета», «Баку», «Кавказское сельское хозяйство», «Пайлак» (Шуши), «Кавказская школа», «Прикаспийская кооперация», «Тараз», «Азгагракан андес» и др. Был одним из учредителей Армянского этнографического общества.

В 1907-1909 гг. Х. Самуэлян преподавал русский язык, юриспруденцию и политическую экономию в Эчмиадзинской духовной семинарии Геворкян, затем до 1913 г. в качестве учителя русского языка, всеобщей истории и немецкого языка преподавал в Армянской семинарии Нор-Нахичевана, тифлисской школе Овнанян и тифлисском коммерческом училище, был инспектором и ректором Шушинской армянской семинарии, инспектором городского училища в Баку и инспектором мужской гимназии в Александрополе.

После установления Советской власти в Армении Х. Самуэлян был избран членом коллегии Эчмиадзинского научного института – заведующим типографией (1921 г.), на протяжении четырех месяцев являлся также временным председателем коллегии. Занимал ряд ответственных должностей в государственном аппарате ССРА: был членом законодательной комиссии ЦИК (1922-1923 гг.), членом коллегии Главного республиканского суда (1923-1924 гг.), директором Центрального архивного управления ССРА (1924-

1932 г.). Одновременно он работал в Институте истории материальной культуры Армении (1932-1935 гг.), а 1 ноября 1935 г. был назначен научным-специалистом Сектора кавказоведения Армянского филиала АН СССР. С 1923 по 1938 гг. был лектором и профессором Ереванского государственного университета и Педагогического института. В октябре 1940 г. решением научного совета Института истории и материальной культуры АрмФАН СССР Х. Самуэляну была присуждена степень доктора наук без защиты диссертации. Звание профессора он получил в 1936 г.

Перу Х. Самуэляна принадлежит ряд ценных трудов, среди которых отметим следующие – «Судебник Мхитара Гоша и древнее армянское право» (1907), «Армянское обычное право» (1911), «Халдское общество» (1939), «История древнеармянского права» (1939), «Культура древней Армении» в 3-х томах (1931-1941), «Феодальное право в древней и средневековой Армении», «Рабство в древней Армении (1937) и др. Хачик Самуэлян умер 16 октября 1940 г. от инфаркта.

Ниже впервые публикуются два письма из личного фонда Х. Самуэляна (ф. 740), хранящиеся в Национальном архиве Армении.

## СТЕПАН ГАРИБДЖАНЫН

Кандидат исторических наук

### Письмо Хачика Самуэляна академику АН СССР И.И. Мещанинову о привезенных из Тифлиса клинописных таблечках

25 декабря 1935 г.

Ереван

Многоуважаемый тов. Мещанинов<sup>1</sup>

---

<sup>1</sup> **Мещанинов Иван Иванович (1883-1967)** – языковед, археолог, востоковед. Родился в Петербурге. Окончив в 1902г. с золотой медалью классическую гимназию, поступил на юридический факультет Петербургского университета, который окончил в 1907 г. В течение двух семестров в 1905 г. был одновременно студентом Гейдельбергского университета. Академик АН СССР (1932). Член Президиума АН СССР (1934-1950), академик – секретарь отделения литературы и языка и директор Института языка и мышления АН СССР. С 1930-х гг. вел педагогическую работу в высших учебных заведениях Ленинграда в качестве профессора, декана факультета и заведующего кафедрой сперва общего языкознания, а позднее северных языков. Специалист по мертвым языкам Кавказа и Малой Азии, в частности, урартскому (халдскому) языку. Его докторская диссертация – «Халдоведение. История древнего Вана, включая древнейшие сведения о Закавказье. Система письма и чтения клинописных текстов халдов-урартов» (1927). В 1920-х – начале 1930-х гг. руководил археологическими раскопками в Северном Причерноморье и Закавказье. В 1922-1931 гг. – научный сотрудник и ученый секретарь Яфетического института АН. Провел ряд археологических экспедиций в Нагорном Карабахе и Нахичеванском крае, на северном берегу Аракса, а также для ознакомления с однородными памятниками предпринял несколько археологических поездок в Армению.

На днях одна особа показала мне привезенные ею из Тифлиса 5 глиняных таблеток, на коих оказались клинописные начертания. Из них одна таблетка правильной, плоской прямоугольной формы  $6\frac{1}{2} \times 5$  см (по моему обмеру) с обеих сторон сплошь покрыта клинописным текстом, остальные же 4 – неправильной формы и не плоские ( $4\frac{1}{2} \times 4$ ,  $2\frac{1}{2} \times 3$ ,  $2\frac{1}{2} \times 2$  и  $2\frac{1}{2} \times 2$  см) – носят отдельные клинописные знаки. Убежденный в том, что Вы, как специалист-халдовед, будете интересоваться этими таблетками, я спешу сообщить Вам об этом и вместе с тем хочу знать, желаете ли Вы ознакомиться с ними, установить их подлинную реальность, историческую ценность расшифровкой надписей. К сожалению, у этой особы не имелись никакие сведения относительно обстоятельств находки. Поэтому я попросил написать в Тифлис и потребовать от собственницы этих таблеток необходимые сведения. Равным образом я предложил сделать фотографические снимки с них, т.к. показавшая мне особа по показу собственницы этих таблеток не может передать оригиналы. Нет сомнения, что обладательница таблеток готова продать их, поэтому я боюсь, чтобы эти памятники, если, действительно они имеют историческую ценность, не попали в частные руки, особенно спекулянтов-антиквариетов, которых в Тифлисе много. В случае Вашего согласия я немедленно пришлю Вам фотографические снимки и буду затем ждать от Вас дальнейших результатов. Я пока здесь никому об [здесь текст письма обрывается – С.Г.].

**Национальный архив Армении, ф. 740, оп. 1, д. 199, л. 1-1об. Автограф.**

### **Ответное письмо И.И. Мещанинова Х. Самуэлян**

5 февраля 1936 г.  
Ленинград

Многоуважаемый тов. Хачик Самуэлян

Ваше письмо получил и прочел с большим интересом. Конечно, Тифлис был в свое время значительно снабжен древневосточными подделками, но отсюда вовсе не следует, что не могло быть и подлинников. Вопрос значительно разъяснился бы, если бы у собственника таблеток было бы точное описание условий их получения (покупки и т.д.), то есть то, что называется у нас «хорошим археологическим паспортом».

Если это подлинник, то скорее всего ассирийский, но вовсе не отстраняется всецело и возможность халдских таблеток. Халдская клинопись

---

обычно скальная или строительная каменопись, но известны, как Вы конечно хорошо знаете, и единичные надписи на таблетках, между прочим одна из Лениакана.

Поэтому, естественно, я не мог не заинтересоваться столь любезно сообщенными Вами сведениями и с большим интересом буду ждать фотографий с упомянутых Вами таблет[ок].

Если это окажется подлинником, то само собою разумеется, что научное их исследование может быть проведено только по согласованию с Вами и с Вашего ведома.


Пока еще раз позволю себе выразить большую Вам благодарность за столь любопытное сообщение.

С глубоким приветом И. Мещанинов

**Национальный архив Армении, ф. 740, оп. 1, д. 199, л. 2, 3. Автограф.**

**ՍԻՐՎԱՐԴ ՄԱԼԽԱՍԵԱՆ**, Ալետիք Պատրիարքի խորհրդաւոր կեանքը, Ստանպուլ, Պատրիարքական Աթոռոյ Հրատարակչութեան Բաժանմունք, 2024, 100 էջ:

**ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ ԼԵԳԵՆԴԱՐ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՄԱՍԻՆ**



Թուրքիայի հայոց պատրիարքության հրատարակությամբ լույս է տեսել Սիրվարդ Մալխասյանի «Ալետիք Պատրիարքի խորհրդաւոր կեանքը. Պոլսոյ պատրիարքութենէն Պասթիլի բանտ» /Ստանպուլ, 2024, Պատրիարքական Աթոռոյ Հրատարակչութեան Բաժանմունք, 100 էջ/ աշխատությունը: Այն նվիրված է Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Ավետիք Եվդոկիացու /պատրիարք՝ 1702-1706 թթ./ արկածալից կյանքին և ողբերգական ճակատագրին, որպիսիք արտացոլում են Օսմանյան Թուրքիայում XVII դ. վերջերի և XVIII դ. սկզբների հայ հանրության կյանքի ու կացության բնորոշ կողմերը: Խոսքը վերաբերում է, սակայն, ոչ միայն հայ համայնքի և ազգային ավանդական եկեղեցուն ու նրա հավատաց-

յալների գոյատևման պայմաններին, այլև դրանց առանձնահատկություններին, որոնք ի հայտ էին գալիս հայ համայնքին ներհատուկ ազգային, հանրային ու մշակութային դրսևորումներով: Այստեղ առաջնակարգ նշանակություն էր ստանում եկեղեցու միջոցով ազգապահպանության գաղափարը, այս պարագայում վերջինիս ամրապնդման խնդիրը՝ եկեղեցու ինքնությունը ապահովելու միջոցով: Դավանական ամբողջականության և միասնության խնդիրն այս ժամանակաշրջանում հայ հանրության համար ստանում է ուղղորդող նշանակություն, որով և պայմանավորվում էին վերջինիս փոխհարաբերությունները օսմանյան պետության հետ, սեփական միջավայրի և դրա նյութական հիմքերի զարգացումը, աղերսները այլ կրոնների ու դավանանքների հետ և այլն: Ավետիք պատրիարքի ողջ կենսագրությունն ու ճակատագիրը սերտորեն միահյուսվում էին այս իրողություններին, և այդ իմաստով դրանք ունեն պատմական բացառիկ նշանակություն՝ ժամանակաշրջանի հայ հանրության կյանքը լուսաբանելու տեսակետից: Սրանով է պայմանավորված հայ և օտար հետազոտողների չթուլացող հետաքրքրությունը Ավետիք պատրիարքի անձի և գործունեու-



թյան նկատմամբ, և որի հավաստումն է Ս. Մալխասյանի այս ոչ ընդարձակ, բայց շատ տարողունակ աշխատության լույսընծայումը: Աշխատության հիմնահարցն իր սուր հակադրություններով և կոնֆլիկտայնությամբ վաղուց ի վեր, դեռևս XVIII դ. առաջին կեսից արժանացել է հայագետների և ոչ հայագետների սևեռուն ուշադրությանը:

Նկատենք, որ Ս. Մալխասյանը թեման հետազոտել և աշխատանքը շարադրել է զուգահեռ ընթացող երկու ուղղություններով՝ մարդկանց և իրադարձությունների փոխհարաբերությունների իրական ու պատմական դիմագծի վերարտադրությամբ և մյուս կողմից՝ դրա մակերեսին ժամանակի ընթացքում հայտնված և փակ մնացած էջերի միջև ներխուժած ռոմանտիկական, խորհրդավոր մեկնաբանությունների տարապայման ուղեկցությամբ: Արդյունքում մեկնաբանությունները լուծվում են փաստերի գիտական տրամաբանության ներգործությամբ, որի ուժով մնում են իրականը, մեկ շղթայով միացած ու ամբողջություն կազմող դրվագների իմաստավորումը: Թեմայի հուշարկած խորհրդավորությունը հետազոտական այս մեթոդի դեպքում ազնվորեն կատարում է իր գործը և հեռանում մավրի նման՝ մեզ թողնելով ճշմարտության, արդեն առեղծվածայինից ձերբազատված պատմական իրականության առջև: Այսպիսին է մոտավորապես Ս. Մալխասյանի հետազոտության վերլուծական ընթացքը՝ սյուժետային սկիզբ առնելով դեռևս Վոլտերի ժամանակներից /XVIII դ. երկրորդ կես/ շրջանառվող երկաթե դիմակով մարդու պատմությունից և բազմաթիվ տարբերակներով հասնելով մինչև հայոց տարաբախտ պատրիարք Ավետիք Եվդոկիացի, որին ոմանք նույնացնում էին, հանգեստ, Բաստիլի դիմակավոր կալանավորի հետ:

Մեր պատմագիտական գրականության մեջ վաղուց ի վեր ցույց է տրված, որ Ավետիքի առևանգման և ֆրանսիական բանտերում արգելափակման պատճառը Արևելքում եռանդուն գործունեություն ծավալած ճիզվիտներն էին, կաթոլիկական մոլեռանդ քարոզիչները և սրանց բոլորին հովանավորող ֆրանսիական քաղաքականությունը: Այս հարցերին անդրադառնում և մասամբ դրանց լուծումը տալիս է հեղինակը իր հետազոտության Ա բաժնում /զուգահեռներ նշված կալանավորի և Ավետիքի միջև, միսիոներական գործունեությունը և հակակաթոլիկությունը Կոստանդնուպոլսի հայերի մեջ, հակամարտող կողմերի հաշտության անհաջող փորձերը և Ավետիքի կենսագրությունը մինչև պատրիարք հռչակվելը՝ 1702 թ./:

Ս. Մալխասյանը ամբողջական տեսակետ ունի պատրիարքի գործունեության մեջ վճռական նշանակություն ունեցած՝ Օսմանյան Թուրքիայում կաթոլիկական քարոզչության վերաբերյալ: Նշված բաժնի հատվածային թեմաները լուսաբանելիս նա կանգ է առնում էական կողմերի վրա՝ միսիոներական ազդեցության պատճառները, կաթոլիկության դեմ հակազդեցության ուժեղացումը՝ հայոց մեջ կաթոլիկների թվաքանակի աճի համեմատ, հակասությունները մի կողմից ազգային և կաթոլիկ եկեղեցու, և մյուս կողմից՝ օսմանյան պետության և կաթոլիկ եկեղեցու միջև և այլն: Հեղինակը բարեխղճորեն շարադրում է այս

հարցերում առկա տեսակետները՝ հիմնականում առանձնացելով կաթոլիկական և հայադավան կողմերի մոտեցումներն ու դրանց մեկնաբանության մեջ կարևորելով նրանցից յուրաքանչյուրի շահերի արտացոլումները: Ըստ կաթոլիկական քարոզչության, իրենց հաջողության կամ հայերի վրա իրենց թողած ազդեցության պատճառները պետք էր համարել «Հայոց եկեղեցի է ներս տիրող քառուրդ», հոգևորականների և հանրության միջև գոյացած անջրպետը, առաջինների տգիտությունն ու ընչաքաղցությունը /էջ 27/: Ս. Մալխասյանը վկայակոչում է նաև հայ եկեղեցու բնութագիրն այս հակասության մեջ՝ Մ. Օրմանյանի դասական ձևակերպմամբ, նրա ներողամիտ լայնախոհությունը, քարոզիչներին ասպարեզ տրամադրելը՝ ելնելով Հիսուսի՝ ընդհանրական եկեղեցու հայեցակետից: Հեղինակը նշում է նաև Մ. Օրմանյանի նկատած մեկ այլ պատճառը՝ «կրթության ու զարգացման հանդեպ» հայերի սերը /էջ 28/: Այստեղ ընդգծենք, որ այս վերջին հանգամանքին աշխարհայացքային և շատ ավելի կարևոր նշանակություն է տվել ականավոր Ն. Ադոնցը՝ կաթոլիկական քարոզչության հաջողության լուրջ գործոն համարելով հայերի «քաղաքական ազատության և մտավոր վերակենդանության ձգտումները» /Ադոնց Ն., 2006, Երկեր, հ. 1, Ե., ԵՊՀ հրատ., էջ 557/: Մի հանգամանք, ի դեպ, որ իրենց քարոզչության մեջ չարաշահում էին կաթոլիկական գործիչները՝ առավել գրավիչ դարձնելով գայթակղիչ խայծերը դավանափոխության պղտոր ջրերում:

Ս. Մալխասյանի՝ լրջմիտ և բարեխղճորեն ներկայացրած տեսակետներին կարելի էր ավելացնել ևս մեկ հրապուրիչ և ազդեցիկ գործոն՝ ֆրանս-պապական հովանավորչությունը, որը պետք է իր տպավորիչ ազդեցությունը թողներ մասնավորապես Կոստանդնուպոլսի հայության վերնախավում, իսկ XVII-XVIII դդ.՝ մահտեսիների և ապա ամիրանների շրջանում՝ ապահովելով նրանց հպատակային իրավունքները ռայայի ճնշող կարգավիճակի համեմատ:

Այսուհանդերձ, քննարկվող աշխատության հիմքում և որպես հետազոտական գլխավոր ուղղություն, մնում են Ավետիք պատրիարքի կենսագրությունը և նրա պատրիարքական շրջանի գործունեությունը: Գլխավորապես հենվելով փաստերին՝ հեղինակը անվերապահորեն համակրական բնութագիր է տալիս պատրիարքին՝ հակառակ Մխիթարյան պատմաբաններ Մ. Չամչյանի, Հ. Թորոսյանի և այլոց, որոնք Ավետիքին պատկերում են որպես հայկական միջավայրում կաթոլիկության հանիրավի հալածիչ: Իր հերթին, մեծարելով պատրիարքին, Ս. Մալխասյանը նկատում է, որ նա «մեծապես սիրուած է հանրութեան կողմէ», այլև օժտված էր հոգևոր շնորհներով՝ տաղերգու էր, ձեռագրեր ընդօրինակող /էջ 42-45/: Այս բաժինը հեղինակն ավարտում է Ավետիքի կենսագրության նախապատրիարքական շրջանով՝ այստեղ և այդուհետև վկայակոչելով իր՝ պատրիարքի ինքնակենսագրական և հիշատակարանային շարդրանքները:

Աշխատության երկրորդ բաժինն անդրադարձնում է Ավետիքի կյանքի շատ ավելի էական հանգամանքները, որտեղ վճռական նշանակություն են ստանում այս հետազոտության հիմնահարցերը պայմանավորող հանգամանքները՝ ավելի

լայնահուն դարձած նրա ուղիների խաչվելը շեյխ ուլ-խլամ Ֆեյզուլլահի և ֆրանսիական դեսպան Ֆերիոլի ոչ միանշանակ ընթացքին: Այստեղ հեղինակը քննում է երկու կարևոր իրողություն. Օսմանյան Թուրքիայում ֆրանսիական քաղաքականության ակտիվացումը՝ դիվանագիտական և կրոնադավանական միջոցների կենտրոնացմամբ, և մյուս կողմից՝ օսմանյան պետական հակազդեցությունն այդ քաղաքականությանը, որ հենվում էր միլիթների ամրապնդման և կաթոլիկության հետագա տարածման դեմն առնելու մարտավարության վրա: Այլ կերպ չէր կարող լինել, որովհետև օսմանյան կառավարողների աչքին կաթոլիկությունը փաստորեն սպառնում էր կլանել բուն այդ միլիթները, ուրեմն և կայսրության գոյության հիմքերից մեկը: Ավետիքը հայտնվել էր այս երկու ներհակ կողմերի հակամարտության առանցքում, հետևաբար, նրանց երկուստեք ահռելի ճնշման ներքո, որ և պետք է կանխորոշեր պատրիարքի մոայլ ապագան և կործանումը: Այս իմաստով հիմնավոր են հեղինակի վերլուծումները հայ համայնքում դավանական հակասությունների խորացման կամ դրանց ժամանակավոր տեղատվությունների, կողմերի ուղեգծերի փոփոխությունների և այլնի վերաբերյալ, որոնք և պայմանավորեցին Ավետիքի աթոռագրկումն ու վերստին պաշտոնակալումը 1703 թ. ենիչերիների ապստամբության և սուլթանների հերթագայման համատեքստում: Հեղինակին հաջողվել է հիմնավորել նաև Ավետիքի՝ որպես սուբյեկտի հարաբերական ինքնուրույնությունը՝ հակամարտ կողմերի հետ ունեցած փոխհարաբերություններում, հատկապես ֆրանսիական դեսպանի և կաթոլիկական հոգևորականների հետ շփումներում: Դրվատելի է նաև, որ նա չի շրջանցում անհատների դերն ու նշանակությունը իրադարձությունների, թվում է՝ ինքնաբավ զարգացման մեջ, որով և այս ուսումնասիրությունը դառնում է առավել բազմակողմանի՝ և՛ իրողությունների, և՛ անձանց բնութագրման կարելիություններով: Այս տեսակետից ուշագրավ է, որ անդրադառնալով Ավետիքի պատրիարքության երկրորդ շրջանին՝ 1704 թ. վերջերին, հեղինակը, թեև զգուշորեն, նկատում է, որ նախորդ տարիների իր փորձից ելնելով՝ պատրիարքը փոխում է միսիոներների և Ֆերիոլի հանդեպ ունեցած վերաբերմունքը՝ «հրաժարելով բացայայտորեն անոնց դեմ պայքարել» /էջ 54/: Նույն կերպ, Ֆերիոլի հակասական գործողությունները նա բացատրում է իր՝ դեսպանի հոգեվիճակով, երբ վերջինս 1705 թ., գրեթե նույն ժամանակներում, Ավետիքին և դավանական խնդիրներին իրարամերժ որակումներ է տալիս տարբեր անձանց գրած նամակներում, որոնք տարօրինակ են թվում սթափ գնահատանքի տեսակետից: Անշուշտ, կարելի էր այլ մեկնաբանություն տալ դեսպանի փոփոխամտությանը, երբ նա ոչ միանշանակ է ներկայացնում իրողությունները ֆրանսիական թագավորին, և մյուս կողմից՝ պաշտոնյաներին: Սակայն Ս. Մալխասյանն այստեղ հիմք է նախապատրաստում Ավետիքին սպասող իրադարձություններին անցնելու համար: Ավետիքին՝ որպես բարձրաստիճան պաշտոնյայի առևանգելու որոշումը, որ կայացրել էր դեսպանը /ճիզվիտների և որոշ հայ կաթոլիկ պարագլուխների համամտությամբ/, ի վերջո, բացառիկ մի բան է թվում պատերազմի մեջ չգտնվող երկրների քաղաքական

փոխհարաբերություններում, և ուրեմն, այդ առևանգումը կարելի է համարել արկածախնդրության արդյունք, որ գլխացավանք էր դառնալու առաջին հերթին իր՝ ֆրանսիական կառավարության համար: Իսկ արկածախնդրությունը շատ ավելի հնարավոր է դառնում, երբ այն նախաձեռնում է հոգեկան անհավասարակշռություն ունեցող անհատը: Մ. Օրմանյանը ևս, հենվելով Մ. Թոբինի աշխատության վրա, նկատում է, որ «մոլեգնեալ միտքի մը գործ էր Ալետիքի դէմ վարած անձնական թշնամութիւնը եւ վատ դաւաճանութիւնը եւ թէ Ալետիք անպարտ զոհ մըն է կրօնական մոլեգնութեան» /Օրմանեան Մ., 2001, Ազգապատում, հ. Բ, Մայր աթոռ Ս. Էջմիածին, էջ 3325/: Կարելի է կարծել, որ և՛ Մ. Օրմանյանը, և՛ այդ կարծիքին հետևող հեղինակները պատրիարքի առևանգման գործում առավել քան կարևոր նշանակություն են վերապահում դեսպանի մտավոր վիճակին, հիարկե, չանգիտանալով նաև Ֆրանսիայի պետական քաղաքականությունն ու ճիզվիտական անհանդուրժողականությունը: Մինչդեռ դեսպանը գործում էր բացառապես իր դիվանագիտական ղեկավարության, ասել կուզի՝ իր երկրի պետական քաղաքականության թելադրանքով, ուստի ամենևին չի բացառվում, որ պատրիարքի առևանգման ծրագիրը նախապես մշակված լիներ Ֆերիոլի անմիջական ղեկավարների ցուցումներով: Ավելին, հեղինակը ևս փաստորեն ընդունում է, որ Ավետիքի երկրորդ պաշտոնանկությունը ցույց է տալիս, որ «Ֆերիոլի մատը խառն էր» այդ գործում /էջ 58-59/, ինչը ևս կազմում էր Ավետիքի առևանգման ամբողջական գործողության առաջին արարը:

Ս. Մալխասյանը հանգամանորեն վերարտադրում է Ավետիքի անհետացմանը հետևող իրադարձությունները, որում կարևորում են այն, որ օսմանյան իշխանությունները էլ ավելի էին սաստկացրել իրենց հակակաթոլիկական կեցվածքը՝ հայերի միջոգավանական պայքարին տալով քաղաքական ուղղվածություն և անխնա պատուհասելով «հերձվածողներին», որպիսիք ավելի էին բևեռացնում հակասությունները հայ հանրության ներսում: Այս բաժնի վերջին հատվածներում հեղինակն անդրադառնում է Ավետիքի ողիսականի վերջին անցքերին՝ առևանգված պատրիարքի երթուղուն՝ Մեսինայից Մարսել, ապա Փարիզ՝ Բաստիլ, նրա դավանափոխության և մահվան հանգամանքներին:

Ս. Մալխասյանի աշխատանքի լավագույն էջերից է Ավետիքի վախճանին առնչվող այդ խնդիրների ըստ ամենայնի քննարկումը, թեև հեղինակը չի տալիս իր վերջնական եզրակացությունը նրա մահվան ստույգ պատճառի վերաբերյալ՝ առկա վարկածները համադրելուց և քննական վերլուծության ենթարկելուց հետո: Հեղինակը համոզիչ բացատրություն է տալիս երկրնտրանքի առջև կանգնած ֆրանսիական իշխանությունների գործողություններին, որով նրանք ընդհուպ մինչև Ավետիքի մահը նրան պահում էին հսկողության տակ՝ նախընտրելի համարելով թաքցնել նրա առևանգման ստոր և բոլոր կողմերից իրենց վարկաբեկող փաստը, որը զգալիորեն կվնասեր Օսմանյան Թուրքիայում կաթոլիկական քարոզչությանը:

Առաջին անգամ, օգտվելով ֆրանսիական արժեքավոր աղբյուրներից և հենվելով նոր փաստերի վրա, Ս. Մալխասյանը հայտնում է իր կասկածները

Ավետիքի բնական մահվան վերաբերյալ՝ հակասություններ նկատելով բժիշկների տված փաստաթղթերում, ինչպիսիք են բժիշկ Անյանի առաջարկած դարմանումի մերժումը Ավետիքի կողմից, վերջինիս ինքնաբուժման դիմելը և համառորեն զբաղվելը արյունառությամբ՝ երբեմն օրական հինգ անգամ /էջ 79/: Թեև պետք է ասել, որ այս իրողությունների մեջ շատ դժվար է որևէ հակասություն նկատել: Կարելի է կարծել, որ հեղինակին մի հայտնի չափով գայթակղել է դժբախտ պատրիարքի ռոմանտիկական կենսագրության նկատմամբ ունեցած համակրանքը: Փոխարենը, և այդ գոհունակություն պետք է պատճառի ընթերցողին, նա փաստականորեն հիմնավորում է Լյուդովիկոս XIV-ի տագնապները՝ Ավետիքի հանդեպ բռնությունները թաքցնելու իմաստով /նրա կամավոր դավանափոխությունն ու բնական վախճանը հաստատող, ինչպես և այն փաստաթղթերի կուտակումով, որոնք վկայում էին, որ Ավետիքը մինչև վերջ հավատարիմ է մնացել իր նոր դավանանքին /էջ 78/: Մյուս կողմից, հեղինակն իր հերթին մեզ համոզում է, որ Ավետիքը գրեթե մինչև վերջ հավատարիմ է մնացել իր հայրենի դավանանքին, և որ առևանգմանը հետևած չորս տարիների ընթացքում նա չի դավանափոխվել՝ «Արդարեւ, Պասթիլի բանտախուցին ընդօրինակած 14 օգոստոս 1710 թուակիր ձեռագիրը ստորագրած է՝ «Աւետիք վարդապետ Հայոց լուսավորչի...» /էջ 72/:

Թեման ամբողջացնելու տեսակետից ուշագրավ է ուսումնասիրության վերջին հատվածը՝ Ավետիք պատրիարքին որոնող Խաչատուր Մարկոսյանի ճակատագրի և Մարտինիկի մեջ նրա անցկացրած կյանքի վերաբերյալ: Արդեն պատրիարքի կենսագրության սյուժետային գծին միջնորդավորումով կապվող այս հատվածը հիմնավորվում է Ավետիքի առևանգման և հայ հանրության մեջ դրա առաջացրած արձագանքի նշանակությամբ: Ուստի ոչ այնքան կարևոր է Խաչատուր Մարկոսյանի բեկված կյանքի նկարագիրը, որքան այն, որ այս մարդը Ավետիքին փնտրելու հանդգնության համար ֆրանսիական վարչակազմի կողմից արժանացել էր «գրեթե նոյն /Ավետիքի - Ա.Խ./ ճակատագրին»:

«Փոխան վերջաբանի» եզրափակիչ խոսքում Ս. Մալխասյանը լրացնում է շարադրանքի հենքը կազմող գիտական քննության և ընդհանրացումների առկախ էջերը: Նա անհրաժեշտ եզրակացություններ է անում հայոց մեջ կաթոլիկության տարածման պատմական պայմանների ու պատճառների, կաթոլիկական քարոզչության ընդամենը նվազագույն հաջողությունների և դրանց՝ հայ հանրության մեջ թողած պառակտիչ նշանակության մասին: Այդ երևույթը, ինչպես իրավացիորեն նկատում է հեղինակը, կազմալուծում էր պատրիարքարանի գործունեությունը՝ տեղի տալով պատրիարքների արագ փոփոխումներին: Թեև այստեղ պետք է նկատել, որ այդ հաճախակի փոփոխումների միակ պատճառը դավանական ներհակությունները չէին: Օսմանյան կառավարողները ոչ միայն միլեթների, այլև բուն մահմեդական հանրության կառավարման կարևոր գործոն էին համարում հոգևոր գլուխների փոփոխությունները, որից ակնկալում էին կտրուկ և ցանկալի շրջադարձեր՝ երկրի և հասարակության կյանքում: Միայն հայ համայնքը չէր, որի գլխավորները արագորեն փոխարի-

նում էին միմյանց՝ պատրիարքական աթոռին, այլև այդպիսի փոփոխությունների թիրախ էին մյուս միլեթների գլխավորները ևս, այլև իրենք՝ մեծ վեզիրները ընդհուպ մինչև սուլթաններ՝ ենիչերիների ստեպ ապստամբությունների հետևանքով: Օսմանյան հանրությունների մեջ նշված կարճատև պաշտոնակալումները, այսպիսով, ստանում էին ենթադրյալ բարեփոխումների յուրահատուկ ձևեր, որոնք կոչված էին ընդառաջելու հասարակության ընդերքում հասունացած պահանջմունքներին: Դրան հակառակ՝ դանդաղ էին փոխակերպվում օսմանյան ավանդական հասարակության հիմքերը, և այս իմաստով անվրեպ է հնչում Ս. Մալխասյանի այն դիտարկումը, որ սատարելով կայսրության մեջ հակակաթոլիկական եկեղեցիները, օսմանյան պետությունը հետևում էր միլեթների համակարգը պաշտպանելու քաղաքականությանը /էջ 90/:

Վերադառնալով բուն ուսումնասիրությանը՝ նկատենք, որ թեմայի բազմաձև բնույթից ելնելով՝ հեղինակն ընթերցողին ուղղորդում է Օսմանյան Թուրքիայում ֆրանսիական քաղաքականության ու դիվանագիտական նրբամտությունների խճճված բավիղներում՝ միշտ պահպանելով Ավետիք պատրիարքի միջադեպի գնահատման համոզիչ տրամաբանական ընթացքն ու գիտականության չափանիշները: Աշխատության մեջ, կարծում եմ, հանդիպում են դրան հակասող որոշ ձևակերպումներ. այսպես, դժվար է համաձայնել հեղինակի հետ, որ լատին միսիոներների նկատմամբ հայ եկեղեցու ներսում «բարեացակամ վերաբերմունքը տիրական եղաւ 17-րդ դարու ողջ տեւողութեան» /էջ 32/: Բայց այդ դարում նման բարյացակամություն երբևէ չի եղել, լավագույն դեպքում՝ հանդուրժողականություն և ինչպես կասեր Մ. Օրմանյանը՝ «թոյլտու ոգի»: Հիշենք թեկուզ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքական աթոռին քանիցս բազմաձև Գրիգոր Կեսարացուն, որը դեռևս 1610-ական թթ. պախարակում էր էջմիածնի կաթողիկոս Մելքիսեթին՝ հայ եկեղեցու դավանական անաղարտությունից շեղվելու համար: Նաև՝ կաթոլիկամետ Թովմա Բերիացու տապալումը պատրիարքական գահից և նրա անփառունակ վախճանը 1658 թ./, որ դարձյալ հերքում է այդպիսի բարյացակամությունը: Այնուհետև, համաձայն չեմ հեղինակի այն բացատրությանը, թե «ուղղափառներ» ասելով՝ ճիզվիտները նկատի են ունեցել հույներին ու հայերին /էջ 34/: Կարծում եմ՝ նկատի են ունեցել հենց իրենց՝ կաթոլիկական դավանանքի հետևորդներին, որովհետև ներհակ կողմերից յուրաքանչյուրը միայն իրեն էր ուղղափառ համարում՝ լինել նա կաթոլիկ, հայադավան, թե հունական եկեղեցու հավատացյալ: Բոլորովին այլ հարց է արդեն, որ «ուղղափառ /օրթոդոքս/ եկեղեցի» պաշտոնական անվանումը պետք է ամրագրվեր հունական եկեղեցուն: Եվ վերջինը՝ հավանաբար, սրտնեղող թյուրիմացության արդյունք է այն, երբ հեղինակը նախ նշում է, որ Ֆեյզուլլահը ծնվել է 1686-ին, և որ նա «Շեյխ ուլ-խսլամ եղած է Մեհմետ Դ-ի գահընկեցութենէ եւ Սիւլէյման Բ-ի գահակալութենէ անմիջապէս ետք» /էջ 36/: Բայց նշված սուլթանների հերթագայումը տեղի է ունեցել նույն՝ 1687 /կամ 1686/ թ., և Ֆեյզուլլահն այս դեպքում չէր կարող որպես պատրաստի շեյխ ուլ-խսլամ ծնվել, որքան էլ վարպետ լինել իր մեքենայությունների մեջ:


Ասվածը նվազագույն նշանակություն ունի հայագիտության մեջ այն նշանակալի և արժեքավոր ներդրման համեմատ, որ սիրով և նվիրումով արել է Սիրվարդ Մալխասյանը՝ իր այս աշխատության հրատարակումով: Այն ամբողջացնում է Ավետիք պատրիարքի գործունեության ու կենսագրության մասին մեր պատկերացումները՝ հենվելով գիտահետազոտական պատկառելի, հայ և օտար լեզուներով սկզբնաղբյուրների և գրականության վրա, շրջանառության մեջ դնելով սեփական վերլուծական խոսքն ու ձեռագիրը ժամանակի և անձանց գիտականորեն հիմնավոր բնութագրերում:

**ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր  
info@haygithimnadram.am

**ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ**, Արվեստի պատմություն. կերպարվեստ, գիրք երրորդ, Երևան, «Արմավ», 2023, 256 էջ:

### ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ՝ ՇԱՏ-ՇԱՏԵՐԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԵԼԻ



Բոլորովին վերջերս է լույս տեսել ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, անվանի արվեստաբան, բանաստեղծ, թարգմանիչ Արարատ Աղասյանի «Արվեստի պատմություն, կերպարվեստ» դասագրքի 3-րդ գիրքը:

Գրքի սկզբում դրված ծանուցման մեջ ասվում է. «Սույն ուսումնական ձեռնարկը, կերպարվեստի պատմությանը նվիրված, հայերեն լեզվով շարադրված՝ ոչ թարգմանական առաջին դասագիրքն է... Ձեռնարկը նախատեսված է արվեստի և գեղարվեստի դպրոցների աշակերտների և ուսուցիչների համար»: Անտացիայում ձեռնարկի ուղղվածության շրջանակը նեղացված է, որովհետև նրա երեք հատորները հանձնարարելի են ամեն կիրթ ընթերցողի: Հատկապես ձեռնարկի 3-րդ հատորը պարունակում է XX դարի արևմտյան, ռուսական և Հայաստանի կերպարվեստի հիմնական նորացված ուղղությունները:

Այն բոլոր մտավորականները, մասնագետներ և ոչ մասնագետներ, որոնք խորացել են արվեստի խնդիրներում, գիտեն, որ XX դարը, ավելի քան նախորդ դրևէ դար, արվեստի բնագավառում բերել է բազմաթիվ նորարարական ուղղությունները: Այդ ուղղությունների որոշ ներկայացուցիչներ համաշխարհային համբավի տեր արվեստագետներ են, որոնք ներկայացնում են արևմտաարևելյան արվեստի ամենատարբեր հիմնական ուղղություններ: Նրանցից են՝ Անրի Մատիսը, Պաբլո Պիկասոն, Արշիլ Գորկին, Իուան Միրոն, Ռեյնե Մագրիտը, Դիեգո Ռիվերան, Ռոքուել Բենթը, Անտոնիո Գաուդին և ուրիշներ:

Ձեռնարկում խիստ հստակ ձևով ներկայացված են XX դարի կերպարվեստի այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են՝ ֆովիզմը, կուբիզմը, ֆուտուրիզմը, օրֆիզմը, պոպիզմը, էքսպրեսիոնիզմը, արևմտակցիոնիզմը, դադաիզմը, սյուրռեալիզմը: *Տրադիցիոնալիզմ* ընդհանուր խորագիրը կրող կերպարվեստի ուղղությունն ունի երեք ճյուղ՝ ա) սոցիալական ռեալիզմ, բ) նեոռեալիզմ, գ) ռիջիոնալիզմ, դ) պոդպատե ռոմանտիկա:

Ձեռնարկում խիստ հստակ ձևով ներկայացված են XX դարի կերպարվեստի այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են՝ ֆովիզմը, կուբիզմը, ֆուտուրիզմը, օրֆիզմը, պոպիզմը, էքսպրեսիոնիզմը, արևմտակցիոնիզմը, դադաիզմը, սյուրռեալիզմը: *Տրադիցիոնալիզմ* ընդհանուր խորագիրը կրող կերպարվեստի ուղղությունն ունի երեք ճյուղ՝ ա) սոցիալական ռեալիզմ, բ) նեոռեալիզմ, գ) ռիջիոնալիզմ, դ) պոդպատե ռոմանտիկա:



Այս ուղղություններին շատերը ծանոթ չեն: Առավել հայտնիներն են ֆուտուրիզմը, սյուրռեալիզմը, նեոռեալիզմը: Կերպարվեստի այս տեսակներն իրենց արտահայտությունն են գտել նաև գրականության ու կինոարվեստի մեջ:

Հետաքրքիր է, որ հայ պոեզիայի մեծ նորարար հանճարեղ Եղիշե Չարենցը, որը խիստ կարևորում էր հայ գրականության համար թարգմանական գրականությունը, Վլադիմիր Մայակովսկուց թարգմանել է հենց նրա ֆուտուրիստական շրջանի գործերից:

Մայակովսկու «Мама и убитый немцами вечер» խորագրով բանաստեղծությունը գրվել է 1914 թվականին, երբ Ռուսաստանը պատերազմում էր Գերմանիայի հետ: Մայակովսկին ընթերցողին այնպես է փոխանցում պատերազմի սարսափները, որ կարծես ընթերցողի աչքերի առաջ կանգնում է Պաբլո Պիկասոյի «Գեռնիկա» նկարը:

Ես տեսել եմ այդ նկարը Մադրիդում՝ Ռեյնա Սոֆիայի անվան ազգային արվեստի թանգարանում: Այն փակցված է առանձին ձևով և ցնցում է դիտողին: Ահա թե որքան ճշգրիտ է մեկնաբանում Արարատ Աղասյանն այդ նկարը. «1937 թվականին Պիկասոն ստեղծում է իր գլուխգործոցներից մեկը՝ «Գեռնիկա» կոչվող վիթխարի կտավը, որտեղ խոր ցավով ու անզսպելի, անսաստ ցասումով արձագանքում է գերմանացի ֆաշիստների կողմից իսպանական Գեռնիկա քաղաքի ոմբակոծմանը: Այդ մոնումենտալ յուղանկարը կատարված է գրաֆիկական խստապարզ ոճով՝ օգտագործված են միայն սև և սպիտակ գույները: ...Գործող անձերից շատերի դեմքերը պատկերված են միաժամանակ անֆաս և պրոֆիլ (դիմացից և կողքից), ինչը նույնպես անձամբ Պիկասոյի և, առհասարակ, կուբիզմի գեղարվեստական ինքնատիպ հնարներից ու հայտնագործություններից է: Կտավի վերնամասում պատկերված լամպը կարելի է մեկնաբանել որպես Աստծո ամենատես ու նախախնամ աչք, որը հույս է ներշնչում, որ աշխարհը չի թաղվի գերեզմանային խավարի մեջ, որ երկնքում կրկին կշողա արեգակը: Նկարը բաղկացած է բազմաթիվ սիմվոլներից, ու հենց ինքն էլ հանդես է գալիս իբրև համաշխարհային աղետի խորհրդանիշ» (էջ 17):

Հետաքրքիր է, որ Պիկասոն «վերամշակել» է իսպանացի նշանավոր գեղանկարիչ Դիեգո Վելասկեսի «Լաս Մենինաս» հանրահայտ կտավը: Նա միայն վերցրել է ինֆանտ Մենինասին՝ տասը տարեկան չքնաղ արքայադստերը, և մի նկարում պատկերել է աղջնակի վելասկեսյան կրկնօրինակումը ու հետո մոտ 50 նկար է կերտել աբստրակտ ձևով՝ ասելով, որ ինքը տեսնում է իր Մենինասին:

Ա. Աղասյանը տպավորիչ մեկնաբանություն է տվել Մունկի խիստ հայտնի «Ճիչը» նկարին, որը մարդու միայնության ու կյանքի սարսափից ծնված ցնցող պատկեր է:

1910-ականներին առաջ եկած դադաիզմի երևույթը, ըստ Աղասյանի, ուներ մի կարգախոս՝ նիհիլիզմ, ամեն ինչի ժխտումը (էջ 49):

Սյուրռեալիզմի կարկառուն ներկայացուցիչներ Բուան Միրոն և Սալվադոր Դալին ձեռնարկում մեկնաբանվում են իրենց հանրահայտ գործերով:

Իսպանիան այնքան հիացած է Խուան Միրոյի արվեստով, որ երկրի պառլամենտի շենքի ճակատին գերիրապաշտ նկարչի սյուրռեալիստական գունագեղ գեղանկարն է պատկերված:

Իսպանացի նշանավոր նկարիչ Սալվադոր Դալիի քանդակները կան Եվրոպայի մի շարք քաղաքներում, նկարները՝ ցուցահանդեսներում: Նա նաև պատրաստել է սեղանի սպասքներ՝ պահպանելով իր ոճը: Հետաքրքիր է, որ նրա գլուխգործոց «Խորհրդավոր ընթրիք» կոթողային նկարը Վաշինգտոնի ազգային պատկերասրահում ցուցադրվում է մեկուսի: Եվ Հիսուս Քրիստոսի դեմքը իր կնոջ՝ Գալայի դեմքն է:

Խիստ դիպուկ է Աղայանի այն նկատումը, թե «Ժամանակակից իրականությունը Սալվադոր Դալիի արվեստը բեռնեց դաժանության, տագնապակից սպասումի, հիվանդագին էրոտիզմի ու արտասովոր ցանկասիրության թեմաներով» (էջ 59):

Աղայանը տպավորիչ կերպով է մեկնաբանել Դալիի հանրածանոթ «Հիշողության մշտականությունը» կտավը՝ իր փափուկ լաթի նման կախված ժամացույցներով:

Բելգիացի սյուրռեալիստ Ռընե Մագրիտը իր նկարների մեծ մասում պատկերել է սպիտակ ամպի քուլաներ: Թվում է, թե դրանք ամենուր են՝ ճաշասենյակում, նաև ննջարանում: Իրոք, Մագրիտն օտարում է առարկաները մարդկանցից և իրական միջավայրից: Նա իր ոճով առանձնանում է աշխարհի բոլոր թանգարաններում՝ դառնալով դյուրավ ճանաչելի:

Այդպիսին են նաև կոլումբիացի քանդակագործ ու նկարիչ Ֆերնանդո Բոտերոյի բոլոր քանդակներն ու նկարները, որոնցում պատկերված մարդիկ՝ կին, տղամարդ, երեխա, բոլորը շատ գեր են:

Ովքեր զբոսաշրջության նպատակով այցելում են ԱՄՆ-ի նախկին մայրաքաղաք Ֆիլադելֆիա, անպայման ոչ միայն տեսնում են 1976-ին հսկայական չափսերով կանգնեցված Կլաս Օլդենբուրգի «Լվացքասեղմակ» քանդակը, այլև նկարվում են՝ կանգնած նրա առաջ:

Արևմտաեվրոպական սյուրռեալիզմին նվիրված բաժնում հեղինակը, բնականաբար, խոսում է արվեստի այդ ուղղության հիմնադիր Անդրե Բրետոնի և 1924-ին Փարիզում տպագրված սյուրռեալիզմի մանիֆեստի մասին: Բրետոնը բժիշկ էր, սակայն իր մասնագիտությունը փոխեց, դարձավ գրող ու սյուրռեալիզմի տեսաբան: Նրա համակիրն էր հայ ժողովրդի մեծ բարեկամ Լուի Արագոնը, որը հեռացավ սյուրռեալիզմից ու նույնիսկ հետագայում խստագույնս քննադատեց սյուրռեալիստներին: Անդրե Բրետոնը խիստ հավանել է Արշիլ Գորկու արվեստը, և չնայած նա չգիտեր անգլերեն և ոչ էլ Գորկին՝ ֆրանսերեն, նրանք երկար զրուցել են միմյանց հետ:

Ուսումնական ձեռնարկի ամեն գլխի վերջում կան մոտ երեք տասնյակ հարցեր, որոնցով կարելի է պարզել, թե աշակերտը կամ ուսանողը արդյոք յուրացրե՞լ է գրքի այդ բաժինը:

Ձեռնարկի բոլոր բաժիններն ունեն արվեստի գործերի հիանալի գունավոր վերարտադրությունները: Իսկ լուսանցքներում դրված են ֆիլմի QR (արագ արձագանքման կոդ) կոդերը՝ համապատասխան թեմայի կամ արվեստագետի մասին ֆիլմ դիտելու համար:

Ձեռնարկի առաջին գլխում հետաքրքիր փաստեր կան մեքսիկացի նշանավոր նկարիչ Դիեգո Ռիվերայի և նրա հայտնի կնոջ՝ Ֆրիդա Կալոյի մասին:

Ռիվերան հռչակված է իր որմնանկարներով, որոնցում երևում է XIV-XVI դարերի եվրոպական մոնումենտալ արվեստի, ինչպես նաև XX դարի կուլթուրայի ազդեցությունը:

Շատ հագեցած է նաև ուսումնական ձեռնարկի «XX դարի ռուսական կերպարվեստը» գլուխը:

Այս բաժնում տպավորիչ մեկնաբանություններ կան Վասիլի Կանդինսկու, Կազիմիր Մալևիչի ու Մարկ Շագալի արվեստի վերաբերյալ: Այստեղ ներկայացված է ռուս մեծ բանաստեղծուհի Աննա Ախմատովայի հանրահայտ դիմանկարը, որի հեղինակն է Նաթան Ալտմանը (1914 թ.):

Ա. Աղասյանը պարզաբանում է, թե ինչպես պատահականությունը փոխում է Կանդինսկու արվեստի ուղղությունը, և վերջինս դառնում է վերացական:

1910-1914 թվականներին վրձնած աշխատանքներում Կանդինսկին «վճռականապես ու վերջնականորեն «ազատում է նկարչությունն առարկայությունից», թեև դրանում հաճախ օգտագործում է նաև «առարկայական առանձին տարրեր» (էջ 130-131):

Լեհական ծագումով ռուս գեղանկարիչ Կազիմիր Մալևիչը արքայազան արվեստում սուպրեմատիզմի հիմնադիրն է: Ըստ որում սուպրեմատիզմի ոճական զարգացումը Մալևիչի մոտ ընթացել է մի քանի փուլով:

Արվեստին մոտ կանգնած մարդկանց մեջ էլ տարակարծիքներ կան Մալևիչի՝ 1915-ին վրձնած «Սև քառակուսի» կտավի վերաբերյալ: Ա. Աղասյանը բացատրում է. «Մինչդեռ նկարչի խոստովանությամբ՝ այստեղ նա փորձել է «զրոյացնել առարկան» և այսպիսով արձանագրել իրապաշտական արվեստի ավարտը, ռեալիզմի վերջն ու վախճանը» (էջ 132):

Ուշագրավ է Շագալի կյանքի հետևյալ դրվագը. «Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Շագալն անցավ հաղթանակած բոլշևիկների՝ հետևողական մարքսիստ-լենինյանների կողմը և նշանակվեց Վիտեբսկի նահանգում արվեստի գործերով լիազոր ներկայացուցիչ: 1919-ին բացվեց Վիտեբսկի գեղարվեստական ուսումնարանը, որտեղ աշխատանքի անցան ռուս ավանգարդիստներից ոմանք, մասնավորապես՝ Կազիմիր Մալևիչը և Էլ (Լազար) Լիսիցկին: Մեկ տարի անց Շագալը տեղափոխվեց Մոսկվա, որոշ ժամանակ որպես բեմանկարիչ աշխատեց տեղի հրեական թատրոնում, իսկ 1922 թվականին մեկնեց արտասահման: Այսուհետ նրա երկրորդ հայրենիքը դարձավ Ֆրանսիան, թեև մինչև վերջին շունչը նա ինքն իրեն անվանում էր «ռուս գեղանկարիչ» (էջ 135):

XX դարի ռուս նշանավոր գեղանկարիչ էր հայտնի մանկավարժ, արվեստի տեսաբան Կուզմա Պետրով-Վոդկինը: Երիտասարդ տարիներին Պետրով-Վոդկինը ճամփորդել է Իտալիայում, Ֆրանսիայում, Ալժիրում ու Թունիսում:

Նրա նշանավոր նկարներից է «Կարմիր ձիու լողացումը» (1912) մեծ կտավը: Նկարը փոխաբերություն է. անթամբ, բայց գեղեցիկ ձիու վրա, նստած է մերկ ու գեղեցիկ մարմնով պատանին: Ենթադրվում է, թե նկարում մարգարեաբար գուշակվում են գալիք աշխարհամարտն ու ռուսական հեղափոխությունը (էջ 144):

XX դարի հռչակավոր նկարիչներից է Ալեքսանդր Գերասիմովը: Նա գեղագիտական ընկալումներով է ներկայացրել կոմունիստական կուսակցության առաջնորդներին՝ Վ. Լենինին ու Ի. Ստալինին: Ունի գեղեցիկ բնանկարներ, որոնցից մեկն է 1935-ին վրձնած «Անձրևից հետո»-ն: Ազդեցիկ է «Թաց պատշգամբ» (1935) նկարը: Գրքում շատ տպավորիչ է Ալեքսանդր Դեյնեկայի «Սևաստոպոլի պաշտպանությունը» (1942) կտավը:

Այս շրջանը պատկերված է սոցիալիստական ռեալիզմը ներկայացնող բազմաթիվ նկարիչների ու քանդակագործների լավագույն գործերով:

Խորհրդային գաղափարախոսության ու ամերիկյան սպառողական մշակույթի հակադրությունը Ադասյանը ցույց է տալիս մի շարք ծիծաղաշարժ նկարների մատուցմամբ. «Անչափ ծիծաղաշարժ են Ալեքսանդր Կոստլապովի (ծ. 1943) աշխատանքները, որոնցում տարօրինակ կերպով միախառնված ու շաղախված են սովետական գաղափարախոսության և ամերիկյան սպառողական մշակույթի առավել տիպական, տարբերիչ նշանները, գլխավոր «հերոսները» և հանրածանոթ կերպարները՝ Լենին, Ստալին, Գորբաչով, մուրճ ու մանգաղ, Միքի Մաուս, «Մաքրոնալդս», «Կոկա-կոլա» և այլն» (էջ 188-189):

Ձեռնարկի երրորդ գլուխը կոչվում է «Հայաստանի կերպարվեստը XX դարում (1918-2000 թվականներ)»: Այդ ժամանակաշրջանում Հայաստանն ունեցել է նշանավոր նկարիչներ ու քանդակագործներ: Դրա լավագույն ապացույցն են հայ նշանավոր նկարիչների ալբոմ-հետազոտությունները, նաև պրոֆեսորներ Ռուբեն Միրզախանյանի ու Հրավարդ Հակոբյանի հրատարակած «Սոցիալիստական ռեալիզմը և խորհրդահայ կերպարվեստը» սովորածավալ, հոյակապ գիրքը (Մոսկվա, 2015), ինչպես նաև Ռուբեն Միրզախանյանի «Իմ պրեսիոնիզմ: Նկարիչ հայեր» (Երևան, 2019) ալբոմ-հետազոտությունը:

Այս հատվածում Ադասյանը բերում է պատմական այնպիսի փաստեր, որոնք ամեն հայ պարտադիր պետք է իմանա. այն ուղղված է նաև եկող հայ սերունդներին. «Ստեղծվեցին Հայաստանի Առաջին Հանրապետության դրոշը, զինանշանը, դրամանիշներն ու նամականիշները: Ծիածանի երեք հիմնական՝ կարմիր, կապույտ և դեղին (ծիրանագույն) հորիզոնական շերտերից կազմված դրոշի նախանկարն առաջարկել է Մարտիրոս Սարյանը: Զինանշանը նախագծել են Հակոբ Կոջոյանը և Ալեքսանդր Թամանյանը, իսկ թղթադրամներն ու նամականիշները՝ Հակոբ Կոջոյանը և Արշակ Ֆեթվաճյանը:

Այդ տարիների նկարչական հիշարժան գործերից է Հակոբ Կոջոյանի «Անիի ավերակները» (1919) ջրանկարը» (էջ 194-195):

Ըստ արժանվույն են ներկայացված այդ ժամանակահատվածի Հայաստանի կերպարվեստի հսկաները՝ Մարտիրոս Սարյանը, Հակոբ Կոջոյանը, Երվանդ Քոչարը, Մինաս Ավետիսյանը և շատ-շատերը:

Ընտրված են XX դարի հայ արվեստը զարդարող հրաշք-նկարներ, քանդակներ: Ընտրված բոլոր նկարները կարող են մրցակցել աշխարհի ցանկացած մեծ ու հայտնի թանգարանում ցուցադրված՝ XX դարի նկարների հետ:

Տեղին է ներկայացված 1965-ի Հայֆիլիարմոնիայի փոքր դահլիճի նախասրահում տեղադրված Մարտիրոս Սարյանի և Հենրիկ Սիրալյանի ստեղծած «Հայաստան» վիտրաժը (էջ 234): Հիրավի, Հայաստանում մշակութային նշանակալի երևույթ էին Գրիգոր Խանջյանի «Հայոց այբուբեն» և «Վարդանանք» նկարները, որոնք Ամենայն Հայոց կաթողիկոս, երջանակահիշատակ Վազգեն Առաջինի ջանքերով ուղարկվեցին Փարիզ՝ գորելեններ դառնալու համար:

Հրաշալի է, որ կերպարվեստին նվիրված բազում ֆիլմերի մեջ աշակերտները կարող են դիտել ֆիլմ՝ նվիրված Երվանդ Քոչարի «Սասուցի Դավիթ» կոթողային արձանին, որը կանգնեցվել է 1959 թվականին:

Գրքում գետեղված են Ղուկաս Չուբարի, Արա Սարգսյանի, Սարգիս Բաղդասարյանի, Արտաշես Հովսեփյանի, Լևոն Թոքմաջյանի, Արտո Չաքմաջյանի, Դավիթ Երևանցու, Արա Շիրազի և այլոց քանդակային գլուխգործոցները:

Գրքին մի առանձին հմայք են տալիս հանճարեղ Կոմիտասին նվիրված արվեստի գործերը:

Երրորդ բաժնի վերջում տեղ են գտել ուսուցողական առումով ճշգրիտ հարցեր ու առաջադրանքներ:

Արարատ Աղասյանի հեղինակած այս հրաշալի ուսումնական ձեռնարկը հրատարակվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատվերով, երաշխավորված է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի կողմից, խմբագիրն է առաջնակարգ գրականագետ Արմեն Ավանեսյանը, և գիրքը տպագրական ցանկալի մակարդակով լույս է ընծայել «Արմավ» հրատարակչությունը:

## ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԿԻԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր  
aelita.dolukhanyan@gmail.com

**ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Վերջին ամիսների ընթացքում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը շարունակել է աշխատանքները միջազգային համագործակցության աշխարհագրության ընդլայնման և արվեստագիտական արդյունքի միջազգայնացման ուղղությամբ:

2024 թ. ապրիլի 17-ին Նիժնի Նովգորոդում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտն ու Նիժնի Նովգորոդի ճարտարապետաշինարարական համալսարանը կազմակերպեցին իրենց առաջին համատեղ գիտական միջոցառումը (համագործակցության հուշագիրը օնլայն ձևաչափով ստորագրվել էր 2023 թ. մարտի 22-ին)՝ «Искусство: современное состояние и перспективы развития» թեմայով միջազգային գիտագործնական կոնֆերանսը՝ նվիրված ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ստեղծման 80-ամյակին:

2024 թ. մայիսի 30-ին Մոսկվայում տեղի ունեցավ ԱՊՀ անդամ-պետությունների մշակութային կազմակերպությունների ղեկավարների գագաթաժողովը, որին մասնակցեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի պատվիրակությունը: «Управление учреждением культуры в современных условиях: проблемы и перспективы» խորագրով կոնֆերանսում զեկուցումներով հանդես եկան ինստիտուտի տնօրեն Աննա Ասատրյանը և գիտական ղեկավար Արարատ Աղասյանը: Համագործակցության հուշագիր կնքվեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի և Գնեսինների անվան ռուսական երաժշտական ակադեմիայի (Մոսկվա) միջև, որը ստորագրեցին պրոֆեսոր Աննա Ասատրյանը և Ակադեմիայի ռեկտոր՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Ռիժինսկին: Ի դեպ՝ այս կրթօջախում է սովորել, իսկ հետագայում՝ դասավանդել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Արամ Խաչատրյանը: Այցի շրջանակում ձեռք բերվեցին համապատասխան պայմանավորվածություններ, և առաջիկայում համագործակցության հուշագիր կկնքվի ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի և Բելառուսի պետական երաժշտական ակադեմիայի (Մինսկ) միջև:

2024 թ. ընթացքում համագործակցության հուշագրեր են կնքվել Ուդինեի համալսարանի (Ուդինե, Իտալիա) և Տաշքենդի ճարտարապետաշինարարական համալսարանի (Տաշքենդ, Ուզբեկստան) միջև:

Իսկ մինչ այդ՝ 2023 թ. դեկտեմբերի 1-2-ը Ուդինեի համալսարանում գումարվեց «Արարատի ստվերում. հայկական արվեստը ճամփորդական գրականության մեջ» (XIII-XXI դարեր) խորագրով միջազգային գիտական կոնֆերանսը, որը կազմակերպել էին Ուդինեի համալսարանը, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը և Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամը՝ Իտալիայում ՀՀ դեսպանության և Ուդինեի քաղաքապետարանի հովանու ներքո: Բացման խոսքով հանդես

եկավ Ուդինեի համալսարանի ռեկտոր Ռոբերտո Պինտոն: Ողջունելով կոնֆերանսի մասնակիցներին և հյուրերին՝ Իտալիայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ծովինար Համբարձումյանը շնորհակալություն հայտնեց Ուդինեի համալսարանին և Իտալիայի հայագետներին կարևոր աշխատանքի համար, ապա անդրադարձավ հայ-իտալական համագործակցությանը հումանիտար ոլորտում՝ կարևորելով իտալական համալսարաններում հայագիտական ամբիոնների գործունեությունը, ներկայացրեց Արցախի շուրջ վերջին իրադարձությունները, հայ մշակութային ժառանգության վտանգվածությունը:

Այնուհետև հրապարակվեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն Աննա Ասատրյանի և գիտական ղեկավար Արարատ Աղասյանի ողջույնի ուղերձը, որտեղ, մասնավորապես, նշված էր. «Մեզ համար չափազանց հուզիչ է և ուրախալի, որ տասնամյակների ընդհատումից հետո կատարվում է հայ-իտալական արվեստագիտական համագործակցության վերականգնման ուղղությամբ առաջին քայլը: Այս առիթով ուզում ենք հիշել Արվեստի ինստիտուտի և Միլանի հայ մշակույթի ուսումնասիրության և վավերագրման կենտրոնի համատեղ ջանքերով կազմակերպված հայ արվեստին նվիրված միջազգային հինգ սիմպոզիումները (1975-1988), որոնք հաջորդաբար տեղի էին ունենում Իտալիայում և Հայաստանում: Սիմպոզիումների արդյունքները նշանակալի դեր կատարեցին հայ արվեստի ուսումնասիրության և միջազգային ճանաչման բնագավառում: Լիահույս ենք՝ համագործակցությունը կլինի շարունակական, և այս Կոնֆերանսը՝ մեր առաջին համատեղ գիտական միջոցառումը, կդառնա երկար ու բեղմնավոր ճանապարհի սկիզբ, և ամեն տարի, հաջորդաբար Ուդինեում և Երևանում, մենք կհավաքվենք՝ ներկայացնելու մեր գիտական հետազոտությունների կարևոր արդյունքները»:

Կոնֆերանսի ընթացքում զեկուցումներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի պատվիրակության անդամները՝ արվեստագիտության թեկնածու Մարգարիտա Քամալյանը, արվեստագիտության թեկնածու Մարիաննա Տիգրանյանը, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Մարտին Հարությունյանը և բանասիրական գիտությունների թեկնածու Անահիտ Բեքարյանը: Հայագիտության տարբեր ոլորտներին վերաբերող իրենց հետազոտությունները ներկայացրեցին Իտալիայի ԱԳ և միջազգային համագործակցության գլխավոր տնօրեն Սերջո Ֆերդինանդին, Պիզայի համալսարանի պրոֆեսոր Ալեսսանդրո Օրենգոն, Ուդինեի համալսարանի գիտական հետազոտող Ալեսիա Բոսկիսը, Ժնևի համալսարանի դոկտոր Մարկո Ռուֆֆիլին, Վենետիկի Կա՛Ֆոսկարի համալսարանի պրոֆեսոր Ալդո Ֆերարին և հետազոտող Պաոլո Լուկկան, հայագետներ ու արվեստաբաններ Հայաստանից և Իտալիայից:

**ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ**

Արվեստագիտության դոկտոր  
annaasatryan2013@gmail.com

Հայերեն նյութերի բաժնի խմբագիրներ՝ **Մելանիա Միքայելյան**  
**Սեդա Քուփելյան**  
Ռուսերեն նյութերի բաժնի խմբագիր՝ **Գայանե Հարությունյան**

Редакторы армянского отдела – **Меланья Микаелян**  
**Седа Купелян**  
Редактор русского отдела – **Гаянэ Арутюнян**

Editors of Armenian part **Melania Mikaelyan**  
**Seda Kupelyan**  
Editor of Russian part **Gayane Harutyunyan**

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ **Արմինե Պետրոսյանի**  
Компьютерный дизайн и пагинация – **Армине Петросян**  
Computer design and pagination **Armine Petrosyan**

Հրատ. պատվեր N 1325  
Ստորագրված է տպագրության 06.08.2024 թ.:  
Տպագրական 25 մամուլ: Տպաքանակը՝ 200:  
ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:  
Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4:  
Հեռ.՝ 581902:

Подписано к печати 06.08.2024 г.  
25 печ. л. Тираж – 200. Типография НАН РА,  
Ереван, пр. Маршала Баграмяна 24.  
Адрес редакции: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4.  
Тел. 581902

Signed for printing 06.08.2024  
25 print. sheets. Printed copies – 200. NAS RA Press,  
Yerevan, Marshal Baghramyan av. 24.  
Editorial office address: 0019, Yerevan, Marshal Baghramyan av. 24/4.  
Tel. 581902

**Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ <http://Iraber.sci.am>**  
**Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ [Iraber@sci.am](mailto:Iraber@sci.am)**  
**Официальный сайт журнала: <http://Iraber.sci.am>**  
**Электронная почта журнала: [Iraber@sci.am](mailto:Iraber@sci.am)**  
**Official site of the Journal: <http://Iraber.sci.am>**  
**E.mail of the Journal: [Iraber@sci.am](mailto:Iraber@sci.am)**